Հանուն ազգային միաբանության

Արտաշես

ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱԾՔ ԱՊԱԳԱՅԻՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ
ԵԼՈՒՅԹՆԵՐ
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

2008-2009 թթ.

ԵՐԵՎԱՆ-2009
Տիգրան Մեծ

Во имя национального единения

Арташес ГЕГАМЯН

ВЗГЛЯД В БУДУЩЕЕ

СТАТЬИ
ВЫСТУПЛЕНИЯ
ИНТЕРВЬЮ

2008-2009 гг.

ЕРЕВАН- 2009
Тигран Мец

ՀՏԴ 232 (479.25):327
ԳՄԴ 66.3 (2Հ) +66.4
Գ 422

Գ 422 Գեղամյան Արտաշես
Հայացք ապագային. - Եր.: Հեղինակային հրատարակություն, 2009. – 492 էջ:

Арташес Гегамян
Взгляд в будущее. – Ер.: Авторское издание, 2009. – 492 с.

Ժողովածուում զետեղված են հասարակական-քաղաքական հայտնի գործիչ Արտաշես Գեղամյանի հոդվածները, հարցազրույցներն ու ելույթները, որոնք ներառում են 2008 թ. հունվարից 2009 թ. օգոստոսն ընկած ժամանակահատվածը:

Գիրքը նախատեսված է ընթերցող լայն հանրության համար:

В сборнике помещены статьи, интервью и выступления известного общественного и политического деятеля Арташеса Гегамяна, охватывающие период с января 2008-го по август 2009-го годов.

Книга рассчитана на широкий круг читателей.

ԳՄԴ 66.3 (2Հ) +66.4

© Ա.Գեղամյան, 2009 թ.
© А. Гегамян, 2009 г.

ISBN 978-99941-0-320-1

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Արտաշես Գեղամյանը մերօրյա հասարակական-քաղաքական, պետական-կուսակցական անվանի այն եզակի գործիչներից է, ով քաջ գիտակցում է գրավոր խոսքի արժեքը, դրա կարևորությունը սերունդների և պատմության համար: Ասվածի վկայությունը վերջին երեք տարում նրա լույս ընծայած գրքերն են: Այսպես, 2006 թ. հրատարակվեց Ա.Գեղամյանի «Հոդվածներ, հարցազրույցներ, ելույթներ» ստվարածավալ ժողովածուն (երկրորդ, լրացված հրատարակություն), որտեղ ի մի էր բերվել 1977-2006 թթ.՝ հեղինակի շուրջ 30-ամյա հասարակական-քաղաքական գործունեության ժամանակագրությունը՝ արտացոլված նրա գրավոր ու բանավոր խոսքում: 2007 թ. հրատարակվեց միջազգային կազմակերպությունների համաժողովներում նրա ունեցած ազգաշահ ելույթներն ընդգրկող ժողովածուն: 2008 թ. լույս տեսած «Հոդվածներ, ելույթներ, հարցազրույցներ» հատորում ընդգրկված էին 2006 թ. հոկտեմբերից 2008 թ. հունվար ժամանակահատվածում Ա.Գեղամյանի հրապարակումներն ու ելույթները:

Ժամանակին մենք, ըստ ամենայնի, արժևորել ենք վերոգրյալ գրքերը, ցույց տվել մեր իրականության մեջ դրանց տեղը, երևույթ լինելը, նշել, թե այդ ժողովածուներն իրենց բովանդակային մասով ինչ արժեք ունեն և ինչ ազդեցություն կարող են թողնել Հայաստանի Հանրապետությունում ընթացող զարգացումների վրա:

Ընթերցողի սեղանին դնելով հոդվածների, ելույթների և հարցազրույցների ներկա հատորը՝ Ա.Գեղամյանը խնդիր է դրել ներկայացնել 2008 թ. հունվարից 2009 թ. օգոստոսն ընկած ժամանակահատվածում իր մտքի ու գրչի ստեղծած արդյունքները: Այս հատորը, փաստորեն, նախորդ ժողովածուների տրամաբանական և օրգանական շարունակությունն է: Վերոթվարկյալ ժողովածուների պես ներկա հատորը ևս իր բազմաբնույթ հարցերի ընդգրկուն շրջանակով վկայում է, որ Ա.Գեղամյանը եղել ու մնում է մեր հասարակական-քաղաքական կյանքի բովում, իր թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքով արձագանքում ու արծարծում է ազգային-համամարդկային կարևորություն ունեցող հարցեր: Հարցեր, որոնք առանձնանում են մեր երկրի ու ժողովրդի համար կենսական հնչեղությամբ ու հիմնավորումներով: Դրանք, ըստ էության, նշված ժամանակահատվածում մեր պետության ու ժո-

ղովրդի պատմության շարադրանքն են՝ վերլուծական սառը դատողություններով, թարմ հարցադրումներով, սթափ կանխատեսումներով և անկողմնակալ գնահատականներով:

Լիահույս ենք, որ Ա.Գեղամյանի այս նոր ժողովածուն ևս ըստ արժանվույն կգնահատվի ընթերցող լայն հանրության կողմից, քանզի ազգային անվանի գործիչը շարունակել է հավատարիմ մնալ իր սկզբունքային հակվածությանը՝ Հայոց պետականության ու հայ ժողովրդի շահերը վեր դասել անձնական, թվացյալ և ոչ մնայուն արժեքներից:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ

ДВА СЛОВА

Арташес Гегамян является одним из тех известных и в то же время редких общественно-политических, партийно-государственных деятелей, которые хорошо осознают ценность печатного слова, его важность для поколений и истории. Свидетельством сказанного являются изданные за последние три года под его авторством книги. Так, в 2006 году вышел в свет объемистый сборник А. Гегамяна “Статьи, интервью, выступления” (второе, дополненное издание), в котором представлена летопись письменного и устного слова автора за период 1977-2006 гг. Изданная в 2007 году книга включает публицистические выступления Арташеса Гегамяна на различных международных форумах, в которых он отстаивает наши национальные интересы. В сборнике “Статьи, выступления, интервью” (2008 г.) собраны материалы, отражающие общественно-политическую деятельность А. Гегамяна, с октября 2006 г. по январь 2008 г.

В свое время мы по существу и по достоинству оценили эти публикации, показали их место в нашей действительности, отметили, что они стали знаменательным явлением в общественной жизни республики и представляют большую ценность и оказывают большое влияние на процессы, протекающие в Республике Армения.

Вынося на суд читателя настоящий сборник статей, выступлений и интервью, А. Гегамян обобщает проанализированное и написанное им с января 2008-го по август 2009 г. Этот том, по сути, является логическим и органическим продолжением предыдущих книг. Как и вышеуказанные, нынешний том по своему масштабному охвату самых различных вопросов свидетельствует, что А. Гегамян был и остается в горниле общественно-политической жизни страны. Откликается как письменно, так и устно на животрепещущие вопросы: от сугубо национальных до общечеловеческих. Вопросы, которые выделяются для нашего народа и страны своим жизненно важным звучанием и своей обоснованностью, по сути, являются изложением истории нашего государства и народа на современном этапе, выполненным на основе хладнокровного анализа, трезвых прогнозов и беспристрастных оценок.

Есть все основания полагать, что и этот новый сборник Арташеса Гегамяна также будет по достоинству оценен в широких общественных кругах, потому что и в этом случае известный национальный деятель остался верен своей принципиальности, приверженности ставить интересы Армянской государственности и народа выше каких-либо личных, кажущихся или иных преходящих ценностей.

АНУШАВАН ЗАКАРЯН
ДОКТОР ФИЛОЛОГИЧЕСКИХ НАУК

ՆԱԽԱԲԱՆ

«Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանի յուրաքանչյուր ելույթ, հարցազրույց շաղախված է հայրենիքի նկատմամբ անսահման սիրով, նվիրվածությամբ, աննահանջ պատրաստակամությամբ՝ առաջինը դուրս գալու երկրին սպառնացող վտանգների դեմ, դիմակայելու դրանք:

Արտաշես Գեղամյանի քաղաքացիական նման դիրքորոշումն առավել ցայտուն է դրսևորվել միջազգային ամենահեղինակավոր ամբիոններից իր ունեցած ելույթներում: Ելույթներ, որոնք ընդգրկում են մեր օրերի առավել կարևոր չլուծված հարցերը, առաջարկում գործնական միջոցներ՝ դրանք հաղթահարելու ուղղությամբ, բազմակողմանի խոր վերլուծություններ՝ միտված Հայաստանի ներկան, առավել ևս ապագան արժանավայել դարձնելուն:

Արդեն կատարվածին գնահատական տալու համար հատուկ իմաստություն պետք չէ: Իսկ ահա, գիտելիքների հսկայական պաշարով, աշխատանքային հարուստ փորձով և խոր վերլուծություն անելու ունակությամբ երկրի համար վտանգավոր զարգացումների մասին ահազանգել և ցույց տալ դրանք շրջանցելու ուղիները, ներհատուկ է միայն լայնախոհ քաղաքական, պետական գործիչներին: Արտաշես Գեղամյանի հեղինակած «Հայացք ապագային» գրքում զետեղված նյութերը համոզիչ վկայություն են, որ նա հենց այդ գործիչն է: Մարդ, որն օժտված է բնատուր շնորհով և պահանջված ժողովրդի կողմից, հատկապես ճակատագրական ժամանակներում:

2008 թ. փետրվար-մարտ ամիսներին, երբ Հայաստանում պայթյունավտանգ իրադրություն էր, երբ դրսից ղեկավարվող առանձին բախտախնդիրներ փորձում էին երկփեղկել, իրար դեմ հանել ժողովրդին, հանրապետությունով մեկ քաղաքացիական բախում հրահրել, Արտաշես Գեղամյանը քաղաքական սակավաթիվ այն գործիչներից էր, ով առանց հապաղելու ու վարանելու, ամենայն վճռականությամբ կանգնեց Հայոց պետականությունը կազմաքանդողների, հայ-ռուսական ռազմավարական դաշինքը խարխլողների դեմ հանդիման: Նա կարողացավ պատռել կեղծ ժողովրդավարների դիմակը, մերկացնել նրանց գործունեության հայակործան նպատակները:

2008 թ. մարտի 1-ի ողբերգական դեպքերի հաջորդ իսկ օրը «Ազգային Միաբանություն կուսակցությունը» առաջինն էր, որ տեղի ունեցածին տվեց ճշմարիտ գնահատականներ և դրանով մեծապես նպաստեց Հայաստանի Հանրապետությունում իրավիճակի կայունացմանը: Անցած ժամանակաշր-

ջանը ցույց տվեց, որ մեր երկրի համար գերլարված այդ օրերին «Ազգային Միաբանություն կուսակցության» որդեգրած դիրքորոշումը՝ հայրենասիրության, հանուն երկրի անվտանգության՝ ինքնազոհության, յուրահատուկ դրսևորում էր:

Ծանրակշիռ են Արտաշես Գեղամյանի՝ Հայաստանի տնտեսության զարգացմանն ու առանձնահատկություններին վերաբերող, երկիրը ճարակած տնտեսական ու ֆինանսական խոր ճգնաժամը հաղթահարելուն ուղղված վերլուծություններն ու երաշխավորությունները: Այսպես, 2008 թ. սեպտեմբերի 9-ին տեղի ունեցած «Ազգային Միաբանություն կուսակցության» ակտիվի ժողովում Արտաշես Գեղամյանի ու նրա գաղափարակիցների կողմից Հայաստանի տնտեսության վրա համաշխարհային ֆինանսական և տնտեսական ճգնաժամի ազդեցությունը հաղթահարելու, ինչպես նաև կառավարության գործունեությունն արդյունավետ դարձնելուն ուղղված առաջարկությունները բռնեցին ժամանակի քննությունը և այսօր էլ խիստ արդիական են:

Արտաշես Գեղամյանի հիմնադրած «Ազգային Միաբանություն կուսակցությունը», իր գոյության 12 տարիների ընթացքում գործադիր իշխանության մեջ ներկայացված չլինելով, մշտապես կանգնած է եղել Հայոց պետականության պաշտպանության դիրքերում: Հայաստանի համար ճակատագրական ժամանակներում կուսակցությունը միշտ էլ եղել է երկրի առաջադիմության համար մղվող պայքարի առաջին գծում, հարվածը վերցնելով իր վրա՝ արել է հնարավոր ամենը, որպեսզի ապակառուցողական որևէ ուժ չկարողանա խաղալ պետության ու ժողովրդի ճակատագրի հետ:

Անցած շուրջ մեկուկես տարում Արտաշես Գեղամյանի քաղաքացիական դիրքորոշումն իր քաղաքական, տնտեսական ու սոցիալական ուղղվածությամբ կարող է լուրջ ուղեցույց լինել բոլոր նրանց համար, ով մտահոգված է Հայաստանի ապագայով:

«Հայացք ապագային» ժողովածուն, համոզված ենք, կդառնա շատ-շատերի սեղանի գիրքը:

ԿՈՐՅՈՒՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ,
ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴԽԱՆՅԱՆ
«ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ» ՓՈԽՆԱԽԱԳԱՀՆԵՐ

ПРЕДИСЛОВИЕ

Каждое выступление, каждое интервью председателя партии “Национальное Единение” Арташеса Гегамяна проникнуты беспредельной любовью к Родине, преданностью, несгибаемой готовностью первым встать лицом к лицу опасностям, угрожающим Отечеству.

Гражданская позиция Арташеса Гегамяна с особой яркостью проявилась в его выступлениях с самых разных трибун авторитетных международных организаций. Выступлений, в которых рассматривались наиболее важные нерешенные задачи наших дней, предлагались конкретные пути для их реализации, всесторонне и глубоко анализировались проблемы, решение которых призвано содействовать созиданию нашего настоящего и, тем более, достойного будущего.

Не надо быть особо мудрым, чтобы давать оценки уже свершившимся событиям. А вот на основе глубоких знаний суметь предвидеть опасные тенденции для страны и при этом указывать пути по их избежанию – дано не каждому, а присуще лишь государственным деятелям, политикам, имеющим целостное, широкое мировосприятие, умеющим заглядывать в будущее. Материалы, опубликованные в книге Арташеса Гегамяна “Взгляд в будущее”, убедительно свидетельствуют о том, что он является именно таким деятелем, человеком, который от природы одарен и всегда востребован, особенно, в нелегкие для нашего народа времена.

В феврале-марте 2008 года, когда в Армении нагнеталась взрывоопасная ситуация, когда направляемые извне, отдельные авантюристы от политики, пытались раздвоить общество, разобщить людей, поднять их друг против друга, спровоцировать по всей республике гражданские столкновения, Арташес Гегамян был одним из тех немногих деятелей, который без промедления и со всей решительностью встал на пути разрушителей армянской государственности, противников армяно-российского стратегического союза. Он сумел сорвать фарисейскую маску с лжедемократов, разоблачить антиармянскую суть их деятельности.

На следующий же день после трагических событий 1 марта 2008 года партия “Национальное Единение” была первой, которая дала принципиальную оценку случившемуся и тем самым во многом способствовала стабилизации ситуации в Республике Армения. Прошедший после этого период показал, что позиция партии “Национальное Единение” в это сверхнапряженное время была проявлением патриотизма и своеобразной готовности к самопожертвованию во имя безопасности страны.

Глубоко продуманы и обоснованы аналитические публикации Арташеса Гегамяна, относящиеся вопросов развития экономики, ее особенностей, а также по

преодолению экономических и финансовых проблем, стоящих перед республикой, оказавшейся в финансово-экономическом кризисе. Так, на собрании актива партии “Национальное Единение” состоявшемся 9 сентября 2008 года выдвинутые А.Гегамяном и его единомышленниками предложения по преодолению кризиса, повышению эффективности деятельности правительства выдержали испытание временем и сегодня также актуальны.

Партия “Национальное Единение”, основанная Арташесом Гегамяном, за 12 лет своей деятельности, никогда не была представлена в исполнительной власти, однако, всегда стояла на позициях защиты государственных интересов. В судьбоносное для страны время партия всегда была в авангарде борьбы во имя процветания страны, зачастую принимая на себя первый удар противников нашей государственности, делала все возможное, чтобы всякого рода деструктивные силы не смогли бы играть судьбами страны и народа.

Гражданская позиция Арташеса Гегамяна своей политической, экономической и социальной направленностью может служить серьезным ориентиром для тех, кто озабочен будущим Армении.

Сборник “Взгляд в будущее”, убеждены станет для очень многих настольной книгой.

КОРЮН АРАКЕЛЯН,
САРКИС МУРАДХАНЯН
ЗАМЕСТИТЕЛИ ПРЕДСЕДАТЕЛЯ ПАРТИИ
“НАЦИОНАЛЬНОЕ ЕДИНЕНИЕ”

«ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ» ՆԱԽԱԳԱՀ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍԸ

(11.01.2008 թ.)

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ – Ինչպես և ասել էի նախորդ ասուլիսի ժամանակ, նախագահական առաջիկա ընտրություններում «Ազգային Միաբանություն կուսակցությունը» հանդես է գալու իր «Արարման ծրագրով»: Ծրագիրն արդեն երկուշաբթի օրվանից հանձնված է տպարան, կազմը, ինչպես տեսնում եք, արդեն կա: 164 էջանոց է: Բուն ծրագիրը բաղկացած է 80 էջից: Մյուս 80 էջերը պարզաբանումներ են, մեր գործընկերների հիմնավորումներն են, թե ինչո՞ւ ենք «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահության որոշմամբ առաջիկա ընտրություններին հանդես գալու սեփական թեկնածուով և նախագահական առաջիկա ընտրությունների ժամանակ մեր ժողովրդին, մեր հանրությանը ի՞նչ ունենք ասելու: Դրա հետ մեկտեղ, մենք հաշվի առանք մեր գործընկերների՝ մեզ ուղղած այն քննադատությունը, որ, իբր, 2007 մայիսի 12-ի Ազգային ժողովի ընտրություններից հետո «Ազգային Միաբանությունը» պատշաճ ակտիվությամբ հանդես չի գալիս, թուլացրել է իր ակտիվությունը և, ըստ այդմ, ընդունեցինք համապատասխան որոշում: Կուսակիցներս որոշեցին, որ այդ սին տպավորությունը փարատելու համար, ճիշտ կլիներ, իմ բոլոր ելույթները, հարցազրույցները, հոդվածները նույնպես հրատարակել: Այդ ժողովածուն ևս հանձնված է «Տիգրան Մեծ» տպարան և իր ծավալով կազմում է մոտ 390 էջ: Այդտեղ ներառված են նյութեր, որոնք տպագրվել են 2006 թ. հոկտեմբերից 2008 թ. հունվար ամիսը: Ահա սա է լինելու մեր հաշվետվությունը ժողովրդին, հասարակությանը: Մենք պարզաբանում ենք, թե այդ ժամանակաշրջանում ինչո՞վ է զբաղված եղել «Ազգային Միաբանություն կուսակցությունը» և, մասնավորապես, նրա ղեկավարը: Այս երկու ժողովածուներով էլ, խոսքս «Արարման ծրագրի» և հիշատակածս ժողովածուի մասին է, մենք գրավոր փաստաթուղթ ենք թողնում: Այնտեղ բերված ցանկացած մտքի, գնահատականի տերն ենք լինելու, և սկզբունքային հարցերի վերաբերյալ մեր կարծիքը չենք փոխելու: Ինչպես չփոխեցինք, հրատարակելով 1065 էջանոց ելույթների ու հոդվածների առաջին ժողովածուն, որն այսօր, թերևս, ամենապահանջված գիրքը պետք է լիներ նախևառաջ քաղաքական այն բոլոր ուժերի համար, ովքեր փորձում են հասկանալ, թե որտեղի՞ց են սկիզբ առնում «Ազգային Միաբանություն կուսակցության» ակունքները: Ինչ վերաբերում է «Արարման ծրագրին», ապա մեր առաջ դրված գերխնդիրն է՝ այդ ծրագիրը դարձնել մեր ժողովրդի սեփականությունը: Ցանկացած մարդ՝ ցանկացած տարիքի, ցանկացած մասնագիտության և զբաղմունքի տեր ծրագրում կգտնի, թե ո՞րն է անձամբ իր դերա-

կատարությունը, ի՞նչ է պահանջվում իրենից, ինչպիսի՞ խնդիրներ պետք է լուծվեն, որպեսզի կարողանանք մեր հանրապետությունն անշեղ զարգացման մայրուղի դուրս բերել: Կա նաև պատասխանը, թե ի՞նչ է ստանալու մեր ժողովուրդը, եթե կատարի այն խնդիրները, որոնք դրված են իր առջև: Ի՞նչ պարտավորություններ է ստանձնելու և ի՞նչ պատասխանատվություն է կրելու երկրի Նախագահը և ո՞րն է լինելու հանրապետության ղեկավարի առաքելությունը և, վերջապես, ո՞րն է լինելու ժողովրդի անելիքը: Այս ասուլիսով մենք, ի թիվս այլ հարցերի, նաև հետևյալ խնդիրն ենք հետապնդում. դիմել ՀՀ Նախագահի 8 թեկնածուներին՝ հորդորելով նրանց կենտրոնանալ միայն ու միայն ծրագրային հիմնահարցերի, ծրագրային դրույթների վրա, բանավիճել այդ խնդիրների շուրջ, և որ իրենց կողմից սպասարկվող լրատվամիջոցներում թարգեն անձնական վիրավորանքներ հասցնելու գործելակերպը: Եվ հորդորում ու խնդրում ենք՝ գիտակցեն, որ այսօր գերխնդիրը, որը դրված է քաղաքական ցանկացած ուժի առջև այն է, որ փետրվարի 19-ի ընտրությունից հետո ազգն էլ ավելի կոնսոլիդացված դուրս գա, որ փետրվարի 20-ից ցանկացած հայ մարդ, ցանկացած հայի մեջ տեսնի բարեկամ և ոչ թե թշնամանք ներարկվի միմյանց հանդեպ: Որպեսզի ընտրապայքարի ընթացքում ոչ թե ազգը պառակտեն, տարանջատեն, այլ համախմբեն: Ես սա կարևորում եմ հատկապես հիմա, երբ կրկին հայաստանցի-ղարաբաղցի խիստ վտանգավոր, թշնամական երանգներ ներառող թեզ են հրապարակ իջեցրել, որով փորձում են վերջնականապես խաթարել իրավիճակը՝ դուռ բացելով, պարարտ հող ստեղծելով մեր դարավոր թշնամիների համար: Այդ իսկ նկատառումով, կարծում եմ, բոլորիդ կհետաքրքրեն մեր առաջիկա քայլերը:

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՍԱՅԱՆ – Պարոն Գեղամյան, Դուք, փաստորեն, Նախագահի թեկնածուներից երկրորդն եք, որ խոսում եք ծրագրի մասին և ներկայացնում եք Ձեր ծրագիրը: Ենթադրում եմ, որ Դուք ծանոթ եք Լևոն Տեր-Պետրոսյանի ծրագրին: Եվ ի՞նչ, ուղղակի ի՞նչ կարծիք, գնահատական կտաք: Եթե կարդացել եք, այնտեղ 1970-80-ական թվականների խորհրդային տարիների մասին բավականին խիստ գնահատական էր հնչում, իսկ Դուք այդ տարիներին աշխատել եք կառավարման համակարգում: Ձեր գնահատականով, որքանո՞վ են անկողմնակալ այդ գնահատականները:

Ա. Գ. – Բնականաբար, ես շատ լուրջ եմ մոտենում ցանկացած ասուլիսի և մինչև ասուլիսի գալը, որոշակի նյութեր եմ հանում, ծանոթանում դրանց: Ես ամենայն ուշադրությամբ կարդացել եմ Լևոն Տեր-Պետրոսյանի «Հանդարտ խոհերը» և կարդալու եմ նաև Նախագահի մյուս 7 թեկնածուների ծրագրերը: Ես դա պարտավոր եմ անել՝ խնդիր ունենալով հարստացնել իմ ծրագիրը: Եթե վիճարկելի հարցեր լինեն, բարեկամական զրույցի ժամանակ ուղղակի պարզաբանելու եմ, թե որիս մոտեցումն է ավելի պահանջված և ավելի ճիշտ: Այն ցանկությունները, որոնք ներկայացված են Լևոն Տեր-Պետրոսյանի ծրագրում, այո, դրանք ընդունելի են, մենք էլ ենք գտնում, որ դա այդպես է: Եվ ոչ միայն գտնում ենք դրանց պահանջված լինելու փաստը, այլև նշում, որ այդ ամենը շարադրված է դեռ 2006 թ. լույս տեսած իմ գրքում, այնտեղ զետեղված տարբեր հոդվածներում: Ասես թե գրքիցս ծաղկաքաղ է

արված: Այդ իսկ պատճառով պարոն Տեր-Պետրոսյանի ծրագիրը գնահատելիս ինքս ինձ հակասել չեմ կարող: Այո, ընդունում և շնորհակալություն եմ հայտնում, որ այդքան խնամքով է մոտեցել ժամանակին իմ բարձրացրած հարցերին, միաժամանակ հայոց լեզվի տեսակետից ինձ համար խմբագրական որոշ ուսանելի փոփոխությունների է ենթարկել՝ բովանդակային մասը թողնելով նույնը: Ինչ վերաբերում է նախորդ վարչակազմի գնահատականներին, ահա այստեղ է, որ պարոն Լևոն Տեր-Պետրոսյանը որակազրկվել է, և այս նյութերը նրան տրամադրողները, ըստ էության, իրեն վարկաբեկել են: Այնպես որ, եթե 2008 թ. «Քաղաքական Հայաստան» մրցանակաբաշխություն լինի, կարելի է ասել, որ Լևոն Տեր-Պետրոսյանը, ըստ լրագրող Ռուզան Ազիզյանի տերմինաբանության, որպես որակազրկված քաղաքական գործիչ արդեն առաջին տեղում է: Հիմնավորեմ, թե ինչո՞ւ: Նշեմ, որ ամենախիստ գնահատականները, որ տրվում են նրա կողմից, ուղեկցվում են թվային վերլուծություններով: Այսպես, պարոն Լևոն Տեր-Պետրոսյանը գրում է, որ Լոռու մարզում 1997թ. կար այսքան աշակերտ, իսկ 2007-ին՝ այսքան, ապա բերում է համանման թվական տվյալներ Տավուշի, Շիրակի մարզերից, առանձին գյուղերի թվեր էլ է բերում, որով էլ ինքն իրեն շատ խոցելի է դարձնում: Զգլացա, ուսումնասիրեցի 1990 թ. Ազգային վիճակագրական ծառայության (այն ժամանակ դրա անվանումը Կենտրոնական վիճակագրական վարչություն էր) բոլոր վերլուծությունները: Եվ մի հետաքրքիր փաստի վրա դուրս եկա, որը, հասկանալի է, ինձ համար ինքնին գաղտնիք չէր: Ինչո՞ւ վերն ասացի, որ Լևոն Տեր-Պետրոսյանն այս ծրագրով վարկաբեկվել է, որովհետև, ասած ռուսի, նրան «պատստավկա» արեցին. օգտվեցին այն հանգամանքից, որ նա շատ հեռու է ժողովրդագրական վերլուծություն անելու հմտությունից, շատ հեռու է նաև տնտեսագիտական վերլուծություն անելուց, ուստիև տղերքը շեֆին «պադվադիտ» արեցին: Ինչո՞վ է դա արտահայտվել: Խնդրում եմ ուշադիր եղեք. 1987-88 թթ., այսինքն, երբ արդեն երկիրը փլուզվում էր, Խորհրդային Հայաստանում ծնվել է 91000 երեխա, 1989 թ.՝ 86700 երեխա: Լևոն Տեր-Պետրոսյանի հիշատակած և բնական աճի գագաթնակետ հանդիսացող 1997 թ. ծնվել է 43900 երեխա: Ուրեմն, մի դեպքում 91000, մյուս դեպքում՝ 43000: Հիմա, ո՞րն է ազգակործան վարչախումբ եղել: Այն վարչախումբը, որի օրոք տարեկան 91000 երեխա է ծնվել, թե երբ Առաջավոր Ասիայի գրեթե ամենազարգացած հանրապետությունն ընդամենը 7 տարիների ընթացքում հասցրեցին թշվառության այն աստիճանի, որ 2 անգամ ծնելիությունը նվազեց: Իսկ մենք հասկանում ենք, թե դա ինչի արդյունք էր: Կրկնում եմ, ծնելիությունը պակասեց 2 անգամ՝ 91000-ից իջավ 43000-ի: Եվ հետո ինչպե՞ս անհարմար չի զգում, որ գրում է, թե աշակերտների թիվն իր օրոք ավելի շատ էր, քան ներկայումս: Բա 91000 հազար ծնված երեխաները չէ՞, որ 7, 8, 9 տարի հետո դառնում են դպրոցականներ, պարզ է, որ այդ թիվը բարձր կլինի: Էդ մարդը տրամաբանել էլ չգիտի: 7-8 տարի հետո չէ՞, որ 1989 թ. ծնվածը դպրոց պետք է գնար: Ինչ վերաբերում է գործող վարչակազմին, հավասարակշռությունը պահպանենք և ասենք, որ, այո, գործող իշխանությունների օրոք նույնպես ծնելիությունն անկում է ապրել: Բայց արդարության առաջ չմեղանչելու համար, ես ձեզ թվերը ներկայացնեմ, եզրակացու-

թյունը դուք արեք: Ինչպես ասացի, 1997թ. ծնվել է 43900 երեխա, 1998-ին՝ 39366: Լարվածությունը թուլացնելու համար, ժողովրդական լեզվով ասած, չէ՞ որ 1998-ի ծնվածների ցրցամը հիմնականում 1997-ին են տվել: Լևոնի օրոք ծնելիությունն արդեն իսկ 39000-ի է հասել, 2000 թվականին՝ 34000, 2001-ին՝ 32300: Ինչևէ, 2006-ին արդեն փոքր-ինչ աճել է՝ հասնելով 37560-ի: Այսինքն՝ միտումը դեպի դրական է փոխվել: Եվ այդտեղ, բառիս իսկական առումով, Լևոնի թիմակիցները խորամանկել են, ինքը, համոզված եմ, ոչ էլ խորացել է այդ հարցերի մեջ: Համենայն դեպս, վարկաբեկել են Լևոն Հակոբիչին, ինչի համար ցավում եմ: Ես չէի ուզենա, որ մեր առաջին Նախագահը հանդես գար այդքան անտեղյակ մարդու դիրքերից:

Երկրորդը՝ ծրագրի հետ կապված: Սեպտեմբերի 21-ին առաջին հանրահավաքի ժամանակ, եթե հիշում եք, նա հանգստացրեց հայ ժողովրդին, ասելով, որ ընդամենը 3 տարով է պատրաստվում Նախագահ դառնալ: Մեկ էլ հանկարծ ծրագրում կարդում ենք, որ 2008-2012 թթ. լինելու է այսպես, լինելու է այնպես: Այ տնաշեն, բա 3 տարով էիր ուզում գալ, էլ ինչո՞ւ ես 5 տարվա ծրագիր առաջարկում: Դա նրա կողմից թույլ տրված երկրորդ վրիպումն է: Երրորդ վրիպումը ինձ համար շատ ու շատ տագնապահարույց է. դեռ իշխանության չեկած՝ իրենք արդեն որոշել են, թե մեղավորներն ովքեր են, մարդկանց էս գլխից ամբաստանյալ են ճանաչում և մամուլում էլ գրում, թե ով, որտեղ է դատվելու և ինչպես է դատվելու: Ամբաստանյալների նկարներն են իրենց թերթերով ցույց տալիս: Բա կանգնում ճառեր էիր ասում, որ եթե իշխանության գաք, ամեն ինչ պետք է անեք, որ արդարադատությունն անկախ լինի, որ դատարանը քաղաքական պատվերներ չկատարի: Դեռ իշխանության չեկած, իսկ գալը ես բացառում եմ, նրանք արդեն ամբաստանյալների նկարներ են փակցնում: Գրում են, որ այդ մարդիկ փետրվարի 25-ին դատվելու են: Ուրեմն, տեսեք, թե ի՞նչ հետաքրքրական և հատկանշական բան է տեղի ունենում: Մարդ, որը հավակնում է Նախագահ ընտրվել, թվում է, թե որպես Նախագահ իր առաջին քայլը պետք է ժողովրդին համախմբող, ժողովրդին արարման ուղի բերող լինի, սակայն նրանք վրեժխնդրության մոլուցքով են տառապում, քաղաքական գործիչներին օր առաջ պատժելու խնդրով են մտահոգ: Բավական է վերջին երկու օրերի «Հայկական ժամանակ» թերթը կարդալ և գալ մի եզրահանգման, այն է, որ պարոն Տեր-Պետրոսյանի թիմը նման նենգություն դրսևորելով՝ հարվածի տակ է դնում առաջին հերթին հենց նրան:

Մ. Ե. – Պարոն Գեղամյան, վերջերս բոլորս ականատես եղանք, թե ինչպես վարչապետ Սերժ Սարգսյանը սիրալիր գնահատական տվեց Արտաշես Գեղամյանին և Դուք էլ ասացիք, որ հաճելիորեն զարմացած եք: Այսինքն՝ փոխադարձ կոմպլիմենտներ տեղի ունեցան վարչապետի և Ձեր միջև: Հիմա ո՞նց հասկանանք, ո՞նց պատկերացնենք:

Ա.Գ. – Նախ, քաղաքական գործիչը քաղաքական գործչին քաղաքական գնահատական է տալիս: Սերժ Սարգսյանն իմ հասցեին տվեց քաղաքական գնահատական, և ես, չթաքցնեմ, հաճելիորեն զարմացա, դա ինձ համար անակնկալ էր և, ասեմ, թե ինչո՞վ էր անակնկալ: Երբ անձնական վերաբերմունքդ քաղաքական այս կամ այն գործչի նկատմամբ դնում ես մի կողմ և

առաջնությունը տալիս ես պետության համար կարևորություն ներկայացնող հարցերին, թե պետականությանը նպաստող կամ էլ հակառակը՝ պետականության հիմքերը խարխլող, և այդ դիրքերից ես գնահատում քաղաքական գործչին, դրանով դու վերստին հաստատում ես, որ երկրիդ պատրիոտն ես: Ահա սա էր Սերժ Սարգսյանի կողմից իմ հասցեին ասվածի առանցքը: Նման մոտեցում, ցավոք, Լևոն Տեր-Պետրոսյանին շատ խորթ է: Ատելություն, թշնամանք սերմանել – սա է Լևոնին ներհատուկ: Եվ, բնականաբար, պարոն Ս. Սարգսյանն ինձ տված այդ գնահատականով մեր քաղաքական բանավեճը բարձրացրեց նոր մակարդակի, այն է՝ ծրագրային հիմնադրույթների շուրջ քննարկումների: Դրսևորած վերաբերմունքով նա օրինակ ծառայեց բոլորին: Եվ, կարծում եմ, Լևոն Տեր-Պետրոսյանը ճիշտ կաներ, եթե իր թերթերի էջերում քաղաքական գործիչներին անհիմն պախարակելու փոխարեն բանավեճ ծավալեր ծրագրային հիմնահարցերի շուրջ և այդ պարագայում թեկուզև ջախջախիչ քննադատության ենթարկեր նրանց: Այնպես որ, պարոն Սարգսյանի տված գնահատականը ես համարում եմ շատ բարձր, ոչ թե այն պատճառով, որ անձիս է վերաբերում, այլ դա իր հետևից բերելու է քաղաքական բանավեճ վարելու նոր, բարձր մակարդակ:

ԼՐԱԳՐՈՂ – Մեկ ժամ առաջ Լևոն Տեր-Պետրոսյանն իր ասուլիսում հայտարարեց, որ ստիպված է վերադարձել քաղաքական դաշտ, որովհետև այս ընտրությունների ժամանակ քաղաքական դաշտում ընդդիմությունը ներկայացված չէր լինի, եթե նա չմասնակցեր: Խոսքը ոչ թե պարոն Գեղամյանի մասին է կամ մեկ ուրիշ թեկնածուի, այլ բոլորի, իշխանական թեկնածուից բացի: Խնդրում եմ Ձեր մեկնաբանությունը:

Ա.Գ. – Ռուսական լավ ասացվածք կա, երբ ցանկալին իրականության տեղ փորձում են սաղացնել հանրությանը, հասարակությանը, այն է՝ “когда желаемое выдают за действительное”. Այո, Լևոն Տեր-Պետրոսյանը, եթե նման բան է ասել, ապա բացահայտել է այն, ինչի մասին մենք նոյեմբերի 27-ին ձեզ հետ արդեն խոսել ենք: Հիշո՞ւմ եք, որ դեռ այն ասուլիսի ժամանակ հայտարարվեց, որ անցած 10 տարիներին տերպետրոսյանական քարոզչամեքենան շարունակաբար զբաղված է եղել միայն մի խնդրի լուծմամբ, այն է՝ պախարակել, վարկաբեկել գործող ընդդիմությանը: Բարեբախտաբար, դա նրա մոտ չհաջողվեց, չստացվեց: Ինչ վերաբերում է նրա պնդմանը, որ ընդդիմությունը ներկայացված չէր լինի ընտրություններին, եթե ինքը չառաջադրվեր, ապա այդ հայտարարությամբ առաջին հերթին ուժգին ապտակ է հասցրել հենց իրեն սատարող ընդդիմադիր քաղաքական գործիչներին՝ վերջիններիս զրոյի հավասարեցնելով: Եթե նրանք դա հանդուրժում են, դա իրենց անձնական գործն է, իրենց անձնական խնդիրն է: Լևոնի ասածը ես ինձ վրա, բնականաբար, չեմ վերցնում: Լևոն Տեր-Պետրոսյանին քաղաքական մրցակից չեմ համարում, որովհետև նրա հեղինակած այս «Հանդարտ խոհերը» ինձ հուշեցին մի բան, որ նա նիրհում է «նիրվանայի» տակ և դեռ քնից չի արթնացել: Նա շարունակում է մնալ ճիշտ այն նույն վիճակում, որում նա հայտնվել էր 1991թ., երբ ժամը 11-ն անց կես էր գործի գնում: Այնուհետև 12-ից մինչև ժամը երկուսը շախմատ էր խաղում, հետո հաղթանակի դեպքում խնջույք էր կազմակերպում: Ինչո՞ւ եք դուք Լևոն Տեր-Պետրոս-

յանին, այո, դուք, մատնացույց անում, արհեստականորեն ուռճացնում նրա դերակատարությունը: Դուք միտումնավոր նրա շուրջը ստեղծում եք խորհրդավորության մի ինչ-որ մթնոլորտ, դուք արհեստականորեն փորձում եք նրա վարկանիշը բարձրացնել, որովհետև շատ լավ գիտակցում եք, որ ընդդիմադիր բոլոր թեկնածուներից ամենախոցելին նա է՝ Լևոն Տեր-Պետրոսյանը: Իր նախորդ գործերով Լևոն Տեր-Պետրոսյանն ամենամերժելին է: Եվ դա մեզ համար ակնհայտ դարձավ, երբ նրա կողմից ուղղորդվող մամուլը հերյուրանքներ էր տպագրում «Ազգային Միաբանության», մասնավորապես, իմ հասցեին, իսկ «պատասխանատու» հեռուստաալիքներն էլ դա հալած յուղի տեղ ընդունում և տարածում էին հանրության շրջանում որպես վերջին ատյանի ճշմարտություն ու ներկայացնում էին հեռուստադիտողներին, ըստ էության, զանգվածաբար տարածելով այդ հերյուրանքը: Սերժ Սարգսյանի համար ամենաերազելի և երանելի մրցակիցը Լևոն Տեր-Պետրոսյանն է, որովհետև իշխանությունները իրենց գզրոցներում այնքան բան ունեն, որ, Աստված մի արասցե, եթե հանկարծ դրանք հրապարակեն, ոմանք շատ վատ կացության մեջ կհայտնվեն: Եվ Լևոն Տեր-Պետրոսյանը դա շատ լավ գիտակցում է: Շատ լավ հասկանում է, որովհետև վերջին հաշվով նա իրականությունից ինչքան էլ կտրված է, բայց ինքնապաշտպանության բնազդը, կարծում եմ, վերջնականապես չի կորցրել: Եվ չզարմանաք, նա անգամ իսկ հետևում է իմ հորդորներին: Հիմա, որ չստացվի մերկապարոնց հայտարարություն եմ անում, հիշեցնեմ ձեզ: Վերջերս հեռուստաեթերից դիմելով Տեր-Պետրոսյանին ասել էի. եթե դու քննադատելու բան ունես Սերժ Սարգսյանի և Ռոբերտ Քոչարյանի հասցեին, դա անելը քո իրավունքն է, դա հասկանալի է: Սակայն հանգիստ թողեք Հայոց պետականությունը, որը քանիցս բնութագրել եք որպես ավազակապետություն: Անցավ շատ կարճ ժամանակ, արդեն ավազակապետության մասին ոչ մի խոսք չկա, խոսքը գնաց արդեն ավազակապետական վարչախմբի մասին, համակարգի մասին: Հասկացավ, որ կոպիտ սայթաքում թույլ տվեց: Հորդորել էի, որ անվանական չվիրավորի Ռոբերտ Քոչարյանին, Սերժ Սարգսյանին և Նախագահի ցանկացած այլ թեկնածուի, որովհետև մեր դարավոր «բարեկամները» կասեն՝ տեսեք, հայ ժողովուրդը դատապարտված է ինչպիսի անձանց միջև ընտրություն կատարելու: Ի պատիվ իրեն, կրկին, հասկացավ, դրանից հետո սկսեց Ռոբերտ Քոչարյանին, Սերժ Սարգսյանի գովքն անել, որ իր նախագահության ժամանակ, երբ ինքն էր աշխատում, նրանք շատ էլ լավ էին իրենց դրսևորում: Այնպես որ, ասել, որ նա ոչ մի բան չի սովորում, սխալ կլինի: Բայց մենք մեր զգոնությունը չպետք է կորցնենք, տեսեք, նա հերթական սայթաքումն է թույլ տվել, ասել է, որ ընդդիմադիր դաշտ առանց իրեն չէր ձևավորվի, գոյություն չէր ունենա: Այո, Լևոնը կուզենար, որ այդպես լիներ: Ինքը ձգտում էր դրան, բայց, բարեբախտաբար, դա նրան ի կատար ածել այդպես էլ չհաջողվեց: Եթե նա, իրոք, իշխանափոխություն էր ուզում, եթե նա, իրոք, մտահոգ էր երկրի ճակատագրով, չէր կարելի 10 տարի շարունակ Սև շենքում նստել ու դավեր նյութել, իսկ 10 տարի անց արձագանքել, որ, օրինակ, արտաքին քաղաքական գերատեսչությունը իրար հաջորդող ձախողումներ է թույլ տալիս, որ վերջին շրջանում արձանագրվել են բավականին լուրջ սխալներ, պռավալ-

ներ են եղել: Ի՞նչ, սպասում էր կործանվեինք, որ գար ասեր. բա, տեսա՞ք: Եթե նա, իրոք, ուզում էր, որ ընդդիմություն լիներ, 2004 թ. ապրիլի 5-ի և ապրիլի 12-ի դեպքերից հետո թող տնից դուրս գար, տեր կանգներ, եթե նա, իրոք, ընդդիմադիր էր, եթե սիրտը ցավում էր երկրի համար: Չէ՞ որ վարչակազմը փոխելու առումով էր այնտեղ հարցը դրված և ոչ թե հանրահավաքների կազմակերպիչների խնդիր կար, այլ իշխանափոխությունն իրականացնելու առումով իր գաղափարակիցներն էին: Ապրիլի 13-ին ՀՀՇ-ական բոլոր թերթերը ապատեղեկատվություն տարածեցին, իբր, ընդդիմադիր գործիչները փախուստի են դիմել, թաքստոցների տեղերն անհայտ են, և ընդդիմությանը նշավակող նման այլ անհեթեթ լրատվություն սփռեցին: Դա էլ գրում էին այն դեպքում, երբ շատ լավ էլ տեղս գիտեին, ավելին տեղեկացված էին, որ դեպքի հաջորդ իսկ օրը իմ ներկայությամբ տանս խուզարկություն էին կատարում: Այսինքն՝ հերթական անգամ բացահայտվեց նրա էությունը: Բացահայտվելու արդյունքում, ինչպես կասեր Ռուզան Ազիզյանը, նա մեկ անգամ ևս որակազրկվեց ու վարկաբեկվեց:

Եթե ձեր ժամանակը ների և կարդաք «Արարման ծրագիրը», դուք կհասկանաք, որ ձեր հարցը ժամանակավրեպ է: Եթե մեր քաղաքական բանավեճը Ռ. Քոչարյանը և Ս. Սարգսյանը բարձրացրեցրին ծրագրային հիմնադրույթների տնտեսական քաղաքականության շուրջ ընթացող թեժ քննարկումների, մենք այդ մոտեցումն ընդունեցինք և մեր բանավեճը կտեղափոխենք այդ հարթության ու կաշխատենք, այո, անպայման, հաղթող դուրս գալ: Իսկ երբ հայտնի ուժերը քաղաքական պայքարը կոմպրոմատների պայքարի են վերածում և այդտեղ էլ են տանուլ տալիս, սակայն դրանից հետո շարունակում են կրկին ապատեղեկացնել ժողովրդին, բացահայտ սուտ ու կեղծիք տարածելով թերթերում, ապա յուրաքանչյուր ազնիվ քաղաքացի պարտավոր է դրան արձագանքել: Եթե դրան չես արձագանքում, ապա նույն ՀՀՇ-ական մամուլը, դրա թիկունքում կանգնած նույն մարդիկ արդեն իսկ կբարբաջեն. տեսա՞ք, ոնց պապանձվեցին, ասելիք չունեին, որովհետև նրանք գիտեին, որ եթե չլռեն, ապա կոմպրոմատի նոր պատերազմ կսկսենք նրանց դեմ: Նման շանտաժի նրանք դիմում են մշտապես և ոմանք, ավա՜ղ, կուլ գնացին, անձնատուր եղան այդ շանտաժին: Հաշվի առնելով, որ դուք «Չորրորդ իշխանություն» թերթն եք ներկայացնում, հուշեմ ձեզ: Խորհուրդ տվեք հարգելի Շողերին, որ նա ստանձնի պատմական Խոսրովադուխտի դերը, և ինչպես նա փորձությունից փրկեց Տրդատ Մեծին, երբ վերջինս վարազ էր դարձել (գնաց ու պահանջեց, որ Գրիգոր Լուսավորիչին զնդանից հանի, եթե ուզում է նորից մարդու կերպարանք ստանա), թող Շողերն էլ Լևոն Տեր-Պետրոսյանին հուշի ընտրապայքարից դուրս գա, որ չկորցնի առաջին Նախագահ լինելու դափնիները, որ ընտրապայքարը քաղաքակիրթ հունով գնա: Այդ պարագայում նա էլ կընկալվի որպես մեր օրերի Խոսրովադուխտ:

ՄԱՐԻՆԵ ԽԱՌԱՏՅԱՆ – Պարոն Գեղամյան, կարելի է իմանալ, ովքե՞ր են ֆինանսավորում Ձեր նախընտրական քարոզարշավը և ֆինանսական ի՞նչ աղբյուրներից եք օգտվում:

Ա.Գ. – Իհարկե, կարելի է: Համենայն դեպս, մեր ֆինանսական աղբյուրները նույնը չեն, ինչ «Ժամանակ Երևանի», այսինքն՝ ամերիկյան չեն: Մեզ ֆի-

նանսավորում են տեղացի մեր բարեկամները, մեր հայրենակիցները, մեր համակիրները:

Լ. – Կարո՞ղ եք անուններ նշել:

Ա.Գ. – Անհրաժեշտության դեպքում, եթե ֆինանսավորման որևէ աղբյուր կասկած հարուցի իրավասու մարմինների մոտ, ապա մենք կներկայացնենք անհրաժեշտ բոլոր տեղեկությունները: Ընտրական օրենսգիրքն ուղղակիորեն ասում է, որ ցանկացած քաղաքացի իրավունք ունի անձնագրով ներկայանալ Կենտրոնական բանկ և 200 հազար դրամի չափով մուծում կատարել, իսկ ինքը՝ ՀՀ Նախագահի թեկնածուն, կարող է 10 մլն դրամի չափով համալրել սեփական ընտրապայքարի համար բացված հիմնադրամը:

Լ. – Իսկ մուծումներ եղե՞լ են:

Ա.Գ. – Այդ հարցը մեզ համար գերխնդիր չի եղել, որ իսկույն ասենք՝ եղել են, թե չեն եղել: Մեր ֆինանսավորման մասին խնդրում եմ հոգ չտանեք: Ամեն ինչ կլինի պատշաճ մակարդակով: Առավել ևս, իմ հրապարակային ելույթներում ձեր կողմից համակրանքի արժանացած թեկնածուի թիմակիցների նմանությամբ ես երբեք ու երբեք չեմ ասի, որ իշխանությունները 500 մլն դոլար են ծախսելու, որ կարողանան կաշառել ժողովրդին: Նման հայտարարություն անելով, ինքնին հասկանալի է, որ դրանով, ասես թե, մեսիջ են ուղարկում իրենց ֆինանսավորողներին, անտարակույս, դրսից ֆինանսավորողներին հուշելով, որ այս իշխանությունները մտադիր են այդ չափի գումար ծախսել, ուրեմն, բարի եղեք, մեզ պատշաճ մակարդակով ֆինանսավորել:

Լ. – Պարոն Գեղամյան, տեղեկություններ կան, որ Սերժ Սարգսյանը ոչ միայն նոր մակարդակի է բարձրացրել Ձեզ հետ բանավեճն իր հաճոյախոսություններով, այլև ֆինանսական որոշակի ներդրումներ է ունեցել Ձեր քարոզարշավին:

Ա.Գ. – Այսօր ևեթ ձեզ մեքենա կտրամադրեմ, անպայման գնացեք դատախազություն, հայտարարությամբ հանդես եկեք: Դուք, ըստ էության, մեղադրում եք երկրի վարչապետին կաշառատվության մեջ: Արտաշես Գեղամյանն իր հասուն կյանքում կարողացել է իր բոլոր հարցերը ինքնուրույն լուծել, և այդ հարցերը այսուհետ էլ կշարունակի ինքնուրույն լուծել: Դուք այդ հարցը տալիս եք՝ նախօրոք իմանալով այդ հարցի անհեթեթ լինելը, սակայն դրանով դուք այլ խնդիր եք լուծում, ձեզ պետք է պարզապես դա հնչեցնել: Իսկ երիտասարդ լրագրողուհուն որպես ուղեցույց հուշեմ՝ ծախված են հայաստանյան այն բոլոր գործիչները, ովքեր արժանանում են ադրբեջանաթուրքական լրատվամիջոցների ջերմագին ընդունելությանը, դրվատանքի խոսքերին: Այ, նման մարդիկ, իրոք, ծախված են: Կարծում եմ, տեղին կլիներ լրագրողական հետաքննություն սկսեիք, ես համոզված եմ, որ խնդրահարույց հարցերի շուրջ կհասնեք շատ դրական արդյունքների: Ողջունում եմ ձեզ և ձեր թերթին՝ նախօրոք տնային զագատովկա արված հարցի տապալման կապակցությամբ:

Լ. – Պարոն Գեղամյան, Դուք ասացիք, որ Լևոն Տեր-Պետրոսյանը ամենաանցանկալի և ...

Ա.Գ. – Ընդհակառակը, ոչ թե ամենաանցանկալի, այլ ամենախոցելի թեկնածուն է:

Լ. – **Դուք չե՞ք կարծում, որ այդքան շատ նրա մասին խոսելով, կարծես թե, գովազդում եք ...**

Ա.Գ. – Քաղաքական յուրաքանչյուր գործիչ պարտավոր է արձագանքել այն բոլոր գնահատականներին, որոնք հնչել են իր հասցեին, առավել ևս երկրի առաջին Նախագահի կողմից ուղղորդվող և խմբագրվող թերթերում: Միայն դրանով է պայմանավորված իմ և գործընկերներիս կողմից Լևոն Տեր-Պետրոսյանի անվան հիշատակումը: Բացարձակապես այլ պարագայում որպես քաղաքական դեմք իր ներկայիս գործունեությամբ նա ինձ համար հետաքրքրություն չի ներկայացնում: Համոզված եղեք, չի ներկայացնում պարզապես: Եվ դրա ապացույցն այն է, որ նա 10 տարի անց հանդես է գալիս «Հանդարտ խոհեր» ծրագրով, որտեղ տպագրված մտքերը մեզ համար անցած գնացած են: Խոսքը միայն դրա մասին է: Տեսեք, ի՞նչ հետաքրքիր իրավիճակ են փորձում ստեղծել «Ազգային Միաբանության կուսակցության» շուրջ: Իրենց վերահսկողության տակ գտնվող բոլոր լրատվամիջոցներում օր չկա, որ զրպարտչական որևէ բնույթի նյութ, պարզապես զազրախոսություն չտպագրեն «Ազգային Միաբանության» դեմ: Եթե չարձագանքես, ասում են՝ ասելիք չունի, տեսա՞ք, ինչպես լռեցրեցինք: Եթե պատասխանում ես, ստացվում է, կամա թե ակամա, արձագանքում ես: Արդյունքում ստացվում է, որ, այո, ինչ-որ տեղ նպաստում ես Լևոն Տեր-Պետրոսյանի անվան հիշատակմանը:

Լ. – Կարելի՞ է մեկ ճշտում, պարոն Գեղամյան: Լևոն Տեր-Պետրոսյանն այսօրվա ասուլիսում հայտարարեց, որ ինքն է միակ հակադիր ռեալ ուժը այսօրվա իշխանություններին: Եվ ինչը, սակայն Դուք չեք կիսում և, ավելին, Ձեր գործընկերները, փաստորեն, ասացին, որ Լևոն Տեր-Պետրոսյանն իշխանությունների պրոյեկտն է: Ես ուզում եմ ճշտել, Դուք նույնպե՞ս կիսում եք Ձեր գործընկերոջ տեսակետը, որ նա ոչ թե հակադիր ուժ է իշխանություններին, այլ գործող իշխանությունների պրոյեկտն է:

Ա.Գ. – Այն, որ Տեր-Պետրոսյանը իշխանությունների համար ամենացանկալի մրցակիցն է, դա ակնհայտ է, որովհետև Լևոն Տեր-Պետրոսյանի նման ավելի խոցելի թեկնածու 9 թեկնածուների մեջ չկա, որովհետև Լևոն Տեր-Պետրոսյանն իր նախագահության 8 տարիների ընթացքում հսկայական ավերածություններ կատարեց երկրում, հայ մարդու հոգեբանության մեջ, աղավաղեց, խաթարեց հայոց սրբությունների սրբոցը՝ հայ ընտանիքը, 1 միլիոնից ավել մարդ վտարանդի դարձնելով: Մարդկանց այն վիճակի հասցրեց, որ գիշերային թաղումներ եղան, ցուրտ ու մութ, զրկանքներով ուղղորդված տարիներ եղան, բայց ոչ իրենց համար: Վերջը տրվեց Հայաստանի երբեմնի ծաղկող արդյունաբերության, հայտնի մարդու բարձր հովանավորության ներքո կիլոմետրերով ձգվող քարավաններով հաստոցները տանում էին Պարսկաստան որպես մետաղի ջարդոն: Պետությունից թաքցնելով՝ հսկայական գումարներ էին կորզում, ցույց տալով, որ այդ հաստոցները հանձնվել են որպես մետաղի ջարդոն: Ավելի խոցելի լինելու համար, ի՞նչ, այլ փաստե՞ր եք ուզում: Վերստին հիշենք, որ չբացահայտված 64 սպանություններ եղան: Դրանից ավել ի՞նչ կարելի է ասել: Անգամ մի չբացահայտված աղմկահարույց

սպանության դեպքի պարագայում իրեն հարգող պաշտոնյան՝ լինի դա վարչապետ, թե պրեզիդենտ, հրաժարական է տալիս: Մի դեպքի համար, իսկ արձանագրվել էր 64 դեպք, դրա հետ, ի՞նչ, կատա՞կ եք անում: Եվ ինչու եմ ես խորհուրդ տալիս, որ տիկին Շողերը ստանձնի Խոսրովադուխտի դերը, որովհետև եթե նրանց կողմից շարունակվի այն սև քարոզարշավը, որը սանձազերծել են «Ազգային Միաբանության» դեմ, ապա հարկադրված կլինենք հիշեցնել մարդկանց այդ ամենի մասին: Դեռ իշխանության չեկած՝ նրանք սև ցուցակի մասին են խոսում: Դատարանի վճիռը չկայացած՝ նա արդեն քաղաքի ոստիկանապետին, էրեբունու թաղապետին հանցագործ է համարում, նստեցնելու օրը նշում: Ո՞վ է նրան այդ իրավունքը տվել: Եթե նրանք հրապարակային ելույթներում խոսում են բոլորի համար օրենքի հավասարության մասին, անմեղության կանխավարկածի պարտադիր կիրառման, դատարանների անկաշկանդ ու անկախ լինելու մասին և հայտարարում, որ իրենց դրոշին գրվածը դա է լինելու, ապա ինչպե՞ս է, որ ԼՏՊ-ին սպասարկող թերթերն առանց դատարանի որոշման մարդկանց որպես հանցագործ են ներկայացնում հանրությանը: Մի՞թե այդ մարդը քաղաքական հեռանկար պետք է ունենա, մի՞թե կարելի է այդ մարդուն թույլ տալ իշխանության գալ, իշխանությունը զավթել: Թող զուր տեղը չխոսեցնեն մեզ, կրկնում եմ, մեր տարերքը ուրիշներին մերկացնելը չէ, քաղաքական այս կամ այն գործչի սնանկությունն ապացուցելը չէ: Մեր տարերքը ծրագրային հիմնադրույթների շուրջ բանավեճ կազմակերպելն է, երկրի ապագայի տեսլականի շուրջ, այո, թեկուզև սուր բանավեճերի միջոցով ճշմարտությունն որոնելն է: Կանգնել է հրապարակում ու անվերջ կրկնում է՝ միակը ես եմ: է, եթե միակը Լևոնն է, ապա Սերժ Սարգսյանին խնդրեք, թող այն սպիտակ անձրևանոցներից, կուրտկաներից, որոնց վրա «ՄԻԱԿ» դաջվածք կա, տրամադրեն Լևոնին ու նրա թիմակիցներին: Թող Երևանի փողոցներով հպարտ ման գան: Մարդիկ կհասկանան, որ «ՄԻԱԿ» ասելով՝ Լևոնը և նրա կողմնակիցները միայն իրենց են պատկերացնում:

Լ. – Պարոն Գեղամյան, նախորդ ընտրություններից առաջ ընդդիմադիրների կողմից Դուք և իշխանության կողմից Սերժ Սարգսյանը հանդիպեցիք հեռուստատեսային բանավեճում: Այս անգամ կարծում եք, որ դարձյալ ընդդիմությունը Դուք կներկայացնեք և, արդյոք, բանավեճի թեմաները փոխվե՞լ են:

Ա.Գ. – Քաղաքական դաշտ իմ վերադառնալուց՝ 1995 թ., ի վեր, քաղաքական թեման մնացել է անփոփոխ. դա Հայաստանի ապագան է, Հայաստանի ապագայի տեսլականը: Դա է եղել գլխավորը, թե՛ 1995թ., երբ ես մեծամասնական ընտրություններում հաղթող ճանաչվեցի և Ազգային ժողովի պատգամավոր ընտրվեցի, թե՛ 1997 թ., երբ հիմնադրվեց «Ազգային Միաբանություն կուսակցությունը», թե՛ 1998, 2003 և 2007 թթ. խորհրդարանական ընտրությունների քարոզարշավի ժամանակ: Հիմա էլ ՀՀ Նախագահի ցանկացած թեկնածուի հետ պատրաստ եմ բանավիճել այդ մայր խնդրի շուրջ: Տեսակետս լինելու է նույնը: Եվ եթե ուշադիր կարդաք «Արարման ծրագիրը», ապա այնտեղ փաստարկված քննադատական գնահատականներ կգտնեք գործող իշխանությունների կողմից վարվող ներքին, հատկապես տնտեսական քաղաքականության մասին: Լինի դա սոցիալական ոլորտում, մակրոէ-

կոնոմիկայում, արտաքին քաղաքական ոլորտում: Դրա հետ մեկտեղ, ճշմարտության առաջ չմեղանչելու համար ասեմ, որ մենք այնտեղ նաև հիշատակել ենք, որ 2008 թ. ՀՀ պետական բյուջեն մեծ չափով իր մեջ արդեն օրենքի տեսքով ներառել է այն բոլոր հարցադրումները, որոնք շեշտված են եղել իմ հեղինակած «Հակաճգնաժամային ծրագրում»: Այսինքն՝ «Հակաճգնաժամային ծրագիրը» ձայն բարբառո հանապատի չէր, այնտեղից որոշակի դրույթներ արդեն իսկ գործի են դրվել: Մասնավորապես, շուրջ 30%-ով ավելացել է բյուջեի ծախսային մասը՝ կազմելով 2,5 մլրդ դոլարին համարժեք: Այսինքն, երբ տեսնում ես, որ քո մատնանշած ճանապարհները, զարգացման քո մատնանշած մոտեցումներն արդեն իսկ գործի են դրվել, բնականաբար, ներքին բավարարվածություն ես ստանում: Եվ դա այդպես էլ պետք է լինի, որովհետև մենք մեր երկրի նվիրյալներն ենք, թշնամին չենք: Ուրիշ բան, որ այդ լավը ցանկալի տեմպերով չի արմատավորվում: Սակայն այլ հարցադրում է, որ կան ավելի մեծ ռեսուրսներ, հնարավորություններ, որոնք այսօր, ավա՜ղ, դեռ չեն օգտագործվում: Ահա, քարոզարշավի ժամանակ մենք մեխը դնելու ենք այդ հարցերի վրա: Ինչո՞ւ չէ, կան նաև այնպիսի հարցադրումներ, որոնք ներառված չեն թե՛ իմ գործընկերների և թե՛ կառավարության ծրագրում: Խոսքս ճեղքում ապահովող ճյուղերի զարգացման մասին է, և մենք ներկայացրել ենք կոնկրետ առաջարկներ, որոնք ներառված են մեր ծրագրում:

Լ. – Պարոն Գեղամյան, եթե Ձեր «Արարման ծրագիրը» վերցնեն իշխանություններն ու սկսեն իրագործել, ի՞նչպես դրան կվերաբերվեք...

Ա.Գ. – Միայն կուրախանամ, միայն կողջունեմ, ավելին, ներքին մեծ բավարարվածություն կապրենք և՛ ես, և՛ իմ ընկերները: Ձեր ասածը հիշեցնում է մի այնպիսի իրավիճակ, երբ հիվանդ կա ընտանիքում և նրան բուժելու հնարավորությունը, անհրաժեշտ դեղերը դու ունես, բայց հիվանդին բուժել վիճակված է ընտանիքիդ մեկ այլ անդամի, որից ընդունենք, նեղացած ես: Ի՞նչ, հրաժարվես բուժող բժշկին տալ դեղը:

Լ. – Դուք չե՞ք ուզում բժիշկը դառնալ:

Ա.Գ. – Ես ուզում եմ իմ ժողովրդին ցույց տալ զարգացման ճանապարհը, ինչը, համոզված եմ, վաղ, թե ուշ կհաջողվի: Իսկ թե իմ մատնանշած զարգացման ճանապարհով ո՞վ կտանի ազգը դեպի երազած Հայաստան, դա այլ խնդիր է: Մովսես մարգարեն, երբ Եգիպտոսից դուրս բերեց իր ցեղակիցներին, 40 տարի դեգերում էր անապատներով: Հետո եկավ, լեռան բարձրունքից տեսավ Ավետյաց հողը, սակայն բարձրյալն երկնքից ասաց. դու մուտք չես գործի Ավետյաց հողը, քո ճակատին գրված է՝ ժողովրդին բերես հասցնես Ավետյաց երկիր: Ամեն մարդ ի վերուստ տրված, նախանշված իր անելիքն ունի: Տեսե՞ք, արդեն իսկ ժպտացիք, դա լավ նշան է:

Հայ ժողովուրդը, այ, սա կարող եք անգամ իսկ վերնագիր դարձնել, հայ ժողովուրդը սեզոնային հայրենասերների չի ընդունում: Եթե մարդու սիրտը ցավում է, պետք է օրվա 24 ժամը ցավի և ոչ թե դիսկրետ՝ ցավի 10 տարին մեկ:

ԱԼԵՔՍԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ – “Тут помню, тут не помню”, այդպես չի լինում, էլի:

Լ. – Պարոն Գեղամյան, որպես Նախագահի թեկնածու Դուք պահպանո՞ւմ եք Աստծո 10 պատվիրանները ...

Ա.Գ. – Հասկանալի է, շատ խորաթափանց հարց տվեցիք: Ի՞նչ կարող եմ ասել. Աստված ինքն է որոշում, թե իր զավակներից որը որքանով է 10 պատվիրանները կատարել, և դրա համար դատելու իրավունքը տրված է Տիրոջը: Եթե Աստվածաշնչին ծանոթ եք, ապա պատվիրաններից մեկն էլ այն է, որ՝ մի դատիր, որ չդատվես: Կարծում եմ, հետաքրքիր կլինի այդ պատվիրանի վերաբերյալ մեկնաբանություններ լսել դատախազի դերակատարություն ստանձնած Նախագահի թեկնածուներից մեկի կողմից:

Լ. – Պարոն Գեղամյան, ինչպե՞ս կմեկնաբանեք, որ Լևոն Տեր-Պետրոսյանը հայտարարում է, որ ինքն է միակ ընդդիմադիր թեկնածուն:

Ա.Գ. – Լևոն Տեր-Պետրոսյանի ասածը տեղավորվում է իր քարոզարշավի շրջանակների մեջ, այն է՝ այն բոլոր մարդկանց, ովքեր նրա թրի տակով չեն անցել, ովքեր ասելիք ունեն նրա նախագահ եղած տարիների մասին և այդ ասելիքն արդեն իսկ հրապարակավ ասում են, նա ընդդիմություն չի համարում: Բնականաբար, նա փորձում է հարվածը, որն ուղղված է իրեն, մեղմելու նպատակով մարդկանց շփոթության մեջ գցել: Հաշվարկը պարզ է՝ ստեղծել մտայնություն, որ, իբր, միակ ընդդիմադիրն է, քաջ գիտակցելով, որ շատ ու շատ քաղաքացիներ այսօր դժգոհ են իշխանություններից: Եվ այդ մարդկանց թվի շեշտակի կրճատումը պետք է ուղեկիցը դառնա ՀՀ Նախագահի բոլոր 9 թեկնածուների համար:

«Հ 2» ՀԵՌՈՒՍՏԱԼԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆ ՇԱՎԱՐՇ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ «ԽՈՍՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ» ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱՇԱՐԻ ՀՅՈՒՐԸ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆՆ Է

(11.01.2008 թ.)

ՇԱՎԱՐՇ ԳԵՎՈՐԳՅԱՆ – Բարի երեկո: «Խոսքի իրավունքն» է եթերում և հայկական 2-րդ հեռուստաալիքի 4-րդ ստուդիայում այսօր, այս ժամին հյուրընկալել ենք «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ պարոն Արտաշես Գեղամյանին: Բարև Ձեզ, պարոն Գեղամյան, շնորհակալություն, որ այս անգամ ընդունել եք իմ հրավերը: Իհարկե, շնորհավորում եմ Ձեզ անցած տոների կապակցությամբ և առաջին հարցս. պատրա՞ստ եք քարոզարշավին, հաշված օրեր են մնացել և ի՞նչ ձևերով եք անելու, իրականացնելու քարոզչությունը:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ – Հայտնի ասացվածք կա, որ Նախագահի ցանկացած թեկնածուի համար քարոզարշավը սկսվում է վերջին ընտրությունների հաջորդ օրվանից: Այնպես որ, 2003 թ. մարտի 5-ից սկսած ես պատրաստ եմ քարոզարշավի, իսկ քարոզարշավի մեր մեխը, այս անգամ լինելու է իմ «Արարման ծրագրի» պրոպագանդումը, դրա դրույթները մեր ժողովրդի սեփականությունը դարձնելու խնդիրը:

Շ.Գ. – Ի դեպ, ի՞նչ է իրենից ներկայացնում «Արարման ծրագիրը», եթե կարելի է՝ ընդհանուր դրույթներով ներկայացրեք այն:

Ա.Գ. – Ասեմ, որ դա այն ուղեցույցն է, որով եթե մեր երկիրն ընթանա, ապա առաջիկա 4-5 տարիների ընթացքում ճեղքումային զարգացում կապահովի բոլոր բնագավառներում, իսկ որ պակաս չեմ կարևորում, կնպաստի ազգի միաբանությանը: Ազգը կբռունցքվի, որովհետև պարզորոշ կդառնա գիտակցումը, որ այսօր բազում են այն մարտահրավերները, որոնք ծառացել են Հայոց պետականության առաջ և որոնց կարող է դիմակայել միայն համախմբված ժողովուրդը: Մի նախադասությամբ ասած, եթե դասականներին անցնենք, մասնավորապես, Հեգելին, ապա սա այն ծրագիրն է, երբ պետությունը և շարքային քաղաքացին համախմբված են ընդհանուր շահի տեսլականով: Եվ եթե ազգաբնակչության բոլոր խավերի համար այդ ընդհանուր շահի տեսլականը կա, ապա այդտեղ հաջողությունն անխուսափելի է: Իսկ հիշատակեցի Հեգելին, եթե չեմ սխալվում, «Իրավունքի փիլիսոփայություն» (“Философия истории”) հայտնի աշխատության ներածական խոսքից մեջբերում անելով:

Շ.Գ. – Պարոն Գեղամյան, մյուս թեկնածուներն էլ, իհարկե, ոչ բոլո-

ը, արդեն հրապարակել են իրենց նախընտրական ծրագրերը և նրանցից որոշներն արդեն նույնիսկ մամուլի ասուլիս են հրավիրել այդ ծրագրերը մանրամասնելու և լրագրողների հարցերին պատասխանելու: Դիցուք, ԼՏՊ-ն այսօր հրապարակել է այն, Դուք ծանո՞թ եք նրա ծրագրին:

Ա.Գ. – Ոչ միայն ծանոթ եմ, այլև ամենայն ուշադրությամբ կարդացել եմ պարոն Տեր-Պետրոսյանի ծրագիրը, ինչպես և ամենայն ուշադրությամբ կարդալու եմ իմ բոլոր գործընկերների, մրցակիցների ծրագրերը՝ մեկ խնդիր հետապնդելով. այն լավը, եթե կա ցանկացած ծրագրում, անպայմանորեն պետք է ձևը գտնեմ, ներառեմ իմ ծրագրերի մեջ, որովհետև լավը անձինը չէ, թեկնածուինը չէ, լավը մեր ազգինն է, ժողովրդինն է, պետությանն է: Ծանոթ եմ, և ասեմ՝ ինչպիսի տպավորություն կազմեցի այդ ծրագրին ծանոթանալուց հետո: Այն, ինչ վերաբերում է հայ քաղաքացու երազանքներին, անուրջներին, ապա, անշուշտ, դա հոգեհարազատ է մեր ժողովրդին: Եվ երբ այդ ծրագիրը հրապարակվեց, իմ ընկերներն ասացին. պարոն Լևոն Տեր-Պետրոսյանը, թվում է, ամենայն ուշադրությամբ հետևել է «Ազգային Միաբանություն կուսակցության» ղեկավարների, պատգամավորների հրապարակային ելույթներին, ավելին՝ սերտել է իմ «Հոդվածների, հարցազրույցների, ելույթների» գիրքը:

Շ.Գ. – Դա ավելի շո՞ւտ է հրապարակվել:

Ա.Գ. – Դա հրապարակվել է 2006 թ., և ցանկացած պարբերություն, որը տեղ է գտել ԼՏՊ-ի ծրագրում, վաղուց ի վեր արծարծված են եղել իմ այդ ժողովածուում ընդգրկված առանձին հոդվածներում, առանձին հարցազրույցներում, ելույթներում: Բայց ես դրա մեջ միայն դրական բան եմ տեսնում: Տեսեք, չէ՞ որ ասացի, եթե լավ բան լինի Տեր-Պետրոսյանի ծրագրում, ապա ինքս էլ անպայման կօգտվեմ դրանից, սակայն հետն էլ կհիշատակեմ, որ սկզբնաղբյուրն այս հեղինակն է: Այնտեղ տեղ են գտել նաև շատ մտահոգիչ կետեր: Եվ ասեմ, թե որոնք են դրանք: Զարհուրելի, սակայն ճշմարիտ վերլուծական հատված կա, ուր հիշատակվում է, թե 1997 թ. որ մարզում քանի աշակերտ ենք ունեցել, և նույնը 2007 թ.: Այստեղ նահանջն ակնհայտ է, բայց, ցավոք, այդտեղ թաքնված խորամանկություն կա և, իմ կարծիքով, դա Նախագահի թեկնածու գրանցված կամ Նախագահ դառնալ հավակնող մարդու համար աններելի խորամանկություն է: Ո՞րն է այդ խորամանկությունը: 1988-89 թթ. ՀՀ-ում ծնված երեխաների թիվը կազմել է 90-ից 91 հազար երեխա, 1990 թ.՝ 86 հազար երեխա: Պարոն Տեր-Պետրոսյանը գրում է, որ շեշտակի անկում է դպրոցականների թվում, բայց չէ՞ որ 1988, 1989, 1990 թվականների երեխաներն են արդեն իսկ 1997 թ. աշակերտներ եղել: Չէ՞ որ 7 տարեկանից նրանք դպրոց են գնացել, այսինքն՝ դեռ սովետական շրջանում, որը նա այդքան ջանասիրաբար պախարակում է, այն տարիներին ծնված երեխաներն են, որ դպրոցական են դարձել և այդ բարձր թիվն ապահովել: Այնպես որ, 1997 թ. դպրոցականների մեծաքանակ լինելը 2007-ի համեմատ ամենևին

նրա ղեկավարած տարիների հետևանքն ու արդյունքը չէ: Այսինքն՝ նա իրեն է վերագրում դրականը, որը կար նախորդ համակարգում: Գործող իշխանությունների ժամանակ, այո, ցավոք, դա էլ պետք է ասել, ծնվածների թիվն անկում է ապրել, բայց ոչ 2 անգամ: Մասնավորապես, եթե Հայաստանում 1997 թ. ծնվել է 43500 երեխա, 1998 թ. 39360, ապա 2006 թ. ծնվել է 36700 երեխա: Այսինքն՝ ներկայացնել, թե, իբր, իր ժամանակ աշակերտների թիվը շեշտակի բարձր է եղել, քան գործող իշխանությունների օրոք, դա անթույլատրելի է: Այստեղ ես հանրությանը մոլորության մեջ գցելու միտում եմ տեսնում: Թե՛ այն տարիներին, թե՛ այս վերջին տարիներին մենք ժողովրդագրական լուրջ խնդիրներ ենք ամրագրել մեր իշխանության թերի աշխատանքի արդյունքում: Եվ հավասարաչափ քննադատելի է նրանց գործունեությունն այդ ոլորտում. ցավոք սրտի եմ դա նշում: Իսկ ԼՏՊ-ի նախագահության տարիներին շեշտակի՝ երկու անգամ նվազել է ծնելիությունը, եթե համեմատում ենք 1997 թ. ծնելիության թիվը 1988 թ. հետ: Մինչդեռ 2007 թ. եթե համեմատում ենք 1997 թ. հետ, ապա 16%-ի անկում է արձանագրվել: Նաև այս խնդիրները հաշվի առնելով՝ իմ «Արարման ծրագրում» առանձնահատուկ ուշադրություն է դարձված երիտասարդ ընտանիքների կայացման հարցերին: Ավելին ասեմ՝ ծրագրում ուղղակիորեն նշված է. պետք է մշակվի երիտասարդական ընտանիքների կայացման պետական ազգային ծրագիր: Ինչպես ՌԴ-ում ազգային պրոյեկտներ եղան՝ национальные проекты, այդ թվում նաև երիտասարդությանը, երիտասարդ ընտանիքներին վերաբերող: ԼՏՊ-ի ծրագրի երկրորդ, առավել հաճախ շեշտվող դրույթն այն է, որը թմբկահարվել է նրա հրապարակային բոլոր ելույթներում, դա պնդումն է, որ ամենն արվելու է, որպեսզի ունենանք դատական անկախ համակարգ: Այդպե՞ս է, բոլոր միտինգներում ասվում է դրա մասին: Քանիցս շեշտվել է, որ մենք ունենք գործադիր իշխանություններից կախյալ դատական համակարգ, ավելին, որ դա գործադիր իշխանության կցորդն է և քաղաքական պատվերներ է կատարում: Դուք վերցրեք ԼՏՊ-ի կողմից խմբագրվող (ես լեզվի սայթաքում թույլ չտվեցի), թեկուզ երեկվա, առաջին օրվա թերթերի առաջնորդողները, և ոչ միայն առաջնորդողները, այլև հոդվածները, որոնցում արդեն իսկ գրվում է՝ փետրվարի 25-ին դատվելու և նստելու են, մասնավորապես, Երևանի ոստիկանապետ Ներսես Նազարյանը և Էրեբունու համայնքապետ Միհեր Սեդրակյանը: Բնական հարց է ծագում. եթե դու քարոզում ես դատական անկախ համակարգ հիմնելու անհրաժեշտության մասին, եթե դու գիտես նաև, որ դատահիրավական ամբողջ վարույթում անմեղության կանխավարկածն անգամ իսկ Բուրկինա-Ֆասոյում է հարգվում, ապա առանց դատարանի որոշման ո՞վ է քեզ իրավունք տվել հիշատակածս, ըստ որում, հարգված մարդկանց, այս գլխից որպես հանցագործ բնութագրել: Այսինքն՝ նրա մոտ խոսքի և գործի աչքի զարնող հակասություն կա ու դա խիստ մտահոգիչ է: Մտահոգիչ է նաև այն, որ մեկ ամսվա ընթացքում 3 անգամ փոխում է իր խոսքը: Հիշո՞ւմ եք, եթե նա սկզբում ասում էր, որ ընդամենը 3 տարի է պատրաստվում նախագահել,

որից հետո պայմաններ կստեղծվեն ազատ, արդար ընտրությունների համար և այլն, ապա, չգիտես ինչու, ծրագրում արդեն ասում է, որ ընտրողի դատին կհանձնեն 2008 - 2012 թթ. զարգացման ծրագիրը: Այսինքն՝ ասել կուզի, որ նախորդ խոսքին հավատալ պետք չէ: Հիմա, տեսեք, հետաքրքրական ինչպիսի իրավիճակ է ստեղծվել մեր երկրում: Դուք հարցը տվեցիք ինձ և եթե ես հարցին չպատասխանեի կամ թերի պատասխանեի, ապա վաղն իսկ ՀՀՇ-ական մամուլը կասեր. տեսա՞ք, Գեղամյանի լեզուն կապ էր ընկել, չկարողացավ բան ասել: Բայց եթե պատասխանում եմ, անհապաղ կասեն՝ իր խոսքում ԼՏՊ-ի ծրագրին ավելի շատ էր անդրադարձել, քան սեփական ծրագրին:

Շ.Գ. – Կարող է պատճառն այն է, որ ներկա իշխանություններին ոչ այդքան շատ եք քննադատում, քան ԼՏՊ-ին, որ, ասենք, այդ նույն մամուլում, Ձեր իսկ բնորոշմամբ, ԼՏՊ-ի կողմից խմբագրվող, Ձեզ հաճախակի մեղադրում են իշխանությունների հետ համագործակցելու մեջ: Եթե այդպես չէ, գոնե նույն այդ մամուլում կա այդ տպավորությունը, կա, ստեղծվում է: Կարծում եմ, ավելորդ չէ անդրադառնանք նաև այս երևույթին:

Ա.Գ. – Իհարկե, ավելորդ չէ: Եթե հարցը ծագել է, հարցին պետք է պատասխանել: Պարզապես այդ մարդիկ տառապում են ծուլությամբ: Եթե ծույլ չլինեին և հաջորդ շաբաթ ընթերցեին իմ «Արարման ծրագիրը», ապա կհամոզվեին, որ ծրագրում խորը վերլուծության է ենթարկված Հայաստանում ստեղծված թե՛ սոցիալ-տնտեսական, թե՛ բարոյահոգեբանական, թե՛ արտաքին քաղաքական ոլորտին վերաբերող ողջ համալիրը: Եվ այնտեղ շատ սուր քննադատության է ենթարկված գործող իշխանությունների կողմից ամենատարբեր ոլորտներում վարվող քաղաքականությունը: Բայց չստացվի, որ բոլորին հավասարաչափ չենք ընդունում: Այն բոլոր դրականը, որն արդեն իսկ 2008 թ. բյուջեում ներառված է, մենք նշում և ընդգծված դրականորեն ենք դրան անդրադառնում: Նաև շեշտում՝ չէ՞ որ այդ նույն հարցադրումները մենք բարձացրել էինք խորհրդարանական ընտրություններից առաջ մեր «Հակաճգնաժամային ծրագրում», և իշխանությունները թերահավատորեն էին մոտենում այդ ծրագրում արծարծված խնդիրների լուծմանը: Իսկ հիմա, տեսեք, ինչ ստացվեց: Ասում էի՝ թոշակները կարելի է կրկնապատկել, հեգնում էին մեզ հեռուստաէկրանից՝ ասելով, որ դա պոպուլիստական ցանկություն է: Անգամ իսկ թվեր էին հրապարակում. 15, 20 տոկոսից ավել հնարավոր չէ բարձրացնել՝ պնդում էր պետական քարոզչամեքենան: Խնդրեմ, այժմ իրենք են ծրագրել, որ թոշակները հնարավոր է բարձրացնել 60%-ով: Գտան ճանապարհները՝ ստվերը կրճատելով, կոռուպցիայի առաջն առնելով, իհարկե, մասամբ, քանի որ 60%-ով միայն 300 հազար թոշակառուների թոշակներն են ավելանալու: Հիշեցնեմ, որ, ընդհանուր առմամբ, շուրջ կես միլիոն թոշակառու ունենք:

Շ.Գ. – Մենք կարո՞ղ ենք ասել, որ ինչ-որ չափով օգտվել են Ձեր

«Հակաճգնաժամային ծրագրից»: Կարող՞ ենք այդպես ձևակերպել:

Ա.Գ. – Պարզաբանեմ: Տնտեսական բոլոր վերլուծությունները, այն էլ ազատական տնտեսությանը ներհատուկ, որ կատարվում են, լինի դա քաղաքական ուժ, լինի մասնագետ, դրանց հենքը մակրոտնտեսության շուկայական տնտեսության թեորետիկների աշխատություններն են: Դրանք՝ տեսությունները, այդքան էլ շատ չեն: Կա մոնետարիստների դպրոց, կա Քեյնսի դպրոցը, որը կարևորում է էկոնոմիկայում պետական կառավարումը և այլն: Ես հենվել եմ այդ նյութերի վրա: Ծրագիրը կազմելիս օգտվել եմ Ջոզեֆ Ստիգլիցի մոտեցումներից, որոշ հարցերում Միլտոն Ֆրիդմանի, Ջոն Մեյնարդ Քեյնսի: Բնական է, որ Հանրապետականն էլ իր ծրագրի տեսական հենքում ներառել է նույն հեղինակներին: Պարզապես իմ հարցադրումները եղել են շատ ավելի սուր և շատ ավելի կոշտ, ու այդ սրությունը և կոշտությունը տեսականորեն ամրագրված է եղել հիշատակածս և շատ այլ հեղինակների աշխատություններում, և բնավ էլ չի հակասում գիտությանը: Այո, որոշ հարցերում նրանք օգտվել են նաև մեր հարցադրումներից: Եվ դա ինձ ու իմ գործընկերների համար շատ ընդունելի է, քանի որ քաղաքական ընդդիմության դերակատարությունը, դասական ընդդիմության դերակատարությունը հենց այն է, որ քո շունչը, քո շնչառությունը իշխանությունը միշտ զգա իր թիկունքին: Եվ եթե նա չի կարող փաստարկված հերքել քո արգասաբեր առաջարկները, ապա պարտավոր է դրանք գործի դնել: Նա ուզի, թե չուզի՝ պետք է դրանք ի կատար ածի: Այ, սա է խնդիրը:

Շ.Գ. – Պարոն Գեղամյան, ձեր սուր արտահայտություններից մեկը այս պահին միտս եկավ, մասնավորապես, օր առաջ ազատվել հանցավոր իշխանություններից և այլն, և այլն: Ինչո՞վ եք բացատրում, որ նմանատիպ սուր հարցա- դրումներ, սուր, այսպես ասեմ, արտահայտություններ Ձեզ հիմա թույլ չեք տալիս: Կարո՞ղ է հենց այն պատճառով, որ որոշակի համընկումներ կան Ձեր և իշխանությունների մոտեցումներում, քիչ առաջ նշեցիք այդ մասին:

Ա.Գ. – Ձեր դիտարկումն արդարացի և միանգամայն տեղին է: Եկեք հետադարձ հայացք գցենք. 2005 թ. նոյեմբերի 27-ին ընդունվեց սահմանադրական փոփոխությունների փաթեթը: Այդ փաթեթի համաձայն արդեն իսկ Հանրապետության Նախագահը չունի այն լիազորությունները, նորընտիր Նախագահը չի ունենալու այն լիազորությունները, որոնցով նա օժտված էր նախկինում գործող Սահմանադրությամբ: 2007 թ. մայիսի 12-ին, երբ ընտրվեց նոր Ազգային ժողովը և այնտեղ մեծամասնություն ձևավորվեց, արդեն իսկ Հայաստանի Հանրապետության վարչապետի ընտրության իրավունքը վերապահված էր Ազգային ժողովում ներկայացված քաղաքական մեծամասնությանը: Դա նրանց իրավասության շրջանակներում գտնվող հարց է: Այնպես որ, եթե դու հիմա ասում ես, որ, ՀՀ Նախագահ դառնալով, օր առաջ կազատվես այս վարչակազմից՝ ի նկատի ունենալով կառավարությանը, կնշանակի դու կամ միտումնավոր թյուրիմացության մեջ ես գցում ընտրողներին, որովհետև խոստանում ես այն, ինչն անիրականանալի է, կամ էլ, ի սկզբանե, ընտրում ես բախտախնդիր մարդու, արկածախնդիր մարդու ուղի, ճանապարհ, որը խորթ է ինձ: Ասեմ՝ ինչո՞ւ արկածախնդիր և բախտախնդիր:

Եթե դու սկսում ես նախագահական լծակներդ օգտագործել, որ Ազգային ժողովում ձևավորված մեծամասնության շարքում սկսվի առնետավազք (միգուցե դա համահունչ է դեղին առնետի տարուն, ուր 2008 թ. թևակոխել ենք), ապա դա կնշանակի, որ քո հենարանը Ազգային ժողովում պետք է լինեն բարոյազուրկ մարդիկ, ովքեր հենց նավը մի քիչ տատանվում է, լքում են կառամատույցը: Իսկ նման մարդկանց ունենալ հենարան և լուծել այն բազում դժվարին խնդիրները, որոնք ծառացած են մեր երկրի առաջ, դա անհնարին կլինի, դա բախտախնդրություն է և հետն էլ մեծ նվեր մեր դարավոր «բարեկամների», հարևանների համար: Սա առաջին հանգամանքը: Երկրորդ հանգամանքը. հնարավո՞ր են արդյոք անակնկալ փոփոխություններ նախագահական ընտրությունների ժամանակ: Այո, հնարավոր են, հակառակ դեպքում ես չէի մասնակցի դրանց, հավատացնում եմ ձեզ, պարապ մարդ չեմ և այս տարիքում կայանալու խնդիր էլ չունեմ: Կնշանակի, անգամ իսկ ստեղծված այս նոր իրավիճակում ես, այնուամենայնիվ, պայքարի մեջ եմ մտել, որովհետև անելիք ու ասելիք ունեմ ժողովրդին: Իսկ, ինչո՞ւ չէ, նաև իշխանություններին ասելիք ունեմ, մանավանդ, եթե նրանք ճիշտ ուղղությամբ առաջին քայլն արել են, ապա պետք է անեն երկրորդ, երրորդ քայլերը, հակառակ դեպքում նաև հաղթանակի տանող ճանապարհը ի զորու չեն լինի անցնել: Ես մի առիթով նշել եմ և հիմա եթերով ուզում եմ դիմել հարգարժան Սերժ Սարգսյանին. պարոն Սարգսյան, արդյո՞ք կառավարության կազմում կա գեթ մեկ պաշտոնյա, ով հանկարծ վեր կենա և քննադատի Ձեզ՝ այս կամ այն հարցի վերաբերյալ հայտնելով սեփական տեսակետը, մոտեցումը խնդրի, առարկայի շուրջ՝ լինի տնտեսության բնագավառում, լինի մշակույթի և այլն: Այսօր չկա այդ մարդը, որովհետև այնտեղ լռակյաց, հնազանդ մեծամասնություն է, այլընտրանքային տեսակետներ հայտնողներ չկան, ալտերնատիվ որոշումներ առաջարկողներ չկան: Մինչդեռ փիլիսոփայական հայտնի օրենքն ասում է մեզ, որ առանց միասնության և հակասությունների պայքարի չի լինում զարգացում: Ահա սա է հրամայական պահանջի ուժ ստանում, որ իշխանությունների մեջ մշտապես պետք է լինեն այլընտրանքային որոշումներ առաջարկող քաղաքական ուժեր, որոնք այսօր կհավասարակշռեն Ազգային ժողովում բացարձակ մեծամասնություն ունեցող Հանրապետական, «Բարգավաճ Հայաստան» և Հայ Հեղափոխական Դաշնակցություն իշխանական կոալիցիա կազմած կուսակցություններին: Այսօր այս 3 կուսակցություններն են բաժանում իշխանությունը: Ահա այս մտորումներն են դարձել պատճառներից մեկը, որ ես, լինելով իրատես մարդ, քաղաքական գործիչ, որը ձգտում է մինչև վերջ ազնիվ լինել ժողովրդի առաջ, հայտարարում եմ. դառնալով ՀՀ Նախագահ՝ առաջնահերթ կարգով պետք է աշխատել, որ հանկարծ հետնահանջ չլինի այն ճանապարհից, որը, ըստ էության, արվել է 2008 թ. բյուջեի ընդունման փաստով:

Շ.Գ. – Կարո՞ղ ենք այսպես ասել. չլիներ այդ, պայմանականորեն ասենք, վտանգը, մարտահրավերը, Դուք կարող է Ձեր թեկնածությունը չառաջադրեիք:

Ա.Գ. – Քաղաքական ցանկացած գործիչ, երբ գիտակցում է իր պահանջված լինելու անհրաժեշտությունը, ըստ որում ոչ միայն ընտրողների կողմից,

այլև երկրի, պետության շահերը պաշտպանելու տեսանկյունից, ապա իր պարտքը պետք է համարի անպայմանորեն օգտագործել այս ընտրապայքարը՝ խնդիր ունենալով ժողովրդին հասցնել իր տեսակետները, իր ծրագրերը, իր մոտեցումները: 12 տարի անընդմեջ ես պատգամավոր եմ ընտրվել, 8 տարի եղել եմ ԱԺ ընդդիմադիր խմբակցություններից մեկի ղեկավարը: Ես ու իմ գործընկերներն ապացուցել ենք մեր անսահման նվիրումը Հայաստանին, և դա էլ ոչ թե հանրապետությունում, այլ եվրոպական ու միջազգային ամենահեղինակավոր քաղաքական կազմակերպությունների վեհաժողովների ամբիոններից: Եվ այսօր ձեզ մի յուրահատուկ նվեր եմ բերել: Սա Ստրասբուրգում, Վիեննայում, Ռոտերդամում, Վաշինգտոնում և այլուր իմ ունեցած 21 ելույթներից 18-ի ժողովածուն է: Ու ամենևին էլ պատահական չէ, որ սա ասում եմ: Օգտակար եմ եղել երկրին ինչքան գիտելիքներս ներել են: Մշտապես պաշտպանել ենք մեր երկրի և պետության շահերը, դա էլ հաճախ այն պարագայում, երբ տվյալ ժամանակ երկրի իշխանությունները, ժողովրդական լեզվով ասած, ճիպոտել են մեզ, ինչպես, ասենք, 2004 թ. ապրիլի 12-ի միտինգին:

Շ.Գ. – Պարոն Գեղամյան, ես կուզենայի անդրադառնալ Ձեր այսօրվա մամլո ասուլիսին, մասնավորապես, Ձեր հնչեցրած մի այնպիսի մտքի, որը նույնիսկ կարելի է այսպես որակել՝ բացահայտում, առ այն, թե ԼՏՊ-ի քաղաքականություն վերադարձը ում էր ամենից շատ ձեռնտու կամ, այսպես ասենք, ում ձեռքի գործն էր: Մի փոքր կմանրամասնեք՝ ի՞նչ եք ի նկատի ունեցել կամ ի՞նչի վրա հիմնվելով եք ասել այս ամենը:

Ա.Գ. – Այնպիսի հիմնավորում բերեմ, որ ասուլիսում չի՞ հնչել: Հունական դիցաբանության մեջ, եթե հիշում եք, Պիգմալիոն կար, Կիպրոսի թագավորն էր, հետն էլ հոյակապ քանդակագործ: Նա քանդակեց Գալատեյայի կիսանդրին և հետագայում սիրահարվեց այն աստիճանի, որ աղերսում էր, որ նա կենդանանա, և Աֆրոդիտե աստվածուհին կենդանություն պարգևեց Գալատեյային: Հիմա մեզ մոտ 10 տարի շարունակ հակառակ պրոցեսն էր ընթանում: Ասենք, Շողեր Մաքևոսյանն իր խմբագրած «Չորրորդ իշխանություն» թերթով, ՀՀՇ-ական մամուլն ընդհանրապես ստանձնել էին նորօրյա Պիգմալիոնի դերը, կենդանություն էին տալիս ԼՏՊ-ին և վերջապես նրան բերեցին քաղաքական դաշտ: Իսկ ո՞ւմ էր ձեռնտու նրա վերադարձը: Նախևառաջ ՀՀ գործող իշխանություններին: Նրանք ամեն ինչ արեցին, որ արհեստականորեն կարևորեն ԼՏՊ-ի գործոնը: Ամեն ինչ արեցին, որովհետև շատ լավ գիտակցում էին՝ քաղաքական դաշտում գործող ընդդիմադիր քաղաքական գործիչներից ամենախոցելին ԼՏՊ-ն է: Քանզի բավական է առանց մեկնաբանությունների, վավերագրական տեսահոլովակներ պտտացնեն, թե ՀՀ-ում ինչ էր տեղի ունենում 1990-97 թթ. ներառյալ, մինչև 1998 թ. փետրվար ամիսը, երբ իշխանավարում էր ԼՏՊ-ն: Բավական է խոսեցնեն այդ տարիներին խոշտանգված, սպանված մարդկանց բարեկամներին, հարազատներին, որոնք անգամ իսկ իր Նախագահ եղած տարիներին հրապարակավ մերկացրել են նրան: Ամենախոցելին նա էր և, իշխանությունների համար ամենաձեռնտու թեկնածուն նույնպես ինքն էր: Ձեռնտու էր նաև (ես փաստն եմ ար-

ձանագրում, հետևությունը թող հեռուստադիտողն անի) արտաքին այն ուժերին, ովքեր այսօր հեղեղել են թուրքական, ադրբեջանական մամուլը գովեստի խոսքերով՝ ուղղված առաջին Նախագահի «բարեմասնությունների» պրոպագանդմանը՝ հեռատեսությանը, պրագմատիզմին և այլնին, և այլնին: Ահա սա են ներկայիս իրողությունները: Այնպես որ, յուրաքանչյուր մտածող վերլուծաբան գալիս է ճիշտ այն հետևություններին, որոնք այսօր հնչել են մեր մամուլի ասուլիսի ժամանակ: Մենք ուղղակի առաջինը հնչեցրեցինք այդ մասին: Այո, իշխանությունների, Սերժ Սարգսյանի համար ամենացանկալի մրցակիցը ԼՏՊ-ն է: Որովհետև, կրկնում եմ, նրա նախագահության տարիներին կատարված հանցագործությունների բացահայտումները, ալանթալանը եթե հեռուստատեսությամբ վերստին ցուցադրվեն, ապա ընտրողների համար ամեն ինչ պարզ կլինի: Դա չի նշանակում, որ գործող իշխանությունները խոցելի չեն, նրանք էլ շատ խոցելի են, դրա համար էլ այս ամենի մասին խոսելիս երկու կողմից կրակի տակ հայտնվեցի: Տեսեք, տրամաբանական ի՞նչ աբսուրդի, անհեթեթ վիճակում են գործում մարդիկ: ԼՏՊ-ի լրատվամիջոցներն անվերջ ասում են, որ ես, իբր, պայմանավորվել եմ իշխանությունների հետ և նրանք ինձ, իբր, ֆինանսավորում են: Հեռուստաալիքներն էլ, որոնց վրա ԼՏՊ-ի թիմի ազդեցությունը քիչ է, ՀՀՇ-ական մամուլում տպագրված այդ հերյուրանքը մամուլի տեսության ժամանակ հետևողականորեն տարածում են մեր ազգաբնակչության շրջանում: Հիմա, օգտվելով եթերի հնարավորությունից, ես հանդիպակաց հարցով ուզում եմ դիմել մեր իշխանություններին՝ հաշվի առնելով, որ սա ուղիղ եթեր է, խոսքս չի կրճատի: Մի՞թե գործող իշխանությունների համար վիրավորական չէ, որ ՀՀՇ-ական լրատվամիջոցները մեղադրում են Ձեզ խաբեության, կաշառատվության մեջ: Կամ մի՞թե մեր իշխանություններն այդ աստիճանի թուլացած են, որ իրենց քաղաքական մրցակցին հարկադրված են լռեցնել Գեղամյանի հասցեին ՀՀՇ-ական բարբաջանքը եթերով հեռարձակելու միջոցով: Չէ՞ որ իրենք բավարար լծակներ ունեին, որ կարողանային արգելակել «Ազգային Միաբանություն կուսակցության» մուտքը Ազգային ժողով, չէ՞ որ ցանկացած սոցիարցումով «Ազգային Միաբանությունը» պետք է ներկայացված լիներ խորհրդարանում: Բայց, ավա՜ղ, դա չեղավ, որովհետև իշխանությունների համար ամենաանհարմար քաղաքական ուժը մենք էինք: Եվ մենք էինք ոչ թե նրա համար, որ երբեմն ԱԺ-ում, միգուցե, չափից ավելի կոշտ հայտարարություններ էինք անում, այլ այն պատճառով, որովհետև մենք անկաշկանդ էինք այդ հայտարարություններն անելիս, անկախ էինք մեր գործողություններում: Որովհետև իշխանությունները գիտակցում էին, որ մեր անհաշտ լինելը պայմանավորված է նրանով, որ մեր սիրտն է ցավում, որ իրենց այդքան կոշտ ենք քննադատում, որովհետև ուզում ենք իրենց մեջ գութ արթնացնել: Եվ, բարեբախտաբար, դա մեզ մեծի մասով հաջողվեց և արդեն թեկուզ առանց մեզ, բայց նրանք սկսել են ականջալուր լինել մեր ասածներին, քայլեր ձեռնարկել վիճակը շտկելու համար: Այնպես որ, մենք մեր առաքելությունը կատարեցինք: Կրկնում եմ, դրա ապացույցը Հայաստանի Հանրապետության 2008 թ. բյուջեն է:

Շ.Գ. – Պարոն Գեղամյան, մի այսպիսի հարց եմ ուզում ուղղել Ձեզ,

որը, իհարկե, ուղղվել է Ձեզ բազմաթիվ մեկնաբանների կողմից: Նորմալ և օրինաչափ համարում եք, ասենք, թեկուզև զուտ քաղաքագիտական տեսանկյունից, երբ քաղաքական ընդդիմադիր գործիչը իշխանության ներկայացուցչի հետ հանդիպում է կամ հանդիպման արդյունքում պայմանավորվածություններ են ձեռք բերվում, կամ էլ ձեռք չեն բերվում, դա արդեն էական չէ: Կարծես մեր մենթալիտետին մի քիչ հակասում է:

Ա.Գ. – Եթե երկու կողմերի քաղաքական գործիչները մարդկային պատշաճ բարձրության վրա են, լինի դա իշխանություն, լինի ընդդիմություն, եթե երկուսն էլ գեթ մեկ նպատակ են հետապնդում, այն է՝ երկրի բարօրության, անվտանգության ապահովումը, ապա նրանք դատապարտված են ոչ թե ընտրությունից ընտրություն միմյանց հետ հանդիպելու, այլ բախտորոշ ցանկացած հարցի շուրջ պարտավոր են նստել, բանավիճել և քննարկումներ ծավալել: Այ, հիմա հարցը տվեցիք, և ես ուշագրավ մի պատմություն հիշեցի, ես ձեր այս հարցին չէի սպասում, չէ՞: Լեդի Ասքորն և Ուինսթոն Չերչիլը բավականաչափ թշնամանքով են լցված եղել մեկը մյուսի հանդեպ: Նրանք իրար տանել չէին կարող և դա ակնհայտ է եղել անգլիացիների համար: Բայց երբ Լոնդոնի հրթիռային առաջին ռմբակոծությունները եղան, լեդի Ասքորն ու Չերչիլը գրեթե օրումեջ իրար հետ խորհրդակցում էին: Բնականաբար, երկուսով չէ, էլի մարդիկ էին մասնակցում այդ խորհրդակցություններին և, ահա, մի առիթով լեդի Ասքորը Ուինսթոն Չերչիլին ասել է. գիտեք, սըր, եթե ես Ձեր կինը լինեի, ես ձեզ սիրով կթունավորեի: Դրանով ուզեցել է ընդգծել իր ատելության չափը: Չերչիլն էլ, ունենալով հումորի մեծ զգացում, պատասխանել է. այո, լեդի, եթե Դուք իմ կինը լինեիք, ապա ես սիրով Ձեր ձեռքից թույնը կխմեի: Այսինքն՝ անգամ իրար թունավորելու պատրաստ մարդիկ, երբ իրենց հայրենիքին վտանգ է սպառնացել, հավաքվել են նույն սեղանի շուրջ և բախտորոշ հարցեր քննարկել: Սա բրիտանական դասական քաղաքական մշակույթ է, և դա մենք օր առաջ պետք է սերմանենք մեզ մոտ ու դարձնենք մեր ամենօրյա գործելակերպը: Իսկ այն տգետ վերլուծությունները, որ ՀՀՇ-ական մամուլում եղան, որ, ահա, հանդիպել եմ Ռոբերտ Քոչարյանին, Սերժ Սարգսյանին, ապա եթերից եմ հայտարարում՝ հարկ եղած դեպքում օրը տասը անգամ, այո, կհանդիպեմ և ոչ միայն իրենց, այլև նույն Լևոն Տեր-Պետրոսյանի հետ: Տասը անգամ: Եվ դա երբեք ու երբեք չի սասանի իմ ինքնուրույնությունը: Եթե դու գիտես, որ երկրի առջև ծառացել են լուրջ հարցեր, խնդիրներ, ապա այդ վտանգների մասին պարտավոր ես իրազեկել, մանրամասնել բոլոր նրանց, ովքեր ի զորու են դրանց առաջն առնել, որովհետև ամենը չէ, որ կարելի է մամուլի կամ հեռուստատեսության միջոցով հրապարակ հանել: Ես հավատարիմ եմ այս մոտեցմանը: Իսկ իմ քաղաքական տեսակետները ես գաղտնի չեմ պահում: Այդ տեսակետները թղթին եմ տալիս և կգա ժամանակ, երբ ուշադիր կընթերցեն, թե գործնականում ով ի՞նչ է ասել, կպարզեն նաև, որ ոմանք ասածներից մի ամիս հետո հրաժարվել են, իսկ մյուսներն էլ մշտապես, բանաստեղծի խոսքով ասած, որպես անմար փարոս փայփայել են իրենց սրտերում, իրենց գիտակցության մեջ մեր ազգի ամենանվիրական գաղափարներն ու գործերը:

«ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ» ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ» ՀԱՂՈՐԴԱՇԱՐԻ ՀՅՈՒՐԸ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆՆ Է

(19.01.2008 թ.)

ԼՐԱԳՐՈՂ – Պարոն Գեղամյան, Դուք, երևի, ամենափորձառու թեկնածուներից եք այս ընտրությունների ժամանակ, և կամ էլ ակտիվ մասնակից, կամ շահագրգիռ ականատեսն եք եղել անկախ Հայաստանի բոլոր ընտրությունների: Համեմատության մեջ ինչպե՞ս կգնահատեիք նախընտրական այս փուլը:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ – Շնորհակալություն հրավերի համար: Պատմության մեջ ընտրությունների մասնակցելու փորձառություն ունեցողների ավելի վառ օրինակներ կան, մասնավորապես, Բենջամին Դիզրայելին 5 անգամ է մասնակցել Մեծ Բրիտանիայում ընտրություններին և, վերջիվերջո, ընտրվել է անգլիական պառլամենտի ներկայացուցիչների պալատի անդամ: Ընտրություններին սա իմ երրորդ մասնակցությունն է, այնպես որ դեռ լիարժեք փորձառություն ձեռք բերելու համար երկու ընտրության էլ պետք է մասնակցեմ, որ հասնեմ Դիզրայելիին ու իմ նպատակին: Նախորդ ընտրությունների հետ տարբերությունը, թերևս, այն է, որ այս ընտրությունները կարող են բախտորոշ դառնալ Հայաստանի ճակատագրի համար, որովհետև արդեն իսկ ակնհայտ են վերահաս թե՛ ներքին և թե՛ արտաքին մարտահրավերները: Եթե ընտրություններն արդար, թափանցիկ և ժողովրդավարական չլինեն, ապա կարող են կործանարար հետևանքներ բերել Հայոց պետականությանը: Ուստի, պատահական չէր, որ ասացի՝ այս ընտրությունները բախտորոշ են լինելու մեր հայոց նորագույն պատմության, երրորդ հանրապետության պատմության համար: Ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր թեկնածուի առաջ դա դնում է առանձնահատուկ զգոնության պահանջ և պատասխանատվության խնդիր, ինչու չէ, նաև լուրջ առաջադրանք է ներկայացնում մեր ժողովրդին: Մենք այլևս սխալվելու իրավուք չունենք: Իսկ ընտրությունները կեղծելու իրավունք իշխանություններն ընդհանրապես չունեն:

Լ. – Իսկ ինչպիսի՞ գործոններ, միջոցառումներ, նախաձեռնություններ են անհրաժեշտ, որպեսզի այս ընտրություններն անցնեն արդար:

Ա.Գ. – Գիտեք, գայլի գլխին ինչքան ուզում ես ավետարան կարդա, միևնույն է, անտառին է նայելու և մինչև չգիտակցի, որ մահացու վտանգը հենց իրեն է սպառնում, նա բացարձակապես չի դադարի ոչխար հոշոտել…

Լ. – Ո՞վ է գայլը:

Ա.Գ. – Համակարգը, որը ձևավորվել է անցած տարիների ընթացքում:

Համակարգն արդեն հասել է այն աստիճանի, որ կարող է ինքն իրեն խժռել: Գրականությունից հիշենք Մերի Շեյլիի ստեղծած դոկտոր Ֆրանկենշտեյնի ֆենոմենը, երբ նա մի այնպիսի արարած է ստեղծում, որը վերջում հենց իրեն է խժռում: Այս համակարգը հասել է վտանգավորության մի այնպիսի փուլի, որ կարող է ինքնաոչնչացմամբ զբաղվել: Եվ այդ վտանգի գիտակցումը պետք է բոլորիս համար ուղեցույց դառնա, որ կարողանանք ճիշտ կողմնորոշվել և կարողանանք ընտրությունների գործընթացին միջամտելուց զերծ պահել այն բոլոր մարդկանց, ովքեր առաջնորդվում են ոչ թե երկրի, պետականության շահերով, այլ բախտախնդրությամբ: Ազգովի ասենք, որ այս անգամ դա չի անցնի:

Լ. – Եվ շատ է խոսվում քաղաքական կամքի մասին: Դուք հավատո՞ւմ եք, որ համակարգի մոտ, այդպես ասենք, կարող է քաղաքական կամք դրսևորվել:

Ա.Գ. – Այո, հավատում եմ, որովհետև, կարծում եմ, իշխանությունները նույնպես գիտակցում են, որ այս ընտրությունները ճակատագրական են լինելու երկրի, պետության համար: Դրանք, անշուշտ, ճակատագրական կլինեն ինչպես իշխանության թեկնածուի, այնպես էլ առաջադրված բոլոր թեկնածուների համար: Տվյալ դեպքում մենք պատասխանատվություն ենք կրելու գալիք սերունդների առաջ: Եվ պատմության դատաստանը անողոք կգտնվի յուրաքանչյուր այն թեկնածուի, քաղաքական այն ուժի հանդեպ, որը հանկարծ կգայթակղվի և հանուն պաշտոնի կփորձի կեղծել ընտրությունը՝ դրանով իսկ սասանելով մեր պետականությունը:

Լ. – Փորձենք կարճ և հերթականությամբ քննարկել ժողովրդավարական ընտրությունների այն բոլոր մեխանիզմները, որոնք առաջարկվել են դիտորդական առաքելությունների, միջազգային կազմակերպությունների կողմից: Ինչպե՞ս կգնահատեք միջազգային դիտորդների դերը, արդյո՞ք դա կարևոր գործոն է մեզ համար:

Ա.Գ. – Ցավոք, ինչպես ցույց են տվել վերջին տարիների ընտրությունները, միջազգային դիտորդական առաքելությունների կողմից տրված գնահատականները շատ դեպքերում ունեցել են ընդգծված աշխարհաքաղաքական ուղղվածություն, միշտ չէ, որ նրանք եղել են անաչառ. որոշ դեպքերում հետապնդել են այս կամ այն շահերը և ոչ ամենևին ընտրողների:

Լ. – Դա լինելու է նաև ա՞յս անգամ:

Ա.Գ. – Ես դժվարանում եմ նախօրոք գուշակություններ անել, առավել ևս այս հարցում առաջնորդվելու եմ անմեղության կանխավարկածով: Համենայն դեպս, 1995, 2007 թ. խորհրդարանական, 1996, 1998, 2003 թ. նախագահական ընտրություններին միջազգային դիտորդական առաքելությունների տված գնահատականները բնավ չեն կարող գոհացնել թե՛ ինձ, թե՛ մեր ժողովրդի մեծամասնությանը: Ուստի, դիտորդական հերթական առաքելությանը շատ լուրջ վերաբերվելը կլինի միամտություն: Սա մի մոտեցում է: Երկրորդ տեսակետը. բավական է ինքներս մեզ դնենք ամբաստանյալի կարգավիճա-

կում և ապավինենք այս կամ այն դիտորդի գնահատականին: Մենք պետք է գիտակցենք, որ մինչև դիտորդական այդ առաքելությունների ստեղծվելը, Հայաստանը սրանից մոտ 3 հազար տարի առաջ պետականություն է ունեցել: Ըստ այդմ, պետք չէ, որ մենք մեզ արհեստականորեն դնենք աշակերտի տեղ և հետո էլ ուրախանանք կամ էլ տխրենք, երբ դիտորդական այս կամ այն առաքելության ներկայացուցիչը դրվատանքի կամ պարսավանքի խոսք է ասում մեր հասցեին: Դա մեր ազգային արժանապատվությունը վիրավորում է: Եվ ես դիտորդական այդ առաքելություններին հարգանքով եմ մոտենում այնքանով, որքանով Հայաստանի Հանրապետությունը անդամակցելով Եվրախորհրդին, ԵԱՀԿ-ին՝ որոշակի պարտավորություններ է ստանձնել և դրանք պետք է պատվով կատարի: Երրորդ. հյուրասիրության ավանդույթից ելնելով՝ մենք պետք է հյուրին ջերմությամբ ընդունենք ու ճանապարհ գցենք: Բայց դրա հետ մեկտեղ պետք է նաև գիտակցենք, որ մեր ապագան ինքներս ենք արարելու: Կրկնում եմ, պետք է գիտակցենք դա և մեզ արհեստականորեն չդնենք մի այնպիսի իրավիճակի մեջ, որ վաղը, մյուս օրը Հայաստանի ճակատագիրը միջազգային կառույցները դիտորդական առաքելությունների հրամցնելով լուծեն: Վերջում էլ դա հասնի միջազգային ինչ-որ մի չինովնիկի, որն էլ բրիտանական հայտնի վարչապետի պես ասի՝ բրիտանական նավերը չեն կարող մագլցել հայկական լեռները: Ուստի, ես այդ աստիճան չեմ կարևորում դիտորդական առաքելության նշանակությունը: Ես կարևորում եմ մեր ժողովրդի կամարտահայտության, գենետիկորեն հատկանշական ազգապահպան բնազդի ուժը, որը, ավա՜ղ, անցած տարիների ընթացքում ամեն կերպ փորձել են բթացնել: Էլ չեմ ասում, երբեմն վարվել են այնպես, որ հայ մարդը կորցնի սեփական ուժերի նկատմամբ վստահությունը և սեփական ճակատագիրն արարելու վճռականությունը:

L. – Հաջորդը՝ սոցիոլոգիական հարցումներ: Օգնո՞ւմ են դրանք ժողովրդին կողմնորոշվել ընտրություններից առաջ, թե ոչ:

Ա.Գ. – Իմ գործընկերներից մեկը շատ դիպուկ նկատել էր, որ սոցիոլոգիան շատ ճշգրիտ գիտություն է. ինչքան վճարում ես, այնքան էլ տոկոս կարող ես ակնկալել:

L. – Եվ դա նույնիսկ այն դեպքում, երբ մենք հրավիրում էինք միջազգային հեղինակավոր սոցիոլոգիական ծառայություններ՞ը:

Ա.Գ. – Հայտնի երգիծաբանը կասեր՝ կարևոր չէ, թե ընտրություններն ինչպես են անցնում, կարևոր է, թե ով է ընտրությունների արդյունքներն ամփոփում: Մեթոդաբանությունը, որով տվյալ պարագայում առաջնորդվում են «Գելլափի» կամ «Հարիսի» հասարակական կարծիքի ուսումնասիրման հայտնի կենտրոնները, սոցիարցումների ազնիվ անցկացման դեպքում, այո, կարող է գրանցվել առավելագույն սխալ, որը տատանվում է 1,5-3%-ի սահմաններում: Բայց անգամ իսկ այդ մեթոդաբանության պայմաններում, եթե հաշվետարները, ես չեմ ուզում ասել՝ ամփոփագրեր կազմողները, միտումնավոր թվաբանական սխալներ են թույլ տալիս, ապա այդ պարագայում սո-

ցիոլոգիական հարցումները բնավ կարևոր չեն, այդ դեպքում դրանց պետք է հումորով մոտենալ: Անկողմնակալ, ճշգրիտ անցկացված հարցումները, ինչ խոսք, կարևոր են: Իսկ ինչո՞ւ են կարևոր, որովհետև հարցախույզը, որն արտահայտված է հարցերի տեսքով, իր մեջ շատ խելացի հարցեր է ընդգրկում: Այո, գիտական կենտրոններում մշակված շատ խելացի նյութեր, հարցադրումներ կան: Այո, այդ հարցադրումներն իրենց հիմնավորվածությամբ կարող են հասնել «Ռենդ կորպորեյշն» կոչված կազմակերպության մշակումներին, որտեղ և գրվում են աշխարհիս հեռանկարային զարգացումների սցենարները:

L. – Ինձ թվում է, նախընտրական փուլում հարցերը շատ պարզ են: Ո՞ւմ կընտրեիք Նախագահ:

Ա.Գ. – Բա, եթե պարզ են, ապա սոցիոլոգիական այդքան կենտրոններ արժի՞, որ պահում են առաջադեմ երկրները: Ինչո՞ւ եք այդ մարդկանց էս գլխից դառնայեդի, ձրիակերի տեղ դնում:

L. – Պետք է անցկացնել, հաշվել և արդյունքները մշակել:

Ա.Գ. – Անհրաժեշտ է ունենալ 2-3 փորձառու հաշվետար, որ ցանկացած պահեստում կգտնես, պարզապես, պետք է հանրագումարի բերեն գիտականորեն մշակված այդ հարցաթերթիկները: Թե չէ, սեփական կեղծիքը քողարկելու համար գիտնականներ, գիտական կոչում ունեցող մարդկանց տեղադադար են անում, իբր, սոցիոլոգիական հարցումներ են անցկացնում, վերջում էլ ասում են՝ այս թվերը կհրապարակեք: ԱՄՆ-ի հանրապետական միջազգային ինստիտուտից Երևան էին հրավիրել սոցիոլոգների: Նրանք եկան, լուրջ դեմքերով ասացին՝ այսպես է եղել, այնպես է եղել: Վերջում մեկ էլ, երբ տեսնում ես նրանց ուսումնասիրությունների արդյունքում ինչ է գրված, մնում ես շիվարած: Կարող է տպավորություն ստեղծվի, որ այդ հարցումներն անց են կացվել արևմտաեվրոպական ամենազարգացած և հարուստ երկրում, սակայն դրանց ամփոփումները, չգիտես ինչու, հրամցնում են հայ ընտրողին:

L. – Ես արդեն կանխատեսում եմ, որ «էկզիտ պոլ»-երի նկատմամբ նույն վերաբերմունքն ունեք:

Ա.Գ. – Թարմ օրինակ բերեմ. հունվարի 5-ին Վրաստանում անցկացվեցին ընտրություններ: Երկու տարբեր խմբեր «էկզիտ պոլ» էին անում, այն է՝ ընտրությունից անմիջապես հետո գաղտնիության պարագայում մոտենում են ընտրողին և դիմում հարցով. «Դուք ձայնը ո՞ւմ եք տվել»: Եվ ի՞նչ եք կարծում՝ Գաչեչիլաձեի կողմնակիցների անցկացրած «էկզիտ պոլ»-ը վկայում էր, որ ընտրողների 53%-ը իրենց ձայնը տվել էին Գաչեչիլաձեին, 26-27%-ը՝ Միխայիլ Սահակաշվիլիին: Եվ ճիշտ հակառակ արդյունք էին գրանցել Միխայիլ Սահակաշվիլու կողմից ներգրավված «էկզիտ պոլ» անցկացնողները: Կարևորը, թերևս, ոչ թե այդ հարցումները ցցուն դարձնելն է, այլ այն, որ մեր ժողովուրդը գիտակցի՝ իր հետևողականության արդյունքով է որոշվելու իր և իր երեխայի, ինչպես նաև երկրի ճակատագիրը: Եթե լինի այդ գիտակցումը,

ապա այդ ժամանակ ցանկացած «էկզիտ պոլ», սոցիոլոգիական ցանկացած հարցում, հավատացնում եմ ձեզ, գրոշի արժեք էլ չի ունենա:

Լ. – Դուք կարողանում եք այդպես հանգիստ և փիլիսոփայորեն նայել դրան, իսկ ժողովուրդն ի՞նչ անի: Ինչո՞վ կողմնորոշվի:

Ա. Գ. – Իսկ ձեզ ինչո՞ւ է թվում, որ ժողովրդի ծոցից դուրս եկածը կարող է հանգիստ և փիլիսոփայորեն նայի, իսկ ում ծոցից դուրս է եկել նա չի՞ կարող: Մեր ժողովրդից ավելի իմաստուն ազգի հազվադեպ կհանդիպես: Ուրիշ բան, որ հայի վերջին խելքն է լինում իմաստունը: Հիմա վերջը, ավա՜ղ, մոտենում է, և ես համոզված եմ մի ճշմարտության մեջ. եթե պատմության քառուղիներում մեր ազգը, փորձություններով լեցուն ճանապարհ անցնելով, այնուամենայնիվ, հասել է 21-րդ դար և այսօր համաշխարհային հանրությանն իր անկախ պետականությամբ է ներկայանում, կնշանակի, ի վերուստ մեզ տրված է մի այնպիսի հետաքրքիր ճակատագիր, որը մենք պարտավոր ենք իմաստավորել և հասկանալ: Որտե՞ղ են ասորիները, որտե՞ղ են միդիացիները, որտե՞ղ է Հին Բաբելոնը: Այդ քաղաքակրթությունները չկան, բայց Հայաստանը կա. կնշանակի, այս փոքր տարածքի վրա կուտակված է շատ հետաքրքիր քաղաքակրթական մի խառնարան, կնշանակի, մեր ազգին մենք ինքներս պետք է փիլիսոփայորեն մոտենանք, իմաստավորենք մեր ով լինելը: Պետք է խորհենք այն մասին, որ միգուցե եկել հասել ենք 21-րդ դար, որպեսզի քրիստոնեական և մահմեդական քաղաքակրթությունների, ինչու՞ չէ, նաև հրեական քաղաքակրթության միջև կամուրջ հանդիսանաք: Եթե այս տեսանկյունից մոտենանք, ապա կարելի է ասել, որ Նախագահի կամ Ազգային ժողովի ընտրությունները շարքային, աննկատ, սովորական գործընթացներ չեն, այլ դա մի հնարավորություն է, որպեսզի ազգի ընտրանի ընտրելով՝ աշխարհին պատշաճ ներկայացնենք մեր հավերժությունը: Եվ ոչ թե դեռ ընտրությունները չսկսած, մի ամբողջ ազգի պահեն էլեկտրականացված վիճակում՝ կարևորելով երրորդական, տասներորդական հարցերը: Մի ամբողջ ազգ հեռուստատեսությամբ օրական լսում է. սա սրիկա է, նա ծախված, սա գործակալ է, նա դրածո: Բզկտում են ազգի հավաքական ուժը, բզկտում են մի ամբողջ ժողովրդի՝ չհասկանալով և չգիտակցելով, որ նման վարվելակերպով ջուր են լցնում թշնամու ջրաղացին: Առաջ անցնելով ասեմ, որ բացարձակապես պատահական չէր, որ, սթափ գնահատելով երկրում ստեղծված իրավիճակը, մենք ընտրեցինք մեր կարգախոսը՝ «Հանուն ազգային միաբանության»: Եթե ընտրությունների արդյունքում հասնենք ազգային միաբանության, այդ դեպքում փետրվարի 20-ին ազգը համաշխարհային հանրության առաջ ավելի համախմբված, ավելի միաբանված հանդես կգա: Հավատացնում եմ ձեզ, որ այդ պարագայում մենք չենք ունենա և ոչ մի խնդիր, որն ի զորու չլինենք հաղթահարել:

Լ. – Բայց պատմական այն ժամանակներում, որ Դուք հիշեցիք, հեռուստացույց չկար, այսօր հեռուստատեսություն կա և այն իր փոփոխություններն է մտցնում հարաբերությունների մեջ: Այդ առումով հե-

ռուստատեսային բանավեճերը, մեր այս հարցազրույցի նման երևույթները ինչպիսի՞ դեր կարող են խաղալ:

Ա.Գ. – Կարող են թե՛ դրական, թե՛ բացասական դեր խաղալ, եթե առաջնորդվեն մի գաղափարով, որ ընտրությունների արդյունքում պետք է պարտվողներ չլինեն թե՛ թեկնածուների մեջ, թե՛ ընտրողների շարքում: Հեռուստատեսության միջոցով կարելի է հետևողականորեն հասնել նրան, որ մեր ժողովուրդը գա այդ գիտակցության, որ չլինեն պարտվողներ, իսկ հաղթողն էլ լինի հաղթանակած Հայոց պետականությունը: Ահա այսպիսին եմ ես պատկերացնում հեռուստատեսության դերը, և այդ դեպքում նա կլինի աննկարագրելի բարձր: Մենք էլ ձեզ հետ հերթական անգամ կգնանք Երևանի կենտրոնական գերեզմանատուն՝ Պետրոս Ադամյանի շիրիմին խոնարհվելու և շնորհակալություն հայտնելու, որ նա արեց հեռուստատեսության գյուտը:

L. – Հարցեր համալսարանից, խնդրեմ:

ՀՐԱՅՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ (Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան) – Պարոն Գեղամյան, 2007 թ. հուլիսի 7-ին «Հայկական ժամանակ» թերթում տպագրվեց մի նյութ, ըստ որի Դուք առաջիկա նախագահական ընտրություններում միացել եք ՀԺԿ-ի, «Իմպիչմենտ» դաշինքի ու «Հանրապետություն» կուսակցությանը և մեկ միասնական թեկնածուի եք պաշտպանելու: Հետագայում դրա վերաբերյալ ինֆորմացիա եղավ, նաև «168 ժամ»-ում տպագրվեց: Իմ հարցը հետևյալն է. ստու՞մ է Նիկոլ Փաշինյանը, թե չէ, որովհետև ինքը նշում է, որ համաձայնությունը կայացվել է Ձեր և Ձեր 4 տեղակալների ներկայությամբ, Ձեր կուսակցության գրասենյակում, նախագահության նիստերի դահլիճում: Մի հարց էլ. եթե Լևոն Տեր-Պետրոսյանը նախագահական ընտրություններում դուրս գա 2-րդ փուլ, Դուք նրանց կպաշտպանե՞ք, թե Ձեր սովորության համաձայն ոչ մեկին չեք պաշտպանի:

Ա.Գ. – Իմ սովորությունների մասին անգամ կինս այդքան հստակ եզրակացություններ անել չի համարձակվում, որքան դուք, չնայած արդեն 30 տարուց ավել է, ինչ միասին ընտանիք են կազմել: Այնուամենայնիվ, շնորհակալություն հարցերի համար: Ինչ վերաբերում է առաջին հարցին, ապա ուշադրություն դարձրեք, որ ձեր հիշատակած մարդը ինքն իրեն հակասել է, որովհետև հուլիսի 7-ին Լևոն Տեր-Պետրոսյանը դեռ իր «պատմական» ելույթը չէր ունեցել և հայ ժողովրդի աղաչանք-պաղատանքին, որ նախագահական ընտրություններում դնի իր թեկնածությունը, դեռ դրական չէր արձագանքել: Նա դա արեց աշնանը՝ սեպտեմբերի 21-ին: Այսինքն՝ հուլիսի 7-ին հնարավոր է, որ որոշ մարդկանց երևակայության մեջ Լևոն Տեր-Պետրոսյանի մասին ինչոր բաներ ուրվագծված լինեին, բայց ոչ «Ազգային Միաբանություն կուսակցությունում»: Իսկ ինչ վերաբերում է միասնական թեկնածուով հանդես գալու վերաբերյալ ձեռքբերված սկզբունքային պայմանավորվածությանը, ապա միանգամայն ճիշտ եք, դա եղել է մեր առաջարկը, որը հետագայում իր զարգացումն է ստացել սեպտեմբերի 7-ին «Ազգային Միաբանություն կուսակցու-

թյան» ընդունած հայտարարության մեջ: Հիշո՞ւմ եք, մենք հանդես եկանք հայտարարությամբ և կոչով դիմեցինք բոլոր թեկնածուներին՝ լինի դա դիմադիր, թե ընդդիմադիր, այլ ոչ թե ընդդիմությանը կամ իշխանությանը, գիտակցելով, որ երկրի առջև ծառացած վերահաս վտանգը բոլորինս է, հավաքվել, նստել կլոր սեղանի շուրջ, և մեր նորագույն պատմության մեջ գեթ մեկ հարցի, այն է՝ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման բանակցությունների շուրջ, գալ ընդհանուր եզրակացության: Ավելին, որն ամենակարևորն է, մենք ձգտում էինք հանդես գալ միասնական թեկնածուով, որ կներկայացներ թե՛ ընդդիմությունը և թե՛ իշխանությունը, որպեսզի միջազգային հանրությանը հասկանալի դառնա, որ Լեռնային Ղարաբաղի հարցում բոլորս միակամ ենք, բոլորս առաջնորդվում ենք նույն սկզբունքներով, նույն եզրահանգումներով: Ավա՜ղ, դա տեղի չունեցավ: Եվ տեղի չունեցավ ոչ մեր մեղքով: Մի փոքր զարգացնեմ այս միտքը: Այո, մենք պայմանավորվել էինք ընտրապայքարի ժամանակ փոխադարձ կոռեկտություն դրսևորելու մասին: Եվ ի՞նչ, 15 օր անընդմեջ ամենավերջին ստոր արտահայտություններով բնութագրում էին «Ազգային Միաբանություն կուսակցությանը», գործընկերներիս և ինձ: Քանի որ մենք պայմանավորվածություն ունեինք կոռեկտության, ես իմ գործընկերներին խնդրեցի, որ պարզապես չարձագանքեն, մտածում էի, որ դա միտումնավոր չէ, կազմակերպված բնույթ չի կրում: Բայց մեր հորդորներին՝ լինել պարկեշտ, երբ չարձագանքեցին, մենք հարկադրված եղանք այլ բնույթի մարտավարություն որդեգրել: Այն է՝ մեր հասցեին ուղղված ցանկացած զրպարտության, մեղադրանքի շինծու լինելը հիմնավորեցինք, իսկ դրա արդյունքում տեսա՞ք, թե ինչպես լռեցին. կնշանակի, մեզ հակադարձելու ասելիք չունեն, կնշանակի, ինչ էլ մենք ենք ասում, դա տեղին է, ճշմարտություն է: Եվ ահա այստեղ էր, որ Պանդորայի արկղը բացվեց, և Լևոն Տեր-Պետրոսյանի դաշտում ավերածություններ տեղի ունեցան:

Երկրորդ փուլի հետ կապված: Եթե մի բանը գիտես անհնարին է, դու չես կարող այդ հարցի շուրջ լուրջ ելույթներ, եզրակացություններ ունենալ: Լևոն Տեր-Պետրոսյանը երկրորդ փուլ անցնելու բացարձակապես և ոչ մի շանս չունի: Անգամ իսկ, եթե հանկարծ հրաշք տեղի ունեցավ կամ ճակատագիրը հերթական խաղը փորձեց խաղալ հայ ժողովրդի հետ, ես ոչ մի պարագայում Լևոն Տեր-Պետրոսյանին չեմ պաշտպանի:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ («Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիա») – Պարոն Գեղամյան, ես 2 հարց ունեմ, եթե կարելի է: Առաջինը. դարձյալ սրվել է ԱՄՆ–Իրան հարաբերությունները, որոնք հղի են պատերազմով և հղի են ռմբակոծություններով: Հատկապես, եթե լինեն խորքային ռմբակոծություններ, մենք խիստ անհանգստացած ենք, որ դա սեյսմիկ մեծ վտանգ է տարածաշրջանի և հատկապես Հայաստանի համար: Այս առումով 42 կազմակերպությամբ դիմեցինք և՛ Հայաստանի ղեկավարությանը, և՛ օտարերկրյա դեսպանատներին, անհանգստություն հայտնելով և խնդրեցինք մեր ղեկավարությանը, որպեսզի

մենք միջնորդ հանդիսանանք այդ երկու երկրների միջև: Եթե Դուք ընտրվեք, ինչպե՞ս եք պատկերացնում, գոնե այս հարցում, հնարավո՞ր է վարել ավելի ակտիվ արտաքին քաղաքականություն: Սա առաջին հարցը: Եվ երկրորդ հարցը դարձյալ Երևանի էկոլոգիայի վերաբերյալ է: Շարունակվում է կետային կառուցապատումը Երևանում, անխնա ոչնչացվում են կանաչ տարածքները: Հենց այս երկու օրը տեխնիկա է մտել Դալմայի այգիներ, մարդիկ բողոքում են, զանգահարում են: Ավելին, շարունակվում է կառուցապատումը նույնիսկ դպրոցների շուրջ: Սեյսմիկ նորմերն անտեսվում են և, փաստորեն, եթե մի փոքր հարված լինի, այդ դպրոցներն անգամ վտանգված կլինեն: Եթե Դուք ընտրվեք, այս խնդրի լուծումը տեսնո՞ւմ եք և ինչպե՞ս:

Ա.Գ. – Ձեր բարձրացրած երկու հարցերն էլ խիստ կարևորում եմ: Կներեք, առավել շատ կարևորում եմ առաջին հարցը և ասեմ, թե ինչու: Դուք միանգամայն ճիշտ եք, որ ամերիկյան ռմբակոծությունների վտանգն օրակարգից հանված չէ: 2007-2008 թթ. ԱՄՆ բյուջեում (ինչու եմ երկու տարեթիվ նշում, որովհետև նրանց մոտ բյուջեները կազմվում են հոկտեմբերից հոկտեմբեր) նախատեսված է, որ Պենտագոնի ծախսերը ավելանալու են ավելի քան 34%-ով: Այդ ֆոնի վրա, երբ պարզ է դառնում, որ Իրաքում ռազմական գործողությունները գնալով սահմանափակվելու են, համենայն դեպս ռազմական խոշորածավալ գործողություն չի նախատեսվում, նույնը Աֆղանստանում, հարց է ծագում, թե որտե՞ղ են ծախսվելու այդ հավելյալ գումարները: Եթե ռազմական ծախսերն արդեն իսկ բյուջեով 34% ավելանալու են, կնշանակի, ինչ որ հնարավոր անակնկալներ կարող են լինել և երբ վերլուծում ես ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը ներկայացնող մարդկանց հրապարակային ելույթները, ապա տեսնում ես, որ նման վտանգ, այո, ծառացած է: Ահա սրանով է պայմանավորված «Ազգային Միաբանություն կուսակցության» այն հորդորը, այն պահանջը, որ ոչ մի դեպքում չի կարելի թույլ տալ, որ Հանրապետության Նախագահի ընտրությունների ընթացքում երկրում իրավիճակն ապակայունանա: Ապակայունացումը հղի է դրսի միջամտությամբ, հղի է Ադրբեջանի և Թուրքիայի կողմից պատերազմական գործողությունների սանձազերծմամբ, մասնավորապես, հայ-ադրբեջանական բաժանարար գծում, որը շարունակվում է Արաքս գետի ամբողջ երկարությամբ, որտեղ այսօր տեղակայված են Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանության բանակի ստորաբաժանումները: Եթե պատերազմական գործողություններ հրահրեցին, համոզված կարող եմ ասել, թեկուզ նույն Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի անվտանգությունն ապահովելու պատրվակով (չնայած դա գցված է 124 կմ հեռավորության վրա), Ադրբեջանը, ունենալով Թուրքիայի հետ ռազմաքաղաքական դաշնակցային համապատասխան պայմանագրեր, կդիմի միջազգային հանրությանը՝ պահանջելով, որ միջազգային խաղաղարար ուժերի դրոշի ներքո տարածաշրջան մտցվեն թուրքական ռազմական ուժեր: Նպատակը մեկն է, որ հայ-ադրբեջանա-իրանական սահ-

մանում ամեն գնով տեղակայվեն միջազգային խաղաղարար ուժեր: Ինքնին հասկանալի է, որ դեպքերի նման զարգացում Ռուսաստանը երբեք ու երբեք թույլ չի տա: Այսինքն՝ Հայաստանը կհայտնվի շատ ծանր իրավիճակում, որից շահած, ավա՜ղ, դուրս չենք գա: Ահա սրա համար է, որ մենք ահազանգում, թմբկահարում ենք, որ պետք է բացառվի ապակայունացումը, որ դա կլինի հավասարազոր դավաճանությանը: Տարածաշրջանում ստեղծված իրավիճակում, հանուն Նախագահի աթոռին տիրանալու, չի կարելի վտանգել Հայոց պետականությունը, փորձել ՀՀ-ում ապակայունություն հրահրել: Ահա սրա համար է, որ մենք խիստ տագնապում ենք, երբ ցանկացած օր դրանց թերթերին նայելիս (անունները չտամ՝ թուրքական, ադրբեջանական), դրանցում զետեղված նյութերին ծանոթանալիս տեսնում ես, որ Նախագահի թեկնածուներից մեկի գովքն են անում: Նման բաներ երբեք պատահական չեն լինում: Կնշանակի, նրանք գիտակցում են, եթե զարգացումները ցանկալի հունով գնան, ապա իրենց բաղձալի նպատակին կհասնեն, այն է՝ պարարտ հող ստեղծել Իրանի դեմ ռազմական գործողություններ սանձազերծելու նպատակով: Սա այն ամենը չէ, որ ես այսօր կարող եմ ասել (գիտեցածս շատ ավելին է), բայց խնդիր չունեմ արհեստական լարվածություն ստեղծելու: Սակայն մի բան կարող եմ հստակ հայտարարել՝ քաղաքական այն բոլոր ուժերը, ովքեր կփորձեն սադրանքի միջոցով ապակայունացնել երկրում իրավիճակը, կնշանակի, նրանք դրանով իսկ հայ ժողովրդի դեմ են գործողություն սանձազերծում: Նրանք, պարզապես, իրականացնում են հայերիս դարավոր «բարեկամների» երազանքը: Մեր տարածաշրջանում աշխարհաքաղաքական լուրջ շահեր հետապնդող երկրների ջրաղացին են ջուր լցնում, ինչը կարող է մեզ համար շատ վտանգավոր հետևանքներ ունենալ: Եվ, Աստված մի արասցե, եթե գործը հասնի ձեր հիշատակած խորքային ռումբերին (глубинные бомбы), զինամթերքի օգտագործմանը, ապա դա աղետալի, ահավոր հետևանքներ կարող է ունենալ ոչ միայն սեյսմակայունության առումով, այլև կարող է այն բոլոր գետերի, աղբյուրների, որոնցով պայմանավորված են մեր խմելու ջրի պաշարները, հունը փոխել, անգամ իսկ գետնի տակ անցնել, որի արդյունքում Հայաստանը կարող է ջրազրկվել: Չի կարելի բացառել, որ նույն Սևանը գնա գետնի տակ: Այդ հարցերը, տիկին Դանիելյան, դուք բոլորից լավ գիտեք: Գիտեք, որ Արարատյան դաշտավայրի ամբողջ տարածքով կան ստորգետնյա խոշորածավալ մեկ-երկու լճեր, որոնք գտնվում են տարբեր խորությունների վրա: Ամբողջ տարածքը, կրկնում եմ, ջրի վրա է, և խորքային այդ ռումբերի օգտագործումը կարող է հանգեցնել նրան, որ Հայաստանի տարածքի մեկ երրորդի չափով մի հսկայական անդունդ գոյանա: Դրա համար մենք այս հարցերում պետք է չափազանց աչալուրջ լինենք:

Լ. – Ի՞նչ պետք է անի ընտրված Նախագահը:

Ա.Գ. – Ընտրված Նախագահը, նախ մինչև ընտրվելը պետք է անի ամենը, որ, Աստված մի արասցե, Հայաստանում ապակայունություն չլինի: Ընտրված Նախագահը, ի սկզբանե, այդ բոլոր վտանգների մասին պետք է

կարողանա բացատրել մեր ժողովրդին, համոզել մարդկանց, որ ստեղծված իրավիճակում մեր փրկությունը մեր հավաքական ուժի մեջ է, ինչպես ժամանակին ասել է Չարենցը: Եվ Նախագահը այդ ամենի մասին պետք է խոսի պարզ, չխորամանկի: Նախագահը պետք է այս ամենի մասին զգուշացնի, իսկ որն ամենակարևորն է, դիմի նաև միջազգային հանրությանը:

Լ. – Իսկ միջնորդի դեր կարո՞ղ է ստանձնել Հայաստանը...

Ա.Գ. – Իհարկե, կարող է միջնորդի դեր ստանձնել և անպայման պետք է ստանձնի: Հայաստանը պետք է աշխարհին ներկայանա որպես քաղաքակրթություններ կամրջող երկիր: Երկրագնդի վրա դուք ոչ մի ուրիշ ազգ չեք գտնի, որը կարողանա հավասարաչափ արարել թե՛ քրիստոնեական, թե՛ իսլամական աշխարհում: Վերցրեք Մերձավոր Արևելքի երկրները, մեր Սփյուռքի գաղութները Սիրիայում, Եգիպտոսում, Լիբանանում, Իրաքում, ճիշտ նույն Պարսկաստանում: Այս բոլոր երկրներում հայերն ընդունված են եղել և կան այդպիսին, որովհետև երբ նրանք աշխատել են, ապա մարդիկ տեսել, հասկացել ու գիտակցել են, որ այս ժողովուրդը բարիք ստեղծող է, արարող: Այսինքն՝ ժողովուրդների մակարդակով քաղաքակրթությունների միջև մենք արդեն կամուրջը գցել ենք, հատկապես իսլամական աշխարհի հետ: Կամուրջ գցել ենք նաև ԱՄՆ-ի հետ, շնորհիվ մեր ամերիկահայությանը: Այն աստիճանի է խորը և կայուն այդ կապը, որ ես չեմ ասի, թե պակաս կայուն է, քան Սան Ֆրանցիսկոյի Գոլդեն գեյտը կամուրջը: Բայց մեր կողմից գցված կամուրջը, իրավամբ, ոսկյա կամուրջ է, այն էլ այն աստիճանի, որ ամերիկյան Կոնգրեսի մակարդակով կարողանում ենք հայանպաստ հարցեր լուծել: Վաղուց ի վեր նման կամուրջ է գցված Ռուսաստանի Դաշնության հետ, որը նույնպես խոշորագույն և բախտորոշ քաղաքական ուժի կենտրոններից է: Այնպես որ, եթե այս տեսանկյունից մենք հանդես գանք, ապա հայ ժողովուրդը միայն և միայն կշահի:

Ինչ վերաբերում է Երևան քաղաքին: Ձեր դիտարկումը շատ ճիշտ է: Աստված մի արասցե, եթե հանկարծ հրդեհ լինի, այն էլ քաղաքի կենտրոնում, դա կարող է շատ ողբերգական հետևանքների հանգեցնել, որովհետև բացարձակապես ոչ մի մատույցային ճանապարհ չկա: Սեյսմակայունության տեսակետից Երևան քաղաքը, ինչպես գիտեք, գոտիավորված է. տեղեր կան, որ կառուցվող շենքերը պետք է հաշվարկված լինեն 11 բալ մագնիտուդով երկրաշարժին դիմակայելու համար: Նույն Կոնդի տարածքում. եթե այստեղ կառուցվող շենքերի սեյսմակայունությունը 11 բալից ցածր եղավ, անգամ իսկ փոքր ցնցումի պարագայում դրանք կարող են շարքից դուրս գալ: Նույնը Մոնումենտի որոշակի հատվածում. այնտեղ ապառաժներ չեն, այլ լիցքեր են, կուրգաններ են եղել: Ցավոք, այդ հարցերն այսօր բացարձակապես հաշվի չեն առնվում: Ինչպես հաշվի չեն առնվում տարրական այն նորմերը, որոնք միջազգայնորեն նույն Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից են մշակվել: Այն է՝ անհրաժեշտ է պահպանել կառուցապատման որոշակի խտություն, որ բնակչության համար պետք է նախատես-

վեն համաչափ կանաչ գոտիներ, որպեսզի քաղաքի «թոքերը» բավարարեն կենսական տարրական նորմերի պահանջներին:

Լ. – Երկու րոպե ունեք:

Ա.Գ. – Ժողովուրդ ջան, լուծումը մեկն է, հանգիստ խղճով գնացեք ընտրությունների և ընտրեք Արտաշես Գեղամյանին՝ համոզված լինելով, որ այդ դեպքում դուք ամեն հարցի վերաբերյալ գիտականորեն լուծումներ կստանաք, և ցանկացած բառի, խոստացած հարցի տակն էլ պատրաստ եմ ստորագրել:

Լ. – Պարոն Գեղամյան, այդ հարցերը նաև բավականին բարդ են և ուժեղ իշխանություն են պահանջում, լուրջ լծակներ ունեցող իշխանություն, որը պետք է հաշվի նստի խորհրդարանական մեծամասնության կողմից ձևավորված կառավարության հետ: Ինչպե՞ս կարող է իշխանական այդ լծակներն իր ձեռքերում հավաքել Նախագահը:

Ա.Գ. – Բորիս Սերգեևիչը հարցի պատասխանը գիտի, պարզապես ինձ է ստուգում: Վերցրեք Ամերիկայի Միացյալ Նահանգները. թե՛ Ներկայացուցիչների պալատում, թե՛ Սենատում ներկայումս դեմոկրատներն ունեն մեծամասնություն, մինչդեռ ԱՄՆ նախագահը՝ Ջորջ Բուշ կրտսերը, Հանրապետական կուսակցությունից է առաջադրվել ու ընտրվել: Բոլորս ենք տեսնում, թե նրանք ինչպես են սեփական երկիրը զարգացնում, հետն էլ ամբողջ աշխարհը փշերի վրա պահում: Իշխանությունների միջև հավասարակշռություն է պետք և տվյալ պարագայում շատ ու շատ ճիշտ կլիներ, եթե հարգարժան Սերժ Սարգսյանը հեռատեսություն դրսևորեր, գիտակցաբար աներ իրենից կախվածը, որ Նախագահ ընտրվեր ոչ թե ինքը, այլ ընդդիմադիր ճամբարը ներկայացնող քաղաքական գործիչ: Այն գործիչներից, ովքեր, իրոք, կհավասարակշռեն ներկայիս գումարման Ազգային ժողովում մեծամասնություն ունեցող Հանրապետական կուսակցությանը և ոչ միայն կհավասարակշռեն, այլ, ընդհակառակը, նաև կօգնեն նրանով, որ ժողովրդի այն զանգվածը, որն իրենց ձայն չի տվել, իրեն իշխանությունից օտարված չզգա: Չէ՞ որ մեծ թվով ընտրողներ իրենց ձայնը տվել են ընդդիմությանը, որոնք, ավա՜ղ, փոշիացել են: Բայց ժողովրդի այդ հատվածը, այսօր էլ, այնուամենայնիվ, ընդդիմության մեջ է տեսնում իրեն հուզող հարցերի լուծումը տվողներին: Ահա, եթե հարցին մոտենանք այսպիսի գիտակցմամբ, ապա մենք կունենանք, բառիս իսկական առումով, իշխանություն, որը, փիլիսոփայության հայտնի օրենքին համաձայն, կերաշխավորի երկրի զարգացումը: Դիմության և ընդդիմության պայքարի արդյունքում նպատակի միասնական լինելը երաշխավորում է զարգացում: Իսկ բոլորիս նպատակը մեկն է՝ կառուցել հզոր, բարեկեցիկ երկիր:

«ԱՐՄԵՆԻԱ» ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆ ԳԱԳԻԿ ՄԿՐՏՉՅԱՆԻ «ԻՐԱԿԱՆՈՒՄ-2008» ՀԱՂՈՐԴԱՇԱՐԻ ՀՅՈՒՐԸ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆՆ Է

(23.01.2008 թ.)

ԳԱԳԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ – «Իրականում–2008»-ի տաղավարում այսօր հյուրընկալվել է ՀՀ Նախագահի թեկնածու Արտաշես Գեղամյանը: Բարև Ձեզ, պարոն Գեղամյան:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ – Բարև Ձեզ:

Գ.Մ. –Ուրախ եմ Ձեզ ողջունել այս տաղավարում: Ինձ թվում է, պատահական չէ, որ այն կոչվում է «Իրականում-2008»: «Իրականում–2008»-ից Արտաշես Գեղամյանն ի՞նչ է ակնկալում:

Ա.Գ. – Գիտեք, վերջերս ցանկացած ակնկալիք ես փորձում եմ պատկերացնել, եթե այդ ամենը մտովի գնահատելու լինեի 2020-2025 թթ. հեռավորությունից: Երբ նման փորձ ես կատարում, ապա քեզ հաշիվ ես տալիս, որ 2008 թ. կարող է բախտորոշ դառնալ Հայոց պետականության համար, որովհետև թե՛ ներքին, և թե՛ արտաքին զարգացումներն այնպիսին են, որ մենք դատապարտված ենք հանուն մեր ժողովրդի բարեկեցության, հանուն Հայաստանի Հանրապետության միաբանվելու: Եվ միաբանվելու այդ եզակի հնարավորությունը մեր ժողովրդին, քաղաքական գործիչներին ընձեռված է 2008 թ. փետրվարի 19-ի նախագահական ընտրությունները մեր ազգին արժանավայել մակարդակով անցկացնելով, որ 2008 թ. փետրվարի 20-ին կամ, եթե 2-րդ փուլը եղավ, մարտի 6-ին ժողովուրդը արթնանա հույսերով լեցուն նոր երկրում: Արթնանա մի այնպիսի հանրապետությունում, որտեղ յուրաքանչյուր մարդ յուրաքանչյուրի հաջողության համար ուրախանում, իսկ տխրության համար ցավում է, որտեղ ամեն մարդ դիմացինի երջանկությունն է ակնկալում և ինքն էլ պատրաստ է իրենից կախվածն անել, որ հանդիպած մարդու, երեխայի, կնոջ, տարեցի դեմքին ժպիտ տեսնի: Որ մեզանում գերիշխի բարեկամության, հարազատության մթնոլորտը: Այդ տեսակետից 2008 թ. կարող է բախտորոշ դառնալ: Եվ «Ազգային Միաբանություն կուսակցությունն» իմ թեկնածությունն առաջադրելով՝ պատգամեց, հորդորեց ինձ, որ քարոզարշավը ես օգտագործեմ միայն ու միայն բարոյահոգեբանական նման մթնոլորտ սերմանելու նպատակով: Եվ պատահական չէ, որ նախընտրական իմ ծրագիրը կոչվում է «Արարման ծրագիր»: Մարդիկ հոգնել են գզվռտոցից, մարդիկ հոգնել են ատելության այն մթնոլորտից, որը, ավա՜ղ, շատ հաճախ ոմանք որպես քարոզարշավի հիմնական զինամիջոց են օգտագոր-

ծում: Մարդիկ վերջապես ուզում են մարդավայել կյանքով ապրել, ցանկանում են իրենց երեխաներին երջանիկ ապագա խոստանալ: Փորձում և ձգտում են իրենց ծնողների, հարազատների համար խաղաղություն, անդորր հաստատել: Փափագում են, որ հայ մարդը, ի վերջո, գիտակցի այն մեծ առաքելությունը, որը ի վերուստ տրված է մեր ժողովրդին: Ժողովուրդ, որն իր իմաստության, իր աստվածապաշտ լինելու, իր դավանանքի շնորհիվ, այնուամենայնիվ, թեկուզև մեծ կորուստներով, կարողացել է հազարամյակների ընթացքում գա և հասնի 21-րդ դար: Հասնի երրորդ հազարամյակ և հնարավորություն ունենա 21-րդ դարի ամենաքաղաքակիրթ ժողովուրդների հետ հավասարը հավասարի պես արարի իր ապագան: Այո, ես այս խորհուրդն եմ տեսնում 2008 թ. նախագահական ընտրությունների հետ կապված: Եվ, ինչո՞ւ չէ, 2008 թ. խորհուրդը դա պետք է լինի: Հանուն ազգային միաբանության՝ առաջ դեպի զարգացող, ապահով, անվտանգ Հայաստանի Հանրապետություն:

Գ.Մ. – Պարոն Գեղամյան, բարության քարոզը կարո՞ղ է հաղթանակել, բարությունը կարո՞ղ է հաղթանակել:

Ա.Գ. – Գիտե՞ք, հռոմեացի հին իմաստուններից մեկը շատ հետաքրքիր դիտարկում էր արել, որ պատերազմներից չէ, որ երկրները կործանվում են: Երկրները կործանվում են մարդկային անհաշտ հարաբերություններից, կործանվում են դրանց արդյունքում: Բարությունը, իհարկե, կարող է հաղթանակել: Պատմական մի օրինակ հիշեցնեմ: Հորդանանի թագավոր Հուսեյին երկրորդը (գործող թագավոր Աբդալլայի հայրը, որ սերում է Մուհամմեդ մարգարեի շառավիղներից և համարվում է Հաշեմիտյան այդ տոհմի ներկայացուցիչը) թագավորելու տարիներին քաղաքացիական, բարության սխրանք գործեց և անմահացավ մահմեդական ողջ աշխարհում: Ո՞րն էր այդ սխրանքը: Հորդանանցի մի զինվորական, որը հոգեկան խանգարում ուներ, իսրայելցի 7 դպրոցականի էր գնդակահարել: Հորդանանի թագավորը, անտեսելով հնարավոր բոլոր վտանգները, խնդրեց, որ մասնակցի սպանված երեխաների թաղման արարողությանը՝ այն ժամանակ թշնամու համարում ունեցող երկրում, որի հետ պատերազմական գործողությունների մեջ էին, դեռ խաղաղության պայմանագիրը կնքված չէր: Նա գնաց, երեխաների հուղարկավորության ժամանակ ալլահից և զոհված երեխաների ծնողներից ծնկաչոք ներողություն հայցեց: Պատկերացրեք՝ Մուհամմեդ մեծ մարգարեի շառավիղը հոժարակամ գնում է Իսրայել: Չէ՞ որ աշխարհի կարևորագույն դավանանքներից՝ քրիստոնեությունը կլինի, հուդաիզմը, թե մահմեդականությունը, իսլամը, բոլորն էլ Աբրահամի (Ավրաամի) ժառանգների դավանանքներն են: Եվ Հուսեյին երկրորդ թագավորը իր մարդկային բարձր դրսևորումով շահեց բոլոր իսրայելցիների սրտերը, որից հետո հնարավոր դարձավ կնքել խաղաղության պայմանագիր: Այնուհետև Հորդանանի թագավորն ինքը հանդես եկավ որպես միջնորդ արաբահիսրայելական բանակցություններում, ինչո՞ւ չէ, նաև Իսրայել-Պաղեստին բանակցություններում: Ահա բարու-

թյան փայլուն դրսևորում և դա պայմանավորված էր թագավորի իմաստությամբ ու իր ներքին մղումով: Եվ նա բարությամբ, առանց որևէ փամփուշտ արձակելու, պատերազմը սանձեց: Նա մարդկանց սրտերը գերեց իր բարի քայլով, թողություն խնդրելու իր աղերսանքով: Մենք ականատեսը դարձանք, թե ինչպես երեքհազարամյա պատմություն ունեցող թշնամանքը հաղթահարվեց ի շնորհիվ բարության: Հիմա նույնը պետք է մենք, յուրաքանչյուրս գիտակցենք: Եթե պատմությունը նման վառ օրինակ է տվել, կարծում եմ, ճիշտ կլիներ մենք՝ հայերս, ևս խորհեինք: Խորհեինք մեր կենսագրության, պատմական կենսագրության շուրջ:

Մեկ ուրիշ օրինակ էլ հիշեցի, բայց արդեն իսկ դարեր առաջվա ժամանակներից: Նույն Մուհամմեդ մարգարեն հրովարտակով դիմում է բյուզանդական կայսրին և պարսից շահին, ինչպես նաև պատմական այդ տարածաշրջանում բնակվող բոլոր ժողովուրդներին՝ հորդորելով ու պատգամելով դավանել եզակի ճշմարիտ կրոնը՝ իսլամը: Բյուզանդիայի կայսրը Մուհամմեդ մարգարեին արհամարհական պատասխան է տալիս, Իրանի շահը ընդհանրապես չի արձագանքում: Եվ, ի՞նչ եք կարծում, հայ հոգևորականները, Երուսաղեմի հայ հոգևորականները պատասխան են հղում Մուհամմեդ մարգարեին: Անսահման հարգալից վերաբերմունք հայտնելով իսլամի նկատմամբ, նրանք միաժամանակ գրում են իրենց կարծիքն այն մասին, որ, Մուհամմեդը, իսկական հավատացյալ լինելով, պետք է հարգանքով վերաբերվի նաև իրենց հավատքին: Անցնում է շատ կարճ ժամանակ, մահմեդականները պաշարում են Երուսաղեմը: Քաղաքի քրիստոնեական բոլոր թեմերին ճնշում են, բացառությամբ հայերի: Նույն Մուհամմեդ մարգարեն հայերին «ֆիրման», պաշտոնագիր է տալիս, ուր, ի պատասխան հայ հոգևորականների հարգալից վերաբերմունքի, ուղղակիորեն գրել էր, որ հայ քրիստոնյաները պահպանված և պաշտպանված են լինելու իսլամի կողմից: Մուհամմեդի մահից հետո արդեն խալիֆաները, մասնավորապես, Օմարը (պատմության մեջ նա որպես Օմար է հայտնի), երբ կրկին պաշարում է Երուսաղեմը, ապա հայերին նոր «ֆիրման»՝ երկրորդ պաշտոնագիրն է տալիս: Պատմիչները փաստում են, որ հետագայում, արդեն 10, թե 11-րդ դարում, երբ Երուսաղեմում հույն կաթողիկները հալածում էին հայերին, ավելին, երբ հայկական ուխտավորների և հայկական հոգևորականների հարստությունը, փաստորեն, խլել էին, խալիֆ Սալլահեդդինն այդ ամենը վերադարձնում է հայերին, որովհետև նրան ցույց էին տվել Մուհամմեդ մարգարեի և Օմարի ֆիրմանները: Այնուհետև իր կողմից նա էլ 3-րդ «ֆիրմանն» է տալիս: Ահա, տեսեք, թե ճակատագրական նման պահերին ինչպիսի դրական, բախտորոշ դեր է խաղացել ժամանակին դրսևորված բարի կամքը, բարությունը: Իհարկե, կան խավարի իշխաններ, իհարկե, կան չարի թագավորներ: Չարի, խավարի թագավորությունը, իշխանավարությունը, այո, կարող է ժամանակ առ ժամանակ նաև հաղթանակել. դա պատմությամբ նույնպես վկայված է: Բայց դրա վախճանը, միևնույն է, շատ ծանր է լինելու չարով առաջնորդվող մարդկանց համար: Եթե կրոնական

թեմային անցանք, ապա տեսեք, համայն աշխարհում ընդամենը մի ծով կա, որի անունը տխուր զգացմունքներ է առաջացնում՝ Մեռյալ ծով: Եզակի ծով է, որտեղ բացարձակապես կենդանություն չկա: Ի՞նչ եք կարծում, որտեղից է այդ անվանումը գալիս: Մեռյալ ծովը, ինչպես վկայում են հին ձեռագրերը, գոյացել է ճիշտ այն տարածքի վրա, որտեղ բիբլիական Սոդոմն ու Գոմորն են եղել: Ուրեմն, տեսեք, կյանք չի կարող լինել այնտեղ, որտեղ չարություն է, որտեղ այլասերություն է, որտեղ թշնամանքն է գերիշխում: Այդ բոլորը մենք պետք է հիմաստավորենք: Իմաստավորենք, որ սուրբ Արարատ լեռան փեշերին ապրող ժողովուրդ ենք: Դրանում մեծագույն իմաստ կա:

Գ.Մ. – Եվ իրավունք չունենք այս դեպքում չարությամբ առաջնորդվել:

Ա.Գ. – Միանգամայն ճիշտ եք: Այ, եթե մենք նման տեսանկյունից մոտենանք սեփական իսկ ժողովրդի պատմությանը, մեր ազգի, երկրի պատմությանը և փորձենք այսօրվա մեր գործողություններն իմաստավորել 2020-2025 թվականների հեռուներից, ապա, հավատացնում եմ ձեզ, որ մեր աշխարհընկալումները, աշխարհայացքը կփոխվեն: Երեկ իմ հեղինակած «Արարման ծրագրի» շնորհանդեսին մի ուշագրավ բան հիշեցի, ոչ թե հիշեցի, այլ դրա տեսիլքը մինչև հիմա էլ աչքերիս առաջ է: Կիրակի օրը երջանկահիշատակ Սիլվա Կապուտիկյանի ծննդյան 89-րդ տարեդարձն էր: Փոքր-ինչ շուտ գնացի Պանթեոն, որտեղ մեր մեծերն են հանգչում, մեր մեծերի շիրիմներն են: Յուրաքանչյուր շիրիմի կողքից անցնելիս հիշում ես մի իմաստուն խոսք, որ նրանք ժամանակին ասել էին, գրել էին: Եվ հիշում ու քեզ հաշվետու ես զգում ոչ միայն գալիք սերունդների նկատմամբ, ոչ թե քո ժամանակակիցների, այլ նաև նրանց հիշատակի առաջ: Եվ այդ ամենը, թերևս, ինձ դրդում է միայն մի բանի: Եթե մեջդ ուժ կա, դու չես կարող չար լինել: Եթե մեջդ ազնվություն կա և դու դա պատրաստ ես ծառայեցնել ժողովրդին, դու չես կարող վատ տրամադրվել թեկուզ քո հասցեին անարդարացի բաներ ասողի հանդեպ: Չէ՞ որ քո բարությամբ դու պետք է ցույց տաս, թե նոր ճանապարհը որն է: Քո բարությամբ պետք է ապացուցես, որ միայն և միայն ներող ու զիջող կարող է լինել ուժ ունեցող մարդը, անհատականությունը, որը սեփական պատասխանատվությունն է զգում: Նա գիտակցում է, որ դարերի ծնունդն է և գիտակցում է, թե ո՞ւր է ուզում երկիրը տանել: Եվ մեր հանրապետությունն այսօր կարող է համայն քաղաքակիրթ մարդկությանը զարմացնել միայն ու միայն իր բացառիկ ազնիվ դրսևորումներով: Աստծո կամոք, 21 ելույթ եմ ունեցել եվրոպական և միջազգային ամենաբարձր ամբիոններից: Գիտե՞ք, հիշողությանս մեջ բոլորից շատ տպավորվել է հետևյալը. ելույթներիցս մեկի ժամանակ նախապես դիմելով Եվրախորհրդի Խորհրդարանական Վեհաժողովին, նույն ազերիներին ու թուրքերին, ասացի, որ եթե խոսքիս մեջ սխալվեմ թող ինձ ուղղեն, հուշեն, թե որն է սխալս, ապա շարունակեցի. ինչպե՞ս եք ուզում մի ժողովրդի, մի ազգի, որն ավելի ուսյալ է, որն ավելի կրթված է, որը քաղաքակրթությունների գոհարները պաշտպանելու համար այսքան մարշալ ու հերոս է

տվել, գցեք մի այնպիսի ազգի լծի տակ, որն իրենից ավելի թերուս է, որն ավելի նենգ ու չար է, որը հաղթանակելու ճանապարհը տեսնում է ոչ թե ուսյալ լինելով, գիտությամբ, այլ ապավինում է յաթաղանի զորությանը: Ինչպե՞ս եք ուզում Ղարաբաղն այսօր հպատակեցնել իրենից զարգացվածությամբ ավելի ցածր մակարդակում գտնվող, խոսքը մտավոր, հոգևոր զարգացության մասին է, Ադրբեջանին: Եվրախորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի պատգամավորները բան չգտան պատասխանելու: Անգամ իսկ ազերիները պատասխան չտվեցին, որովհետև լավ էլ գիտակցում էին, որ, վերջին հաշվով, պաշտոնական վիճակագրություն կա, չէ՞: Վիճակագրություն կա, թե 10 հազար մարդու հաշվով քանի բժիշկ, քանի մանկավարժ կա Արցախում, ազգաբնակչության ո՞ր տոկոսը տասնամյա, քանիսը՝ բարձրագույն կրթություն ունեն: Եվ վիճակագրական այդ թվերը շահեկանորեն խոսում էին իմ այդ պնդման օգտին:

Գ.Մ. – Պարոն Գեղամյան, Դուք այսօր նոր մշակույթ եք բերում քաղաքականություն: Դա ինձ համար զարմանալի չէ, բայց շատերի համար միգուցե զարմանալի է, որովհետև Արտաշես Գեղամյանը ավելի շատ հայտնի էր որպես մարտնչող, որպես հռետոր, որպես մարտիկ, իսկ այսօր նա սպիտակ դրոշ է պարզում: Բայց սպիտակ դրոշը ոչ թե անձնատուր լինելու դրոշ է, այլ պառլամենտարիզմի: Ես նկատի ունեմ այն, որ երբ ռազմի դաշտում պառլամենտյորը գնում էր որպես միջնորդ ինչ-որ առաջարկ ներկայացնելու՝ սպիտակ դրոշ էր վեր պարզում: Այսօր հնարավոր է, որ այդ խոսքերին անսան կամ այդ դրոշը ինչ-որ մեկը վերցնի:

Ա.Գ. – Գիտեք, ձեր այս ճշմարիտ դիտարկումը, ինչ խոսք, ինձ շոյում է, և դա, իրոք, այդպես է: Այդպես է, որովհետև գիտակցում եմ սեփական պատասխանատվությունս: Եվ դա մետամորֆոզներ չեն, որ տեղի են ունեցել իմ գիտակցության մեջ: Ես շատ և շատ լուրջ ուսումնասիրել եմ քաղաքակրթությունների պատմությունը ու հանգել եմ այն եզրակացության, որ միայն և միայն համախմբման ճանապարհն է խոստանում հաջողություն՝ լինի դա քաղաքական գործչի համար, լինի՝ երկրի: Հարցազրույցներից մեկում, երբ ինձ ոչ թե քաջալերեցին, ինչպես դուք արեցիք, այլ նախատեցին՝ ասելով, ինչպե՞ս բացատրենք Ձեր հրապարակային գործողություններում նկատվող փոփոխությունը, ես բերեցի ընդամենը մի օրինակ Աստվածաշնչից: Բոլորս գիտենք, որ ամենաուժեղ քարոզիչը Պողոս առաքյալն էր: Նա քրիստոնյաների ամենամոլեռանդ հետապնդողն էր: Պողոս առաքյալը փարիսեցի էր: Երբ նա հետապնդում է մի քրիստոնյայի, եթե չեմ սխալվում Անանիային, որ հաշվեհարդար տեսնի նրա հետ, հանկարծ կուրանում է: Կուրությունը բուժում է քրիստոնեություն դավանող մի հավատացյալ, և դա ոչ թե մարմնի բուժում էր, այլ ուղղված էր հոգու տեսողությունը բացելուն: Այդ հրաշագործ բուժման արդյունքում Պողոս առաքյալը դառնում է Քրիստոսի դավանանքի, ուսմունքի ամենամոլեռանդ քարոզիչը: Հիմա յուրաքանչյուրս պետք է փորձի իր մեջ գտնել այն տեսողությունը, որ մինչ այժմ փակ է եղել: Այն տեսողությունը, որն

անգամ իսկ քո աչքով տեսածը թույլ չի տվել իմաստավորես անցած դարերի կտրվածքով: Այո, սպիտակ դրոշ եմ պարզել: Ես սպիտակ դրոշ եմ պարզել ոչ թե այս կամ այն քաղաքական գործչից վախենալու խնդիր ունենալով, այլ սպիտակ դրոշ եմ պարզել, որովհետև հայ քաղաքական ցանկացած գործչի մեջ հիմա ես փորձում եմ արժեք տեսնել: Իսկ եթե փորձում ես արժեք տեսնել, անտարակույս, կտեսնես և կգտնես դա: Եթե հայոց քաղաքական մտքի համար արժեքավոր անձի ես գտել, որն արժեքներ ունի, դու պետք է գուրգուրես այդ մարդուն, այլապես կնշանակի դու խիստ բացասական դերակատարություն ունես այսօրվա մեր իրականության մեջ: Մենք պետք է փորձենք դա անել այս քարոզարշավի ժամանակ, 9 թեկնածուների մեջ էլ կան, անշուշտ, ստվերոտ կողմեր ունեցողներ, սակայն չէ՞ որ կան, գերիշխում են լավ կողմերը: Փորձենք այդ լավը ցցուն դարձնել: Տվյալ դեպքում անձիս մասին թող մոռանան, բայց 8-ի լավը, եթե կարողանամ ցցուն դարձնել, համոզված կարող եմ ասել, որ առաջիկա ընտրություններում արդեն հաղթել եմ: Հիմա ոմանք կասեն, եթե այդպես է, ապա ինչո՞ւ եմ երբեմն այդքան սուր քննադատություն հնչեցնում թեկնածուներից մեկի հասցեին: Դա անում եմ հարկադրված, ճարահատյալ: Կրկնում եմ, դա ինձ համար շատ խորթ դրսևորում է: Ժամանակին, երբ խստագույնս քննադատում էի թե՛ գործողներին, թե՛ նախորդներին, ուզում էի նրանց գութը շարժել: Ուզում էի աղաղակելով, բղավելով նրանց հասկացնել, որ մեր հայոց երկրում ամեն ինչ չէ, որ լավ է: Շատ հաճախ դա ձայն բարբառո հանապատի էր, բայց վերջերս նաև լսելի դարձավ: Եվ ոչ միայն իշխանությունների կողմից, այլ նաև շատ ու շատ քաղաքացիների: Հարկ է, որ մենք գիտակցենք մի պարզ ճշմարտություն, այն է՝ պետականության նավը բոլորինս է, անկախ նրանից՝ այսօր ով է նավարկում: Գիտակցենք, որ հայերիս լավը բացի մեզանից, բացի մեր քաղաքացիներից և ոչ ոք այդ աստիճանի չի ուզում: Եվ նման իրողությունն անհերքելի է, որովհետև յուրաքանչյուր ազգ, յուրաքանչյուր պետություն իր շահերն է հետապնդում: Պարզ հասկանալով, որ մեր շահի հետապնդողը, մեր խնդիրների հիմնական արարողը մենք պետք է լինենք, մեր հոգեբանության մեջ պետք է փոփոխություններ կատարենք: Մեր աշխարհընկալման, մեր հոգեկերտվածքի մեջ պետք է, այո, հեղափոխական ճեղքումներ իրականան: Այլապես մենք դատապարտված կլինենք պատմության հետնախորշում հայտնվել, պատմության լուսանցքում հանգրվանել և օգնություն ապավինել կամ Հյուսիսից, կամ Արևմուտքից, կամ էլ Հարավից, ինչը բացարձակապես և ոչ մի ապագա, և ոչ մի լավ բան մեզ չի խոստանում: Այսօր բրիտանական ամենահայտնի վարչապետերից մեկի՝ Պալմերստոնի թևավոր դարձած ասացվածքը, թերևս, պետք է նաև մեզ համար դառնա ուղեցույց. «Չկան հավերժական թշնամիներ, չկան հավերժական բարեկամներ, կան հավերժական շահեր»: Ահա, մեր հավերժական շահը Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովումն է, հավերժական շահը մեր երկիրը համայն հայության օրրան դարձնելու խնդիրն է: Հավերժական շահն է, որ ենթադրում

է՝ նախագահական ընտրություններից հետո հաղթողները պետք է դառնան Հայոց պետականությունը և յուրաքանչյուր հայ մարդ, յուրաքանչյուր հայ ընտանիք: Դա չի բացառում թեկնածուների մեջ քաղաքակիրթ մրցակցության երաշխավորումը, ընդհակառակը: Քաղաքակիրթ մրցակցությունն էլ ավելի կխթանի հիշատակածս մայր խնդիրների լուծմանը:

Գ.Մ. – Բրիտանական թեմային անդրադարձանք, ես հիշեցի բարության ևս մեկ հաղթանակ, պատմական օրինակ, Գանդիի օրինակը: Երբ որ մեկ մարդը, կարելի է ասել, հաղթեց մի ամբողջ կայսրության:

Ա.Գ. –Շատ տեղին է ձեր դիտարկումը և պատահական չէ, որ գանդիզմը, լինելով փիլիսոփայական յուրահատուկ ուղղություն, դարձել է քաղաքական ուրույն հոսանք, և մեր փոթորկահույզ աշխարհում շատ մեծ հեղինակություն է վայելում, էլ չասեմ գոնե աշխարհիս ամենաուժեղների շրջանում եղած մտածողների մոտ: Դուք միանգամայն ճիշտ եք: Եվ Մահաթմա Գանդին իր անձնական օրինակով կրկնեց Քրիստոսի սխրանքը: Այո, յուրովի մեկնաբանությամբ նա կրկնեց Քրիստոսի սխրանքը. երբ Քրիստոսին դատում էին, փարիսեցիները կլինեին, Ղայափան կլիներ, թե կլիներ Պիղատոսը, նա զինված էր միայն իր հավատքով, իր ուսմունքով, իր պատրաստակամությամբ՝ համայն մարդկության կողմից գործած մեղքերի գնալ զոհասեղանին խաչվելու: Այդպես էլ Մահաթմա Գանդին, արդեն նոր պայմաններում՝ 1940-ականների վերջին - 1950-ականի սկզբին, իր անձնական օրինակով, այո, ապացուցեց, որ բրիտանական կայսրությունը կարելի է առանց գեթ մեկ փամփուշտ արձակելու նույնպես տապալել: Բայց այդտեղ, ես գտնում եմ, առկա է նաև անգլոսաքսերի քաղաքակրթության հաղթանակը նույնպես, այն, որ բրիտանացիներն արյան մեջ չհեղեցին այդ շարժումը՝ չնայած դա կարող էին անել: Ճիշտ է, նահատակներ եղան: Նույն ինքը՝ Գանդին, տասնամյակներով բանտերում է եղել, բայց, այնուամենայնիվ, վերջում գերիշխեց ողջամտությունը և, իրավամբ, քաղաքակիրթ ազգերին պատկանելության փաստը:

Գ.Մ. – Պարոն Գեղամյան, մեր եթերաժամը, ցավոք, սպառվեց: Ասեմ, որ շատ տպավորիչ զրույց էր: Ես կուզեի, որ այս եթերն անընդհատ շարունակվեր: Ցավոք, օրենք կա եթերի վերաբերյալ: Ուղղակի վերջում օգտագործեք այդ հնարավորությունը, որը այս հաղորդաշարի ավանդույթն է նաև, և կարող եք դիմել Ձեր ընտրողին, ժողովրդին:

Ա.Գ. – Ես սրտանց կուզենամ, որ մինչև ընտրության գնալը գոնե մեկ հարցում գանք համազգային համաձայնության: Ցնցումները մեր երկրին ապագա չեն խոստանում: Իսկ ապակայունացման պայմաններում կործանման վտանգը համարում եմ վերահաս: Ուրեմն, ձայն տվեք այն գործիչների օգտին, որոնք, հանուն Հայոց պետականության, աչքի լույսի պես պատրաստ են երկիրն առանց ցնցումների զարգացման ուղի հանել, մեր ազգի համար ապահովել երջանիկ ապագա, իսկ որ ամենակարևորն է՝ ազգային միաբանություն:

«ԿԵՆՏՐՈՆ» ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆ ՊԵՏՐՈՍ ՂԱԶԱՐՅԱՆԻ «ՈՒՐՎԱԳԻԾ» ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱՇԱՐԻ ՀՅՈՒՐԸ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆՆ Է

(25.01.2008 թ.)

ՊԵՏՐՈՍ ՂԱԶԱՐՅԱՆ – Սիրելի հեռուստադիտող, մենք շարունակում ենք նախագահական ընտրությունների քարոզարշավի շրջանակներում զրուցել նախագահական թեկնածուների հետ, և այսօր մեր հյուրը Արտաշես Գեղամյանն է: Բարի երեկո, պարոն Գեղամյան:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ – Բարև Ձեզ:

Պ.Ղ. – Պարոն Գեղամյան, վերջերս պարբերաբար մամուլում, տեղեկատվական այլ աղբյուրներում ինֆորմացիա է լինում, որ Ձեր կուսակցության անդամները լքում են Ձեր կուսակցությունը, ընդ որում, լքելով հանդերձ, նրանք միանում եմ Լևոն Տեր-Պետրոսյանին: Եթե չեմ սխալվում, երեկ «Հայկական ժամանակի» մեջ էր նման ինֆորմացիա՝ Աջափնյակի տարածքային ձեր անդամները ...

Ա.Գ. – Անդամը:

Պ.Ղ. – Անդամը: Այսօր, քիչ առաջ կարդացի «Ա1+»-ի ինտերնետային կայքում, որ «Ազգային Միաբանության» նախագահության անդամ, Նաիրիի տարածքային կազմակերպության ղեկավար Մարիետա Պետրոսյանը նույնպես լքել է Ձեր կուսակցությունը և միացել է Լևոն Տեր-Պետրոսյանին: Ենթատեքստով այսպես է, գնում է «Ազգային Միաբանության» փլուզո՞ւմ , թե ոչ:

Ա.Գ. – Նախ, շնորհակալություն եմ հայտնում հիշ-ական մամուլին, որ այդքան մեծ ուշադրություն են դարձնում «Ազգային Միաբանություն կուսակցության» շարքերին, որ հաշվառման են վերցրել 42350 անդամներից գրեթե յուրաքանչյուրին: Այսօր կարելի է շնորհավորել, այո, 42350-ից 5 հոգի գնացել են: Առաջին երկու դեպքերի մասին գնահատականներ տրվել են: Ինչ վերաբերում է Նոր Հաճնի տարածքային (և ոչ թե Նաիրիի տարածաշրջանային) կազմակերպության քարտուղար, հարգարժան տիկին Մարիետային, ասեմ, որ, այո, նա մեր կուսակցության նախագահության անդամ էր: Օգտվելով առիթից՝ ես ուզում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել նրան համատեղ աշխատանքի համար: Մենք շատ լավ համագործակցել ենք, ես շատ բարձր եմ դասում տիկին Պետրոսյանին և, թերևս, հերթական անգամ կփորձեմ համոզված լինել, որ տիկին Մարիետան իր 2 զավակների հետ շարունակում են մնալ գաղափարի մարդ: Եվ բացարձակապես ոչ մի վատ բան չեմ

տեսնում, եթե այսօր հանրապետության նախկին Նախագահի քաղաքական հայացքներն ավելի հոգեհարազատ են նրանց: Եթե ես հակառակ դիրքորոշումն ունենայի, ապա այդ դեպքում ինչո՞վ պետք է տարբերվեի նախորդ Նախագահից, որն ասում է՝ ով իր հետ չէ, նա դավաճան է: Բացարձակապես մերժելի մոտեցում, և ես բարձր եմ գնահատում ցանկացած անձնավորության կողմից անկեղծ ընդունված յուրաքանչյուր որոշում: Մարդը գտնում է, որ այսօր Լևոն Տեր-Պետրոսյանի հայացքներն են իրեն ավելի հոգեհարազատ և գնացել է անդամակցի նրա թիմին: Եվ կրկին շնորհակալություն եմ հայտնում տիկին Մարիետային համատեղ աշխատանքի համար: Միաժամանակ զարմանում եմ, թե ինչո՞ւ են փորձում դրամատիզացիայի ենթարկել այդ պրոցեսը: Անգամ իսկ Մովսես մարգարեին իր հարազատ եղբայրը՝ Ահարոնը, դավաճանեց: Երբ Մովսեսը բարձրացել էր Սինոն լեռը (գնացել էր Աստծո մոտ պատվիրանները վերցնելու), նրա հարազատ եղբայրը գայթակղվեց, մոլորության մեջ ընկավ և կուռք դարձրեց կենդանու՝ ոսկուց ձուլված ցլիկին: Մեր ուսուցչի՝ Քրիստոսի նման Աստծո միածին որդուն իր առաքյալներից ամենամտերիմը առաջինն իսկ դավաճանեց: Ի վերջո, այդ ամենից հետո ի՞նչ փոխվեց: Տեղի ունեցավ այն, որ նրանք երկուսն էլ՝ թե՛ Ահարոնը, թե՛ Պետրոս առաքյալը, խորացան իրենց հավատքի մեջ, իրենց համոզմունքի մեջ: Այնպես որ, այս բոլոր դիտարկումները …

Պ.Ղ. – Ուժեղացնում են «Ազգային Միաբանությանը»:

Ա.Գ. – Միանգամայն ճիշտ եք: Իսկ ինձ, կրկնում եմ, ոգևորում է, որ այդ աստիճան ուշադիր են մեր կուսակցության հանդեպ: Դրա հետ, չգիտես ինչու, իրենք մոռանում են, թե ինչ տեղի ունեցավ 1998 թ., երբ մի գիշերվա մեջ հիշատակածս քաղաքական ուժը գրեթե ամայացավ, ամլացավ, երբ հարյուրավոր լևոնականները քնեցին հիշ-ական, արթնացան՝ երկրապահ: Սա աստվածաշնչյան արդեն մեկ ուրիշ իմաստության շարքից է՝ շյուղը ուրիշի աչքում տեսնում են, սեփական աչքի գերանն անտեսում: Ես հասկանում եմ իրենց. ով էլ հայտնվեր նրանց հոգեվիճակում, նա հարկադրված կլիներ ստեղծված պայմաններում ձեռքերը գցել փրփուրներին: Հասկանում եմ, սակայն ոչնչով օգնել չեմ կարող: Իրենք աշխատանքի մեծ ֆրոնտ ունեն, թող փորձեն այս ընթացքում կուսակցության 42345 անդամների իրենց գաղափարակիրը դարձնել:

Պ.Ղ. – Պարոն Գեղամյան, Դուք անընդհատ շեշտում եք, որ հիշ-ական թերթերը Ձեր նկատմամբ շատ մեծ ուշադրություն ունեն, թույլ տվեք նկատել, որ այդ ուշադրությունը մի տեսակ փոխադարձ է:

Ա.Գ. – Անշուշտ: Պարտքը վերադարձնելով է գեղեցկանում:

Պ.Ղ. – Եվ Ձեզ հիմա քննադատում են նրա համար, որովհետև…

Ա.Գ. – Ես անհաղորդ չեմ կարող լինել, որովհետև հարգում եմ այդ մարդկանց:

Պ.Ղ. – Դուք, լինելով ընդդիմադիր, ավելի շատ քննադատում եք Լևոն Տեր-Պետրոսյանին, քան գործող իշխանություններին: Եվ դա հաս-

կանալի չէ, որովհետև Լևոն Տեր-Պետրոսյանը լավն է, վատն է, այն ուժերից մեկն է, որը պայքարում է գործող իշխանությունների դեմ: Եվ Դուք նույնիսկ համաձայն չլինելով նրա հետ, գոնե պետք է լոյալություն պահեիք նրա նկատմամբ ու քննադատեիք գործող իշխանություններին: Եվ սա տարատեսակ մեկնաբանությունների տեղիք է տալիս, որը Ձեր ասած հիշ-ական մամուլը ձևակերպում է որպես իշխանությունների խաղը խաղալ: Սա հերթական մի այդպիսի խաղ է: Խնդրեմ:

Ա.Գ. – Հիմա պատմական զուգահեռներ անեմ, թե՞ մեր կյանքից ասեմ, հետո նոր պատմական զուգահեռների անցնեմ:

Պ.Ղ. – Ընտրությունը Ձերն է:

Ա.Գ. – Զուգահեռը մեր կյանքից անեմ: 1997թ. հոկտեմբերի 17-ին իմ նախաձեռնությամբ ստորագրվեց կոչ՝ ուղղված համայն հայությանը, ուր սկզբունքային, անաչառ, ամենախիստ գնահատական էր տրված այն օրերի վարչախմբին: Դեռ Տեր-Պետրոսյանի հրաժարականի մասին խոսք չկար, իսկ կոչում մենք պահանջում էինք հրաժարական: Եվ այդ կոչին միացան անվանի գիտնականներ, հայ ժողովրդի խիղճը հանդիսացող մարդիկ՝ տիկին Սիլվա Կապուտիկյանը, Ռաֆայել Ղազարյանը, Վլադիմիր Խոջաբեկյանը, Սոս Սարգսյանը, Ռուբեն Հովսեփյանը, Արմեն Հովհաննիսյանը, Դավիթ Սեդրակյանը, բոլորին չթվարկեմ: Համենայն դեպս մարդիկ, ովքեր հայրենասեր են և դա ոչ մեկի մոտ կասկած չի հարուցում: Անցան տարիներ: ՀՀՇ-ն, անշուշտ, ինձ չներեց: Տասը տարի շարունակ հիշ-ական մամուլն ավելի շատ քննադատում էր գործող ընդդիմությանը, քան՝ իշխանություններին: Դա էլ բնական եմ համարում, որովհետև իրենք հող էին պատրաստում, իրենց կուռքին քաղաքականություն վերադարձնելու խնդիր էին լուծում: 2006 թ. լույս տեսավ իմ «Հոդվածներ, ելույթներ, հարցազրույցներ» ժողովածուն, ուր տրված էին ամենախիստ գնահատականները թե՛ նախորդ իշխանություններին և թե՛ գործող իշխանություններին: ՀՀՇ-ական մամուլն այդ ամենը չի լուսաբանել, որովհետև եթե դա լուսաբաներ, կստացվեր, որ հետևողականորեն գործող, իշխանությունների դեմ կռվող, պայքարող ուժը «Ազգային Միաբանությունն» է: Իշխանություններն էլ երբեք ու երբեք շահագրգռված չէին լինի, որ դա պատշաճ լուսաբանվեր: «Ազգային Միաբանությունը», եթե սատարեր Լևոն Տեր-Պետրոսյանին, ապա լևոնական մամուլը մեզ կդարձներ ամենագովելի քաղաքական ուժը: Երբ քարոզարշավը դեռ չէր մեկնարկել, նրանք սին հույսեր էին փայփայում, որ Գեղամյանը հանկարծ կկորցնի հիշողությունը, իրենց նման կտառապի «ամնեզիա» հիվանդությունով, կմոռանա այն զարհուրելի իրականությունը, որը գերիշխում էր Հայաստանի Հանրապետությունում 1991-1997 թթ. և կգնա, կկանգնի Լևոն Տեր-Պետրոսյանի կողքը, չափազանց զգուշավոր էին մեզ վերաբերվում: Սակայն հասկանալով, որ այդ հույսերն անիրականանալի են, մամուլում խաչակրաց արշավանք ծավալեցին «Ազգային Միաբանության» դեմ:

Պ.Ղ. – Ես կարդում էի թերթում և նաև այս Ձեր ակնարկի վերաբեր-

յալ բան կար այսօր, կարծեմ, «Ժամանակ Երևանի» մեջ էր՝ իսկ ինչպե՞ս է պարոն Գեղամյանը մոռացել, թե ինքն ինչեր է ասել գործող իշխանություններին:

Ա.Գ. – Պարոն Գեղամյանը ոչ միայն չի մոռացել, այլ ավելին՝ իր մտքի «գոհարները» թղթին է տվել և հրապարակել է հիշատակածս հատորում: Ուրիշ բան, որ շահագրգռված չեն, որ վերջին ելույթներս էլ տարածվեն, ճանաչում գտնեն: Գոհացնեմ այդ «սրտացավ» մարդկանց հետաքրքրությունը. առաջիկա 7-10 օրերի ընթացքում լույս կտեսնի 2006 թ. հոկտեմբերից մինչև 2008 թ. հունվար ամիսները Արտաշես Գեղամյանի «Հոդվածների, ելույթների, հարցազրույցների» ժողովածուի երկրորդ հատորը՝ 396 էջից բաղկացած: Նշեմ, որ արդեն իսկ լույս է տեսել իմ հեղինակած «Արարման ծրագիրը»: Եթե չզլանան, եթե չծուլանան, եթե բամբասելուց զատ նրանք կարդալու ընդունակություն ունեն, ապա այդ գրքերում կգտնեն թե՛ գործող և թե՛ նախկին իշխանությունների աշխատանքին տրված ամենասկզբունքային գնահատականները: Ուրիշ բան, որ փորձում են կարծիք ձևավորել, թե, իբր, գործողներին ավելի քիչ եմ քննադատում, քան նախորդներին: Երկուսն էլ իրար արժանի են, երկուսն էլ արժանի են ամենախիստ գնահատականի:

Հիմա պարտքս եմ համարում հեռուստադիտողին հիշեցնել և պատմական մի զուգահեռ տանել: 1940-ական թվականներին և մինչև կյանքի վերջը ամենասովետատյաց քաղաքական գործիչը սըր Ուինսթոն Չերչիլն էր: Բայց երբ նա գիտակցեց, որ դարչնագույն ժանտախտ ասածը, այսինքն՝ հիտլերյան Գերմանիան, ընդհանուր առմամբ վտանգում է ողջ աշխարհին, համագործակցության ձեռք մեկնեց իր կողմից ատելի Իոսիֆ Վիսարիոնովիչ Ստալինին, և նրա դաշնակիցը դարձավ այն պարագայում, երբ նույն բրիտանական կայսրությունը, նույն Գերմանիան, ինչու չէ, ԱՄՆ-ն համակարգային նույն արժեքները կրող կապիտալիստական երկրներ էին:

Պ.Ղ. – Իմ թշնամու թշնամին...

Ա.Գ. – Ոչ, թշնամու խնդիր չկա: Հիմա, երբ ես գիտակցում եմ այն մեծ աղետները, որոնք կարող է իր հետ բերել լևոնտերպետրոսյանական համակարգի վերահաստատումը, նրա վերադարձը, ապա ես էլ, ինչպես ժամանակին Ուինսթոն Չերչիլը հաշտության ձեռք մեկնեց Իոսիֆ Ստալինին, ոչ թե հաշտության ձեռք եմ մեկնում, այլ, հասկանալով և ըմբռնելով, որ այսօր ամենամեծ վտանգը երկրիս, պետությանս, որտեղից է սպառնում, անում եմ այն, ինչ փորձառությունս է հուշում: Եվ այդ վտանգի առաջն ուժերիս ներածին չափով առնելու եմ: Ժամանակը և պատմությունը ամեն ինչ կդնի իր տեղը: Հետագայում բոլորը կասեն, որ Արտաշես Գեղամյանը վարվեց ճիշտ այնպես, ինչպես ժամանակին վարվեց ցարական Ռուսաստանի վտարանդի գեներալ Դենիկինը: Հայրենական Մեծ պատերազմի առաջին օրերին նա նամակով դիմեց Ստալինին, ասելով, որ ինքը պատրաստ է իր ռազմական գիտելիքները ծառայեցնել Սովետական Միությանը՝ պատրաստակամություն հայտնելով մասնակցել հիտլերիզմից իր հայրենիքի փրկության գործին:

Պ.Ղ. – Ի՞նչ ասաց Ստալինը:

Ա.Գ. – Ստալինի ասածը չէ, որ կարևոր է, այստեղ ես կարևորում եմ Դենիկինի քաղաքացիական այդ սխրանքը: Ես էլ չեմ խոսում Ռոմանովների շառավիղներից, ժառանգներից մեկի մասին. երբ դասալիք գեներալ-լեյտենանտ Վլասովը գնում է, որպեսզի օրինանք ստանա Ռոմանովներից ու պատերազմի Սովետական Միության դեմ, ցարական ընտանիքի ներկայացուցիչը, որի հարազատներին՝ 18 հոգու, գնդակահարել էին Տոբոլսկում նույն այդ Սովետների հրամանով, ասել էր, որ Վլասովին հաղորդեն՝ հայրենիքի դավաճանների հետ Ռոմանովները ոչ մի առնչություն չեն ցանկանում ունենալ:

Հիմա ես երկիրս ուզում եմ վերահաս վտանգներից փրկել: Եվ այդ ճանապարհին պատրաստ եմ համագործակցել ցանկացած ուժի հետ: Խիղճս հանգիստ է, ամենակարևորը համարում եմ այն, որ վտանգավոր զարգացումները ես տեսնում եմ և գնալով համոզվում եմ իմ որդեգրած քաղաքականության ճշմարտացիության մեջ: Հարյուր հատ էլ հիշ-ական թերթ լինի, բացարձակ ի զորու չեն ինձ շեղել իմ ընտրած ճանապարհից:

Պ.Ղ. – Պարոն Գեղամյան, Դուք անընդհատ ասում եք, որ Լևոն Տեր-Պետրոսյանից է գալիս այսպիսի սարսափելի վտանգ: Ու ակնհայտ է, որ նա չի գալիս ինչ-որ գործարան թալանելու և այլնի... Ո՞րն է այդ վտանգի էությունը:

Ա.Գ. – Շատ տեղին և շատ խելացի հարց տվեցիք: Եկեք միասին տրամաբանենք: Ինչպե՞ս դուք կբնութագրեք այն, որ թուրքական, ադրբեջանական ամենահեղինակավոր թերթերը՝ լինի դա «Զամանը», «Զումհուրիեթը», «Դը Թրքիշ Դեյլի Նյուսը», ադրբեջանական «Դեյ ազ» ինտերնետային կայքը, «Զերկալոն», սրտի թրթիռով են սպասում այն օրվան, երբ Լևոն Տեր-Պետրոսյանը կգա իշխանության և դա ոչ էլ թաքցնում են: Ինչպե՞ս եք դուք գնահատում այն փաստը, երբ Լևոնի իրական զինակիցները հրապարակ չեն գալիս, վարագույրի հետևում են:

Պ.Ղ. – Ովքե՞ր:

Ա.Գ. – Պարոն Երջանիկ Աբգարյանը, խոսքս նրա՝ Աբգարյանի, սոցիալական վիճակի մասին չէ, այլ իր անունն է այդպես, Տեր-Հուսիկ Լազարյանը, Վանո Սիրադեղյանը: Եվ այդ մարդիկ իրենց բուն էությամբ լինելով ռուսատյացներ, ովքեր տարիներ շարունակ Ռուսաստանի հանդեպ թշնամության, թշնամանքի որդ էին սերմանում հենց նույն «Հայկական ժամանակի» շաբաթօրյա համարներում, թաքնվում են, իսկ իրենց կուռքն ու առաջնորդն հիմա ռևերանսներ է անում Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինին: Հիմա «Իզվեստիա» թերթին հարցազրույց է տալիս, բնութագրում է Հայաստանի վիճակը: Եվ այդ հարցազրույցում նա գործող իշխանություններին արդեն տալիս է ճիշտ այն նույն գնահատականները, որ տրված են եղել իր վարչակազմին դեռ 1997թ. հոկտեմբերին «Ազգային Միաբանության» նախաձեռնությամբ ընդունված կոչում: Լևոնը, ասես թե, Սասունցի Դավիթն է, հենց նոր էլ Քուռկիկ Ջալալիի թամբից է իջել և ասում է, որ եթե հանկարծ եվրոպացիները, եթե հան-

կարծ Ռուսաստանը սկուտեղի վրա ինձ մատուցեն իշխանությունը, ես կիրաժարվեմ, սկուտեղի վրա երկու ծաղիկ կդնեմ, հետ կվերադարձնեմ: Ասել կուզի՝ ուրիշի ձեռքից, ուրիշի շնորհիվ չեմ ուզում գալ իշխանության: Բա ծաղիկ դնող ու հետ ուղարկող ես, ինչո՞ւ ես «Իզվեստիային» տղա կանչում երկրիդ վրա: Ինքս էլ եմ նման մոլորության մեջ եղել տարիներ առաջ, բայց հետագայում Եվրախորհրդի Խորհրդարանական Վեհաժողովում, ԵԱՀԿ Խորհրդարանական Վեհաժողովում հասկացա, որ Հայաստանի բախտը որոշողը հայերս պետք է լինենք և երբեք ու երբեք չպետք է դրսից «մարդ բերենք», դրսի ուժերին ապավինենք, որովհետև դրսի ուժերը սեփական երկրների շահերն են հետապնդում: Իսկ իրենց երկրների շահերը միշտ չէ, որ համահունչ են մեր շահերի հետ:

Պ.Ղ. – Բայց Դուք ասացիք, որ Լևոն Տեր-Պետրոսյանն ասում է, որ ինքը չի ընդունում այդ համագործացությունը դրսի ուժերի հետ:

Ա.Գ. – Պետրոս ջան, ես Վիսարիոն Բելինսկին չեմ, Տեր-Պետրոսյանն էլ Նեկրասովը չէ, որ ես հիմա տառացիորեն վերլուծեմ նրա հոդվածները՝ ապացուցելու համար, որ քննադատությունս տեղին է: Ավելի լավ է եկեք հարցերին անդրադառնանք, որոնք հուզում են մեր ընտրողներին:

Պ.Ղ. – Բարի, Դուք ժամանակին գրել էիք «Հակաճգնաժամային ծրագիրը»:

Ա.Գ. – Միանգամայն ճիշտ եք:

Պ.Ղ. – Հիմա ներկայացնում եք փրկության ծրագիրը:

Ա.Գ. – «Արարման ծրագիր»-ը փրկության ծրագիր ասելով՝ դուք ավելի հեռու գնացիք, ծրագրի էությունը շատ ճիշտ բնութագրեցիք:

Պ.Ղ. – Իմ մեջ Ձեր կարգախոսն է տպավորվել՝ «Փրկենք Հայաստանը, երկիրը միասին»:

Ա.Գ. – Դա «Հակաճգնաժամային ծրագրի» կարգախոսն էր: Տեսեք՝ ինչքան է տպավորվել, որ 4 տարի անց էլ դուք դեռ շարունակում եք դա հիշել:

Պ.Ղ. – Ո՞րն է «Հակաճգնաժամային ծրագրի» և «Արարման ծրագրի» տարբերությունը:

Ա.Գ. – Միանգամայն օրինաչափ է ձեր հարցը: Կյանքը տեղում չի դոփում: Այն բոլոր գնահատականները, որոնք ներառված էին «Հակաճգնաժամային ծրագրում», մասամբ իրենց լուրջ ազդեցությունը հետագայում թողեցին կառավարության կողմից ընդունված ծրագրերի վրա: Ասեմ ավելին. որոշ դրույթներ կյանքի կոչվեցին անգամ իսկ այս մեկ տարվա ընթացքում: Հակաճգնաժամային այդ ծրագիրը գրվել էր խորհրդարանական ընտրություններին ընդառաջ, մասնավորապես, երբ հեռուստատեսությամբ ասում և հիմնավորում էի, որ հնարավոր է, օրինակ, կենսաթոշակները կրկնապատկել, բյուջեն կրկնապատկել, իշխանություններն ասածներս հեգնում էին:

Պ.Ղ. – Բայց երեկ իմ հյուրը Վահան Հովհաննիսյանն էր, և նա ասում էր, որ դա ինքն է ասել և, ահա, տեսնում եք կառավարությունը...

Ա.Գ. – Միանգամայն ճիշտ է, ես չեմ բացառում, որ Վահան Հովհաննիս-

յանն ուշադիր կարդացել է մեր «Հակաճգնաժամային ծրագիրը» և համոզվել է, որ այնտեղ գրված յուրաքանչյուր առաջարկություն իրատեսական է, համապատասխանում է իրականությանը: Ես այստեղ միայն լավ բան եմ տեսնում: Ասեմ ավելին. մեր ծրագիրն ամենաառաջինը հրապարակվեց և ոչ մի վատ բան մի տեսեք, որ քաղաքական երկու տարբեր ուժեր իրենց երկրի ապագայի նույն տեսլականն ունեն: Շարունակեմ միտքս: Եվ, ինչ եք կարծում, 2008 թ. բյուջեի նախագծում արդեն իսկ սևով սպիտակի վրա գրված է և օրենքի ուժ է ստացել, որ 300 հազար կենսաթոշակառուների (իսկ նրանց ընդհանուր թիվը կազմում է մոտ կես միլիոն) թոշակները 60 %-ով ավելանալու են: Բյուջեի ծախսային մասը 750-800 մլն դոլարով ավել է նախատեսված: Բայց այն, որ դրանց իրական լինելու մասին առաջին հիմնավորումն արվել է մեր ծրագրում, ամենևին էլ չի նշանակում, որ դա չի կարող իրենց համար ծրագրային դրույթ դառնալ: Խնդիրը և տարբերությունն այն է, որ երբ դրա մասին հրապարակավ ասում էինք, հեգնում էին, դրանք անիրատեսական էին համարում: Հետո, երբ թուղթն ու մատիտը վերցրեցին, նստեցին հաշվեցին, տեսան, որ երկրի բյուջեի հարկային եկամուտները կազմում են ՀՆԱ-ի ընդամենը 14,5-14,9%-ը, խոսքը պետական բյուջեի մասին է, հասկացան, որ այստեղ հարկային մարմինները լուրջ անելիքներ ունեն, որովհետև, օրինակ, Եվրամիության 27 երկրներում այդ ցուցանիշը 30-40% է կազմում: Նորվեգիայում, որը Եվրամիության անդամ չէ, 49% է, Դանիայում՝ 47, Ֆրանսիայում՝ 46, նույնիսկ Վրաստանում ավելի բարձր էր: Խորացան հարցի մեջ և ընդունեցին, որ բացարձակապես սին էին այն պատճառաբանություններն ու բացատրությունները, թե, իբր, այդ երկրներում հարկային դրույքաչափերը շատ ավելի բարձր են, քան Հայաստանում: Ոչ, այդ ցուցանիշները համեմատելի են, տեղեր կան, որ ավելի ցածր են, տեղեր կան՝ փոքր-ինչ բարձր են:

Պ.Ղ. – Բոլոր թեկնածուները իրենց խոսքի մեջ այս կամ այն կերպ անդրադառնում են մեծահարուստներին: Օրինակ, Սերժ Սարգսյանը, ես հիշում եմ, ասաց, որ նրանք, ովքեր 10, 20, 30 մլն դոլար են կուտակել, դժվար կրկնապատկեն, բայց սովորական քաղաքացին կկրկնապատկի եկամուտները: Վահան Հովհաննիսյանն ընդհանրապես ասում է, որ նրանց դնելու է իրենց տեղը և դրանք այլևս ...

Ա.Գ. – Իրենց տեղը ասելով՝ ի՞նչ նկատի ունի:

Պ.Ղ. – Զբաղվելու են իրենց բիզնեսով և քաղաքականության վրա ազդեցություն չեն ունենալու: Ծառայություններ չեն մատուցելու իշխանությանը՝ կապված լցոնումների հետ: Այ, դա է նրանց տեղը: Լևոն Տեր-Պետրոսյանն ասաց, եթե գործարարներն իրեն չմիանան, ապա մի տասը տարի հետո նրանց վիճակը, մեղմ ասած, շատ վատ է լինելու: Ձեր մոտեցումը:

Ա.Գ. – Իմ մոտեցումը հետևյալն է: Երբ ուշադիր նայում ես, ապա մի զարմանահրաշ իրավիճակի ես ականատես դառնում: Ո՞րն է այդ իրավիճակը: Ցանկացած ձեռներեց, առավել ևս խոշոր ձեռներեց կամ, ինչպես ընդուն-

ված է ասել, օլիգարխ, եթե գնար կանգներ նախկին Նախագահի կողքը, ապա հիշ-ական ամբողջ քարոզչամեքենան կսկսեր գովերգել նրանց: Կասեր՝ սրանք են մեր ապագան, սրանք են այն հերոսները, որոնց պետք է նմանվի Հայաստանի ձեռներեց աշխարհը: Մինչդեռ, տեսեք, ի՞նչ հետաքրքիր մետամորֆոզներ են տեղի ունենում: Իր առաջին ելույթում Լ.Տեր-Պետրոսյանն ասում է՝ կսատարի այդ ձեռներեցներին, ժողովրդական լեզվով ասած, տղերքին կուտ է տալիս: Երկրորդ ելույթում, հանրահավաքի ժամանակ, նա ասում է, որ նրանք էլ են տառապում այս իշխանությունների լծի տակ և իրենք անպայմանորեն պահանջված կլինեն ու երկրի զարգացման հիմնական խթանիչ ուժը կդառնան: Կուտը ավելացնում է: Չէ՞ որ նրանք էլ կյանք անցած, կյանք տեսած տղերք են, Լևոնի կուտը ինչի՞ պետք է ուտեն: Բնականաբար, ձեռներեցները մեծի մասով հայտարարում են, որ չեն սատարելու Լևոն Տեր-Պետրոսյանին, սատարելու են Սերժ Սարգսյանին: Եվ, ահա, այստեղից էլ սկսվում է ամենահետաքրքրական պահը. կոպտորեն ոտնահարելով անմեղության կանխավարկածը, ձեռներեցներին փորձում են հանցագործ ներկայացնել: Ավելի վտանգավոր ապագա էլ են խոստանում, սպառնում են՝ ասելով, որ կհայտնվեն բոմժի կարգավիճակում, այսինքն՝ նրանց կուլակաթափ են անելու: Սա նշանակում է, որ հեռանկարում հարստության վերաբաշխում է լինելու՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Ինքնին պարզ է, որ ոչ մի սեփականատեր հանգիստ չի հրաժարվի իր ունեցվածքից, թեկուզև տեղ-տեղ անազնիվ ճանապարհով ձեռք բերած հարստությունից: Ահա սրա համար եմ տագնապում՝ պնդելով, որ երկիրը փորձում են տանել եղբայրասպան պատերազմի ճանապարհով, տանել ապակայունացման, ինչը խիստ դատապարտելի ու մերժելի է: Այս իրողությունները հաշվի առնելով է, որ մենք մեր «Արարման ծրագրի» համար ընդունել ենք կարգախոս՝ «Հանուն ազգային միաբանության»: Պատմական բախտորոշ այս փուլում մեր երկիրն ուրիշ այլընտրանք չունի:

Պ.Ղ. – Պարոն Գեղամյան, մենք ջրեցինք Լևոն Տեր-Պետրոսյանի տված կտերը, հիմա, տեսեք, ժամանակը քիչ է, և ես թեկնածուներին փորձում եմ հարցեր տալ ոչ միայն քաղաքական, այլև անձնական ոլորտից: Համաձայնվեք, քաղաքացիների մի զգալի մասին հետաքրքիր է մարդկանց առումով բոլորովին ուրիշ բաներ և փորձենք թեթև բլից հարցերով գնանք առաջ: Ո՞րն է Երևանի Ձեր ամենասիրած փողոցը, պարոն Գեղամյան:

Ա.Գ. – Մաշտոցի պողոտան, կինո «Նաիրի»-ին հարող հատվածը: Հիշո՞ւմ եք, երգ կա՝ «Այստեղ եմ ծնվել, այստեղ մեծացել, այս ջուրը խմել սառնորակ...»: Իմ պարագայում՝ Ֆելոյի խանութի դիմացի պուլպուլակի ջուրը խմել սառնորակ: Սա էլ հումորի տեղ էր:

Պ.Ղ. – Վահան Հովհաննիսյանը, իմիջիայլոց, նույն տեղն է սիրում:

Ա.Գ. – Այո, նա մեր թաղի տղա է:

Պ.Ղ. – Ձեր սիրած սպորտաձևը:

Ա.Գ. – Երիտասարդ հասակում հրապուրվել եմ բռնցքամարտով, հետո 4 տարի ջրագնդակ եմ պարապել, այնուհետև, կարճ ժամանակ, տարիուկես, կարատե եմ պարապել: Այնպես որ, հիշատակածս երեք սպորտաձևերն էլ հոգեհարազատ են ինձ, 2 սպորտաձևից փոքր-ինչ տուժել եմ. մի քանի անգամ քիթս կոտրվել է և 2 անգամ երջանկահիշատակ Կիմ Հայկովիչ Շուքուրյանը վիրահատել է: Իսկ ջրագնդակը միայն առողջություն է պարգևել:

Պ.Ղ. – Հիմա զբաղվո՞ւմ եք որևէ սպորտաձևով:

Ա.Գ. – Ժամանակ առ ժամանակ գնում եմ Կարմիր խաչ, լողանում եմ:

Պ.Ղ. – Լողանում եք:

Ա.Գ. – Լողանում էլ եմ, դուշևոյ կա, սարքին էլ վիճակում է:

Պ.Ղ. – Ո՞ր գրականությունն է Ձեզ ավելի հոգեհարազատ՝ ֆրանսիական, ռուսական, լատինաամերիկյան, ճապոնական, թե մեծբրիտանական:

Ա.Գ. – Հին հույն փիլիսոփաների աշխատություններն իմ սիրած գրքերն են և իմ ամենասիրած հեղինակն էլ Հոմերոսն է: «Ոդիսականն» եմ շատ սիրում:

Պ.Ղ. – Այսինքն՝ հին հունական գրականությունը: Իսկ ո՞ր լեզվով եք կարդում, որովհետև հայերեն թարգմանություններն ուղղակի սարսափելի են:

Ա.Գ. – Ռուսերեն եմ կարդում և պետք է ասեմ, որ կարդում եմ վաղ հասակից՝ 3-րդ, 4-րդ դասարանից: 10 տարեկան հասակում հայրս նվիրեց Կուն ազգանունով հեղինակ կար՝ “Мифы и легенды Древней Греции”, այդ գիրքը, որից հետո մինչև օրս սիրահարված եմ հունական էպիկական հերոսների կերպարներին ու աշխատում եմ նմանվել:

Պ.Ղ. – Ձեր մանկության երազանքը, կարելի է ասել, որ ասացիք՝ նմանվել հունական ...

Ա.Գ. – Ինչո՞ւ չէ, այո: Նմանվել այն հերոսներին, որոնք երեսուն դար է հիշատակվում են, և յուրաքանչյուր գիտակ և ուսյալ մարդ աշխատում է իր զավակների մեջ ներարկել այն ամեն հերոսականը, որը ներհատուկ էր Հերակլեսին, Այաքսին ...

Պ.Ղ. – Այսինքն՝ Դուք հեծանիվ, դրա նման բան փոքր ժամանակ չեք ուզել, փորձել եք նմանվել հունական հերոսներին:

Ա.Գ. – Գիտեք, Պետրոս, փորձում եք հումորի վերածել: Մեկը մյուսին չի խանգարում: Կինո «Նաիրիի» դիմացը ձի կար, որը թամբել եմ հունական հերոսների ձևով և հեծանիվի պես քշել:

Պ.Ղ. – Ամենագեղեցիկ նվերը, որ նվիրել եք Ձեր կնոջը:

Ա.Գ. – Համբույրս է եղել Պետրոս, համբույրս:

Պ.Ղ. – Պարզ է: Կյանքի ամենամեծ հիասթափությունը:

Ա.Գ. – Կյանքից ես երբեք հիասթափված չեմ եղել: Փիլիսոփայորեն եմ մոտեցել կյանքի ցանկացած ելևէջի, որովհետև երբ մեծերի կյանքին վերաբերող գրքեր ես կարդում, նրանց արարչությանը ծանոթանալով, հետն էլ

տեղեկանում ես, թե դիմացը ի՞նչ են ստացել, ապա այն, ինչ տեղի է ունենում այստեղ, ասես, մի խաղ ու պար է: Ինչպե՞ս կարելի է կյանքում, ընդհանրապես, թեկուզ մի պահ, հիասթափված լինել: Դա թույլ մարդկանց բնորոշ հոգեվիճակ է:

Պ.Ղ. – Պատմական ո՞ր հերոսն է Ձեզ ավելի հոգեհարազատ՝ Չինգիզ խանը, Ստալինը, Մակեդոնացին, Նապոլեոնը:

Ա.Գ. – Ոդիսևսը: Չնայած ուզո՞ւմ եք Չինգիզ խանից էլ պատմեմ, Նապոլեոնից էլ՝ սկսած Այաչիոյի շրջանից, Ստալինից էլ խոսենք:

Պ.Ղ. – Չէ, չէ, գիտեմ, որ կասեք: Ձեր ամենասիրած կերակուրը, պարոն Գեղամյան:

Ա.Գ. – Հաց ու պանիր շատ եմ սիրում, որովհետև գիտեմ, ինչ վիճակում էլ, որ լինեմ, իմ հաց ու պանիրը կունենամ:

Պ.Ղ. – Իսկ ի՞նչ պանիր եք սիրում, ոչխարի, հոլանդական, թե՞ լոռի:

Ա.Գ. – Գիտեք, Պետրոս, ֆրանսիացիներն ունեն շուրջ հազար տեսակի պանիր: Եվ եթե ես հիմա շտապողականություն դրսևորեմ, այս կամ այն պանրի անունը տամ, կարող է հանկարծ որոշ գուրմաններ, ում մասին ժամանակին գրել է Ֆրանսուա Ռաբլեն, նեղանան, մասնավորապես, Գարգանտուան և Պանտագրյուելը:

Պ.Ղ. – Դուք պանիր եք սիրում:

Ա.Գ. – Պանիր չեմ սիրում, ես հաց ու պանիր եմ սիրում: Գիտեք՝ ի՞նչ հիշեցի. հիշեցի Հրաչիկ Հովհաննիսյանին՝ մեր երջանկահիշատակ անվանի բանաստեղծին, որն արտակարգ մի անձնավորություն էր, շատ մեծ հայ մարդ էր և մեծ հումորի տեր էր, հարգարժան Դավիթ Հովհաննեսի հայրն է: Երբ Գրողների միության օրակարգում նախագահ ընտրելու հարցն է դրված լինում, ի թիվս այլ թեկնածուների, քննարկվում է նաև նրա թեկնածությունը: Բոլոր ելույթ ունեցողներն ասում են. ախր, շատ լավ մարդ է Հրաչիկ Հովհաննիսյանը, տաղանդավոր բանաստեղծ է, հետն էլ պատերազմի բովով է անցել, բայց խմելու հետ գլուխ ունի: Ըստ էության, քննադատական ոչ մի խոսք նրա հասցեին չեն ասում: Իր պատասխան ելույթում Հ. Հովհաննիսյանն ասում է. ես քննադատական ամեն խոսք կարող էի ընդունել, տանել, բայց, ընկերներ, հասկացեք, ես խմող չեմ, ես ուտող-խմող եմ: Հիմա, Պետրոս, դուք էլ հասկացեք՝ ես պանիր սիրող չեմ, ես հաց ու պանիր սիրող եմ:

«ԱՐՄԵՆԻԱ» ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆ ԳԱԳԻԿ ՄԿՐՏՉՅԱՆԻ «ԻՐԱԿԱՆՈՒՄ-2008» ՀԱՂՈՐԴԱՇԱՐԻ ՀՅՈՒՐԸ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆՆ Է

(30.01.2008 թ.)

ԳԱԳԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ – «Իրականում-2008»-ի տաղավարում այսօր հյուրընկալվել է ՀՀ Նախագահի թեկնածու Արտաշես Գեղամյանը: Բարև Ձեզ, պարոն Գեղամյան: Արդեն քարոզարշավի վճռական փուլն է, այդ իսկ պատճառով առաջին հարցը հենց այդ ենթատեքստով է: Իր ուժերի վրա վստահ թեկնածուի համար ցանկալի է, որ ակտիվ քվեարկություն լինի ընտրությունների օրը, թե՞, ընդհակառակը, պասիվ:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ – Անտարակույս, եթե քաղաքացիների ամենաակտիվ մասնակցությունը լինի, մենք կունենանք հնարավորինս օբյեկտիվ պատկերը, թե ազգաբնակչության որ հատվածը, որ ծրագրերին է առավելություն և նախապատվություն տալիս: Ընտրողների ակտիվ մասնակցությունը համարում եմ հաջողության գրավական:

Գ.Մ. – Պարոն Գեղամյան, այսօր արդեն փորձ է արվում ինչ-որ կերպ կանխորոշել նախագահական ընտրությունների արդյունքները՝ ասելով, թե միևնույն է դրանք կեղծվելու են և այլն, և այլն:

Ա.Գ. – Գիտե՞ք, եթե ընտրության ես մասնակցում և, ի սկզբանե, ասում ես՝ կեղծելու են, իզուր էլ մասնակցում ես, չէ՞ որ մենք պարապ մարդիկ չենք: Ուրիշ բան, որ դրա հետևում թաքնված է սցենար: Ո՞րն է այդ սցենարը. հող պատրաստել, խոսքը քարոզչական հողի մասին է, որ վաղը, մյուս օրը սեփական պարտությունը ճաշակելիս արդեն մեղավոր գտնես ոչ թե սեփական անձդ և քո ծրագրերի թերի լինելու փաստը, այլ վկայակոչես կեղծված ընտրությունները: Ցավոք, ես էլ առանձին թեկնածուների կողմից նման միտում նկատել եմ: Ըստ որում, ոմանք արդեն իրենք էլ են իրենց հակասում: Մի կողմից հայտարարում են, որ հաղթանակն արդեն իսկ ապահովված է և ճիշտ մեկ օր անց ասում են, որ ընտրակեղծիքների համար արդեն իսկ հող է նախապատրաստվում և ընտրակեղծիքներ են լինելու: Երբ լրջմիտ վերլուծում ես մարդկանց իրական տրամադրությունները, ապա գալիս ես շատ տխուր եզրահանգումների: Նրանք արդեն գիտակցում են, որ պետք է արդարացնեն միլիոնավոր դոլարների հասնող այն գումարները, որ դրսից ստացել են, պարտության դեպքում պետք է բացատրեն չէ՞, թե ինչո՞ւ դրանք հօդս ցնդեցին: Եվ պարտության եզակի արդարացումը, լավագույն հիմնավորումը այդ դեպքում կլինի այն, որ ամեն բան՝ սեփական անճարակությունը և անհեռան-

կարային մասնակցությունը նախագահական ընտրություններին, բարդեն ընտրակեղծիքների վրա:

Գ.Մ. – Պարոն Գեղամյան, տեսեք, այս ֆոնի վրա միջազգային կառույցների կողմից հնչեցվում են հայտարարություններ քարոզարշավի լուսաբանման, իբր, կողմնակալության մասին, անգամ տեսակետների մոնիտորինգի մասին:

Ա.Գ. – Դա հետևանք է այն լուրջ սցենարի, որը մշակվել է մեր հանրապետությունից դուրս: Ո՞րն է այդ սցենարը. անել ամենը, որ երկրում վիճակն ապակայունանա: Եվ դրա արդյունքում պարարտ հող պատրաստել երկրի ներքին հարցերին արտաքին միջամտության համար: Իրավիճակ, որից անհապաղ կօգտվեն թուրք-ադրբեջանական զինված ուժերը, որոնք տեղակայված են Լեռնային Ղարաբաղ-Իրան-Ադրբեջան սահմանային գծում: Նրանք կսանձազերծեն ռազմական գործողություններ, և հետո Ադրբեջանն անհապաղ կդիմի միջազգային հանրությանը՝ խաղաղասիրական կոչ-խնդրանքով, որ այդ տարածաշրջանում անպայմանորեն տեղակայվեն խաղաղարար ուժեր: Եվ ինքնին հասկանալի է, թե ումից կազմված կլինեն այդ ուժերը: Եթե զարգացումներն այդ հունով ընթանան, ապա Իրանի Իսլամական Հանրապետությունն այդ ամենի մեջ կարող է դիտարկել նաև ոչ բարեկամական գործողություններ Հայաստանի իշխանությունների կողմից, որովհետև մենք գիտենք՝ Իրանի շուրջ ինչ խմորումներ են ընթանում: Իրանի Իսլամական Հանրապետությունը, ի պատասխան նման զարգացումների, կարող է պարզապես փակել հայ-իրանական սահմանը: Այդ նույն ժամանակաշրջանում պետք է սպասել, որ թուրք-ադրբեջանական իշխանությունների ճնշման ներքո Վրաստանի Հանրապետությունը նույնպես կարող է խոչընդոտներ և դժվարություններ ստեղծել Վրաստանի վրայով իրականացվող մեր բեռնափոխադրումների համար: Ահա այդ ամենը հաշվի առնելով է, որ երկրի իշխանությունները պարտավոր են ամեն ինչ անել, որ վիճակը չապակայունանա: Վերջինիս հետևանքները, վտանգները, երբ ինքդ գիտակցում ես, ապա մի կողմ ես դնում այն, որ դու մերժում ես թե՛ գործող իշխանություններին, թե՛ նախկիններին, և միմիայն մտածում ես երկիրը վերահաս վտանգից, վտանգավոր զարգացումների հորձանուտից հետ պահելու մասին: Ահա այստեղ է, որ համընկնում են «Ազգային Միաբանության» և իշխանության աշխարհաքաղաքական մոտեցումները: Մի իրողություն, որն անպարկեշտ կերպով փորձում են վերագրել ոչ թե մեր կողմից որդեգրված և իրականացվող հայրենասիրական քաղաքականության դրսևորմանը, այլ նենգափոխելով դա՝ ասում են, տեսեք, «Ազգային Միաբանությունը», Արտաշես Գեղամյանը մշտապես խոսում են ապակայունացման վտանգավորությունից՝ չքննադատելով իշխանություններին: Քննադատներիս բազմիցս եմ բացատրել, որ ես տեսնում եմ այն սցենարը, որը մեր տարածաշրջանում փորձում են իրագործել, որովհետև ինձ համար ինքնին հասկանալի է, թե զարգացումների նման ընթացքը ուր է տանում:

Գ.Մ. – Շատ լավ, հասկանալի է, և, իհարկե, որպես թեկնածու Ձեր խոսքը նման հայտարարություններին որպես պատասխան նույնպես կարող է հնչել: Իսկ կոնկրետ լուսաբանման վերաբերյալ:

Ա.Գ. – Ինչ վերաբերում է լուսաբանմանը, ապա ասեմ, որ 1998 թ. առ այսօր ես ավելի անկողմնակալ լուսաբանում չեմ տեսել. լինի դա «Արմենիան», թե «Շանթը», լինի Հանրային հեռուստատեսությունը, թե Հ-2 ալիքը, լինի «Երկիր Մեդիան», թե «ԱՐ»-ը: Մենք նույնպես մոնիտորինգ ենք անում և տեսնում ենք, որ ցուցադրվող նյութերը բոլորի համար վայրկյան առ վայրկյան նույնն են: Եվ դրանք հիմնականում բարիդրացիական են: Ակամայից մտաբերում եմ, որ 2003 թ. նախագահական ընտրությունների ժամանակ լինում էին բազմահազարանոց հանրահավաքներ, որոնք, սակայն, որպես այդպիսին չէին լուսաբանվում. ժողովրդի հիմնական զանգվածը ցրվելուց հետո նկարում էին փոքր խմբերով հավաքված մարդկանց և հեռուստադիտողի մոտ տպավորություն էր ստեղծվում, որ այդ հանրահավաքը ձախողվել է: Հիմա նման մոնտաժ չեն անում, գոնե առ այսօր չեն անում: Եվ, կարծում եմ, առաջիկայում էլ չեն անի, որ հանկարծ այս ավանդույթը, որը նոր է ձևավորվում, չխախտվի: Իսկ այն, որ միակողմանի լուսաբանման վերաբերյալ մեղադրանքներ են հնչում, նույնպես միտումնավոր է արվում, պարզապես հող են ստեղծում ապագայում իրավիճակն ապակայունացնելու համար, արդարացում ունենալու, տպավորություն թողնելու, որ հետապնդվել են և այլն, և այլն: Կարծում եմ, դա նրանց չի հաջողվի այն պարզ պատճառով, որ հանրապետության հազարավոր հեռուստադիտողներ հնարավորություն են ունեցել այդ հարցերի շուրջ անելու սեփական դատողությունները: Կցանկանայի նրանց հորդորել և ասել, որ, վերջին հաշվով, պարտությունն էլ կարելի է տղամարդավարի ընդունել: Մարդը պետք է հասկանա ու գիտակցի, որ այս ընտրապայքարի մեջ է մտել սխալ հաշվարկ կատարելու արդյունքում կամ ինչ-ինչ խնդիրներ լուծելու արդյունքում և աչքի առաջ ունենա պարտվելու հեռանկարը:

Գ.Մ. – Պարոն Գեղամյան, այսօր արդեն կարելի է ասել, որ քարոզարշավը մտել է վճռական փուլ: Այս փուլում, ըստ Ձեզ, ամենակարևորը ի՞նչն է:

Ա.Գ. – Ամենակարևորն այն է, որ մեր ժողովրդի գիտակցության մեջ սերմանենք մի պարզ գաղափար. փետրվարի 20-ին ոչ թե Նախագահի այս կամ այն թեկնածուն պետք է հաղթի, այլ՝ Հայոց պետականությունը: Տոգորված կլինե՞նք այդ գիտակցությամբ, կհասկանա՞նք, որ մեր երկրի ապագան յուրաքանչյուրիս ձեռքում է, կգնա՞նք մեկ մարդու պես, խղճի մտոք, կընտրե՞նք մեր կողմից նախապատվելի թեկնածուին, կնշանակի, երկրի հանդեպ մեր քաղաքացիական պարտքը կատարել ենք: Եվ ոչ միայն պարտքն ենք կատարել, այլև Հայաստանի Հանրապետությունը հնարավոր վտանգավոր զարգացումներից ենք զերծ պահել: Ահա այս ճշմարտության գիտակցումը չափազանց կարևոր է:

Գ.Մ. – Ուստի, պետք է բոլորը, հետևելով Նախագահի կոչին, մասնակցեն ընտրություններին: Դուք կողմնակի՞ց եք Նախագահի այդ գաղափարի իրականացմանը:

Ա.Գ. – Անշուշտ: Չէ՞ որ եթե ազգաբնակչության 85-90%-ն է մասնակցում ընտրություններին և ապագա Նախագահն ընտրվում է ընտրողների մասնակցության այդ տոկոսների պայմաններում, ապա նա արդեն իրավասու է խոսել հայ ժողովրդի անունից: Իսկ եթե ընտրություններին կեսից էլ պակաս մարդ է գնում ընտրության և քեզ էլ թեկուզ կեսն է ընտրում, ապա ընդամենը 25-26%-ի անունից կարող ես խոսել, և քո ձայնը աշխարհում ո՛չ լսելի կլինի, ո՛չ էլ ազդեցիկ: Ահա դրա համար կրկին անդրադառնում ենք այն հարցին, որից դուք սկսեցիք մեր զրույցը, այն է՝ անհրաժեշտ է, որ պարտադիր հնարավորինս մեծ թվով ընտրողներ գնան և իրենց քաղաքացիական պարտքը կատարեն:

Գ.Մ. – Պարոն Գեղամյան, ես առաջարկում եմ անդրադառնանք Ձեր ծրագրերին: Ձեր «Արարման ծրագիրը» ռոմանտիզմի որևէ տարր ունի, թե՞ ոչ:

Ա.Գ. – Անտարակույս, ունի: Եթե ռոմանտիզմի տարր չլիներ, եթե դա մարդու երևակայությունը, հոգին, սիրտը չշարժի, ապա ծրագիրը մեռած փաստաթուղթ է: Բայց ռոմանտիզմը հիմնված է իրական թվերի, կենդանի փաստերի և ամենաժամանակակից մակրոէկոնոմիկա գիտության հենքի վրա: Այո, մարդ պետք է երազելու ունակություն ունենա, մարդ պետք է իր երազած Հայաստանը ներկայացնի, և այդ երազանքը պետք է հնարավորինս հրապուրիչ լինի տարիքային բոլոր շերտերի մարդկանց համար: Միայն այդ պարագայում, երբ մարդիկ սրտով ընդունեցին՝ կխորանան ծրագրային հիմնադրույթների ուսումնասիրման մեջ: Իսկ եթե խորանան, արդեն իսկ գիտակցաբար կընդունեն ծրագիրը, կսեփականացնեն այն: Իսկ հայ մարդը իր սեփականությունը պաշտպանելու ճանապարհը կգտնի: Անշուշտ, սա հայ ռոմանտիզմի էլեմենտ է:

Գ.Մ. – Իհարկե, համեմատության համար չեմ ասում, Լենինն էլ Կրեմլում երազում էր, բայց այդ երազների մեծ մասը իրականություն դարձավ, որքան էլ, թվում էր, թե այն ֆանտաստիկ է:

Ա.Գ. – Գիտե՞ք, շատ ճիշտ դիտարկում արեցիք այն կտրվածքով, որ անգամ իսկ աշխարհահռչակ ֆանտաստ Հերբերտ Ուելսը, երբ Լենինի հետ հանդիպեց, հիացել և զարմացել էր, թե ինչպե՞ս կարելի է թշվառության գիրկը նետված, սովի ճիրաններում խեղդվող Ռուսաստանում ժողովրդի առջև դնել այդպիսի վիթխարի խնդիրներ, ինչպիսին էր, օրինակ, «ԳՈԷԼՐՈ» ծրագիրը: Եվ ոչ միայն նման վիթխարի խնդիրներ դնել, այլ նաև համոզված լինել, որ դրանք կյանքի են կոչվելու: Այնպես որ, եթե դու սիրտ ու հոգի չես ներդրել քո ծրագրի մեջ, եթե այնտեղ երազանքի թեկուզև փոքր նշույլ անգամ իսկ չկա, ապա դա դատապարտված է ձախողման, հավատացնում եմ Ձեզ:

Գ.Մ. – Պարոն Գեղամյան, էկոնոմիկայի բաժնում դուք հատկապես կարևորել եք, արդեն ես անցնում եմ Ձեր «Արարման ծրագրին», նոր տնտեսական ծրագրի իրականացումը: Ի՞նչ է դա, հայկական նոր ՆԷՊ է, ես նկատի ունեմ, որ այն արդյոք կարո՞ղ է ՆԷՊ-ի նման արդյունավետ ծրագիր դառնալ:

Ա.Գ. – Ոչ, ներկայիս իրավիճակն արմատապես տարբերվում է անցյալ դարի 20-ական թվականներից: Խնդիրն այլ ձևակերպում ունի. եթե Հայաստանը զարգանա, անգամ իսկ ՀՆԱ-ի աճի այն տեմպերով, որոնք այսօր են արձանագրվում, ապա 5-7 տարի հետո մեր զարգացածության մակարդակով անհասանելի հետ կընկնենք հարևան Ադրբեջանից: Ես էլ չեմ ասում Թուրքիայի մասին, ինչն անթույլատրելի շռայլություն կլինի Հայոց պետության համար: Ուստի, խնդիր է դրված տնտեսության այն ճյուղերին զարկ տալ, որոնք երկրի էկոնոմիկայի համար կապահովեն ճեղքում, և առաջընթաց ապահովող այդ ճյուղերը, բնականաբար, պետք է լինեն 21-րդ դարում իրենց արդյունավետությամբ ամենազարմանահրաշ ճյուղերը՝ ինովացիոն, տելեկոմունիկացիոն, ինֆորմացիոն, գենային ինժեներիայի, նանոտեխնոլոգիական նորագույն տեխնոլոգիաներ: Այդ ամենի մասին մանրամասն գրված է ծրագրում և ենթադրվում է, որ այդ ոլորտներից յուրաքանչյուրի համար պետք է անպայմանորեն մշակվեն ազգային ծրագրեր այնպես, ինչպես Ռուսաստանի Դաշնությունում: Եթե հիշում եք, այնտեղ շուրջ 3 տարի առաջ ձեռնամուխ եղան ազգային 4 ծրագրերի մշակմանը և արդեն 3 տարի անց դրանք շոշափելի արդյունք են տալիս: Եվ այն աստիճանի են արդյունք տալիս, որ դրականորեն են ազդում մարդկանց, ընտրողների վրա: Անգամ իսկ ամենաանկողմնակալ սոցիոլոգիական հարցումների արդյունքում այդ ծրագրերի անմիջական համակարգող ՌԴ նախագահի թեկնածու Դմիտրի Անատոլևիչ Մեդվեդևի վարկանիշն այսօր հասել է 74%-ի, երբ երկրորդ տեղում կոմկուսի ղեկավարն է՝ Գենադի Անդրեևիչ Զյուգանովը, և 3-րդ տեղում՝ Վլադիմիր Վոլֆովիչ Ժիրինովսկին, որոնց վարկանիշերը 12%-ի սահմաններում են: Այսինքն՝ ազգային ծրագրերը պահանջված են ժողովրդի կողմից: Ահա, այստեղ, մենք պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնենք, որ պետական հոգածության առարկա դառնան այն ճյուղերը, որոնք զարգանալու պայմաններում հնարավորություն կընձեռեն մեզ զգալիորեն պակասեցնել ներմուծումը: Այսօր մենք ներմուծման վտանգավոր ծավալներ ունենք: Բավական է ասել, որ 2007 թ. Հայաստան ներմուծվող ապրանքների գումարային կշիռը կազմել է 3 մլրդ 200 մլն դոլար, իսկ արտահանվել է ընդամենը 1 մլրդ 200 մլն դոլարի չափով: Այսինքն՝ առևտրի հաշվեկշռի սալդոն բացասական է և կազմում է 2 մլրդ դոլարի չափով: Այդ թիվը խոսում է Հայաստանի Հանրապետության բյուջեի ծավալի հետ, գոնե 2007 թ. բյուջեի, դեռ մի բան էլ բյուջեից ավելի է: Սա շատ վտանգավոր միտում է, որովհետև, երբ հայաստանյան շուկան գրավում են դրսից ներմուծվող ապրանքները, դա իր հետևից բերում է մեր տեղական արդյունաբերության էլ ավելի սեղմմանը,

Ուշադրության է արժանի այն փաստը, որ տեղեկատվական գործակալության համար կարևոր էր իմանալ Արտաշես Գեղամյանի կարծիքը ՌԴ նախագահի թեկնածու Դմիտրի Մեդվեդևի մասին և իշխանության հաջորդականության ապահովման նպատակով Ռուսաստանում իրականացվող քաղաքական սցենարի վերաբերյալ: Բոլոր «անհարմար» հարցերին Արտաշես Գեղամյանը տալիս է փաստարկված և համոզիչ պատասխաններ, հիմնվելով ոչ միայն Հարավային Կովկասի պետությունների, այլև «Մեծ շախմատային խաղատախտակի» գլոբալ խաղացողների արտաքին քաղաքականության նրբությունների խորը իմացության վրա:

ԼՐԱԳՐՈՂ - Ինչո՞վ է Ձեր նախընտրական ծրագիրը տարբերվում Հայաստանի Նախագահի մյուս թեկնածուների ծրագրերից, և ինչո՞ւ ընտրողը պետք է նրանցից հատկապես Ձեզ տա նախապատվությունը:

Ա.ԳԵՂԱՄՅԱՆ - Ես հիմա հակված չեմ ընդդիմախոսել ՀՀ Նախագահի մնացյալ ութ թեկնածուների նախընտրական ծրագրերին, այլ կարող եմ ասել, թե ինչո՞վ է իմ ծրագիրը շահեկանորեն տարբերվում մյուս ծրագրերից և ի՞նչ է այն խոստանում ընտրողին, մեր ժողովրդին ու հանրապետությանը: Իմ ծրագրում տրված է տնտեսական և սոցիալ-քաղաքական այն իրողությունների օբյեկտիվ, գիտականորեն հիմնավորված վերլուծությունը, որոնցով Հայաստանը գնում է դեպի երկրի Նախագահի ընտրությունները: Օբյեկտիվորեն նշված են այն պատճառները, որոնք հանգեցրել են տնտեսության լճացմանը, ցույց են տրված այն վտանգները, որոնք սպառնում են Հայաստանին ներկայիս տնտեսական քաղաքականությունը շարունակելու պարագայում: Որպեսզի ասածներս մերկապարանոց չհընչեն, բերեմ մեկ, բայց համոզիչ օրինակ. 2007 թ. արդյունքներով արտաքին տնտեսական հաշվեկշռի սալդոն բացասական էր և կազմեց ավելի քան 2 միլիարդ ԱՄՆ դոլար, ավելին, տարեցտա-

րի նկատվում է ներկրման աճի տեմպերի առաջանցիկ ավելացման միտում՝ արտահանման աճի տեմպերի համեմատ: 2007 թ. արդյունքներով Հայաստան է ներկրվել 3,2 մլրդ դոլարի, իսկ արտահանվել է 1,2 մլրդ դոլարի արտադրանք: Ստացվում է, որ Հայաստանը, որի տնտեսության աքիլլեսյան գարշապարը հիմնականում գործազրկությունն է, երկրի բյուջեի չափերը գերազանցող ծավալով ապրանքներ ներկրելով, աշխատատեղեր է ապահովում Հայաստան ապրանքներ ներմուծող երկրների համար: Պարադոքս է և այն, որ տարեցտարի առևտրային հաշվեկշռում աճում է բացասական սալդոն հարևան Թուրքիայի հետ իրականացվող առևտրաշրջանառության մեջ: Այսինքն՝ թուրքական ապրանքներ ներկրելով հանրապետություն, դրանով իսկ մենք նպաստում ենք Թուրքիայի Հանրապետությունում աշխատատեղերի ստեղծմանը, երկիր, որը մինչ օրս պաշտոնապես չի ճանաչել Հայաստանի Հանրապետությունը, դիվանագիտական հարաբերություններ չի հաստատել մեզ հետ: Չի կարող մտահոգիչ չլինել և այն, որ արտադրվող էլեկտրաէներգիայի ծավալները ոչ միայն չեն աճում, այլև չեն հասնում նույնիսկ 2006 թ. մակարդակին: Հասկանալի է, որ էներգետիկայի բնագավառում հետ մնալն ամենևին չի վկայում հանրապետության արդյունաբերության և ողջ ենթակառուցվածքի զարգացման մասին: Տագնապ է հարուցում և այն, որ կանխարգելիչ պատշաճ միջոցներ չեն ձեռնարկվում տնտեսական հնարավոր կոլապսը կանխելու ուղղությամբ, ինչը կարող է տեղի ունենալ այն պատճառով, որ 2009 թ. հունվարի 1-ից ամենաքիչը 2,3 անգամ աճելու են Հայաստան ներմուծվող բնական գազի գները: Ըստ այդմ՝ անխուսափելիորեն կաճեն և էլեկտրաէներգիայի սակագները, ինչն իր հերթին կբերի տեղական ապրանքարտադրողների արտադրանքի ինքնարժեքի աճի, իսկ դա վերջնարդյունքում կհանգեցնի տեղական արտադրանքի գների նշանակալի բարձրացման ու դրա մրցունակության նվազման, կբերի սպառման շուկաների կորստի և արդյունքում՝ արտադրության փակման, գործազուրկների բանակի ավելացման: Այս բոլոր վտանգները հաշվի են առնված իմ հեղինակած ծրագրում:

Լուրջ տագնապ է առաջացնում նաև Հայաստանի առանձին տարածաշրջանների ծայրաստիճան անհամաչափ զարգացումը: Չի կարող մտահոգիչ չլինել ժողովրդագրական բարդ իրավիճակը և չկայացվող ընտանիքների տարեցտարի աճող տեսակարար կշիռը: Բավարարից հեռու է ազգաբնակչության բնական աճը, որը 2,4 անգամ ցածր է 1988-1989 թթ. մակարդակից: Ծրագրում փաստարկված գնահատականներ են տրված այդ և մի շարք այլ հրատապ խնդիրներին, իսկ ամենակարևորը՝ նախանշված են ստեղծված իրավիճակից դուրս գալու կոնկրետ ճանապարհները:

Հայաստանի տնտեսության առողջացումը պահանջում է համակարգված մոտեցում, կշռադատված և համապարփակ լուծումներ, քանի որ այն դեռևս չափազանց թույլ է: Այսօր, գտնվելով ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն իրավիճակում, երկիրը ծայրահեղորեն խոցելի է նաև պարենային անվտանգության առումով: Բավական է նշել, որ հանրապետության ցորենի պա-

հանջարկի շուրջ 40-50% - ը ապահովվում է ներկրման միջոցով, և դա այն դեպքում, երբ վարելահողերի 40-50% - ը չեն մշակվում: Եվ դա էլ տեղի է ունենում սակավահող Հայաստանում: Դրա հետ մեկտեղ հողատարածքների երկարատև չմշակումը արդեն աստիճանաբար հանգեցնում է հողաշերտի էրոզիայի, հողերի անապատացմանը: Ըստ այդմ, ակնհայտ է, որ դրանց ռեկուլտիվացման համար ապագայում կպահանջվեն մի քանի տասնյակ անգամ ավելի միջոցներ, քան անհրաժեշտ է գյուղատնտեսական արտադրության բնականոն վարման համար: «Արարման ծրագրում» հատուկ մատնանշված են այն խնդիրները, որոնց լուծումը կապահովի Հայաստանի էկոնոմիկայի մրցունակությունը գլոբալիզացվող աշխարհի պայմաններում: Հարկ է արձանագրել, որ, ցավոք, տնտեսական մրցակցության մեջ մենք առայժմ հետ ենք մնում Ադրբեջանից, իսկ դա հղի է լուրջ հետևանքներով՝ Հայաստանի ազգային անվտանգության կտրվածքով: Իսկ եթե այս ամենը զուգադրենք Ադրբեջանի ղեկավարների շուրթերից հնչող ռազմատենչ կոչերի հետ, ապա տարածաշրջանում ձևավորվող իրավիճակը բնութագրել այլ կերպ, քան տագնապալի, անհնար է:

Ես ուշադիր ծանոթացել եմ ՀՀ Նախագահի մյուս թեկնածուների ծրագրերին: Ի տարբերություն իմ գործընկերների ծրագրերի (առանձին բացառությամբ), կարելի է պնդել, որ իմ կողմից առաջարկված փաստաթղթում յուրաքանչյուր միտք հիմնավորված է կոնկրետ վիճակագրությամբ, բացահայտված է ստեղծված իրավիճակի պատճառահետևանքային կապը: Այո, իմ գործընկերները ևս հիշատակում են երկրի առջև ծառացած խնդիրները, սակայն թե ինչի՞ հետևանքով են դրանք առաջացել, ի՞նչն է ծնել դրանց և ինչպե՞ս դրանք հաղթահարել, ի՞նչ մեխանիզմներ կիրառելով, ինչպիսի՞ միջոցներ օգտագործելով, ահա այս հարցերի պատասխանները կամ չեն տրվում, կամ էլ քիչ են համոզիչ, եթե անգամ իսկ տրված են: Իմ կարծիքով, այս առումով «Արարման ծրագիրը» շահեկանորեն տարբերվում է մյուս ծրագրերից: Իմ ծրագիրը միտված է ապագային: Դրա հետ մեկտեղ, եթե համեմատենք Նախագահի թեկնածուների ծրագրերը գիտական հիմնավորվածության, ՀՀ էկոնոմիկայի պոտենցիալ հնարավորությունների և լուծման ենթակա խնդիրների հավասարակշռվածության դիրքերից, ապա ամենաարհեստավարժը, իմ կարծիքով, վարչապետի ծրագիրն է: Խոսքը վերաբերում է գնահատականների ու փաստերի համաչափությանը, ինչպես նաև դրանց համապատասխանությանը սոցիալ-տնտեսական ցանկացած ծրագրի կազմման համար բազիսային հիմք հանդիսացող ազատ շուկայի տնտեսական օրենքներին:

Իմ ծրագրում մեծապես օգտագործել եմ այն հարուստ փորձը, որը դրված է Վլադիմիր Պուտինի ղեկավարությամբ Ռուսաստանում վերջին շրջանում իրականացվող տնտեսական քաղաքականության մեջ: Մասնավորապես, օգտագործել եմ ազգային նախագծերում ներառված արժեքավոր գիտական հենքը, ինչն արդեն շոշափելի դրական արդյունքներ է տալիս Ռուսաստանում: Հրատապ խնդիրների լուծման համար նման մոտեցումն առա-

վել քան պահանջված է և Հայաստանի համար: Ու պատահական չէ, որ ես ուղղակիորեն նշել եմ ազգային համապատասխան նախագծերի մշակման անհրաժեշտությունը, նախագծեր, որոնք իրենց մեջ կներառեն մեր հանրապետության կենսապահովման կարևորագույն ոլորտները: Ռուսաստանի Դաշնության ազգային նախագծերում ներդրված փիլիսոփայությունը թույլ է տվել Ռուսաստանի քաղաքացիներին կենսականորեն զգալ իրենց մասնակից լինելու իրողությունը պետության կառավարմանը, ամբողջությամբ ճաշակել տնտեսական վերելքի պտուղները: Նմանատիպ հարցադրման կարիք ունեն ինչպես մեր հանրապետության տնտեսությունը, այնպես էլ՝ հայ հասարակայնությունը: ԽՍՀՄ - ի փլուզումից հետո հետխորհրդային բոլոր պետություններն էլ բախվեցին համանման խնդիրների հետ: Այս կամ այն հիմնախնդիրը որոշ երկրներում կարող է ավելի սուր, մյուսներում՝ նվազ լինել, սակայն, ընդհանուր առմամբ, գործ ունենք պետական պլանային համակարգին ներհատուկ հետևանքների հետ, որոնք առաջ բերեցին նույնաբովանդակ խնդիրներ: Իսկ այն պրոբլեմները, որոնք դրված են Ռուսաստանի առջև ներտնտեսական իրավիճակի առումով, իրենց առավել ցցուն են զգացնել տալիս և մեզ մոտ՝ Հայաստանում, ուստի դրանց լուծում տալու համար չարժե նորից հեծանիվ հորինել: Անհրաժեշտ է պարզապես իմաստավորել այս կամ այն խնդիրը, որը դրված է, օրինակ, Ռուսաստանի ագրոհամալիրի զարգացման ազգային նախագծում կամ էլ վերաբերում է ժողովրդագրական խնդիրների լուծմանը: «Արարման ծրագրի» վրա աշխատելու ընթացքում ինձ համար բացառիկ նշանակություն ուներ հասկանալ, թե Հայաստանի խնդիրները որքանո՞վ են նման ռուսաստանյան խնդիրներին, որո՞նք են դրանց առանձնահատկությունները, ինչպիսի՞ն է մեր էկոնոմիկայի սպեցիֆիկան: Վերլուծելով այս ամենը և, հատկապես, հաշվի առնելով հայկական էկոնոմիկայի իրողությունները՝ իմ ծրագրում շարադրված են տարբեր ոլորտներում առկա մեր գերակա խնդիրները, մատնանշված են դրանց լուծման ուղիները:

Լ. - Ինչպե՞ս եք Դուք գնահատում հաղթանակի հասնելու Ձեր հնարավորությունները: Կիսո՞ւմ եք արդյոք շատերի կարծիքն այն մասին, որ ընտրություններն անցնելու են երկու փուլով, և Դուք ո՞ւմ չեք համարում Ձեզ մրցակից:

Ա.Գ. - Քաղաքական ցանկացած գործիչ, եթե նույնիսկ հաղթելու նվազագույն հնարավորություններ չունի, սակայն ասելիք ունի ժողովրդին, առաջարկելու բան ունի հասարակությանը կամ պետք է հնարավորություն գտնի դա բարձրաձայնելու, կամ պետք է հեռանա քաղաքականությունից: Կա և այլ ճանապարհ. պաշտպանել մեկ այլ թեկնածուի, որի ծրագիրը, պլանները իր համար առավել ընդունելի են: Ինչ վերաբերում է իմ հնարավորություններին, ապա այս առումով հիշեցնեմ, որ երբ Բորիս Նիկոլաևիչ Ելցինը նախագահական մրցավազքի մեջ մտավ Գենադի Անդրեևիչ Զյուգանովի հետ, վերջինիս վարկանիշը մի քանի անգամ բարձր էր Ելցինի վարկանիշից, սակայն ականատես դարձանք հակառակ արդյունքի:

Ես համոզված եմ իմ քաղաքականության ճշմարտացիության և պահանջվածության մեջ: Կասկած չունեմ, որ բարձրաձայնածս խնդիրներն արդիական են, վստահ եմ, որ վաղ, թե ուշ այն ամենը, ինչ ես անում եմ, եթե որևէ մեկին այսօր անհասկանալի են, ապա մոտ ապագայում հասարակությունը կընկալի որպես այբբենական ճշմարտություն: Այդ իսկ պատճառով Հայաստանի համար այս ճակատագրական պահին ես իրավունք չունեմ լռելու: Առավել ևս, որ իմ ծրագիրը միտված է հայ հասարակության համախմբմանը, և նրա նշանաբանն է՝ «Հանուն ազգային միաբանության», ինչը լավագույնս բնութագրում է ինչպես ծրագրի էությունը, այնպես էլ՝ արդիականությունը: Իսկ մարդը, ով քաղաքական պայքարի մեջ է մտել այդ նշանաբանով և իր վարած քաղաքականության մեջ պահպանում է նրա ոգին, ի սկզբանե ապահովել է սեփական հաղթանակը, քանի որ ազգային միաբանությանն այլընտրանք չկա: Իսկ ինչպիսին կլինեն այդ հաղթանակը հավաստող թվերը, էական չէ:

Նախընտրական արշավն ամեն օր կարող է բերել էական անակնկալներ, քաղաքացիների տրամադրությունների մեջ կարող են տեղի ունենալ զգալի փոփոխություններ: Այդ պատճառով էլ այսօր դեռևս վաղ է խոսել՝ ընտրությունները մեկ, թե՞ երկու փուլով կանցնեն: Մի բան կարելի է հաստատ ասել. հասարակությունը փոփոխությունների է սպասում: Նա հոգնել է քաշքշուկից և նորմալ երկխոսություն ու արարում է ցանկանում:

Ես ինձ մրցակից չեմ համարում քաղաքական այն գործիչներին, ովքեր ընդդիմություն են ոչ թե իշխանություններին, այլ՝ սեփական ժողովրդին, և ովքեր նախընտրական պայքարի մեջ են մտել ամենաքիչը մտահոգված հանրապետության ճակատագրով ու միայն ձգտում են իրականացնել իրենց բաղձալի երազանքը՝ զբաղեցնել Նախագահի աթոռը:

L. - Դուք ի նկատի ունե՞ք Հայաստանի առաջին Նախագահին:

Ա.Գ. - Դո՛ւք ասացիք:

L. - Բայց Դուք հաստատո՞ւմ եք:

Ա.Գ. - Դո՛ւք ասացիք: Առանց մեկնաբանությունների: Առաջարկում եմ ընթերցողին, որ նա իմաստավորի ասածներս, ուշադրությամբ ուսումնասիրի Նախագահի յուրաքանչյուր թեկնածուի կենսագրությունը և կյանքի անցած ճանապարհը, իր համար պարզի, թե նրանցից ով ինչո՞վ է զբաղված եղել թեկուզև վերջին տասնամյակների ընթացքում, որքանո՞վ է ապրել իր ժողովրդի և իր երկրի հոգսերով ու միայն դրանից հետո կատարի համապատասխան եզրակացություններ, կատարի իր ընտրությունը:

L. - Եթե, այնուամենայնիվ, երկրորդ փուլ լինի, Ձեր կարծիքով, ո՞վ կլինի Արտաշես Գեղամյանի մրցակիցը:

Ա.Գ. - Շնորհակալություն, որ դուք այդքան հեռատես եք և կանխատեսում եք իմ պարտադիր մասնակցությունը երկրորդ փուլին, եթե, իհարկե, գործը դրան հասնի: Երկրորդ փուլի դեպքում ես իմ մեջ ոչ թե հակառակորդ եմ տեսնելու, այլ տեսնելու եմ դաշնակցի, և այդ դաշնակիցը լինելու է Հա-

յաստանի ժողովուրդը: Ես պետք է պայքարեմ իմ համաքաղաքացիների սրտերի և ձայների համար՝ հանուն «Արարման ծրագրի» կենսագործման, հանուն ազգային միաբանության: Մեր քարոզչությունն անձնավորված չէ, ինչպես և անձնավորված չեն մեր հակառակորդները: Մեր հակառակորդը այն քաղաքականությունն է, որը հանգեցրեց հասարակության պառակտման, տագնապալի միտումներ առաջ բերեց ինչպես հանրապետության ներսում, այնպես էլ՝ նրա շուրջ: Եվ եթե երբեմն անհրաժեշտ է լինում հիշատակել կոնկրետ անձանց, ապա դա լինում է միմիայն պատասխան խոսք իմ հասցեին հնչող զրպարտանքներին ու չարախոսություններին:

Լ. - Ինչպե՞ս եք գնահատում Վ.Պուտինի և Դ.Մեդվեդևի խաղարկած սցենարը: Ինչպե՞ս եք Դուք ընդհանրապես վերաբերվում քաղաքական գործիչ Դ.Մեդվեդևին: Հնարավո՞ր է արդյոք նման սցենար իրագործել Հայաստանում:

Ա.Գ. - Հայաստանում առկա է պարադոքս. Նախագահ Քոչարյանի հենարանն են հանդիսանում «Հայաստանի Հանրապետական կուսակցությունը», «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը, Հայ Հեղափոխական Դաշնակցությունը, ինչի մասին բազմիցս հայտարարել են ինչպես նշածս կուսակցությունների ղեկավարները, այնպես էլ՝ հենց Նախագահը: Այսօր Դաշնակցությունը հանդես է գալիս սեփական ծրագրով և Նախագահի իր թեկնածուով՝ միաժամանակ մնալով Ռ. Քոչարյանի քաղաքական հենարանը: ՀՀԿ-ն հանդես է գալիս միանգամայն ինքնուրույն, դրա համար ունենալով ավելի համոզիչ նախադրյալներ, քանի որ Ազգային ժողովում մեծամասնություն է կազմում: Ստացվում է, որ իշխանական կառույցը չունի մեկ միասնական ծրագիր, որը հնարավորություն կտար ապահովել սահուն, առանց սոցիալական ցնցումների իշխանության փոխանցման իրականացում: Ռուսաստանում ընթանում են ճիշտ հակառակ զարգացումներ: Բացի «Միասնական Ռուսաստանից», Դ. Մեդվեդևի թեկնածությունը պաշտպանում են և պառլամենտական «Արդար Ռուսաստան» կուսակցությունը, նաև այլ կուսակցություններ: Ինչ վերաբերում է Դմիտրի Անատոլևիչ Մեդվեդևին, անհրաժեշտ է նշել, որ քաղաքական ցանկացած գործչի տեղը և դերը պետք է որոշել նրա կողմից առաջադրված խնդիրների ու դրանց լուծման որակի համադրումով: Կա մի հասարակ, թևավոր դարձած բացատրություն. եթե ցանկանում ես իմանալ, թե ի՞նչ է անելու քաղաքական գործիչը ապագայում, ճիշտ կլինի վերլուծես՝ ի՞նչ է նա արել անցյալում: Երբ ուշադիր վերլուծում ես, թե անցյալում ինչ է արել Դմիտրի Անատոլևիչը, ապա համոզվում ես, որ նա ոչ միայն համահեղինակ էր, այլև ազգային նախագծերի կատարման փայլուն կազմակերպիչ էր, նախագծեր, որոնք մշակվել են Վլադիմիր Պուտինի նախաձեռնությամբ և անմիջական ղեկավարությամբ: Իսկ այդ ազգային նախագծերի իրականացումը ոչ այլ ինչ է, քան Ռուսաստանի իրականացրած ռազմավարական և տնտեսական ճեղքման բավականին հաջող փորձ դեպի հետինդուստրիալ հասարակություն, դեպի գլոբալիզացվող աշխարհի դինամիկ զարգացումով

էկոնոմիկա: Այս առումով ես շատ բարձր եմ գնահատում Ռուսաստանի քաղաքական վերնախավի կողմից հայրենիքի, Ռուսական պետականության, Ռուսաստանի ժողովուրդների հանդեպ իր պատմական պատասխանատվության գիտակցումը: Զարգացած ժողովրդավարական երկրների կայացման պատմությունից մենք հրաշալի հիշում ենք, որ հաջողության հիմնական գրավականը իշխանության հաջորդականությունն է, երբ սկսած գործը շարունակում է համախոհը, ում հետ տարիներ շարունակ աշխատել ես կողք կողքի, համատեղ հաղթահարելով այդ ճանապարհին ծառացած խնդիրներն ու դժվարությունները: Այստեղ է դեպի հաղթանակը տանող բանալին: Միաժամանակ ինձ մեկ այլ բան էլ է ոգևորում: Արևմտյան մամուլում (ամերիկյան, բրիտանական և այլն) տպագրված հոդվածների ու հարցազրույցների ուշադիր վերլուծության դեպքում միանգամից աչքի է զարնում այն, որ դրանց հրապարակումների մեծ մասում առկա է զգուշավորություն, գրգռվածություն, իսկ երբեմն էլ՝ ռուսական այժմեական իրողությունների բացարձակ անտեղյակություն: Օրինակ, բրիտանական ԶԼՄ- ներում Վլադիմիր Պուտինի անունն ավելի հաճախ է հիշատակվում, քան՝ Գորդոն Բրաունինը: Արտասահմանյան մամուլում հստակ երևում է Ռուսաստանի նախագահի հանդեպ անթաքույց չարություն ու նախանձ: Նրան փորձում են ամենատարբեր պիտակներ կպցնել, ընդ որում, չգիտակցելով, որ դրանով իսկ ավելի մեծ ու լավ գովազդ Վ.Պուտինի համար պատկերացնել անհնար է: Արևմտյան իսթեբլիշմենտի, համենայնդեպս, նրա որոշակի մասի մոտ, կարոտախտ կա այն օրերի հանդեպ, երբ իրենք ինչպես ցանկանային «քշում» էին Ռուսաստանը, երբ վերջինս իր ներքաղաքական և արտաքին քաղաքական նախաձեռնություններն իրականացնում էր՝ համաձայնեցնելով իրենց հետ: Այժմ արդեն մենք ականատեսն ենք հակառակ միտումների, երբ արևմտյան քաղաքական գործիչներն են ստիպված լինում իրենց քաղաքական բարոմետրը ճշտել Ռուսաստանի հետ:

Իհարկե, ինձ՝ Հայաստանի քաղաքական գործչին, և մեր երկրին, որը Ռուսաստանի ռազմավարական գործընկերն է, այս ամենն ուրախացնում և ոգևորում է: Գոհունակություն է առաջացնում նաև այն, որ Հայաստանը, համենայնդեպս ներկա փուլում, կարծես թե, պարզել է՝ ովքե՞ր են իր չկամեցողները և ովքեր՝ իսկական բարեկամները:

Միևնույն ժամանակ ցանկանում եմ նշել, որ ՀՀԾ-ական մամուլում ինչքան շատ են տիրաժավորվում զրպարտանքներ Ռուսաստանի մասին, շեշտվում մեր հանրապետության էկոնոմիկայի խնդիրների լուծման հարցում նրա պասիվ մասնակցությունը, այնքան այդ հանգամանքը Ռուսաստանի քաղաքական ղեկավարությանն ավելի պետք է մղի այդ ուղղությամբ ակտիվ գործողությունների: Բայց պետք է նշեմ և հետևյալը: Եթե այսքան հետևողականորեն նեգատիվ երանգներով շեշտադրվում են հարցեր, ինչպես, օրինակ, այն, որ Հայաստանի պարտքերի մարման դիմաց, ինչ-որ ժամանակ, ինչ-որ մեկին, ինչ-որ բան է պարտադրվել, իսկ ինչ-որ մեկը ծուլացել է այստեղ

ծախսեր կատարել, միջոցներ ներդնել հանրապետության տնտեսության մեջ, ապա այս ամենը նշանակում է, նախ, առանձին չլուծված հարցերի օբյեկտիվ ամրագրում: Դրա հետ մեկտեղ, հանգեցնում է եզրակացության, որ ամենևին էլ ոմանց սրտով չէ ՀՀ և ՌԴ գործընկերությունը, որ ոմանք համառորեն Հայաստանի քաղաքացիների գիտակցության մեջ ցանկանում են ներարկել դավադիր միտքը առ այն, որ Ռուսաստանը մեր հանրապետության հանդեպ անտարբեր է: Հարկ է հատուկ նշել, որ Հայաստանը, լինելով Ռուսաստանի ռազմավարական դաշնակիցը, յուրատեսակ պատնեշ հանդիսանալով Ադրբեջանի և Թուրքիայի, ինչպեսև նրանց հովանավորող կազմակերպությունների նվաճողական նկրտումների ճանապարհին, առավել զգայուն է արտաքին ուժերի ճնշման հանդեպ: Կարծում եմ, գաղտնիք չէ նաև այն, որ վերջիններս ձգտում են կովկասյան նոր աշխարհակարգ հաստատել մեր տարածաշրջանում, որտեղ գլխավոր դերը հատկացված է լինելու Թուքիային, և որտեղ որոշումներն ընդունվելու են ոչ թե Անկարայի, այլ նրա ավագ գործընկերների կողմից: Անկարայի և Բաքվի նվաճողական, պանթուրքիստական անթաքույց տենչանքների պարագայում, այսօրվա հայ քաղաքական գործիչներից շատերը ինչպես հարկն է չեն արձագանքում այդ վտանգներին, իսկ երբեմն էլ ցուցադրում են չափից ավելի բարեհոգություն: Լուրջ անհանգստություն է առաջացնում և այն, որ կամ սեփական անգրագիտության, կամ էլ վարձահրավիրվածության պատճառով ոմանք ճառեր են ասում, որոնք ամենևին էլ հայ ժողովրդի շահերից չեն բխում: Թուրքիայի և Ադրբեջանի հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատման թեմայով ճամարտակությունները՝ XX դարասկզբին Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի ողբերգության մոռացության տալու գնով՝ հանուն «ժողովրդավարության» և «համամարդկային արժեքների», ոչ այլ ինչ է, քան ծխապատնեշ, որը միտված է քողարկել դրանց հեղինակների իրական նկրտումները՝ արտերկրում ամեն գնով ստանալ Թուրքիայի և Ադրբեջանի շահերից բխող լոբբիստական գործունեություն իրականացնող ուժերի աջակցությունը: Եվ օրինաչափ է, որ նրանց միջև տեղի է ունենում հաճոյախոսությունների ինտենսիվ փոխանակություն: Բանը հասնում է անհեթեթության, երբ թուրքական և ադրբեջանական ՁԼՄ-ները բացահայտ գովաբանում են ՀՀ Նախագահի թեկնածուներից մեկին: Ավելին, անթաքույց խոսում են ոչ թե Վաշինգտոնի թուրքամետ լոբբիի, այլ Հայաստանի Նախագահի պաշտոնի վերոհիշյալ թեկնածուի ֆինանսավորման նպատակահարմարության մասին: Ահա այսպես էլ ապրում ենք:

Իհարկե, այս ֆոնի վրա պետք չէ կորցնել զգոնությունը, ընդհակառակը, անհրաժեշտ է ծայրահեղորեն հավասարակշռված լինել սեփական գնահատականների մեջ, հատկապես խնամքով պահպանել ռուս-հայկական ռազմավարական գործընկերությունը, խորացնել դրա տնտեսական բաղադրիչը: Անհրաժեշտ է չափազանց ուշադիր լինել բարիդրացիական հարաբերություններ կառուցելու հարցում, էլ ավելի հարստացնել մեր հարավային

բարեկամի՝ Իրանի հետ իրանա - հայկական տնտեսական համագործակցությունը, հնարավորության սահմաններում այդ աշխատանքներում ընդգրկելով ռուսական կողմին՝ հատկապես իրականացվող տնտեսական նախագծերի մեջ, այդպիսով ապահովելով դրանց անվտանգ գործարկումը, ինչպես, օրինակ, Իրան - Հայաստան գազատարը, նավթավերամշակման համատեղ ձեռնարկությունը, Իրանը Հայաստանին կապող երկաթգիծը, որոնց շինարարությունը նախատեսվում է սկսել մոտ ապագայում: Իրան-Հայաստան երկաթգծի համատեղ շինարարության բնագավառում համագործակցությունը, կարծում եմ, լուծման իրական հնարավորություններ ունի, հաշվի առնելով այն, որ «Ռուսական երկաթգծեր» ընկերության կոնցեսիային է հանձնված հայկական երկաթգծերի կառավարումն ու շահագործումը:

Լ. - Քանի որ Դուք նշեցիք հայ-ռուսական հարաբերությունների Ձեր տեսլականը, ցանկալի կլիներ իմանալ Ձեր կարծիքը «Գույք՝ պարտքի դիմաց» գործարքի մասին: Մինչև վերջերս կարծիք կար, որ այդ գործարքը պարտադրվել է Ռուսաստանի կողմից, սակայն հանրահավաքի ժամանակ առաջին Նախագահը իր ելույթում նկատեց, որ 100 մլն դոլարն այն գումարը չէ, որն իսկական ռազմավարական գործընկերը չներեր իր կրտսեր գործընկերոջը:

Ա.Գ. - Հարցի նման ձևակերպումը, ի սկզբանե, սխալ է: Բավական է հիշել, թե ինչպիսի կատաղությամբ էր ինձ հայհոյում Հայաստանի նախկին Նախագահի ենթակա մամուլը, երբ 2004 թ. Երևանում կայացած բազմահազարանոց հանրահավաքի ժամանակ ես ռուսերենով դիմեցի նախագահ Վլադիմիր Պուտինին, ասելով, որ հանրահավաքում հավաքված մարդիկ ամենևին հայ-ռուսական ռազմավարական գործընկերության թշնամիները չեն, ինչպես մեզ այն ժամանակ ներկայացնում էր իշխանությունը, ավելին՝ նրանք մեր երկու երկրների բազմակողմանի մերձեցման իրական, ոչ պատեհապաշտ կողմակիցներն են: Այն ժամանակ ՀՀՇ-ական այդ ախպերությունը ողջ հանրապետությունով մեկ տիեզերական վայնասուն բարձրացրեց, իբր, տեսեք, հայ քաղաքական գործիչը, այն էլ ռուսերենով, դիմում է Ռուսաստանի նախագահին, ասես նրա վասալը լինի, և այլն, և այլն: Հայաստանի նախկին Նախագահի ամբողջ շրջապատը, իրական շրջապատը՝ մոլի ռուսատյացներ են, այդ իսկ պատճառով այսօր նրա իսկական թիմը, վախենալով, որ կբացահայտվի՝ որպես հակառուսական քաղաքական ուժ, դեռևս դուրս չի գալիս քաղաքական բեմահարթակ և սպասում է իր ժամին: Դժվար կլինի թաքցնել, որ վերջին չորս տարիներին «Հայկական ժամանակ» ՀՀՇ-ական օրաթերթի շաբաթօրյա գրեթե բոլոր համարներում տպագրվում էին հակառուսական օպուսներ, հետևողականորեն, համարից համար հրապարակվում էին ռուսատյաց հոդվածներ: Ռուսաստանը մեղադրվում էր XIX-XX դարերում հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած բոլոր դժբախտությունների համար: Չէ՞ որ նրանք հրաշալի հասկանում են, որ դժվար չէ վեր հանել թերթի վերջին տարիների համարները և ծանոթանալ այդ նյութերին: Իսկ ի՞նչ է հիմա

փոխվել: Ակնհայտ է սովորական պարզունակ, գավառական խորամանկ պոլիտիկանություն, որը նպատակ ունի ընտրություններից առաջ շահել Ռուսաստանի բարեհաճությունը, դա էլ ֆոն ստեղծելով, թե, իբր, մյուսները քննադատում են, որ Ռուսաստանն անգործության է մատնել պարտքի դիմաց վերցրած այդ ձեռնարկությունները, իսկ մենք՝ ՀՀՇ-ականներս, պաշտպանում ենք նրան և ասում, որ մեղավոր են ոչ թե ռուսաստանցիները, այլ Հայաստանի իշխանությունները: Հիմա նրանք, հագնելով Ռուսաստանի շահերի պաշտպանների պատմուճանները, հայտարարում են, որ «Գույք՝ պարտքի դիմաց» գործարքում մեղավոր է հայկական կողմը, որն ինքն է պարտադրել այդ ձեռնարկությունները Ռուսաստանին: Այնպես որ, դիտարկել խնդիրը ձեր կողմից տրված հարցի հարթության մեջ, նշանակում է ընկնել մոլորությունների գիրկը: Մինչդեռ այս հարցում խնդիր կա, սակայն դա ուրիշ տեղ է: Հայաստանի իշխանությունները պետք է, որ հեռատեսություն ցուցաբերեին, ուշադիր ուսումնասիրեին այն գերակա ուղղությունները, որոնք արդեն նշմարվում են Ռուսաստանի կողմից իրականացվող տնտեսական քաղաքականության մեջ, հատկապես՝ բարձր տեխնոլոգիաների ոլորտում, որի մասին այդ երկրում արդեն պետական մակարդակով որոշումներ են ընդունվել, և փորձել հայկական ձեռնարկություններն ինտեգրել այդ ոլորտների հետ: Գտնում եմ, որ նման մոտեցումը կնպաստի նշված ձեռնարկությունների բարգավաճմանը, ապագայում կերաշխավորի նրանց մրցունակությունը: Մի խոսքով, ՀՀ իշխանությունները պետք է ինքնաքննադատորեն ընդունեն սեփական անգործությունը և դրանով իսկ ՀՀՇ-ական մամուլին զազրախոսելու առիթ չտան: Հասկանալի է, որ Ռուսաստանին իր սեփական խնդիրներն էլ են բավարար: Հայաստանի քաղաքական ղեկավարության իմաստունությունը պետք է լինի այն, որ նա կարողանա համատեղել մեր հանրապետության և ռուսաստանյան խնդիրները՝ դրանք դարձնելով Ռուսաստանի տնտեսության լուծման ենթակա խնդիրների գումարելիներ: Անհրաժեշտ է կարողանալ ներկայացնել տնտեսապես շահավետ այնպիսի առաջարկներ, որոնցից չկարողանա հրաժարվել և ոչ մի սթափ մտածող ձեռնարկատեր կամ գործարար: Ահա սա, ցավոք, չի արվում, իսկ դրա փոխարեն մշտապես շահարկում են այն, որ «ահա, ամերիկացիները 236 մլն դոլար են հատկացրել (ինչի համար նրանց շնորհակալություն ենք հայտնում) ճանապարհաշինության, հայկական գյուղի շենացման համար, իսկ ռուսները վերցրել են ձեռնարկությունները և ոչինչ չի արվում»: Քննադատներից առավել կարդացածները վերհիշում են Լոպե դե Վեգայի «Շունը դեզի վրա» պիեսի էությունը՝ ոչ ինձ, ոչ քեզ: Այդ բացթողումների վրա շատ ճարպկորեն կառուցվում է մեծ քաղաքականություն, որը հետապնդում է որոշակի նպատակներ, և որոնք, ցավոք, երբեմն դուրս են մնում ռուսական կողմի տեսադաշտից:

Լ. - Եթե Դուք դառնաք Հայաստանի Նախագահը, ի՞նչը կփոխեք երկրի արտաքին քաղաքականության մեջ:

Ա.Գ. - Ամենաճշմարիտ դիվանագիտությունը՝ իրերն իրենց անուններով

կոչելն է: Եթե ցանկանում ես հաջողության հասնել փոքր պետության քաղաքականության մեջ, չարժե խորամանկել: Եթե երկիրդ Ռուսաստանի ռազմավարական գործընկերն է, եթե հանդիսանում ես Կոլեկտիվ Անվտանգության Պայմանագիր Կազմակերպության /ԿԱՊԿ/ անդամ, եթե երկրիդ քաղաքացիների անվտանգությունը շատ բանով երաշխավորում է Ռուսաստանը, ապա արտաքին քաղաքականություն իրականացնելիս, գրանտներ ստանալու կամ ժամանակակից քաղաքական գործիչ երևալու նպատակով դու չպետք է ընկնես Եվրամիության գիրկը, մանավանդ, եթե քեզ այնտեղ ոչ ոք չի սպասում: Անհրաժեշտ է արտաքին քաղաքականության ոլորտում բացվող բոլոր հնարավորությունները առաջին հերթին նպատակամղել Ռուսաստանի, Ղազախստանի, Բելոռուսի, ԿԱՊԿ-ի մյուս գործընկերների հետ բազմակողմանի հարաբերությունների խորացման համար, այլ ոչ թե դեսից դեն ընկնել: Իսկ կշռադատված և անաչառ վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի համար ռազմաքաղաքական և տնտեսական ավելի բնական դաշնակից, քան Ռուսաստանն է, չի՛ եղել, չկա՛ և ապագայում չի՛ նշմարվում: Մասնավորելով նկատեմ, որ հայկական ապրանքարտադրողների համար ռուսական շուկան անսպառ է: Պետք է միայն ճիշտ և գրագետ կառուցել հարաբերությունները ռուսական համապատասխան կառույցների հետ ու այդ ժամանակ մենք կհասնենք նրան, ինչին ձգտում են այդ նույն Եվրամիության երկրները՝ կազմակերպության ստեղծման առաջին օրվանից, այն է՝ տնտեսությունների, արտարժութային համակարգերի ինտեգրմանը, սոցիալական, տնտեսական խոստումնալից ծրագրերի իրականացմանը, տնտեսական միասնական տարածքի ստեղծմանը, որի հիմքում պետք է դրվի իրավական դաշտի ունիֆիկացումը:

Անհնար է ազգային շահերին հակառակ ձգտել բոլորի համար ցանկալի լինել: Արտաքին քաղաքականության մեջ կոմպլեմենտարիզմը ինքնին կապահովվի, եթե վարվող արտաքին քաղաքականությունը լինի ազնիվ: Այդ դեպքում ոչ ոքի մոտ պատրանք չի առաջանա միջամտել քո պետության ներքին գործերին, որպեսզի Հայաստանի արտաքին քաղաքականության սլաքը շեղի Եվրոպայի, Իրանի կամ ԱՄՆ-ի ուղղությամբ, առավել ևս՝ ցանկություն չի առաջանա ճնշում գործադրելով պարտադրել հայ-թուրքական և հայ-ադրբեջանական գործընկերություն: Այսօրվա արտաքին քաղաքականության մեջ նշմարվող գիծը կարիք ունի առավել որոշակիության, ինչին կարելի է հասնել՝ բարձրաձայնելով Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական դոկտրինի մասին, դոկտրին, որը պետք է փորձարկում անցնի ոչ միայն Բրյուսելի, Վաշինգտոնի կամ Մոսկվայի գրասենյակներում, այլ, ամենակարևորը, իր մեջ պետք է ներառի ժամանակակից գլոբալիզացվող աշխարհի իրողությունները և օբյեկտիվորեն ծառայի Հայաստանի ազգային շահերի ապահովմանը:

L. - Հայկական մամուլում Դուք հայտնի եք որպես սեփական որոշումները հաճախակի փոփոխող քաղաքական գործիչ: 2003 թ. Դուք հայտարարեցիք, որ նախագահական ընտրությունների երկրորդ փուլում

կպաշտպանեք Ստեփան Դեմիրճյանին, բայց հետո չպաշտպանեցիք, 2007 թ. մամուլի ասուլիսում Սարգսյանների ընտանիքին մեղադրեցիք գործարար Գագիկ Ծառուկյանի վրա մահափորձ կազմակերպելու մեջ, այնուհետև հրաժարվեցիք Ձեր խոսքերից: Իսկ 2007 թ. ամռանը, առաջին Նախագահի հետ հանդիպելուց հետո, բոլորը խոսեցին Ձեր աջակցության մասին, սակայն դա տեղի չունեցավ:

Ա.Գ. - Դա բացարձակ անհեթեթություն է: Նման կերպ ձևակերպելով հարցը, տպավորություն է ստեղծվում, որ դուք միտումնավոր տիրաժավորում եք ՀՀՇ-ական մամուլի բամբասանքն ու սուտը: Նախապես չվարձավճարված քաղաքական ցանկացած գործիչ կհաստատի, որ «Ազգային Միաբանություն կուսակցությունը» և նրա առաջնորդը 1997 թ. (կուսակցության հիմնադրման օրից) սկսած մինչ այժմ հետևողականորեն իրականացնում է սեփական ծրագրային դրույթները, որոնք սկզբունքային հարցերում չեն ենթարկվել էական փոփոխությունների: Ինձ, հավանաբար, կարելի է մեղադրել ավելորդ կոշտության և ուղղամտության, բայց ոչ երբեք հայացքների ու ընդունվող որոշումների փոփոխականության համար: Եթե ես բնավորությամբ փոփոխական մարդ լինեի, ապա վաղուց արդեն կհարմարվեի, կաշխատեի ինչպես նախկին, այնպես էլ գործող իշխանությունների հետ: Ինչ վերաբերում է Ստեփան Դեմիրճյանին «խոստացած» աջակցությանը, ապա դա, անվիճելիորեն, բացարձակ սուտ է: Իրականում տեղի է ունեցել հետևյալը. 2003 թ. փետրվարի 19-ին, ժամը 17.00-ին ընդդիմությունը ներկայացնող Նախագահի 6 թեկնածուներ ստորագրեցին մի հայտարարություն, որտեղ հստակ գրված էր, որ փաստաթուղթը ստորագրելու պահի դրությամբ կարելի է վստահաբար պնդել, որ նախագահական ընտրությունների առաջին փուլի արդյունքները չեն կարող համարվել օրինական, քանզի համարյա բոլոր ընտրատեղամասերում Նախագահի թեկնածուների վստահված անձինք արձանագրել են ընտրությունների մասին օրենքի զանգվածային խախտումներ: Արդեն ժամը 18.00 - ին, երբ ընտրությունների արդյունքները դեռևս հայտնի չէին, հայտարարության տեքստը փոխանցվեց Կենտրոնական ընտրական հանձնաժողով: Իսկ երբ ընտրությունների ավարտին մնացել էր 2 ժամից էլ պակաս, Նախագահի թեկնածուներից երկուսը հետ վերցրին իրենց ստորագրությունները: Ինչո՞ւ նրանք փոխեցին իրենց որոշումը, ի՞նչ փոխվեց այդ ընթացքում: Մի՞թե դադարեցին քվեաթերթիկների զանգվածային լցոնումները կամ մի՞գուցե պատժեցին ընտրախախտողներին՝ ընտրության կեղծարարներին: Գործընկերներս, իհարկե, չկարողացան պատասխանել իմ հարցադրումներին: Այսպիսով, Ընտրական օրենսգրքի կոպիտ խախտումների մասին նախապես արած հայտարարությունից հրաժարվելը ոչ այլ ինչ է, քան հայ ժողովրդի շահերի ուղղակի դավաճանություն: Ընտրությունների ավարտից 2 ժամ առաջ որոշ թեկնածուներ անսկզբունքայնություն դրսևորեցին, ինչը դարձավ ընդդիմության այդ հատվածի իսպառ տապալման պատճառը: Այս ամենի մասին միտումնավոր լռում էին: Ավելին, որպեսզի շեղեն քաղաքացիների ուշադրությունը սեփական ամոթալի դավաճանությունից, գրավոր հաստատված պայմանավորվածություններից, գործընկերներս լուր

տարածեցին, թե, իբր, եթե Ա.Գեղամյանը սատարեր Ս.Դեմիրճյանին, ապա ընդդիմադիր թեկնածուն կհաղթեր: Այսինքն, մենք ականատեսն ենք այն բանի, երբ իրենց դավաճանական գործունեությունը, բացթողումներն ու տապալումը փորձում են փաթաթել ուրիշի վզով: Առաջին փուլից հետո, հանդես գալով մամուլում և հեռուստատեսությամբ, ես բազմիցս համոզիչ ու համառորեն խնդրել եմ չմասնակցել երկրորդ փուլին, բացատրելով, որ այդ դեպքում, փաստորեն, կօրինականացվեն առաջին փուլի կեղծված արդյունքները: Ես չէի ցանկանում բացահայտել ստորագրությունները հետ վերցնելու մասին ողջ ճշմարտությունը, որպեսզի խուսափեի շինծու մեղադրանքներից, քանի որ արդյունքում նրանք իմ գործողությունները կներկայացնեին այնպես, թե ես, իբր, աշխատում եմ հանգցնել համաժողովրդական բողոքի ալիքը: Մյուս կողմից, եթե ընդդիմախոսներս այդքան համոզված էին սեփական ճշմարտության մեջ, ի՞նչն էր նրանց խանգարում գնալ առավել կտրուկ գործողությունների, երբ ավելի քան հարյուր հազար քաղաքացիներ պատրաստ էին դրան: Եթե ամեն ինչ իմ անձինց էր կախված, թող արիություն գտնեին և ընդունեին, որ հենց Ա.Գեղամյանն է ընդդիմության իրական առաջնորդը: Խոստովանեին, որ առանց ինձ իրենք ոչ մի վճռական քայլ, ոչ մի գործողություն ընդունակ չեն կատարել: Սակայն դա տեղի չունեցավ, քանի որ իրադրությունների կուլիսների հետևում ցցված էին ՀՀՇ-ի ավանակի հում ականջները, կանգնած էին հենց նույն ՀՀՇ-ական խամաճիկ խաղացնողները՝ նախկին իշխանությունները: Պահանջվեց 4 տարի, որպեսզի ժողովուրդը հասկանա, թե իրականում ինչ կատարվեց 2003 թվականին: Եթե իմ ընդդիմախոսները հիմա՝ 2008 թ. նախընտրական կամպանիայի ընթացքում, մեկը մյուսին մեծարում են ոչ ավել, ոչ պակաս՝ ասելով՝ «պարոն Նախագահ», ապա հարց է առաջանում, ո՞վ էր խանգարում նախկին Նախագահին 2003 թ. հրապարակայնորեն պաշտպանել Ստեփան Դեմիրճյանին: Չէ՞ որ այսօր Դեմիրճյանը կանգնած է Տեր-Պետրոսյանի կողքին: Թող Լևոնն այն ժամանակ, մատնացույց անելով Ստեփանին, հայտարարեր. «Ահա նա՝ ժողովրդի ընտրյալը», այլ ոչ թե փակվեր իր Սև տանը: «Նախկինները» ամեն ինչ անում էին, որ իշխանությունից իրենց դուրս մնալու 10 տարվա ընթացքում ժողովրդի մոտ կարծիք ձևավորեն հայաստանյան գործող ընդդիմության անպիտանիության մասին: Նրանք ջանում էին բոլոր միջոցներով ամայացնել Հայաստանի ընդդիմադիր դաշտը, որպեսզի բարենպաստ պայմաններ ստեղծեին քաղաքական թատերաբեմ իրենց վերադարձի համար: Հանրապետության իշխանություններն էլ վերջիններիս այդ գործում հաճույքով օգնում էին: Նրանցից այլ բան սպասել չէր կարելի: Գաղտնիք չէ, որ լևոնականները մեծամասամբ քաղաքական խայտառակված գործիչներ են, որոնց իրական դեմքն ու մտադրությունները անտեսանելի են, երևի թե, միայն պատեհապաշտների և ծանրամիտների համար:

Այս ֆոնի վրա տրագիկոմիկ տպավորություն թողեց Հայաստանում հանրահայտ ռուսական «Իզվեստիա» թերթի էջերում վերջերս տպագրված Լևոն Տեր-Պետրոսյանի հարցազրույցը: Կատակերգականն այն էր, որ Հայաստանի ներկայիս իշխանություններին էքս-նախագահը տալիս էր այն նույն գնահա-

տականները, որոնց արժանացել էր իր իսկ սեփական գործունեությունը Նախագահի պաշտոնում: Հայ ընթերցողը, որը հարգանքով է վերաբերում Ռուսաստանին, կարդալով այդ հարցազրույցը ռուսական հանրաճանաչ թերթի էջերում, որում, հանուն ճշմարտության, պետք է նշել, կան նաև ոչ քիչ օբյեկտիվ եզրակացություններ, ակամայից կմտածի՝ իսկ դատողն ո՞վ է: Ո՞վ է այդ մասին գրում: Մարդ, որն իր նախագահության տարիներին նպաստեց ազգային տնտեսության քարուքանդ լինելուն ու թալանին, բնակչության համընդհանուր աղքատացմանը, ինչն էլ դարձավ բնակչության զանգվածային արտագաղթի պատճառներից մեկը, ով … «Իզվեստիայի» հյուրը մի մարդ է, որի մերձավոր շրջապատը մոլի ռուսատյացներ են, որը, սակայն, այսօր, արտաքին քաղաքական իրողությունները հաշվի առնելով, ցանկանում է ստանձնել հայ-ռուսական ռազմավարական գործընկերության ջատագովի դեր: Հանուն օբյեկտիվության չէր խանգարի նախկին Նախագահի հարցազրույցին գեթ մեկ տող ավելացնել 1997 թ. հոկտեմբերի 18-ին ռուսալեզու «Գոլոս Արմենիի» թերթում տպագրված «Կոչ համայն հայությանը» նյութից, որտեղ Տեր-Պետրոսյանի գործունեությունը ապազգային է ճանաչվել: Մինչդեռ նշված կոչում պահանջվում էր Տեր-Պետրոսյանի անհապաղ հրաժարականը՝ իր կողմից իրականացվող, կրկնում եմ, ապազգային քաղաքականության համար: Այդ կոչի տակ իրենց ստորագրությունն էին դրել մարդիկ, ովքեր, առանց չափազանցության, կարելի է ասել, հանդիսանում են մեր ազգի խիղճը. առաջատար գիտնականներ, մշակույթի գործիչներ, հանրապետությունում հարգված և արտասահմանում լայն ճանաչում ունեցող տաղանդավոր բանաստեղծներ, գրողներ, հրապարակախոսներ, քաղաքական գործիչներ: Ընդ որում, այդ մարդիկ եղել և հիմա էլ մնում են ռուս-հայկական ռազմավարական գործընկերության համոզված կողմնակիցներ, հանդիսանում են մեր ժողովուրդների միջև եղբայրական կապերի խորացման ջատագովներ: Կոչի բովանդակության հետ ծանոթանալուց հետո, կարծում եմ, «Իզվեստիա» թերթի մեծաքանակ ընթերցողները օբյեկտիվ կարծիք կկազմեին այն մասին, թե ներկայիս Հայաստանում ով ով է:

Իմ ընդդիմախոսները ինչպես նախկինների ճամբարից, այնպես էլ ներկայիս իշխանավորների թվից, երկար տարիներ է, ինչ փորձում են կեղծ կարծիք ձևավորել քաղաքական գործիչ Գեղամյանի մասին, ընդ որում, այդ ուղղությամբ աշխատում են նախանձելի համառությամբ: Դրա վկայությունն է և ձեր կողմից տրված հարցի ձևը, որը, ըստ էության, հարց չէ, այլ՝ մեկնաբանություն: Այս գործում նախկինների շահերը համընկնում են գործող իշխանության շահերի հետ, քանզի ես հավասարապես անընդունելի եմ և՛ «գործողների», և՛ «նախկինների» համար, որովհետև միշտ եղել եմ ընդդիմության մեջ, իշխանության մեջ ներգրավված չեմ եղել ոչ Տեր-Պետրոսյանի, ոչ Ռ. Քոչարյանի օրոք և մասնակից չեմ եղել նրանց կողմից կատարվածին: Այդ իսկ պատճառով ես բարոյական լրիվ իրավունք ունեմ խոսել ինչպես ներկա, այնպես էլ նախորդ իշխանությունների թերությունների և բացթողումների մասին, այդ պատճառով էլ տեր-պետրոսյանական մամուլը 10 տարի շարունակ բամբասելով Ա.Գեղամյանից, թմբիրի մեջ է գցել և հիմարացրել ժողովր-

դին՝ հազարավոր հոգսերով ծանրաբեռնված մարդկանց գցելով մոլորության մեջ, իսկ իշխանական հեռուստաալիքները տիրաժավորում և մասսայականացնում էին այդ սուտը: Ահա և ողջ գաղտնիքը:

Ինչ վերաբերում է Սարգսյանների ընտանիքին հասցեագրված «մեղադրանքներին», ապա պարզություն մտցնեմ նաև այս հարցում: Առաջինը, ինչի վրա ցանկանում եմ հրավիրել ձեր ուշադրությունը, դա այն է, որ հարցը նման կերպ ձևակերպելով, հավանաբար, ընտրությունների նախօրյակին խնդիր է դրվում նախ՝ ընթերցողների ենթագիտակցության մեջ մտցնել հետևյալ միտքը. ահա, ինչպիսի անհաճո լուրեր են պտտվում վարչապետի ազգանվան շուրջ: Երկրորդ. միտումնավոր, թե ոչ, բայց ձեր հարցով ջուր եք լցնում ՀՀՇ-ի ջրաղացին, քանի որ պատասխանները վաղուց տրված են և դա, իհարկե, ձեզ հայտնի է: Ընդ որում, այդ պատասխանները տրված են ոչ թե ինչ-որ մեկի, այլ ՀՀ գլխավոր դատախազի կողմից, որը ոչ երկիմաստ ձևով հերքեց այդ «մեղադրանքը», միևնույն ժամանակ ոչ մի հակաօրինական բան չգտնելով իմ հարցադրման մեջ, որը, իհարկե, տրվել էր ոչ այն ձևակերպումով, որը հիմա արեցիք դուք: Երրորդ. հավանաբար, շատ անպարկեշտ մարդիկ կոկորդիլոսի արցունքներ են թափում, հասկանալով, որ իմ և Սերժ Սարգսյանի միջև տեղի ունեցած այդ միջադեպը խոչընդոտ չդարձավ մեր քաղաքական բանավեճը շատ ավելի բարձր մակարդակով շարունակելու համար: Ավելին, միմյանց գնահատականներ տալու մեջ փոխադարձ զսպվածությունը մեզ բնութագրեց որպես քաղաքական գործիչների, ովքեր ամբողջովին գիտակցում են իրենց պատասխանատվությունը ժողովրդի ու պետության առջև, առավել ևս՝ պետության համար այս պատասխանատու և ճակատագրական պահին: Այդ ուղղությամբ առաջին քայլը կատարեց Սերժ Սարգսյանը, և ես դա հավուր պատշաճի գնահատում եմ: Մեր քաղաքական տարաձայնությունների մակարդակը նա չիջեցրեց մինչև բամբասանքների ու չարախոսությունների աստիճանի, ինչը բնորոշ է Նախագահի ոմն թեկնածուի:

L. - Իսկ ի՞նչ էր տեղի ունեցել իրականում: Որքանո՞վ էին հիմնավորված Ձեր մեղադրանքները վարչապետի ընտանիքի հասցեին:

Ա.Գ. - Կարծում եմ, ձեր հարցին ես սպառիչ պատասխաններ տվեցի և ոչ մի անհրաժեշտություն չեմ տեսնում կրկին վերադառնալ 2006 թ. հունվար, երբ դրսում ադեն 2008 թ. փետրվարն է: Առավել ևս, որ ես նայում եմ ապագային՝ վերաիմաստավորելով անցյալը:

Իսկ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ 2007 թ. ամռանը կայացած իմ հանդիպումից հետո, ՀՀՇ-ական մամուլը իր համար ձեռնտու հետևություններ արեց: Նրանց, չգիտես ինչու, անընդհատ թվում էր, իսկ ավելի ճիշտ՝ աչքներին էր երևում, որ բավական է ես հանդիպեմ իրենց կուռքին և իմ կողմից նրա սատարումը ապահովված կլինի: Ուղղակի տղերքը ցանկալին շփոթեցին իրականության հետ: Ես նրանց, իհարկե, հասկանում եմ, սակայն ոչնչով օգնել չեմ կարող: Այ, եթե սատարեի Տեր-Պետրոսյանին, դուք լրիվ հիմքերը կունենայիք պնդել, որ ես հետևողական քաղաքական գործիչ չեմ: Վստահ եմ, ժողովուրդը չի մոռացել, որ 1997 թ. հոկտեմբերին հենց ես էի նախաձեռ-

նել վերը հիշատակված «Կոչ համայն հայությանը»: Եվ դրանից հետո իմ կողմից բարոյական չէր լինի հիմա սատարել Տեր-Պետրոսյանին: Այդ դեպքում դուք իրավունք կունենայիք պնդել, որ ես հիշողության կորուստ ունեմ, մոռացել եմ Տեր-Պետրոսյանի վարչախմբին տված սեփական գնահատականներս: Կրկնում եմ, տիրաժավորելով իմ, իբրև թե, նախկին Նախագահին սատարելու մասին անհեթեթությունը, նրանք ցանկալին շփոթեցին իրականության հետ: Եվ դա իրենց մոտ, իհարկե, չստացվեց:

L. - Ընտրությունների նախօրյակին սովորաբար հաճախակի են դառնում խոսակցությունները արտաքին գործոնի ազդեցության մասին: Դուք է՞լ եք այդպես կարծում, կա արդյո՞ք արտաքին ազդեցություն Հայաստանի ներքաղաքական իրավիճակի վրա:

Ա.Գ. - Եթե քաղաքական առաջնորդը հստակ շարադրում է արտաքին քաղաքականության սեփական տեսլականը կամ իր ընտրվելու դեպքում իրականացվելիք արտաքին քաղաքականությունն այնպիսի հայեցակարգով, որը չի պարունակում բազմամեկնաբանություն առաջացնող երկիմաստություններ, զանազան խոստումներ, ապա դա նշանակում է, որ մենք գործ ունենք քաղաքական ազնիվ գործչի հետ: Իսկ ազնիվ քաղաքական գործիչը, որպես կանոն, քիչ է ենթակա արտաքին ազդեցություններին: Նա առաջին հերթին պարտավոր է պաշտպանել սեփական ժողովրդի և պետության շահերը: Ո՞ւմ և որքանով է դա հաջողվում և ո՞վ է իրականում հաստատուն մնում իր արտաքին քաղաքական նախապատվությունների մեջ՝ այդ մասին կարող են դատել վերլուծաբանները և քաղաքական փորձագետները, ընդ որում՝ դատեն ոչ թե նրանց ասածների ու հայտարարությունների, այլ կատարած կոնկրետ գործերի հիման վրա: Ինչ վերաբերում է «Ազգային Միաբանություն կուսակցությանը» /ԱՄԿ/, ապա «Արարման ծրագիրը» արդեն երրորդ ծրագիրն է, որը հրապարակ է իջեցվում մեր կուսակցության կողմից համապետական ընտրությունների նախօրյակին: ԱՄԿ-ն քաղաքական միակ ուժն է Հայաստանում, որը մշտապես ունեցել է արտաքին քաղաքական հստակ կողմնորոշում և պարզ ձևակերպված վեկտոր՝ իր արտաքին քաղաքական գնահատականների մեջ: Մեր կողմնորոշումը երբեք չենք պայմանավորել Ռուսաստանի այս կամ այն քաղաքական գործչի կամ Հայաստանում ՌԴ դեսպանատան ղեկավարության հետ մեր հարաբերություններով: Ես չեմ թաքցնում քաղաքական համոզմունքներս, քանի որ դրանք հիմնված են գիտելիքներիս և ժամանակակից իրողությունների մասին պատկերացումներիս վրա: Արտաքին գործոնը, անշուշտ, կարող է որոշակի ազդեցություն ունենալ, քանի որ աշխարհը փոխկապակցված և փոխպայմանավորված է: Ցավոք, արտաքին գործոնը երբեմն պարսավելի ազդեցություն է թողնում: Սակայն համոզված կարող եմ ասել հետևյալը. ոչ մի պետություն, որը Հայաստանի իրական բարեկամն է, շահագրգռված չպետք է լինի հանրապետությունում իրավիճակի ապակայունացման մեջ և, առավել ևս, եթե դրանում շահագրգռված չէ Ռուսաստանը: Ցանկացած ապակայունացում մեր հանրապետությունում հղի է վերաճելու կովկասյան պատերազմի: Եթե, Աստված մի արասցե, այդպիսի բան պատահի, ապա դրանից անմիջապես կօգտվի թուրք-ադրբեջանական կողմը: Բա-

վական է հիշել Ադրբեջանում Թուրքիայի նախկին դեսպանի խոսքերը, որոնք հրապարակվեցին Բաքվի մամուլում. «Դուք միայն սկսեք գործողությունները (ի նկատի ունի՝ ռազմական.- *Ա.Գ.*) և կտեսնեք, ինչպիսի հզոր սատարում, հավանության ինչպիսի ալիք կստանաք մեր երկրից»: Տարածաշրջանում իրադարձությունների նման զարգացումը խիստ անընդունելի է Ռուսաստանի համար, դա կլինի այն ուժերի սրտով, որոնք շահագրգռված են, որպեսզի հայ-ադրբեջանա-իրանական սահմանում, ավելի ճիշտ՝ ղարաբաղյան և ադրբեջանական զինված ուժերի սահմանագոտում, անմիջապես իրանական սահմանի մոտ, տեղակայվեն միջազգային խաղաղարար ուժեր: Իսկ հիմա լրագրողական հետաքննություն անցկացրեք և տեսեք, թե Հայաստանի Նախագահի թեկնածուներից ո՞վ է իր գործողություններով, ելույթներով և կոչերով գործը տանում ապակայունացման, խարխլում իրավիճակը հանրապետությունում, ո՞ր թեկնածուի գործողություններն են այդպիսի բարեհաճ վերաբերմունքի արժանանում ադրբեջանական ու թուրքական մամուլի կողմից:

Արդեն իսկ նշմարվում է արտաքին ուժերի կողմից Հայաստանի ներքին գործերին միջամտելու համար սկսված գործընթացը: Այլ բան է, որ այդ մասին բոլորը լռում են՝ գերադասելով չխոսել: Ահա, այսօր Գեղամյանը խոսեց այս վտանգի մասին, իսկ վաղը ՀՀՇ-ական ողջ ախպերությունը կրկին կսկսի պնդել, որ, իբր, ես, խոսելով ապակայունացման անթույլատրելիության մասին, կրկնում եմ Հանրապետության Նախագահի և վարչապետի խոսքերը, ուրեմն, իրենց տրամաբանությամբ, ծախվել եմ նրանց: Եվ խոսակցություններ կտարածվեն իմ ոչ հետևողական լինելու մասին, այն մասին, որ Գեղամյանը երեկ քննադատում էր իշխանություններին, այսօր՝ սատարում է նրանց: Իսկ պետության անվտանգության շահերը նրանց համար մանրուք են, նրանք թքած ունեն դրա վրա: Մինչդեռ իմ ողջ քաղաքականությունը մշտապես ուղղված է եղել հենց պետության և ժողովրդի անվտանգության ապահովմանը:

Եվ վերջում, նպատակահարմար եմ գտնում նորից կրկնել. *Արտաշես Գեղամյանը երբեք չի փոխում իր համոզմունքներն ու քաղաքական* նախապատվությունները: Այլ բան է, որ ելնելով ստեղծված իրավիճակից, ի նպաստ պետության շահերի, երբեմն մարտավարության փոփոխության անհրաժեշտություն է առաջանում: Չէ՞ որ մարտավարությունը չի կարող կարծրացած, դոգմատիկ լինել և պետք է համահունչ լինի ժամանակի մարտահրավերներին: Այդ դեպքում ես առանց դրսից հուշումների ինքս կհայտարարեմ, ուղղակի և բաց՝ ինչպես միշտ:

«Փակագիծ», 07.II.2008:

«ՇԱՆԹ» ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆ ՆՎԵՐ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ «ՀԵՌԱՆԿԱՐ» ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱՇԱՐԻ ՀՅՈՒՐԸ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆՆ Է

(01.02.2008 թ.)

ՆՎԵՐ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ– Մեր հյուրը ՀՀ Նախագահի թեկնածու, «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանն է: Նա ընտրություններին մասնակցում է «Արարման ծրագրով» և «Հանուն ազգային միաբանության» կարգախոսով: Բարև Ձեզ, պարոն Գեղամյան:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ– Բարև Ձեզ, պարոն Մնացականյան:

Ն.Մ.– Մինչև նախընտրական մրցավազքի կապակցությամբ Ձեր ծրագրին և վերջին օրերի Ձեր դիտարկումներին անցնելը, Դուք այսօր հանդիպել եք ԵԱՀԿ դիտորդական առաքելության ղեկավարին՝ Գերդ Արեսին: Հարցաթերթի՞կ է եղել, հարց ու պատասխա՞ն է եղել: Եվ Դուք, կարծեմ, վերջինն եք եղել թեկնածուների մեջ, ում հետ նրանք այսօր հանդիպել են:

Ա.Գ.– Դժվարանում եմ ասել, հավանաբար, շփոթմունք կա: ԵԱՀԿ դիտորդական առաքելության ղեկավարին ես ընդունել եմ մեր գրասենյակում: Զուգահեռ աշխատելիս է եղել Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի հանձնաժողովը: Ինչևէ, այո:

Ն.Մ. – Այսինքն՝ այսօր 2 հանձնաժողով են եղել:

Ա.Գ. – Չէ, մի հանձնաժողով: Ուղղակի զուգահեռ 2 տարբեր հանձնաժողով են եղել այս օրերին Հայաստանում: Չգիտեմ՝ խոսքն ում մասին է: Ինչևէ, իրենց հետաքրքրեց թվով 15-16 հարց:

Ն.Մ.– Թեսթային բնույթի՞, թե կոնկրետ:

Ա.Գ.– Չէ, եթե հարցերում ես թեսթային բնույթ զգայի կամ տեսնեի, կդադարեցնեի այդ հանդիպումը, որովհետև ես ուսանող չեմ, իսկ Արեսն էլ՝ դասախոս: Պարզապես իրենք հետաքրքրվում էին ընտրապայքարի որոշ նրբերանգներով, որոնց մասին էլ խոսակցություն գնաց, ըստ որում շատ գործնական, լավ խոսակցություն ստացվեց:

Ն.Մ.– Դուք որևէ բանից չե՞ք դժգոհել, նրանք որևէ բան չե՞ն ակնարկել:

Ա.Գ.– Անգամ, եթե դժգոհեի, Արեսն ո՞վ է ինձ համար, որ ես նրան գանգատվեի:

Ն.Մ.– Հասկանալի է: Նախընտրական այս շրջանում կամ, ընդհանրապես, այս ընտրություններում «Հակաճգնաժամային ծրագիրն» է

հիմքում, թե՞ «Արարման ծրագիրը»:

Ա.Գ.– «Արարման ծրագիրը» «Հակաճգնաժամային ծրագրի» տրամաբանական շարունակությունն է: «Հակաճգնաժամային ծրագրի» հիմքում դրված էին «Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացումը 2006 թ. հունվարդեկտեմբերին» Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական գրքի տվյալները, իսկ «Արարման ծրագրում» ներառված են 2007 թ. արդյունքները: Այդ մեկ տարվա ընթացքում որոշակի փոփոխություններ են եղել, որոնք, անտարակույս, պահանջել էին ճշգրտումներ և, որն ավելի կարևոր եմ համարում, մեկ տարում տեղի ունեցած զարգացումները համոզեցին, որ մեր հարցադրումները, որոնք ներառված էին «Հակաճգնաժամային ծրագրում», միանգամայն տեղին էին: Մեր կողմից առաջարկվող մոտեցումները գործի դնելու պայմաններում միանգամայն արդյունավետ կլինեին, որովհետև տեղաշարժերը, որ նկատվեցին 2007 թ. տնտեսական ոլորտում, ամբողջությամբ տեղավորվում են այն խնդիրների ու հարցադրումների շրջանակում, որոնք հիշատակված էին «Հակաճգնաժամային ծրագրում»:

Ն.Մ.– Պարոն Գեղամյան, ես 2 ծրագիրն էլ թերթեցի, տարբերություններ կան, բայց էական տարբերություններ չկան: Դուք, ասեք, ինչո՞ւ չկան: Մեկը մեկին փոխլրացնող են, թե՞ առանցքում վերցրել եք «Հակաճգնաժամայինը», հետո դա այս ընտրությունների համար «Արարման ծրագրի» եք վերածել:

Ա.Գ.– Գործող իշխանությունների պայմաններում մեկ տարվա ընթացքում Հայաստանի տնտեսությունում բնավ չէին կարող հեղափոխական փոփոխություններ արձանագրվել: Ուստի, այն հիմնական հարցերը, հիմնախնդիրները, որոնք արծարծված էին «Հակաճգնաժամային ծրագրում» տեղ են գտել նաև «Արարման ծրագրում»: Եվ այստեղ կարևոր հանգամանք կա. յուրաքանչյուր ծրագրի տնտեսական և ֆինանսական հենքը կազմում է մակրոտնտեսական որոշակի տեսություն: Եվ այդ տեսությունը, եթե նոր փուլում չի կորցնում իր արդիականությունը, ապա պահպանվում է, այդ տեսության կիրառումը ներառում, ենթադրում է զարգացման փուլեր: Ահա մի փուլից մենք անցանք երկրորդ փուլը, և երկրորդ փուլին ներհատուկ փոփոխություններն արծարծվեցին արդեն «Արարման ծրագրում»: Տեսական, գիտական հենքը մնաց նույնը, գաղափարախոսությունը մնաց նույնը:

Ն.Մ.– Հիմնականում ո՞ր հարցերն են ներառված «Հակաճգնաժամային» և «Արարման» ծրագրերում: Մենք, այսինքն՝ երկիրը ճգնաժամային փուլում հայտնվելու գաղափարից չե՞նք հրաժարվում, ճգնաժամ կա՞ մեր երկրում:

Ա.Գ.– Միանգամայն ճիշտ հարցադրում է: Այո, ճգնաժամ կա, սակայն ծրագրում արձանագրված է նաև դրական տեղաշարժ: Մասնավորապես, եթե «Հակաճգնաժամային ծրագրում» հիմնավորվում էր, որ հնարավոր է մեկ տարվա ընթացքում կրկնապատկել կենսաթոշակները, կրկնապատկել բյուջեն, ապա 2008 թ. բյուջեում, որն արդեն օրենքի ուժ է ստացել, ի ուրախու-

թյուն մեր ժողովրդի, նշեմ, որ կենսաթոշակներն ավելի քան 60%-ով աճելու են: Խոսքը գնում է 300 հազար կենսաթոշակառուների մասին՝ 500 հազարի հասնող ընդհանուր թվից: 750-800 միլիոն դոլարի չափով նախատեսված է բյուջեի ծախսային մասի աճ, և դա արձանագրված է: Այսինքն, երբ դու տեսնում ես, որ դրական տեղաշարժ կա, դու պարտավոր ես այդ տեղաշարժերը հաշվի առնել և որոշակի ճշգրտումներ մտցնել գնահատականների մեջ, որ չստացվի, որ քեզ գոհացնում է միայն երկրում արձանագրված վատ վիճակը: Հակառակ մոտեցում որդեգրելու դեպքում դու օբյեկտիվ, անկողմնակալ գործիչ չես կարող համարվել:

Ն.Մ.– Փոփոխություններ կան, ճգնաժամից դուրս ենք եկել, թե՞ ոչ:

Ա.Գ.– Որ մենք, մեր տնտեսությունն այսօր կանգնած է լուրջ մարտահրավերների առաջ, դա ակնհայտ փաստ է: Ընդամենը երկու նախադասությամբ ասեմ՝ ինչո՞ւմ եմ տեսնում այդ մարտահրավերները: 2007 թ. տնտեսական տարվա արդյունքներն արձանագրել են շատ վտանգավոր դրսևորումներ: Այն է՝ Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրաշրջանառության սալդոն բացասական է և կազմում է 2 մլրդ դոլար: 1,2 մլրդ դոլար ապրանք մենք արտահանել ենք, 3 մլրդ 200 մլն դոլարի չափով ներմուծել: Ներմուծման աճի տեմպը 2 անգամ գերազանցել է արտահանման աճի տեմպին: Սա շատ վտանգավոր երևույթ է: Դրան գումարելի դարձրեք, որ 2009 թ. հունվարի 1-ից օգտագործվող բնական գազի սակագները նվազագույնը 2,3 անգամ աճելու են: Դա իր հետևից կբերի էլեկտրաէներգիայի գների աճ, որը կհանգեցնի Հայաստանում արտադրվող ապրանքների ինքնարժեքի բարձրացման: Ինքնարժեքի բարձրացումն իր հետևից կբերի գների բարձրացում, վաճառքի գների բարձրացումը իր հերթին կհանգեցնի մեր արտադրանքի մրցունակության անկման: Դրա հետևանքով հայրենական արտադրանքի սպառման արտաքին և ներքին շուկաները կփակվեն: Ներքին շուկաների փակումը գործազրկության նոր ալիք կառաջացնի: Ահա այս լրջագույն վտանգն է ծառացած մեր էկոնոմիկայի վրա: Եվ դրա մասին, կարծում եմ, միանգամյան տեղին հիշատակված է մեր «Արարման ծրագրում»: Հիշատակված է, սակայն այնտեղ կան շատ հարցեր, որոնք ենթակա են հրատապ լուծման, բայց, ցավոք, դրանք այսօր չեն լուծվում:

Ն.Մ.– Հասկանալի է, պարոն Գեղամյան, դա կառավարմա՞ն թերություն է, թե՞ օբյեկտիվ դժվարություն:

Ա.Գ.– Համայն աշխարհում խնդիր է դրված՝ ի՞նչ անել, որ տեղական արտադրողի արտադրանքն ունենա սպառման շուկաներ:

Ն.Մ.– Մենք դա չենք կարողանում անել:

Ա.Գ.– Մի որպե, ի՞նչ անել, որ ապահովվի տեղական արտադրանքի մրցունակությունը: Ի՞նչ անել, որ ներմուծումները շեշտակի կրճատվեն ի հաշիվ տեղական արտադրանքի և այն մեր շուկայում նպաստավոր տեղ զբաղեցնի: Հայաստանում նոր-նոր են սկսում այս ուղղությամբ քայլեր անել: Այսօր ինձ համար, գոհունակությամբ հայտնեմ, դրական անակնկալ էր այն, որ

կառավարությունում Հայաստանի արտադրանքի մրցունակության ապահովման հարցերը արդեն դարձել էին քննարկման առարկա: Եզակի դեպք է, որ արձանագրվել է: Մինչդեռ դրա մասին պետք է վաղուց մտածեին, որովհետև 3 մլրդ 200 մլն ներմուծվող արտադրանքի 40-45%-ը, նվազագույնն եմ ասում, կարելի էր արտադրել Հայաստանի Հանրապետությունում: Տարեկան կտրվածքով 300 հազար տոննայի չափով ցորեն ենք ներմուծում, 79 հազար տոննայի չափով շաքարավազ ենք ներմուծում, երբ մեր վարելահողերը, սակավահող Հայաստանի վարելահողերի շուրջ 40 %-ը չի մշակվում: Չի մշակվում, որովհետև ֆերմերը, գյուղացին հայտնվել են այնպիսի վիճակում, որ հարկադրված են լինելու վնասով աշխատել:

Ն.Մ.– Պարոն Գեղամյան, այն ինչ նկարագրում եք, ճգնաժամային իրավիճա՞կ է:

Ա.Գ.– Ավա՜ղ, այո:

Ն.Մ.– Տնտեսական ճգնաժամ է, թե՞ կա քաղաքական ճգնաժամ:

Ա.Գ.– Քաղաքական ճգնաժամ ցանկանում են հրահրել, ցանկանում են ամեն գնով դա հրահրել: Այս պահին բոլոր նախադրյալները կան, արդեն առկա են, զարգացումների նման պարագայում քաղաքական ճգնաժամը ոչ միայն փաստ կդառնա, այլև իր հետևից կբերի այն բոլոր բացասական դրսևորումները, որ բնորոշ են քաղաքական ճգնաժամին, և դա կդառնա անխուսափելի: Ես այդ ամենի մասին ահազանգել եմ:

Ն.Մ.– Խոսքը ոչ միայն նախընտրական շրջանի մասին է: Քաղաքական ճգնաժամ ասածս վերաբերում է ընդհանուրի, երկրի իրականության մեջ գոյություն ունեցողի: Դուք այդպիսի երևույթ փաստո՞ւմ եք:

Ա.Գ.– Հարգարժան Նվեր ջան, պոլիտոլոգիայի դաս մի տվեք:

Ն.Մ.– Չէ:

Ա.Գ.– Ես գիտեմ՝ քաղաքական ճգնաժամն ինչ է:

Ն.Մ.– Դուրս գանք նախընտրական շրջանից: Նախընտրական շրջանում հազար ու մի բնորոշումներ կարող են լինել՝ ճիշտ և սխալ: Մենք քաղաքական ճգնաժամի ո՞ր փուլում ենք և երբվանի՞ց , եթե՞ կա:

Ա.Գ.– Քաղաքական ճգնաժամի այն փուլում ենք, որ անգամ իսկ Հանրապետության Նախագահին սատարող ուժերը, անգամ իսկ կառավարություն կազմած ուժերը միասնական թեկնածուով հանդես չեն գալիս: Սա շատ լուրջ հարց է, որը, չգիտես ինչու, շրջանցում են: Արդյո՞ք ճգնաժամ չէ, որ 1998 թ. երկիրը ամենածանր վիճակի հասցնելու հետևանքով հրաժարական է տալիս առաջին Նախագահը և երկրում զարգացումներն այնպիսին են լինում, որ արդեն իսկ այս իշխանությունների օրոք նա հանդգնում է, խոսքը բարոյականության տեսակետից հանդգնության մասին է, նորից իր թեկնածությունը դնել: Դա քաղաքական ճգնաժամի ամենավառ դրսևորումն է:

Ն.Մ.– Մշակութային ճգնաժամ կա՞:

Ա.Գ.– … Բնականաբար, օլիգարխների համար ճգնաժամ չկա, նրանց համար երջանիկ օրեր են, երջանիկ տարիներ են: Մնացած բոլոր խավերի

համար խորը ճգնաժամ է: Եվ ինչպե՞ս կարող է ճգնաժամ չլինել, եթե աշխատողների միջին աշխատավարձը կազմում է ընդամենը 75 հազար դրամ: Եվ երբ դա բաժանում ես 3-ի, ի նկատի ունենալով, որ մեկ աշխատողը, բացի իր անձից, խնամում է ևս երկու մարդու, ստացվում է 25 հազար դրամ, սա էլ այն դեպքում, եթե բոլոր աշխատողների միջին աշխատավարձը հավասարաչափ բաժանվի: Հիմա խորհենք՝ 25 հազար դրամ մեկ մարդուն, մեկ քաղաքացուն է ընկնում, դա էլ այն դեպքում, երբ նվազագույն սպառողական զամբյուղը 33 հազար դրամ է կազմում: Այսինքն՝ անգամ իսկ հավասարաչափ բաշխելու դեպքում, մարդիկ ստիպված են լինելու կիսաքաղց կյանքով ապրել: Ճգնաժամ է, խորը ճգնաժամ: Հաղթահարել պե՞տք է, իհարկե, պետք է: Ինչպե՞ս հաղթահարել: «Արարման ծրագիրը» մատնանշում է այն ուղղությունները, առաջնահերթ այն միջոցառումները, կոնցեպտուալ հայեցակարգային այն մոտեցումները, որոնք կյանքի կոչելով կկարողանանք ինքնակառավարվող համակարգ ստեղծել, որի վրա անհատի հնարավոր բացասական ազդեցությունը նվազագույնի կհասցվի:

Ն.Մ.– Պարոն Գեղամյան, Դուք շարունակո՞ւմ եք արմատական փոփոխությունների կողմնակից լինել:

Ա.Գ.– Անշուշտ, ես շարունակում եմ արմատական փոփոխությունների կողմնակից լինել, որովհետև եթե մեր ՀՆԱ-ի ցուցանիշում անգամ իսկ տարեկան կտրվածքով 14% աճի տեմպ ապահովվի, ապա 5-7 տարի անց մենք անասելի հետ կընկնենք Ադրբեջանի հանրապետությունից, որովհետև այնտեղ ՀՆԱ-ի պարագայում 30%-ի հասնող աճի տեմպ է գրանցվում: Մենք պետք է չմոռանանք, թե ինչ հարևանների շրջապատում ենք գտնվում:

Ն.Մ.– Մենք էլ բարձր զարգացման տեմպեր ունենք, այո՞:

Ա.Գ.– Եթե Հայաստանի աշխարհագրական դիրքը լիներ Շվեյցարիայի նման, որտեղ չորս բոլորը քաղաքակիրթ երկրներ են, որոնք միայն և միայն մտածում են եղած մարդկային, ինչու չէ, հումքային պոտենցիալն օգտագործել երկիրը շենացնելու համար և ոչ թե առիթ են ման գալիս, որ հայ-ադրբեջանական սահմանում, բաժանարար գոտում սադրանքներ կազմակերպեն, պատերազմական գործողություններ սանձազերծեն, ապա ձեր ասածը, իհարկե, ճիշտ է, որովհետև 14% աճի տեմպը, եթե ի նկատի ունենանք եվրոպական չափանիշները, ինչ խոսք, բարձր տեմպ է: Բայց մենք ելակետ պետք է վերցնենք մեր հարևանների տնտեսական աճի այսօրվա տեմպերը: Մի ցուցանիշ բերեմ. Ադրբեջանի հանրապետությունում 45 օրվա ընթացքում հիմնական ֆոնդերի մեջ կատարվում են ճիշտ այնքան ներդրումներ, այն ծավալի ներդրումներ, ինչքան 2007 թ. ամբողջությամբ կատարվել են Հայաստանի էկոնոմիկայում: Ամիսուկեսում այնքան ներդրում են անում, ինչքան մեզ մոտ մեկ տարվա ընթացքում: Դե պատկերացրեք, թե սա ինչ է նշանակում:

Ն.Մ.– Մենք ավելին կարող էինք անել, չե՞նք անում:

Ա.Գ.– Անտարակույս, ավելին կարող էինք անել: Եվ, ահա, իմ առաջադրվելու դրդապատճառներից մեկն էլ հենց դա է, որ ցույց տանք ճանապարհը,

որ, վերջապես, մեր կառավարությունում կամ իշխանություններում հայտնվեն մարդիկ, ովքեր անկաշկանդ կարող են թերությունների մասին խոսել, ովքեր կարող են ալտերնատիվ, այլընտրանքային մոտեցումներ առաջարկել: Եվ ոչ թե կանգնեն, ասեն՝ ով ղեկավար է, նա է ճիշտ, ռուսական հայտնի ասացվածքի նմանությամբ. “Я начальник – ты дурак, ты начальник–я дурак”. Կյանքում այդպես չի լինում:

Ն.Մ.– Գործող վարչապետը թվերով, փաստերով ցույց է տալիս, որ մենք զարգանում ենք: Սա մեր զարգացման ուղին է և գնալով զարգանալու ենք: Դուք զարգացման այդ տեմպերի և ուղղության հետ համաձա՞յն եք, թե՞ համաձայն եք մասամբ, թե՞ դա սխալ ուղղություն է:

Ա.Գ.– Զարգացման այս տեմպերը Հայաստանի էկոնոմիկայում ճեղքում չեն երաշխավորում և չեն ապահովում:

Ն.Մ.– Սխա՞լ է այդ ուղղությունը, պարոն Գեղամյան:

Ա.Գ.– Անշուշտ, մոտեցումը ժամանակի պահանջներին համահունչ չէ: Չի կարելի լեռնաարդյունաբերական ճյուղերը զարգացնելով ապահովել ՀՆԱ-ի բարձր աճի տեմպ: Դա հատուկ է թերզարգացած երկրներին: Եթե մեր զարգացման ՀՆԱ-ի մեջ ինովացիոն տեխնոլոգիաները, տեղեկատվական, տելեկոմունիկացիոն, նանոտեխնոլոգիաները կազմեին 40-45% և հեռանկար ուրվագծվեր, ապա այդ դեպքում ես էլ կասեի՝ Մոսկվան մի օրում չի կառուցվել և ինձ հանգիստ կզգայի, քանի որ ընտրված ճանապարհը ճիշտ է: Բայց երբ հիշատակածս ամենաժամանակակից ճյուղերը դեռ սաղմնային վիճակում են գտնվում և ճեղքման ճանապարհները պետական հոգածության առարկա չեն դարձել, դա չի կարող տագնապ չհարուցել: Որովհետև 21-րդ դարում հաջողության կհասնեն միայն և միայն այն երկրները, որոնց էկոնոմիկան զարգանում է հետինդուստրիալ էկոնոմիկային ներհատուկ ճանապարհով, որի հիմքը և առանցքը կազմում են հիշատակածս ինովացիոն տեխնոլոգիաները, տելեկոմունիկացիոն տեխնոլոգիաները, նանոտեխնոլոգիաները և այլն…

Ն.Մ.– Դա նոր տերմին է, որի մասին ես Ձեզանից ուզում եմ որոշ բաներ իմանալ:

Ա.Գ.– Սիրով:

Ն.Մ.– Դուք նշեցիք մեր արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը, ասացիք, թե դա ինչ հետևանք կարող է ունենալ: Իմ համեստ ուսումնասիրությունները կամ դիտարկումները տանում են դեպի արտարժույթ, դոլարը: Հիմա, Ձեր կարծիքով, սա ուղղակի կամ անուղղակի ի՞նչ կապ ունի դոլարի փոխարժեքի հետ: Եվ հետո, մի քիչ երկար է ստացվում, կներեք, ես հիշում եմ Ձեր կրակոտ ելույթը դոլարի շուրջ Ազգային ժողովում ծավալված քննարկումների ժամանակ, որից հետո Դուք լռեցիք: Ինձ թվաց, թե մասնագետները հակառակն են ապացուցել: Չեմ կարող ասել:

Ա.Գ.– Իրենք էլ չեն կարող ասել, որովհետև չի եղել այդ բանը, մի բանը

տասը անգամ որ մեկին ասես, կարող է վիրավորվի, ասի՝ բթամիտներին են մի բանը տասը անգամ ասում:

Ն.Մ.– Այսինքն՝ Դուք նույն կարծիքին եք մնում և դրա մեջ կապ կա:

Ա.Գ.– Նախ, մենք մեր խոսակցությունն ընդհատեցինք գովազդով, զրույցը նանոտեխնոլոգիաների մասին էր: Չստացվի, որ մտածեն՝ Գեղամյանը չգիտեր, գովազդի ժամանակ Նվերին խնդրեց, ասաց՝ անցնենք այդ հարցի վրայով: Նանոտեխնոլոգիաները միկրոմասնիկների ճարտարապետության հիման վրա կառուցված նոր, յուրօրինակ առանձնահատկություններ ունեցող նյութերի պատրաստման տեխնոլոգիաներ են: Դա ֆունդամենտալ և կիրառական գիտության ու տեխնիկայի միջդիսցիպլինար ճյուղերի բնագավառ է, որը միկրոմասնիկների՝ ատոմների ու մոլեկուլների, կանխավ տրված ճարտարապետությամբ ապահովում է նախօրոք որոշված ներքին կառուցվածքով նյութերի արտադրություն: Դրանք հնարավոր են դարձնում ստանալ ապրանքատեսակներ, որոնք իրենց ֆունկցիոնալ հնարավորություններով նախադեպը չունեն նորագույն տեխնոլոգիաներում, անգամ իսկ ինֆորմացիոն:

Ն.Մ.– Դրանք, ի դեպ, միայն գերտերությունների, գերհարուստ երկրների հնարավորությունների մեջ են: Հայաստանում, որ լսեցի այդ բանը, մտածեցի, այս վիճակում գտնվող Հայաստանն ի՞նչ գործ ունի նանոտեխնոլոգիաների հետ: Ռուսները դեռ նոր են կարևորում դա և 2-3 տարի հետո նոր են արդյունք ակնկալում:

Ա.Գ.– Ես դա շատ լավ գիտեմ: Ռուսաստանում նանոտեխնոլոգիաները անձամբ պրեզիդենտ Վլադիմիր Պուտինի հսկողության ներքո գտնվող հարցեր են: Հատուկ կոմիտե են ստեղծել, որը ռազմաարդյունաբերական համալիրի շրջանակներում է լինելու: Ինչևէ, ինչ վերաբերում է գերհարուստ երկրներին, ապա կարևորը ոչ միայն դա է, այլև այն, որ մարդկանց գիտակցության մեջ հեղաշրջում կատարվի: Մենք ինքներս պետք է մեր հոգեբանությունը փոխենք այն կտրվածքով, որ եթե ամենաժամանակակից գիտության ճյուղ կա, ապա հայերը պետք է այնտեղ անպայման իրենց խոսքն ասեն, ինչպես դեռ իր ժամանակին Հովհաննես Ադամյանն ասաց՝ հեռուստատեսության գաղտնիքը հայտնաբերելիս:

Ն.Մ.– Տվյալ բնագավառի մասնագետին կարո՞ղ ենք 30 հազար դոլար աշխատավարձ տալ:

Ա.Գ.– Դա ուրիշ հարցի ենք անցնում: Խնդիրն այստեղ այն է, որ մենք ժամանակակից ցանկացած ոլորտում կարողանանք նվիրյալների միավորումներ, դպրոցներ հիմնել…

Հիմա ես դոլար-դրամ փոխարժեքին անդրադառնամ: Դուք միանգամայն ճիշտ եք, երբ ասում եք, որ տեղական արտադրողին ծանր հարված է հասցնում դոլարի չարդարացված արժեզրկումը: ԱՄՆ-ի Դաշնային Պահուստային համակարգը, այն է՝ ԱՄՆ-ի հավաքական Կենտրոնական բանկը (պայմանականորեն այդպես ասենք) պաշտոնապես արձանագրել է, որ ան-

ցած 4 տարիների ընթացքում դոլարի արժեզրկումը աշխարհի հիմնական տարադրամների համեմատ կազմել է ընդամենը 25%: Դա կլինի եվրոն, կլինի չինական յուանը, կլինի ճապոնական իենան: Այդ նույն ժամանակաշրջանում ՀՀ-ում դոլարի արժեզրկումը կազմել է 45-50%: Դա մակրոէկոնոմիկա գիտության տեսակետից անհեթեթություն է, երբ էկոնոմիկական ու ֆինանսական և ոչ մի տեսակարար կշիռ չունեցող երկիրն ապահովում է իր ազգային տարադրամի 45 % արժևորում, այն էլ՝ դոլարի նկատմամբ: Դա էլ, կրկնում եմ, այն դեպքում, երբ դոլարը 4 տարում արձանագրել է ընդամենը 25%-ի արժեզրկում: Դա ի՞նչ հետևանքներ ունեցավ: Դա հանգեցրեց նրան, որ ապրանքներ ներմուծողները, ժողովրդական լեզվով ասած՝ օլիգարխները, հնարավորություն ստացան շուկայից ավելի էժան գներով գնել դոլար՝ այդտեղից նվազագույնը 10% շահույթ ունենալով, և միջազգային այդ գներից ավելի էժան դոլարներով ապրանքներ ներմուծեն հայկական շուկա: Տնաշենները գոնե այդ 10% մաքուր շահույթով բավարարվեն: Ոչ, ապրանքը վաճառելիս դեռ գնի վրա մի բան էլ վրադիր են ավելացնում: Եվ դա, ցավոք, չի կանխվում Կենտրոնական բանկի կողմից: Իսկ ինչպե՞ս է այդ ամենը ստացվում, փորձեմ դրա մեխանիզմը բացել:

Ն.Մ.– Այսինքն՝ Դուք քննադատության սլաքը Կենտրոնական բանկի՞ն եք ուղղում:

Ա.Գ.– Միանգամայն ճիշտ եք, որովհետև գործող օրենքով Կենտրոնական բանկի գործառույթների շրջանակում է դոլար-դրամ փոխարժեքի կարգավորման հարցը: Եվ ասեմ՝ ի՞նչ մեխանիզմով են դա անում: Ազատ շուկային ներհատուկ է առաջարկի և պահանջարկի փոխշաղկապվածությունը: Եթե պահանջարկը մեծ է, քան առաջարկն է, գները թանկանում են: Հիմա, տեսեք, ի՞նչ են անում: Արհեստականորեն շրջանառության մեջ եղած դրամի բազան սեղմում են: Այսինքն՝ դրամական բազան, շրջանառության մեջ եղած դրամի քանակությունը, մեր հայկական դրամի քանակությունը ՀՆԱ-ի հետ համեմատած պետք է որոշակի տոկոս կազմի: Սակայն այսօր այդ հարաբերակցությունը 1,5 անգամ ավելի պակաս է, քան անհրաժեշտ է էկոնոմիկայի բնականոն գործողությունն ապահովելու համար: Բայց դրամի պահանջարկ կա: Դրսից բանկային համակարգով 1,5-2 մլրդ դոլարային տրանսֆերտներ, օգնություն են ստանում մեր հայրենակիցները: Օգնություն ստացողը դա բարձի տակ չի դնում, այլ հարկադրված է փոխանակել դրամի, որ կարողանա լույսի փողը տա, ջրի փողը տա, գնի հանապազօրյա հացը, և քանի որ շուկայում անհրաժեշտ քանակությամբ դրամ չկա, ապա, ոչ առանց Կենտրոնական բանկի, ինչ գին ուզում, այն էլ սահմանում են: Եվ ստացվում է այնպես, որ այդ ողջ բեռը իր վրա է վերցնում մեր շարքային քաղաքացին:

Ն.Մ. – Պարոն Գեղամյան, բայց ասեք՝ ի՞նչ անի Կենտրոնական բանկը: Գները բա՞ց թողնի:

Ա.Գ. – Բացարձակապես գները բաց թողնելու անհրաժեշտություն չկա: Եթե Կենտրոնական բանկը կառավարության հետ ստվերից հանի չհաշվարկ-

ված ՀՆԱ-ի շուրջ 40%-ը կազմող ստվերային արտադրությունը և դրան համարժեք դրամական բազա ապահովի շրջանառության մեջ, ապա այդ պայմաններում մեր տնտեսության խոցելի բոլոր տեղերը, բոլոր արատներն ի հայտ կգան: Թե չէ արձանագրում են՝ անցյալ տարի ինչ-որ 18, անգամ 19%-ով դրամի արժևորման փաստը: Դրամի 19% արժևորման պարագայում սպառողական նվազագույն զամբյուղը մեկ տարում շուրջ 7%-ով թանկացել է: Սա անհեթեթություն է: Եթե դրամը իրապես արժևորվում է, ապա նրա գնողունակությունը պետք է բարձրանա, իսկ սպառողական զամբյուղի գինն էլ պետք է իջնի: Կարծում եմ, կասկած չպետք է հարուցի այն, որ եթե մեր ազգային դրամը, իրոք, համապատասխանորեն արժևորված լիներ, իրականում արժևորում տեղի ունենար, ապա այն ավելի գնողունակ պետք է լիներ: Ահա այստեղ է թաղված շան գլուխը:

Ն.Մ. – Տենդենցն ո՞ւր է տանում:

Ա.Գ. – Նախ, տենդենցը տանում է մեր արտահանողների արտադրության փակմանը: Երկրորդ. տենդենցը տանում է, Աստված մի արասցե, ֆինանսական դեֆոլտի, որովհետև եթե զարգացումներն ընթանան այս հունով, ապա թաքնված առկա գնաճը, որը յուրաքանչյուր տնային տնտեսուհի իր կենցաղում, ամեն օր առևտուր անելիս տեսնում և զգում է, կարող է դառնալ խիստ վտանգավոր մարդկանց կենսապահովության նվազագույն մակարդակն ապահովելու տեսանկյունից: Այդ իրավիճակում դրա հետևանքների առաջն առնել չենք կարողանա, կունենանք պետականությունը խարխլող փլուզում: Ֆինանսական անդունդը կգլորվի մեր ամբողջ համակարգը, որովհետև փաստացի գոյություն ունեցող գնաճը թաքցնում են: Իսկ եթե չթաքցնեն, իրական պատկերն ասեն, բնականաբար, հարկադրված կլինեն անպայմանորեն դրամավարկային քաղաքականությունն արմատապես վերանայել: Սրանք իրականացման ենթակա գործառույթներ են, որոնք, ցավոք, չեն արվում: Իսկ ձեզ, ի՞նչ, թվում է՝ պատահականություն է, որ հիմա 306-307 դրամի սահմանում են պահում դոլարը: Իհարկե, պատահականություն չէ: Կենտրոնական բանկի ղեկավարությունը, ի պատիվ իրեն, շատ լավ գիտակցում է, թե ինչ է անում, և հիմա էլ զսպում են դոլարի անկումն այն դեպքում, երբ աշխարհի ֆինանսական շուկաներում դոլարի շոշափելի անկում եղավ, մասնավորապես, 2007 թ. նոյեմբեր ամսին: Բայց մեզ մոտ դա այդքան զգալի չէր: Այդ ինչպե՞ս է ստացվում: Դրամի ի՞նչ ինտերվենցիա արեցին ֆինանսական շուկա, ի՞նչ քանակի դոլար շուկայից գնեցին…

Ն.Մ. – Դուք որևէ սեփականության տիրապետո՞ւմ եք, պարոն Գեղամյան:

Ա.Գ. – Անշուշտ, հանճարեղ ուղեղ ունեմ: Իսկ քաղաքակիրթ աշխարհում այսօր ամենաթանկը գնահատվում է ուղեղը:

Ն.Մ. – Ես ուզում եմ Ձեր ուսումնասիրությունների աղբյուրն իմանալ:

Ա.Գ. – Եթե առիթ լինի կարդացեք Ջոզեֆ Ստիգլիցին, եթե հոգնեք նրա-

նից, կարդացեք Ջեֆրի Սաքսին, եթե նրանից էլ հոգնեք, ծանոթացեք Ջոն Մեյնարդ Քեյնսի տեսության հետ, եթե չհավանեք, ապա ուսումնասիրեք Չիկագոյի դպրոցի ժամանակակից գիտնականների մոտեցումները:

Ն.Մ. – ... Քաղաքական հարցերը թողեցինք: Հետո նկատեցի՞ք չէ, պարոն Գեղամյան, որ ժամանակը սպառվել է, բայց ես էլի մի որպե խախտեմ, մի հարցի պատասխանեք: Դա այսօրվա հարց է: Ահարոն Ադիբեկյանը հերթական հարցումներն էր հրապարակել, ըստ որի մարզերում վարչապետն ունի 67%, Արտաշես Գեղամյանը՝ 2%: Դա Ձեզ չի՞ վրդովեցնում:

Ա.Գ. – Բացարձակապես: Եթե վրդովեցներ, եթե Ահարոն Ադիբեկյանի հրապարակած թվերին փիլիսոփայորեն չմոտենայի, կնշանակեր, որ հումորի զգացումս լրիվ կորցրել եմ: Տեսեք, ես չգիտեի չէ՞, որ այդ հարցը դուք կտաք, բայց հեռատեսությունս հուշեց բերել «Գելլափ»-ի համաշխարհային ճանաչում ունեցող փորձագետների այսօր՝ հունվարի 28-ին, ամփոփած թվերը: Այդ թվերի համաձայն, այո, վարչապետ Սերժ Սարգսյանի վարկանիշը, ավելի շուտ, ոչ թե վարկանիշը, այլ, եթե ընտրություններն առաջիկա կիրակի լինեին, ապա դեկտեմբերի 1-8-ին անցկացված հարցումներով նա կստանար՝ 35% ձայն, իսկ հիմա՝ 43%: Արթուր Բաղդասարյանին, եթե դեկտեմբերին 13% է, ապա հիմա՝ 11 %-ն է: Արտաշես Գեղամյանինը ինչպես 6 % կար, այնպես էլ մնացել է: Դա էլ այն դեպքում, երբ քարոզչական Ավարայր են փորձում գլխիս բերել: Դա, իհարկե, չի հաջողվի: Ինչ խոսք, ես էլ եմ համամիտ Ահարոն Ադիբեկյանի հետ, որ «Գելլափ»-ի աշխարհահռչակ փորձագետները, «Հարիսի» աշխարհահռչակ մասնագետները Ադիբեկյանից սովորելու բան ունեն: Բայց այդ սովորելու բանը ոչ թե սոցոլոգիան է, այլ ընտրությունից ընտրություն փող սարքելու հունարը: Նրա մոտ դա լավ է ստացվում, և նա կարող է Գինեսի գրքում գրանցվել որպես այդ ոլորտում ռեկորդակիր: Եվ ասեմ՝ ինչո՞ւ: Սոցիոլոգիան, որը երբեք ու երբեք թվաբանություն և մաթեմատիկա չէ, Ահարոն Ադիբեկյանը դարձրեց ճշգրիտ գիտություն. ինչքան վճարում ես, այդքան տոկոս է նկարում: Դրա համար շնորհավորում եմ:

Ն.Մ. – Եթե Դուք վճարեիք, Ձեզ այդքան տոկոս ...

Ա.Գ. – Գիտեք ինչ, ես ուղեղս հետ չեմ տվել, որ Ահարոն Ադիբեկյանին փող վճարեմ: Ուրիշ բան, որ ես կարող եմ մի քանի գաղտնիք բացել: Իմ բարեկամների, կուսակիցների մոտ ադիբեկյանականները գնացել են: Ասել են՝ ո՞ւմ եք ձայն տալու: Մերոնք ասել են՝ Արտաշես Գեղամյանին: Հանդիպակաց հարց են տվել՝ բայց իզուր եք տալիս, միևնույնն է, նա չի անցնելու, կամ Լևոն Տեր-Պետրոսյանը, կամ էլ Սերժ Սարգսյանն է անցնելու: Այսինքն՝ ի սկզբանե ուղղորդված հարցումներ են անցկացնում:

ԳՅՈՒՄՐԻ «ՑԱՅԳ» ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀՅՈՒՐԸ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆՆ Է

(03.02.2008 թ.)

ԼՐԱԳՐՈՂ – Բարի երեկո հարգելի հեռուստադիտողներ, «Ցայգ» հեռուստաընկերության եթերում «Մեր թեման» հաղորդաշարի հերթական թողարկումն է: Նախագահական ընտրությունների քարոզարշավի փուլը ընթացքի մեջ է, թեկնածուները հանդիպումներ են ունենում ընտրողների հետ, որոնց ընթացքում էլ ներկայացնում են նախընտրական ծրագրեր: Մեր տաղավարում այսօր հյուրընկալել ենք «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ, Հայաստանի Հանրապետության Նախագահի թեկնածու Արտաշես Գեղամյանին: Բարև Ձեզ:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ – Բարի երեկո:

Լ. – Պարոն Գեղամյան, նախ, Դուք հանդիպումներ եք ունեցել շիրակցի ընտրողների հետ, Ձեր տպավորություններն այդ մասին:

Ա.Գ. – Շիրակի ընտրողն աչքի է ընկնում, նախ, խորությամբ, ջերմ հյուրընկալությամբ և սուր հարցադրումներով: Այն հարցադրումները, որոնք ես լսում եմ Շիրակում, ներհատուկ են հանրապետության բոլոր մարզերին և եթե դու, ժողովրդական լեզվով ասած, կարողանաս դրանց տակից դուրս գալ, ապա կարող ես քարոզարշավդ համարձակորեն շարունակել ողջ Հայաստանով: Շիրակցիները յուրահատուկ սուր ընկալումներ ունեն, իսկույն ևեթ անկեղծ, ճշմարիտ խոսքը տարբերում են շինծուից: Այնպես որ, ես ոգևորված եմ այդ հանդիպումներից, պարտավորեցնող հանդիպումներ էին: Միաժամանակ, օգտվելով առիթից, հայցում եմ գյումրեցիների, շիրակցիների ներողամտությունը, որովհետև հունվարի 29-ին Արթիկում, Գյումրիում, Պեմզաշենում, Հոռոմում նախատեսված էին հանդիպումներ, բայց, ավա՜ղ, բնակլիմայական անբարենպաստ պայմանների պատճառով այդ հանդիպումները չկայացան:

Լ. – Ձեր նախընտրական շտաբները հիմնելիս այստեղ դժվարություն ունեցե՞լ եք:

Ա.Գ. – Ոչ: Դժվարություններ չեն եղել, նախընտրական շտաբները բնականոն աշխատում են և դրա վկայությունն էր Գյումրու շտաբում անցկացված այսօրվա նիստը, ուր հավաքվել էին ոչ միայն քաղաքի նախընտրական շտաբների ներկայացուցիչները, այլ նաև Անիի, Արթիկի, Աշոցքի, Ախուրյանի տարածաշրջանային նախընտրական շտաբների համակարգողները:

Լ. – Պարոն Գեղամյան, օրենսդրական փոփոխությունների ընթացքում երկրի Նախագահի լիազորությունները, կարծես թե, որոշակիորեն սահմանափակվելու միտում ունեն, սակայն այդ պաշտոնի համար պայ-

քարը թեժանում է: Դա ինչո՞վ կբացատրեիք:

Ա.Գ. – Կբացատրեի այն հանգամանքով, որ քաղաքական յուրաքանչյուր գործիչ պատասխանատվության իր չափն է տեսնում երկրում ստեղծված իրավիճակի համար և, բնականաբար, ցանկանում ուժերը ներածին չափով օգնել մեր ժողովրդին, օգնել հանրապետությանը՝ հաղթահարելու այն բազում դժվարությունները, վտանգները, որոնք դարանակալել են Հայոց պետականության առաջ: Դուք ճշմարիտ դիտարկում եք արել, գործող Սահմանադրության համաձայն Նախագահի լիազորությունները որոշակիորեն սահմանափակվել են, կառավարություն ձևավորելու հարցում հիմնական արտոնությունը տրված է Ազգային ժողովում մեծամասնություն ունեցող քաղաքական ուժերին, տվյալ դեպքում դա Հանրապետական կուսակցությունն է, որը դաշինք է կազմել «Բարգավաճ Հայաստան» կուսակցության և Հայ Հեղափոխական Դաշնակցության հետ: Նրանք ԱԺ-ում ունեն մեծամասնություն, ստորագրել են համատեղ հուշագիր և ձևավորել են կառավարություն: Թերևս Հանրապետական և «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունները, արդեն հաստատորեն կարելի է ասել, այսուհետ նույնպես համատեղ են ձևավորելու կառավարության կազմը, որովհետև նախագահական ընտրություններին հանդես են գալիս միասնական թեկնածուով: Այնպես որ, ինձ համար շատ տարօրինակ է, որ Նախագահի առանձին թեկնածուներ ճամարտակում են, փորձում են մեր ժողովրդին թյուրիմացության, մոլորության մեջ գցել, ասելով՝ հաղթանակի դեպքում ձևավորելու են նոր կառավարություն: Ավելին, նոր կառավարությունում էլ արդեն զանազան պաշտոններ են խոստանում կամ ակնկալում: Մինչդեռ իրենք պետք է ժողովրդին ազնվորեն խոստովանեն, որ անգամ իսկ նախագահական ընտրություններում հաղթելու պայմաններում նրանք չեն կարողանա կառավարություն ձևավորել: Կամ էլ կկարողանան ձևավորել միայն այն պարագայում, եթե Հանրապետական կուսակցության պատգամավորները, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության պատգամավորները ճամբարափոխ դառնան: Այսինքն՝ երդմնազանց լինեն, լքեն կոալիցիան, դրժեն համատեղ ստորագրած փաստաթուղթը, շատ ներողություն արտահայտությանս համար, առնետավազք նախաձեռնեն: Պատկերացնո՞ւմ եք՝ ինչ ողբալի վիճակում կհայտնվի Հայաստանի Հանրապետությունը, եթե Ազգային ժողովում երկրի Նախագահի հենարանը բաղկացած լինի մարդկանցով, ովքեր նկատվել են առնետավազքի մեջ: Դա անթույլատրելի է: Այս ամենի մասին պետք է ազնիվ ասել: Ուրիշ բան, որ Նախագահի այս կամ այն թեկնածուն ունի հստակ ծրագիր, իր քարոզարշավի մեխն էլ այդ ծրագիրն է, և նա կոչ է անում ժողովրդին, որ ընտրությունը կատարվի բացառապես ծրագրերի մեջ: Դրանից հետո ժողովուրդը, որ ծրագրին նախապատվություն տա, հավանության արժանացնի, ապա երկրի Նախագահը, Սահմանադրությամբ իրեն վերապահված իրավունքից ելնելով, հաշվի առնելով, որ այդ ծրագիրը յուրովի պլեբիսցիտ է անցել, հետագայում կարող է դա դարձնել առանձին օրինագծերի մեկ տարվա փաթեթ, որը Ազգային ժողովը նույնպես պարտավորված կլինի ընդունել, որովհետև դա է եղել ժողովրդի կամքը: Այս հարցերում ահա այսպիսին է այսօր իրական պատկերը:

Լ. – Դուք նշեցիք, որ շիրակցի ընտրողը շատ աչալուրջ է և զգոն: Ձեր ծրագրով ի՞նչ եք առաջարկում աղետի գոտու վերջնական վերականգնման համար, նույն շիրակցու համար:

Ա.Գ. – Ասեմ, մինչև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն չհամալրվի այն բոլոր գումարներով, որոնք այսօր գտնվում են ստվերում, մինչև մենք չունենանք բյուջե, որի եկամտային մասը նվազագույնը 2 անգամ կգերազանցի այսօրվա բյուջեն, մենք չենք կարողանա կարճ ժամանակում լուծել այն բազում խնդիրները, որոնք ծառացած են նախևառաջ Շիրակի մարզում, Լոռվա մարզում, որտեղ աղետալի երկրաշարժի հետևանքները դեռ հաղթահարված չեն: Շուրջ 4 հազար ընտանիք կա, որ տնակներում են բնակվում: Ուստի, առաջնահերթությունը պետք է տրվի նրան, որ պետական հոգածության առարկա դառնա նախևառաջ աղետի գոտին և հատկապես Շիրակի մարզը: Պետական այդ հոգածությունը պայմանավորված պետք է լինի, ինչքան էլ կարող է տարօրինակ հնչել, առաջին հերթին աշխատատեղեր ստեղծելով: Կարծում եմ, պարզ է, որ եթե մարդը ապահովված լինի աշխատատեղով, ապա օթևանով ապահովելու խնդիրն ավելի դյուրին կլուծվի:

Լ. – Որոշակիորեն դա էլ կնպաստի այդ հարցի լուծմանը:

Ա.Գ. – Միանգամայն ճիշտ եք: Իսկ աշխատատեղ ստեղծելու համար այսօր բոլոր հնարավորությունները կան: Սովորաբար, երբ ես որևէ խնդիր եմ առաջ քաշում և պնդում դրա իրական լինելու մասին, ապա որպես կանոն հիմնավորում եմ, թե ինչո՞ւ կան այդ հնարավորությունները:

Լ. – Թվարկեք մի քանիսը, ինչպե՞ս ստեղծել այդ աշխատատեղերը:

Ա.Գ. – Պատասխանեմ, թե ինչպես ստեղծել: Այսօրվա վիճակագրությամբ, 2007 թ. ընթացքում դրսից Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել 3 մլրդ 200 մլն դոլարի արտադրանք: Երբ դրանց տեսականին մանրակրկիտ վերլուծում ես, ապա մնում ես զարմացած և վրդովված: Զարմացած այն բանից, թե ինչպե՞ս կարելի է ներմուծել այն արտադրատեսակները, որոնց արտադրությունը հնարավոր է կազմակերպել Հայաստանում: Իսկ վրդովված, թե երկրի ներսում ինչո՞ւ չի մշակվում տեղական հումքը, մշակման ավելի բարձր աստիճանի չի հասցվում տեղական արտադրությունը, տեղական արտադրողին խթանելու համար ինչո՞ւ չեն ընդունվում համապատասխան օրենքներ, նրան ինչո՞ւ չեն պաշտպանում անհավասար մրցակցությունից: Չէ՞ որ որոշակի արտադրատեսակներ, որ ներմուծում են դրսից, այստեղ՝ Հայաստանում, վաճառում են դեմպինգային գներով, ինքնարժեքից ավելի էժան: Դա հայ արտադրողի արտադրանքն անմրցունակ է դարձնում, գրավում են մեր շուկան: Շուկան գրավելուց հետո գներն անմիջապես թռցնում են, գները բարձրացնում են: Ահա այս բոլոր հարցերը հնարավոր է պետության կողմից կարգավորել, ինչը, ավա՜ղ, շատ և շատ դանդաղ է արվում: Առաջին անհրաժեշտության ներմուծվող 1 մլրդ 600 մլն դոլարի ապրանքների ընդհանուր ծավալի մոտ կեսի արտադրությունը հնարավոր է տեղում կազմակերպել, առավել ևս դրանց սպառման շուկա ունենք: Հիմա եկեք ուշադիր վերլուծենք Շիրակի գոտու խնդիրներից մեկ-երկուսը: Դուք հիշում եք, ժամանակին այս տարածաշրջանում գյուղատնտեսության ճյուղերից ճակն-

դեղագործությունն ամենաբարձր մակարդակի վրա էր դրված: Շիրակի հարթավայրային գոտում ճակնդեղ էին աճեցնում, և այդ տարիներին Հայաստանի Հանրապետությունը շաքարավազի պահանջարկի զգալի տոկոսը կարողանում էր ապահովել տեղական արտադրանքի հիման վրա: Ճակնդեղագործությունը զարգացավ այստեղ՝ գյուղը կշնչի, գործազրկությունը շեշտակի կպակասի: Գյուղը շնչեց, արտագնա աշխատանքների արդեն հազարավոր շիրակցի մարդիկ չեն գնա: Երկրորդ ցուցանիշը: Տարեկան կտրվածքով միջին հաշվով 300 հազար տոննա ցորեն ենք ներմուծում դրսից, մոտ այդքան էլ Հայաստանում է արտադրվում՝ նայած բնակլիմայական պայմանները տվյալ տարի ինչպիսին են եղել: Այս պարագայում սակավահող Հայաստանի վարելահողի նվազագույնը 40%-ը չի մշակվում: Իսկ գյուղատնտեսության մեջ ներգրավված ֆերմերները, գյուղացիները շատ լավ գիտեն, եթե հողը 2-3 տարի չմշակվեց, ապա աղակալում է: Եվս մի 2-3 տարի, տափաստանի, անապատի է վերածվում, և հետո հսկայական գումարներ է պետք ներդնել, որ այդ հողը վերակենդանացվի, ռեկուլտիվացիայի ենթարկվի: Այսպես կարելի է առկա, բայց չօգտագործվող հնարավորությունների շարքը շարունակել, օրինակներ բերել նաև այլ ոլորտներից: Այս ամենը հանգեցրել է այն մտքին, որն արծարծված է իմ «Արարման ծրագրում», որ հարկ է մշակել պետական ազգային ծրագրեր, մասնավորապես, ըստ տարածաշրջանների, ըստ մարզերի: Նախևառաջ, դրանց բուն խնդիրն է լինելու ստեղծել բոլոր պայմանները, որ մարդիկ հարկադրված չլինեն լքել իրենց հայրենի ոստանները, որ մարդիկ ապահովված լինեն աշխատանքով և օթևանով, որ մարդիկ կենսապրուստի իմաստով չզգան այն հսկայական տարբերությունը, որն այսօր անգամ իսկ անզեն աչքով է երևում. սոցիալական ցցուն շերտավորումը գյուղերի և քաղաքների, վերջիններիս և Երևանի միջև գոյություն ունեցող վիթխարի տարբերությունը: Երբ գյուղացին իմանա, որ ձմռան ամիսներին, երբ գյուղատնտեսական աշխատանքներ չկան, հարկադրված չի լինի գյուղամեջում պարապ ժամանակ անցկացնի կամ, հեռու իրենից, հարբեցողությամբ զբաղվի, այլ ապահովված կլինի աշխատանքով, ապա վիճակն արմատապես կփոխվի: Թե չէ այսօր անգործության մատնվելու վտանգը, ցավոք, կա, և գյուղաբնակ երիտասարդ ընտանիքներն անհրաժեշտ է, որ զարգացման հեռանկար տեսնեն իրենց գյուղում, որ սոցիալական, մշակութային այն օջախները, որոնց թիվը, ճիշտ է, խիստ սակավացել է, սակայն դեռ կան և գործում են Երևանում, Գյումրիում, Վանաձորում, լինեն նաև մեր գյուղերում, որ գյուղաբնակները զբաղմունք ունենան, ապագա տեսնեն:

Լ. – Այս ամենի համար Դուք օրենսդրական փոփոխությունն՞ր եք առաջարկում:

Ա.Գ. – Ոչ, ես առաջարկում եմ ընդունել ազգային ծրագիր, որին կարելի է տալ օրենքի ուժ: Ինչո՞ւ ազգային ծրագիր: Դա միայն Գյումրվա խնդիրը չէ, Շիրակի մարզում լուծվելիք խնդիր չէ, դա մեր հանրապետության խնդիրն է: Աստված մի արասցե, եթե Շիրակի գյուղերը դատարկվեցին, դա կհանգեցնի նրան, որ սահմանն անպաշտպան կդառնա, մենք դա պահել չենք կարողանա: Դատարկվեց գյուղը, Հայաստանի Հանրապետությունը կդադարեցնի իր

գոյությունը: Երևան քաղաքով երկիր չես պահի: Հանրապետության 3-4 խոշոր քաղաքներով ժողովրդին, քո երեխաներին, քո հանրապետությանը ապագա չես կարող խոստանալ: Այ, եթե լինի համապատասխան ազգային ծրագիր, մասնավորապես, հիշատակածս խնդիրները ներառող, և այդ ծրագրի կատարողները հրապարակավ հաստատվեն, ապա մարդիկ, նույն գյումրեցին, նույն շիրակցին, կհասկանան և կգիտակցեն, որ գյուղատնտեսության զարգացման ազգային այս ծրագրով է պայմանավորվելու 21-րդ դարում մարտահրավերներին դիմակայելու հարցի լուծումը: Ամեն մարդ կմտածի, որ այս ծրագիրը, եթե կատարվի, ապա դրանից նա ի՞նչ սպասելիքներ ունի, պետությունից ակնկալիքներ կարո՞ղ է ունենալ: Եվ երկրորդ, ոչ պակաս կարևոր հարց է նաև այն, որ նա իրեն հաշիվ կտա, թե իրենից ի՞նչ է պահանջվում, իշխանությունները մեր ժողովրդից ի՞նչ են պահանջում: Եվ այստեղ կարևորն այն է, որ ժողովուրդը պարզորոշ հասկանում է՝ եթե կատարում է իրենից պահանջվածը, ապա դրա դիմաց ինչ է ստանալու: Այսինքն՝ նման մոտեցման պայմաններում շահերը համընկնում են, համընկնում են բոլոր խավերի, բոլոր հասակի մարդկանց սպասելիքները, նպատակները և դրանք համահունչ են դառնում պետական շահի հետ, ձեռներեցի շահի հետ, ըստ որում, լինի միջին, փոքր, թե խոշոր ձեռներեց: Այնպես որ, այս պարագայում սոցիալական բոլոր շերտերը համախմբվում են ընդհանուր ծրագրերի կենսագործման ճանապարհին: Ահա այդ ժամանակ անխուսափելի է, որ երկիրը զարգացում չարձանագրի: Մեծն Հեգելը «Փիլիսոփայության պատմություն» աշխատության նախաբանում գրել է. այն պահից, երբ բոլոր խավերի, տարիքային բոլոր հասակների մարդկանց շահերը համընկնում են պետության շահերի հետ, ապա կնշանակի, որ այդ երկիրն անշրջելի զարգացում է ապրելու:

Լ. – Պարոն Գեղամյան, այ, հաճախ խոսում են կոռուպցիայի խանգարիչ ազդեցության մասին: Վերջապես, ինչպե՞ս պայքարել դրա դեմ:

Ա.Գ. – Չեմ ասի, թե պայքարը շատ դյուրին է, չեմ էլ ասի, թե շատ դժվար է: Շատ կներեք, մեր օջախի օրինակով ասեմ: Եթե իմ երեխաները, իմ հարազատները, իմ ընտանեկան շրջապատը տեսան, որ ես գող-ավազակությամբ եմ զբաղված, է՞, ես ո՞նց կարող եմ իրենց ասել՝ դուք դրանով չզբաղվեք: Ձուկը գլխից է հոտում, և քաղաքական կամք դրսևորելու պարագայում հավատացած եղեք, կոռուպցիան հնարավոր է նվազագույնի հասցնել: Հասարակ օրինակ բերեմ, հենց գործող իշխանություններից: Մեկ տարվա ընթացքում բյուջեի եկամտային մասը 750-800 մլն դոլարով ավելացրեցին: Փառք ու պատիվ նրանց: Հիմա այդ թվերը 2008 թ. բյուջեում ամրագրված են: Հարկ է նշել, որ 2007 թ. համարժեք արտադրական նոր հզորություններ չեն գործարկվել, որ, ասենք, դրա հաշվին է բյուջետային մուտքերի ավելացումը: Ի՞նչ արեցին. քաղաքական կամք դրսևորեցին, ստվերը բերեցին հարկային ոլորտ, բյուջեի ծախսային մասն էլ իր հերթին 130% աճի տեմպ արձանագրեց: Կարողացա՞ն, այո, կարողացան: Դրա համար տխրեմ, իհարկե, ոչ, ընդհակառակը ուրախանում եմ: Քաջալերում էլ եմ, ասում եմ, մի քիչ էլ հուպ տվեք, մի քիչ էլ շատ ուտողների ախորժակը սեղմեք ու կհամոզվեք, որ երբ

Գեղամյանը 2003 թ. նախագահական ընտրապայքարի ժամանակ խոսում էր այդ հնարավորությունների մասին, պարապ տեղը չէր ասում: Հիմա էլ եմ պնդում, որ բյուջեն կարելի է կրկնապատկել: Իմ այս եզրակացության հիմքում դրված է միջազգային փորձագիտական վերլուծություն, որի համաձայն Հայաստանի Հանրապետությունում տնտեսության 40%-ը, իսկ առանձին ճյուղերում մինչև 70%-ը գտնվում է ստվերում: Եթե ստվերից անգամ իսկ դրա կեսը բերվի հարկային դաշտ, ապա բյուջեում շոշափելի աճ կարձանագրվի: Այնպես որ, ցանկության դեպքում, քաղաքական կամք դրսևորելու դեպքում, անշուշտ, կարելի է մեր էկոնոմիկայում ստվերայնությունը հասցնել նվազագույնի: Ասեմ 100%-ով հնարավոր է վերացնել, ոչ: Մեր հայերը չափազանց հնարամիտ մարդիկ են, ուղեղները հազարի վրա է աշխատում, հեչ, որ չէ, ցույց տալու համար, որ իրենք պետությունից, հարկային ծառայությունից ավելի հնարամիտ են, մի բան կգտնեն, հարկերից շրջանցելու ճանապարհ կմոգոնեն: Բայց դա արդեն ընդհանուրի մեջ որակ չի կազմի, դա առանձին անհատների քյանդրբազությունը կլինի:

Լ. – Մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում Հայաստանի ձեռքբերումների մասին տարբեր կարծիքներ են հնչում, թե դրական, թե բացասական: Ձեր կարծի՞քը, Ձեր դիրքորոշո՞ւմը:

Ա.Գ. – Գիտեք, այդ հարցին ես այլ կերպ եմ մոտենում: Եթե այսօր Հայաստանի Հանրապետությունում 1 մլն 100 հազար աշխատող կա, իսկ ազգաբնակչությունը կազմում է 3 մլն 300 հազար մարդ, ապա ստացվում է, որ մեկ աշխատողը ոչ միայն իր գլուխն է պահում, այլև կողքից 2 հոգու ապրուստ էլ է ապահովում: Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2007 թ. մեկ աշխատողի միջին աշխատավարձը կազմել է 75 հազար դրամ: Թե որքանո՞վ է ճիշտ կամ սխալ, ինչքանո՞վ է բարձրացված այդ թիվը, թողնում եմ վիճակագիրների խղճին: Ես վերլուծում եմ նրանց պաշտոնապես հրապարակած թվերը: Դե, հիմա, 75 հազարը բաժանեք 3-ի: Եղավ այն, որ Հայաստանում ամսական կտրվածքով մեկ շնչին բաժին է ընկնում 25 հազար դրամ, և դա էլ այն պարագայում, եթե այդ գումարը հասարակության բոլոր անդամների միջև հավասարաչափ բաժանվի: Մեկ շնչին ընկնող եկամուտը՝ 25 հազար դրամը, զգալիորեն պակաս է սպառողական նվազագույն զամբյուղի գնից, որը կազմում է 33-35 հազար դրամ: Կնշանակի, մեծի մասամբ մեր քաղաքացիներն անգամ իսկ իրենց հանապազօրյա ապրուստը չեն կարող ապահովել: Մարդու իրավունքների ավելի մեծ ոտնահարում ես չեմ տեսնում, պատկերացնում: Դա մարդու իրավունքների թիվ մեկ ոտնահարումն է: Ավելին՝ ամեն տարի 100 հազարավոր մարդիկ հարկադրված են մեկնել արտագնա աշխատանքների: Մինչդեռ Սահմանադրությամբ նրանք սեփական երկրի ներսում պետք է ապահովված լինեին աշխատանքով: Մարդու իրավունքների ոտնահարո՞ւմ է, այո, անկասկած ոտնահարում է: Սա համատարած երևույթ է, հանրապետությունով մեկ է տարածված: Հազարավոր տաղանդավոր երեխաներ, որոնք կարող էին բարձրագույն կրթություն ստանալ, ավա՜ղ, այսօր զրկված են այդ հնարավորությունից այն պարզ պատճառով, որովհետև նրանց ծնողներն ի վիճակի չեն ուսման վարձը վճարել: Սահմանադրական իրավունքի

ոտնահարո՞ւմ է, ավա՜ղ, այո: Չէ՞ որ Սահմանադրության մեջ ամրագրված է, որ ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի սովորելու, աշխատելու իրավունք ունի: Հիմա, եթե այս տեսանկյունից ենք մոտենում ձեր հնչեցրած հարցին, ապա այդ ոլորտում լուծելու լրջագույն խնդիրներ կան: Ես էլ չեմ ասում բյուրոկրատական այն քաշքշուքի, հոռի բարքերի մասին, որոնք մերթընդմերթ հրապարակ են գալիս և պայմանավորված են վարչական համակարգի անկատարության, իրավապահ մարմինների, արդարադատության ոլորտի վատ աշխատանքի, դատախազության ոլորտի հետ: Ահա, երբ այդ ամենն իմի ես բերում, տեսնում ես, որ մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում շատ լուրջ անելիքներ կան: Եվ, վերջապես, Հայաստանի Հանրապետությունում շուրջ կես միլիոն կենսաթոշակառու ունենք, որոնց ստացած թոշակի չափը նվաստացուցիչ է: Փառք ու պատիվ իշխանություններին, որ կես միլիոն թոշակառուներից գոնե 300 հազարի թոշակները 60%-ով ավելացնելու են: Բայց չէ՞ որ անգամ իսկ ավելացնելու պարագայում էլ միջին հաշվով թոշակները կազմելու են նվազագույն սպառողական զամբյուղի ընդամենը 75%-ը: Այնպես որ, ոմանք ճամարտակում են, ասում են՝ 3-4 անգամ կբարձրացնենք աշխատավարձերը, դա մաքուր ջրի խաբեություն է: է, հա, երբ իշխանություն էին, թոշակները 4 անգամ բարձրացրեցին, բայց այդ նույն ժամանակ կենսապահովման հիմնական ապրանքների գները թանկացան 97 անգամ: Ահա էս է դրանց խաբկանքը: Եվ ցավն այն է, որ ոչ ոք չի հակադարձում նրանց, ոչ ոք չի ասում՝ ժողովուրդ, ձեզ համատարած խաբում են, սուտ-սուտ ճառեր են ասում: Տրված ցանկացած խոստում դու պարտավոր ես հիմնավորել, դրանց իրականացման ճանապարհները մատնանշել, առկա ռեզերվները, ռեսուրսները մատնացույց անել: Միայն այս ամենն անելուց հետո, եթե խելքները չկտրի, հարցեր առաջանան, ապա պարտավոր ես մեծագույն պատրաստակամությամբ պարզաբանել, որ խնդիրը լուծելուց հետո ի՞նչ հարցեր պետք է կարգավորել և ի՞նչ առաջնահերթությամբ: Ի՞նչ հայեցակարգ պետք է մշակել, որ հնարավոր լինի ազգովի դուրս գալ վտանգավոր զարգացումներով հղի այս վիճակից: Ինչո՞ւ եմ ես այս հարցերը սրում: Սրում եմ այն պարզ պատճառով, որովհետև Հայաստանը, ավա՜ղ, պատմության բերումով հայտնվել է այնպիսի երկրների շրջապատում, որոնք ամենևին էլ մեզ բարեկամ չեն, և այդ ֆոնի վրա Ադրբեջանի Հանրապետությունը, ցավոք, այսօրվա դրությամբ հաղթում է մեզ տնտեսական մրցակցության մեջ: Դա մեր երկրի համար հետագայում կարող է շատ լուրջ սպառնալիք դառնալ:

Լ. – Շարունակե՞նք միջազգային թեման:

Ա.Գ. – Սիրով:

Լ. – Հայաստանը երբեմն դուրս է մնում միջազգային խոշոր տնտեսական ծրագրերից. ո՞րն է պատճառը և ի՞նչ անել այս պարագայում, շրջափակված վիճակից ինչպե՞ս դուրս գալ:

Ա.Գ. – Ձեր դիտարկումը տեղին է: Եկեք միասին տրամաբանենք, որովհետև տրամաբանության արդյունքում է, որ մարդ գալիս է ինչ-որ եզրակացության: Մեր քաղաքական գործիչներից որին խոսեցնում ես, ասում է՝ Հայաստանի Հանրապետության հեռանկարը Եվրամիությունն է: Լավ, գոնե մեկը

թող հարց տա. մեզ ո՞վ է սպասում Եվրամիությունում, ո՞վ է այնտեղ քո առաջ դռները բացել: Սրանից 4 օր առաջ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը՝ քրիստոնյա-դեմոկրատների առաջնորդը, ելույթ ունենալով ասաց, որ Գերմանիան շատ լավ է տրամադրված Թուրքիայի հանդեպ և պատրաստակամ է արտոնյալ փոխհամագործակցության եզրեր գտնել այդ երկրի ու Եվրամիության միջև, բայց դա Եվրամիության անդամ երկիր դառնալու հետ ոչ մի առնչություն չունի և որ Թուրքիան Եվրամիության անդամ չի կարող լինել: Նիկոլյա Սարկոզին էլ հավեսով Մերկելի ասածներին ծափ տվեց: Եթե Եվրամիության այդ երկու ամենախոշոր երկրները, չհաշված Մեծ Բրիտանիան, դեմ են, կնշանակի, Թուրքիան արդեն չի մտնի Եվրամիություն: Եվրամիության անդամ երկիր դառնալու համար ցանկացած երկիր պարտադիր կարգով պետք է ցամաքային սահման ունենա Եվրամիության մի որևէ անդամ երկրի հետ: Եթե Թուրքիան չանդամակցեց, ապա Վրաստանն էլ չի կարողանա անդամակցել Եվրամիությանը: Թուրքիան Բոսֆորի եվրոպական մայրցամաքում ափամերձ տարածք ունի, որը կազմում է Թուրքիայի ընդհանուր տարածքի մի 2-3%-ը, Վրաստանը դա էլ չունի: Ուրեմն, Եվրամիությանը անդամակցելու մասին խոսելն ընդամենը միջոց է եվրոպացիներին դուր գալու կամ եվրոպական գրանտներ ստանալու խնդիր լուծելու համար: Եթե հիմա նման հարցեր լուծում են, ապա լավ են անում, ժողովրդական լեզվով ասած, մարդիկ բաշարում են դրսից փող բերել, դրանով իրենց հոգսն են հոգում, նկարներ են փակցնում տարբեր տեղեր: Բայց չէ՞ որ, եթե դու նման հեռանկարի մասին հայտարարում ես, ապա քո ռազմաքաղաքական հիմնական դաշնակցին՝ Ռուսաստանի Դաշնությանն ես վիրավորում: Ստացվում է՝ մեր պետական սահմանները հայ սահմանապահների հետ ինքը պետք է պաշտպանի, մենք էլ ձգտենք դեպի Եվրամիություն: Իսկ եթե իրենց հերթին նրանք էլ վաղը, մյուս օրը մեզ բարի ճանապարհ մաղթեն, հետևներիցս էլ ի հաջողություն դույլով ջուր լցնեն, հետն էլ ասեն՝ եղբայրներ և քույրեր, գնացեք Ձեր երազած եվրոպաները, տեսնենք ձեզ ո՞վ է այնտեղ սպասում և ո՞վ է ընդունում: Այսինքն՝ ցանկացած քայլ կատարելիս, յուրաքանչյուր ելույթ ունենալիս պետք է մտածես, թե ի՞նչ ես ասում. դա հատկապես վերաբերում է քաղաքական այն գործիչներին, ովքեր, ձգտելով ժամանակակից երևալ, նման խրթին և նուրբ հարցին շատ հաճախ մոտենում են մակերեսայնորեն, երբեմն նաև անլուրջ: Հայաստանի Հանրապետության օրենքները պետք է հնարավորինս ունիֆիկացիայի ենթարկել, նմանեցնել իրենց ոգով և ուղղվածությամբ Եվրամիության անդամ երկրների օրենսդրությանը: Նման մոտեցումը բոլորիս կողմից կողջունվի, կասվի, որ դա միանգամայն ընդունելի է, որովհետև այդ երկրների կայացման ու զարգացման փորձը ցույց է տալիս, որ ճիշտ և ճիշտ նրանց օրենսդրությունն է եղել այն խթանը, շարժիչ ուժը, որը հետպատերազմյան ժամանակաշրջանում աննախադեպ զարգացում է ապահովել եվրոպական երկրներին:

L. – Իրանի հետ մեր երկրի հարաբերությունների զարգացումը, կարծես թե, դուր չի՞ գալիս Ռուսաստանին, բայց մենք այլընտրանք, այլ ճանապարհ ունե՞նք:

Ա.Գ. – Պատասխանեմ ձեր հարցին: Աստված մի արասցե, եթե հանկարծ Իրանի Իսլամական Հանրապետությունն ավելի սերտ կապեր հաստատի Թուրքիայի և Ադրբեջանի հետ, քան մեզ հետ է, ապա, համոզված եղեք, ժամանակի ընթացքում դա կաշխատի Հայաստանի դեմ: Մի պահ պատկերացրեք, եթե իրանական սահմանը հանկարծ փակվի, զարգացումների նման պարագայում ինչպիսի բարդություններ և մղձավանջային վիճակ կարող է ստեղծվել Հայաստանի Հանրապետությունում և նրա շուրջ: Եվ թող ոչ մեկի համար գաղտնիք չլինի՝ Վրաստանը, Թուրքիան և Ադրբեջանն այսօր ոչ միայն տնտեսական, այլև ռազմաքաղաքական դաշնակիցներ են: Ադրբեջանի և Թուրքիայի ճնշման տակ Վրաստանի իշխանությունները կարող են շատ լուրջ խնդիրներ առաջացնել մեր հյուսիսային սահմանում, շինծու խոչընդոտներ ստեղծել հայ-վրացական սահմանով բեռնափոխադրումների համար: Ուստի, մենք պետք է զգոն լինենք և աչքի լույսի պես փայփայենք մի կողմից հայ-իրանական բարեկամական հարաբերությունները, ինչպես նաև նույն աչալրջությամբ պահպանենք ու զարգացնենք հայ-ռուսական ռազմաքաղաքական կապերը, ավելի խորացնենք մեր երկրների միջև առկա տնտեսական համագործակցությունը: Նման քաղաքականությանը Հայաստանի Հանրապետությունը այլընտրանք չունի: Այս մեկնաբանությունից հետո մեր գյումրեցի, շիրակցի հեռուստադիտողների համար հասկանալի ու պարզ կդառնա, թե ինչո՞ւ եմ առանձնահատուկ սրությամբ քննադատում Նախագահի թեկնածուներից մեկին՝ մշտապես նշելով, որ այս բարդ իրավիճակում մեր հանրապետության համար ապակայունության ուղին հղի է լուրջ վտանգներով: Բավական է, որ Հայաստանի Հանրապետությունում վիճակն ապակայունանա, դրանից անհապաղ կօգտվեն ազերիները և սահմանի վրա կհրահրեն ռազմական բախումներ: Եվ հետո էլ, համոզված եղեք, ամեն բան կանեն, որ Իրանի անմիջական սահմանում՝ ադրբեջանահայկական զորքերի բաժանարար գծում (խոսքը գնում է ազատագրված տարածքների մասին), տեղակայվեն միջազգային խաղաղարար ուժեր: Այս առումով միայն հիշատակեմ, որ սրանից ուղիղ մեկ ամիս առաջ Ադրբեջանի Հանրապետությունում Թուրքիայի նախկին դեսպանը, որ նոր-նոր է հետ կանչվել Անկարա, դիմելով ադրբեջանցիներին՝ ասաց. դուք միայն սկսեք գործողություններ (ի նկատի ուներ ռազմական գործողություններ) և կտեսնեք, թե աջակցության ինչպիսի հզոր ալիք կբարձրանա Թուրքիայում: Ասել կուզի՝ կհայտարարեն պատերազմական գործողություններ: Ստեղծված իրավիճակում մեր դաշնակից ռուս զինվորը չի կարող միջամտել, որովհետև ազատագրված տարածքները դե յուրե Ադրբեջանինն են: Եվ մեզ աջակցելու դեպքում ՌԴ-ն իսկույն կենթարկվի ինֆորմացիոն և այլ կարգի հարձակումների, որովհետև կմեղադրվի անհարկի միջամտության, անգամ իսկ ագրեսիայի մեջ: Եվ դա խիստ անցանկալի կլինի Ռուսաստանի համար, հատկապես հաշվի առնելով քարոզչական այն շանտաժը, որին ենթարկեցին վերջինիս վրաց-հարավօսեթական պատերազմից հետո: Ադրբեջանը, ունենալով դաշնային ռազմաքաղաքական պայմանագրեր Թուրքիայի հետ, կդիմի իր դաշնակցին, աշխարհով մեկ կհայտարարի, որ հայերը հերթական պատերազմն են սկսել, այն էլ՝

Ադրբեջանի հողի, ջրի վրա: Թուրքիան, ինչպես գիտեք, ՆԱՏՕ-ի անդամ երկիր է: ՆԱՏՕ-ն էլ որպես լավություն հայերիս կասի՝ լավ, թուրքերին չենք ներգրավի խաղաղարարական ուժերի մեջ, բայց ՆԱՏՕ-ն դա անհետևանք չի թողնի: Իսկ թե ՆԱՏՕ-ում ո՞վ է գերիշխում, ո՞ր երկիրն է գերիշխում, գիտենք: Իսկ այդ գերիշխող երկիրն ի՞նչ հարաբերությունների մեջ է Իրանի Իսլամական Հանրապետության հետ և ի՞նչ խնդիրներ է իր առաջ դրել, դարձյալ բոլորիս է հայտնի: Իրանը մեր կողմից վարվող նման անհեռատես քաղաքականությունը կգնահատի որպես թշնամական դրսևորում: Արդյունքում՝ համարժեք քայլեր կձեռնարկի, այն է՝ ոչ թե պատերազմ կսկսի, քավ լիցի, ոչ, պարզապես, հարկադրված կլինի Իրան-Հայաստան սահմանը փակել: Հայաստանի Հանրապետության էկոնոմիկան շնչահեղձ կլինի: Ահա դրա համար է, որ այս ամենի մասին հրապարակավ խոսելիս, քննադատելով Նախագահի հայտնի թեկնածուին, կրակը վերցրել եմ ինձ վրա: Աշխարհիս երեսին լուտանք ու զազրախոսություն չկա, որ ՀՀՇ-ականները հասցեիս չընդունեն: Հարց է ծագում, այս խնդիրների մասին, ի՞նչ, իշխանությունները չգիտե՞ն: Իհարկե, գիտեն: Ինչո՞ւ են լռում: Նրանց էլ կարելի է հասկանալ: Եթե այս ամենի մասին իրենք են ասում, ամերիկացիներն էլ կմտածեն՝ այ քեզ բան, բա այն 236 մլն դոլարի օգնությունը, որ հատկացնելու ենք Հայաստանին «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի շրջանակում, ինչո՞ւ ենք ձեզ տալիս, եթե դուք ուրիշի թելն եք թելում: Ես հասկանում եմ, թե պաշտոնապես ինչու չեն արձագանքում: Բայց այս ամենի մասին չէ՞ որ գոնե մեկը պետք է բարձրաձայնի: Ի՞նչ, բոլորս աշխատենք լավ երևալ ամերիկացիների, եվրոպացիների, ռուսների համար, իսկ մեր ժողովուրդը հե՞չ: Ահա սա է դառը իրականությունը:

Լ. – Վերադառնանք նորից ընտրական գործընթացներին: Վերջերս հաճախակի է խոսվում Ձեր և Արամ Սարգսյանի միջև առկա հակասությունների մասին ու նույնիսկ գնահատականներ են տրվում դրան: Իրականում ի՞նչ է տեղի ունեցել:

Ա.Գ. – Նախ, ես չեմ կարող հակասություններ ունենալ Լևոն Տեր-Պետրոսյանի թիմակիցներից որևէ մեկի հետ: Հակասության խնդիր չկա այդտեղ: Ես պարզապես մերժում եմ քաղաքական այն գործիչներին, որոնք դավաճանել են իրենց հարազատներին, տվյալ դեպքում մեր ժողովրդի համար պարծանք հանդիսացող Ազգային հերոսներ Կարեն Դեմիրճյանին և Վազգեն Սարգսյանին: 1998 թ. Վազգեն Սարգսյանը զգաց այն վերահաս վտանգը, որը ծառացել էր Հայոց պետականության գլխին, և ինքը Ռոբերտ Քոչարյանի ու Սերժ Սարգսյանի հետ նպաստեցին, որ այդ վտանգավոր զարգացումները կանխվեն, այն է՝ Լևոն Տեր-Պետրոսյանը հրաժարական տա: Դրանից հետո ի՞նչ տեղի ունեցավ: Տեղի ունեցավ բոլորիս համար մի մեծ ողբերգություն, համահայկական ողբերգություն, հոկտեմբերի 27-ի սպանդը: Հոկտեմբերի 27-ից հետո իշխանություններն Արամ Սարգսյանին առաջարկեցին վարչապետի պաշտոն, նա էլ սիրով համաձայնվեց: Ավելին, հոկտեմբերի 27-ի դատաքննչական ողջ գործողությունների վերահսկողությունը վստահվել էր Արամ Սարգսյանին՝ նրան լիազորություն վերապահելով առաջադրելու

Գլխավոր դատախազին: Նրա առաջարկով Գլխավոր դատախազ նշանակվեց իրենց տանը մոտ կանգնած Բորիս Նազարյանը: Լավ, բա այն ժամանակ, եթե ինչ որ բան ուներ ասելու, եթե ինչ-ինչ հարցերի վերաբերյալ կասկածներ ուներ, ապա երկրի վարչապետն էր, երկրապահն ու բանակն էլ թիկունքին կանգնած էին (դա էլ ասեմ, ի պատիվ իրենց, որովհետև տղաները վառ էին պահում Սպարապետի հիշատակը), ո՞վ էր նրան խանգարում, թող ձայն հաներ: Բան ուներ ասելու, կրկնում եմ, թող ասեր: Բան ուներ անելու, թող աներ: Հիմնավորեր իր կասկածները, եթե այդպիսիք կային: Այդ դեպքում մենք էլ կգայինք, կողքդ առաջինը կկանգնեինք: Թե չէ ի՞նչ է ստացվում, այս իշխանությունները նրա համար լավն են այնքան ժամանակ, քանի դեռ պաշտոնի էր: Ի դեպ, այս ամենի մասին նրան հիշեցրեցի ի պատասխան ընտանիքիս ուղղված սպառնալիքների: Աստված էլ, թող ներվի ինձ, եթե երկնքից հրեշտակ ուղարկի՝ միևնույն է ինձ համար, սրբություն հանդիսացող ընտանիքիս հասցեին ով, ինչ անհարգալից խոսք ասաց՝ իմ կողմից համարժեք պատասխան կստանա: Տվյալ դեպքում պատասխան կստանա անձամբ ինքը: Ես շատ լավ տիրապետում եմ հայոց լեզվի նրբերանգներին և պատասխանել եմ Արամին ու ոչ թե նրա ընտանիքին, գերդաստանին: Վազգեն Սարգսյանն այլևս բոլորինս է: Եվ հիմա նա, տեսեք, ի՞նչ է անում: Մեր ազատամարտիկների ամենանուրբ լարերի վրա է խաղում, Գեղամյանին փորձում են հերոսի շիրիմը, հիշատակը չհարգող մարդու տեղ ներկայացնել, հավանաբար, իրենք այդպիսին լինելով հանդերձ: Եղբորդ պատգամը կատարիր, հետ կանգնիր Լևոնից, ոնց որ ես եմ այսօր դա սրբությամբ կատարում: Կամ էլ ինձ մյուս քննադատողը, Լևոնի թիմակիցներից մեկ ուրիշը, ալան-թալանի տարիներին 2, թե 5 վաուչերով Մեղրու պանրի գործարանը սեփականաշնորհել է, դրանից հետո, հիմա, հո իմ կողքը չի՞ կանգնի, Լևոնի կողքը պետք է կանգնի: Մարդը ուրացող չէ, հիշում է, որ Լևոնի օրոք է դա գրոշներով սեփականաշնորհել: Հիմա Լևոնը կանգնում, հրապարակներում ուրանում է 1970-ական, 1980-ական թվականների մեր ժողովրդի արարումները, երբ այդ ընթացքում 14 տարի մեր պետության ղեկավարն է եղել երջանկահիշատակ, մեծ հայ, Ազգային հերոս Կարեն Սերոբի Դեմիրճյանը, ես էլ բախտ եմ ունեցել, նրա օգնականն եմ եղել: Սևացնում է մի ամբողջ սերնդի քրտնաջան աշխատանքը, զրոյի է հավասարեցնում: Դա էլ այն դեպքում, երբ Հայաստանն այդ տարիներին ամենազարգացած երկրներից մեկն էր ոչ միայն Սովետական Միությունում, այլև Առաջավոր Ասիայում: Եվ այս մարդիկ է, որ խաչակրաց արշավանք են սկսել Արտաշես Գեղամյանի դեմ: Հավատացնում եմ ձեզ, հարգելի գյումրեցիներ, դրանց մոտ ոչ մի բան չի ստացվելու: Օգտվելով առիթից՝ ուզում եմ այսօր դիմել մեր երկրապահներին. թող իմանան, որ ես ամենաբարձր գնահատականին եմ արժանացրել Ազգային հերոսներ Կարեն Դեմիրճյանին, Վազգեն Սարգսյանին: Ավելին, եթե ձեր ձեռքի տակ կա մեր «Արարման ծրագիրը», ապա կարող եք այնտեղ տպագրված տեսնել իմ, նաև տեղակալիս՝ Ալեքսան Կարապետյանի ելույթները, որտեղ ամենաբարձր գնահատականն է տրված Վազգեն Սարգսյանին: Իմ հակառակորդները պարզապես բանավեճի դաշտն են ուզում փոխել, որովհետև իմ քննադատու-

թյանը ոչ մի հակափաստարկ ներկայացնել չեն կարող: Նրանք շատ լավ գիտեն, որ այն, ինչ ասում եմ, դեռ շատ մեղմ է ասված, ես խնայում եմ իրենց: Որովհետև կարելի է շատ ավելի բաներ ասել, բայց չեմ ասում, որովհետև չեմ ուզում, որ մեր ազգը վերջնականորեն հիասթափվի նրանցից: Հիասթափվի այն աստիճան, որ ասի. բա մենք էլ կարծում էինք սրանք հայրենասեր, նորմալ մարդիկ են:

Լ. – Նախընտրական գործընթացներում, կարծես թե, միավորումների առաջացման ուրվագիծ զգացինք: Հնարավո՞ր է, Ձեր կողմից էլ դա լինի, որ Ձեզ միավորվեն կամ Դուք միավորվեք:

Ա.Գ. – Ես դրել եմ ազգը միաբանելու խնդիր: Խնդիր եմ դրել ազգը կոնսոլիդացիայի ենթարկելու և, ամենևին պատահական չէ, որ մեր «Արարման ծրագրի» կարգախոսն է՝ «Հանուն ազգային միաբանության»: Ազգն այսօր, քան երբևէ կարիք ունի միաբանվելու: Այսօր էլ խիստ արդիական է մեծ պոետի հորդորը. «Ով հայ ժողովուրդ քո միակ փրկությունը, քո հավաքական ուժի մեջ է»: Այդ գաղափարն այսօր ավելի, քան երբևէ պահանջված է: Եվ դրա համար է, որ չես կարող անտարբեր ու հանգիստ նայել, թե ոմանք ինչպես են փորձում բզկտել մեր ժողովրդին, խարխլել Հայոց պետականությունը: Իսկ մարդիկ էլ հակված են հակասությունների գիրկն ընկնել, որովհետև նրանց մեծամասնության սոցիալական վիճակը, ցավոք, շարունակում է շատ ծանր մնալ: Եվ այդ պարագայում նրանք դառնում են դյուրահավատ, հատկապես շռայլ խոստումների նկատմամբ, որովհետև մարդիկ վատ ապրուստ ունենալով հուսահատվել և հիասթափվել են: Շատերը իշխանության հանդեպ կորցրել են հավատը, ցանկացած գործչի նկատմամբ էլ զգուշավոր են: Հրապարակում իրարամերժ այնքան խոստումներ, կարգախոսներ են հնչում, որ մարդիկ մնացել են շիվար՝ չգիտեն ո՞ւմ լսեն, ո՞ւմ հետևից գնան, ո՞ւմ հավատան, որովհետև իրենց խաբված են զգում: Մեզանում շատացել են Արութին Զիմզիմովները, հիմա շատերն են առաջնորդվում՝ «Խաբումին ու խաբումինք» կարգախոսով: Ահա սա է իրավիճակը:

«ՇԱՆԹ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆ ՆՎԵՐ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ «ՀԵՌԱՆԿԱՐ» ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱՇԱՐԻ ՀՅՈՒՐԸ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆՆ Է

(05.02.2008 թ.)

ՆՎԵՐ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ – Սա նախընտրական այս քարոզչության շրջանակներում իմ երկրորդ հանդիպումն է «Ազգային Միաբանություն կուսակցության» ղեկավար Արտաշես Գեղամյանի հետ: Բարև Ձեզ:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ– Բարև Ձեզ:

Ն.Մ.– Ես շատ հակիրճ ներկայացնեմ մեր նախորդ հանդիպման բովանդակությունը: Մենք հասցրեցինք ավելի շատ խոսել Ձեր ծրագրի տնտեսական դրույթներից: Պետք է խոստովանել, որ այդ դրույթների շատ կետերի հետ և՛ ես, և՛ շատ հեռուստադիտողներ համաձայն ենք: Խոսքը տնտեսության վիճակին տրված գնահատականների մասին է, թեև դրանք տարբեր են լինում: Այս տաղավարում տարբեր գնահատականներ են հնչում: Եթե Դուք հետևել եք, այդ տարբերությունները նկատած կլինեք: Ինձ մոտ մի փոքր չափազանցության տպավորություն թողեց նանոտեխնոլոգիաների մասին Ձեր առաջարկած մոտեցումները: Դրանից հետո ես մասնագետների հետ զրուցեցի, նրանք խորհուրդ տվեցին «նանոտեխնոլոգիա» բառն առայժմ Հայաստանում զուսպ և զգույշ օգտագործել: Այսքանը՝ այդ մասով: Հիմա ես առաջարկում եմ քարոզչական ներկա փուլում ավելի շատ խոսել այս ընթացքում արձանագրված քաղաքական գործոններից: Դուք ի՞նչ եք նկատել՝ մեր երկրում քաղաքական մշակույթը այդպիսի փուլերում, եթե փորձարկվում է, փորձարկման ի՞նչ շրջան է անցնում: Եվ այդ փորձարկումը խոսում է ի շա՞հ քաղաքական մշակույթի, թե՞, ընդհակառակը, մենք հետ ենք գնում:

Ա.Գ.– Անշուշտ, Ձեր բարձրացրած հարցը շատ տեղին է: Սակայն մենք ձեզ հետ ականատեսն ենք այն բարդ զարգացումների, որ թևակոխել է Հայաստանի Հանրապետությունը: Եթե այժմ խոսենք այլ հարցերի մասին, ապա տասնյակ հազարավոր, հարյուր հազարավոր հեռուստադիտողների համար հասկանալի չի լինի: Եթե այսօր, հիմա, մեր զրույցի ժամանակ զուտ տեսական խնդիրներ արծարծենք, ապա մեզ կարող է չհասկանան: Ինչ վերաբերում է նանոտեխնոլոգիաների հարցին զգույշ մոտենալուն, ապա, հավանաբար, այդ մարդիկ մտքի թռիչք ասածը չունեն: Եթե դու խնդիր չդնես, եթե դու չերազես ինչ-որ նպատակի հասնելու, երկնային մանանայի նման դա երբեք քո առաջ չի թափվի:

Ն.Մ.– Հասկանալի է, ուղղակի ինքը շատ թանկ հաճույք է, մեր գրպանի համար չէ:

Ա.Գ.– Բացարձակապես համամիտ չեմ այդ տեսակետին: Մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտը նույն նանոտեխնոլոգիաների որոշակի ոլորտով զբաղվում է արդեն տասնամյակներ: Պարզապես նանոտեխնոլոգիա ասածի իմաստը, հավանաբար, միակողմանի են պատկերացնում: Ընդհակառակը, Հայաստանի համար գտած ոլորտ է, որովհետև այնտեղ ոչ թե պետք է հզոր արդյունաբերություն ունենալ, այլ պետք է ունենալ հզոր միտք: Գիտական մշակույթ պետք է ունենալ, այն էլ՝ ձևավորված: Իսկ Հայաստանի ակադեմիական ինստիտուտների գիտական ներուժը, կարծում եմ, լիուլի բավարար է այդ խնդիրները լուծելու համար: Վերցրեք ակադեմիկոսներ Գալոյանի դպրոցը, Ղարագյոզյանի դպրոցը, Ղարիբջանյանի դպրոցը:

Ն.Մ.– Այդ դեպքում փորձեմ վերաձևակերպել հարցը: Մեր առաջ հիմա գերխնդիր է դրված, ասենք, արտաքին առևտրի բացասական հաշվեկշռի աճը զսպելը, թե՞ նանոտեխնոլոգիաներով զբաղվելը:

Ա.Գ.– Դրանք իրար հետ փոխշաղկապված խնդիրներ են, չնայած կարող է թվալ՝ ի՞նչ կապ ունեն: Երեկ ես լսեցի ֆիննախարար, հարգելի Վարդան Խաչատրյանի ելույթը ձեր ստուդիայում, ձեր տաղավարում: Շատ հիմնավոր, պրոֆեսիոնալ մակարդակով նա բացատրեց, որ նախորդ իշխանությունների ճամարտակությունները, թե, իբր, երկրում տնտեսական բարեփոխումների հիմքը դրվել և վերելքն արձանագրվել է իրենց ժամանակ, ամենևին այդպես չի եղել: Սակայն, ճիշտն ասած, ինձ մի քիչ մտահոգեց հարգելի Վարդանի այն տեսակետը, որ ինքը վտանգ չի տեսնում արտահանման և ներմուծման ստեղծված դիսբալանսի մեջ: Հավանաբար, նրան հիշողությունը դավաճանեց, երբ ասաց, որ 2007-ի արտահանման աճի տեմպը եղել է 134, թե 137%, մոտավորապես այդքան էլ եղել է ներմուծման աճի տեմպը, մինչդեռ, ավա՜ղ, դա այդպես չէ: 2007թ. արտահանման աճի տեմպը 2 անգամ զիջել է ներմուծման աճի տեմպին: Սա շատ վտանգավոր միտում է, որովհետև այսօր ներմուծման ծավալները գրեթե 2 անգամ ավելացել են, եթե այդ ցուցանիշը համեմատելու լինենք 2006 թ. ներմուծման ծավալների հետ, 3 անգամ էլ ավել են, քան արտահանման ծավալները: Այսօր այդ ծավալները 50%-ով ավելի են, քան 2007թ. եղել է ՀՀ բյուջեն: Սա շատ մտահոգիչ երևույթ է: Ըստ որում, մի դիտարկում էլ անենք, որ Վարդան Խաչատրյանի կուսակիցը՝ Ռազմիկ Զոհրաբյանը, վաղը հանկարծ Վարդանին չմեղադրի անլրջության մեջ, ինչն արել էր իմ հասցեին: Ուստի, մի ճշտում էլ ինձ թույլ տամ կատարել. երբ երեկ եթերից Վարդան Խաչատրյանը հիշատակեց հետպատերազմյան Գերմանիայի օրինակը, հնչեցրեց, իր խոսքով ասած «ինչ-որ Ռիխարդի»: Հետպատերազմական Գերմանիայում, ավա՜ղ, Ռիխարդ անունով կամ ազգանունով ոչ մի ազդեցիկ, ճանաչված գործիչ չի եղել:

Ն.Մ.– Զո՞րգեն է եղել:

Ա.Գ.– Ռիխարդ Զորգեն, միանգամայն ճիշտ եք, Ճապոնիայում էր, այնտեղ էլ մահկանացուն կնքեց: Բայց եղել է Լյուդվիգ Էրխարդը, որի անվան հետ է կապվում հետպատերազմյան Գերմանիայի տնտեսական հրաշքը: 1963-66 թթ. նա եղել է այդ երկրի կանցլերը, իսկ մինչ այդ՝ Կոնրադ Ադենաուերի կառավարությունում զբաղեցնում էր էկոնոմիկայի նախարարի պաշտոնը: Ըստ

որում, Կոնրադ Ադենաուերը, ում անունը նույնպես Վ. Խաչատրյանը հիշատակեց, ինչպես ասացի, պաշտոնավարել է մինչև էրխարդը: Կրկնում եմ, ես այս ճշտումն արեցի, որպեսզի հանկարծ Ռազմիկ Զոհրաբյանը Վարդան Խաչատրյանին այդ վրիպումների համար (որոնք թույլ էին տրվել պատասխանատու այնպիսի հարցազրույցի ժամանակ, որն երեկ էր տեղի ունեցել) անլրջության մեջ չմեղադրի: Անցանք առաջ:

Ն.Մ.– Ձեր խոսքում Դուք նորից հիշատակեցիք նախկին իշխանություններին: Ես պարզապես, զուտ մարդկայնորեն ուզում եմ հարցնել՝ Ձեր մեջ սա նո՞ր չարություն է, թա՞րմ չարություն է, դա թշնամա՞նք է, չարությո՞ւն է, ինչպիսի՞ բնութագիր ունի:

Ա.Գ.– Այ, տեսեք, ձեր հարցի մեջ արդեն մեկնաբանություն կա: Ստացվում է այնպես, որ երբ հավատարիմ ես մնում որդեգրածդ գնահատականներին, որ տվել ես նախորդ իշխանությունների իշխանավարության տարիներին, այն է՝ 1997 թ. հոկտեմբերի 18-ին «Գոլոս Արմենիի» ռուսալեզու թերթում հրապարակված կոչում՝ ուղղված համայն հայությանը, դա համարվում է չարություն կամ թշնամանք: Ի դեպ, այդ կոչի տակ ստորագրել էին ակադեմիկոսներ Սիլվա Կապուտիկյանը, Ռաֆայել Ղազարյանը, Վլադիմիր Խոջաբեկյանը, անվանի դերասան Սոս Սարգսյանը, տաղանդավոր բանաստեղծ Ռազմիկ Դավոյանը, արձակագիրներ Ռուբեն Հովսեփյանը, Ալվարդ Պետրոսյանը, Արմեն Հովհաննիսյանը, ձեր խոնարհ ծառան, իմ գործընկեր և տեղակալ Ալեքսան Կարապետյանն ու նշանավոր այլ մարդիկ: Այդ կոչում տրված գնահատականները, անհամեմատ ավելի սուր են, անհամեմատ ավելի խիստ են, քան այն քննադատությունը, որ այսօր լսում եք իմ շուրթերից: Ուստի, ես հավատարիմ եմ մնացել իմ սկզբունքներին:

Ն.Մ.– Պարոն Գեղամյան, քննադատությունը գործող կամ նախորդ իշխանությունների նկատմամբ նորմալ երևույթ է: Դա պետք է լինի: Ուղղակի մի տեսակ տպավորությունն այնպիսին է, որ Դուք Ձեր քարոզչական գործերը մի կողմ եք թողել և զբաղվում եք միայն նախկին իշխանություններով: Ես վերջերս անձամբ Ձեզանից լսեցի կուսակցական ակտիվի հետ զրույցում, որ Դուք ասում էիք՝ «Արարման ծրագիրը» կարելի է մի կողմ դնել, պետք է զբաղվել սրանով: Ես ուզում եմ դրա բուն դրդապատճառը հասկանալ: Դուք շեղվում եք Ձեր քաղաքական գործերից, հանուն ինչի՞:

Ա.Գ.– Եթե մենք հիվանդ ունենք, որը շտապ վիրահատության կարիք է զգում, սակայն դու գալիս ես ու այդ հիվանդին բժշկության նորագույն նվաճումների մասին դասախոսություն ես կարդում, իսկ հիվանդն այդ ընթացքում մահանում է: Արդյոք սա ողբերգական զավեշտ չէ՞: Չէ՞ որ դասախոսությունդ էլ ֆորմալ առումով բարի նպատակով էիր կարդում, որ հիվանդին ոգևորես, ասես, որ բուժման ճանապարհ, այնուամենայնիվ, կա: Մինչդեռ հրատապ էր սկալպելը վերցնել ու վիրահատել: Ես այսօր երկրի համար վտանգ նախորդներից եմ սպասում: Եվ խնդիր եմ դրել, այո, այդ վտանգի առաջն առնել: Ուրիշ բան, որ դա ամենաանշնորհակալ աշխատանքն է քարոզչության տեսակետից: Ուրիշ բան, որ անգամ իսկ ձեր նման բազմափորձ

լրագրողը տարակուսում է:

Ն.Մ.– Բայց չէ՞ որ դրանով վնասում եք Ձեզ:

Ա.Գ.– Ահա, այստեղ, ինչպես ասում են, приехали, հասանք: Ես, այո, ներկայիս քարոզարշավով ինձ վնասում եմ: Մի կարճ պատմություն պատմեմ: 1820-ական թվականներին լորդ Ջորջ Գորդոն Բայրոնը հույն-թուրքական պատերազմի ականատեսն է եղել: Եվ նա ապշած էր մնացել, երբ իրեն պատմել էին, թե աթենացիները, հույները, երբ պաշարում էին Աթենասի Ակրոպոլիսը…

Ն.Մ.– Պարոն Գեղամյան, հեռուստադիտողը կհասկանա՞ ինչի մասին եք պատմում:

Ա.Գ.– Այո, այո, կհասկանա, եթե չընդհատեք, շատ ավելի շուտ կհասկանա: Շարունակեմ միտքս. ականատեսն է եղել, թե ինչպես հույները, երբ փորձում էին ազատագրել թուրքերի զավթած Ակրոպոլիսը, դիմեցին վերջիններիս՝ խնդրանքով: Պաշտպանվող օսմանների փամփուշտները վերջանում էին, և նրանք որոշում են կայացնում տաճարի զանգերը ձուլել, որ փամփուշտ պատրաստեն: Ավելին, որոշում են մ.թ.ա. 5-րդ դարի այդ հիասքանչ կոթողի մետաղական բաղադրիչները նույնպես ձուլել: Հույները, երբ այդ ամենի մասին իմանում են, արկղերով արճիճ են տալիս թշնամուն, որ այդ արճիճը ձուլեն, փամփուշտ, պարկուճ դարձնեն և սպանեն հենց իրենց՝ հույներին. միայն մեկ պայման են դնում թուրքերի առաջ, որ ոչ մի պարագայում Աթենասի Ակրոպոլիսի և ոչ մի զանգ և ոչ մի մետաղական բաղադրիչ չօգտագործվի: Գիտակցված գնում են զոհողությունների, որ փրկեն Ակրոպոլիսը: Հիմա, ես գիտակցված գնում եմ ՀՀՇ-ական քարոզչամեքենայի կրակի բերանը, որ Հայոց պետականությունը փրկեմ: Եվ համոզված կարող եմ ասել. շատ կարճ ժամանակ հետո այս պատմությունը բոլորը կհիշեն, բացառությամբ իմ մոլեռանդ թշնամիների և բացառությամբ ծույլերի ու պնդաճակատների, ում ընդհանրապես ոչինչ չի հետաքրքրում: Այնպես որ, ես հանգիստ եմ:

Ն.Մ.– Պարոն Գեղամյան, երկիր ենք, այս ամենը կավարտվի, Դուք Ձեր թշնամիների հետ պետք է ապրեք այս երկրում:

Ա.Գ.– Ես թշնամի չունեմ: Ես ունեմ միայն և միայն բարեկամներ ու չհասկացողներ՝ մոլորյալներ: Եվ այդ մոլորյալներին ես սիրով …

Ն.Մ.– Եթե Լևոն Տեր-Պետրոսյանը չառաջադրվեր, Դուք լրիվ ա՞յլ գործով էիք զբաղվելու:

Ա.Գ.– Կրկնում եմ, ես զբաղվելու էի իմ քաղաքական դիրքորոշումները հրապարակավ հայտարարելով և ժողովրդի սեփականությունը դարձնելով: Նախորդ իշխանությունների հետ պայմանավորված՝ ասվել է այն, ինչ 1997թ., դրան ես ոչ մի նոր բան չեմ ավելացնում:

Ն.Մ.– Այսինքն՝ Լևոն Տեր-Պետրոսյանի առաջադրումը փոխե՞ց Ձեր գործելաոճն այս ընտրություններում: Կարո՞ղ ենք այդպիսի պնդում անել:

Ա.Գ.– Որոշակի կորեկտիվներ մտցրեց: Բայց ես ուրախանում եմ ձեր մարդասիրական դրսևորումներով, ուրախանում եմ, որովհետև դուք էլ եք

գիտակցում, որ նախորդ իշխանություններն այն աստիճան ծանր վիճակում են հայտնվել իմ քննադատությունից հետո, որ անգամ իսկ Նվեր Մնացականյանը, լինելով չեզոք մեկնաբան, այսօր հետևողականորեն իրենց թասիբն է պահում: Դա Ձեր կողմից շատ մարդասիրական քայլ է, և ես ըստ արժանվույն եմ գնահատում ձեր դրսևորած այդ մարդասիրությունը:

Ն.Մ.– Իմ գործի բնույթն է այդպիսին: Եվ այսպես, անցնենք առաջ. իմ հյուրն այսօր Արտաշես Գեղամյանն է: Մենք առաջին հատվածում զրուցել ենք և նախատեսված ժամանակի կեսն օգտագործել: Կօգտագործենք երկրորդ կեսը: Խորհրդարանական ընտրություններից հետո իմ մոտ տպավորություն էր ձևավորվել, որ քաղաքական փորձառու գործիչը կվերանայի իր հնարավորությունները: Այսինքն՝ կարող է պաուզա հայտարարել, կարող է փոխել իր ռազմավարությունը, ակտիվ քաղաքականությունից մի պահ հետ կանգնել: Անգամ Ալբերտ Գորը շատ չնչին տարբերությամբ պարտվեց Բուշին, և նրա քաղաքական կենսագրության այդ էջը փակվեց: Նա այլևս քաղաքական գործիչ չէ: Դուք այդ քայլին չգնացիք: Դուք այսօր ակտիվ քաղաքականության մեջ եք և փորձում եք պաշտպանել Ձեր դիրքերը նախագահական այս ընտրություններում: Ասեք՝ սա ի՞նչ է:

Ա.Գ.– Սա պարզապես սեփական տեսակետների անհրաժեշտության գիտակցումն է: Սա պարզապես մեր հասարակության կողմից սեփական պահանջվածության գիտակցումն է: Տեսեք՝ ի՞նչ է ստացվում: Երկիրը ծայր աստիճան բարդ և վտանգավոր մարտահրավերների առաջ է կանգնած, իսկ Նախագահի 8 թեկնածուներ, միգուցե բացառությամբ մեկի, խոսում են ամեն ինչի մասին, բացի այն վտանգների, որոնք դարանակալել են երկրի առաջ: Չեն խոսում մարտահրավերներից, որովհետև շատ շուտ պարզ կդառնա, որ տվյալ պարագայում իրենց հետաքրքրում է, ավա՜ղ, միայն և միայն բաղձալի աթոռին տիրանալու գաղափարը: Ես ուրիշ խնդիր եմ լուծում, այն է՝ մեր ժողովրդին առարկայորեն բացատրելու, թե զարգացումների նման ընթացքն ինչի կարող է հանգեցնել: Երբ դու գիտես, որ քո ստեղծած, քո կազմած «Արարման ծրագիրը» քննություն է բռնել տնտեսագիտական ամենաժամանակակից տեսության ռահվիրաների կողմից, քննություն է բռնել անգամ իսկ անցած տարիների ընթացքում, երբ «Հակաճգնաժամային ծրագրին» ի զարգացում և ի լրումն եկավ, դու լռելու իրավունք չունես: Եվ, թերևս, այդ գիտակցումն է, որ կարևորել եմ առաջադրվելիս:

Ն.Մ.– Սա այն դեպքն է, երբ քաղաքական հաշվարկները տեղի՞ն չեն, պետք է էմոցիաներո՞վ առաջնորդվես:

Ա.Գ.– Բացարձակապես, քաղաքական այն գործիչը, որը էմոցիա չունի, նա իրավունք չունի քաղաքականությամբ զբաղվելու: Այ, դուք շատ հետաքրքիր հարցի մոտեցաք. խնդրում եմ, ուշադիր հետևեք մեր հռետորների ելույթներին: Հոգի ասածը չկա, սիրտ ասածը չկա, ցավ ասածը՝ դեմքներին գրված չէ:

Ն.Մ.– Դա ինձ հուշում է, որ քաղաքականությունը, այնուամենայնիվ, բիզնես է: Մարդիկ հաշվարկ են անում և ասում են այն, ինչը շահե-

կան է:

Ա.Գ.– Եթե բիզնեսմենի աչքով ես նայում, դուք իրավացի եք, դա բիզնես է: Եթե դու հավերժության մեջ քո տեղն ամրագրելու նպատակ ունես, ապա դա դառնում է տառապանքի ճանապարհ: Դա ինքնազոհության, ինքնազոհաբերության ճանապարհ է: Ես, թերևս, երկրորդն եմ ընտրել, որովհետև եթե բիզնեսով զբաղվելու ձգտում ունենայի, ես դրա հակումն ունեի և ժամանակին զբաղվում էի, սակայն բիզնեսի նկատմամբ հետաքրքրությունը մեջս կորավ, որովհետև զգացի, որ ինձանից շատ ավելի կատարյալ բիզնեսմեններ կան: Ավելի հեռանկարային, մեծ գումարներ սարքող մարդիկ կան, որոնց էությունը, հոգեկերտվածքը դա է: Իմ էությունը դա չէ: Իմ էությունը բացարձակապես ուրիշ հարթության վրա է, որը գնալով հասկանալի կդառնա մարդկանց:

Ն.Մ.– Այդ հարթության վրա լիքը վտանգներ կան: Օրինակ, թեկնածու Արթուր Բաղդասարյանին սպառնացել են արդեն, կարծեմ, Ձեր կենսագրության մեջ էլ կան Ձեզ ուղղված այդպիսի սպառնալիքներ:

Ա.Գ.– Գիտեք, այդ սպառնալիքները, կարծում եմ, ավելի են ուժեղացնում այն մարդուն, ում հասցեին սպառնալիք է հնչում: Մասնավորապես, իմ հասցեին ինչքան սպառնալիք հնչել է, անտարակույս, ես դրանից հետևություններ արել եմ, ավելի եմ համոզվել իմ խոսքի ճշմարտացիության մեջ, իմ համոզմունքների ուժգնության մեջ: Երբ խոսքով չեն կարող դրա առաջն առնել, հակափաստարկով դրա ազդեցությունը չեն կարող չեզոքացնել, ճարահատյալ ընտրում են սատանային ներհատուկ ճանապարհ: Կյանքը մարդուն շնորհել է բարձրյալը և միայն նա կարող է ասել՝ արդեն ժամանակդ լրացել է:

Ն.Մ.– Լավ, ինչո՞ւ ենք մենք այդպիսին: Մի՞թե մեր քաղաքական մշակույթը պետք է միայն այդ փոխադարձ բզկտոցը լինի: Ասենք Ձեզ մեկը պիտակավորի, Դուք հակադարձեք նրան: Եվ սա՞ է լինելու քաղաքական պրոցես կոչվածը:

Ա.Գ.– Եթե մարդիկ, բառիս իսկական առումով, կիլոմետրերով հեռու են ժամանակակից աշխարհաքաղաքականությունից, տնտեսական ժամանակակից տեսություններից, նրբերանգներից, նրանց այլ բան չի մնում, քան վիրավորելը, սպառնալը:

Ն.Մ.– Բայց Դուք էլ եք ներքաշվում:

Ա.Գ.– Ես հարկադրված եմ միայն և միայն պարզաբանումներ անել, որովհետև լռելու պայմաններում կասեն. տեսա՞ք, Գեղամյանին ինչպես լռեցրինք, կնշանակի, նրա հասցեին ասվածը ճշմարտություն էր: Սա է խնդիրը:

Ն. Մ.– Ես ենթադրում էի, ու ավելի լավ կլիներ, գոնե իմ աշխատելու համար, որ Գեղամյանը կդներ իր նախընտրական ծրագիրը, թեկնածուներից մյուսը կդներ իր նախընտրական ծրագիրը և Դուք կբանավիճեիք նախընտրական ծրագրերի շուրջ: Այդպիսի բան առ այսօր տեղի չի ունեցել:

Ա.Գ.– Ծրագիրս թևիս տակ դրած ուր գնում, սեղանին եմ դնում և ասում.

ցանկացած թեզի շուրջ եկեք բանավիճենք: Թող որևէ թեզ վերցնեն, ասեն՝ սա սխալ է: Ես, օրինակ, ցավոք, գործընկերներիս, Նախագահի մյուս թեկնածուների ծրագրերում բազում սխալներ եմ տեսել, բայց ձեռնպահ եմ մնում այդ ամենի մասին ասել, որովհետև կասեն՝ Գեղամյանը հիմա էլ Լևոնին թողեց, կպավ էս մարդու ջանին: Այ, այդ վիճակն է: Լռում ես, մյուսներն ասում են՝ տեսա՞ր, բան չգտավ ասելու, մինչդեռ այնտեղ…

Ն.Մ.– Դուք այս անգամ նախկինի պես հրապարակային հանրահավաքներից, հանդիպումներից, կարծես թե, հրաժարվում եք: Դա մտածվա՞ծ է:

Ա.Գ.– Անշուշտ, և ասեմ, թե ինչու: Ինչքան էլ կազմակերպական աշխատանքներ ծավալենք, մենք այդ ոլորտում երբեք ու երբեք իշխանության թեկնածուին՝ Սերժ Սարգսյանին, հաղթել չենք կարող, այն պարզ պատճառով, որ հնարավորությունները համաչափ չեն:

Ն.Մ.– Միջոցնե՞րը նկատի ունեք:

Ա.Գ.– Ամենը, դրանք բոլորը՝ միջոցները, «ադմինիստրատիվ ռեսուրս» կոչվածը, միմյանց հետ փոխկապակցված են: Իսկ եթե ես գիտեմ, որ ինչ որ բնագավառ կա, որտեղ ես հաղթելու շանսեր չունեմ կամ այդ շանսերը նվազագույն են, ապա նման պարապ գործով չեմ զբաղվում, ժամանակս չեմ վատնում: Եվ հետո ասեմ ձեզ. ի տարբերություն 2003 թ. ընտրությունների, 2008 թ. նախընտրական քարոզարշավի մասնակիցներից բոլոր թեկնածուները շռայլորեն օգտվում են հեռուստատեսության հնարավորություններից: Սա երկրորդ հանդիպումն է, որ ես ձեր ստուդիայում եմ, «Շանթի» հեռուստալսարանը նվազագույնը կազմում է 400 հազար մարդ:

Ն.Մ.– Ավելին:

Ա.Գ.– Ավելին, հիմա ո՞րն է ավելի լավ, եթե 400 հազարից 200 հազարն էլ իրենց հեռուստացույցներն անջատած էլ լինեն, մյուս 200 հազար մարդու հետ ես զրուցելու հնարավորություն ունեմ: Ըստ որում, հանգիստ մթնոլորտում, քաղաքակիրթ մթնոլորտում:

Ն.Մ.– Նրանք, ովքեր մեծ հանրահավաքներ են կազմակերպում, սխա՞լ են վարվում:

Ա.Գ.– Ոչ թե սխալ են վարվում, այլ նրանք պարզապես ի չիք են դարձնում, չեզոքացնում են այն մտայնությունը, որը փորձում է ստեղծել նախորդ իշխանությունը՝ հայտարարելով, որ իրենք արդեն հաղթել են, որ ժողովրդի ճնշող մեծամասնությունը սատարում է իրենց: Հանրահավաք են անում Ազատության հրապարակում, հետո, ընդունենք իշխանության ներկայացուցիչն է հանրահավաք հրավիրում Երևանի ամենատարբեր շրջաններում, մասնավորապես, կայարանամերձ հրապարակում հավաքում է կրկնակի անգամ ավելի շատ մարդ, քան ամբողջ հանրապետությունից առանձին թեկնածուներ հավաքում են օպերայի հրապարակում իրենց կազմակերպած հանրահավաքում: Դա մարտավարություն է և եթե գիտես, որ բնագավառ կա, որտեղ դու կարող ես հաղթել, պարտադիր պետք է օգտվես դրանից, ինչից հմտորեն օգտվում են և ճիշտ են անում:

Ն.Մ.– Պարոն Գեղամյան, Ձեր կուսակիցները երբեմն Ձեզ թագավո-

րի հետ են համեմատում: Մի անգամ լսեցի, անգամ «սուրբ» արտահայտությունը հնչեց: Ես ուզում եմ անկեղծորեն հասկանալ, դա դո՞ւր է գալիս, թե՝ ոչ: Որպես երևույթ՝ ինչպե՞ս է կանխվում Ձեր կողմից:

Ա.Գ.– Եթե դուք ի նկատի ունեք, որ հայտարարելուց հետո իրենք Հայաստանում ցանկանում են միապետություն հիմնել, իհարկե, դուրս չի գալիս: Բայց եթե ի նկատի ունեք այն, որ ուզում են ինձ ընդգծված տարբերեն մյուս թեկնածուներից կամ էլ նրանց չարամիտ արտահայտությունները մարեն, նրանց ջղայնացնեն, ապա այդ առումով թող ասեն: Գեղամյան Արտաշեսը ինչպիսին որ ծնվել է, այդպիսին էլ լինելու է: Թագավոր մարդ լինելը պետք է իր գիտակցության մեջ լինի: Թագավոր լինելն ամենևին պայմանավորված չէ այն բազկաթոռով, որի վրա նստած ես: Դարբինն էլ կարող է թագավոր լինել, ասեն՝ թագավոր մարդ է: Խառատը կարող է լինել, ֆերմերը կարող է լինել, ասեն՝ թագավոր մարդ է, ի նկատի ունենալով նրա վեհ ներաշխարհը: Իսկ եթե Կորյուն Առաքելյանը կամ Ալեքսան Կարապետյանը, Գագիկ Թադևոսյանը, Սարգիս Մուրադխանյանը, եթե նման բան անգամ իսկ ասում են, նրանք դրա մեջ բացարձակապես այն իմաստը չեն դնում, որը հեգնանքի արժանանա: է, հետո, թագավորներն էլ վատ մարդիկ չեն:

Ն.Մ.– է, ով է ասել, ուղղակի ժամանակակից տերմին չէ: Ավարտենք և մնացածը թողնենք հաջորդ հանդիպմանը, եթե այդպիսի հնարավորություն ունենանք:

Ա.Գ.– Օգտվելով առիթից՝ պարզապես ուզում եմ 2 օր առաջ լույս տեսած իմ «Ելույթների, հոդվածների, հարցազրույցների» ժողովածուն, 395 էջի վրա, գրված են 2006-2007թթ., բոլոր իմ ելույթները, հարցազրույցները և հոդվածները…

Ն.Մ.– Եթե ինձ եք նվիրելու, խնդրում եմ մակագրեք:

Ա.Գ.– Նախօրոք մակագրել եմ, որ եթերային ժամանակ չկորցնենք: Ահա այս գիրքը կարդալիս ընթերցողը մեկ անգամ ևս կհամոզվի, որ իմ քաղաքական մոտեցումները մնացել են նույնը, անփոփոխ: Եվ մեր հեռուստադիտողներին հուշեմ մի բան ևս. այսօրվա «Գոլոս Արմենիին» թող անպայման կարդան: Հեղինակավոր «Ռեգնում» գործակալությանը տված իմ հարցազրույցը շատ և շատ հարցերի պատասխան է տալիս: Եվ ամենևին պատահական չէ, որ այդ հեղինակավոր ինֆորմացիոն գործակալությունը տպագրել է այդ հարցազրույցը:

Ն.Մ.– Շնորհակալություն:

Ա.Գ.– Ես էլ եմ շնորհակալ: Հանձնելով իմ գիրքը Ձեզ՝ կարդամ ընծայագիրը, որ հեռուստադիտողն էլ իմանա, թե ինչ եմ մակագրել. «Հարգելի Նվեր Մնացականյանին՝ փառահեղ հայ մարդուն, հայրենասեր լրագրողին, երջանկության մաղթանքներով»: Անկախ նրանից, որ այսօր համառորեն փորձում էիք արդարացնել Լևոն Տեր-Պետրոսյանին, ես շարունակում եմ հարգել ձեզ:

«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ» ՌԱԴԻՈԿԱՅԱՆԻ ՀՅՈՒՐԸ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆՆ Է

(10.02.2008 թ.)

ԱՆՆԱ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ – Այսօր «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայության երևանյան գրասենյակում հյուրընկալել ենք ՀՀ Նախագահի թեկնածու, «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանին: Նրա հետ զրույցը ինձ հետ վարելու է մեր ծառայության աշխատակից Ռուզան Խաչատրյանը:

Պարոն Գեղամյան, անգամ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանը՝ Արմեն Հարությունյանը, օրերս վկայեց նախընտրական քարոզարշավի կողմնակալ լուսաբանման մասին: Մինչդեռ Դուք ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի դիտորդական առաքելության ղեկավարին հայտնել էիք, որ, ի տարբերություն 2003 թ. նախագահական ընտրությունների, այս անգամ լրատվամիջոցներն ապահովում են քարոզչական հավասար պայմաններ: Ինչի՞ վրա է հիմնված Ձեր այս գնահատականը:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ – Այդ եզրակացությունը հիմնված է իմ բոլոր հանդիպումների լուսաբանման որակի և մակարդակի վրա:

ՌՈՒԶԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ – Պարոն Գեղամյան, Ձեր ծրագրում գրեթե բոլոր ոլորտներին առնչվող առանձին բացված դրույթներ կան, նույնիսկ երիտասարդության հետ աշխատանք, բայց լրատվամիջոցների ազատության հետ կապված որևէ դրույթ չկա: Այսինքն՝ նոր Նախագահն անելիք չո՞ւնի Հայաստանում լրատվամիջոցների ազատության հետ կապված:

Ա.Գ. – Իմ հեղինակած «Արարման ծրագրում» կա ամենակարևորը, որ ապահովվի օրենքի գերիշխանությունը: Մինչդեռ գործող օրենքները, որոնք ընդունված են լրատվամիջոցների բնականոն աշխատանքն ապահովելու ուղղությամբ, հաճախ խախտվում են: Ուստի, եթե օրենքի գերիշխանությունն ապահովվի, լրատվամիջոցները պաշտպանված կլինեն:

Ռ.Խ. – Դուք բավական իդեալական ներկայացրիք, իհարկե, շատ լավ կլիներ, եթե այդպես լիներ: Այնուամենայնիվ, թեկնածուներից մեկը Սահմանադրական դատարան է դիմել՝ հենց լրատվամիջոցների հետ կապված խնդրի առիթով:

Ա.Գ. – Իմ տեղեկություններով ճիշտ այդ նույն թեկնածուն բազմաթիվ հրավերներ է ստացել հեռուստալրատվամիջոցների կողմից, սակայն մերժել է դրանք: Հրավերները մերժելուց հետո, երբ դիմում են Սահմանադրական դատարան՝ ասելով, որ խաթարվել են ՀՀ Նախագահի թեկնածուի իր իրա-

վունքները, հավասար լրատվական դաշտ ստեղծված չէ, կարծում եմ, նման բողոքն անհիմն է: Կգերադասեի անձիս հետ կապված հարցերին պատասխանել և ոչ թե մեկնաբանել այս կամ այն թեկնածուի գործողությունները:

Ա. Ի. – Ձեր անձի վերաբերյալ. ԵԱՀԿ դիտորդական առաքելության ղեկավարի հետ նույն հանդիպման ժամանակ, որ հիշատակեցի, Դուք նշել էիք, որ ընտրողների հետ հանդիպումներ կազմակերպելիս որևէ խոչընդոտ չեք արձանագրել: Այդպե՞ս է:

Ա. Գ. – Այո, այդպես է:

Ա. Ի. – Պարոն Գեղամյան, Ձեզ, օրինակ, հանդիպում անցկացնելու համար տրամադրվեց Արմավիրի մշակույթի տունը, որը մերժել էին տրամադրել Դաշնակցության թեկնածուին՝ նշելով, որ դա ՀՀԿ-ի շտաբն է, չի ջեռուցվում և այլն: Այնուամենայնիվ, ինչպե՞ս եք բացատրում Ձեր նկատմամբ իշխանությունների վերաբերմունքի նման փոխությունը:

Ա. Գ. – Վախենում են, հետո՝ հետս գլուխ չեն դնում, որովհետև գիտեն, եթե խոչընդոտներ առաջացնեն, իրենք ավելի մեծ վնասներ կկրեն, քան եթե ընդառաջ գնան իմ խնդրանքներին, առավել ևս, երբ խնդրանքներս տեղավորվում են «Ընտրական օրենսգրքի» պահանջների մեջ:

Ա. Ի. – Ձեր կուսակցության առանձին ներկայացուցիչներ հայտարարեցին կուսակցության շարքերից դուրս գալու վերաբերյալ: Օրինակ, Նոր Հաճնի Ձեր կազմակերպության նախկին ղեկավար Մարիետա Պետրոսյանը հանրահավաքում հայտարարեց, որ Արտաշես Գեղամյանը ժամանակին հայտարարում էր, որ պայքարում է ղարաբաղյան կլանի դեմ, սակայն այսօր այդ կուսակցությունը պայքարում է Լևոն Տեր-Պետրոսյանի դեմ՝ դրանով աջակցելով Սերժ Սարգսյանին: Հայտարարությունների մեկ այլ խումբ. երկրապահնե՞րը, հատուկ գնդի վետերաններն էին, որոնք դատապարտում էին Վազգեն Սարգսյանի և նրա ընտանիքի դեմ Ձեր հայտարարությունները: Ձեզ համար հե՞շտ է քարոզարշավը վարել նման պայմաններում:

Ա.Գ. – Իհարկե, հեշտ է: Ինչ վերաբերում է Նոր Հաճնի մեր տարածքային կազմակերպության ղեկավարին, կարծում եմ, նա ուշադիր չէր կարդացել իմ հեղինակած «Արարման ծրագիրը»: Եթե ուշադիր կարդար, ապա 8-25-րդ էջերում կտեսներ ամենասուր գնահատականները՝ առարկայական, հիմնավոր, փաստարկված, որ տրված են գործող իշխանություններին:

Ազգային հերոս Վազգեն Սարգսյանի հիշատակը պետք է հանգիստ թողնել: Երբ ուղղակիորեն, փաստարկված քննադատում ես նույն ազգանունը կրող անձին, և նա էլ ոչ մի հակափաստարկ չի ունենում քեզ պատասխանելու, ապա թաքնվում է մեր Ազգային հերոսի հիշատակի հետևում: Այն չափով, որ չափով սպառնացել ու վիրավորել են իմ ընտանիքի անդամներին, ճիշտ նույն չափով ես պատասխան եմ տվել տվյալ անձին և ոչ թե մեր Ազգային հերոսին, առավել ևս նրա ծնողներին, որոնց հանդեպ մեծագույն պատկառանք ունեմ, ինչը չէի ասի եղբոր մասին:

Ռ.Խ . – Պարոն Գեղամյան, Ձեր ծրագրային նպատակը երկրում համերաշխության, ազգային միաբանության հաստատումն է, բայց Ձեր

որոշ ելույթներ հակառակ տպավորություն են թողնում, հենց նույն թեմայի շուրջ սուր քննադատությունը:

Ա.Գ. – Առաջին տպավորությունը, այո, այդպիսին է: Մինչդեռ ազգային միաբանություն հաստատելը ենթադրում է անողոք պայքար այն անձերի, քաղաքական այն ուժի դեմ, ովքեր իրենց խնդիրն ու նպատակն են դրել ազգը պառակտելը: Այդ պայքարի շրջանակում է իմ քննադատությունը՝ ուղղված նախորդ իշխանություններին:

Ա. Ի. – Պարոն Գեղամյան, սակայն հենց Դուք էիք ասում, որ հասարակությունը փոփոխությունների է սպասում, նորմալ երկխոսություն և արարում է ցանկանում: Մինչդեռ, ինչպես արձանագրել է նաև «Ընտրությունը քոնն է» տեղական դիտորդական առաքելությունը, այս քարոզարշավի բնորոշ գիծ է դարձել անհանդուրժողականության մթնոլորտի սրացումը, երբ որ թեկնածուներն ավելի շատ ժամանակ են տրամադրում փոխադարձ մեղադրանքներին և քննադատությանը, քան սեփական ծրագրերի ու գաղափարների ներկայացմանը: Սա, ձեր կարծիքով, վերաբերում է նաև Ձե՞զ:

Ա.Գ. – Բացարձակապես ես դա չեմ վերագրում «Ազգային Միաբանության» որդեգրած քաղաքականությանը, որովհետև նախորդ իշխանություններին գնահատական տվել ենք իրենց իշխանավարության տարիներին՝ 1997թ. հոկտեմբերի 17-ին ընդունած կոչում՝ ուղղված համայն հայությանը: Ուրիշ բան, որ որոշ մարդիկ, ավա՜ղ, այս ընթացքում հիվանդացել են ամնեզիայով, և այդ մարդկանց մենք պարզապես հիշեցնում ենք մեր իսկ կողմից տրված գնահատականները: Եթե ոմանք դրանք հերքելու հակափաստարկ չունենալով, վերագրում են անձնական, իբր, վիրավորանքներին, ապա չարաչար սխալվում են, որովհետև այդ փաստաթղթի տակ, բացի Արտաշես Գեղամյանի ստորագրությունից, կան նաև մեր ազգի խիղճը հանդիսացող պատկառելի այնպիսի մարդկանց ստորագրություններ, ինչպիսիք էին՝ երջանկահիշատակ տիկին Սիլվա Կապուտիկյանը, ակադեմիկոսներ Ռաֆայել Ղազարյանը, Վլադիմիր Խոջաբեկյանը, Դավիթ Սեդրակյանը, ինչու չէ, նաև ճանաչված արձակագիրներ Ալվարդ Պետրոսյանը, Ռուբեն Հովսեփյանը, Արմեն Հովհաննիսյանը, հանրահայտ և սիրված դերասան Սոս Սարգսյանը, տաղանդավոր բանաստեղծ Ռազմիկ Դավոյանը: Ես չեմ կարծում, որ թվարկածս մարդիկ խնդիր ունեն որևէ մեկին նշավակել, առավել ևս այդ փաստաթղթի տակ նրանք ստորագրել են, երբ պարոն Լևոն Տեր-Պետրոսյանը Հայաստանի Հանրապետության Նախագահն էր և իր պաշտոնանկության մասին այն ժամանակ դեռ խոսակցություններ չկային:

Ռ.Խ . – Պարոն Գեղամյան, մոտ 10-11 տարի առաջ, երբ ստեղծվում էր «Ազգային Միաբանությունը», այդ առաջին տարիներին բավական մեծ թափ հավաքեց հենց նախկին իշխանությունների դեմ քննադատությունը: Հիմա, Ձեր կարծիքով, նույն թիրախին ուղղված այդ քայլերը որևէ կերպ արդարացվա՞ծ են:

Ա.Գ. – Ինձ թվում էր, որ Դուք այսօր հավասարաչափ կպաշտպանեք թե՛ նախորդ իշխանություններին և թե՛ գործող իշխանություններին…

Ռ.Խ . – Մենք որևէ մեկին պաշտպանելու կամ փնովելու խնդիր չունենք:

Ա.Գ. – … որովհետև մեր ծրագրում առավել խիստ ու սուր քննադատության են ենթարկված, թե՛ նախորդ և թե՛ ներկայիս իշխանությունները: Եվ այնտեղ այնպիսի գնահատականներ են տրված, որոնք ոչ այլ ինչ են, քան մեղադրական դատավճիռներ, իհարկե, բարոյական իմաստով դատավճիռներ: Ուրիշ բան՝ ստեղծվել է պարադոքսալ մի իրավիճակ, երբ հրապարակավ դու քննադատության ես ենթարկում թե՛ գործողներին, թե՛ նախորդներին, գործողների շահերը սպասարկող «պատասխանատու» հեռուստալրատվամիջոցները, գործողների քննադատությունը ընդհանրապես չեն հեռարձակում, մինչդեռ նախորդ իշխանությունների հասցեին ասված քննադատությունը բարեխղճորեն հասցնում են հեռուստադիտողներին և հանրությանը: Դրանով իսկ թյուր կարծիք ստեղծելով, թե մեր քննադատության սլաքն ուղղված է միայն և միայն նախորդների հասցեին: Ահա գաղտնիքը: Մինչդեռ իմ հրապարակային բոլոր ելույթները, անտարակույս, տեսագրված են այնպես, որ օրը կգա և մենք անպայման դա կներկայացնենք մեր հեռուստադիտողների, մեր հասարակության դատին:

Ա.Ի. – Մի քանի հարց՝ Ձեր նախընտրական ծրագրին վերաբերող: Դուք, մասնավորապես, որպես հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը նշել եք, մեջբերում եմ, «Քրեածին տարրերի Ազգային ժողով ներթափանցելուն նպաստող պայմանների հետևողական վերացում, նրանց կողմից օրենքների ընդունման վրա ազդեցության զգալի սահմանափակում»: Ինչպե՞ս եք դա անելու: Արդյո՞ք հնարավոր է սահմանափակել ընտրվելու իրավունքը:

Ա.Գ. – Խոսքը ընտրվելու իրավունքի մասին չէ: Խոսքն այն երանգով պետք է ընկալել, որ Հայաստանի Հանրապետությունում բարոյահոգեբանական այնպիսի մթնոլորտ ձևավորվի, որը անհնարին կդարձնի քրեածին տարրերի մուտքը Ազգային ժողով: Այ, հանուն այդ մթնոլորտի ձևավորման մենք պայքարել ենք և պայքարելու ենք:

Ա.Ի. – Ինչպե՞ս պարոն Գեղամյան:

Ա.Գ. – Այդ ամենը հասարակության սեփականությունը դարձնելով: Եվ հասարակությանը համոզելով, որ այդ կարգի մարդկանց առկայությունը՝ լինի օրենսդիր, լինի գործադիր իշխանություններում, Հայաստանի Հանրապետության զարգացման համար շատ լուրջ խոչընդոտ են: Եվ ոչ միայն խոչընդոտ են, այլ նաև վտանգում են Հայոց պետականությունը: Երբ մարդիկ գիտակցեն ու հասկանան, որ չարիքը թաղված է ապազգային հենց այդ տարրերի մեջ, որոնք ազգություն էլ չունեն, ապա իրենք անողոք պայքար կմղեն այդ երևույթի դեմ: Իսկ այդ երևույթից ձերբազատվելով, Ազգային ժողովը, ինչու չէ, նաև գործադիր իշխանությունները ցանկացած ոլորտ արդեն իսկ կհամալրեն այն մարդկանցով, ովքեր աչքի լույսի պես կփայփայեն, կպահպանեն մեր երկիրը, մեր պետականությունը:

Ռ.Խ. – Պարոն Գեղամյան, ի՞նչ եք կարծում, Ռաֆֆի Հովհաննիսյանի «Ժառանգություն» կուսակցությունը, երբ հայտարարություն ընդու-

նեց՝ կոչ անելով 4 թեկնածուներին մեկը մյուսին միանալ, այդ դեպքում աջակցելու պայմանով, այդ ցանկում ինչո՞ւ Ձեր անունը չկա:

Ա.Գ. – Այն պարզ պատճառով, որ «Ժառանգություն» կուսակցության աշխարհաքաղաքական ուղղվածությունն արևմտամետ է, իսկ «Ազգային Միաբանություն կուսակցությունը» ջատագովն է հայ-ռուսական ավանդական ռազմաքաղաքական, տնտեսական մերձեցմանը, խորացմանը: Թերևս, այդ պատճառով:

Ա.Ի. – Պարոն Գեղամյան, Դուք Ձեր ծրագրում նշել եք նաև, որ ծրագրային խնդիրներն իրականացնելիս հենվելու եք ազգային գաղափարախոսության վրա: Սակայն կա՞ արդյոք ձևակերպված հայկական ազգային գաղափարախոսություն: Դրա փորձերը եղան, համապատասխան գիտաժողով անցկացվեց և այլն, բայց փաստաթուղթ, որպես այդպիսին, այդպես էլ չստեղծվեց:

Ա.Գ. – Միանգամայն ճիշտ եք, պետականորեն նման փաստաթուղթ այդպես էլ չի ընդունվել, և «Արարման ծրագրում» փորձ է արված հիշատակել առանցքային այն հարցերը, որոնք կարող են ապագա ծրագրի հենքը հանդիսանալ, ազգային գաղափարախոսության հենքը: Թե որքանով է այդ փորձը հաջողված, ժամանակը ցույց կտա:

Ա.Ի. – Ձեր ծրագրի տնտեսական մասի վերաբերյալ վերլուծություն հրապարակեց, մասնավորապես, կիրառական տնտեսագիտության ազգային կենտրոնի տնօրեն Սերգեյ Բագրատյանը: Նա գրում է, որ իր ուսումնասիրած չորս թեկնածուների, որոնց շարքում նաև Դուք էիք, նախընտրական ծրագրերի տնտեսական մասում որևէ մեկը չի նշել կոնկրետ ժամանակացույց, ինչը հետագայում թեկնածուներին հնարավորություն կտա խուսափել պատասխանատվությունից: Այ, տնտեսագիտական խմբի ղեկավարի կարծիքով, մասնավորապես, հարկային բեռի թեթևացման մասին պնդումները, ավելի իրատեսական կլինեին, եթե հիմնավորվեին ու նշվեին փոքրացման ուղիները:

Ա.Գ. – Սերգեյ Արարատովիչ Բագրատյանի դիտարկումները տեղին են: Հեղինակը ծրագրում ժամկետ կկարողանա նշել միայն այն ժամանակ, երբ գա իշխանության և հնարավորություն ունենա, իմ դեպքում, «Արարման ծրագրին», նրա առանձին գլուխներին օրենքների ուժ ապահովել: Հակառակ պարագայում դա կլինի բարի ցանկությունների պոպուլիստական բնույթի գիրք: Մինչդեռ սա գիտական լուրջ հիմնավորում ունեցող ծրագիր է: Ինչ վերաբերում է հարկային բեռի թեթևացմանը, այնտեղ հարցադրումն այլ տեսակետից է տրված: Գրված է. պետք է ձևավորվի այնպիսի մթնոլորտ, որ հարկատուների համար հարկեր մուծելն ավելի ձեռնտու լինի, քան հարկահավաքներին կաշառելը: Տնտեսագիտության մեջ կա հայտնի տեսություն՝ ռեյգանոմիկա: Այդ ռեյգանոմիկան, թերևս, ի թիվս այլ հարցադրումների, երաշխավորում է, որ տնտեսության զարգացածության որոշակի մակարդակի պայմաններում, այո, խրախուսելու նպատակով կարելի է հարկերը փոքրացնել: Մինչդեռ դա շատ և շատ անվանի տնտեսագետների կողմից հալած յուղի տեղ չի ընդունվում: Աշխարհահռչակ տնտեսագետների մեկ ուրիշ

խումբ այլ կարծիքի է: Մասնավորապես, կա, այսպես կոչված, «Լաֆերի կորը», որը հիմնավորում է՝ հարկահավաքության նույն ծավալը կարող ես երաշխավորել և՛ բարձր հարկադրույքներ ունենալով, և՛ ցածր, որովհետև կորը պարաբոլիկ է: Այնպես որ, եթե պարոն Սերգեյ Բագրատյանը մի քիչ ավելի ուշադիր կարդացած լիներ, խոսքը Ձեր հիշատակած մասնագետի մասին է, ապա կհամոզվեր, որ այն երանգավորումը, ինչը ձևակերպվեց ձեր հարցի մեջ, այնքան էլ հիմնավոր չէ:

Ռ.Խ. – Նախագահ Ռոբերտ Քոչարյանը, մեկնաբանելով Սահմանադրությունը, ասաց, որ ով էլ ընտրվի Նախագահ, վարչապետը, միևնույն է, Հանրապետական է լինելու: Նախագահ ընտրվելու դեպքում կարողանալո՞ւ եք Հանրապետական վարչապետի հետ աշխատել:

Ա.Գ. – Անշուշտ, կարողանալու եմ, որովհետև Նախագահ ընտրվել՝ նշանակում է մեր ժողովուրդը երկրի հետագա զարգացման ուղիների մասին յուրովի պլեբիսցիտ է արել և հավանության է արժանացրել մեր «Արարման ծրագիրը»:

Ռ.Խ. – Այսինքն՝ Սերժ Սարգսյանին չեք փոխի:

Ա.Գ. – Մի րոպե, ներողություն: Եթե «Արարման ծրագիրը» ազգաբնակչության հավանությանն է արժանացել, ապա դրանից բխում է, որ արդեն իսկ ցանկացած կազմով Ազգային ժողովը պարտավոր է լինելու օրենքի ուժ տալ ծրագրային հիմնադրույթներին: Ուստի և ես խնդիր չեմ տեսնում ու անձերով չեմ պայմանավորում:

Ա.Ի. – Դուք նաև խոստացել եք Նախագահ ընտրվելուն պես, սա մամուլի դիտարկումներից մեկն է, Հայաստանի քաղաքացիների կյանքի որակը բարձրացնել, գործազրկության պատճառները վերացնել, երկրից բարձրորակ ու բարձրակիրթ կադրերի արտահոսքը դադարեցնել, բյուջետային եկամուտները կրկնապատկել, սակայն անհասկանալի է մնում՝ ինչպե՞ս եք հասնելու այս արդյունքներին:

Ա.Գ. – Եթե մասնագետի աչքով ուշադիր նայեն «Արարման ծրագրի» բոլոր գլուխները, ապա կհամոզվեն, որ ավելի հասկանալի, ավելի մատչելի ծրագիր այսօր հրապարակում չկա: Միգուցե, բացառությամբ կառավարական ծրագրի, որն իր մեջ բավականին կոնկրետություն է ներառում:

Ռ.Խ. – Պարոն Գեղամյան, Ձեր տիկինը՝ Անուշիկը, Խրիմյան Հայրիկի ծոռնուհին, ինչպե՞ս է վերաբերում առաջին տիկին դառնալու հեռանկարին:

Ա.Գ. – Իմ կինը՝ Անուշ Պլուզյանը, ամուսնության առաջին իսկ օրվանից իրեն առաջին տիկին է զգում: Այնպես որ, որակական փոփոխություններ Նախագահ դառնալուս հետ կապված, կարծում եմ, չի լինելու:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԵՎՐՈՊՈԼԻՍ» ԾՐԱԳՐԻ ՀՅՈՒՐԸ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆՆ Է

(11.02.2008 թ.)

ԱՐՏԱԿ ՀԵՐԻՔՅԱՆ – Բարի երեկո, տիկնայք և պարոնայք, 1-ին ալիքի ուղիղ եթերում «Եվրոպոլիս» ծրագրի նախընտրական հատուկ 7-րդ թողարկումն է: Այսօր մեր հյուրն է Հանրապետության Նախագահի թեկնածու, ԱՄԿ առաջնորդ Արտաշես Գեղամյանը: Բարի երեկո, պարոն Գեղամյան:

ՏԱԹԵՎԻԿ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ – Բարի երեկո, պարոն Գեղամյան: Արդեն նախընտրական քարոզարշավի վերջին շրջանն է, Ձեզ հաջողվե՞լ է Ձեր հիմնավոր ուղերձները տեղ հասցնել ընտրողներին:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ – Ցավոք, քարոզարշավի ընթացքում այնպիսի անակնկալ իրավիճակներ ստեղծվեցին, որ հարկադրված էի մեկ անգամ ևս որոշ հարցերի շուրջ պարզաբանումներ տալ, որովհետև հայտնվել ենք մի այնպիսի կացության մեջ, որը հիշեցնում է Շառլ դը Գոլի հայտնի արտահայտությունը: 1960-ական թվականներին, երբ ուսանողական ընդվզումներ եղան, նրանք, ոգևորված Հերբերտ Մարկուզեի տեսությամբ, «աուտսայդերներից» փորձեցին «խռովություններով» իշխանության գալ: Հատկապես Փարիզում անկարգություններ եղան, և դը Գոլն իր հեռուստաելույթներից մեկում ասաց. յուրաքանչյուր գործիչ իր քաղաքական կենսագրության ընթացքում ունենում է պահ, երբ կանգնում է երկընտրանքի առաջ՝ կամ դավաճանել երկրին, պետությանը, կամ՝ ընտրողներին: Դը Գոլը խոսքն ավարտել է՝ ասելով. ես գերադասում եմ դավաճանել ընտրողներին: Այ, հիմա, մենք որոշել էինք մեր քարոզարշավի մեխը դարձնել «Արարման ծրագիրը», սակայն մեզ դրանից շեղեցին: Եվ, ահա, թե ինչու: Այս ընթացքում այնպիսի հայտարարություններ արվեցին, որ դրանց հետևում մենք Հայաստանի պետականության վրա կախված մեծագույն վտանգ տեսանք: Ո՞րն է այդ վտանգը, որն արդեն իսկ անթաքույց շոշափելի է դառնում. դա դրսի ուժերի ուղղակի միջամտությունն է մեր նախընտրական գործընթացներին: Ես նկատի ունեմ շատ ծանր, վտանգավոր հետևանքներով հղի հայտարարությունը, որը օրեր առաջ հնչեց Նախագահի թեկնածուներից մեկի կողմից: Խոսքը գնում էր մեր երկրի շուրջ ընթացող բանակցությունների մասին: Զզլացա և ամենայն ուշադրությամբ նայեցի, թե օրերս հրապարակ նետված, իբր, Մեղրու շուրջ կայացած բանակցությունների և դրանց արդյունքում ընդունված դեկլարացիան ովքե՞ր են ստորագրել: Խոսքը այն փաստաթղթերի մասին է, որ անցած շաբաթ օրը հրատարակվել էր «Հայկական ժամանակ» թերթում: Այդ բանակցությունների հնարավոր մասնակիցներ կարող էին լինել մեզ հայտնի երկր-

ները. Ֆրանսիայի կողմը պետք է ստորագրեր, Թուրքիայի, Ադրբեջանի, Եվրամիության, ԱՄՆ-ն, Ռուսաստանի Դաշնությունը: Եվ չսխալվելու համար եկեք տրամաբանենք: Ակնհայտ է, Ռուսաստանի Դաշնությունը բացարձակապես շահագրգռված չէ, որ Հայաստանում իրավիճակն ապակայունանա: Ռոբերտ Քոչարյան - Սերժ Սարգսյան տանդեմը նույնպես բացարձակ շահագրգռված չէ, որ երկրում վիճակը սրվի: Այդ դեպքում ո՞վ է շահագրգռված, որ տեղեկատվական նման արտահոսք են անում: Ի՞նչ նպատակներ է դա հետապնդում: Չէ՞ որ եթե նման բովանդակությամբ փաստաթուղթ գոյություն ունենար, ավելին, եթե դրա տակ պատրաստակամություն էր ստանձնել իր ստորագությունը դնել Ռոբերտ Քոչարյանը, այն է՝ 9 տարի առաջ, ապա ինֆորմացիայի արտահոսք, սեփական շահերից ելնելով, թույլ չէր տա: Չէ՞ որ այդ ընթացքում անցկացվել են նախագահական երկու ընտրություններ՝ 1999 թ. հաջորդեցին 2003 թ. նախագահական ընտրությունները: Ի՞նչ, եթե ընդունենք, որ նման հանցանք դրսևորվել է իշխանությունների կողմից, ապա ինչու՞ են այսքան ժամանակ լռել: Ինչո՞ւ դուք՝ նախկին իշխանավորներ, լռել եք այս տասը տարիների ընթացքում: Եթե հիշում եք, դեռ սեպտեմբեր ամսին «Ազգային Միաբանությունը» հանդես եկավ հայտարարությամբ՝ կոչ անելով քաղաքական բոլոր ուժերին ստորագրել Լեռնային Ղարաբաղին վերաբերող մի փաստաթղթի տակ: Խնդիրը, որ հետապնդում էինք, մեկն էր՝ անել ամենը, որ սպասվելիք նախագահական ընտրությունների ժամանակ այդ հարցը շահարկումների առարկա չդառնա: Չարձագանքեցին: Խոսքս ՀՀ Նախագահի թեկնածուների մասին է, ովքեր հավակնություններ ունեին առաջադրվել Նախագահի թեկնածու: Այն ժամանակ՝ ընտրությունների մեկնարկի օրվանից մեկ շաբաթ, տասը օր առաջ, ես կանխատեսել և մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել էի, որ առաջիկայում սպասենք զարհուրելի մի փաստաթղթի հրապարակ գալուն: Ձեր հեռուստաալիքն այդ ասուլիսը նկարահանել է, ձեր արխիվից կարող եք բարձրացնել: Ավելին, ես զգուշացրել էի, որ, ամենայն հավանականությամբ, նման ստոր լրատվական արտահոսք դրսի մամուլում կլինի, մասնավորապես, հրապարակումը կզետեղվի ադրբեջանաթուրքական մամուլում: Տղերքը ձեռնպահ մնացին թուրքական «Զամանում», «Զումհուրիեթում», «Դը Թրքիշ Դեյլի Նյուսում» տպագրել, որովհետև արդեն նրանց ակնկալիքները նախագահական առաջիկա ընտրությունների վերաբերյալ անթաքույց էին: Նշենք, որ երբ դրսի ուժերի միջամտությունը երկրի ներքին գործերին դառնում է ակնհայտ, ապա դա փաստում է, որ մեր ժողովուրդն ակամայից դառնում է աշխարհաքաղաքական խաղերի գործիք: Եվ, հիմա, Արտաշես Գեղամյանս, իր «Արարման ծրագիրը» թողած, մի կողմ դրած, օգտագործելով այս եթերաժամը, հարկադրված եմ մեր ժողովրդին դիմել բացարձակապես այլ հարցադրումներով: Հայտնություն արած չեմ լինի՝ ասելով. հայ ժողովրդի, հայոց պետության լավը, բացի հայերից, մասնակի բացառությամբ, և ոչ ոք չի ցանկանում: Դա ակնհայտ է: Միջազգային հզոր խաղացողները, օգտագործելով ՀՀ-ում նախագահական առաջիկա ընտրությունները, մեր տարածաշրջանում շատ բարդ, հեռու գնացող հարցեր են ուզում լուծել: Սա շատ ավելի լուրջ է, քան կարող է թվալ

առաջին հայացքից: Եթե հրապարակ նետված Մեղրիի հանձնման վերաբերյալ տեղեկությունները հավաստի են, ապա ինչո՞ւ էին տասը տարի պահում փակ գզրոցներում և միայն նախագահական ընտրությունների նախաշեմին, դրանից մեկ շաբաթ առաջ դրա մասին, իբր, եղած այդ տագնապահարույց փաստաթուղթը հանձնում հասարակության դատին, որ դյուրահավատ հայ ժողովուրդն էլ ասի՝ ժողովուրդ, սթափվեք, մեր երկրի մի հատվածը իշխանավորներն ուզում էին վաճառել: Կրկնում եմ, մեկ անգամ ևս. Ռուսաստանին դա բացարձակապես ձեռնտու չէ, որովհետև Հայաստանի Հանրապետությանն աջակցելու, մեր տարածաշրջանում իրենց նախապատվությունների մասին բացահայտ, բազմիցս հայտարարել են: Դավաճանական նման գործարքի մասին լրատվական արտահոսքը կնշանակի ձեռնտու է ո՞ւմ՝ այո, ճիշտ կռահեցիք, մեր դարավոր «բարեկամներին», որոնք սրտատրոփ սպասում են, թե երբ մեր երկրում ապակայունություն կսանձազերծվի: Ահա սրանով է, որ քարոզարշավը ծրագրերի շուրջ ծավալվող և սպասվելիք բանավիճային բնականոն հունից, փաստորեն, միտումնավոր շեղում են: Եվ հենց այդ մարդիկ են, որ դրսի ուժերի կողմից պարտադրված պատվեր են կատարում: Վաղ, թե ուշ դա կբացահայտվի, վաղ, թե ուշ այդ մարդիկ պատասխան կտան օրենքի ողջ խստությամբ:

Ա.Հ. – Պարոն Գեղամյան, վերադառնանք ծրագրերին: Ի տարբերություն նախորդ ընտրությունների, որտեղ Դուք Ձեր ծրագրերը ներկայացնում էիք հրապարակային մեծ հանրահավաքների ժամանակ, այժմ պարզապես փակ հանդիպումներ են, շտաբային հանդիպումներ են: Ինչու՞:

Ա.Գ.– Ես մի առիթով ասել եմ, հիմա ուզում եմ կրկնել. հայցում եմ մեր ժողովրդի որոշակի հատվածի ներողամտությունը, որ ի վիճակի չեմ հինգ հազարական դրամ բաժանել, հանրահավաքի մասնակիցների համար ընդմիջում անելու, նախաճաշելու հարց լուծել և տասնյակ հազարավոր մարդկանց մասնակցությամբ Երևանում հանրահավաքներ կազմակերպել: Առավել ևս, ի տարբերություն 2003 և 2008 թթ. նախագահական ընտրությունների, ներկա փուլում լրատվամիջոցները քարոզարշավը հավասարաչափ լուսաբանում են և, մասնավորապես, այսօր ինձ հնարավորություն է ընձեռված Հ1-ի եթերից շուրջ 700 հազար հայ հեռուստադիտողների ներկայացնել իմ ծրագրերը: Ուստի, նպատակահարմար չեմ գտել զանգվածային խոշոր միջացառումներ կազմակերպելու վրա կենտրոնանալ:

Ա.Հ.– Նախկինում կայի՞ն այդ հինգ հազար դրամները, պարոն Գեղամյան:

Ա.Գ.– Նախկինում այդ հինգ հազար դրամները նույնպես չկային, բայց արատավոր այդ ավանդույթն էլ չկար: Նախկինում մարդիկ հույսով էին տոգորված, մարդիկ դեռ այս աստիճան խաբված չէին, որ իրենց քվեն, կարող է հանկարծ իրենց քվեն չլինել, և նրանք դա առքուվաճառքի առարկա չէին դարձնում: Ավա՜ղ, շատ ջրեր հոսեցին, և այսօր մենք ունենք այն, ինչ ունենք, երբ անգամ իսկ ֆոտոլրագրողները կարողանում են այդ փաստը արձանագրել, ես էլ չեմ խոսում ավտոբուսային այն մեծաթիվ շարասյուների մասին,

որոնք ուղեկցում են այս կամ այն թեկնածուին: Մարդիկ պարզապես հանրահավաքների գնալով, գոնե կարողանում են փոքր-ինչ մեղմել իրենց սոցիալական վիճակը: Իհարկե, այնտեղ կան նաև գաղափարի, հավատի համար եկածներ էլ: Թերևս, դրական երանգ էլ կա այդտեղ:

Տ.Ն. – Այնուամենայնիվ, վերադառնանք ծրագրին: Խոսենք վերնագրից: Ես ուշադրություն եմ դարձնում, նախ, փրկության ծրագրով հանդես եկաք:

Ա.Գ. – «Հակաճգնաժամային ծրագրով», որի կարգախոսն էր՝ «Հայրենիքը փրկենք միասին»:

Տ. Ն. – «Հակաճգնաժամային ծրագրով», հիմա «Արարման ծրագիրն» է: Կարելի՞ է ենթադրել, որ «Հակաճգնաժամային ծրագիրն» արդեն իրականություն է:

Ա.Գ.– Ձեր դիտարկումը միանգամայն տեղին է: Այո, դրա կատարումը, կարծես թե, սկսված է, որովհետև 2007թ. ընթացքում իրենց լուծումները գտան մի շարք հարցեր, որոնք որպես խնդիր ձևակերպված էին 2006 թ. ընդունված «Հակաճգնաժամային ծրագրում»: Երբ հավակնում ես քաղաքական անկողմնակալ գործչի համարում ունենալ, ապա պարտավոր ես քո ընդդիմախոսների կատարած դրական գործերը նույնպես տեսնել, և այդ գործերի հիման վրա նոր հեռանկարներ մատնանշել: Չէ՞ որ Կարմիր բլրի գագաթից ավելի մեծ գագաթ է բացվում՝ Արագածը, այնտեղից էլ ավելի լավ է երևում Մասիսը: Մասիսից, կարող է, ավելի բարձր գագաթ երևա, ընդունենք, էլբրուսը, էլբրուսից՝ Ջոմոլունգման… Հիմա եթե դրական տեղաշարժը կայացել է, ես դա արձանագրում եմ, հետն էլ մատնանշում այն բոլոր խնդիրները, որոնք հնարավոր է լուծել Հայաստանում առկա այն ռեսուրսների հնարավորություններով, որոնք ձեզ հետ միասին տեսնում ենք, որ երկրի ներսում կան:

Ա.Հ. – Պարոն Գեղամյան, Դուք արդեն 11 տարի Ձեր գլխավորած ԱՄԿ- ով փորձում եք քաղաքական ընտրանու կոնսոլիդացմանը հասնել՝ հանուն ազգային միաբանության: Ի՞նչն է խանգարում միաբանվելուն:

Ա.Գ.– Լևոն Տեր-Պետրոսյանի գործոնը, որը 10 տարի շարունակ, գործելով ստվերում, ջանք ու եռանդ չի խնայել ամեն կերպ, հատկապես իր շահերը սպասարկող մամուլի միջոցով, պառակտել քաղաքական դաշտը: Ընդդիմադիր քաղաքական ուժերն անցած 10 տարիների ընթացքում ավելի անողոք քննադատության են ենթարկվել հիշ-ական մամուլի էջերում, քան իշխանական լրատվամիջոցների կողմից: Ուրիշ բան, որ իշխանական լրատվամիջոցներն էլ իրենց հերթին հմտորեն դա օգտագործել են մեր դեմ հակաքարոզչություն իրականացնելու համար:

Ա.Հ. – Պարոն Գեղամյան, գիտեք, մեր այս ծրագրի շրջանակներում պարոն Լևոն Տեր-Պետրոսյանը հնարավորություն չունի այժմ Ձեզ պատասխանելու, և նա չկարողացավ մասնակցել մեր այս ծրագրին: Լրատվական էթիկային …

Ա.Գ.– Դուք եք ուղղորդում, որ հարցազրույցն ընթանում է նման հունով: Հարցը տալիս եք, և եթե ես չպատասխանեմ, մարդիկ կմտածեն, որ խուսա-

փում եմ պատասխանից: Ինչևէ, խնդիրն այն է, որ, այո, եթե այսօր քննադատության սլաքն ուղղում ենք թեկնածուներից մեկի վրա, ապա դա պայմանավորված է միայն և միայն այն հանգամանքով, տվյալ դեպքում ակնհայտ է այն փաստը, որ նա խոչընդոտ է ազգային միաբանության կայացման համար: Ոչ թե կուսակցության մասին է խոսքը, այլ ազգի, մեր ժողովրդի միաբանվելու գաղափարի: Պառակտում են մի ամբողջ ազգ, իսկ պառակտված ժողովրդին իշխելը հեշտ է, դյուրին է: Պառակտում են դրսի ուժերի համար խոցելի դարձնելու համար: Երբ դա գիտակցում ես, ապա պարտավոր ես ընդվզել: Քաղաքական դաշտից գոնե մի որևէ թեկնածու պետք է կրակը վերցնի իր վրա: Հիշենք Ուինսթոն Չերչիլին: Երկրորդ համաշխարհային պատերազմում հաղթանակելուց հետո, Պոտսդամի կոնֆերանսում, խաղաղ բանակցությունների ժամանակ, երբ իմացավ, որ իր ղեկավարած կուսակցությունն ընտրություններում դաժան պարտություն է կրել և այլևս կառավարող կուսակցություն չէ, նամուսով, պատվով հեռացավ՝ չնայած վիրավորվելու շատ ու շատ լուրջ հիմքեր ուներ: Մեծ էր… Նա առաջնորդվել էր այն գաղափարով, որ ընտրողներն ինչ-որ մի տեղ չեն հասկացել իրեն, անտեղի քննադատել են, ինչ-որ տեղ շատ անարդարացի, բայց Չերչիլի խիղճը երկրի առաջ հանգիստ էր: Նա, ի տարբերություն Լևոնի, երկրի, ժողովրդի վրա չարացած չէր, վրեժխնդրությամբ լցված չէր: Ես հասկանում եմ, դա ամեն մարդու տրված չէ, բայց դա ներհատուկ և հոգեհարազատ է «Ազգային Միաբանությանը»:

Ա.Հ. – Պարոն Գեղամյան, Դուք ինքներդ կարող էիք միանալ 2003-ին և դրանից էլ առաջ:

Ա.Գ.– Ո՞ւմ, Լևոն Տեր-Պետրոսյանին:

Ա.Հ. – Ոչ, 2003 թ. Ստեփան Դեմիրճյանին և դրանից էլ առաջ:

Ա.Գ.– Անշուշտ, կարելի էր, եթե նրանք 2-րդ փուլ չգնային: 2-րդ փուլ գնալով՝ նրանք կատարեցին մեր իշխանությունների պատվերը, իրողություն, որն արդեն իսկ ակնհայտ է բոլորի համար: Միայն ծույլերն են, որ չեն ուզում խոստովանել, որ 2003 թ. պարոններ Ռոբերտ Քոչարյանը և Սերժ Սարգսյանը, ի պատիվ իրենց, փայլուն սցենար իրականացրին: Իրենց համար իրական վտանգ հանդիսացող քաղաքական գործչին մղեցին երկրորդ պլան, այո, ինձ, թող ներվի թվացյալ անհամեստությունս, քանզի իրենց պետք էր, որ ընտրություններն ընթանան այնպես, ինչպես որ եղավ: Մինչդեռ եթե գործընկերներս չգնային 2-րդ փուլ, ապա մեր երկրում իրավիճակն այլ կլիներ: Եվ, վերջապես, ինչի՞ մասին է խոսքը, եթե համոզված էին սեփական ճշմարտացիության մեջ, թող մինչև վերջ պայքարեին, թող գնային, այո, պաշարեին թեկուզև նույն նախագահական նստավայրը: Ինչո՞ւ չգնացին: Եթե ինքդ համարձակություն չունես, եթե քո մեջ լիդերությանը ներհատուկ այդ ջիղը չես կրում, մեղքը մի բարդիր ուրիշի վրա: Գնային, իրենց մի քիչ նեղեին, ընկերների առջև կանգնեին, այդ ժամանակ ես էլ կկանգնեի նրանց կողքը, բայց ոչ թե ուրիշին առաջ մղեին, իրենք գնային տուն թեյ խմելու: Այդպես չի լինում:

Տ.Ն. – Միաբանության առաջնորդն ինչո՞ւ է, այնուամենայնիվ, այդքան դատափետվում: Չէ՞ որ Ձեր նպատակը միաբանվելն է:

Ա.Գ.– Միջակությանը, թույլիկներին չեն ծեծում, տեղից ծեծված են, որովհետև մեր մեջ ուժ են տեսնում, որովհետև չեն հասկանում «Ազգային Միաբանության» գաղափարները, գործը և նրա առաջնորդի ֆենոմենը, թող ներվի բառիս համար, որը այսօր հանգիստ կարող է հավասարաչափ, առանց խղճի խայթ զգալու, առանց ուրացողի դերում հայտնվելու, վտանգից վախենալու՝ քննադատել թե՛ գործողներին, թե՛ նախորդներին: Նայեք, թեկնածուների մեջ արժանավոր մարդիկ, անշուշտ, կան, բայց բոլորը կամ գործող իշխանությունների կազմում են եղել, կամ նախորդների, բացառությամբ հարգարժան երկու թեկնածուների՝ Արամ Հարությունյանի և Արման Մելիքյանի: Արամ Հարությունյանը և Արման Մելիքյանը, այո, ոչ գործող իշխանության կազմում են եղել, ոչ էլ նախորդ:

Ա.Հ. – Պարոն Գեղամյան, երբ Ձեր ընդդիմախոսները փորձում են անվանարկել, մասնավորապես, վախկոտ անվանել, վախի զգացում ունենալու մեջ մեղադրել, Դուք հիշում եք 1990 թ. մայիսի 27-ին Երևանի երկաթուղային կայարանում տեղի ունեցած դեպքերը և Ձեր մասնակցությունը դրանց որպես քաղաքական կենսագրության հերոսական դրվագ: Հարցս հետևյալն է. իրար անընդհատ ինչ-որ բան հիշեցնելը չի՞ ուշացնում արդյոք ազգային միաբանության ժամը, որը Դուք համարում եք մեր երկրի զարգացման կարևոր նախապայման:

Ա.Գ.– Գիտեք, միշտ ասում են, գողն է առաջինը բղավում՝ բռնիր գողին: Ինձ մեղադրողների բոլորի վախի ականատեսն եմ եղել: Եվ նրանք, ուզում եմ հավատալ, որ ամոթից մինչև հիմա իրենց տեղը չեն գտնում, երբ հեռուստատեսությամբ գովազդային տեսահոլովակում տեսնում են, թե ինչպես է Արտաշես Գեղամյանը երեք ազատամարտիկի հետ գնում կրակահերթերին ընդառաջ, մինչդեռ հարյուրավոր տղաներ, ինչ-ինչ պատճառներով, չասեմ վախեցան, չեկան մեր հետևից: Ընկերներիցս մեկը միշտ ասում է՝ ես վախենում եմ քո անվախության աստիճանից: Ես էլ եմ երբեմն-երբեմն վախենում, որովհետև հասկանում եմ, որ այսօր համապատասխան մարդկանց միլիոնավոր դոլարներ են վճարել երկրում իրավիճակն ապակայունացնելու համար: Ոչ ոք դրա մասին չի խոսում: Ի՞նչ, կարծում եք, չգիտե՞ն: Իհարկե, գիտեն, պարզապես բոլորն ուզում են «մաքուր» երևալ: Բոլորն ուզում են սպիտակ ձեռնոցներով, սպիտակ բաճկոնով մասնակցել ընտրապայքարին: Ձև են անում, որ անտարբեր են իմ բացահայտումների նկատմամբ, արհամարհական են վերաբերում քաղաքական նման մերկացումներին: Դե, եթե այդքան համարձակ են ու ինձ են փորձում մեղադրել հակառակի մեջ, ապա թող բարձրացնեն միջազգային ծանրակշիռ կազմակերպություններում իմ ունեցած ելույթները, 21 ելույթ եմ ունեցել մեր հանդեպ ամենաթշնամական զգացումներ ունեցող երկրների պատվիրակների շրջապատում, երբ շուրջս թուրք ու ազերի և նրանց կողմից վարձված պատվիրակներ են եղել: Եվ հեռուստակադրերով էլ անգամ երևում է, թե ինչպես է ելույթիս ժամանակ, մասնավորապես, Ստրասբուրգում իմ հետևում նստած թուրք պատգամավորը փորձում ինձ խանգարել:

Ա.Հ. – Ելույթների մասին: 21 ելույթ եք ունեցել եվրոպական տարբեր

ատյաններում, բայց սովորաբար փոքր պետությունների ձայնը միշտ շատ ուշ և դժվարությամբ է հասնում ականջին: Այ, ամեն անգամ Ստրասբուրգ այցելելիս զգացե՞լ եք Ձեր ելույթներից որևէ մեկի էֆեկտիվությունը կոնկրետ որոշում կայացնող եվրոպական որևիցե պաշտոնյայի վրա:

Ա.Գ.– Միայն այն փաստը, որ 2005 թ. ապրիլի 27-ին իմ ելույթից հետո Եվրախորհրդարանի պատվիրակները կարմրեցին և ոմանք էլ ոտքի կանգնեցին, երբ ես նախատում էի նրանց, առ այն, որ չի կարելի գուժել Հռոմի երջանկահիշատակ Հովհաննես Պողոս II-ի մահը և դրան զուգահեռ, ըստ էության, դրժել այդ մեծ հոգևորականի, մեծ մարդու պատգամներից, այն է՝ հեռանալ իրողությունից, որ ճիշտ այդ նույն սգո օրերին համայն հայությունը և քաղաքակիրթ ազգերը նշում են Մեծ Եղեռնի 90-ամյա ողբալի տարելիցը: Անգամ իսկ մեր չուզողները պետք է խոստովանեն, որ ելույթիս այդ դրույթն արդեն մտավ պատմության մեջ, որ Հայաստանի Հանրապետության պատվիրակն ամոթանքի խոսքեր է հղում Եվրախորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի պատգամավորների հասցեին և նրանք լռում էին: Պատմության սեփականությունը դարձավ նաև այն, որ երբ լորդ էնթոնի Լլոյդը նախագահում էր ԵԽԽՎ հերթական նիստը, ես ամբիոնից մեջբերեցի Ջորջ Գորդոն Բայրոնի հուշերից մի դրվագ. Բայրոնը ցնցվել էր, երբ Աթենասի Ակրոպոլիսը պաշարած թուրք զավթիչներին՝ օսմաններին, հույներն արճիճ են տվել, միայն թե նրանք այդ տաճարի սյուների մետաղական բաղադրիչ մասերը և զանգերը փամփուշտ պատրաստելու համար չձուլեն: Եվ հետո դիմելով վեհաժողովի պատվիրակներին՝ ասացի. հիմա էլ մենք՝ հայերս, թուրք ազերիներին ի՞նչ տանք, որ թեկուզ մեզ սպանելու գնով Հին Ջուղայի խաչքարերը, պատմական մեր ուրիշ հուշարձանները, մշակույթի կոթողները չավերեն: Մեծ հաշվով նստաշրջանի օրակարգի հետ ելույթս կապ չուներ, սակայն լորդ էնթոնի Լլոյդը, հավանաբար, Բայրոնի մասին լսելիս մինչև վերջին 15 վայրկյանը ինձ այդպես էլ չընդհատեց: Չէ՞ որ խոսքս դաս եղավ, որովհետև մեծն անգլիացու օրինակով ես ԵԽԽՎ այդ բարձր ամբիոնից թուրքերին պատժեցի, ազերիներին պատժեցի՝ հրապարակայնորեն նրանց և, ավելի կարևոր է, եվրոպացիներին հիշեցնելով ոչ շատ վաղ անցյալի թուրք-ազերիների պատմության ամոթալի էջերը: Եվ դուք, խնդրում եմ, հասկացեք, թե ինչո՞ւ երբեմն-երբեմն, միգուցե և շատ ավելի սուր են հնչում իմ գնահատականները հայտնի թեկնածուի հասցեին: Ես մեր երկրի դեմ հյուսվող դավերի դեմ ուժերիս ներածին չափով կռվելու եմ, քանի որ ինձ վրա զգացել եմ դրանց վտանգավորությունը: Եվ եթե ես իշխանահաճո, իշխանությունների մերձավորը լինեի, ապա, առանց չափազանցության, ինձ Ազգային հերոսի կոչում կշնորհեին: Բարեբախտաբար, դրա համար չէ, որ պայքարել եմ, միջազգային կառույցներում ելույթներ ունեցել: Ես դա արել եմ, որ վաղը, մյուս օրը իմ թոռների, իմ մերձավորների առաջ չկարմրեմ, ելույթներիս տեսաերիզները տամ, որ նրանք էլ հպարտանան, ասեն՝ կարգին պապ ենք ունեցել: Հասկանան, որ դա է նրանց պապի իսկական դիմանկարը, այլ ոչ թե ՀՀՇ-ական մամուլում գրվածը:

Տ.Ն. – Պարոն Գեղամյան, հայաստանյան այս ընտրություններում արտաքին ազդեցությունը, դրսի միջամտությունները կարո՞ղ են վճռորոշ ելք ունենալ:

Ա.Գ. – Աստված մի արասցե, եթե վճռորոշ ելք ունենան: Բոլորս պետք է գիտակցենք դրա կործանարար հետևանքները, հատկապես այն բախտախնդիր քաղաքական գործիչների համար, ովքեր ուզում են երկրում վիճակն ապակայունացնել: Հայաստանը, օրինակ, նույն Ռուսաստանի Դաշնության, նույն Բելոռուսի, նույն Ղազախստանի հետ Հավաքական Անվտանգության Պայմանագիր Կազմակերպության անդամ երկիր է և այդ անդամակցությունը որոշակի պարտավորություն է դնում յուրաքանչյուր երկրի վրա: Ուժի առանձին կենտրոններն ուզում են Հայաստանը կտրել այդ դաշնությունից և նետել թուրք-ազերիների գիրկը, ինչը մեր դաշնակիցները թույլ չեն տա: Նախ, մենք ինքներս թույլ չենք տա, և մեզ այդ սրբազան պայքարում սատարողներ կլինեն: Բավականին զորեղ սատարողներ կլինեն:

Տ.Ն. – Անդրադառնանք մեր բարեկամների հետ հարաբերություններին: Ձեր «Արարման ծրագրում» Դուք գրում եք. «... մեր պետության հնարավորությունները հարևան երկրների հետ բարիդրացիական հարաբերություններ ստեղծելու գործում օբյեկտիվորեն սահմանափակվում են»: Ելքը ո՞րն է:

Ա.Գ. – Դուք դրա շարունակությունն էլ խնդրում եմ կարդացեք: Այնտեղ գրված է, որ դա էլ իր հերթին պահանջում է Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ գերակայությունների հստակեցումը հրամայական դարձնել: Յուրաքանչյուր հարևանություն իր գինն ունի: Ելքն այն է, որ այսօր Ռուսաստանի Դաշնության շուկան իր ընդգրկությամբ անծայրածիր է հայ ձեռներեցների, հայ արտադրողների համար: Ուրիշ բան, որ այդ հնարավորությունների անգամ իսկ 3-5%-ը չի օգտագործվում: Մինչդեռ եթե տնտեսական քաղաքականությունը գրագետ իրականացվի՝ խնդիր ունենալով Հայաստանի էկոնոմիկան ինտեգրել Ռուսաստանի հետ, ուրեմն համոզված եղեք, որ առնվազն մինչև 2020 թ. մենք արդեն իսկ կունենանք մեր երկրի համար բավական հուսադրող զարգացման տեսլական: Ինչո՞ւ եմ հիշատակում 2020 թվականը. օրեր առաջ, փետրվարի 8-ին Վլադիմիր Պուտինը, ելույթ ունենալով ՌԴ Պետխորհրդի ընդլայնված նիստում, արդեն ուրվագծեց, թե ինչպիսին է լինելու Ռուսաստանի Դաշնության զարգացման հեռանկարային ծրագիրը: Եվ մենք քաղաքական ամենահեռատես գործիչ և ազգի ընտրանուն պատկանելու իրավունք ձեռք կբերենք, եթե կարողանանք օգտվել և օգտագործել այս առումով մեզ ընձեռված հնարավորությունը: Առավել ևս, երբ Ռուսաստանի կողմից բարիդրացիական վերաբերմունքի դրսևորումներն ակնհայտ են: Ձեզ պատահակա՞ն է թվում, որ ընտրական այս թոհուբոհի ժամանակ Ռուսաստանի Դաշնության վարչապետը գալիս է Հայաստանի Հանրապետություն և հայտարարում, որ 5 գործարանները, որոնք «Գույք՝ պարտքի դիմաց» հանձնվել են Ռուսաստանին, վերաշահագործվելու են: Որպես անհամեստություն չընկալվի, նշեմ, որ վերջերս, մինչև հիշատակած պաշտոնական այցը, «Ռեգնում» գործակալությանը տված հարցազրույցում ես այդ

գործարանների վերաշահագործման խնդիրն ամենայն սրությամբ դրել էի, և ռուսաստանյան այդ գործակալությունը պատահական հարցազրույցներ պաշտոնական նման հանդիպումների նախօրեին չի հրապարակում: Երբ դուք տեսնում եք, որ երկրիդ առաջ խոստումնալից հեռանկարներ են բացվում և հապաղում եք այդ գործում, կնշանակի պետական, քաղաքական գործչին վայել բարձրության վրա չեք: Ես հույս ունեմ, որ կհաղթահարվի այսօր առկա այդ իներտությունը և, համոզված կարող եմ ասել, որ հաղթահարման արդյունքում Հայաստանի տնտեսության մեջ, մեր զարգացման ճանապարհին դրական մի նոր էջ կգրվի:

Ա.Հ. – Պարոն Գեղամյան, «Արարման ծրագրում» Դուք խոսում եք Ռուսաստանի, ԱՊՀ-ի, Հավաքական Անվտանգության Պայմանագիր Կազմակերպության անդամ երկրների հետ հարաբերությունները էլ ավելի զարգացնելու մասին: Իսկ Արևմո՞ւտքը և ՆԱՏՕ՞-ն: Վստահությո՞ւն կա ...

Ա.Գ. – Բացարձակապես, Ձեր ասած այդ անվստահության հարթության մեջ չպետք է նայել նրանց հետ մեր երկրի հարաբերությունները: Նախ, սկսենք շատ պարզ մի հարցից՝ ո՞վ է մեզ սպասում Եվրամիությունում: Ոչ ոք: Բացարձակապես ոչ ոք: Եվ դա արդեն ակնհայտ է: Եվրամիությունը 27 երկրներին դեռ չի կարողացել, մասնավորապես, հին Եվրոպան, մատուշկա Եվրոպան, ինչպես ասում են, մարսել: Եթե նոր անդամակցության խնդիր դրվի, բալկանյան 2-3 երկիր կարող են դրան հավակնել և հեռանկարում անդամակցել Եվրամիությանը, այն էլ Սերբիան կանդամակցի, եթե հաշտվի Կոսովոյին անկախություն զիջելու մտքի հետ: Ուրիշ բան, որ մեր երկրի օրենքները, այո, պետք է ունիֆիկացնենք, հնարավորինս մոտեցնենք Եվրամիության երկրների օրենքներին, որովհետև եվրոպական այդ օրենքների առկայությունն է երաշխիք հանդիսացել, որ այդ երկրներն աննախադեպ տնտեսական աճի տեմպեր արձանագրեն: Իսկ ինչ վերաբերում է ռազմաքաղաքական հարաբերությունների խորացմանը, անշուշտ, ինձ համար ավելի հեռանկարային է երևում մեր մերձեցումը Ռուսաստանի հետ, ԱՊՀ երկրների հետ դաշնակցային կապերի էլ ավելի խորացումը: Ինչու չէ, ես կարևորում եմ նաև կապերի խորացումը մեր հարևան Իրանի, ինչու չէ, ասիական այնպիսի գիգանտների հետ, ինչպիսիք են Հնդկաստանն ու Չինաստանը, բնավ չբացառելով տնտեսական կապերի խորացումը Եվրամիության հետ: Սակայն, ավա՜ղ, մեր այսօրվա արտադրանքն իր մրցունակության տեսակետից շատ ու շատ զիջում է եվրոպական արտադրանքին, և այդ պատճառով էլ եվրոպական շուկաները շատ դեպքերում մեզ համար անհաղթահարելի են, բացառությամբ առանձին ճյուղերի, որոնք, անշուշտ, պետք է էլ ավելի զարգացնել:

Տ.Ն. – Ես ուզում եմ խոսենք նաև ղարաբաղյան կարգավորման շուրջ: Դուք առաջարկում եք մի քանի սկզբունքներ, որոնք, ըստ Ձեզ, կարագացնեն պրոցեսը: Նախագահ ընտրվելու դեպքում որքան արա՞գ է հնարավոր հասնել լուծման:

Ա.Հ. – Պարզապես հնարավորինս կարճ, որովհետև մենք արդեն քիչ ժամանակ ունենք:

Ա.Գ. – Եթե հարցը կարճ ձևակերպվի, ավելի կարճ կպատասխանեմ: Եթե որևէ մեկն ասի, ես այս կամ այն պատրաստի լուծումներն ունեմ, կնշանակի, որ լուրջ չի մոտենում հարցին: ԼՂՀ-ի կարգավորման սկզբունքները հրապարակավ պետք է հնչեցվեն, իսկ արդեն դրանք ձևակերպելը պայմանավորված է նախևառաջ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների հետևողականությամբ և Ադրբեջանի իշխանությունների իրատեսական մոտեցումներով: Ես այստեղ ավելի շատ կարևորում եմ, որ ՀՀ-ն ստեղծված իրավիճակում զարկ տա տնտեսական մրցակցության հարցերին, որ կարողանա տնտեսական զարգացման առումով հետ չընկնել Ադրբեջանից: Ինչու չէ, նաև շարունակվեն քայլերն ուղղված հայոց բանակի հզորացմանը: Պարտադիր կարգով հզորացվի, նախ, իր ոգով և ժամանակակից զինված ուժերին հատուկ բոլոր պարագաներով: Այս առումով, ուզում եմ հիշեցնել Ջորջ Վաշինգտոնի հայտնի արտահայտությունը: 1887 թ., երբ ամերիկյան կոնգրեսը նախագիծ էր քննարկում, որի համաձայն բանակի թվաքանակը պետք է սահմանափակեին 10 հազար զինծառայողով, Ջորջ Վաշինգտոնը շատ հետաքրքիր մակագրություն էր դրել այդ օրինագծի վրա: Նա գրել էր, որ ողջունում է կոնգրեսականների այդ նախաձեռնությունը և ավելացրել, որ կցանկանար մեկ այլ օրինագիծ էլ կոնգրեսով հաստատվեր, այն է՝ մեր թշնամի երկրների բանակներն էլ կրճատել մինչև 5 հազարի: Եվ, բնականաբար, նման դիտողությունից հետո կոնգրեսը չընդունեց այդ բանաձևը: Ջորջ Վաշինգտոնը մնաց իր բարձրության վրա՝ վերահաստատելով իր հեռատեսությունը: Այսօր շատ են խոսակցությունները պայմանագրային հիմունքներով զինուժ ձևավորելու, բանակը կրճատելու և իրականությունից կտրված ինչ-ինչ մոդայիկ նորամուծությունների մասին: Բոլորիս հայտնի է, թե դրանց հեղինակները ում կողմնակիցներն են: Կարծում եմ, որ նման խոսակցություններ վարողները անպայման պետք է Իլհամ Հեյդարովիչ Ալիևին խնդրեն, որ այդ առաջարկները մեր երկրի կողմից ընդունվելու դեպքում նա էլ ընդունի, որ Ադրբեջանն իր բանակը կրճատելու է՝ զինուժի թիվը հասցնելով 7-8 հազարի:

Ա.Հ. – Պարոն Գեղամյան, ապրանքների մրցունակությունից խոսեցիք, տնտեսական ծրագիրն իրականացնելու ուղղությամբ Ձեր առաջին քայլը, ո՞րը կլինի:

Ա.Գ. – «Արարման ծրագիրը», եթե արժանացավ մեր ժողովրդի վստահությանը և քվեին, կվերածվի օրենքների ժողովածուի ու իր հետևից կբերի օրենքների փաթեթի ընդունում: Շուրջ 40-42 օրենքներ կհաստատվեն Ազգային ժողովում: Եթե որևէ մեկը ձեզ ասի, որ այս կամ այն առանձին օրենքն ընդունելով վիճակն արմատապես կլավանա, կնշանակի մակրոէկոնոմիկայից բացարձակապես անտեղյակ մարդ է: Հիմա տարբեր մարդիկ խոսում են հարկերն իջեցնելու և դրա հետ հարկային մուտքերն ավելացնելու մասին: Իրենք, հավանաբար, ականջի ծայրով լսել են, որ մակրոտնտեսությունում գոյություն ունի ռեյգանոմիկա ասածը, ուր, այո, հարկերի իջեցման խնդիր է դրված եղել: Բայց հետն էլ չգիտեն, որ երկիրը պետք է ունենա զարգացվածության որոշակի մակարդակ, անցած լինի հարկային ավանդույթներ ստեղծելու որոշակի ճանապարհ, որ դրա կիրառումը գործի, դրական արդյունքնե-

րի հանգեցնի: Ավելին, այդ մարդկանց հուշեմ, թող անպայմանորեն ուսումնասիրեն «Լաֆերի տեսությունը», «Լաֆերի կորը», որն ասում է՝ տարբեր դրույքաչափերի պարագայում հնարավոր է բյուջեում ունենալ նույն մուտքերը: Խոսքը հարկային դրույքաչափերի մասին է: Անգամ նկարչությունից գաղափար ունեցողը, եթե ծանոթանա «Լաֆերի կորի» հետ, ապա տնտեսական անիրականալի առաջարկներով արդեն հանդես չի գա:

Ա.Հ. – Պարոն Գեղամյան, Ձեր թոռնիկի՝ Արտաշես Մամիկոնի Գեղամյանի մասին: Ընդհանրապես, թոռնիկները պահանջկոտ են պապիկների հանդեպ: Այս պապիկի առջև Արտաշես Մամիկոնի Գեղամյանն ավելի շատ ի՞նչ պահանջներ է դնում:

Ա.Գ. – Գիտեք, ավելի շատ ի՞նչ է ասում. պապիկ կարգին, լուրջ մարդ ես, ամեն վայրահաչոցի ինչո՞ւ ես պատասխանում: Անգամ իսկ երեխան հասկանում է վիճակի զավեշտալի լինելը:

Ա.Հ. – Երեխաները իմաստուն են լինում:

Ա.Գ. – Է, իսկ ո՞ւմ թոռն է, որ իմաստուն չլինի: Չնայած մեր հարգարժան Ռաֆիկ Մանուկյանը՝ մյուս պապիկը, նույնպես իմաստասեր մարդ է: Ես համոզված եմ, որ նա դիտում է այս հաղորդումը և հումորով է արձագանքում այն բոլոր մեղադրանքներին, զազրախոսություններին, որոնք հնչում են իմ հասցեին:

Տ.Ն. – Դուք Ձեր անուն, ազգանունը, նաև հայրանունն արդեն ժառանգություն թողել եք Ձեր թոռնիկին, կուզենայի՞ք նրան քաղաքականության մեջ տեսնել:

Ա.Գ. – Ոչ, բացարձակապես, դա տառապանքով լի ճանապարհ է: Մի առասպել էլ պատմեմ, հավանաբար, դրանով էլ ավարտենք: Կա ծնունդով ավստրալիացի հանրահայտ կին, ամերիկացի բանաստեղծ: Նա «Փշոտ մացառուտներում երգողները» (“Поющие в терновнике”) վերնագրով վեպ ունի, որը բեստսելլեր է, 17 մլն տպաքանակ է ունեցել: Այդ վեպը սկսվում է հուզիչ նախաբանով. մի թռչնակ կա, որը օրերից մի օր լքում է իր բույնը և գնում է փնտրելու փշոտ մացառուտներ, ու երբ տեսնում է դա, ընտրում է ամենաերկար ու ամենասուր փուշը և քարի պես ընկնում, մխրճվում է այդ փշի վրա, որ սիրտը խոցվի: Եվ հենց մեծ ցավեր ունենալու այդ պահին էլ սկսում է անասելի քնքուշ ձայնով երգել: Այն աստիճանի քնքուշ ձայնով, որ սոխակները, արծիվները, ասես թե, զմայլվելուց օդում քարանում են, իսկ տեր Աստվածն էլ երկնքում հիացմունքից ժպտում է: Գրքի հեղինակը՝ Յուդժին Մակկալոուն, այնուհետև գրում է. առասպելն ասում է՝ մինչև խորը տառապանք ու ցավ չունենաս, երբեք չես կարող նման հուզիչ և քնարական երգ երգել: Հիմա, եթե քաղաքական գործիչը տառապանք չունենա, եթե հանուն ժողովրդի գիտակցաբար զրկանքների չգնա, ապա երբեք նրա հետևից մարդիկ չեն գնա: Ես պատկերացնում եմ զրկանքների այն չափը, որը բաժին է ընկնելու ինձ: Ես հասկանում եմ՝ ինչ հզոր զրպարտության ալիք է բարձրանում, զազրախոսության արշավանք կազմակերպվում անձիս դեմ: Ես իմ մեջ ուժ եմ գտնում այդ ամենը հաղթահարելու, բայց չէի ցանկանա, որ թոռս նույն ճանապարհով անցներ:

«Հ 2» ՀԵՌՈՒՍՏԱԼԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆ ՇԱՎԱՐՇ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ «ԽՈՍՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ» ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱՇԱՐԻ ՀՅՈՒՐԸ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆՆ Է

(12.02.2008 թ.)

ՇԱՎԱՐՇ ԳԵՎՈՐԳՅԱՆ – Բարև Ձեզ, հայկական 2-րդ հեռուստաալիքի ուղիղ եթերում «Խոսքի իրավունքը» հաղորդումն է և 4-րդ ստուդիայում այսօր, այս ժամին հյուրընկալել ենք ՀՀ Նախագահի թեկնածու պարոն Արտաշես Գեղամյանին: Բարև Ձեզ, պարոն Գեղամյան:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ – Բարև ձեզ:

Շ.Գ. – Շնորհակալություն, որ եկել եք հարցազրույցի: Պարոն Գեղամյան, արդեն քարոզարշավի վերջին օրերն են, կուզեի լսել Ձեր կարծիքը՝ գո՞հ եք քարոզարշավի ընթացքից և, մասնավորապես՝ Ձեր քարոզարշավից:

Ա.Գ. – Քարոզարշավի ընթացքից ընտրողը պետք է գոհ կամ դժգոհ լինի: Հավանաբար, հարցի ենթատեքստն այն էր, արդյոք արգելքներ կան, թե՞ չկան, լուսաբանումը լավ է, թե՞ ոչ: Պատասխանեմ՝ լուսաբանումը բավարար է, արգելքներ չկան: Այնպես որ, այդ տեսակետից գոհ եմ, իսկ թե որքանով է գոհ և բավարարված ընտրողը, ընտրությունների օրը պարզ կդառնա:

Շ. Գ. – Ես կուզեի մի քանի կարևոր հարցերի անդրադառնայինք, որոնք վերջերս քարոզարշավի ընթացքում այս կամ այն թեկնածուի կողմից շոշափման առիթ են հանդիսացել. օրինակ, ամենաթարմը՝ Մեղրիի հարցը: Վերջերս խոսվեց Մեղրին տալու, չտալու մասին, Դուք շատ վաղուց եք քաղաքականության մեջ և կուզեի լսել եղելությունը Ձեզանից:

Ա.Գ. – Ձեր հարցը շատ տեղին է, որովհետև շատ վտանգավոր զարգացումներ է ստանում այն ամենը, ինչը պայմանավորում են բանակցային գործընթացի հետ, մասնավորապես, թե, իբր, 1999 թ. արդեն Հայաստանի իշխանությունները Մեղրին հանձնելու կապակցությամբ տվել էին համաձայնություն: Այստեղ եկեք ձեզ հետ սկզբունքային մեկ հարց վերհիշել. ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների և բանակցության սուբյեկտ հանդիսացող պետությունների, այն է՝ Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարների միջև պայմանավորվածություն կա չգաղտնազերծել բանակցային ողջ գործընթացը մինչև գործնական ավարտին դա չհասցվի և արդեն իսկ չհրապարակվեն դրանց արդյունքները: Այդպե՞ս է, այո, այդպես է: Եվ, տեսեք, ի՞նչ է ստացվում. իբր, 1999 թ. դա մեր կողմից արդեն ստորագրված է եղել և մեկ էլ

հանկարծ դրա մասին պարզ է դառնում 2008 թ. փետրվար ամսին ու հայտարարվում է ՀՀ Նախագահի թեկնածուներից մեկի կողմից: Երբ կարդում ես այս օրերին խնդրո առարկայի մասին շրջանառվող դեկլարացիան, ապա տեսնում ես, որ այն ստորագրել են Ֆրանսիան, ԱՄՆ-ն, Եվրամիությունը, ՌԴ-ն, Թուրքիան, կրկնում եմ, Թուրքիան, Ադրբեջանը և Հայաստանը: Բնականաբար, այնպիսի լուրջ երկրներ, ինչպիսիք են ՌԴ-ն, ԱՄՆ-ն, Ֆրանսիան դեկլարացիան չէին գաղտնազերծի, նման էժանագին բան նրանք չէին անի, որովհետև դրա անհրաժեշտությունը չկա. հարկ եղած դեպքում նրանք բացահայտորեն հանդես կգային հայտարարությամբ և գնահատական էլ կտային, նույնը կաներ նաև Եվրամիությունը: Հայաստանի իշխանությունները, բնականաբար, շահագրգռված չէին լինի այդ ամենը, ինչպես ներկայացվում է հանրությանը, գաղտնազերծել: Կնշանակի փաստաթղթից իրազեկ երկրներից մնացին Ադրբեջանը և Թուրքիան: Ինքնին հասկանալի է, որ եթե Ադրբեջանն ու Թուրքիան նման լրահոս են արձակում, ինչի մասին է խոսքը, ապա ի՞նչ, հայերիս լա՞վն են ցանկանում, թե հոգ են տանում, որ հայ ընտրողն ընտրություններից առաջ քաջատեղյակ լինի բանակցային ողջ գործընթացին՝ հայանպաստ ընտրություն անելու համա՞ր: Բնավ, ո՛չ: Արդյո՞ք պատահական էր, որ հանրահավաքներից մեկի ժամանակ և հետագայում էլ մամուլում շնորհակալություն են հայտնում Հեյդար Ալիևին, առ այն, որ նա մերժել է ու չի ստորագրել այդ դեկլարացիայի տակ: Այսինքն՝ հայերի լավն է ուզել, այո՞: Մեր ժողովրդի լավն է ուզել և այն էլ շատ ավելի լավն է ուզել, քան գործող իշխանություննե՞րը: Ահա, այստեղ է, որ արդեն իսկ, ինչպես ասում են, ավանակի հում ականջները ի հայտ են գալիս իրենց ողջ «շքեղությամբ», և սա շատ վտանգավոր զարգացումներով է հղի: Դա պայմանավորված է նրանով, որ Նախագահի հավակնորդներից մեկի թիմակիցները փորձում են մեր ժողովրդին, մեր մարդկանց դյուրահավատ լինելը, կյանքում դրական փոփոխություններին կարոտով սպասելը օգտագործել դրսից իրենց առաջադրված աշխարհաքաղաքական խնդիրները լուծելու համար, այն էլ այն ժամանակ, երբ ՀՀ-ն գնում է շատ պատասխանատու համապետական կարևորագույն ակցիայի՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրության: Նման գործառույթները հղի են ամենալուրջ և ամենածանր զարգացումներով: Այս ամենն է, թերևս, այն հեռահար նպատակը, որ հիմա, 9 տարի անց, հրապարակ է իջեցվել այդ բացահայտ ապատեղեկատվությունը, և ոչ միայն հրապարակ է իջեցվել, այլև դրա վրա կառուցվում է մի ողջ քարոզարշավ: Ուստի, այստեղ, ի սկզբանե, պետք է գիտակցել. այն, ինչ ազերիների և թուրքերի կողմից է հրապարակ նետվում, մի նպատակ կարող է հետապնդել՝ ապակայունացնել մեր երկրում իրավիճակը, երկրում իրավիճակն ապակայունացնելուց հետո անհապաղ ամեն կերպ ռազմական գործողություններ հրահրել հայ-ադրբեջանա-իրանական սահմանում, մասնավորապես, ԼՂ-ի ինքնապաշտպանության բանակի կողմից ազատագրված տարածքների ամբողջ երկարությամբ: Հետագա գործողությունները նույնպես նշմարելի են.

Թուրքիան և Ադրբեջանը կդիմեն միջազգային կազմակերպություններին՝ խնդրելով խաղաղարար ուժեր տեղակայել հակամարտության գոտում, խնդիր ունենալով իրենց իսկ կողմից հրահրված արյունահեղությունը դադարեցնել: Դրան կհետևի այն, որ Թուրքիան, լինելով ՆԱՏՕ-ի անդամ-երկիր, կփորձի առավել ակտիվ դերակատարություն ունենալ, հատկապես այն դեպքում, եթե տարածաշրջանում տեղակայվեն ՆԱՏՕ-ի խաղաղարար ուժեր: Կարծում եմ, հասկանալի է, որ նման զարգացումներն իրենց հետևից, անտարակույս, կհանգեցնեն Իրանի Իսլամական Հանրապետության համարժեք գործողությունների, այն է՝ հայ-իրանական սահմանը կփակվի:

Դրան կհաջորդեն դժվարություններ նաև հայ-վրացական սահմանի վրա. Վրաստանը չի կարողանա դիմակայել թուրք-ադրբեջանական ճնշումներին, քանի որ Վրաստանի բյուջեի եկամուտների շոշափելի մասը, այսպես, թե այնպես, պայմանավորված է Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարի շահագործումով և հիմա էլ հեռանկարում կառուցման ենթակա երկաթգծով, որը Կարսը կմիացնի Ախալքալաքին, այնտեղից էլ Մարաբդայով կշարունակվի դեպի Թբիլիսի: Մեր տարածաշրջանում այսօր լուծվում են շատ ծանր, հայերիս համար շատ վտանգներով հղի աշխարհաքաղաքական խնդիրներ, այն է, երկու բառով ասած, ամեն գնով Հայաստանի Հանրապետությունը կտրել Ռուսաստանի Դաշնությունից: Հայաստանը կտրելով ՌԴ-ից՝ զգալիորեն կթուլացնեն նրա դիմադրողականությունը, որից հետո մեր երկիրը կհայտնվի թուրք-ազերիական ռազմական ոտնձգությունների հորձանուտում: Կհանդիսանա վերջիններիս թիրախը: Այս հարցին մենք բոլորս պետք է պատասխանատվության բարձր զգացումով մոտենանք, առանց կրքեր բորբոքելու և ընդամենը մի հարց տանք մեզ. այս ամենն ո՞ւմ էր ձեռնտու: Հայերի՞ն, բնավ, ո՛չ: Ռուսների՞ն, նույնպես ո՛չ, որովհետև Ռուսաստանը կողմնակից է իր ռազմաքաղաքական դաշնակցի՝ Հայաստանի կայուն զարգացմանը: Ձեռնտո՞ւ էր ԱՄՆ-ին կամ Եվրամիությա՞նը. նման պնդումներ անելուց ձեռնպահ եմ մնում: Մինչդեռ Թուրքիային և Ադրբեջանին, անտարակույս, այս ամենը շատ ու շատ կգոհացնի: Ահա սա է Մեղրին «հանձնելու» պատմության առեղծվածը, գաղտնիքն ու «բացահայտումը»:

Շ.Գ. – Եվս մի արդիական հարց, որի որոշումը կայացվել է երեկ, հրապարակվել այսօր: Խոսքը Ռաֆֆի Հովհաննիսյանի «Ժառանգություն» կուսակցության Լևոն Տեր-Պետրոսյանին սատարելու մասին է: Ի՞նչ է սա, ի՞նչ կբերի սա իր հետ կամ կբե՞րի արդյոք որևէ բան, թե ոչ:

Ա.Գ. – Դա հիշատակածս զարգացումների տրամաբանական շարունակությունն է: Երբ Նախագահի թեկնածուներից մեկը իր հրապարակային բոլոր ելույթներում առանձնահատուկ շեշտում է հայ-թուրքական, հայ-ադրբեջանական հարաբերությունների լավացման խնդիրը՝ այն դարձնելով արտաքին քաղաքականության ոլորտում թիվ մեկ խնդիր, բնականաբար, այս մոտեցումը թե՛ Եվրամիության և թե՛ ԱՄՆ-ի կողմից Հարավային Կովկասում իրականացվող քաղաքականության տրամաբանության մեջ է տեղավորվում:

Նման մոտեցման դրդապատճառները տարբեր են, բայց որ դա նրանց սրտով է, ակնհայտ է: Ուստիև, պետք էր ենթադրել, որ արևմտամետ ընդգծված ուղղվածություն ունեցող քաղաքական ուժը՝ «Ժառանությունը», վաղ թե ուշ Լևոն Տեր-Պետրոսյանին պաշտպանելու վերաբերյալ որոշում կկայացներ: Այո, այդպիսի որոշում պետք է կայացներ, անգամ իսկ փոքր-ինչ հապաղեց: Հավանաբար, հանձնարարականը նոր են ստացել: Ես այդտեղ վատ բան չեմ տեսնում, աշխարհաքաղաքական ընկալումների խնդիր է: Ուրիշ բան, որ այդօրինակ ընկալումը և տվյալ պարագայում արտաքին քաղաքական վերը հիշատակված ուղղվածություն ունեցող գործչին սատարելը, վերջինիս հաջողության հասնելու դեպքում, կարող է կործանարար հետևանքներ ունենալ մեր երկրի ճակատագրի, Հայոց պետականության համար: Եվ ահա, թե ինչու. Հայաստանը Ռուսաստանի հետ ունենալով բազում պայմանագրեր, այդ թվում՝ ռազմաքաղաքական դաշնության պայմանագիր, այն է՝ Հավաքական Անվտանգության Պայմանագիր Կազմակերպության անդամ լինելով հանդերձ, միաժամանակ յուրահատուկ, բարիդրացիական, բարեկամական հարաբերություններ ունի նաև Իրանի Իսլամական Հանրապետության հետ: Հիմա, իրադրության նման զարգացումների պայմաններում (ԼՏՊ-ի հաղթանակի) մեր տարածաշրջանում մեծապես կվտանգվի ստեղծված հավասարակշռությունը՝ լուրջ փորձությունների ենթարկելով հայ-ռուսական և հայ-իրանական կապերը: Այդ երկու կարևորագույն երկրների հետ առկա բարեկամական հարաբերությունների վտանգման պարագայում Հայաստանի Հանրապետությունը կդառնա անօգնական մի երկիր: Եվ դրա համար էլ այս ամենի մասին պետք է բացեիաբաց խոսել, պետք է, հարգելով հակառակ կողմի կարծիքն ու տեսակետը, միաժամանակ չբացառել, որ իրենք, միգուցե, այդքան չեն խորացել այս հարցերի մեջ: Սակայն այն, ինչ նրանք փորձում են այսօր անել, ավելի ճիշտ այն զարգացումները, ինչը դրսի ուժերը քաղաքական առանձին գործիչների խամաճիկ դարձնելով, փորձում են մեր ժողովրդի վզով փաթաթել, ոչ այլ ինչ է, քան դավաճանություն՝ սեփական պետականության դեմ: Կրկնում եմ, դավաճանություն՝ սեփական երկրի նկատմամբ: Ուրիշ բան, որ տվյալ պարագայում, եթե իմ այս գնահատականները համահունչ են իշխանությունների՝ պարոններ Քոչարյանի ու Սերժ Սարգսյանի տեսակետներին, ապա դա ամենևին էլ չի նշանակում, որ ես, ընդհանուր առմամբ, իրենց քաղաքական գիծն եմ պաշտպանում: Երեկ առիթ եղավ, «Եվրոպոլիսում» հյուրընկալվել էի մեր հիասքանչ Տաթևիկին և հարգելի Արտակին, հիշեցրեցի Շառլ դը Գոլի հայտնի հետևյալ խոսքերը, որ նա ասել էր 1960-ական թվականներին. քաղաքական իր կենսագրության ընթացքում քաղաքական գործիչը, գոնե մեկ անգամ կանգնում է բախտորոշ ընտրության առաջ: Նա հարկադրված է լինում կամ դավաճանել պետության շահերը, կամ ուրանալ ընտրողներին տված խոստումները: Եվ դը Գոլն առանց վարանելու ասել էր, որ գերադասում է չկատարել ընտրողներին տված խոստումները, քան դավաճանել Ֆրանսիայի նվիրական շահերին: Ահա սա է. երբ գիտակցում

ես, թե ինչպիսին են երկրիդ գլխին դամոկլյան սրի նման կախված վտանգները, կամա թե ակամա, մտածում ես երկիրդ կրծքով պաշտպանել, քաջ գիտակցելով, որ քո քարոզչությամբ դու, լինելով ընդդիմադիր գործիչ, ըստ էության, պաշտպանում ես իշխանական տեսակետը, և այդ պաշտպանությամբ ուղղակիորեն ջուր ես լցնում գործող իշխանությունների ջրաղացին: Այս օրերը կանցնեն, կգնան: Բնականաբար, այն, ինչի մասին ասում եմ, հանրության սեփականությունը կդառնա, և մարդիկ, ովքեր այսօր, թերևս, տարակուսում են իմ որդեգրած քաղաքականությունից, հուսով եմ, վաղը արդարացիորեն կգնահատեն ու կասեն՝ հալալ էր այդ մարդուն, կրակը վերցրեց իր վրա և իր համեստ մասնակցությունը բերեց մեր երկիրը շատ վտանգավոր զարգացումներից հետ պահելու գործում:

Շ.Գ. – Պարոն Գեղամյան, կուզեի էլի մի արդիական հարցի անդրադառնայիք: Այս շրջանում կամ նախընտրական, կամ դրան նախորդող ժամանակահատվածում թեկնածուներն այցեր կամ փոխայցեր ունեցան: Այս կամ այն երկրներից պատվիրակություններ ընդունեցին, այցեր ունեցան այս կամ այն երկիր և, ամենաթարմը, թեկնածուներից մեկը այս պահին գտնվում է Ռուսաստանի մայրաքաղաքում: Ի՞նչ է, Դուք պայմանավորվելու կամ հանդիպելու բաներ չունե՞ք:

Ա.Գ. – Ես էլ մոտ օրերս պաշտոնական այցով լինելու եմ Արագածոտնի մարզի Արագածավան գյուղում, հարսանիքի եմ մասնակցելու: Դա պարզապես Նախագահի առանձին թեկնածուի կողմից կիրառվող ծեծված նախընտրական հնարք է, մասնավորապես, խոսքս ՀՀՇ-ական մամուլում թմբկահարվող վերջին այցերի մասին է: Սրանից ճիշտ մեկ շաբաթ առաջ ռուսաստանյան ինֆորմացիոն հեղինակավոր գործակալությունը՝ «Ռեգնումը», ինձնից ծավալուն հարցազրույց էր վերցրել: Հարցազրույցի հարցերից մեկն էլ հետևյալն էր. իմ վերաբերմունքը նախորդ իշխանությունների նկատմամբ: Եվ ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ Լևոն Տեր-Պետրոսյանի իրական թիմակիցները ռուսատյաց, թուրքամետ, ընդհանրապես օտարամետ քաղաքական գործիչներ են: Բավական է վերցնել և թերթել սրանից անգամ կես տարի առաջվա, եթե չասենք տարիներ շարունակ, «Հայկական ժամանակ»-ի շաբաթօրյա համարները: Անգամ իսկ անկողմնակալ ընթերցողն այնտեղ կտեսնի, որ Հայաստանի բոլոր ողբերգությունները, այդ թվում նաև սեփական իշխանավարության տարիներին իրականացված մեր երկրի համար ամենաանցանկալի զարգացումները, հայտնի ուժերը կապում և պայմանավորում են ՌԴ-ի հետ: Եվ դա անում են նույնիսկ 19-րդ դարից սկսած: Բնականաբար, իր թիկունքում ռուսատյաց քաղաքական թիմ ունեցող մարդը, արդեն իսկ գիտակցում է, որ Ռուսաստանի դիրքորոշումը Հայաստանում ընթացող ներկայիս զարգացումների վերաբերյալ ձևակերպված է շատ և շատ հստակ: Մասնավորապես, այդ հստակությունը պայմանավորված էր նրանով, որ «Եդինայա Ռոսիա» կուսակցության, իշխող կուսակցության նախագահը՝ Բորիս Վյաչեսլավովիչ Գրիզլովը, վերջերս ՀՀ-ում եղած ժամանակ համա-

գործակցության պայմանագիր ստորագրեց Հայաստանի Հանրապետական և «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունների հետ: Դա քաղաքական ակցիա էր, դա քաղաքական սատարման դասական ձև էր: Ճիշտ այդ նույն ժամանակաշրջանում, շատ լավ հիշում եք, այստեղ էր «Ռուսական երկաթուղային գծեր» հոլդինգի տնօրենը՝ պարոն Յակունինը, որը շատ հեղինակավոր քաղաքական դեմք է, էլ չեմ ասում Ռուսաստանի Դաշնության կառավարության նախագահ Վիկտոր Զուբկովի մասին, որն անթաքույց հայտարարեց գործող իշխանություններին սատարելու մասին, այսինքն՝ ՀՀ-ում գործող իշխանական թեկնածուին: Այս պարագայում, բնականաբար, չեմ էլ բացառում, Մոսկվայում կարող է առանձին պաշտոնյաներ, անգամ բարձրաստիճան պաշտոնյաներ, ընդունեն Լևոն Տեր-Պետրոսյանին, բայց դա կլինի հարգանքի դրսևորում այն մարդկանց նկատմամբ և ոչ անձի, առավել ևս նրա վարած քաղաքականության, որոնք հավաքվում են նրա կազմակերպած հանրահավաքներին և ոչ ավելին: Ուրիշ բան, որ սա լևոնականների կողմից կդառնա շահարկումների առարկա, ուրիշ բան, որ կսկսեն ավելի ագրեսիվ քարոզչություն իրականացնել: Բայց չեմ կարծում, որ մեր ժողովուրդն այն աստիճան է ծուլացել, որ գոնե սեփական խղճի հանգստության համար վերլուծության չենթարկի ընթացող զարգացումները: Եվ այստեղ մի գործոն էլ կա: Եթե անգամ իսկ բարձր մակարդակով ԼՏՊ-ին ընդունեն, ապա դա գործող իշխանություններին նախազգուշացում կլինի՝ տղերք, շատ չոգևորվեք: Չկարծեք, թե Հայաստանի Հանրապետությունում կարող եք անել այն ամենը, ինչ ձեզ ժամանակին ներվել է, մասնավորապես 2003 թվականին: Այդ այցին պետք է շատ հանգիստ մոտենալ: Միաժամանակ այդ այցելությունն ինձ ոգևորում է: Կնշանակի պարոն Տեր-Պետրոսյանն ականջալուր է եղել իմ այն հորդորներին, որոնք նշված են «Արարման ծրագրում», առ այն, որ մեր հիմնական, բախտորոշ դաշնակիցը Ռուսաստանի Դաշնությունն է և, թերևս, իմ նախանշած ուղին արդեն իսկ քարոզարշավի ժամանակ նա ընդունել է ոչ միայն ի գիտություն, այլև՝ ի գործ: Հանգամանք, որը, ինչ խոսք, ոգևորում է ինձ:

Շ. Գ. – Պարոն Գեղամյան, քարոզարշավը ցույց տվեց, որ պոպուլիզմը, ցավոք, քաղաքական գործչի համար այսօր էլ մնում է գործող մեխանիզմ, ձայներ, այսպես ասեմ, ստանալու համար: Ինչո՞ւ է այդպես: Օրինակ, թեկնածուներից որոշներն ասում են՝ հարկերը կրճատենք, նվազեցնենք, հարկային մուտքերն ուղիղ համեմատականով կմեծանան: Ես չեմ հասկանում, ինչպե՞ս: Պոպուլիզմով ինչքա՞ն կարելի է մարդկանց խաբել:

Ա.Գ. – Գիտե՞ք, շատ դեպքերում դա մակրոէկոնոմիկա գիտության իսպառ չիմացության արդյունք է և, հետո, ձգտում՝ մի լավ բան ասել ժողովրդին: Չէ՞ որ եզակի հնարավորություն է, գոնե, քսան օր, մի ամիս հեքիաթով կերակրել հայ մարդկանց, ովքեր, ավա՜ղ, ինչպես ասացի, շատ դյուրահավատ են և հավատում են հեքիաթների:

Մակրոէկոնոմիկայում կա հայտնի տեսություն, որը ռեյգանոմիկա է անվանվում: Դա պայմանավորված է նրանով, որ երբ 1981 թ. Ռոնալդ Ռեյգանն ընտրվեց ԱՄՆ-ի պրեզիդենտ, Միացյալ Նահանգների էկոնոմիկան ստագնացիայի մեջ էր հայտնվել, և խնդիր կար երկիրը զարգացման ուղի դուրս բերել: Հրապարակ եկավ Չիկագոյի խումբը (նրանք աշխարհահռչակ տնտեսագետներ էին, որոնք աշխատում էին Չիկագոյի համալսարանում և պաշտպանում էին ազատական-մոնետարիստական շուկայական հայեցակարգեր) և հուշեց. Ամերիկայի Միացյալ Նահանգների նման երկրում, որտեղ կայացած միջին խավ կա, և որը կազմում է հասարակության 65-70%-ը, եթե այդ խավի հարկային բեռը թեթևացնենք (և նրանք շահութահարկի ու եկամտահարկի բեռն իջեցրեցին մինչև 28%), ապա էկոնոմիկան որոշակի առաջընթաց կապրի: Եվ սկզբնական շրջանում, այո, այդպես էլ եղավ: Այդ քաղաքականությունը հիմնված է առաջարկի տեսության հայեցակարգի առաջնահերթության վրա, որն երաշխավորում է սահմանափակել պետության միջամտությունը տնտեսությանը, սառեցնել և կրճատել սոցիալական ծախսերը, մարդկանց կենսամակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերը, մասնավոր ձեռներեցության կարգավորմանն ուղղված պետական միջամտությունը: Կարևորվում էր նաև շրջանառվող դրամական զանգվածի աճի սահմանափակումը՝ միտված Դաշնային Պահուստային համակարգի գործունեությանը:

Սակայն կա նաև տնտեսագետների մի լուրջ թիմ, որը գտնում է, որ պետության եկամուտները պայմանավորված չեն հարկերի բարձր դրույքաչափերով, այլ բնութագրվում են Լաֆերի անունը կրող կորի տրամաբանությամբ: Տնտեսագետ Լաֆերը հիմնավորել էր մի օրինաչափություն՝ արտահայտված կորի տեսքով: Այդ կորի համաձայն՝ հարկային մուտքերը կարող են հավասար լինել անգամ իսկ հարկային տարբեր դրույքաչափերի պայմաններում: Հարկային նույն մուտքերը ստանում ենք հարկերի տարբեր դրույքաչափերի պայմաններում, և ցանկացած երկրի համար կա դրույքաչափերի օպտիմալ թիվ, որի պայմաններում հավաքվում են առավելագույն հարկային մուտքեր: Բայց դա պայմանավորված է միայն և միայն տվյալ երկրի էկոնոմիկայի զարգացածության աստիճանով: Ահա, Լաֆերի տեսության համաձայն, Հայաստանում դա այս փուլով նպատակահարմար չէ կիրառել: Մի երկրում, որտեղ տնտեսության նվազագույնը 40%-ը գտնվում է ստվերում, դա կիրառելիս՝ եղածն էլ կգնա ստվեր. դա անընդունելի է մեր տնտեսության զարգացածության նման աստիճանի պայմաններում: Ուստի, ոմանց նախընտրական խոստումները կարելի է դասել բարի ցանկությունների շարքին և որակել որպես քարոզչական պոպուլիզմ: Մինչդեռ կգա այն օրը, էկոնոմիկայում կլինի զարգացածության այն աստիճանը, երբ Լաֆերի կողմից մշակված այդ օրինաչափությունը, անշուշտ, մեզանում կիրառելի կլինի: Խնդիրն ուրիշ տեղ է թաքնված: Անհրաժեշտ է երկրի էկոնոմիկայում այնպիսի մթնոլորտ ձևավորել, որ ձեռներեցի համար հարկեր մուծելն ավելի շահավետ լինի, քան հարկերից խուսափելը: Ահա այսօր, ցավոք, այդ մթնոլորտը

չկա, որովհետև կոռուպցիան շատ և շատ է տարածված, որովհետև ստվերային էկոնոմիկան է շատ տարածված: Սակայն, կարծում եմ, այդ ամենը հաղթահարելի խնդիրներ են, պահանջվում է միմիայն ժամանակ ու քաղաքական կամք:

Շ. Գ. – Պարոն Գեղամյան, թեկնածուներից մեկը դիտորդներին, այսպես ասած, «առ է համարում»: Իր խոսքերն են: Դուք ինչպե՞ս եք վերաբերում դիտորդներին:

Ա.Գ. – Գիտեք, Իլյա Իլֆը և Եվգենի Պետրովը շատ հետաքրքիր բանավեճ են նկարագրում, ասում են՝ "Отец Федор смачно плюнул Ипполиту Матвеевичу в лицо и тот ему ответил тем же". Տվյալ պարագայում դիտորդներն «առ են համարել» ձեր կողմից հիշատակվող թեկնածուին, նա էլ «առ է համարում» դիտորդներին: Ուստի, ճիշտ կլինի երկուստեք կարդան Իլֆի և Պետրովի՝ Իպպոլիտ Մատվեիչի և հայր Ֆյոդորի պատմությունը: Այս դեպքում նրանք ինձ հիշեցնում են այդ պերսոնաժներին:

Շ. Գ. – Պարոն Գեղամյան, ինձ հետաքրքիր է, մարզերում Ձեզ ոգևորությա՞մբ են ընդունում:

Ա.Գ. – Մարդկանց ոգևորությունը խելագարության աստիճանի ոգևորության չի հասնում, բայց ջերմության պակաս չեմ զգում:

Շ. Գ. – Եվ վերջին հարցս Ձեր գրքի մասին է: Լույս տեսավ Ձեր վերջին գիրքը, ուզում եմ հասկանալ, հիմա ժամանա՞կն է գիրք լույս ընծայելու և ի՞նչ գիրք է սա:

Ա.Գ. – Նախ, վերջին գիրքը չէ, հերթականն է, որովհետև արդեն նոր գրքերի հեռանկարներ են բացվում: Խնդիրը մեկն է, երբ հիշ-ական մամուլը «ջանասիրաբար» փորձում է մեր մարդկանց գիտակցության մեջ ներարկել այն սին միտքը, թե Արտաշես Գեղամյանը քիչ է ելույթ ունենում, քիչ է խոսում, և այլն, և այլն, դա, թերևս, ինձ մղեց այս «սխրանքը» գործել: Այն է՝ 2006 թ. հոկտեմբերից 2008 թ. հունվարի 18-ը ներառյալ իմ ունեցած բոլոր ելույթները, գրած հոդվածները, տված հարցազրույցները ի մի բերել և լույս ընծայել 390 էջանոց մի ժողովածու: Գրքի հրատարակման նպատակներից մեկն էլ մարդկանց հուզող շատ հարցերի պատասխանները տալն է՝ իմ պատասխանները: Ես չեմ ասում, որ դրանք վերջնական ճշմարտություններ են, բայց դրանք իմ հույզերն են, խոհերն են, որոնք ես թղթին տալով՝ հանձնել եմ մեր ժողովրդի դատին, և ասածս ամեն մտքի, եզրահանգման համար պատասխանատու եմ: Նախավերջին գիրքը 1030 էջանոց էր, սա 390 էջանոց ժողովածու է, այնպես որ, գրահրատարակչական իմ այս գործունեությունը ես շարունակելու եմ, որ վաղը, մյուս օրը հանկարծ չստացվի, որ որևէ մեկն ասի. եթե դու գտնում էիր այս կամ այն հարցի հրատապությունը, տեսնում էիր դարանակալած վտանգները, ինչո՞ւ էիր լռում: Կրկնում եմ, ես չեմ լռել, դրա մասին էլ գրված է այս գրքում:

«ՇԱՆԹ» ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆ ՆՎԵՐ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ «ՀԵՌԱՆԿԱՐ» ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱՇԱՐԻ ՀՅՈՒՐԸ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆՆ Է

(14.02.2008 թ.)

ՆՎԵՐ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ – Եվ այսպես, մենք «Հեռանկարում» ենք: Ավարտվեց նախընտրական քարոզչության ևս մեկ օր: Եվս 3 օր ստիպված ենք լինելու հետևել նախընտրական քաղաքական մթնոլորտի տատանումներին, որոնք բերում են արդեն որոշակի մտորումների, ինչու չէ, նաև եզրահանգումների: Որոշ եզրահանգումներ կփորձենք անել ՀՀ Նախագահի թեկնածու, «Ազգային Միաբանություն կուսակցության» ղեկավար Արտաշես Գեղամյանի հետ: Բարև Ձեզ, պարոն Գեղամյան:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ – Բարև Ձեզ:

Ն.Մ.– Սա մեր հանդիպումների 3-րդ փուլն է, 3-րդ ռաունդն է, այսպես ասած, և փորձենք ամփոփել այն, ինչ արել ենք Ձեզ հետ: Ձեր բոլոր կանխատեսումներն իրականացա՞ն այս շրջանում և ո՞րը չիրականացավ:

Ա.Գ.– Նախորդ բոլոր կանխատեսումներն իրականացել են: Ինչ ասել էի, այդ թվում նաև ձեր հյուրը լինելով՝ հարգարժան պարոն Մնացականյան, ավա՜ղ, իրականություն դարձան: Այն, որ ժողովրդին պառակտելու են, անջրպետը փորձելու են խորացնել, այն, որ ընտրություններից մեկ շաբաթ առաջ լինելու են զարհուրելի, սահմռկեցուցիչ, իբր, բացահայտումներ, այդ ամենը, ցավոք, դարձավ իրականություն: Ասածներս կանխատեսումներ չէին, դրանք պարզապես տրամաբանական սառը հաշվարկներ էին, որոնք հիմնված էին քաղաքական այն զարգացումների վրա, որոնք սկիզբ առան սեպտեմբերի 21-ին՝ Անկախության օրը:

Ն.Մ.– Պայմանավորվենք չքննադատել Լևոն Տեր-Պետրոսյանին:

Ա.Գ.– Դա պայմանավորված կլինի ձեր կողմից ինձ ուղղված հարցերի բովանդակությունից:

Ն.Մ.– Ես կողմ եմ բոլոր տեսակի քննադատություններին, պետք է հնչի քննադատությունը: Ցանկալի է դա լինի օբյեկտիվ և ոչ վիրավորական հնչերանգներով: Մեր պահանջները միայն դրանք են:

Ա.Գ.– Հասկանալի է: Ես երբեք մարդկանց չեմ վիրավորել, որովհետև իմ բնավորության մեջ նման գիծ չկա և կրթվածությունս նույնպես դա թույլ չի տալիս: Այսօր ես չեմ անդրադառնալու Լևոն Տեր-Պետրոսյանին, քանզի արդեն ակնհայտ է, որ նա պարտվել է: Պարտված մարդուն քարկոծելը, կարծում եմ, անշնորհակալ գործ է: Ուստի, եկեք ուրիշ թեմաների անցնենք:

Ն.Մ.– Դա կորոշեն ընտրողները, ո՛չ ես, ոչ Դո՛ւք:

Ա.Գ.– Անշուշտ, միանգամայն ճիշտ եք:

Ն.Մ.– Պարոն Գեղամյան, այնուամենայնիվ, քաղաքագետներն արդեն համարձակվում են որոշակի վերլուծություններ անել և նախընտրական փուլի վերջին շրջանում ավելի շատ կենտրոնանում են Ձեր նշած թեկնածուի և իշխանության թեկնածուի վրա: Գնում ենք ընտրությունների, կարծես թե, միայն նրանց ընտրելու: Մյուս 7 թեկնածուներին, քաղաքագիտական տերմիններով, արբանյակների դեր է հատկացված: Ես Ձեր մեկնաբանությունը կուզենայի լսել ոչ միայն որպես թեկնածուի, այլ նաև այս ամենում փորձ ունեցող մարդու:

Ա.Գ.– Ձեր գնահատականը տեղին է, համապատասխանում է իրականությանը և տեղավորվում է այն թեզի մեջ, որը հենց այս նույն տաղավարում ես հնչեցրել էի. այն է՝ Սերժ Սարգսյանի համար ամենաերազելի թեկնածուն Լևոն Տեր-Պետրոսյանն է, որովհետև այսօր 9-ը թեկնածուների մեջ նրանից ավելի խոցելի թեկնածու չկա: Եվ, բնականաբար, իմանալով, որ բոլորից հեշտ կլինի տապալել հենց Լևոն Տեր-Պետրոսյանին, ընտրապայքարն ընդունել է այդ ուղղվածությունը: Ասվածի վկայությունն այն է, որ արդեն իսկ փաստացի նյութերի վրա հիմնված զարհուրելի այնպիսի բացահայտումների ականատեսն ենք դառնում, որ վերջնականապես հասկանում ենք՝ Լևոն Տեր-Պետրոսյանի վերադարձը կլինի ազգային աղետ: Այս ամենում մենք ձեզ հետ միասին գործ ունենք Հերոստրատի բարդույթի սինդրոմի հետ: Հերոստրատը, ունենալով մեծ նկրտումներ, սակայն հետն էլ լինելով միջակություն, ամեն գնով ուզում էր իր անունը գրվեր պատմության մեջ, ուստի ընտրեց ամենաստոր ճանապարհը. այրեց էֆեսիո Արտեմիսի տաճարը, որն համարվում էր աշխարհի 7 հրաշալիքներից մեկը: Էֆեսի իշխանությունները, հասկանալով, որոնք են եղել Հերոստրատի հանցանքի դրդապատճառները, թե այդ սինդրոմի հետևում ինչ է թաքնված, պարզապես արգելել էին Հերոստրատի անունը որևէ տեղ հիշատակել: Այ, հիմա, մեր իշխանությունները չարգելեցին, ընդհակառակը, ուռճացրին Լևոնի միֆը, մոռացության մատնված այդ առասպելը, որովհետև դասեր չառան պատմությունից, թե ինչպես էին ժամանակին ուզում Հերոստրատի անունը մոռացության տալով՝ բնաջնջել, և ինչպես դա ձախողվեց, երբ պատմիչներից մեկը հիշատակեց Արտեմիսի տաճարն այրողի՝ Հերոստրատի անունը: Ահա, այդպես գործող իշխանությունները կրկնեցին հունական հին պատմիչի սխալը և հնարավոր ամեն բան արեցին, որպեսզի քաղաքական ասպարեզից մեկընդմիշտ հեռացած Լևոն Տեր-Պետրոսյանին վերակենդանացնեն: Սակայն Լևոն Տեր-Պետրոսյանի ճակատագիրն ավելի խոստումնալից հուն է մտնում, որովհետև նա վերջերս շատ խաղաղ մտքեր է արտահայտում: Մասնավորապես, նա ասաց, որ անցած տարիներին 500-ից ավել ծառ է տնկել իր տնամերձում: Ակամա հիշեցի Հռոմի կայսր Դիոկլետիանոսին, որը 305 թ. հոժարակամ կայսրությունից հրաժարական տվեց: Երբ տարիներ անց Դիոկլետիանոսին հարցրին՝ արդյոք չի՞ ցանկանա ետ վերա-

դառնալ և դարձյալ ստանձնել Հռոմի կայսրի պաշտոնը, Դիոկլետիանոսը, լինելով իմաստուն մարդ, հարցը տվողներին տարավ ու ցույց տվեց իր բանջարանոցը, այնտեղ աճեցրած կաղամբը և այսպես պատասխանեց. կարծում եմ, եթե դուք իմ աճեցրած այս կաղամբը նախօրոք տեսնեիք, ինձ նման անհեթեթ հարց երբեք չէիք տա: Ուզում եմ հավատալ, որ եթե ինձ հետ միասին Դուք էլ տեսնեիք պարոն Տեր-Պետրոսյանի տնկած ծառերը, ապա երբեք ու երբեք չէինք հանդգնի անգամ իսկ մտածել, որ նա, բացի այգեգործությամբ զբաղվելուց, ինչու չէ, նաև պատմական երկեր գրելուց, կարող է վերադառնալ քաղաքականություն: Այդ գործերն ակնհայտորեն նրա մոտ ավելի լավ են ստացվում: Տեսե՞ք, էլի շեղեցիք, Լևոն Տեր-Պետրոսյանի թեմային անցա:

Ն.Մ.– Ես չեմ շեղել, Դուք, ըստ երևույթին, շատ փիլիսոփայորեն եք տրամադրված Լևոն Տեր-Պետրոսյանի հանդեպ: Այսինքն՝ Ձեր ասելով Լևոն Տեր-Պետրոսյանը գալիս է երկրում իրավիճակն ապակայունացնելո՞ւ:

Ա.Գ.– Այո, դա ակնհայտ է: Եվ, տեսեք, նա ի՞նչ է ասում Մեղրիում: Ասում է. ով չմիանա իր ղեկավարած խմբին, դավաճան է, և երիտասարդ խոստումնալից Նախագահի թեկնածուին վիրավորանք է հասցնում:

Ն.Մ.– Երբ Դուք 2004 թ. մասնակցում էիք ապրիլյան միտինգներին, ապակայունացնո՞ւմ էիք իրավիճակը:

Ա.Գ.– Բացարձակապես ոչ, որովհետև թե՛ այն ժամանակ, թե՛ հիմա՝ մեր կարգախոսն էր՝ հանուն ազգային միաբանության: Մենք սլաքն ուղղում էինք արատավոր այն դրսևորումների վրա, որոնք քայքայում էին մեր պետականությունը, պահանջում էինք, որ իշխանությունները կատարեն Սահմանադրական դատարանի պահանջը՝ վստահության հանրաքվե անցկացնելու կապակցությամբ:

Ն.Մ.– Բայց Դուք բախվեցիք իշխանությունների հետ: Եվ դրա մեջ կա՞ր ապակայունացման գործոն:

Ա.Գ.– Իշխանությունների կողմից վիճակն ապակայունացնելու փորձ, անշուշտ, կար, որովհետև խաղաղ ցուցարարների վրա, որոնք ոչ մի մարտնչող կարգախոսով հանդես չէին գալիս, բիրտ ուժ կիրառելը միտում էր երկրում ստեղծված իրավիճակն ապակայունացնել: Այսօրվա զարգացումների հետ համեմատության և ոչ մի եզր չկա: Ապրիլյան միտինգի հռետորների ելույթներից Դուք չեք բերի գեթ մեկ մեջբերում, որտեղ ասվեր՝ ով չմիանա շարժմանը, նա դավաճան է:

Ն.Մ.– Ապրիլյան դեպքերը ես շատ լավ հիշում եմ. Արտաշես Գեղամյան, Ստեփան Դեմիրճյան, Արամ Սարգսյան՝ ձեռք ձեռքի տված: Դուք հպարտությամբ արտաբերում էիք, որ ժողովուրդ, տեսեք, մենք միասնական ենք, մենք չենք ընկճվի:

Ա.Գ.– Միանգամայն ճիշտ եք:

Ն.Մ.– Բայց ի՞նչ բան է քաղաքականությունը, տարբեր ի՞նչ ափեր է տանում: Դա է՞լ է իրականություն:

Ա.Գ.– Միանգամայն ճիշտ եք: Քաղաքականության մի քանի դրսևորում հիշեմ, ըստ որում՝ Հայաստանում ընդհանուր մթնոլորտը լիցքաթափելու համար: Այո, քաղաքականությունը շատ դաժան բան է: Ակամա հիշեցի Արման Ժան Դյուպլեսիի կյանքն ու կենսագրությունը: Դա նույն ինքը՝ կարդինալ Ռիշելյեն է, ֆրանսիական ակադեմիայի հիմնադիրներից մեկը: Եվ, ի՞նչ եք կարծում, հրաշագործ պետական գործիչ լինելով հանդերձ, նրա թաղումից գրեթե 80 տարի անց ֆրանսիական մեծ հեղափոխության առաջնորդները՝ Մաքսիմիլիան Ռոբեսպիերի գլխավորությամբ, նրա աճյունը անարգեցին՝ հողից հանեցին ու նետեցին ամբոխի ոտների տակ: Դա տեղի է ունեցել 18-րդ դարի վերջին: Իսկ արդեն 19-րդ դարի ֆրանսիացի պատմաբանները նույն կարդինալ Ռիշելյեին ճանաչեցին Ֆրանսիայի պետական ամենահզոր գործիչներից մեկը, որն իր քաղաքականությամբ նպաստել էր, որ Ֆրանսիան դառնա Եվրոպայի ամենաքաղաքակիրթ երկիրը:

Ն.Մ.– Հասկացա, ի՞նչ եք ակնարկում, միգուցե պատմությունը Ձեզ կբերի...

Ա.Գ.– Դաժան է, չէ՞: Կարելի է հիշել նաև Օլիվեր Կրոմվելի կյանքը:

Ն.Մ.– Պատմությունը թողնենք պատմությանը:

Ա.Գ.– Թողնենք պատմությանը:

Ն.Մ.– Դուք այսօր համարձակվել եք նաև դը Գոլի հետ համեմատվել:

Ա.Գ.– Ես իրավիճակների համեմատություն եմ արել:

Ն.Մ.– Ես չեմ ասում՝ սխալ եք արել: Միգուցե դա ...

Ա.Գ.– Բնականաբար, քաղաքական գործիչը, եթե ուզում է բարի հետք ու համբավ թողնել, այլ ոչ թե ասած ռուսի՝ նասլեդիտ, կեղտոտ հետք թողնել, ապա պետք է իր քայլերը, իր գործողություններն ու աշխարհընկալումը դարձնի համահունչ քաղաքական այն գործիչների գործերի հետ, որոնց դերը սեփական իսկ երկրների պատմության և կայացման մեջ անուրանալի են եղել: Դը Գոլից անցնենք մի քիչ ավելի ուշ ժամանակաշրջան:

Ն.Մ.– Գանք մեր օրերին:

Ա.Գ.– Չէր խանգարի, որ դը Գոլի խոսքը մեկ անգամ ևս հնչեր մեր եթերում: Նա ասում էր. քաղաքական ցանկացած գործիչ վաղ, թե ուշ կանգնում է երկընտրանքի առաջ: Նա հարկադրված է դավաճանել կամ պետությանը, կամ էլ դավաճանել ընտրողներին տված իր խոստումներին: Եվ Մեծ ֆրանսիացին պատասխանել էր. գերադասում է ընտրել երկրորդ ճանապարհը:

Ն.Մ.– Դուք էլ ե՞ք ընտրել երկրորդը:

Ա.Գ.– Այո:

Ն.Մ.– Համեմատությունն այս դեպքում շատ տեղին է: Մի կարճ հարց, և կանցնենք ընդմիջման: Դուք շատ խոսեցիք, ես ստիպված էի լռել, որովհետև հետաքրքիր բաներ էիք ասում:

Ա.Գ.– Շատ չէի կարող խոսել, որովհետև ընդամենը 10 րոպե ենք եթերում:

Ն.Մ.– Պարոն Գեղամյան, զուտ մարդկայնորեն, կուսակցությունը լքածներին այս ընթացքում չի՞ փորձել դարձի բերել, չե՞ն եղել հանդիպումներ:

Ա.Գ.– Իսկ ինչո՞ւ, չէ՞ որ ճիշտ ձեր եթերից համատեղ աշխատանքի համար իմ շնորհակալական խոսքն արդեն իսկ ուղղել եմ կուսակցությունը լքածներին, մեր մոլորյալ 13 ընկերներին:

Ն.Մ.– Զրուցեիք, ինչո՞ւ են լքել:

Ա.Գ.– Ինչո՞ւ պետք է զրուցեի, եթե իրենք պարզապես իրենց ընտրությունն են կատարել:

Ն.Մ.– Մարդիկ գուցե հետ գային:

Ա.Գ.– Նրանց արդեն կօգնի միայն բարձրյալը, որովհետև իրենք, փաստորեն, պետականամետ «Ազգային Միաբանության» փոխարեն նախընտրեցին պետականաքանդ Լևոն Տեր-Պետրոսյանին: Բավականին հետաքրքիր բլատնոյ երգ կա, շատ ընդունված երգ է, հատկապես այն մարդկանց կողմից, ում Լևոն Տեր-Պետրոսյանը խոստացել է համաներում շնորհել՝ էժան հեղինակություն վաստակելու համար: Երգի խոսքերից հիշարժան են՝ “И как променяла” որոշակի ձևակերպում, “меня, на такое” որոշակի ձևակերպում:

Ն.Մ.– Պարոն Գեղամյան, մի քիչ շատ եք տրամադրված դեպի նույն թիրախը, որը միշտ արել եք: Արդեն դա արել եք:

Ա.Գ.– Դուք եք ուղղորդում: Ձեր պրոֆեսիոնալիզմն այդտեղ էլ է երևում: Ինքներդ հրահրում եք, որ ես հիշատակեմ Լևոն Տեր-Պետրոսյանի անունը, ես հիշատակում եմ, հետո դուք հմտորեն հանդիմանում եք ինձ. դա պրոֆեսիոնալիզմի նշան է: Ուրիշ բան, որ մեր շահերն այստեղը համընկնում են. դուք շահագրգռված եք, որ Լևոնի անունը շատ հնչեցնեմ, այլապես Շառլ դը Գոլից չէիք բերի հասցնի Լևոն Տեր-Պետրոսյանին:

Ն.Մ.– Ես շահագրգռված եմ մի բանում, որ թեկնածուներից, որքան հնարավոր է լսեմ բացարձակ ճշմարտություն: Դուք որերո՞րդ անգամ եք մասնակցում նախագահական ընտրություններին, երրո՞րդ:

Ա.Գ.– Այո, միանգամայն ճիշտ եք՝ 1998 թ., 2003 թ., 2008-ին: Սա իմ երրորդ մասնակցությունն է նախագահական ընտրություններին:

Ն.Մ.– Ձեր վերջին հանդիպումը, ես հիշում եմ, մտավորականների հետ էր:

Ա.Գ.–Նախավերջին:

Ն.Մ.– Նախավերջի՞նն էր դա:

Ա.Գ.– Այո:

Ն.Մ.– Մտավորականները շա՞տ դժգոհեցին իրենց վիճակից: Դուք, ինչ որ լուծումներ առաջարկեցի՞ք, մարդկանց աջակցելու, օգնելու կամ ինչ որ բան շտկելու համար:

Ա.Գ.– Հանդիպումը ստեղծագործող մտավորականության հետ էր: Հանդիպման արդյունքում ես հասկացա մի բան, որ ստեղծագործող մտավորականն աջակցության, հովանավորության կարիք է զգում: Հուսադրող էր այն,

որ նրանք իրենց պատրաստակամությունը հայտնեցին կանգնել պետության կողքին, պաշտպանել նրան, լինել պետության հենասյուները, դրանցից մեկը: Եվ այդ հանդիպման ժամանակ ակամայից …

Ն.Մ.– Պետության, թե՞ Ձեր կողքին:

Ա.Գ.– Պետության կողքին:

Ն.Մ.– Այդ հանդիպումը Ձե՞ր շահագրգռվածությունն էր:

Ա.Գ.– Բացարձակապես: Հանդիպումը կազմակերպելիս մենք պայմանավորվել էինք ընդհանրապես չանդրադառնալ նախագահական ընտրություններին, այլ խոսել ստեղծագործող մտավորականներին հուզող հարցերի մասին, և մեր զրույցը ծավալել միայն այդ խնդիրների շուրջ: Հանդիպման ընթացքում հովանավորչության մասին մտորելիս ակամայից հիշեցի այն պայմանները, որոնցում ստեղծվեցին իտալական վերածննդի, ռենեսանսի շեղևրները: Այդ շեղևրները չէին ստեղծվի, եթե այն ժամանակվա երկրի կառավարիչները չհովանավորեին ստեղծագործողներին: Այսպես, որպես քանդակագործ, որպես գեղանկարիչ, ինչու չէ, նաև որպես ճարտարապետ, գիտնական չէր կայանա Միքելանջելոն, եթե նրան մեծագույն աջակցություն չցուցաբերեր Ֆլորենցիայի կառավարիչը՝ Լորենցո Մեդիչին: Նա անձամբ հովանավորեց, որ Միքելանջելոն կտրվի առօրեա հոգսերից և ստեղծի իր կատարյալ քանդակները, արձանները, մասնավորապես, նրանք, որոնք այսօր գեղեցկացնում են Ֆլորենցիայում Կապելլա Մեդիչին, այնտեղ տեղադրված հրաշքով՝ Առավոտ, Ցերեկ, Երեկո, Գիշեր, չորս հիասքանչ արձաններով: Ես հիշեցի այն տարիներին իրար հաջորդող Հռոմի երեք պապերին, ովքեր նույն Միքելանջելոյին հովանավորում էին, որ նա ի զորու լինի ստեղծել Սիքստինյան Կապելլայի առաստաղի զարմանահրաշ որմնանկարները:

Ն.Մ.– Մենք էլ հիանալու, հրճվելու համար կոթողներ ունենք, բայց դրանցից շատերը անմխիթար վիճակում են: Իտալացիներին, փաստորեն, հաջողվում է, մեզ՝ ոչ: «Արարման ծրագիրը» տալի՞ս է դրա պատասխանը:

Ա.Գ.– Անշուշտ, անշուշտ, տալիս է դրա պատասխանները: Տալիս է այնքանով, որ ազգին ոգեկոչում է համախմբվել ազգային արժեքների, ազգային գաղափարների շուրջ: Դրա հիմքում այն համոզմունքն է, որ ազգային արժեքներ ստեղծողները, ազգային գաղափար կրողները, նախևառաջ, նրանք են, ովքեր կապանքներից ազատ մտավորականներ են, հատկապես ստեղծագործող մտավորականներ: Մեր հանդիպմանը մասնակցում էին ազգային հիասքանչ գեղանկարիչ Սլավա Պարոնյանը, տաղանդավոր մի մարդ, տաղանդաշատ քանդակագործ Արա Շիրազը, շատ շնորհալի քանդակագործ Տիգրան Արզումանյանը, այլ մտավորականներ, ովքեր իրենց ողջ կենսագրությամբ, խոսքը ստեղծագործական կենսագրության մասին է, ազատ են եղել կապանքներից:

Ն.Մ.– Հայաստանում քաղաքականությունը կապա՞նք է հայ մտավորականին:

Ա.Գ.– Եթե չեն ստեղծվում դարերի կյանք ունեցող կոթողներ, եթե չեն ստեղծվում հայ ժողովրդին մեծ համբավ բերող, պատմական և գեղարվեստական արժեք ներկայացնող հարստություններ, կնշանակի, ամեն ինչ այնպես չէ, ինչպես պետք է լիներ: Կնշանակի, ինչ որ խոչընդոտող հանգամանք կա: Այդ հանդիպման ժամանակ Արա Շիրազը, Երրորդ հանրապետության ստեղծման տարիներին լինելով Հայաստանի նկարիչների միության նախագահը, մի զարհուրելի պատմություն հիշեց: Փոխանցեմ դա. երբ Ա. Շիրազը դիմում է երկրի Նախագահին (ըստ որում, պարկեշտությունից դրդված, անգամ իսկ չասաց, թե այն ժամանակ Նախագահն ով էր), ասելով, որ նկարիչները, որոնք բավականին շնորհալի են այսօր, քան երբևէ, աջակցության կարիք են զգում, ապա հետևում է հետևյալ պատասխանը. թող նկարիչներն իրենց կտավները տանեն, փողոցում ցուցադրեն և, ըստ արժանվույն, կգնահատվեն:

Ն.Մ.– Փողոցում չգիտեմ, բայց լավ նկարն իր տեղը կգտնի:

Ա.Գ.– Միշտ այդպես չէ, որովհետև…

Ն.Մ.– Ամբողջ աշխարհում է այդպես, Ձեր սիրած Եվրոպայում էլ է այդպես, նույն Իտալիայում է այդպես:

Ա.Գ.– Կնշանակի, դուք այնքան մոտիկից չեք ծանոթացել Մոդիլիանիի կյանքին, Վինսենթ վան Գոգի, եթե դուք ծանոթանայիք…

Ն.Մ.– Ձեր նշած արվեստագետներին ես շատ մոտիկից ծանոթ չեմ, բայց ուժերիս ներածին չափով ուսանողական տարիներին ուսումնասիրել եմ:

Ա.Գ.– Նրանց կյանքը, եթե ուշադիր ուսումնասիրեիք, ապա կպարզեիք, որ կիսաքաղց կյանքով են ապրել, որովհետև այն ժամանակ էլ այնպես չի եղել, որ բոլորը մշտապես հասկացել են նույն Գոյայի առաքելությունն ու առաքինությունը: Սեզանին եղբայրն է օգնել, թե չէ քաղցած կմնար: Վինսենտ վան Գոգի, Պիսարրոյի, Դոբինիի կրած զրկանքների մասի՞ն ասեմ: Բացառությամբ մի քանիսի, որոնք, ի սկզբանե, հարուստ են եղել, մասնավորապես, էդուարդ Մանեն, խոսքը հայտնի իմպրեսիոնիստի մասին է, մնացած շատ-շատերը, որպես կանոն, չքավորի կյանքով են ապրել, մինչդեռ այդ շեդևրները, որոնցով այսօր հիանում է աշխարհը, ստեղծած են եղել: Հիմա էլ նույնն է: Գնա մեռի, արի սիրեմ. չէի ցանկանա, որ նման կարգախոսով առաջնորդվեինք:

Ն.Մ.– Տաղանդաշատ ստեղծագործողը ժամանակակից կյանքում կգտնի՞ իր տեղը: Լավ կլինի, որ պետությունն օգնի, որ պետությունն արագ հարթի այն ճանապարհը, որ ինքը՝ ստեղծագործողը, դժվարությամբ է անում: Ես այստեղ Ձեզ հետ համաձայն եմ: «Արարման ծրագիրը» Սուրբ գրքի ձևավորմա՞մբ է ցուցադրվել, այսօր ես ճի՞շտ նկատեցի: Դա քաղաքակա՞ն միտում է, թե՞, իրոք, այդ աստիճանի արժեք եք տեսնում:

Ա.Գ.– Սուրբ գրքի ձևավորումը բացարձակապես առնչություն չունի մեր

«Արարման ծրագրի» ձևավորման հետ: Ուրիշ բան, որ մագաղաթանման թղթի վրա այնտեղից մեջբերում անելով՝ ուզում ենք ընդգծել, որ հայ ժողովրդի հարստությունը և հաղթաթուղթը ոչ այլ ինչն է, քան միտքը: Փոխաբերական իմաստով դա է իր մեջ: Ինչ վերաբերում է Սուրբ գրքին, ապա կա մի Սուրբ գիրք, դա եղել և մնում է Աստվածաշունչը: Եվ Աստվածաշնչի հետ մրցակցել կարող է միայն խենթը, մոլագարը կամ էլ, ինչ ասեմ, որոշակի այլ արատով տառապող մարդը:

Ն.Մ.– Ձեր կուսակից ընկերներից մեկը «Առաջ Հայաստան» կարգախոսին ավելացրեց՝ «Առաջ Հայաստան»՝ «Արարման ծրագրով»: Կարծեմ, այդպիսի միտք հայտնեց:

Ա.Գ.– Հայտնած միտքը փոքր-ինչ այլ ձևակերպում ուներ. Արտաշես Գեղամյանի հեղինակած «Արարման ծրագրով»՝ «Առաջ Հայաստան»: Այո, դա Սարգիս Մուրադխանյանն էր: Ես այդտեղ շատ դրական բան եմ տեսնում: Նա կամրջում է մեր ծրագիրը «Առաջ Հայաստան» ծրագրի հեղինակի հետ, ասելով, որ մենք էլ ենք ուզում Հայաստանն առաջ ընթանա, Հայաստանը զարգանա: Մենք այդ զարգացումը տեսնում ենք մեր «Արարման ծրագիրը» կիրառելով, բայց գաղափարին մենք էլ ենք կողմ:

Ն.Մ.– Դուք «Առաջ Հայաստան» ծրագրի տակ կստորագրեի՞ք:

Ա.Գ.– Վերապահումներով, այո:

Ն.Մ.– Մեր ժամանակն ավարտվեց: Ինձ ասում են՝ դուրս եկ եթերից:

Ա.Գ.– Տեսնո՞ւմ եք, ինչ դաժան են: Խեղդում են խոսքի ազատությունը:

Ն.Մ.– Բայց ես ուզում էի հարցնել, սա ի՞նչ գիրք է:

Ա.Գ.– Սա շատ հետաքրքիր գիրք է: Սա Վլադիմիր Ադրիանովի գիրքն է՝ “Глубокоуважаемому Арташесу Гегамяну, крупному политическому деятелю Армении с наилучшими пожеланиями, от автора, 1 ноября, 2007 г.” ընծայագրով: Կարդում ենք, թե ո՞վ է Ադրիանով Վլադիմիր Դմիտրիևիչը. “Помощник первого заместителя правительства Российской Федерации Дмитрия Анатольевича Медведева”. Ինչո՞ւ եմ այս գիրքը բերել հեռուստասրահ, որովհետև այսօր անհարկի հիշատակվել է հարգարժան Վլադիմիր Ադրիանովի անունը: Իբր, նա ասել է, որ ոչ պրոտոկոլային հանդիպում է կայացել Լևոն Տեր-Պետրոսյանի և Դմիտրի Անատոլևիչ Մեդվեդևի միջև, ինչը չի մեկնաբանում: Այս տեղեկությունը 100%-անոց սուտ է: “И в помине Левона Тер-Петросяна в приемной Дмитрия Анатольевича Медьведева не было”,- նրա խոսքերն են:

Ն.Մ.– Պարոն Գեղամյան, մենք պայմանավորվեցինք, որ փետրվարի 19-ից հետո կա 20, 21:

Ա.Գ.– Միանգամայն ճիշտ եք, 21-ից հետո էլ, եթե ոչինչ չփոխվի, կա 22-ը: Ես պարզապես ուզում եմ օգնել Լևոն Հակոբիչին: Ես ուզում եմ Լևոն Հակոբիչին փորձանքներից զերծ պահել, որ նա փորձանքի չտանի ժողովրդին և հետո էլ ինքը ամենամեծ փորձանքի մեջ չընկնի: Սա իմ կողմից մարդասիրական դրսևորում է:

ՏԱՍՆՅԱԿ ՀԱԶԱՐԱՎՈՐ ՀԱՄԱԿԻՐՆԵՐՍ ՔՎԵԱՐԿԵՑԻՆ ՀԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ

ՀՀ Նախագահի փետրվարյան ընտրությունները, ըստ էության, ուրվագծեցին այն նույն պատկերը, որը ստացվել էր դեռևս նախորդ տարվա ԱԺ մայիսյան ընտրություններից: Առաջադրված ինը թեկնածուներից հինգի, այդ թվում նաև «Ազգային Միաբանության» ղեկավարի ստացած քվեները, նախնական տվյալների համաձայն, չանցան նույնիսկ մեկ տոկոսի սահմանագիծը: ԱՄ առաջնորդ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԻ հետ մեր զրույցը ծավալվեց ընտրություններին առնչվող մի քանի հարցերի շուրջ:

– Պարոն Գեղամյան, ինչպե՞ս եք գնահատում փետրվարի 19-ին կայացած ընտրությունների ընթացքը՝ հաշվի առնելով ընտրատեղամասերում տեղի ունեցած միջադեպերը:

Փիլիսոփայորեն: Նախագահական ընտրությունները երկրում ստեղծված սոցիալ-տնտեսական և բարոյահոգեբանական վիճակի ճշգրիտ արտացոլումն են:

– Դուք որպես Նախագահի թեկնածու, ընդունո՞ւմ եք ընտրությունների արդյունքները, թե՞ ոչ:

Ընդունում եմ, սակայն վերապահումով:

– Նախագահի մեկ այլ թեկնածու Արթուր Բաղդասարյանի նախընտրական գրասենյակը տեղեկացրել էր, որ պատրաստվում են բողոքարկել ընտրությունների արդյունքները, Դուք կդիմե՞ք Սահմանադրական դատարան, թե՞ ոչ:

ՍԴ դիմելու անհրաժեշտություն այս պահին չեմ տեսնում:

Չնայած Սերժ Սարգսյանը Ձեզ էր համարել իր հիմնական մրցակիցներից մեկը, սակայն Ձեր ստացած քվեները նվազեցին 7 անգամ նույնիսկ 2007 թ. ԱԺ ընտրությունների համեմատ: Ձեր դիտարկմամբ՝ ինչո՞վ է պայմանավորված Ձեր ձայների անկման դինամիկան:

Մեր կուսակցության բազմահազարանոց բանակը և տասնյակ հազարավոր իմ համակիրներն անսացին խնդրանքիս՝ քվեարկելով հանուն հայրենիքի փրկության: 1960-ական թվականներին ֆրանսիացի ականավոր պետական գործիչ, Ֆրանսիայի նախագահ Շառլ դը Գոլը արտահայտել էր հանճարեղ միտք: «Յուրաքանչյուր քաղաքական գործիչ իր կյանքում գոնե մեկ անգամ կանգնում է երկընտրանքի առաջ. կամ դավաճանել պետության շահերին, կամ էլ դավաճանել ընտրողներին տված իր խոստումներին: Ես գե-

րադասում եմ երկրորդը», ասել էր դը Գոլը: Մեր պարագայում իմ ընտրողները նույնպես գերադասեցին փրկել հայրենիքը՝ «դավաճանելով» ինձ: Ես հպարտանում եմ նման բարձր գիտակցականություն ունեցող իմ տասնյակ և տասնյակ հազարավոր կուսակիցներով ու համակիրներով: Մենք միասին այսօր էլ գտնվում ենք նույն ճամբարում, վերահաս վտանգից Հայոց պետականությունը փրկողների ճամբարում:

– Դուք կանխատեսումներ էիք արել ընտրական և հետընտրական ժամանակաշրջանում իրավիճակի ապակայունացման վերաբերյալ: Ձեր կանխատեսմամբ՝ ի՞նչ հանգուցալուծում կստանան հետընտրական զարգացումները:

Ինչպես վկայում են ընտրությունների արդյունքները՝ ժողովրդի նվազագույնը 50%-ը իր կյանքում ակնկալում է փոփոխություններ տեսնել: Այսօր առավել քան կարևոր է, որ ՀՀ Նախագահի նախկին 8 հավակնորդները (բացառությամբ ԼՏՊ-ի, որն ակնհայտորեն այլ խնդիր է լուծում) հավաքվեն կլոր սեղանի շուրջ և «Հանուն ազգային միաբանության» ուղերձով դիմեն համայն հայությանը:

ՕՖԵԼՅԱ ՔՈՉԱՐՅԱՆ

«Իսկական Իրավունք», 22-25.II.2008:

ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԵՆՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼՈՒ

«Ի՞նչ են ակնկալում մարդիկ: Մարդիկ ակնկալում են լուրջ պայքար կոռուպցիայի, կաշառակերության, ամենաթողության դեմ, սոցիալական ծանր վիճակում հայտնված հարյուր հազարավոր մարդկանց կյանքի բարելավում: Երբ ուշադիր վերլուծում ես թե՛ Լևոն Տեր-Պետրոսյանի, թե՛ Արթուր Բաղդասարյանի, թե՛ Վահան Հովհաննիսյանի, թե՛ Վազգեն Մանուկյանի, թե՛ Սերժ Սարգսյանի, թե՛ իմ և բոլոր մյուս թեկնածուների ծրագրերը և հրապարակային ելույթները, ընդհանրական շատ և շատ բան ես գտնում: Եթե բոլորիս նպատակը մեկն է՝ Հայաստանը տեսնել որպես զարգացած ժողովրդավարական պետություն, տրամաբանությունն ասում է, որ դատապարտված ենք այդ հարցերը լուծելու շուրջ համագործակցելու»,– կարծում է ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԸ:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒՐՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ

Հասարակությունը կարծես թե կամաց-կամաց դուրս է գալիս մարտի 1-2-ի «ցնցակաթվածից», և իրավիճակը գոնե արտաքուստ հանգիստ է: Այս իրավիճակում ի՞նչ անել՝ հետընտրական «զանգվածային պսիխոզի» կրկնությունը բացառելու համար: Մեր հարցերին պատասխանում է «Ազգային Միաբանության» նախագահ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԸ:

– Ստեղծված իրավիճակում պետք է փորձենք առանց ավելորդ կրքեր բորբոքելու հասկանալ՝ ի՞նչ տեղի ունեցավ: Ըստ էության, Հայաստանի ընտրողների մոտ 48 տոկոսը երկրում ակնկալում էր լուրջ փոփոխություններ և այդ փոփոխությունները պայմանավորում էր իշխանափոխությամբ: Սա առաջին իրողությունն է, որ անհրաժեշտ է ձևակերպել:

Այսինքն՝ խոսքը վերաբերում է ոչ միայն Լ. Տեր-Պետրոսյանի օգտին քվեարկած 350 հազար քաղաքացիներին, այլև նրանց, ովքեր իրենց ձայնը տվել են ՕԵԿ-ի, Դաշնակցության, մյուս թեկնածուների օգտին, որոնք քարոզարշավի ժամանակ հանդես էին գալիս իրավիճակն արմատապես փոխելու, նորացնելու կարգախոսներով:

Եվ հետաքրքրականն այն է, որ Սերժ Սարգսյանի օգտին քվեարկած 53 տոկոսը նույնպես ակնկալում է երկրում իրականացնել փոփոխություններ, իհարկե, դա չկապելով իշխանափոխության հետ: Փաստորեն, մենք այս հարցում ունենք համազգային կոնսենսուս: Դրան հասնելու ճանապարհները, մոտեցումներն են տարբեր:

Այս իրավիճակում, հաշվի առնելով, որ հասարակությունը լուրջ փոփոխությունների ակնկալիք ունի, պետք է փորձենք վերլուծել՝ որ ճանապարհն է ավելի արդյունավետ ազգային շահի, պետականության զարգացման և, իհարկե, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի հայանպաստ կարգավորման տեսանկյունից: Եթե այս դիտանկյունից ես մոտենում հարցին, հանգում ես այն եզրակացության, որ, նկատի ունենալով ընտրությունների արդյունքները, թերևս, իշխանական թեկնածուի առաջարկած ճանապարհը, այնուամենայնիվ, ամենապահանջվածն է:

Ցավոք, անգամ իսկ հետընտրական զարգացումների պայմաններում, հասարակության ճնշող մեծամասնության կողմից պահանջված փոփոխությունների գաղափարը Լ. Տեր-Պետրոսյանը փորձեց շահարկել ընդամենը մի նպատակի հասնելու համար՝ զավթել իշխանությունը, հետին պլան մղելով, ավելին՝ բացարձակապես արհամարհելով պետության շահը, ժողովրդի միասնականությունը, միաբանությանը հասնելու գերխնդիրը:

Եթե Լ. Տեր-Պետրոսյանի իրական նպատակը Հայաստանի զարգացումը լիներ, ինքն իրավունք չուներ ի սկզբանե բացառել համագործակցությունը ընտրություններին հաղթող ճանաչված թեկնածուի հետ, ավելին՝ դուռը փակել կաթողիկոսի առջև: Ըստ որում, հատուկ նշեմ, որ խոնարհվում եմ կաթողիկոսի այդ իսկական հայրապետական դրսևորման առաջ: Նա դրանով իսկ վերստին ապացուցեց, որ արժանի է այն մեծագույն տիտղոսին, որ կրում է:

Երբ այդ ամենը համադրում ես, հասկանում ես՝ ով է իրականում առաջնորդվում ժողովրդի շահերով, և ով օտարի խնդիրներն է փորձում լուծել, ինչքան էլ ձգտի քողարկել իր քայլերը ամենալավ կարգախոսներով, խոստումներով, որոնց պակասը Տեր-Պետրոսյանի ելույթներում չէր զգացվում: Բայց, ավաղ, խոսքի ու գործի միջև մեծագույն անջրպետ կար:

– Այնուամենայնիվ, երբևէ կարո՞ղ էիք պատկերացնել, որ հայը կարող է հայ զինվորի վրա ձեռք բարձրացնել: Ինչպե՞ս հասանք դրան:

– Այն, ինչ տեղի ունեցավ, ցավոք, հետևանք է ավելի լուրջ խնդիրների: Խեղվել է հայ մարդուն, հայ ընտանիքին բնորոշ արժեհամակարգը: 88-ին յուրաքանչյուր մտավորական, անկախ նրանից՝ ԽՄԿԿ անդա՞մ էր, թե՞ ոչ, պաշտոնյա՞ էր, թե՞ ազատ ստեղծագործող, իր պարտքն էր համարում բարձրաձայնել իր կարծիքը, գնահատականներ տալ երկրում ծավալվող զարգացումներին, որովհետև մարդիկ հասկանում էին, որ լուծվում է մեր պետության համար բախտորոշ մի հարց: 20 տարի անց դարձյալ Հայաստանի համար բախտորոշ հարցեր են լուծվում, բայց մեր տասնյակ ու տասնյակ ակա-

դեմիկոսներ, գիտնականներ, ստեղծագործող մտավորականներ, չգիտես ինչու, դիտորդի կեցվածք են ընդունել. ասես բոլորը դարձել են «գերքաղաքակիրթ» և չեն ուզում որևէ մեկի թանին թթու ասել: Այն դեպքում, երբ խոսքը ինչ-որ մարդկանց խնայելու, նրանց զգացմունքները վիրավորելու մասին չէ, այլ Հայաստանի լինել-չլինելու մասին է:

Իհարկե, պարտադիր չէ, որ յուրաքանչյուրի տեսակետը համընկնի իշխանական կամ արմատական ընդդիմադիր տեսակետներին: Կարևորն այն է, որ յուրաքանչյուր մարդ ազնիվ գտնվի և իր տեսակետների մասին հրապարակավ հայտարարի, որպեսզի ժողովուրդը ճիշտ կողմնորոշվի: Թեպետ վերջին 17 տարիներին խոսքը այն աստիճան արժեզրկվել է, որ անգամ ճշմարիտ միտքը, եթե քննադատական լիցք ունի, հաճախ չի արժանանում պաշտոնական այրերի ուշադրությանը: Այդ օտարացումը հասարակության ներսում կա, և այսօր մենք այդ օտարացման ամենադառը պտուղներն ենք ճաշակում:

Ավելին՝ երբ խոսում ես պետության, պետականության ամրապնդման մասին, իսկույն ևեթ քեզ փորձում են դասել այն մարդկանց շարքը, որոնք ցանկություն ունեն դուր գալ իշխանություններին, մոռանալով, որ իշխանությունները փոփոխական են, իսկ պետականությունը մնայուն, մշտնջենական արժեք է: Այսօր մենք պետք է փորձենք հստակեցնել երկրի գոյատևման, վաղը՝ զարգացման համար առանցքային խնդիրները՝ ընդունելով դրանք որպես մայրուղային ուղեցույցներ, և փորձենք հասկանալ՝ այդ խնդիրները ինչպես պետք է լուծվեն, այդ հարցերի լուծումը ինչ զոհողություններ է պահանջում յուրաքանչյուրիցս, ինչ սպասելիքներ պետք է պետությունը ունենա քաղաքացուց, և քաղաքացին պետության ղեկը ստանձնած մարդկանցից ինչ հանդիպակաց քայլեր պետք է ակնկալի: Առավել ևս չպետք է մոռանանք 350 հազար, թերևս հասարակության համար չկորսված, բայց մտքերում մոլորված մարդկանց մասին, որոնք երկրի ապագան, ավա՜ղ, կապեցին Լ. Տեր-Պետրոսյանի հետ:

– Ինչպե՞ս վարվել Տեր-Պետրոսյանի հետ, որ, հետևորդների լուրջ բազմություն ունենալով հանդերձ, իրեն դուրս դրեց կառուցողական դաշտից:

– Այս պարագայում, կարծում եմ, տեղին չէ խոսել Լ. Տեր-Պետրոսյանի հետ երկխոսության գնալու մասին: Դա ի սկզբանե պարապ զբաղմունք է: Տեր-Պետրոսյանի հետ երկխոսության գնալով՝ ընդամենը իր «գինը» կբարձրացնենք դրսից իրեն ֆինանսավորողների աչքում: Պետք է երկխոսության մեջ մտնել 350 հազար ընտրողների հետ:

Հույս ունեմ՝ մարտի 13-ին իրեն ուղղված հարցերին պատասխանելով՝ նորընտիր Նախագահ Սերժ Սարգսյանը կփորձի դա անել, և դա կլինի այն մտքի տրամաբանական զարգացումը, որի մասին վարչապետը խոսել է վերջերս իր հրապարակային ելույթներում: Նա, այո, քաղաքացիական հեռատե-

սություն և համարձակություն ունեցավ՝ ապաշխարանք խնդրելու Հայաստանի Հանրապետության անկախության 17 տարիների ընթացքում գործված սխալների համար: Նա ոչ միայն ընդունեց կատարված սխալները, ճանաչեց նաև սեփական մեղավորությունը, այլև խորապես զղջաց այդ ամենի համար, ավելին՝ խոստացավ, որ իր ընտրվելու պայմանում նման բաները երբեք չեն կրկնվի:

Հաղթողը ապաշխարեց, և այդ ապաշխարանքը բոլորիս նվաճումն է: Ինչպես նաև մեկնարկային այն խոստումնալից ու հեռանկարային քայլը, որից ազգովի չօգտվելու իրավունք չունենք: Հիմա դա պետք է վերահաստատվի, որպեսզի մարդիկ վստահ լինեն, որ ընտրված Նախագահը ոչ միայն իր համակիրների, այլև բոլորի Նախագահն է:

Եվ, կրկնում եմ, պետք է երկխոսություն ծավալվի ոչ թե Վահան Հովհաննիսյանի, Վազգեն Մանուկյանի, Արտաշես Գեղամյանի, առավել ևս երբեք ու երբեք Լևոն Տեր-Պետրոսյանի, այլ ՀՀ քաղաքացիների, հատկապես՝ այն 350 հազար ընտրողների հետ, ովքեր, երկրի լավն ուզենալով, ճանապարհն էին սխալ ընտրել:

Պետք է մարդկանց ցույց տալ ճիշտ ուղին, որպեսզի նրանք այլևս հրապարակում հնչող դատարկ խոսքերի հետևից չգնան: Այս առումով՝ ամենակարևորը, ըստ իս, արդեն իսկ արվել է: Դա, կրկնում եմ, այն է, որ ընտրված Նախագահն ընդունել է ոչ միայն սեփական, այլև ուրիշների գործած սխալների ողջ ներկապնակը, հանգամանք, որը շատ ավելի գնահատելի է:

Փաստորեն, 17 տարվա սխալներն այդ մարդը ընդունելով իր վրա, ըստ էության, Լևոնի իշխանավարության տարիներին կատարված, մեղմ ասած, սխալներն էլ է ընդունել իր վրա: Այսինքն՝ մենք երկու հետաքրքիր մարդկային տեսակների հետ գործ ունենք: Մի կողմից՝ նախկին Նախագահը, որը գրեթե չի ընդունում իր իշխանավարման տարիներին գործած բազում հանցավոր դրսևորումները, և մյուս կողմից՝ Երրորդ հանրապետության երրորդ Նախագահը, որն իր վրա է ընդունել ոչ միայն իր, այլև ուրիշի սխալները, ոչ միայն ընդունել է, այլև ներողություն է խնդրել՝ զղջացել: Ոչ միայն զղջացել է, այլև, կրկնեմ, խոստացել, որ այդ սխալներն այլևս կբացառվեն:

Սերժ Սարգսյանի երկրորդ կարևոր դրսևորումը, որ պետք է առանցքային համարվի, այն է, որ Հանրապետության հրապարակում բազմահազարանոց հանրահավաքի ժամանակ հայտարարեց, որ Թատերական հրապարակում մեր քույրերն ու եղբայրներն են: Այսինքն՝ հաղթող մարդը ձեռք մեկնեց նրանց, ասելով. իմ հաղթանակը հաղթանակ չէ, եթե դուք ինձ հետ չեք, ժողովրդի մի հատվածը չի կարող իրեն հաղթած ճանաչել մյուսի նկատմամբ, որովհետև բոլորս մի ազգ ենք, մի պետություն ենք: Այսինքն՝ սա նախորդ իր ելույթների տրամաբանական շարունակությունն էր:

Երրորդ քայլը, որ կարևորում եմ, այն է, որ ընտրված Նախագահը պատրաստակամություն հայտնեց համագործակցել քաղաքական ուժերի, այդ

թվում՝ ընդդիմության հետ և երկրի առջև կանգնած խնդիրները միասին հաղթահարել:

Համոզված եմ, եթե այդ համագործակցությունը կայանա, ապա մեզ կհաջողվի հաղթահարել երկրում ստեղծված լարված իրավիճակը: Իհարկե, կլինեն նաև ոտնձգություններ, բայց փաստն այն է, որ մեր երկրի պարագայում աշխարհաքաղաքական, օտարածին վիթխարի ծրագրեր տապալվեցին՝ շնորհիվ այն վճռականության, որ դրսևորեց հանրապետության քաղաքական իշխանությունը:

Գիտեք, որ երբեք չեմ եղել ո՛չ Ռոբերտ Քոչարյանի, ո՛չ Սերժ Սարգսյանի երկրպագուն, բայց չեմ կարող չարձանագրել, որ պետականության հանդեպ մեծագույն պատասխանատվությունից ելնելով՝ գործող Նախագահը չգնաց պետության հաշվին, առավել ևս պետությունը վտանգելով, բարություն անելու ճանապարհով և շատ պատասխանատու որոշումներ կայացրեց, իմանալով, որ դա կշահարկվի թե՛ Լ. Տեր-Պետրոսյանի, թե՛ նրա թիկունքում կանգնած ժողովրդավարություն քարոզող միջազգային այլևայլ ուժերի կողմից և, անշուշտ, միանշանակ չի ընկալվի մեր հասարակության կողմից: Ի վերջո՝ այս ամենը կանցնի-կգնա, և տարիներ անց, վստահ եմ, բոլորը կասեն, որ, ինչպես Սերժ Սարգսյանը՝ իր երեք առանցքային դրսևորումներով, այնպես էլ Ռոբերտ Քոչարյանը՝ վերջին ամիսների գործողություններով և իր պատասխանատու պահվածքով, ապացուցեցին, որ Հայաստանի Հանրապետությունը այս բախտորոշ ժամանակաշրջանում ուներ մշտական պետական շահերով առաջնորդվող ղեկավարություն:

Սա է լինելու մեր օրերին տրվելիք պատմության գնահատականը: Եվ այս ամենի մասին ասում եմ հանգիստ խղճով, որովհետև մի ամիս անց ավարտվելու է նրա Նախագահի լինելու ժամկետը, և նրան դուր գալու խնդիր բնավ չեմ ունեցել և հիմա էլ չունեմ: Պարզապես փաստն եմ արձանագրում:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

«Հայոց Աշխարհ», 12-13.III.2008:

ԿԱ ԱՐԴՅՈ՞Ք ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄ

Հայաստանի Հանրապետությունում, եթե կա ճգնաժամ, ապա դա աշխարհաքաղաքական երանգավորում ու ենթատեքստ ունեցող ճգնաժամ է: Բանն այն է, որ 2008թ. փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների արդյունքում հիմնավորապես ձախողվեցին աշխարհաքաղաքական այն հեռահար նպատակները, որոնք փորձ էր արվում Տեր-Պետրոսյանի ընտրվելու պարագայում իրականացնել ոչ միայն Հայաստանում, այլև Հարավային Կովկասում:

Ձախողման փաստն ակնհայտ դարձավ, երբ բացահայտվեց, որ Լևոն Տեր-Պետրոսյանի մասնակցությունը նախագահական ընտրություններին հետապնդում էր միայն մեկ նպատակ՝ ամեն գնով ապակայունացնել իրավիճակը երկրում: Դրանով իսկ պարարտ հող ստեղծել միջազգային զանազան կազմակերպությունների և նրանց թիկունքում կանգնած ուժային կենտրոնների համար՝ միջամտելու մեր երկրի ներքին գործերին: Ձեռնարկված գործողությունների վերջնական արդյունքը պետք է լիներ Հայաստանն իր դարավոր բարեկամ ու դաշնակից Ռուսաստանից կտրելը և տարածաշրջանում Թուրքիայի հեգեմոն դիրքերի հաստատելը:

Այս նպատակով հրահրվեցին հետընտրական շրջանում տեղի ունեցած չարտոնված հանրահավաքներն ու զանգվածային անկարգությունները, ինչն այսօր այդ իսկ ուժերը փորձում են ներկայացնել իբրև քաղաքական ճգնաժամ:

Մինչդեռ քաղաքական ճգնաժամի մասին խոսք լինել չի կարող: Հայաստանի Հանրապետությունում, այո, կա ճգնաժամ: Դա հավատի ճգնաժամ է, որը տարիներ շարունակ մեր ժողովրդին է ներարկվել հիշական մամուլի միջոցով: Խնդիր էր դրված մեր ժողովրդի գիտակցության մեջ սերմանել թերահավատություն գործող ընդդիմության նկատմամբ, ինչին շատ դեպքերում տուրք է տվել նաև իշխանական քարոզչամեքենան՝ այս կերպ ամայացնելով ընդդիմադիր քաղաքական դաշտը: Դրան զուգահեռ, բոլոր հնարավոր միջոցներով անվստահություն էր ներարկվում նաև իշխանությունների նկատմամբ:

Ցավոք, հասարակական այս մտայնությունը ձևավորելուն նպաստել է իշխանությունը նույնպես՝ իր ոչ ժողովրդահաճո քաղաքականությամբ: Եվ հիմա հավատի ճգնաժամը մենք պարտավոր ենք հաղթահարել ազգովի: Յուրաքանչյուրը պետք է ընդունի մեղքի իր բաժինը ու ապաշխարանք խնդ-

րի: Այս առումով, կարծում եմ, նորընտիր Նախագահի կատարած առաջին քայլերը դրա լավագույն օրինակն են շատ ու շատերի համար:

Մենք պետք է աչալուրջ լինենք: Հայաստանի Հանրապետությունն այսօր ապրում է իր նորագույն պատմության ամենաբախտորոշ ժամանակաշրջանը, երբ հայտնի ուժերը համառորեն փորձում են երկրի ներսում ձևավորել «հինգերորդ շարասյուն» և պետությունն ու ժողովրդին տանել մեծագույն փորձությունների ճանապարհով:

Դա մենք թույլ չենք տա: Հայաստանը ինքնիշխան, իրավական պետություն է, և մեր սահմանադրական այս անքակտելի դրույթը մենք պետք է աչքի լույսի պես պահպանենք: Անհրաժեշտ է, որ մենք կարողանանք կանխել ուժի միջազգային ցանկացած կենտրոնի միջամտությունը մեր երկրի ներքին գործերին:

Առավել ևս, պետք է բացառել մատ թափ տալու և մեզ խելք սովորեցնելու երկակի ստանդարտներով առաջնորդվող ցանկացած ուժային կենտրոնի արկածախնդրությունը: Համարձակություն ունենանք և բարձրաձայնենք, որ հենց նրանց վարած քաղաքականությունն է առաջացնում քաղաքակիրթ աշխարհի զարմանքը:

«Հայոց Աշխարհ», 15.III.2008:

ԽՈՀԵՐ 2008 Թ. ՄԱՐՏԻ 1-Ի Հ ՀԵՏՈ

Այն, ինչ տեղի ունեցավ 2008 թ. մարտի 1-ի լույս 2-ի գիշերը, 2007 թ. սեպտեմբերի 21-ին՝ Հայաստանի Հանրապետության անկախության տարեդարձի օրը, Լևոն Տեր-Պետրոսյանի ունեցած ելույթի տրամաբանական շարունակությունն էր՝ ողբերգական ավարտով: Իրադրության նման վտանգավոր զարգացումները մենք կանխատեսել էինք ավելի վաղ և ամենևին էլ պատահական չէր, երբ սեպտեմբերի 7-ին «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահությունը հանդես եկավ հայտարարությամբ՝ կոչ անելով հանրապետության քաղաքական ազդեցիկ բոլոր ուժերին՝ դրանք լինեն իշխանական թևից, թե ընդդիմադիր, նստել կլոր սեղանի շուրջ՝ երկրի առջև ծառացած ծանրագույն խնդիրներին համատեղ, միացյալ ուժերով լուծումներ գտնելու համար: Ավա՜ղ, դա մեզ չհաջողվեց:

Ինչո՞վ էին պայմանավորված մեր այդ տագնապները, որտեղի՞ց էինք ամենից շատ սպասում վտանգներ: Այս հարցերին պատասխանելու համար հետադարձ հայացք գցենք անցած տարիներին հանրապետությունում, մեր հասարակության մեջ ընթացող զարգացումների, ձևավորվող մթնոլորտի վրա:

1998 թ. փետրվար - մարտին, իշխանափոխությունից հետո, երբ Ռ. Քոչարյանին, Վ.Սարգսյանին, Ս.Սարգսյանին և նրանց համախոհներին հաջողվեց մեր ժողովրդի վրայից թոթափել Լևոն Տեր-Պետրոսյանի վարչակարգի ծանր լուծը, երկրի ազգաբնակչության որոշակի հատվածի մոտ հույսեր արթնացան, որ, վերջապես, Հայաստանում արմատախիլ կարվեն այն բոլոր անարդարությունները, ամենաթողությունը, ալան - թալանը, մարդկանց անպաշտպան լինելու իրավիճակը, արատավոր մյուս երևույթները, որոնք, ասես թե, խարանի պես դաջվել էին տերպետրոսյանական վարչախմբի վրա: Ցավոք, իշխանափոխությանը հաջորդած առաջին տարում ժողովրդի սպասելի և արդարացիորեն պահանջված այս ակնկալիքները չիրականացան: Թե ի՞նչ պատճառով, դա առանձին խոսակցության թեմա է: Մարդիկ խոր հիասթափություն ապրեցին:

Դրան հետևեց 1999 թ. մայիսի 25-ի Ազգային ժողովի ընտրությունները: Կրկին մարդկանց զգալի հատվածի մոտ նոր հույսեր արթնացան՝ պայմանավորված Վազգեն Սարգսյան - Կարեն Դեմիրճյան ձևավորված դաշինքով: Սակայն ճակատագիրը նորից մեջքով շրջվեց մեր ժողովրդից, տեղի ունեցան 1999 թ. հոկտեմբերի 27-ի ողբերգական դեպքերը: Մեր ազգը ենթարկվեց բարոյահոգեբանական ծանր ցնցումների: Արդեն իսկ ոճրագործությու-

նից հետո ակնհայտ դարձավ հրեշավոր մի դրսևորում, այն է՝ եղեռնագործության զոհերը դեռ հողին չէին հանձնվել, երբ գտնվեցին մարդիկ, ովքեր ցուցակը ձեռքներին պաշտոններ ստանալու ակնկալությամբ վերջնագրեր էին ներկայացնում Հանրապետության Նախագահ Ռ. Քոչարյանին: Վերջնագրում բերված պահանջները չբավարարելու դեպքում՝ սպառնում էին բանակի և երկրապահի ընդվզումով: Այդ օրերին հանրապետության քաղաքական ողջ դաշտը հիշեցնում էր գերության մեջ ընկած բելոռուսական պարտիզանի՝ քար լռություն էր պահպանում: Ճակատագրի բերումով ստացվեց այնպես, որ քաղաքական գործիչներից միայն ես իմ պարտքը համարեցի ընդունել անվանի, պարկեշտ հեռուստալրագրող, երջանկահիշատակ Ռոբերտ Մավիսակալյանի հրավերը և «Արմենիա» հեռուստաալիքի ուղղիղ եթերից դիմել մեր ժողովրդին, ինչպես նաև արցախյան պատերազմում իրենց հերոսաբար դրսևորած գեներալներին՝ Մանվել Գրիգորյանին, Սեյրան Սարոյանին ու նրանց ռազմական ընկերներին… Այն օրերին ունեցած հեռուստաելույթս ինձ այդպես էլ չներեցին նախորդ վարչակարգի կարկառուն դեմքերը, առավել ևս նրանց հսկողության ներքո գտնվող լրատվամիջոցները:

Անցել է շուրջ տասը տարի և, կարծում եմ, ժամանակն է որոշ, մինչ օրս, անպատասխան մնացած հարցերին պարզաբանումներ տալ: Այն ժամանակ ես իրավունք չունեի բարձրաձայնել, թե երկրում ստեղծված վիճակն ի՞նչ աստիճանի պայթյունավտանգ էր. խոսքս ոչ թե իշխանությունների, այլ Հայոց պետականության լինել - չլինելու մասին է: Իրավունք չունեի մեր ժողովրդի հետ կիսվել ու հայտնել, որ Արաքսի մյուս ափին տեղակայված թուրքական զինուժը բերված էր ռազմական առավել բարձր պատրաստության: Իրավունք չունեի խոստովանել, որ Ռուսաստանի Դաշնության այդ ժամանակվա արտակարգ և լիազոր դեսպան Անատոլի Մատվեևիչ Դրյուկովի առանձնասենյակում, ՌԴ պաշտպանության նախարարության արտաքին կապերի գլխավոր վարչության պետ, գեներալ-գնդապետ Լեոնիդ Գրիգորևիչ Իվաշովի հետ (հայ ժողովրդի այս երկու անկեղծ բարեկամների, իրավամբ, ռուս հայրենասերների հետ) մեր պետության համար բախտորոշ ինչպիսի հարցերի լուծման անմիջական մասնակիցն ու ականատեսն էի եղել: Իրավունք չունեի ասել, թե որքան ազնիվ, ռուսական բանակի լավագույն ավանդույթների դպրոցն անցած, պարկեշտ վարքագիծ դրսևորեց ՀՀ պաշտպանության նախարար, գեներալ-լեյտենանտ Վաղարշակ Հարությունյանը, ում փառահեղ պահվածքի մասին դեսպանի մոտ պատմում էր գեներալ-գնդապետ Իվաշովը: Իրավունք չունեի բարձրաձայնել Սերժ Սարգսյանի խիստ հավասարակշռված և արժանապատիվ կեցվածքի մասին, ինչում համոզվեցի այդ օրերին արդեն Ազգային անվտանգության նախարարությունում նրա հետ ունեցած երկժամյա զրույցից հետո: Եվ, վերջապես, երբեք չպետք է ինձ թույլ տայի հրապարակավ հայտնել Արցախի ինքնապաշտպանության բանակի գլխավոր հրամանատար, Արցախի հերոս, գեներալ-լեյտենանտ Սամվել Բաբայանի՝ այդ օրերին ինձ ասված

այն խոսքը, որ Լեռնային Ղարաբաղի զինված ուժերը Հայաստանի Հանրապետությունում դեպքերի զարգացման ցանկացած պարագայում ենթարկվելու են միայն և միայն լեգիտիմ գլխավոր հրամանատար Ռոբերտ Քոչարյանի հրամաններին:

Վերոգրյալ և այսօր էլ դեռ հրապարակման չենթակա ուրիշ այլ գործոններով էր պատճառաբանված հեռուստաեթերից իմ հնչեցրած կոչը. «Մանվել ջան, Սեյրան ջան, Դուք արցախյան պատերազմի բովով անցած հերոսներ եք, խնդրում եմ, չտրվեք շտաբային քաղաքացիական առնետների սադրանքներին...»: Բարեբախտաբար, մեր գեներալները, երկրապահը ճակատագրական այդ օրերին դրսևորեցին խելամիտ, հերոսներին վայել պահվածք: Ազգովի հնարավոր դարձավ խուսափել եղբայրասպան զինված ընդհարումներից: Երկիրը շահեց, իսկ Արտաշես Գեղամյանը դարձավ նախորդ իշխանությունների լրատվամիջոցների կատաղի հարձակումների հիմնական թիրախը:

Հիշեցնեմ նաև, որ ազգային հերոսների թաղման արարողությանը մասնակցած ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտինը և Պետական Դումայի խոսնակ Գենադի Սելեզնյովն ուղղակի հայտարարել էին, որ խիստ մտահոգված են նրանով, որ «Հայաստանում, չգիտես ինչո՞ւ, սպանվում են Ռուսաստանի մեծ բարեկամներ հանդիսացող հայ պետական գործիչները»: Ավելացնեմ նաև, որ այդ տագնապահարույց օրերին Լևոն Տեր-Պետրոսյանը նույնպես հանդարտության կոչով դիմել էր մեր ժողովրդին: Ուշագրավ է, որ ԼՏՊ-ին իմ խոսքի հետ նույնաբովանդակ կոչի համար և ոչ ոք չքննադատեց: Այո, երկուսիս խոսքի իմաստը նույնն էր, մինչդեռ դրդապատճառները տրամագծորեն տարբեր էին:

Այդ դեպքերից հետո մեր ժողովուրդը կրկին հայտնվեց անպաշտպան, ինչ որ տեղ լքված վիճակում: Հայ մարդը, որը գենետիկորեն նախաձեռնող, պրպտող է, ասես, երկրի ներսում իր համար չէր գտնում ինքնադրսևորման որևէ ոլորտ: Այդ ժամանակաշրջանում, մինչև 2003 թ., իշխանություններն այդպես էլ չկարողացան հրապարակ հանել ազգը համախմբող գաղափարներ, ազգի ընտրանուն միաբանող մոտեցումներ և միասնական ջանքերով լուծումներ պահանջող ծրագրեր:

Ընդդիմությունը հասարակության համախմբման փորձ կատարեց 2002 թ. երկրորդ կիսամյակում՝ 2003 թ. նախագահական ընտրությունների նախաշեմին, երբ ձևավորվեցին ընդդիմադիր երկու հզոր բևեռներ: Թվում էր, թե նախագահական ընտրությունների առաջին փուլից հետո, եթե ընդդիմության մի հատվածը հետևեր «Ազգային Միաբանություն կուսակցության» հորդորներին ու չմասնակցեր նախագահական ընտրությունների երկրորդ փուլին, ապա մեր ժողովրդի համար կբացվեին նոր, խոստումնալից հեռանկարներ: Սակայն կատարվեց այն, ինչի մասին բոլորը տեղյակ են: Այդ ամենի մասին շատ է խոսվել, այդ հարցերը հատկապես նախկին իշխանությունների կողմից

շատ են շահարկվել, մեր կողմից էլ բազմիցս տրվել են սպառիչ պարզաբանումներ, ուստի ավելորդ է կրկին դրանց անդրադառնալ: Նշեմ, որ խնդրո առարկայի շուրջ յուրաքանչյուր մարդ, համոզված եմ, արդեն իսկ ունի իր կարծիքը: Ոմանք՝ կարդալով ՀՀՇ-ական մամուլը, ոմանք՝ կարդալով և լսելով իշխանական լրատվամիջոցների մեկնաբանությունները: Ինքնին հասկանալի է, որ նրանք ձայները մեկ արած, խիստ անբարենպաստ երանգներով համեմված ներկայացնում էին այդ օրերին իմ դրսևորած պահվածքը: Մեր ժողովրդի մի հատվածն էլ կարողացել է ձևավորել իր սեփական կարծիքը՝ հիմք ընդունելով խնդրո առարկայի շուրջ իմ և իմ գործընկերների մեկնաբանությունները:

Ինչևէ, շարունակեմ խոսքս: 2003 թ. ընտրություններից հետո էլ ժողովրդի մի զգալի զանգված, խոստովանենք, նորից մնաց ձեռնունայն: Դրան հաջորդեցին 2004 թ. ապրիլյան ընդվզումները , որոնք դաժանորեն ճնշվեցին իշխանությունների կողմից: Ապա հետևեցին 2005 թ. նոյեմբերի 27-ի կեղծված հանրաքվեն, 2007 թ. մայիսի 12-ի Ազգային ժողովի յուրատեսակ ընտրությունները: Ընտրություններ, որոնց նման արդյունքների հասնելու հնարքին կխանդեր անգամ իսկ ինքը՝ Մեծն Դեյվիդ Կոպերֆիլդը: Իսկ ի՞նչ էր անում ժողովուրդը, տեղին կհարցնի ընթերցողը: Ասած Ալեքսանդր Պուշկինի «Բորիս Գոդունովում»՝ “Народ безмолвствовал”, «Ժողովուրդը լռում էր» … Եվ վրա հասավ 2008 թ. սեպտեմբերի 21-ի օրը:

Պատմական այս համառոտ ակնարկից հետո, որպեսզի մարդկանց մոտ տպավորությունն ամբողջական լինի, նշեմ. 1998 թ. իշխանափոխությունից հետո, տասը տարի շարունակ ՀՀՇ-ական մամուլը բարոյական հալածանքի է ենթարկել ոչ լևոնապաշտ ընդդիմադիր քաղաքական ցանկացած գործչի: Նպատակն էլ եղել է մեկը՝ ամեն գնով ամայացնել ընդդիմադիր քաղաքական դաշտը, թերահավատության մթնոլորտ սերմանել ընդդիմության նկատմամբ: Յուրաքանչյուր առիթ օգտագործվել է վարկաբեկելու բոլոր այն ուժերին, ովքեր, մերժելով գործող իշխանություններին, հանդգնում էին և ոչ մի դեպքում չընդունել Լևոնին: Նախորդ իշխանությունների որդեգրած այս քաղաքականությունը, ինչ խոսք, գործող իշխանությունների սրտով էր: Ինչպես վերն ասվեց, ընդդիմությանը նշավակող, վարկաբեկող ցանկացած նյութ վերջիններս սիրով իրենց բոլոր լրատվամիջոցներով տիրաժավորում էին:

Երկրում առկա բազում չլուծված խնդիրների պարագայում, ընդդիմադիր քաղաքական կուսակցությունների զգալի մասի Ազգային ժողովից օտարված լինելու պայմաններում, դրանից բխող ոչ միարժեք, բարոյահոգեբանական բարդ իրավիճակում հրապարակ իջավ Խավարի իշխանը, Նեռը: Արդարության առաջ չմեղանչելու նպատակով խոստովանենք, որ Լևոնի համար ստեղծված այս նպաստավոր պայմաններից զատ արդեն իսկ քարոզարշավի ընթացքում նրա գործողությունները կառուցված էին սոցիալական հոգեբանություն գիտության նվաճումներին համահունչ: Չթաքցնեմ, վերջին

օրերին վերընթերցել եմ XIX-XX դարերի սոցիալ-հոգեբանության անվանի մշակ Գյուստավ Լեբոնի (Le Bon) «Զանգվածների հոգեբանությունը» հայտնի գործը, XX դարի ճանաչված սոցիալ-հոգեբան, իսպանացի գիտնական Խոսե Օրտեգա-ի-Գասսետի «Զանգվածների ապստամբությունը» գիրքը, ավստրիացի գրող, հոգեբան Էլիաս Կանետտիի «Զանգվածները», ինչպես նաև Զիգմունդ Ֆրոյդի, Ալբեր Քամյուի և նշանավոր ուրիշ հեղինակների սոցիալական հոգեբանության, զանգվածների հնարավոր դրսևորումների մասին գրած այլ լուրջ վերլուծություններ: Ընթերցելով հիշատակված մտածողների աշխատությունները՝ վերստին խորհում էի վերջին վեց ամիսներին Հայաստանում ընթացող պրոցեսների, մարտի 1-ի լույս 2-ի գիշերը կատարվածի մասին: Այն սցենարը, որը փորձեցին իրականացնել մեր երկրում միջազգային շահագրգիռ կազմակերպությունները, օտար երկրների համապատասխան ծառայությունները վաղուց ի վեր գիտականորեն դասակարգված է, ավելին՝ վերջին տասնամյակներին քանիցս կիրառվել է մայրցամաքի բոլոր աշխարհամասերի երկրներում: Այնպես որ, մեր երկրում կատարվածը մեռած լեզուների, ինչ խոսք, ճանաչված գիտնական ԼՏՊ-ի խելքի բանը չէր: Ինքնին հասկանալի է, որ մեր ժողովրդի համար խաղարկվող այս դրամայում նրան հատկացված էր միայն դրսից իջեցված, վերջերս գույնզգույն, զանազան հեղափոխությունների ժամանակ փորձարկված հրահանգների ճշգրիտ իրագործողի դերակատարություն: Պատվիրատուների համար, որոնք գտնվում էին սահմանից անդին, խնդիրը դյուրին էր թվում, քանի որ Հայաստանի Հանրապետությունում լայնածավալ ընդվզումների համար, կրկնում եմ, անցած 10 տարիների ընթացքում ստեղծվել էր պարարտ հող: Ակնհայտ էր, որ թե՛ ընդդիմությանը, թե՛ իշխանություններին քվե տված ընտրողները միասնական էին մայր հարցում. ժողովուրդն ակնկալում և պահանջում էր, արդեն իսկ հրամայաբար էր պահանջում, փոփոխություններ…

«Փակագիծ», 23.III.2008:

ԱԶԳՈՎԻ ԼՐՋԱՆԱԼՈՒ ՊԱՀԸ

Ըստ Արտաշես Գեղամյանի, «Իրապես եկել է ազգովի լրջանալու պահը: Բայց լրջանալու՝ ոչ ըստ Լևոնի ու նրա վկաների պատկերացումների, որ հիշական թերթերի էջերում անթաքույց ցնծություն են ապրում: Հիացած են, որ «օգտագործելով իրենց անձնական կապերը» կարողացան Ստրասբուրգում Հայաստանի Հանրապետությունը խոցելի վիճակի մեջ դնել: Այդպիսով հնարավորություն ընձեռել, որ ադրբեջանական պատվիրակության անդամները՝ սեիդովները, գյուլթակինները, փաշաևաները և նրանց թուրք գործընկերները հանդես գան Հայաստանում ժողովրդավարության «հետընթացը» դատապարտողի դիրքերից՝ մեղադրողի կարգավիճակում, այն էլ՝ Հայոց ցեղասպանության 93-րդ տարելիցի նախաշեմին:

Ավա՜ղ, այդ օրին էլ հասանք, և դա հնարավոր դարձավ, որովհետև հայաստանյան պատվիրակությունը վախվորած գործելակերպ էր որդեգրել՝ ի սկզբանե մեղավորի կեցվածք ընդունելով և փորձելով Հռոմի պապից ավելի կաթոլիկ երևալ»:

ՈՉ ԹԵ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ Է ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ, ԱՅԼ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ

«Հայոց Աշխարհ»-ի հարցերին ի պատասխան՝ Հայաստանի ժողովրդավարական ինստիտուտների «անմխիթար վիճակի» մասին Եվրախորհրդի 1609 բանաձևին անդրադառնում է «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանը:

– Ուշադրությամբ հետևելով այն իրարանցմանը, որ ծավալվել էր հանրապետության լրատվամիջոցներում ԵԽ ԽՎ բանաձևի շուրջ, առաջին զգացումը, որ ունեցա, խորին հիասթափությունն էր: Մի՞թե կարելի է մեր երկրի համար այս բախտորոշ ժամանակաշրջանում սեփական իսկ կամքով հայտնվել ստրուկի կարգավիճակում, երբ պետությանդ ճակատագիրը կամ բախտը կրկին ու կրկին կապում ես օտարի, իսկ ավելի ճիշտ՝ մեր տարածաշրջանում նրանց շահերի հետ: Ուղղակի անհարմար ես զգում, երբ ականատես ես դառնում, թե ինչպես մերօրյա քաղաքական այրերը «թղթի շերեփը» ձեռքներին հիմա էլ Ստրասբուրգից են ուզում «հարիսայի» մեզ հասանելիք բաժնին արժանանալ:

Ավելին՝ իրենց գործողություններով այդ մարդիկ հիշեցնում են Գոգոլի

հերոսներին, ովքեր ձայնի և մարմնի դողէրոցքով սարսափահար բացակայում էին՝ “К нам едет ревизор”. Ժամանակակից տերմինաբանությամբ՝ գալիս է ինքը՝ ԱՄՆ պետքարտուղարի տեղակալի օգնական Մեթյու Բրայզան, Վենետիկի հանձնաժողովը, Ագոյի խումբը, Եվրամիության Հարավային Կովկասի պատասխանատու Պիտեր Սեմնեբին, էլի շատ-շատերը:

Թող ընթերցողի մեջ թյուր տպավորություն չստեղծվի, թե դեմ եմ երկրիս հետագա ժողովրդավարացմանը, Եվրախորհրդին անդամակցելիս մեր հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարմանը: Քավ լիցի, երիցս՝ ո՛չ: Ես դեմ եմ մեր հանդեպ երկակի ստանդարտների կիրառմանը, երբ մարդու իրավունքների պաշտպանի դերում հանդես են գալիս կառույցներ, որոնք տարիներ շարունակ իրենց լռելյայն համաձայնությամբ, ըստ էության, խրախուսել են մի ամբողջ ժողովրդի, մեր երկրի՝ Հայաստանի Հանրապետության ազգաբնակչության իրավունքների ոտնահարումը: Այսպես, 1993 թ. մինչ օրս Եվրախորհրդի անդամ երկրներ Թուրքիան իր հովանավորյալ Ադրբեջանի հետ միասին (վերջինս՝ 1988-ից) շրջափակման են ենթարկել Հայաստանի Հանրապետությունը՝ ծայր աստիճան ծանր կացության մեջ դնելով տասնյակ հազարավոր ձեռներեցների, Հայաստանի տնտեսությունն ամբողջությամբ:

Իսկ ինչպե՞ս են սրան արձագանքում աշխարհիս ժողովրդավարները: ԵԽ ԽՎ-ն, ԵԱՀԿ-ն, Մեթյու Բրայզան, Պիտեր Սեմնեբին, Ագոյի խումբն ու Վենետիկի հանձնաժողովը, էլի շատ ու շատ եկող-գնացողներ, մեզ «խելք սովորեցնող» մեծ ու փոքր տրամաչափի գործիչներ, ձեն ձենի տված, բերանները ջուր առած տարիներ շարունակ լռում են: Ավելին՝ աջակցում են Թուրքիայի՝ Եվրամիությանն անդամակցելու ջանքերին, ԵԽԽՎ-ի, ԵԱՀԿ-ի Խորհրդարանական վեհաժողովներում, ամերիկյան Կոնգրեսի հանձնաժողովներում արտահերթ քննարկումներ չեն կազմակերպում՝ Հայաստանը շրջափակումից ազատելու օրակարգով, էլ չասեմ, որ Թուրքիայի կամ Ադրբեջանի նախագահների օգնականներին էլ մերոնց նման գժի պիտակ չեն հանդգնում կպցնել:

– Բանաձևը, ի շարս ԵԽԽՎ այլ հանձնարարականների, իշխանություններին հորդորում է պայմաններ ստեղծել երկրում ընթացող գործառույթներում ընդդիմության, այդ թվում՝ արտախորհրդարանական ուժերի ավելի լայն ընդգրկումն ապահովելու համար: Սա ինչպե՞ս հասկանալ. իշխանությունը պետք է «դայակությո՞ւն» անի ընդդիմությանը:

– Առաջնային եմ համարում երկրի զարգացման գերակայության ապահովումը մնացած բոլոր գաղափարների և մոտեցումների նկատմամբ: Նախևառաջ բոլորս պետք է գիտակցենք, որ նախագահական ընտրություններին նախորդած և հաջորդած զարգացումները խստագույնս վտանգեցին Հայոց պետականությունը: Եվ սա բնավ էլ չափազանցություն չէ:

Եկեք անկողմնակալ բնութագրենք երկրում ստեղծված իրավիճակը. հի-

շական քարոզչամեքենան ամեն ինչ անում է, որ խորացնի մարդկանց անվստահությունը իշխանությունների և վաղվա օրվա նկատմամբ՝ թշնամություն սերմանելով մեր հիասթափված, հուսահատված ժողովրդի՝ ահելի, թե ջահելի, բոլոր խավերի մեջ: Իշխանատենչության մոլուցքը հասել է այն աստիճանի, որ ամենաանբարո ձևերով խարխլում են մեր հավատը, մեր դավանանքը՝ ստվեր գցելով անգամ իսկ Ամենայն Հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի վրա: Լևոնը և նրա վկաները չեն կարողանում ներել Վեհափառ հայրապետի գիտակցված քայլը, երբ Հայոց Աստծո սպասավորը գնաց Նեռի դուռը, արյունահեղությունը կանխելու համար գնաց երկխոսության, ինչը մերժվեց. բանակցությունների «մուտքը» փակ մնաց նրա առջև:

Այդժամ արդեն իսկ ազդարարվեց, որ Սև տանը պատրաստվում են սատանայական արյունալի խրախճանքի: Երբ համադրում ես մարտի 1-ի լույս 2-ի գիշերվա ողբերգական դեպքերը, միաժամանակ վերհիշում ամիսներ շարունակ լևոնականների կողմից ազգը պառակտող դավադիր գործողությունների շարքը և այդ տեսանկյունից մոտենում ԵԽԽՎ-ում, ամերիկյան Կոնգրեսում օրերս տեղի ունեցած քննարկումներին, ակնհայտ է դառնում, որ Լևոնի թիկունքում կանգնած միջազգային ուժի կենտրոններն ամենևին էլ չեն հաշտվել երկիրն ապակայունացնելու իրենց նպատակների ձախողման, 2008 թ. փետրվարի 19-ին կրած պարտության հետ:

Նրանք շատ լավ գիտակցում են, որ խաղասեղանին դրված են ոչ միայն տարածաշրջանային նշանակություն ունեցող խնդիրներ, այլև աշխարհաքաղաքական, չափազանցություն չի լինի ասել՝ նոր աշխարհակարգի ձևավորման հեռահար հարցեր (սա, սակայն առանձին վերլուծության նյութ է): Եթե այս դիտանկյունից ես գնահատում ԵԽ ԽՎ բանաձևի, մասնավորապես ընդդիմության համար «հատուկ պայմաններ» ստեղծելու վերաբերյալ հատվածը, կամա-ակամա ուզում ես քյավառցու պես բացականչել՝ «մեր խալ, քո խավես»:

– Իշխանություն-ընդդիմություն երկխոսության հեռանկարն ինչպե՞ս եք գնահատում:

– Առանձնահատուկ ուզում եմ շեշտել, որ այսօր Հայաստանում քաղաքական յուրաքանչյուր ուժի հասունության վկայությունը պայմանավորված է ոչ թե եվրոպացիներին, ամերիկացիներին դուր գալու համար դիմություն-ընդդիմություն ձևական երկխոսության ծավալմամբ, այլ հետևյալ պարզ ճշմարտության գիտակցմամբ: Եթե երկրի ներսում պառակտվածության աստիճանը հասել է այնտեղ, որ մեզանում գտնվում են տարրեր, որոնք հայերիս համար ապրիլի 24-ի սուրբ օրն անգամ փորձում են օգտագործել դրսից թելադրված, Հայոց պետականության խարխլմանն ուղղված նպատակների իրագործման համար, ապա թե՛ իշխանությունները, թե՛ բոլոր լրջմիտ քաղաքական այրերը պետք է գնան ստեղծված իրավիճակում պահանջված զոհողության:

Հիմա ժամանակը չէ եվրոպաներին, միջազգային զանազան կառույցներին գոհացնելու համար վտանգել Հայոց պետականությունը: Ո՞րն է իմ պատկերացմամբ զոհաբերության հիմնական տրամաբանությունը: Այն, ինչը զոհաբերում ես, հասկանալի է, որ պետք է ավելի ցածր լինի նրանից, հանուն ինչի զոհաբերվում ես: Ես գիտակցում եմ, որ հիմա ժողովրդավարությունից այս թվացյալ հետնահանջը կարող է միայն և միայն ժամանակավոր բնույթ ունենալ: Մենք պարտավոր ենք մեր ժողովրդին հնարավորություն ընձեռել առանց ավելորդ կրքերի, անկողմնակալ վերլուծել երկրի առաջ ծառացած մարտահրավերների վտանգավորության աստիճանը, հասկանալ, որ, նախ, անհրաժեշտ է պահպանել և ամրապնդել Հայաստանի Հանրապետությունը, որ հետո հնարավոր լինի այն ժողովրդավարացնել: Եվ հիմա մենք կանգնած ենք ճիշտ նման իրավիճակի առաջ:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

«Հայոց Աշխարհ», 24.IV.2008:

«ԿԵՆՏՐՈՆ» ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆ ՊԵՏՐՈՍ ՂԱԶԱՐՅԱՆԻ «ՈՒՐՎԱԳԻԾ» ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱՇԱՐԻ ՀՅՈՒՐԸ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆՆ Է

(27.08.2008 թ.)

ՊԵՏՐՈՍ ՂԱԶԱՐՅԱՆ – Բարի երեկո, ուղիղ եթերում «Ուրվագիծն» է և ես՝ Պետրոս Ղազարյանս: Սիրելի հեռուստադիտողներ, Դուք հետևում եք լրատվական թողարկումներին և գիտեք, որ Կովկասում շարունակվում է ճգնաժամը, Բաթում են ժամանում Միացյալ Նահանգների ռազմական նավերը, որոնք զինված են հեռահար հրթիռներով, մինչև 2005 կմ նրանք կարող են խփել: Փոթի են գալիս ռուսական ռազմական նավերը, կարծես թե, կոնֆլիկտը լուծվելու էր, կոնֆլիկտի հանգուցալուծումը չի երևում և նաև, չնայած Հայաստանում այդ զգացողությունը չկա, բայց ասեմ, որ մենք գտնվում ենք հենց այն տարածաշրջանում, որտեղ տեղի են ունենում այս գործողությունները: Երևանից Հարավային Օսեթիա ընդամենը 3 ժամվա ավտոմեքենայի ճանապարհ է: Ես երեկ ասացի, որ մենք կզրուցենք «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանի հետ:

Եվ այսպես սիրելի հեռուստադիտողներ, այսօր մենք կփորձենք վերլուծել, թե ի՞նչ է կատարվում Ռուսաստան - Արևմուտք փոխհարաբերություններում, ի՞նչ է կատարվում Կովկասում և ի՞նչ է կատարվում Հայաստանում, ավելի շուտ, ի՞նչ պետք է կատարվի Հայաստանում այս ամենից հնարավորինս քիչ կորուստներով դուրս գալու համար: Մեր հյուրն է «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանը: Բարի երեկո, պարոն Գեղամյան:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ – Բարև ձեզ:

Պ. Ղ. – Պարոն Գեղամյան, նախ, ինչո՞ւ Դուք այսքան ժամանակ չէիք երևում, Ձեր վերլուծություններով հանդես չէիք գալիս և այլն, հետաքրքիր է, ո՞ւր էիք:

Ա. Գ. – Հարգելի Պետրոս, նախ, շնորհակալություն հրավերի համար: Քաղաքականության մեջ գործում են նաև չգրված օրենքներ, այն է՝ իշխանափոխությունից հետո, երբ ձևավորվում է նոր կառավարություն, պաշտոնը ստանձնում են նոր նախագահը և նոր վարչապետը, ապա, առնվազն, 100 օր պետք է հնարավորություն ընձեռես, որ իրենք կարողանան ինքնադրսևորվել, որից հետո արդեն կուրվագծվեն որդեգրված քաղաքականության հիմնական ուղղությունները, որից հետո էլ նոր քեզ իրավունք կվերապահես դիտարկում-

ներդ անելու: Եթե մենք վերհիշենք, 100 օրի ավարտը համընկավ ամառային կիզիչ շոգերի ժամանակաշրջանի հետ, և առնվազն պետք է մարդ հոգեկան հիվանդ լիներ, երբ դրսում 40 աստիճան էր, գնար հեռուստակայան և սկսեր լուրջ հարցերի մասին հեռուստատեսությամբ ելույթ ունենալ: Դա առաջին: Երկրորդ. մենք նախատեսել ենք, որ սեպտեմբերի 10-12-ին անց ենք կացնելու «Ազգային Միաբանություն կուսակցության» ակտիվի ժողով, որտեղ էլ մանրակրկիտ վերլուծության ենք ենթարկելու Հայաստանի Հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական, ներքաղաքական իրավիճակը, ինչպես նաև տարածաշրջանում խմորվող զարգացումները, և մեր հստակ դիրքորոշումը հանձնելու ենք մեր ժողովրդի դատին ու քննարկմանը:

Պ. Ղ. – Հիմա վերադառնանք տարածաշրջանի խնդիրներին, պարոն Գեղամյան, իրավիճակը բավական բարդ և հակասական է ու, կարծես թե, չի երևում, ցավոք սրտի, կոնֆլիկտի վերջը, որովհետև երկու կողմն էլ, թե Ռուսաստանը, թե Միացյալ Նահանգները խոսում են մինչև վերջ գնալու, և ռազմական տեխնիկա են ներքաշում տարածաշրջան: Ինչպիսի՞ն է իրավիճակի Ձեր գնահատականը, խնդրեմ:

Ա. Գ. – Դուք միանգամայն ճիշտ եք՝ բնութագրելով ստեղծված իրավիճակը շատ մտահոգիչ և բարդ: Այդ հարցին պատասխանելու համար մենք փորձենք փոքր-ինչ վերհիշել, թե ի՞նչ աշխարհում ենք ապրում և կարողանանք այդ աշխարհի զարգացումների ենթատեքստում տեսնել ու քննարկել Հարավային Կովկասում ընթացող զարգացումները: 1990 թ. սեպտեմբերի 11-ին, լեզվի սայթաքում չէր՝ 90 թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշ Ավագը, Սադդամ Հուսեյնի զորքերը Քուվեյթ ներխուժելուց հետո, ելույթ ունեցավ ամերիկյան Կոնգրեսի երկու պալատների համատեղ նիստում, այն է՝ Սենատի և Ներկայացուցիչների պալատի: Այդ ելույթում նա ուղղակի ասաց, որ չնայած Պարսից ծոցում սկիզբ առած լուրջ զարգացումներին՝ պայմանավորված Սադդամ Հուսեյնի ներխուժմամբ Քուվեյթ, աշխարհում արդեն գործընկերային նոր հարաբերությունների ծնունդ է ուրվագծվում: Եվ մենք ականատեսը կլինենք պարտնյորական, գործընկերային նոր հարաբերությունների ծննդին, որը կձևավորի նոր աշխարհակարգ: Եվ առաջին անգամ նոր աշխարհակարգի մասին հայտարավեց, կրնում եմ, 1990 թ. սեպտեմբերի 11-ին: Ո՞րն էր այդ աշխարհակարգի բուն իմաստը: Դա այն էր, որ երկու բևեռ ունեցող աշխարհը Սովետական Միության փլուզումից հետո դարձավ միաբևեռ: Մենք վերջին 16-17 տարիներին ապրում էինք միաբևեռ դարձած աշխարհում, ուր հեգեմոն դիրքը զբաղեցնում էր Ամերիկայի Միացյալ Նահանգները, նրանց հակադրվող ու հակազդող և ոչ մի հավասարազոր ուժ այլևս աշխարհում չկար: Եվ հիմա այն, ինչ կատարվում է Հարավային Կովկասում, ըստ էության, արդեն նոր աշխարհակարգի ծնունդ է արձանագրում, երբ ի հայտ է գալիս ուժի երկրորդ բևեռը, ինչու չէ, սպասվում է նաև ուժի երրորդ բևեռի հնարավոր ձևավորումը: Եվ ահա սա է մայր խնդիրը, որ ԱՄՆ-ն և ոչ թե Ռուսաստանը ոչ ադեկվատ է արձագանքում այն ամենին, ինչ տեղի ունեցավ Հարավային Կովկա-

սում: Ոտքի կանգնած, մեջքը շտկած Ռուսաստանը, գիտակցելով սեփական արտաքին քաղաքականության ճշմարտացիությունը, գիտակցելով, որ Հարավային Կովկասը իր կենսական անվտանգության ապահովության հետ անմիջական կապ ունի, որդեգրեց այն դիրքորոշումը, որի ականատեսն ենք մենք: Մենք ձեզ հետ այսօր ականատես ենք շատ լուրջ աշխարհաքաղաքական փոփոխությունների, և նոր աշխարհակարգը, որի մասին հռչակել էր Ջորջ Բուշ Ավագը դեռ 1990 թ. սեպտեմբերի 11-ին, մեր օրերում փոփոխության է ենթարկվում: Սպասելի էր դա, իհարկե, սպասելի էր:

Պ. Ղ. – Այնպիսի տպավորություն է, որ Միացյալ Նահանգների համար անակնկալ էր Ռուսաստանի նման կոշտ դիրքորոշումը:

Ա. Գ. – Անդրադառնամ նաև այդ հարցին: Վերցրեք երկու տարի առաջ հրատարակված ամերիկյան արտաքին քաղաքականության ռահվիրաններ Զբիգնև Բժեզինսկու և Հենրի Քիսինջերի հայտնի աշխատությունները. Քիսինջերի աշխատությունը վերնագրված էր՝ «Արդյոք հարկավո՞ր է Ամերիկայի Միացյալ Նահանգներին արտաքին քաղաքականություն» (“Does America Needa Foreign Policy?”), իսկ Բժեզինսկու հեղինակած գիրքը՝ «Ընտրություն. Համաշխարհային տիրապետություն, թե գլոբալ լիդերություն» (“The Choise: Global domination or Global leadership”): Այսինքն՝ արդեն իսկ այդ հզոր ուղեղները, որոնք, անտարակույս, ամերիկյան ցանկացած վարչակազմի ուղեղային կենտրոնների ներկայացուցիչներ են հանդիսանում, դեռ 2001-2004 թթ. կանխատեսել էին, որ նեոկոնսերվատորների, այն է՝ Ջորջ Բուշի վարչակարգի կողմից վարվող արտաքին քաղաքականությունը, որը փորձում է ԱՄՆ ամրագրել որպես միահեծան հեգեմոն երկիր, հանգեցնելու էր նման զարգացումների, որի ականատեսը մենք եղանք վերջերս Հարավային Կովկասում: Հարավային Կովկասում Ռուսաստանն իր գործողություններով, ըստ էության, հայտարարում է, որ ձևավորվում է նոր աշխարհակարգ:

Պ. Ղ. – Պարոն Գեղամյան, Ռուսաստանը շատ բան է կուլ տվել: Նա կուլ տվեց Արևելյան Եվրոպայի երկրների ՆԱՏՕ-ի անդամ դառնալը, նա կուլ տվել Հարավսլավիայի ռմբակոծումը, նա կուլ տվեց Կոսովոյի անկախությունը, ինչո՞ւ հանկարծ նա որոշեց Կովկասում ցույց տալ, որ ինքը այլևս կուլ տալ չի կարող. դա ընդհանրապես Ռուսաստանի աշխուժացումի՞ց է, թե դա նույն Կովկասի տարածաշրջանի հետ է կապված:

Ա. Գ. – Դա համալիր խնդիր է: Ի դեպ, ձեր դիտարկումը միանգամայն տեղին է, եթե փոքր էքսկուրս անենք, ապա հիշենք, որ Ռուսաստանը…

Պ. Ղ. – Ո՞րն է Կովկասի առանձնահատկությունը:

Ա. Գ. – Հիմա կասեմ: Եթե մենք հետադարձ հայացք գցենք, ապա կհիշենք, որ դեռ 1980-ականների վերջին – 90-ական թվականների սկզբին Դաշնային Գերմանիայի կանցլեր Հելմուտ Կոլը և Հանս Դիտրիխ Գեյնշերը, որը արտաքին գործերի նախարարն էր, հրապարակավ երդվում էին այն ժամանակ դեռ չփլուզված Սովետական Միության, ուրեմն, ԽՄԿԿ Կենտկոմի Գլխավոր քարտուղարին, որ Բեռլինի պատը փլուզվելու պայմաններում ար-

դեն իսկ ՆԱՏՕ-ն իր աշխարհաքաղաքական առաքելությունը սպառած կլինի:

Պ. Ղ. – Ասում էին, որ դա չեզոքություն առաջ կբերի:

Ա. Գ. – Միանգամայն ճիշտ եք, նրանք ասում էին նաև, որ դեպի Արևելք ՆԱՏՕ-ի շարժ չի լինելու: Նույն հավաստիացումներն էին անում ամերիկյան պրեզիդենտ Բուշ Ավագը և նրան փոխարինած Բիլ Քլինտոնը …

Պ. Ղ. – Այսինքն՝ ՆԱՏՕ-ն չի ընդարձակվի և հավերժ չեզոքություն կպահպանի:

Ա. Գ. – Միանգամայն տեղին է ձեր դիտարկումը: Այլ կերպ ասած՝ Արևմուտքը, ի դեմս գոնե այս երկու հզոր պետությունների ղեկավարների կողմից տրված խոստումների, հետագայում դրանց տերը չդարձավ: Նրանք օգտվեցին այն հանգամանքից, որ Ռուսաստանի Դաշնության այն տարիների քաղաքական ղեկավարությունը կուլ տվեց այն խայծը, որը հրամցվեց իրենց «Վաշինգտոնյան կոնսենսուս» հայտնի ծրագրի, դոկտրինի շրջանակներում: Համաձայն Վաշինգտոնի Կոնսենսուսի հայեցակարգի՝ տնտեսական դրական գործունեության համար երաշխավորվում և պահանջվում էր ազատականացնել առևտուրը, ապահովել մակրոտնտեսական կայունություն և շուկայական գնագոյացում: Շեշտը դրվում էր զանգվածային սեփականաշնորհման, էկոնոմիկայում պետության կարգավորիչ դերակատարության մինիմալացման խնդիրների լուծման վրա: Այդ հայեցակարգում հաշվի չէին առնվել զարգացման այնպիսի կարևորագույն գործոններ, ինչպիսիք են՝ կրթության կատարելագործումը, տեխնոլոգիաների արդիականացումը, շուկայական տնտեսության ինստիտուտների զարգացումը, մրցակցության արմատավորումը և այլ հարցեր: Արդյունքում, ըստ էության, Կոնսենսուսը կոչված էր նպաստելու նրան, որ աշխարհում ձևավորվի «Ոսկե միլիարդը», այսինքն՝ աշխարհի բոլոր ժողովուրդները ստրուկի պես պետք է աշխատեն, որ ԱՄՆ-ի, Կանադայի, Եվրամիության Արևմտյան Եվրոպայի հատվածը կազմող երկրների ժողովուրդը և ճապոնացիները շատ լավ ապրեն, իսկ երկրագնդի 5-5,5 մլրդ մարդ իրենց քրտնաջան աշխատանքով ապահովեն դրանց բարեկեցիկ կյանքը: Եվ երբ Ռուսաստանի այդ տարիների իշխանությունները հլու հնազանդ տեղավորվում էին «Վաշինգտոնյան կոնսենսուս» ծրագրի շրջանակում, ապա փոխարենը Արևմուտքը շռայլորեն հայտարարում էր, որ Ռուսաստանում ժողովրդավարություն է, իսկ Բորիս Նիկոլայևիչ Ելցինն էլ ամենամեծ ժողովրդավարն է: Ղեկավարները այդ «կուտը» կերան այնքան ժամանակ մինչև սրանից ճիշտ 10 տարի առաջ՝ 1998 թ., վարչապետ Սերգեյ Կիրիենկոյի օրոք տեղի չունեցավ դեֆոլտ. դրանից հետո էր, որ Ռուսաստանի քաղաքական ընտրանու աչքերը բացվեցին և նրանք հասկացան, որ երկիրը գլորվում է անդունդը: Այդ ժամանակներում, եթե հիշում եք, արագընթաց կերպով Հյուսիսատլանտյան դաշինքի անդամներ դարձան Արևելյան Եվրոպայի նախկին «Վարշավայի պայմանագիր» անդամ պետությունները՝ Չեխիան, Հունգարիան, Լեհաստանը և մյուսները: Եվ դրան էլ հաջորդեց այն, որ

ՆԱՏՕ-ին անդամակցեցին Մերձբալթյան հանրապետությունները՝ Լիտվան, Լատվիան և Էստոնիան: Հյուսիսատլանտյան դաշինքը դարձավ ՌԴ-ին սահմանակից: Դրանից հետո էլ զարգացումները հասան այնտեղ, որ արդեն իսկ Բուխարեստում կայացած ՆԱՏՕ-ի գագաթաժողովում խոսք գնաց, որ ՆԱՏՕ-ին անդամակցեն Ուկրաինան և Վրաստանը: Թվում է, թե ի՞նչ վտանգներով է դա հղի, որ այդքան անհանգստանում են: Խնդիրներից մեկն էլ այն է, որ Ուկրաինան անդամակցելով ՆԱՏՕ-ին, համաձայն ՆԱՏՕ-ի կանոնակարգի, իրավունք չի ունենա այլ պետությունների ռազմական բազաներ պահպանել իր տարածաշրջանում: Դա էլ իր հերթին նշանակում է, որ Ուկրաինան, ի խախտում սեփական իսկ պայմանագրի, որն իրավունք է վերապահել Ռուսական սևծովյան նավատորմին հանգրվանել Սևաստոպոլում մինչև 2017 թ., պետք է վերջինիս անպայմանորեն դուրս մղի այնտեղից: Դե հիմա պատկերացրեք՝ Սևծովյան նավատորմը դուրս է գալիս Ուկրաինայի տարածքում գտնվող Սևաստոպոլի ռազմական նավահանգստից: Արդյունքում՝ ՌԴ-ի Սևծովյան նավատորմը առափնյա շատ փոքր տարածություն է ունենում, որ կարողանար կատարել իր առաքելությունը: Նավատորմը (որը, ցավոք, իր հզորությամբ մի քանի անգամ ավելի թույլ է, քան նույն Սև ծովում տեղակայված թուրքական նավատորմը) արդեն ընդհանրապես կկորցներ Սև ծովում իր ռազմական ազդեցությունը: Նշեմ, որ Աբխազիայի պարագայում առկա է 210 կմ երկարությամբ մերձափնյա տարածք: Եթե Վրաստանն էլ ՆԱՏՕ-ին անդամակցի, ապա, բնականաբար, Աբխազիայում ՌԴ-ի Սևծովյան նավատորմի կայանելը նույնպես պայմանավորված կլիներ շատ և շատ բարդություններով:

Պ. Ղ. – Այսինքն՝ դանակը Ռուսաստանի ոսկորին էր հասել:

Ա. Գ. – Միանգամայն ճիշտ եք, դանակը ոչ միայն ոսկորին էր հասել, այլև տարածաշրջանում ընթացող զարգացումների հնարավոր նման ընթացքն անմիջականորեն հարվածում էր Ռուսաստանի անվտանգությանը: Հետագայում դա կարող էր խիստ վտանգել Ռուսաստանի տարածքային ամբողջականությունը:

Երկրորդ. իր կարևորությամբ ոչ պակաս հանգամանքը պայմանավորված կլիներ Իրանի Իսլամական Հանրապետության սահմանին ՆԱՏՕ-ի ընդհուպ մոտենալու գործոնով: Հիշում եք, ՀՀ նախագահական ընտրությունների ժամանակ ամեն ինչ արվում էր, որ Հայաստանում «նարնջագույն հեղափոխություն» տեղի ունենա և այդ հեղափոխությունն էլ ապակայունացնի վիճակը երկրում, հնարավոր դարձնի խաղաղարարական ուժերի դրոշի ներքո օտարերկրյա ռազմական զինուժին մտնել տարածաշրջան, այսինքն՝ տեղակայվել Իրանի հյուսիսային սահմանում: Խնդիր էր դրված, որ բացի ռուս և հայ սահմանապահներից մեր տարածաշրջանում տեղակայվեին նաև միջազգային խաղաղարար ուժեր, մասնավորապես, ՆԱՏՕ-ի դրոշի ներքո: Իսկ մենք հասկանում ենք, թե այս ամենի հետևում ինչ ուժեր են կանգնած: Եթե դրան էլ գումարենք նաև այն, որ հիմա Վրաստանում է այդ նույնը կատարվե-

լու, ապա պատկերը կամբողջանա: Եվ ամենևին էլ պատահական չէ, որ արևմտյան թերթերը, որոնք, ի սկզբանե, շատ թշնամաբար էին մեկնաբանում վրաց–հարավօսական ռազմական գործողությունները, հիմա արդեն հարկադրված խոստովանել են, որ, այո, Հարավային Օսիայում, ինչու չէ, նաև Աբխազիայի Կոդորի կիրճում տեղադրված էր ռազմական այնպիսի տեխնիկա, որը կարող էր ռումբեր արձակել 400-500 կմ հեռավորության վրա գտնվող նշանակետին, այն է՝ մինչև Իրանի հյուսիսային սահմանը:

Պ. Ղ. – Պարոն Գեղամյան, Ռուսաստանը կոչ արեց ճանաչել Աբխազիայի և Հարավային Օսեթիայի անկախությունը և այս հարցում, ասես թե, երկու բլոկ է առանձնանում: Հիմա Արևմուտքը՝ Միացյալ Նահանգները, եվրոպական պետությունները, ԵԱՀԿ-ն, ՆԱՏՕ-ն, Եվրամիությունը դեմ են արտահայտվում դրան, մյուս կողմից փորձագետներն ասում են, որ կարող է Ռուսաստանի կոչին միանան Վենեսուելան, Կուբան, Բելոռուսը, ես կարդացի նաև ԽԱՄԱՍ-ը և Հեզբոլահը կարող է միանան: Այս տարբերությունները այսպես իրադարձային են, ինչ որ իրադարձությունից են կախված, թե արդեն գլոբալ ինչ-որ բաներ են երևում աշխարհում:

Ա. Գ. – Հարգելի Պետրոս, 1974 թ. թուրքական բանակը ներխուժեց Հյուսիսային Կիպրոս և Կիպրոսի ինքնիշխան հանրապետության տարածության 40 տոկոսը բռնազավթեց ու հռչակեց Հյուսիսային Կիպրոսի Հանրապետություն: 1974 թ. անցել է 34 տարի, իսկ Հյուսիսային Կիպրոսի Հանրապետությունը աշխարհի և ոչ մի երկիր, բացառությամբ Թուրքիայի, պաշտոնապես չի ճանաչել: Այնպես որ, Աբխազիայի և Հարավային Օսեթիայի ճանաչել-չճանաչելուց ողբերգություն անել բացարձակապես պետք չէ: Ասեմ ավելին, նույն Եվրամիությունը, Միացյալ Նահանգների անմիջական շահագրգռվածության պայմաններում, այսօր գործընթաց է սկսել Թուրքիային Եվրամիության անդամ կարգելու ճանապարհին, էլ չենք ասում, որ Հունաստանը և Թուրքիան հանդիսանում են ՆԱՏՕ-ի անդամ երկրներ:

Պ. Ղ. – Հասկացա, պարոն Գեղամյան, ես այսօր լսում էի հայաստանյան քաղաքական տարբեր գործիչների և վերլուծաբանների կարծիքը ու տպավորություն կազմեցի, որ շրջանառվում է երկու տեսակետ: Կարծիք «Ա»՝ առաջին. Հայաստանը պետք է ճանաչի Հարավային Օսեթիայի և Աբխազիայի անկախությունը և կարծիք «Բ»՝ երկրորդ, որ պետք չէ, որ ճանաչի: Ավելի ճիշտ պետք է ճանաչի այն ժամանակ, երբ Ռուսաստանը կճանաչի Ղարաբաղի անկախությունը, քանի դեռ չի ճանաչել, մենք չպետք է ճանաչենք: Որտե՞ղ է ճշմարտությունը, ըստ Ձեզ:

Ա. Գ. – Ուրեմն նշեմ, որ կա նաև կարծիք «Գ»: Այսօր մենք ձեզ հետ արձանագրենք հետևյալ փաստերը: Փաստ առաջին. 1997 թ. Հայաստանի Հանրապետությունը Լևոն Տեր-Պետրոսյանի օրոք (ի պատիվ Լևոնի) և Ռուսաստանի Դաշնությունը կնքել էին բարեկամության ու ռազմական փոխօգնության մասին հայտնի պայմանագիրը: Այդ պայմանագրի դրույթներից մեկում գրված է, որ Հայաստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնու-

թյունը համատեղ իրագործում են նույն քաղաքականությունը ոչ միայն Հարավային Կովկասում, այլ նաև աշխարհում: Այսինքն՝ ելնելով այդ պայմանագրի հիշատակածս դրույթից Հայաստանը, այո, պետք է անսա Ռուսաստանի Դաշնության՝ իր ռազմաքաղաքական գործընկերոջ նախագահի հորդորին և ճանաչի Աբխազիայի ու Հարավային Օսեթիայի անկախությունը: Հանգամանք երկրորդ. արդեն Ռոբերտ Քոչարյանի օրոք Հայաստանի Հանրապետությունը դարձավ Հավաքական Անվտանգության Պայմանագիր Կազմակերպության անդամ երկիր: Այդ կազմակերպության անդամակցությունից բխող մեր պարտավորությունները նույնպես հուշում են, որ Հայաստանը, այո, պետք է պաշտպանի Ռուսաստանի դիրքորոշումը: Հանգամանք երրորդ. Վրաստանի Հանրապետությունը՝ մեր եղբայրական Վրաստանը, ոչ բարեկամական դրսևորումներ ցուցաբերեց, երբ համաձայնեց Ադրբեջանի ու Թուրքիայի առաջարկին՝ մասնակիցը դառնալով Բաքու-Թբիլիսի-Ջեյհան և Բաքու-Թբիլիսի-Էրզրում խողովակաշարերի կառուցմանը: Մինչդեռ տնտեսագիտական բոլոր հաշվարկները հուշում էին, որ չափազանց շահավետ կլիներ, որ դրանց մի հատվածը անցկացվեր Հայաստանի տարածքով, այն է՝ չշրջանցեր մեր հանրապետությունը:

Պ.Ղ. – Ինչո՞վ էր մեղավոր Վրաստանը, ասեին՝ արեք տարեք ձեր հողով անցկացրե՞ք:

Ա.Գ. – Ոչ, ամենևին ոչ: Գործընկերներին ասեին, որ ավելի անվտանգ կլինի, եթե նաև Հայաստանը ներգրավված լինի այդ նախագծերի իրագործմանը: Լավ, բերեմ ավելի թարմ օրինակ: Վրաստանը, քաջ գիտակցելով, որ գոյություն ունի Գյումրի-Կարս երկաթգիծը, այնուամենայնիվ, իր համաձայնությունը տվեց, որ, կրկին ու կրկին Հայաստանը շրջանցելով, 400 մլն դոլար արժողությամբ, իսկ առանձին փորձագետների գնահատմամբ 600 մլն դոլարի ծախսեր պահանջող նոր երկաթգիծ գցեն՝ Բաքու-Ռեշտ-Աստարա-Կազվին-Կարս-Ախալքալաք-Մարաբդա-Թբիլիսի: Չորրորդ հանգամանքը. մեկ տարի էլ դեռ չի լրացել, երբ Վրաստանի Հանրապետությունն իր այո-ն ասաց Ադրբեջանի կողմից ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեային ներկայացրած բանաձևին, ուր սևը սպիտակի վրա գրված է, որ Վրաստանի Հանրապետությունը ճանաչում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը՝ ներառյալ Լեռնային Ղարաբաղի տարածքը:

Պ. Ղ. – Հիմա պետք է Աբխազիայի ու Հարավային Օսեթիայի անկախությունը ճանաչել, թե՞ ոչ:

Ա. Գ. – Գալիս եմ դրան: Այսինքն՝ Հայաստան – Վրաստան հարաբերությունների ներկայիս պատկերը այսպիսին է: Հայաստանի Հանրապետության Նախագահի հեռատեսությունը, ինչու եմ ասում Նախագահի, որովհետև արտաքին քաղաքականության իրականացումը Սահմանադրությամբ վերապահված է նրան, պայմանավորված կլինի նրանով, որ եթե նա հարց դնի իր ռազմավարական գործընկերոջ՝ Դմիտրի Անատոլիևիչ Մեդվեդևի առաջ, բնականաբար, ոչ «Հայլուր»-ով, այլ համապատասխան հանդիպման ժամա-

նակ…

Պ. Ղ. – Իրենք գիտեն՝ ոնց:

Ա. Գ. – Այո, ասելով՝ արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունը, եթե ստեղծված իրավիճակում ճանաչի Հարավային Օսեթիայի, ինչու չէ, նաև Աբխազիայի անկախությունը, ապա Ռուսաստանը չպե՞տք է ճանաչի նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը: Արդյո՞ք դա ծանր կացության մեջ չի դնի Դմիտրի Անատոլիևիչ Մեդվեդևին, այն առումով, որ ֆորմալ տեսակետից, եթե մոտենանք, ապա նա նույնպես պարտավոր և հարկադրված կլինի ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը: Հանգամանք, որը, ավա՜ղ, էլ ավելի կշիկացնի իրավիճակը մեր տարածաշրջանում: Երկրորդ հանգամանքը. դա ինչպես կընկալվի նույն Ֆրանսիայի և Միացյալ Նահանգների կողմից, այն է՝ Մինսկի խմբի համանախագահների: Արդյո՞ք նրանք դա չեն ընդունի որպես իրենց իսկ նկատմամբ ոչ բարեկամական դրսևորում: Տվյալ դեպքում ոչ թե Հայաստանի, այլ Ռուսաստանի Դաշնության կողմից, որովհետև հիշատակածս երեք պետություններն էլ, կրկնեմ, հանդիսանում են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրներ, որոնք լիազորված են կարգավորել ԼՂ հիմնահարցը: Հիմա նշեմ վերջին հանգամանքը. Հայաստանի Հանրապետությունն իր զուսպ կեցվածքով կարող է տարածքային բարդ հարաբերությունների հանգույցում մեծի հաշվով ստանձնել շատ լուրջ դերակատարություն՝ Հարավային Կովկասի տարածաշրջանում հանդես գալով որպես ծանրակշիռ քաղաքական սուբյեկտ, ոչ թե օբյեկտ: Այնպես որ, Աբխազիայի և Հարավային Օսեթիայի ճանաչել-չճանաչելու հարցին պետք է մոտենալ այս տեսանկյունից, և գնդակը պետք է տեղափոխել Ռուսաստանի դաշտ: Թող իրենք որոշեն և գտնեն, որ, այո, այսօր պատրաստ են ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը, որից հետո մենք, անշուշտ, իսկույն ևեթ, կճանաչենք տարածաշրջանային նոր անկախացած երկրներին: Սակայն այդ պարագայում, ինքնին հասկանալի է, ՌԴ-ն պետք է դառնա Լեռնային Ղարաբաղի անկախության երաշխավորը, և ոչ միայն որպես առանձին վերցրած զուտ Ռուսաստանի Դաշնություն պետություն, այլ որպես ՀԱՊԿ անդամ առաջատար երկիր: Մենք, իհարկե, դեպքերի նման զարգացման պայմաններում անպայմանորեն պետք է նախևառաջ ճանաչենք ԼՂՀ-ի անկախությունը: Այսօրվա դրությամբ գործող Նախագահի զուսպ դրսևորումները, թերևս, իմ կարծիքով, մեծ և դրական նշանակություն ունեն, եթե գնահատելու լինենք Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականության շահերի ապահովման դիրքերից:

Պ. Ղ. – Իշխանության զսպվածության հարցում ձեր տեսակետը համընկնում է Տեր-Պետրոսյանի տեսակետներին, դա լավ է, իրավիճակը տարածաշրջանում ու երկրում խառն է, թող մեր հանրապետությունում նույնպես մի տեսակ խաղաղություն լինի…

Ա. Գ. – Դուք ի՞նչը նկատի ունեք:

Պ. Ղ. – Նկատի ունեմ, որ Տեր-Պետրոսյանը իր հարցազրույցում ասել է. զուսպ չեզոքությունը դա մաքսիմալն է, որը մենք այսօր կարող ենք անել: Խնդրո առարկայի շուրջ երկրորդ անդրադարձն ասեմ և դուք պատասխանեք: Դա Օսկանյանի հոդվածն էր, կարծեմ, «Կովկասի պահը» հոդվածում, որտեղ նա, ըստ էության, դրական է խոսում, իմ կարծիքով, էրդողանի նախաձեռնության՝ Կովկասյան տուն ստեղծելու մասին, ոչ ՆԱՏՕ-ի ... Խնդրեմ, Ձեր մեկնաբանությունները:

Ա. Գ. – Նախ, ես փորձում եմ հասկանալ՝ դուք կոմպլիմենտ էիք անում ինձ, թե՞ Տեր-Պետրոսյանին՝ ասելով, որ այս հարցում մենք համակարծիք ենք:

Պ. Ղ. – Անցնենք այս պահից, ես դրական չեզոքությունն եմ պաշտպանում:

Ա. Գ. – Ասեմ, անցնելու խնդիր չկա, ցավոք, ինձ հուսահատեցրեց «Ա1+»-ին Լևոն Տեր-Պետրոսյանի տված հարցազրույցը: Գուշակում էի, որ այդ հարցը հրապարակ է գալու և, ինքս մեկնաբանություն չանելով, երկու կարճ նախադասություն կարդամ այդ հարցազրույցից, որ մեր հեռուստադիտողը ինքը եզրակացություն անի:

Պ. Ղ. – Դուք ուսումնասիրե՞լ եք այդ հարցազրույցը:

Ա. Գ. – Ես պարտավոր եմ դա ուսումնասիրել: Ի՞նչ է ասում հարցազրույցում պարոն Տեր-Պետրոսյանը. «ոչ ոք չի կարող վիճարկել նաև, որ Ռուսաստանը իր վճռական միջամտությամբ հարավ-օսական ժողովրդին փրկեց ցեղասպանությունից»: Բրավո, շատ ճիշտ գնահատական էր: Նույն այդ հարցազրույցում, պատասխանելով մեկ այլ հարցի՝ ասում է. «Վրաստանի միջամտությունը ոչ թե հարավ-օսական ժողովրդի բնաջնջումն էր, այլ նրա տեղահանումը»: Նույն հարցազրույցի մեջ:

Պ. Ղ. – Միջազգային նորմերով տեղահանումը նույնպե՞ս ցեղասպանություն է:

Ա. Գ. – Ոչ, տեղահանումը, որն ուղեկցվում է էթնիկ զտումներով, կրկնում եմ, էթնիկ զտումներով, նոր է որակվում որպես ցեղասպանություն, և Լևոնը կարծիք չի հայտնում էթնիկ զտումների լինել-չլինելու մասին: Այսինքն՝ նույն հարցազրույցում իրարամերժ բաներ է ասում, ուզում է մի կողմից դուր գալ Ռուսաստանին, մյուս կողմից էլ Ամերիկային ասի՝ ճիշտ է, ես ձեզանից նեղացած եմ, որ ինձ մինչև վերջ տեր չկանգնեցիք, բայց էլի ձեզ հետ կամուրջը չեմ այրում: Ինչևէ, անցնենք Վարդան Մինասիչ Օսկանյանի՝ «Հեռալդ Տրիբյուն» հեղինակավոր թերթին տված «Կովկասի պահը» հարցազրույցին: Այո, Վարդան Մինասիչը դրական երանգներ է հաղորդում Ռեջեփ Թայիփ էրդողանի, այն է՝ Թուրքիայի վարչապետի այն առաջարկին, որը նա հնչեցրեց դեռ օգոստոսի 11-ին, երբ, ելնելով հարավկովկասյան տարածաշրջանում ստեղծված բարդ, պայթյունավտանգ իրավիճակից, հանդես եկավ նախաձեռնությամբ՝ ստեղծել կովկասյան կայունության և համագործակցության պլատֆորմ, որը քաղաքագետները կարճ անվանեցին՝ Կովկասյան Միություն կամ Կովկաս-

յան դաշինք: Ինչ խոսք, ողջունելի է, որ Վարդան Մինասիչը, ով տասը տարի արտաքին գործերի նախարար լինելու ժամանակ, հենց ձեր ծրագրի հյուրը հանդիսանալով, հպարտ-հպարտ շարունակաբար հայտարարում էր, որ Հայաստանը շրջափակման անգամ իսկ 100 տարիների պայմաններում էլ դինամիկ զարգանալու է, ահա հիմա արդեն ուրիշ երգ է երգում:

Պ. Ղ. – Դե մի բան է, ասել է, պարոն Գեղամյան:

Ա. Գ. – Մեկ րոպե, չէ, ես դրական երանգներ եմ ուզում դրանում տեսնել, նա պնդում էր, որ ՀՀ-ն զարգանալու է, այն էլ արագընթաց տեմպերով: Բանը հասավ նրան, որ, համոզիչ երևալու համար, հետո մականունավորեց մեր էկոնոմիկան՝ այն անվանակոչելով «Կովկասյան վագր»: Մինչդեռ համառորեն չտեսնելու էր տալիս այն, որ նույն Ադրբեջանի էկոնոմիկայի համախառն ներքին արդյունքի աճի տեմպերը զգալիորեն գերազանցում էին մեր տեմպերին: Սա գովելի և ոգևորող է այն տեսակետից, որ, թեկուզ պաշտոնը կորցնելուց հետո, նախկին արտգործնախարարն արդեն սկսում է ողջամիտ տեսակետներ հայտնել: Իսկ ձեր խոնարհ ծառան 10 տարի շարունակ իր հրապարակային բոլոր ելույթներում փորձում էր իշխանություններին հասցնել այն պարզ ճշմարտությունը, որ շրջափակումը կործանարար հետևանքներ ունի Հայաստանի էկոնոմիկայի համար:

Պ. Ղ. –Մի կարճ ռեպլիկ՝ Վարդան Մինասիչի հետ և անցնենք:

Ա. Գ. – Համեցեք:

Պ. Ղ. – Տարօրինակ չի, պարոն Գեղամյան, ըստ էության, հոդվածի մեջ, Դուք հիշում եք, որ Ռոբերտ Քոչարյանն ասաց, որ ինքը Գյուլին չէր հրավիրի, իսկ Վարդան Օսկանյանը, փաստորեն, պաշտպանում է Գյուլին հրավիրելու տարբերակը, այսինքն՝ Սերժ Սարգսյանի որդեգրած տարբերակը: Բայց չէ՞ որ նա տասը տարի աշխատել է Ռոբերտ Քոչարյանի մոտ որպես արտգործնախարար:

Ա. Գ. – Ես ողջունում եմ ձեզ: Սակայն չմոռանանք, որ հայտնի փիլիսոփան նման իրավիճակում բացականչել էր “все течет, все изменяется”, իսկ երգիծաբանն ասել էր՝ “ничто не вечно под луной, красотка станет сатаной” . Ահա այդ երանգների մեջ պետք է դիտարկել Վարդան Մինասիչի մոտեցումների էվոլյուցիան և ոչ ավելին: Ինչ վերաբերում է Էրդողանի արած առաջարկին, ապա, այո, դա ինձ ևս մեկ անգամ հուշեց, որ Թուրքիան հասկանում և գիտակցում է, որ նոր աշխարհակարգ է ձևավորվում: Նա փորձում է իր տեղն ամրապնդել մեր տարածաշրջանում: Ադրբեջանի և Վրաստանի հետ Թուրքիայի մերձեցման գործում, ամենասերտ համագործակցություն իրականացնելու հարցում ծանրակշիռ դեր են կատարում հիշատակածս խողովակաշարերը, ինչպես նաև կառուցվող նոր երկաթգիծը: Ասվածին որպես հիմնավորում՝ որոշ պարզաբանումներ անենք: Ի՞նչ է ստացվում. եթե դու հանգիստ ես և ապահով Վրաստանի ու Ադրբեջանի հետ բարեկամ լինելու տեսակետից, ապա ինչո՞ւ հանկարծ կամքիդ հակառակ քո արտաքին գործերի նախարարին մոտ օրերս պատրաստվում ես գործուղել Ռուսաստան, որ այնտեղ հան-

դիպի Սերգեյ Վիկտորովիչ Լավրովի հետ և փորձի ապահովել Հայաստանի ներգրավումը կովկասյան այդ ծրագրի մեջ: Կնշանակի, Թուրքիան գիտակցում է, որ իր ՆԱՏՕ-ի անդամակցությունը, իր բարեկամական կապերը նույն Վրաստանի, Ադրբեջանի հետ դեռևս երաշխիք չեն, որ խոշորածավալ տնտեսական այն ծրագրերը, որոնք իրականացվում են և ծրագրվում է, որ պետք է իրագործվեն տարածաշրջանում, հեռանկար կունենան, եթե դրանց թիկունքին չկանգնի Ռուսաստանը: Իսկ Ռուսաստանը, բնականաբար, առավել պատրաստակամ դրանց թիկունքին կկանգնի այն ժամանակ, երբ տարածաշրջանում իր ռազմաքաղաքական դաշնակիցը, ի դեմս Հայաստանի Հանրապետության, նույնպես ներգրավված կլինի դրանցում: Առանձնահատուկ նշենք, որ ՀՀ-ն մինչ օրս անթերի է կատարել ՌԴ-ի ռազմաքաղաքական դաշնակիցը լինելուց բխող իր պարտավորությունները: Մեր հանրապետությունն այս գործընթացում պետք է նույնպես շատ ակտիվ դիրքորոշում որդեգրի: Ո՞րն է այդ ակտիվ դիրքորոշումը. Հայաստանի Հանրապետությունը հանդիպակաց առաջարկով պետք է հանդես գա, որ Թուրքիայի կողմից առաջարկվող համագործակցության անդամ երկրների կազմում ներգրավվի նաև Իրանի Իսլամական Հանրապետությունը, մեր հարևան և միաժամանակ բարեկամ Պարսկաստանը: Եվ ահա այդ ժամանակ ամեն ինչ կգա ու կնստի իր տեղը, որովհետև ինչ չափով Թուրքիան կարող է համարվել Հարավային Կովկասին անմիջապես հարող երկիր, ոչ պակաս հիմնավորմամբ էլ Իրանի Իսլամական Հանրապետությունը կարող է համարվել: Ահա այստեղ է, որ այդ պլատֆորմի հետ կապված հնարավոր ոչ նպաստավոր զարգացումների պարագայում հնարավոր կլինի որոշակի բալանս ապահովել՝ Ռուսաստան-Պարսկաստան-Հայաստան մի կողմից և Վրաստան-Թուրքիա-Ադրբեջան՝ մյուս կողմից:

Պ. Ղ. – Պարոն Գեղամյան, ժամանակը գրեթե սպառվել է, կես րոպե Դուք ունեք…

Ա. Գ. – Պետրոս ջան, դուք ասացիք, որ ունենք 45 րոպե, ես խոսում եմ ընդամենը 38 րոպե:

Պ. Ղ. – Մենք 45 րոպե է, ինչ զրուցում ենք:

Ա. Գ. – Վատ բաներ չեմ ասելու, իշխանությանը չեմ քննադատելու, Լևոնին չեմ անդրադառնալու, երկրի դարդերից եմ միայն խոսելու…

Պ. Ղ. – Հիմա այսպիսի հարց. ՆԱՏՕ-ական զորքերը, ամերիկյան զորքերը Բաթումում են, ռուսական, մասնավորապես, նավերը Փոթիում, այս առճակատման վերջը ինչպե՞ս եք տեսնում:

Ա. Գ. –Վերջը տեսնում եմ, որ…

Պ. Ղ. –Կոնֆլիկտի սրացումը ինչքա՞ն կգնա:

Ա. Գ.– Կգնա ընդհուպ մինչև նոյեմբերի 5-ը, երբ Ամերիկայի Միացյալ Նահանգներում տեղի կունենան ընտրություններ: Շատ հեղինակավոր, լուրջ վերլուծաբաններ ասում են, անգամ իսկ պնդում են, և ամերիկյան, ինչու չէ, նաև արևմտաեվրոպական, բրիտանական մամուլում հոդվածները նույնպես

…

Պ. Ղ. – Մաքքեյնը …

Ա. Գ. – Մաքքեյնը, մինչև հարավկովկասյան այս իրադարձությունները, իր հեղինակությամբ և ԱՄՆ-ի նախագահ դառնալու շանսով 5-7 տոկոսով էր զիջում Բարաք Օբամային: Մաքքեյնը հերոսական անցյալ ունի՝ ամերիկյան չափանիշներով վերցրած:

Պ. Ղ. – Ձինվոր է եղել…

Ա. Գ. – Ձինվոր չի եղել, եղել է օդաչու, խփվել է Վիետնամի երկնքում, 5 տարի եղել է գերության մեջ, որպես ռազմագերի բուժվել Վիետնամի հիվանդանոցներում… Դա էլ այն պարագայում, երբ Ջոն Մաքքեյնի հայրը այդ նույն տարիներին եղել է ամերիկյան Խաղաղօվկիանոսյան նավատորմի ծովակալը, հրամանատարը: Հիմա, ստեղծված իրավիճակում, երբ ամերիկացիները գիտակցեն, որ աշխարհը խառնվել է, սպասվում են շատ վտանգավոր զարգացումներ, որոնք հղի են ոչ միայն սառը պատերազմի վերսկսմամբ, այլ նաև տաք պատերազմի սանձազերծմամբ, ապա ԱՄՆ-ի համար պահանջված կլինի պատերազմի բովով անցած ճիշտ այնպիսի մի թեկնածու, ինչպիսին է Ջոն Մաքքեյնը: Եվ, ահա, պատահական չէ, որ, գիտակցելով դա, մեր տարածաշրջանում դեպքերը զարգացան այս հունով: Արդյունքում՝ Օբամայի և Մաքքեյնի ձայները հավասարվեցին: Եվ պատահական չէր նաև այն, որ Կոլորադոյում ընթացող դեմոկրատական կուսակցության համագումարում Բարաք Օբաման պաշտոնապես հայտարարեց, որ փոխպրեզիդենտի պաշտոնում տեսնում է Ջոզեֆ Բայդենին, որն ամերիկյան Սենատի միջազգային հարաբերությունների կոմիտեի նախագահն է և քաջատեղյակ է Հարավային Կովկասում զարգացող գործընթացներին: Դրանով Օբաման փորձեց իր հասցեին հնչող մեղադրանքները անփորձ լինելու առումով (նա 1961 թվականին ծնված երիտասարդ քաղաքական գործիչ է) չեզոքացնել, փորձառության պակասը լրացնել՝ Ջոզեֆ Բայդենին փոխնախագահ առաջադրելով: Ահա նաև այստեղ պետք է փնտրել մեզ հուզող հարցերի պատասխանները:

Պ. Ղ. – Պարոն Գեղամյան, ո՞վ կընտրվի Ձեր կարծիքով:

Ա. Գ. – Դա մեծապես պայմանավորված է աշխարհաքաղաքական այն զարգացումներով, որը տվյալ դեպքում ամերիկյան նեոկոնսերվատիվ վարչակազմը փորձում է ուղղորդել, խնդիր ունենալով ամեն կերպ ապահովել իր կուսակցի՝ Մաքքեյնի հաղթանակը: Գործելակերպ, որը մեղադրելու չէ քաղաքականության մեջ:

Պ. Ղ. – Սիրելի հեռուստադիտողներ, տեսնում եք, փաստորեն, մեր տարածաշրջանում ոչ միայն Ռուսաստան - Արևմուտք հարաբերությունների բախտն է որոշվում, այլև Միացյալ Նահանգների նախագահի բախտն է որոշվում: Ժամանակը սպառվեց:

Ա. Գ. – Սիրելի Պետրոս, խնդրում եմ չհեգնել, որովհետև հեգնելու պարագայում դուք կարող եք լուրջ վերլուծաբանների աչքից ընկնել:

Պ. Ղ. – Ոչինչ, թող ընկնեմ: Իմիջիայլոց, Դուք ասացիք, վերջացնենք

նրանով՝ ինչից սկսեցինք, լրացել է կառավարության գործունեության100 օրը և կարելի է գնահատել նրա գործունեությունը: Եթե մի բառով, ինչպե՞ս կգնահատեք մեր կառավարության աշխատանքը:

Ա. Գ. – Եթե մի բառով գնահատելու լինեմ, ապա ասեմ՝ Հանրապետության Նախագահը իր նախաձեռնություններով և գործերով կիլոմետրերով առաջ է ընկել կառավարության գործընթացներից: Ընդամենը մի օրինակ բերեմ և դրանով ավարտենք: Միացյալ Նահանգները, թերևս, «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիայի միջոցով, այն է՝ տնտեսական լծակների, ուզում էր քաղաքականապես ճնշել Հայաստանի Հանրապետությանը: Արդյունքում՝ տեղի ունեցավ հետևյալը. Ջերմուկում Սերժ Սարգսյանի մի ելույթից հետո հայ գործարարները, արձագանքելով նրա կոչին, խոստացան, ըստ որում, առանց որևէ նախապայմանի, 700 մլն դոլարի ներդրում իրականացնել Հայաստանում: Սատարելով մեր երկրին ու Նախագահին՝ հրապարակավ պարտավորվեցին 700 մլն դոլար ներդնել: Տնաշենները (խոսքը «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիայի մասին է) 3 տարի է 236 մլն դոլարի որոշում են կայացրել, հետն էլ 17 պայման են դրել, ընդամենը 15 մլն դոլար էլ փող են ծախսել: Երկրորդ հանգամանքը. Թուրքիայի հետ հարաբերություններում նոր էջ բացելուց հետո, կարծում եմ, ճիշտ կլիներ, որ կառավարությունը 16 տարի շրջափակման մեջ գտնվելու արդյունքում Հայաստանի կրած տնտեսական վնասները թղթին տար, և որը մեր դիվանագետների զինանոցում լիներ: Հարկ եղած դեպքում դա օգտագործվեր, ասվեր՝ չնայած այս ամենին, այն է՝ կրած մեծ վնասներին, Հայաստանի Հանրապետությունը, ապագային նայելով, շահագրգիռ լինելով հարավկովկասյան տարածաշրջանում տևական խաղաղության հաստատման գաղափարով, խնդրո առարկա չի դարձնում իր կրած հսկայական վնասները, բարի կամք է դրսևորում և ուզում է նոր էջ բացել հայ-թուրքական հարաբերություններում: Եվ, վերջում, չեմ կարող սա չասել, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները պետք է ամեն ինչ անեն, որ վաղը, մյուս օրը հանկարծ նույն Թուրքիայի պրեզիդենտ Աբդուլլահ Գյուլը արհեստական որևէ պատճառ չունենա հայտարարելու, իբր, Հայաստանում առկա է ներքաղաքական անկայունություն, ուստի հրաժարվում է Հայաստան գալ: ՀԱԿ-ի կողմից հայտարարված հանրահավաքը պետք է անպայման մեջտեղից դուրս գա:

Պ. Ղ. – Ո՞նց:

Ա. Գ – Շատ պարզ: Լևոն Տեր-Պետրոսյանը, եթե, իրոք, անկեղծ է եղել «Ա1+»-ին տված իր հարցազրույցում, ապա ինչ է պատահել, ամսի 10-ին թող հանրահավաքը անի, միևնույն է, ժողովուրդը կարոտ է չէ՞, դրան: Վարվելով այդպես՝ նրա վարկանիշը կբարձրանա, կասեն, տես, այս մարդը, իրոք, մտածում է երկրի, պետության մասին:

«ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ» ՈԳՈՒ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ Է, ՈՒՐԵՄՆ ԵՎ ԱՆՊԱՐՏԵԼԻ Է

«ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ» ՆԱԽԱԳԱՀ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԻ ԺՈՂՈՎՈՒՄ (09.09. 2008 թ.)

Հարգելի գործընկերներ: Չորս ամիս առաջ Սերժ Սարգսյանը ստանձնեց Հայաստանի Հանրապետության Նախագահի բարձր պաշտոնը: Կարծում եմ, արդեն հնարավոր է, նույնիսկ անհրաժեշտ, վերլուծել կատարված աշխատանքը, պարզել, թե որքանո՞վ է կոալիցիոն կառավարության գործունեությունը նպաստում պարոն Սերժ Սարգսյանի նախընտրական ծրագրում հայտարարված խնդիրների լուծմանը:

Ես դրական եմ գնահատում ՀՀ Նախագահի նախաձեռնությամբ իրականացված գործառույթները, որոնք զգալիորեն առողջացրեցին վիճակը մաքսային ծառայության ոլորտում, ձեռնարկված քայլերը, որ իրականացվում են հարկային բնագավառում: Կարծում եմ, իմաստավորված է, որ բարեշրջումները երկրում մեկնարկեցին հենց հարկային և մաքսային ոլորտներում: Գաղտնիք չէ, որ հարկայինի և մաքսայինի հետ շփվում է մեր ազգաբնակչության զգալի մասը, գաղտնիք չէ նաև այն, որ այս ոլորտները առավել կոռումպացված են համարվում: Ուստի, պետք է քաջալերել իշխանությունների բոլոր այն քայլերը, որոնք նպատակ ունեն մաքսային և հարկային ընթացող գործառույթները դարձնել անշրջելի, առավել թափանցիկ, լայնորեն կիրառել կոռուպցիոն ռիսկերը չեզոքացնող միջոցառումներ:

Դրական տեսանելի միտումներ են նկատվում պետավտոտեսչության աշխատանքներում: Նվազել է վզի հաստությամբ աչքի ընկնող, թանկարժեք մեքենաներով ճանապարհային երթևեկության կանոնները աջ ու ձախ խախտող, լիքը քսակ ունեցող վարորդների թիվը: Հատկանշականն այն է, որ դեռ ոչ վաղ անցյալում ամենազոր այս օրինախախտները, ասես թե, մի քիչ հանգստացել են: Գերխնդիր է, որ նշված գործառույթները դառնան անշրջելի, հակառակ դեպքում ժողովրդի հերթական հիասթափությունը կվերածվի անգամ իսկ հուսահատության և արդյունքում դա կարող է անցանկալի հարված հասցնել մեր պետականությանը:

Անցած ժամանակաշրջանը հագեցած է եղել նաև արտաքին քաղաքական ոլորտում մեկնարկած և հատուկ ուշադրության արժանի նախաձեռնություններով: Դա, նախևառաջ, ՀՀ նորընտիր Նախագահի պաշտոնական այցն

էր Ռուսաստանի Դաշնություն, ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևի և վարչապետ Վ. Պուտինի հետ վարած բանակցությունները, ընդունված հայ-ռուսական համատեղ Հայտարարությունը, որը վերահաստատեց երկու երկրների միջև ստեղծված ռազմավարական, բարեկամական հարաբերությունների շարունակականությունը, հավատարմությունը նախկինում ձեռք բերված պայմանավորվածությունների հանդեպ:

Ես դրական եմ գնահատում նաև Սերժ Սարգսյանի հրավերը Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլին՝ այցելելու Երևան: Թուրքիայի նախագահի կողմից հրավերի ընդունումը և Հայաստանի մայրաքաղաք ժամանումը կարող են սկիզբ դնել Հայաստանի և Թուրքիայի միջև ոչ միայն դիվանագիտական կապերի հաստատմանը, այլև կարող են նպաստել մեր տարածաշրջանում կայուն անվտանգության հաստատմանը: Ուշագրավ էր, որ հրավերը հնչեց, երբ պարոն Սարգսյանը հյուրընկալում էր Մոսկվայում և ելույթ էր ունենում Ռուսաստանի հայազգի մշակութային ու գործարար շրջանակների առաջ: Նման գրագետ և ճիշտ հաշվարկված, համարձակ նախաձեռնությունը, ըստ էության, փլուզեց մեզանում տևական ժամանակ լարդացած կարծրատիպերը, որոնք տեղավորվում էին աշխարհը սևի և սպիտակի բաժանման տիրույթում: Մինչ վերջերս մեր երկրի վարած արտաքին քաղաքականությունում, ասես թե, մերժվում էին «ռեալ պոլիտիկ» քաղաքականությանը ներհատուկ սկզբունքները, որոնց հիմնարար բնութագրիչներից մեկը խիստ համահունչ է դեռ XIX դարի բրիտանական կայսրության հայտնի վարչապետներից մեկի թևավոր դարձած խոսքերին. «Չկան հավերժական թշնամիներ, չկան հավերժական բարեկամներ: Կան հավերժական շահեր»: Այստեղ հարկ եմ համարում հայտնել իմ անձնական կարծիքը, տալ իմ գնահատականը: Հայ ժողովուրդը, որ 1915-23 թվականներին ունեցավ մեկուկես միլիոն անմեղ զոհեր, ինը տասնամյակ հետո դրսևորեց կամք, իր մեջ գտավ ուժ ու վստահություն, քրիստոնեական վեհություն և առաջինը մեկնեց հաշտության ձեռք: Եվ դա արեց արժանապատվորեն, առանց պարտադրանքի, սեփական պետության ինքնիշխանության անսասանության գիտակցումով, ապացուցելով քաղաքակիրթ աշխարհին, որ 1915-23 թվականների եղեռնագործությունից հետո մնացել է հավատարիմ իր հումանիստական, քրիստոնեական դավանանքին, որ նա փյունիկի պես հառնել է կորսված հայրենիքի մոխիրներից, ստեղծել ինքնիշխան երկիր, ազատագրել Արցախը… Մի խոսքով, արտաքին քաղաքականության ոլորտում վիճակը նետված է, Հայաստանն անցավ իրեն մեկուսացման պարտադրված Ռուբիկոնը և այսօր աշխարհին է ներկայանում նորովի, վեհաշուք, քաղաքակիրթ այցեքարտով:

Հիշատակման է արժանի նաև այն հանգամանքը, որ գործնական արձագանքի արժանացավ Հանրապետության Նախագահի կոչն ուղղված հայ գործարարներին՝ համատեղ ջանքերով, միավորելով մեր ուժերը շենացնելու բոլոր հայերիս հայրենիքը՝ Հայաստանի Հանրապետությունը: Ուշագրավ է, որ մեկ-երկու շաբաթների ընթացքում Նախագահի կոչին արձագանքեցին մեր

գործարար հայրենակիցները՝ հայտ ներկայացնելով առաջիկա տարիներին Հայաստանի Հանրապետությունում իրականացնել ավելի քան 700 մլն դոլարի ներդրումներ: Նշենք, որ հիմնական ներդրողները ռուսաստանաբնակ մեր եղբայրներն են լինելու: Մեր հայրենակիցների նման սրտացավ վերաբերմունքը փաստեց, որ որտեղ էլ ապրի հայ մարդը, արյունատար անոթներով կապված է Մայր Հայաստանի հետ և պատրաստակամ է առանց որևէ նախապայմանի օգնել հայրենիքին: Փաստորեն, մենք ականատեսն ենք աշխարհում Իսրայելից հետո ծնունդ առած երկրորդ պետության՝ Հայաստանի Հանրապետության, որի աշխարհասփյուռ ժողովուրդը հայտարարում և գործնական քայլեր է կատարում հայրենիքի շենացման ճանապարհին: Եվ դա անում է մերժելով և չպայմանավորելով Հայաստանին օգնություն ցուցաբերելու սեփական հաստատակամությունը երկրում ստեղծված ոչ միարժեք վիճակով: Սա առանձնահատուկ կարևորում եմ՝ հաշվի առնելով այն, որ, ավա՜ղ, «Հազարամյակի մարտահրավերներ» ամերիկյան կորպորացիան, որը ստանձնել էր մեր երկրի համար խիստ անհրաժեշտ առաքելություն, այն է՝ հանրապետության մարզերում իրականացնել շուրջ 236 մլն դոլարի ներդրումներ, առայժմ սառեցրել է դրա կատարումը: Կարծում եմ, որ այդ ծրագրերի իրականացումը, ուղղակիորեն կապված լինելով հարյուր հազարավոր գյուղաբնակ մեր հայրենակիցների հոգսերի թեթևացման հետ, չպետք է պայմանավորել ո՛չ հայաստանյան հետընտրական զարգացումների, ո՛չ էլ ՀՀ կառավարության՝ երկրում օրենքի գերիշխանություն հաստատելու գործում ձեռնարկած քայլերի դանդաղկոտության և ո՛չ էլ տեր-պետրոսյանական սև քարոզչության հետ: Քարոզչություն, որի նշանաբանն է՝ որքան երկրին վատ, այնքան իրենք պահանջված:

Հանրապետությունում կատարված դրական գործերից նշեմ նաև այն, որ, մեր դիտարկումներով, Հայաստանի ազգաբնակչությունը, ընդհանուր առմամբ, բարիացակամ վերաբերմունք դրսևորեց Տիգրան Սարգսյանին ՀՀ վարչապետ և կոալիցիոն կառավարությունում նախարարների նշանակումների հանդեպ: Լավ ընդունվեցին Սեյրան Օհանյանին պաշտպանության և Էդվարդ Նալբանդյանին արտաքին գործերի նախարարներ նշանակելու որոշումները: Տպավորիչ էին Տիգրան Սարգսյանի մեկնարկային ելույթները, մեջբերումները Ներսես Շնորհալուց և Մաղաքիա Օրմանյանից: Շատ տեղին էր նաև հարցադրումը՝ Հայաստանի Հանրապետությունում հաստատել գիտելիքի գերիշխանություն: Հաճելի էր արձանագրել, որ Հայաստանի նորանշանակ վարչապետը ոչ միայն ծանոթ է ամերիկացի հայտնի սոցիոլոգ-ֆուտուրոլոգ Էլվին Տոֆլերի դեռ XX դարի 80-90-ականներին գրած հայտնի աշխատություններին, մասնավորապես “The Third Wave” (“Третья волна”) և “Power Shift. Knowledge, Wealth and Violence at the edge of the 21st century” (“Метаморфозы власти. Знание, Богатство и Сила на пороге XXI века”), այլև իր ոչ քիչ հրապարակային ելույթներում օգտվում էր այդ հեղինակավոր գիտնականի եզրահանգումներից: Ողջունելի է, որ վարչապետը հարցադրումներ

անելիս, նախարարների առաջ խնդիրներ դնելիս ուղղակիորեն կրկնում է էլվին Տոֆլերի ժամանակակից աշխարհին, աշխարհաքաղաքական հնարավոր զարգացումներին տված մեկնաբանությունները: Իհարկե, կառավարության անդամների ուղեղները չծանրաբեռնելու համար պարոն վարչապետը այս դեպքում հղումներ չի անում հեղինակի վրա: Ընդհանուր առմամբ, ոգևորիչ էին նաև վարչապետ Տիգրան Սարգսյանի կողմից 2008 թ. ապրիլի 29-ին Ազգային ժողովին ներկայացված կառավարության ծրագրի դրույթները, կառավարության հռչակած իր գործունեության համազգային հինգ նախագծերը և հինգ գերակայությունները: Այդ նախագծերն են լինելու. դառնալ՝ բիզնես միջավայրի «գերազանցության կենտրոն», կրթական կենտրոն, առողջապահական կենտրոն, կազմակերպված հանգստի կենտրոն, ֆինանսական կենտրոն: Կառավարության հիմնական գերակայություններն են լինելու՝ առաջին. Հայաստանը դարձնել բիզնեսի և ներդրումների համար տարածաշրջանային «գերազանցության կենտրոն»: Երկրորդ կարևորագույն գերակայությունը՝ սոցիալական ինտեգրումը և համերաշխությունն է: Երրորդ գերակայությունը՝ մարդկային կապիտալի զարգացումն է: Չորրորդ գերակայությունն է՝ արդյունավետ պետական տեղական ինքնակառավարման և մասնավոր հատվածի կառավարման համակարգի ձևավորումը ու կորպորատիվ կառավարման մշակույթի արմատավորումը: Հինգերորդ գերակայությունը՝ տարածքային համաչափ զարգացումն է:

Հանրապետության զարգացման վարդագույն հեռանկարներ խոստացող, լսողությունը շոյող այս և բազմաթիվ այլ դրույթների մասին բարձրաձայնելիս, Ձեզ հետ փորձենք պարզել՝ արդյո՞ք արդարացի են նոր իշխանությունների, հատկապես վարչապետի հասցեին տերպետրոսյանական մամուլում արդեն իսկ հնչած հեգնանքն ու մեղադրանքները: Լևոնականները կառավարության հռչակած բարեշրջումները համեմատում են Օստապ Իբրահիմովիչ Բենդերի երազած «Նյու Վասյուկիի» հետ: Այս կապակցությամբ, խոստովանեմ, որ կառավարության գործունեության բացասական կողմերին անդրադառնալ-չանդրադառնալու հարցի վերաբերյալ «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահությունում լուրջ քննարկումներ էինք կազմակերպել: Մտավախություն կար, որ եթե բոլոր թերությունները ցցուն վեր հանենք, ապա, անտարակույս, դա կարող է լևոնականների կողմից օգտագործվել որպես քարոզչական զենք՝ ուղղված ոչ թե կառավարության աշխատանքների համակողմանի գնահատմանը, այլ մեր ժողովրդի մոտ հուսահատություն, հոռետեսություն սերմանելու արմատականների կողմից դրված նպատակի կատարման ապահովմանը: Մյուս կողմից՝ ստեղծված պայմաններում լռել և թողնել, որ առկա խնդիրներն էլ ավելի խորանան ու ժամանակի ընթացքում երկրի տնտեսությունը կաթվածահար վիճակի հասցնեն, նման դիրքորոշումը «Ազգային Միաբանության» կողմից կլիներ անազնիվ, եթե չասենք դավաճանական Հայոց պետականության հանդեպ: Կուսակցության մոտեցումները հստակեցնելիս մեզ օգնության եկավ բոլոր ժամանակների մեծն փիլիսոփա

Սոկրատեսը. քաղաքացուն, ով իրեն դիմել էր խորհուրդ ստանալու ակնկալիքով՝ ամուսնանա, թե՞ ոչ, փիլիսոփան անվրդով կարճ պատասխանել էր. «Արա ինչ ուզում ես, միևնույնն է, վերջում զղջալու ես»: Այս կապակցությամբ քնարական մի փոքր շեղում էլ անեմ, որ մեր մոտեցումն այս հարցում ավելի պատկերավոր լինի: XIX դարասկզբին դիվանագիտության հանճար Թալեյրանն ասել էր. «Մարդուն լեզուն տրված է նրա համար, որ նա թաքցնի իր մտքերը»: Արտաբերելով այս միտքը՝ մեծ դիվանագետը, անշուշտ, նկատի է ունեցել իր մասնագիտության տեր մարդկանց: Հազիվ թե նա համարեր, որ Եսայի Մարգարեին, Հոմերոսին, Եզովպոսին, Ցիցերոնին, Դանթեին լեզուն տրված էր մտքերը թաքցնելու համար: Էլ չեմ խոսում բոլոր ժամանակների քաղաքական գործիչների մասին: Իհարկե, բացառություն են կազմում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ներկայիս պատգամավորների ճնշող մեծամասնությունը, որոնք սրբորեն հետևում են նապոլեոնական Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարի խորհրդին և գերի ընկած բելոռուսական պարտիզանի օրինակով արդեն տարիուկես է ինչ շարունակում են լռել: Այս պատմական ակնարկներից հետո, շարունակեմ վերլուծությունը:

Եվ, այսպես, կառավարությունը № 1 գերակայություն է հռչակել Հայաստանը դարձնել բիզնեսի և ներդրումների համար տարածաշրջանային «գերազանցության կենտրոն»: Այո, շատ հնչեղ հարցադրում է: Տարածաշրջանային «գերազանցության կենտրոն» դառնալուց առաջ փորձենք միասին վերլուծել, թե մեր հայրենական բիզնեսմենները, հատկապես փոքր և միջին ձեռներեցները արդյո՞ք պաշտպանված են իրենց զգում իրենց սեփական երկրում: Պետական վիճակագրությունը վկայում է ճիշտ հակառակի մասին: Այսպես, 2000 թվականից մինչև 2008 թվականի հուլիսի 1-ը ընկած ժամանակաշրջանում դատական մարմինները կատարողական վարույթ են վերցրել 365 հազար 124 գործ: Այլ կերպ ասած՝ 365 հազար 124 իրավաբանական անձինք (հիմնականում մանր ու միջին ձեռներեցներ), ժողովրդական լեզվով ասած, դատվել են պետության հետ: Միայն 2008 թ. առաջին կիսամյակում կատարողական վարույթ է ստացվել 18894 գործ: Այսինքն՝ 2008 թ. հունվար - հունիսին հանրապետությունում գրանցված 57903 առևտրային իրավաբանական անձանցից 18894-ը կամ էլ գրանցվածների 32,6%-ը դատվել են պետության հետ: Ամեն երրորդ իրավաբանական անձը այս տարվա առաջին կիսամյակում գործ է ունեցել դատարանների հետ: Բա էս հալներիս ինչպե՞ս ենք Հայաստանը դարձնելու բիզնեսի և ներդրումների համար տարածաշրջանային «գերազանցության կենտրոն»: Տարածաշրջանի ողջամիտ ո՞ր բիզնեսմենը կգա Հայաստան ու այստեղ լուրջ ներդրումներ կանի, եթե ծանոթանա այս թվերի հետ: Չմոռանամ նշել, որ բերված վիճակագրական բոլոր տվյալները բացառապես վերցված են Ազգային վիճակագրական ծառայության և Կենտրոնական բանկի պաշտոնական հաշվետվություններից: Դե հիմա պատկերացրեք, որ ութուկես տարում ՀՀ կառավարության (հարկային կամ մաքսային ծառայությունների)

հետ, ինչպես վերը նշեցի, դատվել է 365124 իրավաբանական անձ: Միջին հաշվով համարենք, որ այդտեղ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների թիվը 10 հոգուց է բաղկացած, և արդյունքում կստացվի, որ նշված տարիներին 3 մլն 651 հազար մարդ դատվել է հայրենի կառավարության հետ: Բա այսքանից հետո ինչո՞ւ եք զարմանում, որ անգամ իսկ Լևոն Տեր-Պետրոսյանի հրավիրած հանրահավաքներին տասնյակ հազարավոր մարդիկ են մասնակցում: Դատվելը հարցի մի երեսն է: Եկեք տեսնենք, թե դատելուց հետո պետության համար ի՞նչ արդյունք է արձանագրվել: Այսպես, 2000 թ. – 2008 թ. հունվար-հունիսին բոլոր դատական ակտերի հարկադիր կատարման արդյունքում բռնագանձման ենթակա 348 մլրդ 568 մլն 993 հազար դրամից բռնագանձվել է ընդամենը 52 մլրդ 206 մլն 572,7 հազար դրամ կամ 14,97%, իսկ չվերականգնված գումարը կազմել է 296 մլրդ 362 մլն 410,3 հազար դրամ: Մեր հարգարժան կառավարությունը ինչո՞ւ այս երևույթը պատշաճ չի վերլուծում: Մի՞թե նրանց չի հասնում ժողովրդի, հատկապես ձեռներեցների շրջանում, որպես չգրված օրենք, շրջող այն գանգատ-բողոքը, որ դատարաններում բյուջեին, Սոցիալական ապահովության հիմնադրամին հասանելիք գումարների մուծումից խուսափելու համար անհրաժեշտ է բռնագանձման ենթակա գումարի չափի 10%-ը «նաղդով» դատավորին «վազվրատ» անել: Կա հարցի ևս մի երանգ: Երբ հարյուր հազարավոր իրավաբանական անձինք դատվում են պետության հետ, արդյո՞ք սա չի հուշում իշխանություններին, որ տնտեսական այս ողջ շղթան՝ ձեռներեց - մաքսային - հարկային մարմին - դատարան, մեղմ ասած, մեծ կոռուպցիոն ռիսկեր պարունակող գոտի է. արդյո՞ք ակնհայտ չէ, որ այդ հարցերը կարգավորող օրենսդրությունը խայտառակ վիճակում է գտնվում: Մտածեք այս փաստերի մասին, ո՞վ է ձեզ խանգարում: Այսքանից հետո փիլիսոփայորեն ընդունեք, որ այս արատավոր համակարգի հիմնադիր-հայրերը, ի դեմս Լևոն Տեր-Պետրոսյանի ու նրա հին գվարդիայի, այսօր էլ իրենց իրավունք են վերապահում Ձեզ «ավազակապետություն» բառակապակցությամբ բնութագրել:

Ներդրումների համար խիստ անբարենպաստ պայմանների մասին ես հպանցիկ խոսեցի: Այստեղ չէի ցանկանա տերմինախեղդ անել և խոսել ներդրումային միջավայրի (инвестиционная среда) գրեթե իսպառ բացակայության մասին, արժեքթղթերի առաջնային (первичный рынок ценных бумаг) և երկրորդային (вторичный рынок ценных бумаг) շուկաների սաղմնային վիճակում գտնվելու մասին, մասնավոր և հանրային սեփականության կապիտալիզացիայի մակարդակի անգամ իսկ տարրական պահանջներին չհամապատասխանելու մասին: Չխոսեցի նաև պետականորեն մինչ օրս չընդունված ներդրումային քաղաքականության մասին: Պարզապես այդ ամենի բացակայության արդյունքները թվերով ներկայացնեմ: Այսպես, օտարերկրյա ներդրումների տեսակարար կշիռը համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) մեջ կազմել է. 1999 թ.՝ 7.96%, 2000 թ.՝ 9.93%, 2001 թ.՝ 5.88%, 2002 թ.՝ 9.37%, 2003 թ.՝ 13.8%, 2004 թ.՝ 11.98%, 2005 թ.՝ 10.25%, 2006 թ.՝ 10.53%, 2007 թ.՝

12.95%: Իսկ 2008 թվականի հունվար-հունիսին օտարերկրյա ներդրումները կազմել են կիսամյակային ՀՆԱ-ի 3.63%-ը: Համեմատության համար նշենք, որ Հայաստանում օտարերկրյա ներդրումների համար 2007 թ. լինելով վերջին տասնամյակում ամենաբարենպաստը (այդ տարի օտարերկրյա ներդրումները կազմել են 1 մլրդ 337 մլն դոլար)՝ ավելի քան չորս անգամ պակաս են եղել, քան Ադրբեջանում, ուր դրանք կազմել են 6.05 մլրդ դոլար: Այս ոլորտում մեր երկրի համար ավելի մտահոգիչ վիճակ պատկերացնել հնարավոր չէ: Նշենք միայն, որ մակրոէկոնոմիկայի ժամանակակից բոլոր դպրոցների հեղինակավոր գիտնականները միակարծիք են, որ ազատական շուկայական տնտեսության պայմաններում համախառն ներքին արդյունքի երկնիշ աճ ապահովելու համար անհրաժեշտ է, որ տարեկան կտրվածքով ներդրումները լինեն ոչ պակաս, քան ՀՆԱ-ի 25 %-ն է: Իսկ մեզ մոտ այդ ցուցանիշն ավելի քան 2 անգամ պակաս է, մինչդեռ շինարարության, իբր, «բուռն» զարգացման հաշվին ցույց են տալիս տնտեսության ՀՆԱ-ի երկնիշ աճ: Այդ երևույթին դեռ կանդրադառնանք, սակայն այստեղ արձանագրենք, որ այսօր Հայաստանի Հանրապետությունում բիզնեսի և ներդրումների համար ոչ միայն ստեղծված չեն տարածաշրջանային «գերազանցության կենտրոն» դառնալու համար բարենպաստ ներդրումային պայմաններ, այլ, ընդհակառակը, առ այսօր կառավարության կողմից չենք արձանագրել շոշափելի որևէ գործողություն այս ոլորտներում ստեղծված մտահոգիչ վիճակը շտկելու ուղղությամբ:

Այժմ անդրադառնանք կառավարության գործունեության հռչակած երկրորդ գերակայությանը՝ սոցիալական ինտեգրում ու համերաշխություն: Գաղափարն ինքնին առողջ է ու ողջունելի: Դեռ 1960-ականների սկզբին այս գաղափարը դրված էր գերմանական տնտեսական հրաշքի ճարտարապետներից մեկի՝ Լյուդվիգ Էրհարդի ղեկավարած Դաշնային Գերմանիայի կառավարության գործունեության հիմքում և մինչ օրս էլ այս գաղափարը կազմում է Գերմանիայի իշխող Քրիստոնյա-դեմոկրատական միություն կուսակցության ծրագրի հիմքը՝ սոցիալական շուկայական տնտեսության առանցքը: Թող ամպագոռգոռ չհնչի, սակայն, արդարության առաջ չմեղանչելու համար նշեմ, որ Հայաստանի Հանրապետությունում սոցիալական շուկայական տնտեսության կայացման հարցը «Ազգային Միաբանություն կուսակցության» ծրագրային հիմնադրույթներից է:

Կրկնեմ, կառավարության կողմից ընդունված այդ գերակայությունը, ինչ խոսք, ողջունելի է: Դրան հասնելու համար, նախ, անհրաժեշտ է արդարացիորեն վերլուծել մեր ժողովրդի առկա սոցիալական իրավիճակը, բազմակողմանիորեն ուսումնասիրել դրա իրական պատկերը: Իսկ պատկերը, ավա՜ղ, տագնապահարույց է: Այսպես, վերջին տարիներին, չնայած Կենտրոնական բանկի անընդհատ հնչեցրած հայտարարություններին, որ նրան հաջողվում է զսպել սղաճը և տեղավորվել օրենքներում ամրագրված սանդղակի մեջ, իրականում պատկերն միանգամայն այլ է:

Պարզենք, թե ինչպիսի՞ն է իրական պատկերը սոցիալական ոլորտում: Տալով այս հարցի պատասխանը՝ կկարողանանք նաև պատասխանել՝ ի՞նչ փուլում է հայտնվել կառավարության կողմից հռչակված սոցիալական ինտեգրում և համերաշխություն հաստատելու երկրորդ գերակայության ճակատագիրը: Այսպես, վերջին չորս տարիների և 2008 թ. հունվար-հունիսին ունենք հետևյալ պատկերը. 2004 թ. տվյալներով նվազագույն պարենային զամբյուղի արժեքի աճի տեմպը 2003 թ. նկատմամբ կազմել է 108.93 %: Դա էլ այն դեպքում, երբ այդ նույն ժամանակաշրջանում դրամի արժևորման աճի տեմպը դոլարի նկատմամբ կազմել է 108.91%, իսկ նվազագույն սպառողական զամբյուղի աճի տեմպը՝ 108.93%: Հաշվի առնելով այն, որ պրակտիկայում սղաճը սովորաբար չափվում է սպառողական գների ինդեքսի փոփոխմամբ (ապրանքների և ծառայությունների «զամբյուղի» միջին գների), ապա 2004 թ. պաշտոնապես հայտարարված սպառողական գների ինդեքսի 107%-ը իրականությանը չի համապատասխանում. փաստացի ցուցանիշից շուրջ 2 անգամ պակաս է: Նույն պատկերն է 2005, 2006, 2007 թվականներին: Օրինակ, 2007 թ. նվազագույն թե՛ պարենային և թե՛ սպառողական զամբյուղների աճի տեմպը 2006 թ. նկատմամբ կազմել է 113.24%, դա էլ այն դեպքում, երբ հայտարարվել էր, որ սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նկատմամբ կազմել է ընդամենը 104.4%: Սա, իհարկե, իրականության հետ և ոչ մի աղես չունի, առավել ևս եթե նշենք, որ 2007 թ. դրամի արժևորման աճի տեմպը դոլարի նկատմամբ կազմել էր 107.33%: 2007 թ. նույնպես ունեցել ենք երկնիշ սղաճ: Պատկերը մնացել է անփոփոխ նաև 2008 թ. առաջին կիսամյակում: Թեև պարենային և սպառողական նվազագույն զամբյուղների արժեքների աճի տեմպերը նախորդ տարվա համեմատ մնացել են գրեթե նույնը (99.45%), սակայն սպառողական գների ինդեքսը 2008 թ. հունվար-հունիսին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ կազմել է 109% և դա էլ այն պարագայում, երբ դրամի արժևորումը դոլարի նկատմամբ կազմել է 115.97%: Այլ կերպ ասած՝ վերջին տարիներին գործ ունենք «թաքնված» և իշխանությունների կողմից թաքցվող երկնիշ բարձր սղաճի հետ, որն ամբողջությամբ կլանում է թե՛ թոշակների, թե՛ միջին աշխատավարձի, թե՛ նպաստների բարձրացումը: Ավելին, ի չիք է դարձնում սոցիալական ինտեգրում գաղափարը: Իսկ եթե հաշվի առնենք այն, որ իշխանությունները տարեցտարի համառորեն պնդում են ժողովրդական լայն զանգվածների կյանքի բարելավման մասին, դա էլ այն դեպքում, երբ նույն ժողովուրդը սեփական ապրուստի վրա դրական միտում ամենևին էլ չի զգում: Այս պայմաններում խոսել հասարակությունում համերաշխություն հաստատելու մասին, կարծում եմ, տեղին չէ: Ավելին, նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ հանրապետության պարենային զամբյուղում 50%-ից ավելին բաժին է ընկնում դրսից ներմուծվող պարենի վրա, որի գները դոլարի արժեզրկման և դրամի արժևորման պայմաններում փոխանակ նվազեն, շարունակում են աճել՝ հարստացնելով փոքրաթիվ ներկրողներին, խորացնելով ազգաբնակ-

չության բևեռացումը, ապա դա նույնպես չի նպաստում համերաշխության հաստատմանը:

Հռչակված երրորդ գերակայությունը մարդկային կապիտալի զարգացումն է: Այստեղ նույնպես գործնական որևէ քայլ չի նշմարվում: Բավական է փաստել, որ այսօր էլ տասնյակ, անգամ հարյուր հազարավոր մարդիկ, հատկապես գյուղական վայրերից, մեկնում են Ռուսաստանի Դաշնություն՝ արտագնա աշխատանքների: Դրա հետ նշենք, որ անգամ իսկ աշխատանքով ապահովված մարդկանց ամսական միջին աշխատավարձը (2008 թ. հունվար-հունիսին կազմել է 86615 դրամ) եթե բաժանում ես իր և իր խնամքի տակ գտնվող մարդկանց միջև (տնտեսության մեջ զբաղվածների թիվը 2008 թ. հունվար-հունիսին կազմել է 1 մլն 102.8 հազար մարդ, իսկ հուլիսի 1-ի դրությամբ ամբողջ բնակչությունը կազմել է 3 մլն 223.7 հազար մարդ), ապա մեկ մարդուն ընկնող եկամուտները նույնիսկ հավասարապես բաշխման պայմաններում չեն ապահովում սպառողական նվազագույն զամբյուղի ծախսերը հոգալու համար անհրաժեշտ գումարը:

Ինչ վերաբերում է կառավարության չորրորդ և հինգերորդ գերակայությունների կենսագործման ուղղությամբ ձեռնարկված քայլերին, այն է՝ արդյունավետ պետական տեղական ինքնակառավարման և մասնավոր հատվածի կառավարման համակարգի ձևավորման ու կորպորատիվ կառավարման մշակույթի արմատավորման, ինչպես նաև տարածքային համաչափ զարգացման հարցերի կենսագործմանը միտված աշխատանքներին, ապա խոսակցությունից զատ այստեղ գործնական և ոչ մի քայլ դեռ չի ձեռնարկվել:

Երկրի առանձին ոլորտներում տիրող այս համառոտ վերլուծությունից բխում է տրամաբանական մի հարց. ո՞վ և ի՞նչն է խոչընդոտում, խանգարում հայրենի կառավարությանը գործնական հունի վրա դնել սեփական խոստումների կատարումը: Փորձեմ տալ նաև այս հարցի պատասխանը:

Հարգելի գործընկերներ, երբ վերլուծում ես կառավարության հռչակած կարգախոսերը, դրանց ուղղությամբ ձեռնարկվող քայլերը և զուգակցում դրանք երկրի տնտեսությունում ստեղծված փաստացի իրավիճակի հետ, ապա ակամայից հիշում, մտաբերում ես մի առակ: Անտառում գայլերը անխնա հոշոտում էին նապաստակներին: Վերջիններս պատվիրակություն են ուղարկում անտառում ապրող ամենահիմաստուն արարածի՝ մեծն բվեճի (филин) մոտ: Բվեճը լսում է պատվիրակներին և խորհուրդ է տալիս, որ նապիկները կերպարանափոխվեն և դառնան ոզնիներ: Այդ դեպքում գայլերը չեն կարողանա հոշոտել նրանց՝ ոզնի դարձած նապաստակներին: Լսելով բվեճի խորհուրդը՝ նապաստակները ոգևորված ետ են վերադառնում և այդ խորհրդի մասին պատմում սարսափահար եղած ցեղակիցներին: Նապիկները ուշադրությամբ լսում են պատվիրակներին, միաձայն տալիս են իրենց համաձայնությունը, սակայն միաժամանակ տարակուսած հարցնում են. իսկ բվեճը չասա՞ց, թե ինչպե՞ս պետք է դառնան ոզնի, տեխնոլոգիապես դա ինչպե՞ս պետք է իրագործվի: Նապաստակների պատվիրակները կրկին վերա-

դառնում են բվեճի մոտ և դիմում նրան իրենց հուզող հարցով: Բվեճը լսում է հարցը և հանդարտ պատասխանում՝ ասելով, որ ինքը ստրատեգ է, ռազմագետ և տեխնոլոգիաներով չի զբաղվում:

Հիմա մեր դեպքում էլ կառավարությունը հռչակել է իր ռազմավարական գերակայությունները, սակայն, ինչպես ցույց տվեցին վերը հիշատակած վերլուծությունները, դրանք կենսագործման համապատասխան տեխնոլոգիաներով ամենևին էլ ապահովված չեն: Իսկ ի՞նչով է պայմանավորված կառավարության՝ խոսքի և գործնականում դա կյանքի կոչելու միջև առաջացած խզումը: Հիմնական պատճառները, կարծում եմ, մի քանիսն են:

Առաջին, ամենակարևոր պատճառը, թերևս, այն է, որ կառավարության կողմից այդպես էլ չտրվեցին մի շարք հարցերի պատասխաններ: Մասնավորապես, այդպես էլ անհայտ մնաց՝ մինչև 2008 թ. ինչո՞վ էին պայմանավորված տնտեսությունում արձանագրված որոշ հաջողությունները, որո՞նք էին ձախողումները և դրանց պատճառները, ինչպիսի՞ նախադրյալներ էին ստեղծվել տնտեսությունում արագընթաց զարգացում ապահովելու համար, ի՞նչն է անհրաժեշտ փոխել և ինչպե՞ս, ինչի՞ց հրաժարվել և ի՞նչը զարգացնել: Արդեն ակնհայտ է, որ նախորդ տարիներին կատարված աշխատանքների համակողմանի վերլուծության բացակայությունը մեծապես վտանգում է կառավարության ծրագրերի իրագործումը:

Երկրորդ կարևոր բացթողումն այն էր, որ այդպես էլ չներկայացվեց երկրում ստեղծված սոցիալ-տնտեսական իրական վիճակի վերլուծությունը: Չներկայացվեց իրական այն պատկերը, այն ելակետը, որից էլ պետք է մեկնարկեր կառավարության ծրագրի իրագործումը:

Երրորդ. այդպես էլ լուրջ քննարկման առարկա չդարձան Հայաստանի Հանրապետության հեռանկարային հնարավոր զարգացումների սցենարները: Սցենարներ, որոնցում պետք է հաշվի առնեին տարածաշրջանային և համաշխարհային սոցիալ-տնտեսական, ինչպես նաև ռազմաքաղաքական զարգացումները: Եվ ոչ միայն հաշվի առնեին, այլ նաև պայմանավորված լինեին դրանցով: Այս բացթողումների հետևանքները մենք սրությամբ զգացինք վրաց - հարավ - օսեթական պատերազմի հետևանքներին բախվելիս: Ակնհայտ է, որ նման վերլուծությունը պետք է առանձնահատուկ կարևորվեր կառավարության ծրագիրը կազմելիս, դրա գերակայությունները որոշելիս: Առանձնահատուկ վերլուծության առարկա պետք է դառնար նաև արտաքին գործոնների ազդեցության չափը Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա:

Նման խիստ անհրաժեշտ վերլուծությունների թվարկումը, որոնք հաշվի չեն առնվել կառավարության ծրագիրը կազմելիս, կարելի է շարունակել, սակայն բավարավենք ասվածով: Եզրակացությունը մեկն է. Տիգրան Սարգսյանի ղեկավարած կառավարության գործունեության անցած 130 օրը հրամայական են դարձնում ընդունված ծրագրի կատարման ուղիների վերահիմաստավորման հարցը: Հակառակ դեպքում շատ կարճ ժամանակ անց ստիպված կլինենք արձանագրել, որ վտանգված է Նախագահ Սերժ Սարգսյանի նախընտ-

րական ծրագրի իրագործումը: Իսկ այդ պարագայում թե ինչպիսի՞ն կլինեն հետևանքները, կարծում եմ, բոլորն են հասկանում: Բավական է ուշադիր ընթերցել լևոնական թերթերում երբեմն-երբեմն տպագրվող լրջմիտ վերլուծությունները, լսել հանրահավաքներում առանձին դեպքերում հնչած և տնտեսությանը տրված ողջամիտ գնահատականները:

Հարգելի գործընկերներ, այս ամենի հետ հարկ եմ համարում համառոտ անդրադառնալ երկրի տնտեսության մեջ նկատվող մի շարք մտահոգիչ միտումների վրա ևս: Որո՞նք են դրանք: Արդեն երրորդ տարին է, ինչ մեր տնտեսությունում արձանագրվում է արտահանման աճի տեմպի նվազում: Այսպես, 2006 թ. արտահանումը կազմել է 412 մլրդ 207.2 մլն դրամ, որը նախորդ տարվա արտահանման ծավալի 95.1%-ն է, 2007 թ. արտահանումը կազմել է 394 մլրդ 200 մլն դրամ, որը կազմում է նախորդ տարվա արտահանման ծավալի 95.6%-ը, 2008 թ. հունվար-հունիսին արտահանումը կազմել է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 85.2%-ը: Մեր երկրի արտադրանքը կորցնում է միջազգային շուկաները, չի դիմանում մրցակցությանը: Եթե հաշվի առնենք 2009 թ. բնական գազի գների թանկացումը, դրանից բխող էլեկտրաէներգիայի թանկացումը, որը, անշուշտ, կանդրադառնա տեղական արտադրանքի ինքնարժեքի բարձրացման վրա, իսկ դա էլ իր հերթին կհանգեցնի հայրենական արտադրանքի մրցունակության անկմանը, ապա ինքնին հասկանալի է դառնում երկրի տնտեսության համար այս վտանգների չեզոքության արդիականությունը:

Դրա հետ մեկտեղ մեզ չի կարող չմտահոգել այն, որ վերջին տարիներին արձանագրվել են ներմուծման աննախադեպ բարձր աճի տեմպեր: 2006 թ., դոլարային արտահայտությամբ, ներմուծման աճի տեմպը նախորդ տարվա համեմատ կազմել է 121.8%, 2007 թ. համապատասխանաբար՝ 149.7%, 2008 թ. հունվար-հունիսին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 140.3%: Խիստ մտահոգիչ է նաև այն, որ ներմուծման տեսակարար կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ 2006-ին կազմել է՝ 33.85%, 2007-ին՝ 35.43%, 2008-ի հունվար-հունիսին՝ 44.38%: Հաշվի առնելով, որ արտահանման ծավալներն այդ նույն ժամանակաշրջանում տատանվել են 15.46%, 12.56% և 12.1% սանդղակում, ապա դա համադրելով ներմուծման ծավալների ՀՆԱ-ում առկա տեսակարար կշռի հետ գալիս ենք տխուր եզրակացության: Երկրում սպառվող ապրանքների և ծառայությունների ընդհանուր ծավալների մեկ երրորդը բաժին է ընկնում ներմուծվող ապրանքներին ու ծառայություններին: Նկատի ունենալով տարածաշրջանում ստեղծված բարդ դրությունը, ակնհայտ է, որ ներմուծման նման բարձր տեսակարար կշիռը խիստ արդիական է դարձնում պարենային անվտանգության ապահովության խնդիրը: Արտաքին առևտրաշրջանառության ոլորտում խիստ մտահոգիչ է նաև տարեցտարի շեշտակի աճող բացասական առևտրային հաշվեկշիռը: Այսպես, 2005 թ. ՀՀ-ում առևտրային հաշվեկշիռը եղել է բացասական և կազմել է 817.6 մլն դոլար, 2006 թ. նույնպես եղել է բացասական և կազմել է 1 մլրդ 206.5 մլն դոլար, 2007-ին այդ թիվը գրեթե կրկնապատկվել է՝ կազմելով 2 մլրդ 124.4 մլն դոլար, 2008 թ. հունվար-հունիսին առևտրային հաշվեկշիռը նույնպես եղել է

բացասական և կազմել է 1 մլրդ 387.2 մլն դոլար:

Տագնապահարույց այս վիճակի պայմաններում զարմանք են առաջացնում վարչապետ Տ. Սարգսյանի՝ Գիտությունների ազգային ակադեմիայում գիտնականների հետ հանդիպման ժամանակ արտահայտած որոշ մտքեր: Վարչապետը, մասնավորապես ասել է. «Ժամանակակից տնտեսությունն ամենևին էլ չի ենթադրում, որ ապրանքների արտահանումը պետք է գերազանցի ապրանքների ներմուծումը: Այսօր ժամանակակից գիտությունը հիմնականում կենտրոնացած է ԱՄՆ-ում, և ԱՄՆ-ն առաջատարն է գիտության բնագավառում, բայց 1980 թվականից մինչ այսօր ԱՄՆ-ն ավելի շատ ներմուծում է ապրանքներ, քան արտահանում, և դա նրանց չի խանգարում, որ աշխարհում առաջատար լինեն գիտության ոլորտում»: Պարոն վարչապետը միանգամայն ճիշտ է իր եզրակացության մեջ, երբ խոսքը վերաբերում է ***ժամանակակից տնտեսություններին,*** որոնց շարքին դասվելու համար Հայաստանի տնտեսությունը, ավա՜ղ, շատ հեռու է: Եվ, կարծում եմ, պետք է գիտակցել, որ 120 հազար առավել աղքատ ընտանիքներին կերակրելու համար առաջնային կարգով պետք է աշխատատեղեր ստեղծվի, նախևառաջ պետք է պայմաններ ստեղծվեն այդ ընտանիքների երեխաներին սնելու և կրթելու համար, երիտասարդներին սովորելու հնարավորություն ստեղծելու համար, որ կարողանանք ժամանակակից տնտեսություն ստեղծել հիմնված գիտելիքի վրա, որ կարողանանք գիտելիք արտահանող երկիր դառնալ և արտահանումն էլ լինի այն ծավալի, որ հնարավորություն ընձեռվի մեղմել մեր երկրում հրատապ լուծում պահանջող սոցիակաև բազում խնդիրները: Գիտնականների հետ հանդիպման ժամանակ վարչապետը այնուհետև շարունակել է. «Եթե մենք առաջնորդվենք այն սկզբունքով, որ գիտությունը Հայաստանում կարող է զարգանալ միայն այն դեպքում, երբ մենք ավելի շատ ապրանքներ արտահանենք, գիտությունը չի զարգանա»: Զարմանք է առաջացնում նաև այս պնդումը: Չէ՞ որ ժամանակակից աշխարհում արտահանման ծավալների աճը վկայում է նախևառաջ միջազգային շուկաներում դրանց բարձր մրցունակության մասին, ինչն էլ իր հերթին անհնարին է ապահովել առանց գիտատար, բարձր տեխնոլոգիաների կիրառության: Այդ տեխնոլոգիաների պահանջվածությունը, անշուշտ, խնդիրներ է դնելու մեր գիտնականների առաջ, իսկ դրանց լուծումներին ուղղված ջանքերը իրենց հերթին կխթանեն գիտության զարգացումը Հայաստանում:

Այստեղ մտահոգիչն այն է, որ կառավարության մակարդակով դեռ չեն պարզել, թե Հայաստանի Հանրապետության տնտեսությունը որակական ի՞նչ մակարդակի վրա է գտնվում և այդ մակարդակը օբյեկտիվորեն ինչպիսի՞ խնդիրների լուծում է ի զորու ապահովել: Միտքս պարզ լինելու համար հնչեցնեմ որոշ պարզաբանումներ: Այսօր ձևավորվում է նոր տնտեսական աշխարհակարգ: Գնահատելով ժամանակակից աշխարհը՝ տրամաբանական կլիներ խոսել գոյություն ունեցող երեք տեսակի էկոնոմիկաների մասին:

էկոնոմիկայի զարգացման առաջին տեսակը՝ կողմնորոշված է ամենաավանդական, առաջնային սեկտորի վրա, որի տակ տնտեսագետները հասկանում են գյուղատնտեսությունը և արդյունահանող ճյուղերը: Հայաս-

տանն այսօր դասվում է ճիշտ նման էկոնոմիկա ունեցող երկրների շարքին:

Էկոնոմիկայի զարգացման երկրորդ տեսակը՝ ինդուստրիալ էկոնոմիկայի տեսակն է: Խոսքն այն մասին է, որ նման տեսակի էկոնոմիկա ունեցող երկրները իրականացնում են տնտեսական քաղաքականություն՝ ուղղված արդյունաբերական առանձին ճյուղերի զարգացմանը, որպես կանոն, սերտ կապված համաշխարհային շուկայի որոշակի պահանջարկի հետ: Այդ ճյուղերում երկրները հասնում են հմտության բարձր մակարդակի, համապատասխան ոլորտներում բարձր էֆեկտիվության: Տվյալ ազգերի ինտենսիվ աշխատանքի արդյունքում, արդյունավետ արտադրության պայմաններում ստեղծվում է մրցունակ արտադրանք: Օրինակ, հարավկորեական ավտոմեքենաներ, չինական էլեկտրոնային սարքեր, որոնք արտահանվում են արտաքին շուկա՝ դրանով իսկ հնարավորություն ընձեռելով արտահանող երկրներին գտնել իրենց տեղը աշխատանքի համաշխարհային բաժանման շուկայում, ստանձնելով աշխարհի խոշորագույն էկոնոմիկաներ ունեցող երկրների գործընկեր լինելու դերակատարությունը: Սա զարգացման առավելագույն նպաստավոր ճանապարհն է: Արտահանվող ապրանքների պահանջարկի աճին համաչափ և արտադրության նոր ճյուղերի բացման արդյունքում ստեղծվում է հնարավորություն ավելացնելու արտադրանքի ծավալները, կառուցելու նոր գործարաններ, վերապատրաստելու իրենց բանվորներին՝ դրանով իսկ առաջ մղելով այդ արտադրությունը: Այս տիպի էկոնոմիկա ունեցող երկրների միակ խնդիրն այն է, որ այդ երկրները, որոնք մուտք են գործում համաշխարհային շուկա (օրինակ՝ նույն Հարավային Կորեան, Սինգապուրը, Թայլանդը, Թայվանը…), չեն կարող շուկային առաջարկել սկզբունքորեն նոր ապրանքներ: Նույն Կորեան կոմպյուտերների ստեղծման գյուտի հեղինակը չէ, տիեզերանավ տիեզերք չի ուղարկել, ավտոմեքենայի ստեղծման հեղինակը չէ: Ստեղծված իրավիճակում նման տեսակի էկոնոմիկա ունեցող երկրները մուտք են գործում արդեն գոյություն ունեցող ապրանքների շուկա, կատարում են նույն գործը, որ անում են ավանդական այդ ապրանքատեսակների արտադրողները, սակայն այդ աշխատանքը կատարում են ավելի էժան և ավելի որակով: Զարգացման այդ ճանապարհը լավն է, բայց դրա շրջանակում սկզբունքորեն նոր ապրանքների ստեղծում, որպես կանոն, չի իրականացվում: Պարզապես լավացվում, արդիականացվում են գործող արտադրության տեխնոլոգիաները, դրանք հասցվում կատարելության: Էկոնոմիկաների այս տեսակն ունի որոշակի ապագա, բայց չի բերում ինտելեկտուալ, ստեղծագործական լուրջ հեղափոխական ճեղքումների և, ըստ էության, երկիրը չի հասցնում առավել զարգացած երկրների մակարդակին: Դա գերզարգացած երկրներին մշտապես հասնելու էկոնոմիկա է, որը դատապարտված է վերջիններիս մակարդակին այդպես էլ չհասնել, որովհետև շատ աշխատելով մարդիկ չեն սկսում ավելի շատ մտածել:

Եվ, վերջապես, **էկոնոմիկայի երրորդ տեսակը** հիմնված է զարգացման առավել առաջադեմ հենքի՝ տեղեկատվական էկոնոմիկայի վրա: Դրան առանձնահատուկ է երկու հատկություն: *Առաջին.* էկոնոմիկայի այդ տեսակի համար առավել նշանակություն ունեն մարդկանց ինտելեկտուալ կարողու-

թյունները, նոր տեխնոլոգիաների հայտնագործության հնարավորությունները, ինովացիաները: Այս էկոնոմիկայի տարբերությունը նախորդ երկու տեսակներից այն է, որ երբ ստեղծվում է տեղեկատվական, ինովացիոն նոր արտադրանք և վաճառվում այդ արտադրանքը, ապա նոր արտադրանքի ստեղծողը վաճառքից ստանալով գումար՝ չի կորցնում այդ ապրանքն արտադրելու ու վաճառելու իրավունքը: Օրինակ, ունենալով դեղ արտադրելու արտոնագիր (պատենտ), մենք արտադրում ենք դեղը, վաճառում աշխարհով մեկ, բայց չենք կորցնում դրա ստեղծման տեխնոլոգիան:

Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ եթե էկոնոմիկան նպատակամղված է տեղեկատվական տեխնոլոգիաների, գիտելիքի հենքի վրա զարգացմանը, ապա այս հանգամանքն իր հերթին պահանջում է մարդկային ինտելեկտի զարգացում: Այսօր ստեղծված է որակապես մի նոր իրավիճակ. հետինդուստրիալ էկոնոմիկա ունեցող տնտեսապես գերզարգացած արևմտյան աշխարհում ամենամեծ ներդրումը դառնում է սպառումը: Որքան շատ ծառայություններ է սպառում մարդը, այնքան ինտելեկտուալ առումով նա հարստանում է և ավելի արժեքավոր դառնում հասարակության համար: Այսպիսով, ինչքան մեծ է սպառումը, այդքան հարուստ է երկիրը (ձևակերպում, որը երբեք ներդաշնակ չի եղել տնտեսագիտական որևէ տեսության հետ):

Եվ այսպես կարելի է արձանագրել, որ աշխարհում կան երեք խմբի տնտեսություն ունեցող երկրներ: *Առաջին.* նպատակային, ավանդական տնտեսություն ունեցող երկրներ, որոնք հիմնված են գյուղատնտեսության և արդյունահանող արտադրության վրա: *Երկրորդ.* ինդուստրիալ էկոնոմիկա ունեցող երկրներ: *Երրորդ.* հետինդուստրիալ, տեղեկատվական էկոնոմիկայով երկրներ: Անցումն առաջին խմբից երկրորդ տեսակի տնտեսություն ունեցող երկրի շարքը միանգամայն հնարավոր է: Մինչդեռ անցած 50 տարիների ընթացքում երկրորդ խմբից առաջին խումբ անցում որևէ երկրի կողմից դեռևս չի արձանագրվել: Միայն Արևմտյան Եվրոպայի երկրներին, ԱՄՆ-ին և որոշ չափով էլ Ճապոնիային է հաջողվել կատարել անցում ինդուստրիալ էկոնոմիկայից հետինդուստրիալին: Առանձնահատուկ իրավիճակում է հայտնվել ժամանակակից Ռուսաստանի տնտեսությունը, բայց դա այլ խոսակցության թեմա է: Եվ եթե մենք կառավարության մակարդակով խնդիր ենք դնում, որ Հայաստանը առաջին խմբին պատկանող էկոնոմիկա ունեցող երկրից միանգամից պետք է թռիչք կատարի երրորդ՝ հետինդուստրիալ էկոնոմիկա ունեցող երկրների ընտանիք, ապա, խոստովանենք, որ դա անիրատեսական խնդիր է: Եվ այդ տեսլականին հասնելու ճանապարհին վտանգ կա, որ կկորցնենք այսօր դեռ եղած հնարավորությունները՝ անցում կատարել ինդուստրիալ էկոնոմիկա ունեցող երկրների շարքը, ինչը պարտադիր պայման է տեղեկատվական, ինովացիոն, հետինդուստրիալ էկոնոմիկա ունեցող երկիր դառնալու հավակնությունները բավարարելու համար:

Ստացվում է, որ մեր կառավարությունը, ի սկզբանե, իր առաջ դնելով անիրատեսական խնդիրներ, վտանգում է երկրի էկոնոմիկան կենսունակ վիճակում պահող ճյուղերի բնականոն զարգացումը: Արդյունքում՝ արդյունաբերական արտադրանքի ծավալը առանց էլեկտրաէներգիայի, գազի, ջրի

արտադրության և բաշխման, վերջին տարիներին առաջընթաց չի արձանագրում: Այսպես, 2006 թ. այդ ցուցանիշը 2005 թ. համեմատ կազմել է 99.3%, 2007 թ. նախորդ տարվա համեմատ՝ 101.7%, իսկ 2008 թ. հունվար-հունիսին արդյունաբերական արտադրանքի ծավալն առանց էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման 2007 թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ գրանցել է 98.9% աճի տեմպ: Եթե սրան ավելացնենք վերջին տարիներին արտահանման ծավալների կրճատման միտումները ևս, ապա կգանք մի պարզ եզրակացության. արդեն հրատապ է դարձել այս խնդրի համակողմանի ուսումնասիրության և համակարգված ծրագրերի մշակումը ու այդ գործառույթները պետք է դառնան կառավարության գործունեության կարևոր ուղղություններից մեկը:

Հանրապետության էկոնոմիկայում վերջին տարիներին տեղ են գտել մտահոգիչ մի շարք այլ երևույթներ նույնպես: Բերեմ մի քանի օրինակ: 2005 թ. շինարարության ծավալի աճի տեմպը 2004 թ. նկատմամբ կազմել է ընդամենը 134.2%, դրա հետ մեկտեղ արձանագրվել է, որ շահույթով աշխատող կազմակերպությունների տեսակարար կշիռը կազմել է ընդամենը 65.5%, 2006 թ. արձանագրվել է շինարարության ծավալի աճի տեմպ 137.1%, մինչդեռ այս դեպքում էլ շահույթով աշխատող շինարարական կազմակերպությունների տեսակարար կշիռը կազմել է ընդամենը 66.2%, 2007 թ. համապատասխանաբար՝ 119.7% աճի տեմպ է արձանագրվել, դա էլ 82.6% շահույթով աշխատող շինկազմակերպությունների պայմաններում: Խորհենք այս թվերի շուրջ: Ստացվում է, որ աննախադեպ աճ արձանագրած շինարարական կազմակերպությունների միայն երկու երրորդն է շահույթով աշխատում: Բայց չէ՞ որ մենք քաջատեղյակ ենք, որ շինարարության ոլորտում աննախադեպ աճի տեմպը մեծիմասամբ պայմանավորված է, այսպես կոչված, էլիտար շենքերի շինարարությամբ, որոնց վաճառքից ստացված շահույթները գերազանցում են ծախսված գումարները նվազագույնը երկու անգամ: Խնդրեմ, հարկային դաշտը մեծացնելու փայլուն հնարավորություն: Նույն երևույթները կարելի է արձանագրել տնտեսության մի քանի այլ ճյուղերում նույնպես: Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության ու բաշխման ոլորտներում աշխատանքի ընդունվելու համար, բոլորս գիտենք, որ պետք է բավականին բարձր պաշտոնյա կամ օլիգարխ միջնորդներ ունենաս թիկունքիդ: Սակայն եկեք տեսեք, որ այդ ոլորտում շահույթով աշխատող կազմակերպությունների տեսակարար կշիռն ընդամենի նկատմամբ 2005 թ. կազմել է միայն 40.6%, 2006 թ.՝ 38.7%, իսկ ահա 2007 թ.՝ 60%: Բա լավ, եղա՞վ:

Բերենք այլ օրինակներ ևս: 2005 թ. հանքագործական արդյունաբերության ձեռնարկությունների միայն 50%-ն է շահույթով աշխատել, 2006 թ.՝ 70%-ը, 2007 թ.՝ 50%-ը: Ավելի զավեշտալի վիճակ է արձանագրված անշարժ գույքի հետ կապված գործունեություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում իրականացնող կազմակերպությունների ոլորտում: 2005 թ. այստեղ միայն 63.1%-ն է շահույթով աշխատել, 2006 թ.՝ 64.3%-ը, 2007թ.՝ 72.0%-ը:

Հարգելի գործընկերներ, երկրի տնտեսությունում ստեղծված նման

պատկերը, ի թիվս այլ պատճառների, պայմանավորված է նաև իրականացվող դրամավարկային ոչ ճիշտ քաղաքականությամբ: Արդեն վերն ասացի, որ անցած առնվազն 4-5 տարիներին իրական սղաճը արտահայտվել է երկնիշ թվերով: Այլ կերպ ասած՝ դրամավարկային վարվող քաղաքականությունը չի հանգեցրել բարձր սղաճի զսպմանը: Պատահական չէր, որ վերը հիշատակեցի տնտեսության առանձին ոլորտների շահութաբերությունը բնութագրող ցուցանիշներ: Համեմատենք, թե անցած տարիներին ի՞նչ շահութաբերությամբ է աշխատել մեր բանկային համակարգը: Եթե 2000 թ. բանկային համակարգի զուտ շահույթները եղել են բացասական և համակարգն ունեցել է վնասներ 4 մլրդ 89 մլն 815 հազար դրամի չափով, ապա հինգ տարի անց՝ 2004 թ., բանկային համակարգի զուտ շահույթները կազմել են 4 մլրդ 320 մլն 180 հազար դրամ, 2005 թ. աճել են ավելի քան 2.7 անգամ՝ կազմելով 11 մլրդ 978 մլն դրամ, 2006 թ. զուտ շահույթները կազմել են 16 մլրդ 870 մլն 499 դրամ, իսկ 2007 թ. դրանք կազմել են 20 մլրդ 848 մլն դրամ: Ըստ էության, 4 տարվա ընթացքում բանկային համակարգի զուտ շահույթների աճի տեմպը կազմել է 482.5%: Ինչո՞վ է պայմանավորված զուտ շահույթների նման անանախադեպ աճի տեմպը: Ի՞նչ, առևտրային բանկերը ճիշտ հաշվարկված ներդրումային քաղաքականությո՞ւն են իրականացրել: Ամենևին: Այդ դեպքում, որտե՞ղ պետք է փնտրել բանալին: Այսպես, 2004 թ. դոլարի նկատմամբ դրամի արժևորման աճի տեմպը կազմել է 116.24%, ճիշտ այդ նույն տարում ֆինանսական շուկայում բանկերի տրամադրած վարկերի տոկոսադրույքները տարեկան կտրվածքով տեղավորվել են 17.67% - 19.24% սանդղակում: 2005 թ. դրամի արժևորման աճի տեմպը կազմել է 108.21%, իսկ վարկավորման բանկային տոկոսադրույքները 16.28 %-ից - 18.19 %: 2006 թ. դրամի արժևորումը կազմել է 123.23%, իսկ վարկավորման տոկոսադրույքները տատանվել են 11.73%-ից 15.71%-ի սահմանում: Եվ, վերջապես, 2007 թ. դրամի արժևորման աճի տեմպը կազմել է 119.9% և այդ պարագայում վարկավորման տոկոսադրույքները տատանվել են 12%-ի և 14.38%-ի սահմանում: Ահա այս հանգամանքով է պայմանավորված 4 տարում բանկային համակարգի զուտ շահույթների 482.5% աճի տեմպի արձանագրումը: Բարձր տոկոսադրույքներով է պայմանավորված նաև այն, որ տնտեսության իրական հատվածում բանկային համակարգի ներդրումային մասնակցությունը չնչին է: Այսպես, բանկային համակարգում վարկային ներդրումներ (համախառն ներքին արդյունք հարաբերակցությունը մեր տնտեսությունում շատ ցածր է. 2004 թ. այն կազմել է 8.2%, 2005 թ.՝ 9.3%, 2006 թ.՝ 7.0% և 2007 թ. վարկային ներդրումներ) ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 14.3%: Ադրբեջանում այն գերազանցում է 15%-ը (ցավով նշեմ, որ Ադրբեջանի ՀՆԱ-ն ավելի քան երեք անգամ գերազանցում է Հայաստանի ՀՆԱ-ն), Վրաստանում՝ 20%-ը, Ռուսաստանի Դաշնությունում՝ 30%-ը: Սրան ավելացնենք, որ Հայաստանի Հանրապետությունում արժեթղթերի շուկան թեև գործում է, սակայն այնտեղ իրականացվող գործարքների գրեթե 100%-ը բաժին է ընկնում պետական արժեթղթերով կատարվող գործարքներին: Նշենք նաև, որ ՀՀ-ում չունենք զարգացած ֆոնդային բորսա, ինչպես նաև տեղական

կազմակերպությունների, ընկերությունների բաժնետոմսերի տեղաբաշխում միջազգային բորսաներում: Ավելացնենք, որ ֆինանսական ոլորտի ընդհանուր կապիտալի 90%-ից ավելին բաժին է ընկնում բանկային համակարգին: Ավելին, ՀՀ-ում բացակայում են մասնավոր կուտակային կենսաթոշակային ընկերությունները, որոնք ամբողջ աշխարհում համարվում են ֆինանսական կարևոր միջնորդներ, չկան կյանքի ապահովագրական ընկերություններ, չի գործում նաև պարտադիր ապահովագրական համակարգը: Այլ կերպ ասած՝ Հայաստանի Հանրապետությունում մինչ օրս չձևավորելով ամբողջական ֆինանսական համակարգ՝ խոսել հանրապետությունը տարածաշրջանային ֆինանսական կենտրոն դարձնելու շուրջ, մեղմ ասած, ժամանակավրեպ է: Իմ այս պարզաբանումները ֆինանսական շուկայում գործող ուսյալ մասնագետների համար հայտնի ճշմարտություններ են, բայց, ավա՜ղ, ոչ մերոնց համար:

Ավարտելով միտքս նշեմ, որ մասամբ բարձր տոկոսադրույքներով է պայմանավորված նաև այն երևույթը, երբ հանրապետություն ապրանք ներմուծողները դրամի արժևորման պայմաններում գները չեն իջեցնում անգամ իսկ այն դեպքում, երբ համաշխարհային շուկայում արձանագրվում է գների իջեցում: Իրենց այդ քայլը նրանք մասամբ բացատրում են վերցրած վարկերի բարձր տոկոսադրույքներով: Այստեղ, իհարկե, բացասական որոշակի դեր է խաղում նաև վերջիններիս սահման չունեցող ագահությունը:

Հարգելի գործընկերներ, տնտեսական այս համառոտ վերլուծությունից հետո անցնեմ երկրի ներքաղաքական վիճակի բնութագրմանը: 2008 թ. փետրվարի 19-ի նախագահական ընտրություններից հետո երկրում ընթացող զարգացումները հանգեցնում են հետևյալ եզրակացության. Լևոն Տեր-Պետրոսյանը և նրան սատարող ուժերն ընտրել են ոչ թե իշխանական բուրգի, այլ Հայոց պետականության կազմաքանդման գործընթաց: Եվ այդ գործն անում են խիստ համակարգված և նպատակասլաց:

Հայտնի է, որ պետական մեքենայի, պետականության քայքայումը ենթադրում է պետականության հիմք հանդիսացող բոլոր բաղադրիչների նշավակում, վարկաբեկում և խայտառակում. Նախագահի, Ազգային ժողովի, կառավարության, արդարադատության համակարգի, եկեղեցու, ազգային ավանդույթների: Նրանք խնդիր են դրել անել ամենը, որ մարդիկ գան այն եզրակացության, որ բացի արմատական ընդդիմություն իրեն հորջորջած ուժից Հայաստանի Հանրապետությունում չկա քաղաքական որևէ այլ ուժ, որում համախմբված լինեն երկրի ճակատագրով մտահոգ, մտածող, հայրենասեր գործիչներ, քաղաքական այրեր, որոնք ի զորու կլինեն հոգալ ժողովրդի հոգսերը: Այդ նպատակին հասնելու համար նրանք և ոչ մի բանից չեն խորշում: Մենք Ձեզ հետ ականատեսն ենք լևոնականների կողմից ծավալված տեղեկատվական-քարոզչական պատերազմի: Զրպարտչական, անձը վիրավորող, պետական ցանկացած կառույցի աշխատանքները նշավակող հոդվածների հեղեղը ամեն Աստծո օր թափվում է մեր հասարակության գլխին: Եվ քարոզչական այս պատերազմում իշխանություններն անտաղանդորեն կրում են պարտությունը պարտության հետևից: Սև քարոզով

ամլացվում է պետական մեքենան, երևույթ, որը խիստ բացասական ազդեցություն է ունենում պետական ապարատում աշխատողների վրա: Նման մարտավարությունն ընտրված է ոչ պատահական: Թուլացնելով իշխանություններին, թերթերի էջերում օրեցօր տպագրելով ռուսատյաց բովանդակությամբ հոդվածներ՝ արմատականները խնդիր են դրել խարխլելով իշխանություններին՝ նրանց ենթարկեցնել դրսից պարտադրվող պահանջին, պայմաններին: Պայմաններ, որոնց վերջնական նպատակն է՝ կազմալուծել հայ-ռուսական ռազմավարական դաշինքը, հնարավորինս չեզոքացնել ռուսական ռազմական ներկայությունը Հայաստանում և Հարավային Կովկասում ընդհանրապես: Նույն հետևողականությամբ այս գործընթացները շարունակվելու դեպքում շատ վտանգավոր զարգացումներ կարող ենք ունենալ հատկապես առաջիկա մի քանի ամիսների ընթացքում: Ինքնին հասկանալի է, որ դա մեծապես պայմանավորված է վրաց - հարավ-օսեթական հնգօրյա պատերազմով և Ռուսաստանի կողմից Աբխազիայի ու Հարավային Օսեթիայի անկախության ճանաչման փաստով:

Հարկ է նշել, որ լևոնականների կողմից վարվող քարոզչական պատերազմը չի սահմանափակվում միայն նրանց շահերը սպասարկող մամուլում տպագրվող նյութերով կամ էլ հանրահավաքներով, նստացույցերով, երթերով, հացադուլներով և այլն: Պատերազմի արմատները շատ և շատ խորն են: Ես հեռու եմ այն մտքից, որ վերջին տարիներին առանձին հեռուստաալիքներով եթեր արձակվող գեղարվեստական կասկածելի արժեք ունեցող, իսկ ավելի ճիշտ բացարձակ արժեզուրկ հեռուստասերիալները սոսկ պատահականություն են: Չէ՞ որ մենք տեսել ենք այդ հեռուստաալիքների պատրաստած բարձրաճաշակ հաղորդումները, լավ ծանոթ ենք դրանց ստեղծագործական կոլեկտիվների պրոֆեսիոնալ հնարավորությունների հետ: Ոչ, ամենևին էլ պատահական չէ, որ այսօրվա որոշ հեռուստաալիքների էկրաններն ողողված են «Վերվարածները ընտանիքում», «Դժբախտ երջանկություն», «Հարևանները» սերիալներով: Առաջին հայացքից կարող է թվալ, որ այս անմեղ, երբեմն ծիծաղաշարժ բեմադրությունները ոչնչով չեն կարող բացասական ազդեցություն թողնել հեռուստադիտողի վրա: Սակայն այդպես կարող է միայն թվալ: Ամեն օր երկնագույն էկրաններից հարյուր հազարավոր մարդկանց, հատկապես երիտասարդներին ու մեր երեխաներին ներկայացվում են մեր նորօրյա հերոսները՝ ճպլները, արբիները, շմավոնները, վաղոները, լիդաները, ծաղիկները: Լավ, այս հերոսներից մարդիկ ի՞նչ ընդօրինակեն, ի՞նչ սովորեն: Եվ կրկնակի ցավ ես ապրում, որ դրանց դերակատարները մեր սիրված, տաղանդավոր արտիստներն են: Կանցնի մի որոշ ժամանակ և մենք ականատեսները կլինենք, որ փոխվել է մեր ազգային նկարագիրը, որ խարխլվել է ազգի միաբան լինելու ներուժը: Այդ սերիալների իրական պատվիրատուները, ովքեր, անտարակույս, մեր երկրից դուրս են գտնվում, քաջ գիտակցում են, որ ճպլի, Արբիի, Վաղոյի և մյուսների կերպարների վրա դաստիարակություն ստացածների համար հայրենասիրությունը սկսվում ու ավարտվում է այնտեղ, որտեղ դադարում է գործոն լինել անձնական շահը:

Այստեղ տեղին է ընդգծել, որ պետությունը դատապարտված է կործան-

ման, եթե նա չի հենվում հասարակական կարծիքի, համերաշխ ապրող ժողովրդի վրա: Աշխարհում և ոչ մի իշխանություն տևական ժամանակ չի կարող գոյատևել, եթե չունի հասարակության ամենալայն շրջանակների աջակցությունը, եթե իր գործունեության հիմքում չի դրել գերիշխող հասարակական կարծիքի պահանջները: Իսկ այսօր Հայաստանի Հանրապետությունում հասարակական կարծիքի ձևավորումը, մեղմ ասած, մատնված է ինքահոսի, էլ չասենք, որ շատ դեպքերում էլ ձևավորվում է դրսի ուժերի կողմից: Արդյունքում մենք կունենանք գաղափարազուրկ, պառակտված հասարակություն, որի հետ շատ դյուրին կլինի կատարել ցանկացած գործողություն: Ահա դրա ամենացայտուն վկայությունն է Լևոնի «երկրորդ գալուստը» քաղաքական ասպարեզ: Եվ, ընդհակառակը, ազգային գաղափարների շուրջ համախմբված ժողովուրդը վճռականորեն կմերժի օտարածին ցանկացած ուժի: Հիշենք պատմական մի դրվագ: Երբ Նապոլեոն Բոնապարտը պաշարեց Իսպանիան, որոշ ժամանակ կարողացավ այնտեղ ուժով պահել իշխանությունը, բայց կառավարել Իսպանիան նա չկարողացավ, թեպետ ուժի պակաս չէր զգում: Եվ պատահական չէր, որ Թալեյրանը ասում էր Բոնապարտին. «Սվինները , սիր, պիտանի են ամեն բանի համար, բացի եզակիից. դրանց վրա չի կարելի նստել» (“Штыки, сир, годятся на все, кроме единственного – нельзя на них усидеть”):

Այս օրերին մենք ականատես ենք դառնում, որ Հայաստանում դադարում է գոյություն ունենալ հասարակության հավաքական կարծիքը: Այս երևույթը չափազանց վտանգավոր է, քանի որ կհանգեցնի նրան, որ հասարակությունը կբաժանվի միմյանց նկատմամբ թշնամաբար տրամադրված խմբերի: Իսկ քանի որ բնությունը վախենում է դատարկությունից, ապա հասարակական կարծիքի բացակայությունը, ի վերջո, հանգեցնելու է, բերելու է բռնության: Եվ երբ խումբ-խմբավորումների կարծիքները կլինեն խիստ իրարամերժ, հեռանկարում դրանք կաթվածահար կանեն միմյանց: Նման զարգացումները կզրկեն Հանրապետության Նախագահին լիակատար իշխանավարության անգամ իսկ փոքր հնարավորությունից:

Հարգելի գործընկերներ, իշխանություն՝ նշանակում է կարծիքների, հայացքների տիրապետում, գերիշխանություն դրանց նկատմամբ, այլ կերպ ասած՝ ոգու իշխանություն: Վերջին հաշվով իշխանությունը լիակատար կայացած է լինում, եթե ապահովված է հոգևոր իշխանությունը:

«Ազգային Միաբանություն կուսակցությունը», ինչպես ցույց տվեցին մեր գլխի վրայով անցած վերջին մեկուկես տարվա փորձությունները, ոգու կուսակցություն է, ուրեմն և անպարտելի է:

«Հայոց Աշխարհ», 11.IX.2008, «Առավոտ», 12.IX.2008, «Փակագիծ», 12.IX.2008:

ՊԱՐՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ,
ԻՆՉՈ՞Ւ ԵՔ ԱՅԴ ԱՍՏԻՃԱՆ ՌՈՒՍԱՏՅԱՑ

Ս/թ հոկտեմբերի 17-ին Լևոն Տեր-Պետրոսյանը հերթական անգամ ստանձնեց հայ հանրության ուղեղներին դիմափոշի ցանելու կամ ժողովրդական լեզվով ասած՝ մարդկանց ականջներին արիշտա կախելու մեկժամյա տառապալից գործընթացը:

Երբ համբերատար ուշադրությամբ կարդացի (ինչպես հորդորել էր ԼՏՊ-ն) Մատենադարանի մերձակա հրապարակում կազմակերպած հանրահավաքում ունեցած Լևոն Տեր-Պետրոսյանի ելույթը, իսկույն մտքիս եկավ Մեծ հին հռոմեացու՝ Մարկոս Տուլլիոս Կիկերոնի (Ցիցերոնի) հայտնի ճառը՝ «Ի պաշտպանություն Վերեսի»: Բոլոր ժամանակների անվանի հռետորը Վերեսի դատավարության ողջ ընթացքում, թվում է, թե մոլեռանդորեն պաշտպանում է նրան՝ անվերջ թվելով Վերեսի բարեմասնությունները: Հետն էլ իր ելույթը համեմում է, առաջին հայացքից աննշան թվացող, որոշ մանրամասներով: Արդյունքում, ի զարմանս հրապարակում հավաքված հռոմեացի պլեբսի (Հին Հռոմի ստորին խավի ազատ մարդկանց), դատարանը վճռում է կախաղան բարձրացնել Կիկերոնի «պաշտպանյալին», քանի որ այդ աննշան թվացող մանրամասները ուշադիր դիտարկելու դեպքում պարունակում էին շատ ծանր մեղադրանքներ: Այդպես էլ Լևոնն է իր ելույթում, իբր, ստանձնում Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի շահերի պաշտպանի դերակատարությունը (անպոչ գդալի և քթի՝ պրպտումների մոտիվներով): Եվ քանի որ մեր «հերոսը» շատ հեռու է Կիկերոն լինելուց, Ռուսաստանն էլ Վլադիմիր Պուտինի նախագահության օրոք թոթափել էր Արևմուտքի ձեռքում անվերջ արդարացողի իր երբեմնի կարգավիճակը, իսկ Ռուսաստանի ներկայիս նախագահ Դմիտրի Մեդվեդևն իր վերջին հրապարակային ելույթներում կասկած չթողեց, որ Ռուսաստանի նոր կարգավիճակն անշրջելի է, ապա ԼՏՊ-ի ճիգերը, բնավ, ուղղված էին այլ խնդիրների լուծմանը: Եվ այս պարագայում մնում ես զարմացած՝ ԼՏՊ-ի մտքով ի՞նչ էր անցնում, երբ փորձում էր ամեն գնով ռուսամետ գործիչ երևալ, իրականում պախարակելով այդ հզոր երկիրը:

* * *

Այս մտորումները շարադրելուց առաջ ինքնախոստովանեցի, որ անցած 20 տարիների ընթացքում, թերևս, առաջին անգամ է, որ հետևեցի Լևոն Տեր-Պետրոսյանի խորհրդին՝ ուշադիր ընթերցեցի նրա ելույթը և իմ խոսքով փոր-

ձում եմ սկիզբ դնել, ինչպես ինքն է ասում, «Ղարաբաղի հարցի վերաբերյալ վաղուց սպասված լուրջ հասարակական բանավեճի»:

Եվ, այսպես, ո՞ւմ էր ուղղված հոկտեմբերի 17-ին մատենադարանամերձ հրապարակում կայացած հանրահավաքի ժամանակ ԼՏՊ-ի ճառը, ի՞նչ խնդիրներ փորձեց իր ելույթով լուծել նա և ի՞նչ հետևություններ, այո, դասեր պետք է քաղեն այդ ելույթից թե՛ մեր ժողովուրդը և թե՛ իշխանությունները: Արդյո՞ք պատահական էր հանրահավաքի անցկացման ժամանակը, որը կայացավ Ռուսաստանի Դաշնության նախագահ Դմիտրի Մեդվեդևի Հայաստան կատարելիք պաշտոնական այցի ճիշտ նախաշեմին: Կան բազմաթիվ այլ հարցեր ևս, որոնք մենք իրավունք չունենք անպատասխան թողնելու, որովհետև ԼՏՊ-ի ելույթում հնչած ցանկացած միտք, ինչքան էլ իշխանական լրատվամիջոցները փորձեն պարզունակեցնել, հեգնել, միևնույն է դրանով երբեք ու երբեք չեն կարողանա թուլացնել նրա խոսքում առկա Հայոց պետականության կազմաքանդմանն ուղղված վտանգավոր լիցքը:

ԼՏՊ-ն դարդոտվել է, և նա տագնապում է, որ «Հայաստանի արտաքին քաղաքականության հայեցակարգը և Ռուսաստանի ու Արևմուտքի հետ հարաբերություններում հավասարակշռություն պահպանելու փոխարեն՝ աստիճանաբար (Սերժ Սարգսյանի ջանքերով - *Ա.Գ.*) թեքվել է վերջինիս կողմը»: Ամերիկահայ մեծահարուստ ու բարերար իմ լավ բարեկամուհին նման դեպքում կբացականչեր՝ «շիտակե՞, դա ըսքանչելի է»: Սակայն հիացմունքի այս բացականչությունը հասցեագրված կլիներ ոչ թե Սերժ Սարգսյանին, այլ Լևոն Տեր-Պետրոսյանին: Իսկապես «ըսքանչելի է» ու զարմանալի, երբ արևմտյան հայտնի ուժերի կողմից ֆինանսավորվող ԼՏՊ-ն այդ աստիճան մտահոգվում է ... և, ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ չէ, որ նա, լինելով Արևմուտքի շահերը պաշտպանող, նման համալրում է ստանում ի դեմս ՀՀ գործող Նախագահի: «Ի՞նչով բացատրել Սերժ Սարգսյանի կտրուկ շրջադարձը դեպի Արևմուտք»,- բացականչում է Լևոնը: Հարգելի ընթերցող, եթե ուշադիր էիք, ապա, ԼՏՊ-ի բնորոշմամբ, Սերժ Սարգսյանի «աստիճանաբար» թեքվելը դեպի Արևմուտք իր ելույթի հաջորդ իսկ նախադասությունում արդեն որակվում է որպես «կտրուկ շրջադարձ դեպի Արևմուտք»: Սա քաղաքական բանավեճում հաճախ օգտագործվող հնարք է, երբ ընդդիմախոսիդ վերագրում ես հիմքեր չունեցող մոտեցումներ, այդ մոտեցումներն էլ ներկայացնում ես ոչ շահեկան տեսանկյունից, ասած Լևոնի, արդ. «Չմոռանանք, որ նա է (Ս. Սարգսյանը - *Ա.Գ.*) «Գույք՝ պարտքի դիմաց» գլխավոր ճարտարապետը, գործարք, որի շնորհիվ Հայաստանի համարյա ողջ էներգետիկ համակարգը հանձնվեց Ռուսաստանին»: Հանրությանը հրամցնելով այս միտքը՝ նա հետո սկսում է դա քարկոծել: Ի սկզբանե ուզում եմ նշեմ, որ ինքս էլ ամենևին հիացած չեմ «Գույք՝ պարտքի դիմաց» համաձայնագրից, քանզի ենթադրվող բարենպաստ զարգացումները գրեթե բացակայում են: Խոսքը բնավ էլ էներգետիկային չի վերաբերում, այլ վերաբերում է ռուսական կողմին հանձնված գործարանների տարիներ շարունակվող պարապուրդին: Սա ԼՏՊ-ի կողմից

Ռուսաստանը մեր հանրությանը ոչ շահեկան դիրքերից ներկայացնելու առաջին դրսևորումն էր: Դա նա հմտորեն քողարկեց, երբ ափսոսանք հայտնեց, թե, իբր, ՀՀ-ի արտաքին քաղաքականության հայեցակարգում խախտվել է հավասարակշռությունը ի վնաս Ռուսաստանի և հօգուտ Արևմուտքի: Այս «խախտման» դրդապատճառը ԼՏՊ-ն տեսնում և իր ելույթում բազմիցս պայմանավորում է ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանի կողմից «լեգիտիմության խնդիրը լուծելու պարզ շահագրգռությամբ»: Ի հաստատումն իր այս պնդմանը՝ ԼՏՊ-ն շարունակում է. «Արևմուտքին առաջարկելու այլ բան չունի, քան իր պետական շահը, Սարգսյանը, հետևաբար, ընտրել է այդ շահը զոհաբերելու ճանապարհը»: Սա շատ լուրջ մեղադրանք է Նախագահի հասցեին և ոչ պակաս լուրջ մեղադրանք է նաև մեղադրողի՝ ԼՏՊ-ի հասցեին նույնպես: Եթե դու՝ Լևոն, համոզված ես քո այդ զարհուրելի մեղադրանքի մեջ, ապա ինքդ կրկնակի հանցագործ ես, երբ քո հենց այդ նույն «դարակազմիկ» ելույթում կոչ ես անում ժողովրդին՝ «... անկեղծորեն կողմ լինելով թե՛ ղարաբաղյան հակամարտության, թե՛ հայ-թուրքական հարաբերությունների շուտափույթ կարգավորմանը՝ մենք չենք ուզում Հայաստանի իշխանություններին խանգարել լուծելու այդ խնդիրները: Դադարեցնելով մեր ակտիվությունը՝ մենք ընդամենը նպատակ ենք հետապնդում նրանց զերծ պահել արտաքին ճնշումներից ու անհարկի զիջումներից»: Չհասկացա՞նք, եթե համոզված ես, որ Սերժ Սարգսյանը հանուն իր լեգիտիմության խնդիրը լուծելու զոհաբերելու է «Հայաստանի պետական շահը», ապա ինչո՞ւ ես մոլորված կողմնակիցներիդ հանրահավաքից հետո տուն ուղարկում, ավելին՝ կոչ անում «չխանգարել իշխանություններին»: Չխանգարել՝ ո՞ր գործում, պետական շահը զոհաբերելո՞ւ, Արցախը ծախելո՞ւ: Նույն ելույթում հնչած այս իրարամերժ երկու պնդումները ուրիշ պայմաններում կարելի էր պարզապես վերագրել հռետորի հիմարությանը, սակայն ոչ երբեք Լևոն Տեր-Պետրոսյանի պարագայում: Ի՞նչ հետևություն կարելի է անել, արդ, այս ամենից: ԼՏՊ-ն հրավիրելով բազմամարդ հանրահավաք և այնտեղ իր ելույթում կասկածի տակ վերցնելով Նախագահ Սերժ Սարգսյանի լեգիտիմության հարցը, ըստ էության, թուլացնում է Լեռնային Ղարաբաղի շուրջ առաջիկա բանակցային գործընթացում ՀՀ Նախագահի դիրքերը: Արդյունքում՝ ՀՀ Նախագահի ցանկացած կոշտ դիրքորոշում բանակցային գործընթացում, որը նա կարտահայտի ողջ հայության անունից, ադրբեջանամետ ուժերը կարող են կասկածի տակ վերցնել, արդ, մատնանշելով ԼՏՊ-ի կողմից ամիսներ շարունակ չարչրկվող Ս. Սարգսյանի «լեգիտիմության պակասը»: Հանգամանք, որն անտեսելու իրավունք չունենք և ահա թե ինչու: Օրերս Ադրբեջանում կայացել են նախագահական ընտրություններ և միջազգային ամենատարբեր հեղինակավոր կառույցներ եզրակացրել են, որ Իլհամ Ալիևի ընտրվելը ընտրությունների տեսանկյունից եղել է օրինական ու գնահատվել է միանգամայն լեգիտիմ:

Հանգամանք երկրորդ. ԼՏՊ-ն իր ելույթում մի կողմից նշում է, որ «Նա (Սերժ Սարգսյանը - *Ա.Գ.*) ներքաշվել է աշխարհաքաղաքական մի այնպիսի

խաղի հորձանուտ, որի ելքը Հայաստանի ու Ղարաբաղի համար եթե ոչ կործանարար, ապա առնվազն անբարենպաստ է լինելու»: Եթե, Լևոն, ասածներիդ մեջ համոզված ես, ապա ինչո՞վ բացատրել, որ ելույթիդ վերջնամասում փոխանակ կոչ անես մոլորված համակիրներիդ իրենց հարևան - բարեկամների հետ ոտքի ելնեն թույլ չտալու համար նման «կործանարար» կամ «առնվազն անբարենպաստ» զարգացումները, դրանց առաջն առնելու փոխարեն հանրահավաքի ժամանակ հայտարարում ես «Զանգվածային միջոցառումներից միառժամանակ հրաժարվելու համարձակ և պատասխանատու» քայլ կատարելու մասին: Չլինի՞ թե դրանով Ադրբեջանի թիկունքում կանգնած Բաքու-Թբիլիսի-Ջեյհան ու Բաքու-Թբիլիսի-Էրզրում նավթա և գազատարների արևմտյան հայտնի տերերին ու նրանց մեջքին կանգնած քեզ հովանավորողներին ուզում ես գլխի գցել, արդ, գործի անցեք, Լեռնային Ղարաբաղի հարցի ոչ հայանպաստ և ձեզ համար ավելի ցանկալի պայմանների մասին երազել անգամ չեք կարող: Ավելին, դու, ի հաստատումն այդ մեսիջի, Արևմուտքին քաջալերում ես՝ ասելով. «Որքանով էլ պարադոքսալ թվա, Աբխազիայի և Հարավային Օսեթիայի անկախության ճանաչումից հետո Ռուսաստանի ազդեցությունը այս տարածաշրջանում ոչ թե մեծանալու, այլ նվազելու միտումներ է դրսևորում»: Ավելին՝ երազածդ ես բարձրաձայնում առ այն, որ «Ռուսաստանը դուրս է մղվում Մինսկի խմբի ձևաչափից, հետևաբար կորցնում իր դերակատարությունը Ղարաբաղյան կարգավորման գործընթացում»: Նման դատողություններ անելով՝ Լևոնը անթաքույց քծնում է Արևմուտքին՝ հեգնելով, փորձում է հիմնավորել, որ ռուս-վրացական հնգօրյա պատերազմից հետո Ռուսաստանի դեմ Արևմուտքի սանձազերծած աննախադեպ հակառուսական քարոզչական պատերազմը տվել է վերջիններիս կողմից ակնկալած արդյունքը, այն է, որ Հարավային Կովկասում Ռուսաստանը թուլացել է: Ավելին, Լևոնը կասկածի տակ է դնում Ռուսաստանի Դաշնության նախագահ Դմիտրի Մեդվեդևի վերջերս՝ 2008 թ. օգոստոսի 31-ին Ռուսաստանի մի քանի հեռուստալիքների լրագրողների, մասնավորապես հեռուստալրագրող Ա.Կանդրաշովի հարցին տված պատասխանը. «Ձեր կարծիքով ինչպիսի՞ն է լինելու աշխարհի ապագան, աշխարհակարգը և այնտեղ մեր երկրի տեղը»: Ռուսաստանի նախագահը պատասխանել է. «Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը իրագործելիս ես հենվելու եմ հինգ սկզբունքների վրա: … և, վերջապես, հինգերորդը: Ռուսաստանի, ինչպեսև աշխարհի այլ երկրների մոտ կան տարածաշրջաններ, որտեղ գտնվում են արտոնյալ հետաքրքրություններ: Այդ տարածաշրջաններում տեղակայված են երկրներ, որոնց հետ մեզ կապում են ավանդական, բարեկամական հարաբերություններ, պատմական հատուկ հարաբերություններ: Մենք շատ ուշադիր ենք աշխատելու այդ տարածաշրջաններում և զարգացնելու ենք բարեկամական հարաբերություններ այդ պետությունների հետ, մեր մոտիկ հարևանների հետ»: Արձանագրենք, որ ԼՏՊ-ն Ռուսաստանին վերաբերող վերը նշված իր գնահատականով, փաստորեն, հերքում է

Ռուսաստանի նախագահ Դ. Մեդվեդևի արտահայտած հարևան բարեկամ երկրներին առնչվող այդ հստակ ձևակերպված սկզբունքային մոտեցումը: Հանդես գալով, իբր, ռուսամետ քաղաքական գործչի դիրքերից, նա, ըստ էության, մեր հանրությանը հասկացնում է, որ վերանայեք դարերից եկող ձեր ռուսական կողմնորոշումը, այն այլևս արդարացված չէ: «Իրականության ողջ դառնությունն այն է,– ասում է ԼՏՊ-ն, – որ ինչպես Արևմուտքը չկարողացավ Ռուսաստանին խանգարել լուծելու Աբխազիայի և Հարավային Օսեթիայի հակամարտությունը, այնպես էլ, ամենայն հավանականությամբ, Ռուսաստանը չի կարողանալու Արևմուտքին խանգարել լուծելու Ղարաբաղյան խնդիրը»: Մեր տարածաշրջանին առնչվող հարցերի կարգավորման գործում Ռուսաստանին լուսանցք տեղափոխելով, իսկ Արևմուտքի դերակատարությունն էլ բարձրացնելուց հետո Լևոնը ամենևին կանգ չի առնում, այլ խորացնում է իր քծնանքը առ Արևմուտք. «Կարգավորման հիմքում, անկասկած ընկած է լինելու 2007 թ. դեկտեմբերին Մինսկի խմբի համանախագահության անունից հակամարտող կողմերին ներկայացված Մադրիդյան առաջարկը, որի գաղափարախոսությունը միջազգային իրավունքի երկու սկզբունքների՝ տարածքային ամբողջականության և ազգերի ինքնորոշման ներդաշնակումն է»: Այլ կերպ ասած՝ ԼՏՊ-ն Լեռնային Ղարաբաղի հարցի մոտալուտ լուծման գործընթացում Ռուսաստանի դերակատարությունը նսեմացնելուն զուգընթաց, ըստ էության, գովաբանում է Արևմուտքը ներկայացնող Մինսկի խմբի համանախագահող երկրներին, որոնց շնորհիվ է, որ, վերջապես, առաջարկվող փաստաթղթում երաշխավորված է երկու սկզբունքների՝ տարածքային ամբողջականության և ազգերի ինքնորոշման ներդաշնակումը: Բայց չէ՞ որ հենց այդ երկու սկզբունքների ներդաշնակության ապահովության հարցն է մշտապես եղել Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործում մեր դիվանագիտության բոլոր ձեռնարկումների մեխը, մայր խնդիրը: Այդ թվում նաև հենց նրա՝ ԼՏՊ-ի նախագահության տարիներին խնդրո առարկայի շուրջ վարվող արտաքին քաղաքականության առանցքը եղել է այս մոտեցումը մինչև այն պահը, երբ 1997 թ. խախտվեց այդ ներդաշնակությունը և բանակցային սեղանին դրվեց փաստաթուղթ, ուր գրեթե անտեսված էր ազգերի ինքնորոշման սկզբունքը: Փաստաթուղթ, որի տակ ստորագրելու իր պատրաստակամությունը ԼՏՊ-ն պայմանավորում էր «լրջանալու պահի» անհրաժեշտությամբ, ինչպես նաև «պատերազմի և խաղաղության» միջև ընտրություն կատարելու հանգամանքով: Թե ինչով այդ ամենն ավարտվեց, բոլորս հիշում ենք: Եվ, ահա, տասը տարի անց ԼՏՊ-ն խոստովանում է, որ այժմ առաջարկվող փաստաթղթում Արևմուտքը (քանի որ Ռուսաստանի դերակատարությունն այդ հարցում, ըստ ԼՏՊ-ի, չնչին է) ապահովել է մեզ առավել քան հուզող ազգերի ինքնորոշման սկզբունքի ներդաշնակությունը տարածքային ամբողջականության սկզբունքի հետ: Եվ այս պնդումներից հետո, ինքն իրեն հակասելով, ԼՏՊ-ն իր ելույթի ամփոփիչ հատվածում հայտարարում է. «Կասկածից վեր է, որ Արևմուտքը ձեռքից բաց

չի թողնելու Ղարաբաղի հարցի լուծման իր համար հարմարագույն այս առիթը, ինչը լրջագույն խնդիրների առջև է կանգնեցնում Հայաստանի իշխանություններին»:

Ինչևէ, պարոն Տեր-Պետրոսյանի մտասևեռումներից, ինչքան էլ նա փորձի խճճել իր եզրահանգումները, ունկնդիրներին և ընթերցողներին ակներև է դառնում մի իրողություն. Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորումը երբեք ու երբեք չի կարող միաժամանակ գոհացնել հակամարտող երկու կողմերին: Ակնհայտ է, որ չեն արդարացվելու ո՛չ ադրբեջանական և ո՛չ էլ հայկական կողմի սպասելիքները: Ահա հենց սրա գիտակցումով է, որ ԼՏՊ-ն պարարտ հող է պատրաստում իր հետագա քայլերի համար: Հետագայում շահարկելով մարդկանց արդարացի դժգոհությունները, որոնք, անտարակույս, լինելու են, Լևոնը ի ցույց է դնելու իր այսօրվա զսպվածություն դրսևորելու կոչերը՝ հանրահավաքում հայտարարված քաղաքականությունը՝ իշխանություններին չխանգարելու մասին: Սա ներքին օգտագործման համար:

Առավել ուշագրավ են ԼՏՊ-ի արտաքին լսարանին ուղղած հավակնությունները: Նա իր ելույթում քանիցս անթաքույց շեշտում է մեր տարածաշրջանում Արևմուտքի դերակատարության բարձրացման, ինչպես նաև Ռուսաստանի ազդեցության նվազեցման մասին: Տպավորություն է ստեղծվում, որ նա Արևմուտքին հասկացնում է, որ, լինելով իրատես քաղաքական գործիչ, գալով իշխանության բնավ էլ մտադրություն չունի մեր երկրի ապագան կապել տարածաշրջանում թուլացող Ռուսաստանի հետ: Ապագայում նա, անշուշտ, հաշիվ կներկայացնի իր արևմտյան հովանավորներին: Ավելին՝ հանդես կգա պահանջատիրոջ դիրքերից՝ ասելով, որ ինքը անգամ իսկ գիտակցելով Արևմուտքի կողմից առաջարկվող Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցի ոչ հայանպաստ լուծումները, այնուամենայնիվ, ժողովրդին ոչ միայն տուն ուղարկեց՝ դրանով պայմաններ ստեղծելով ոչ հայանպաստ փաստաթղթի ստորագրման համար, այլև մեր ախոյաններին՝ ադրբեջանցիներին, զինեց ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի «լեգիտիմության պակասի» քարտը շահարկելու հնարավորությամբ:

Ընթերցողը, անշուշտ, կհարցնի, իսկ, այնուամենայնիվ, Ռուսաստանը մի՞թե չի գիտակցում, որ ի դեմս ԼՏՊ-ի գործ ունի Ներսես Բյուզանդացու (Հուստինիանոս Ա-ի օրոք անվանի զորավարի ու դիվանագետի) արժանավոր ժառանգի հետ: Չստացվի, որ Լևոնին միայն ու միայն քննադատում եմ, մի քիչ էլ գովեմ, հատկապես նշելով բյուզանդական քաղաքականություն որդեգրածի իր առաքելությունը մեր երկրում: Կարծում եմ, անտարակույս, Ռուսաստանը քաջ գիտակցում է, թե ում հետ գործ ունի: Դիցուք, թե այն «հանճարեղ» ձևակերպումները, որով ԼՏՊ-ն զարդարեց իր ելույթը. «Հայաստանը փորձել է լինել ո՛չ ռուսամետ, ո՛չ արևմտամետ, այլ առաջնորդվել է բացառապես սեփական ազգային շահերով: Իմ նախագահության օրոք նման դիրքորոշումը կոչվում էր «բալանսավորման» կամ հավասարակշռման քաղաքականություն, Քոչարյանի օրոք՝ «կոմպլեմենտարիզմի» կամ փոխլրացման

քաղաքականություն, որոնց տարբերությունը սոսկ տերմինաբանական է»: Բա՛, սիրելի ընթերցող, ինչպես կասեր մեծ մտածող ՀՀՇ-ի Գևորիկը, հասանք Ուլուխանլու: ԼՏՊ-ն, որը 10 տարի շարունակ իր ենթակայության ներքո գործող թե՛ քաղաքական գործիչների և թե՛ ՀՀՇ-ական լրատվամիջոցներով դատափետում էր Քոչարյան-Օսկանյանի կողմից վարվող արտաքին քաղաքականությունը, հիմա, իր իսկ խոսքով, արդ, համերաշխություն է հայտնում Քոչարյանի նախագահության տարիներին վարված արտաքին քաղաքականությանը: Պահն էլ, կրկնեմ, «պատահականորեն» ընտրված է ՌԴ-ի նախագահ Դմիտրի Մեդվեդևի պաշտոնական այցի նախօրեին: Լևոնը, ասես թե, ՌԴ-ի ղեկավարին մեսիջ է ուղարկում առ այն, որ ինքը պատրաստակամ կլինի Հայաստանում հայտնի դրսի ուժերի կողմից հրահրված իշխանափոխության արդյունքում նախագահ դառնալով շարունակել Ռոբերտ Քոչարյանի վարած արտաքին քաղաքականությունը: Քաղաքականություն, որը Ռուսաստանի կողմից դրականորեն է ընկալվել: Եվ դա նա ներկայացնում է որպես հակակշիռ Ս. Սագսյանի դեպի Արևմուտք թեքվելու, իբր, կայացած փաստի: Լևոնը նշում է, որ թեպետ նախագահ Վլադիմիր Պուտինը առաջիններից էր, որ շնորհավորեց Ս. Սարգսյանին Նախագահ ընտրվելու կապակցությամբ, մտածելով, որ վերջինս կշարունակի Քոչարյանի արտաքին քաղաքական կուրսը, սակայն նա, ըստ ԼՏՊ-ի, չարդարացրեց այս սպասումները: Դրա հետ մեկտեղ իր ելույթում նա տողատակով, ասես թե, հասկացնել է ուզում տալ, որ Ռուսաստանի համար անհեռանկարային է Ռոբերտ Քոչարյանի վերադարձը մեծ քաղաքականություն, քանի որ մարտ ամսից ի վեր լևոնական 7-8 լրատվամիջոցները ամեն օր մեր ժողովրդի մոտ կերտում են Քոչարյանի միակ մեղավոր լինելու հանգամանքը մարտի 1-ի դեպքերի տասը զոհերի հարցում: Այնպես որ, ռուս բարեկամներ, Հայաստանում ձեր շահերի միակ պաշտպանը, գիտցեք, դա ինքն է՝ Լևոն Տեր-Պետրոսյանը: Արդարության առաջ չմեղանչելու համար նշեմ, որ անցած տասը տարիների ընթացքում գոնե մեկ հարցում ԼՏՊ-ն և Ռ. Քոչարյանը գործել են համերաշխ. դա Հայաստանի Հանրապետությունում ռուս-հայկական ռազմավարական հարաբերությունների, տնտեսական լիարժեք ինտեգրման կարևորությունը գիտակցողներին ամեն գնով քաղաքական ասպարեզից, եթե ոչ ամբողջությամբ մեկուսացնելու, ապա նրանց դերակատարությունը հնարավորինս նվազեցնելու ուղղությամբ կատարված քայլերն են եղել: Սա, իմիջիայլոց, ապագայում հարկ եղած դեպքում այդ քաղաքականության վտանգավորությանը կանդրադառնանք առանձին՝ կարևորելով մեր երկրի համար դրա ծայրաստիճան անցանկալի հետևանքները:

Կարելի էր ԼՏՊ-ի ելույթի երկվությունը հաստատող, տրամաբանորեն իրարամերժ այլ գոհարներ էլ ներկայացնել ընթերցողի դատին, բայց, կարծում եմ, բերված փաստերն էլ բավարար են մի քանի կարևոր հետևություններ անելու համար:

Առաջին. Հարավային Կովկասում ձևավորվող նոր պայմաններում,

որոնք իրենց հետևից բերելու են աշխարհաքաղաքական զգալի տեղաշարժեր, խիստ վտանգավոր է ՀՀ Նախագահին «կապել» ուժի այս կամ այն կենտրոնների հետ, առավել ևս, որ մենք կանգնած ենք Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման շեմին: Դա էլ այն դեպքում, երբ ՀՀ-ի արտաքին քաղաքական դիրքորոշումները հստակ ձևակերպված են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հայեցակարգում՝ փաստաթուղթ, որը հանրապետության իշխանությունների կողմից առ այսօր անվավեր չի ճանաչվել:

Երկրորդ. չէր խանգարի, որ Հայաստանի Հանրապետությունում իրենց խորաթափանց և քաղաքական ռազմագետ համարող բոլոր գործիչները մեկընդմիշտ հասկանային մի պարզ ճշմարտություն. ԱՄՆ-ն, Եվրամիությունը և Ռուսաստանի Դաշնությունը, այո, իրապես շահագրգռված են Հարավային Կովկասում կայուն խաղաղություն հաստատելու գործում: Այլ խնդիր է, որ Արևմուտքի և Ռուսաստանի դրդապատճառներն այս հարցում տրամագծորեն տարբեր են: Ռուսաստանը, կարծում եմ, շատ լավ հասկանում է, որ Մեծ Կովկասում նրա օրըստօրե աճող ազդեցությունը մեծապես պայմանավորված է հայերի և ալանների (օսերի) պետությունների բարիդրացիական վերաբերմունքից: Ինչ վերաբերում է Օսեթիային (Հյուսիսային և Հարավային), ապա ռուս-վրացական հնգօրյա պատերազմի արդյունքում Օսեթիայի հետ Ռուսաստանն այլևս խնդիրներ չունի: Այնպես որ, Հայաստանի հետ խնդիրներ ստեղծելը, նախ, ոչ մի հիմք չունի, ավելին, բացարձակապես չի տեղավորվում Ռուսաստանի Դաշնության շահերի ծիրում: Կարծում եմ, Ռուսաստանում քաջ գիտեն, թե այսօր ուր են նայում Վրաստանի իշխանությունները, ուր է նայում Ադրբեջանի ղեկավարը: Առաջինը՝ ԱՄՆ և Եվրամիություն, երկրորդն էլ, ինչպես գայլն է նայում անտառին, այնպես էլ Բաքուն՝ Անկարային:

Երրորդ. թուրքերը տարածաշրջանում աննախադեպ ակտիվություն դրսևորելով, ՌԴ-ի հետ դիվանագիտական խաղեր տալով՝ ԱՄՆ-ին հասկացնել են տալիս, որ հանկարծ մտքով չանցկացնեն, թե կարող են Հյուսիսային Իրաքում քրդերի անկախ պետություն ստեղծել: Իսկ աշխարհաքաղաքական առումով նշենք, որ Թուրքիան մեր տարածաշրջանում շարունակում է մնալ ԱՄՆ-ի ամենահավատարիմ դաշնակիցը:

Չորրորդ. ԱՄՆ-ն էլ, իր հերթին, շահագրգռված է Վրաստանից զատ մեր տարածաշրջանում ավելի ծավալուն հիմնավորվել, թեկուզև սկզբնական շրջանում հայ-ադրբեջանական հակամարտության գոտում՝ սահմանափակ քանակությամբ խաղաղապահ զորքերի տեղավորմամբ՝ ԼՂ հարցի բանակցային գործընթացի «բարեհաջող» ավարտից հետո: Հատկապես նրանք կկարևորեն այդ ուժերի տեղակայումը իրանական սահմանի վրա: Թե ինչո՞ւ, կարծում եմ, բոլորս հասկանում ենք:

Հինգերորդ. Եվրամիությունը նույնպես շահագրգռված է ԼՂ հարցի շուտափույթ լուծմամբ, ըստ որում, ավա՜ղ, ադրբեջանական կողմին գոհացնե-

լու նախապատվությամբ, ոչ միայն Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարով տարեկան կտրվածքով անխափան 50 մլն տոննա նավթ ստանալու հեռանկարով, այլև մեծապես այլ դրդապատճառով՝ Ադրբեջանին տրամադրելով ամենաակտիվ դերակատարում "Nabucco" գազատարի շինարարությունը սկսելու հարցում: Գազատար, որի տարողունակությունը տարեկան կտրվածքով լինելու է 32 մլրդ խորանարդ մետր գազ, ինչը հնարավորություն կընձեռի եվրոպական երկրներին մեղմելու իրենց կախվածությունը Ռուսաստանից ներկրվող գազից: Չմոռանանք նշել, որ 3.5 հազար կիլոմետր երկարությամբ այդ գազատարը անցնելու է Կասպից ծովի հատակով (շրջանցելով Ռուսաստանը), հետո Ադրբեջանի, Վրաստանի, Թուրքիայի վրայով Կենտրոնական Ասիայի գազը հասցնելու է Հունաստան, Բուլղարիա, Ռումինիա, այնտեղից էլ Արևմտյան Եվրոպա: Նշենք նաև, որ նախագծի արժեքը կլինի շուրջ 7,5 մլրդ եվրո, իսկ "Nabucco"-ի կառուցման բաժնետերերն են լինելու ավստրիական, գերմանական, հունգարական, բուլղարական, ռումինական և թուրքական կազմակերպությունները: Այս հանգամանքը ինքնին պարզորոշ է դարձնում Եվրամիության դիրքորոշումը ԼՂ հարցում:

Վեցերորդ. լևոնականների կողմից քաղաքական այս բալագանը առավել անհեթեթ հնչեղություն ու երանգներ կունենար, եթե իշխանական կոալիցիայի մաս կազմող ուժերը, օգտագործելով ի պաշտոնե իրենց ընձեռված բազում հնարավորությունները, կարողանային մեր հանրությանը բացատրել Միավորված ազգերի կազմակերպության 63-րդ Գլխավոր Ասամբլեայում ունեցած Նախագահ Ս. Սարգսյանի ելույթի իմաստը, ուր սպառիչ տրված են Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծման մեզ համար ընդունելի մոտեցումները: Այնուհետև ժամանակը օգտագործեին ոչ թե օրը մեջ դատարկ ասուլիսների անցկացմամբ՝ առաջ մղելով տոլմա փաթաթելու մեջ հմտացած անլուրջ կանանց, որոնք իրենց բարոյախրատական տափակ ճառերով ձանձրացրել են մարդկանց կամ քաղաքականությունից հեռո՞ւ, հեռո՞ւ կանգնած մարդկանց գովազդմամբ: Էլ չեմ ասում մարտի 1-ի ողբերգության ամենատարբեր շահարկումների մասին, երբ բազմաթիվ ասուլիսների ժամանակ տպավորություն է ստեղծվում, թե խնդիր ունեն նշելու սեփական անձերի բացառիկ «անկողմնակալությունն» ու «ազնվությունը»՝ շրջանցելով խորքային հարցեր, արդ, Հայաստանի Հանրապետության առաջ ծառացած քաղաքացիական պատերազմի սանձազերծման վտանգի հետ կապված: Ավելին, այս ընթացքում հայտնվեցին հոդվածներ, ուր ՄԱԿ-ում Նախագահի ունեցած ելույթի, թերևս, ամենաշահեկան պնդումները, որակվեցին որպես «անհաջող» կամ «ամենաանհաջող» բնութագրականներով: Կարծում եմ, ճիշտ կլիներ, որ իշխանությունը ներկայացնողները խոսեին պետության առաջ ծառացած մարտահրավերների դեմն առնելու մեխանիզմներից ու մոտեցումներից, աշխարհի համայն հայության ուժերը համախմբելու անհրաժեշտությունից, ինչի մեկնարկը նույնպես տրվել էր Սերժ Սարգսյանի կողմից ԱՄՆ-ում սփյուռքահայ գործարար և քաղաքական ընտրանու հետ հանդիպ-

ման ժամանակ:

Յոթերորդ. ստեղծված իրավամբ բարդ իրավիճակում եկել է պահը, որ յուրաքանչյուրս գիտակցի մի պարզ ճշմարտություն. հրապարակում ունենք Սերժ Սարգսյանի ելույթը ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի նստաշրջանում, ուր տրված են մեզ հուզող բոլոր հարցերի պատասխանները, ձևակերպված են ԼՂ-ի կարգավորման մեզ համար ընդունելի սկզբունքները: Ուրեմն, մեր պետության շահը բոլորիս առաջ դնում է գեթ մեկ խնդիր. համախմբվել այդ գաղափարները կյանքի կոչելու ճանապարհին՝ անկախ մեր անձնական վերաբերմունքից գործող իշխանությունների և երկրի Նախագահի հանդեպ: Սա է օրվա հրամայականը:

Եվ, վերջապես, երբեք չմոռանանք, որ չարաչար սխալված կլինեն նրանք, ովքեր տարածաշրջանային զարգացումներից կփորձեն դուրս մղել մեր հարևանի և բարեկամի՝ Իրանի Իսլամական Հանրապետության գործոնը:

Լինելով «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահը՝ ես գործընկերներիս հետ մեր երկրի համար բախտորոշ այս օրերին, երբեք չենք շահարկի այն բազում հետապնդումները, անարդարությունները, որոնց ենթարկվել ենք մենք իրար հաջորդող իշխանությունների կողմից՝ սկսած կուսակցության հիմնադրման առաջին իսկ օրվանից, այն է՝ 1997 թ. փետրվար ամսից:

Հետգրության փոխարեն: Օրերս ռուսական մամուլում կարդացի հայկական ծագում ունեցող ռուս վեհապետականամետ հայրենասեր, ճանաչված քաղաքական ռազմագետներից մեկի վերլուծությունը: Ի թիվս բազմաթիվ հետաքրքիր դիտարկումների՝ բերեմ Լևոնի դեպքին ճիշտ և ճիշտ համապատասխանող մի մեջբերում. «Հիմարությունը՝ սադրանքի մերձավորագույն հարևանն է: Երիտասարդ հասակում ես հաշվում էի, որ հիմարությունը դա ուղեղի վնասվածքի հետևանք է, ոչ ավելին: Տարիների ընթացքում ես համոզվեցի, որ ամեն ինչ շատ ավելի տխուր է: Եվ սովորեցի հարգել հիմարությունը՝ հաշվի նստելով դրա հետ որպես լուրջ թշնամու»: Լևոն Տեր-Պետրոսյանի հոկտեմբերի 17-ի ելույթը տեղավորվում է ճիշտ այս տրամաբանության շրջանակում. բովանդակության առումով լինելով կատարյալ հիմարություն՝ այն չափազանց վտանգավոր է մեր հասարակության, մեր պետականության համար:

Անկեղծորեն ասած՝ ուշադիր կարդալով Լևոնի ելույթը (կրկնեմ, նա այդպես էր հորդորել ընթերցողներին), ինձ, այնուամենայնիվ, զարմացնում է մի բան, որը հարցի տեսքով էլ ուզում եմ ուղղել նրան. «Պարոն Տեր-Պետրոսյան, ինչո՞ւ եք այդ աստիճան ռուսատյաց»:

«Հայոց Աշխարհ», 21.X.2008, «Առավոտ», 21.X.2008, «Փակագիծ», 21.X.2008, «Իրավունք», 21-23.X.2008, «Ազատամտություն» 21-22.X.2008:

ГОСПОДИН ТЕР-ПЕТРОСЯН! ОТЧЕГО ВЫ ТАКОЙ РУСОФОБ?

17 октября сего года Левон Тер-Петросян в очередной раз инициировал миссию часового припудривания мозгов армянской общественности или, выражаясь народным языком, вешания лапши на уши легковерных.

Я терпеливо прочитал (по совету автора) выступление Левона Тер-Петросяна на митинге у Матенадарана, и на память сразу пришла речь великого римлянина Марка Туллия Цицерона "В защиту Вереса". Непревзойденный оратор всех времен в ходе всего суда над Вересом, казалось бы, рьяно защищает его, перечисляя многочисленные достоинства. Вместе с тем приводит вроде бы незначительные детали. Но в итоге, к изумлению собравшегося на площади римского плебса (свободных представителей нижнего сословия Древнего Рима) суд решает вздернуть на виселице "подзащитного" Цицерона, так как вышеуказанные "незначительные" подробности содержат в себе весьма тяжкие обвинения. Таково и выступление Левона, нежданно-негаданно взвалившего на свои плечи роль единственного в Армении защитника интересов России с приведением высосанных из пальца мотивов. Но наш "герой" весьма далек от лавров Цицерона, Россия в период правления Владимира Путина избавилась от постоянно навязываемого ей комплекса "оправдывающейся" перед Западом страны и с учетом последних публичных выступлений нынешнего президента Дмитрия Медведева продемонстрировала, что не нуждается в чьей-либо защите и что этот ее новый статус необратим. В этих обстоятельствах остается только гадать, с чего это ЛТП решил любой ценой предстать перед всеми прорусским деятелем, при этом на самом деле охаивая эту могучую страну?!

* * *

Перед тем, как поделиться этими размышлениями, признаюсь, что впервые за последние 20 лет я последовал совету Л.Тер-Петросяна - внимательно прочитал его выступление - и в своем слове попытаюсь положить начало, как он выражается, "серьезной общественной дискуссии вокруг вопроса Карабаха".

Итак, к кому была обращена речь ЛТП 17 октября на митинге у Матенадарана? Какие вопросы пытался он решить? И какие выводы, какие уроки должны извлечь из этого выступления народ и власти? Случайно ли была выбрана дата проведения митинга накануне официального визита в Армению президента РФ Дмитрия Медведева? Есть множество и других вопросов, которые мы не имеем права игнорировать, потому что любая мысль в речи ЛТП, как бы ни пытались упростить ее и

осмеять "ответственные" СМИ, все равно таит в себе опасный потенциал, нацеленный на демонтаж армянской государственности.

ЛТП загрустил от того, что "Армения в совей внешней политике в балансе отношений между Россией и Западом стала смещаться в сторону последнего". Моя близкая знакомая, меценат и благотворитель из армянской диаспоры США, выслушав это из уст, Левона воскликнула бы: "Правда? Так это же прекрасно…" Но вектор этого восхищения был бы направлен не к Сержу Саргсяну, а к Левону Тер-Петросяну. Действительно прекрасно, когда финансируемый со стороны определенных западных сил ЛТП столь озабочен и как вы думаете чем? А тем, что, оказывается, в деле защиты интересов Запада он получил внушительное подкрепление в лице действующего президента РА. "Чем объяснить крутой поворот Сержа Саркисяна в сторону Запада?"- восклицает Левон. Уважаемый читатель, если вы были внимательны, то по оценке ЛТП, "постепенное" смещение С. Саркисяна к Западу уже в следующем предложении квалифицируется "крутым поворотом". Заметим, что этот прием часто применяется в политической дискуссии: оппоненту приписываются не имеющие под собой никакого обоснования подходы, в дальнейшем же они подаются в крайне неблагоприятной трактовке. Так, Левон по другому вопросу подчеркивает: "Не будем забывать, что С.Саргсян - главный архитектор соглашения "Имущество в счет долга", благодаря которому почти вся энергетическая система Армении была передана России". Подкинув общественности эту мысль, он потом начинает ее атаковать. Сразу замечу, что я вовсе не в восторге от соглашения "Имущества в счет долга" ввиду почти полного отсутствия реальных шагов по его реализации. И речь идет вовсе не об энергетике (здесь, слава Богу, есть положительные подвижки), а о годами простаивающих заводах, переданных в российскую собственность. Это первый завуалированный камень в "огород" России, который ЛТП замаскировал, выразив сожаление, что во внешней политике РА, якобы, нарушен баланс во вред России и в пользу Запада.

Причину этого "нарушения баланса" ЛТП видит в неоднократно подчеркнутой в своей речи заинтересованности С.Саргсяна решить вопрос "своей легитимности". В подтверждение этой мысли ЛТП продолжает: "Ему нечего предложить Западу, кроме своего государственного интереса, и поэтому Саркисян избрал путь пожертвования этим интересом". Это очень серьезное обвинение в адрес президента и не менее серьезное в адрес обвинителя - ЛТП. Если ты, Левон, *уверен в столь ужасном обвинении, то являешься преступным вдвойне, ибо в своем "эпохальном" выступлении призываешь народ: "… будучи искренним сторонником скорейшего урегулированием как Карабахского конфликта, так и армяно-турецких отношений, мы не хотим мешать властям Армении решить эти вопросы. Прекращая нашу активность, мы всего лишь стремимся избавить власти от внешнего давления и неуместных уступок".*

Непонятно. Если уж ты уверен, что Серж Саргсян во имя своей легитимности жертвует "Государственными интересами Армении", то почему ты отправляешь

после митинга домой своих заблудших сторонников, более того, призываешь "не мешать властям…" Не мешать чему? Попирать государственный интерес? Продавать Арцах?

Два взаимоисключающих утверждения в одной речи в иной ситуации можно было бы просто приписать глупости оратора, но никогда в случае с Л.Тер-Петросяном. Какой вывод можно сделать из всего этого? Созываем многотысячный митинг и подвергая в своей речи сомнению вопрос легитимности президента Сержа Саргсяна, ЛТП, по сути, ослабляет позиции президента в переговорном процессе по Нагорному Карабаху. С другой стороны, жесткая позиция президента РА, отражающая мнение всего армянства, может быть взята под сомнение проазербайджанскими силами, указывающими на муссируемый в течении месяцев Л.Тер-Петросяном тезис о "дефиците легитимности" С.Саргсяна. Обстоятельство, которое мы не имеем право игнорировать, тем более, на фоне прошедших на днях президентских выборов в Азербайджане, на которых представители различных авторитетных международных структур признали избрание Ильхама Алиева однозначно легитимным.

Обстоятельство второе. В своей речи ЛТП отмечает: "Он (Серж Саргсян –А. Г.) вовлекся в водоворот такой геополитический игры, последствия которой для Армении и Карабаха если не губительны, то по меньшей мере будут неблагоприятными". Опять возникает вопрос. Уж если ты, Левон, во всем этом уверен, то чем объяснить, что в конце своей речи вместо призыва к своим заблудшим сторонникам (чтобы они вместе со своими соседями и родственниками не позволили "губительного" или "по меньшей мере неблагоприятного" развития событий), говоришь "о смелом и ответственном шаге - отказе на некоторое время от проведения массовых акций…" *Своим призывом неужели ты даешь понять стоящим за спиной Азербайджана западным хозяевам нефте- и газопроводов Баку-Тбилиси-Джейхан и Баку-Тбилиси-Эрзерум, что надо действовать, ибо о более неблагоприятных для армян условиях для решения Карабахского вопроса мечтать не приходится?* Более того, в подтверждение своего мессиджа ты ободряешь Запад, говоря: "Как это ни покажется парадоксально, но после признания независимости Абхазии и Южной Осетии влияние России в этом регионе имеет тенденцию не к возрастанию, а к уменьшению". Но и это еще не все, ты мечтаешь вслух о своем желанном: "Россия выдавливается из формата Минской группы, следовательно, теряет свою роль в процессе Карабахского урегулирования". Высказывая подобные суждения, Левон неприкрыто лебезит перед Западом. Иронизируя при этом, что после пятидневной грузино-осетинской войны развернутая Западом против России беспрецедентная антироссийская пропагандистская война привела к ожидаемым результатам: в нашем регионе позиции России ослабевают. Более этого, Левон ставит под сомнение ответ президента Российской Федерации Дмитрия Медведева на вопрос тележурналиста А.Кондрашова относительно позиции РФ к постсоветским странам, проз-

вучавший 31 августа 2008 года на встрече с журналистами телеканалов “Россия”, Общественного российского телевидения, “НТВ”. Так, в своем интервью президент Д. Медведев на вопрос журналиста: “… Каково, на Ваш взгляд, будущее мира, миропорядка и место нашей страны в нем? ”, - ответил: “Я буду при осуществлении внешней политики Российской Федерации основываться на пяти позициях… И, наконец, пятое. У России есть регионы, в которых находятся привилегированные интересы. В этих регионах расположены страны, с которыми нас традиционно связывают дружеские, добросердечные отношения, исторически особенные отношения. Мы будем очень внимательно работать в этих регионах и развивать такие дружественные отношения с этими государствами, с нашими близкими соседями. Вот из этого я буду исходить при осуществлении нашей внешней политики”. Отметим, что *в своих оценках внешнеполитического курса России ЛТП фактически опровергает высказанный президентом РФ Д. Медведевым принципиальной подход к соседним дружественным странам, я уже не говорю о странах - стратегических партнерах.* Выступая, якобы, с позиций пророссийского политического деятеля, он, по сути, втолковывает нашему обществу необходимость пересмотра своей, идущей из глубины веков, русской ориентации, разъясняя, что она отныне не оправданна. “Вся горечь действительности в том,- говорит ЛТП,- что как Запад не смог помешать России решить вопросы конфликтов в Абхазии и Южной Осетии, так и, по всей вероятности, Россия не сможет помешать Западу решить Карабахской вопрос”. Принижая роль России в урегулировании вопросов в нашем регионе и преувеличивая роль Запада, Левон не ограничивается этим, а изощряется в своем заискивании перед Западом: “В основе урегулирования, несомненно, будут фигурировать Мадридские предложения и принципы, доведенные до противоборствующих сторон от имени сопредседателей Минской группы ОБСЕ в декабре 2007 года, в которых сплетены в гармонии два принципа международного права - территориальной целостности и право наций на самоопределение”.

Иначе говоря, ЛТП умаляет роль России в возможном в недалеком будущем процессе решения Карабахского вопроса и параллельно этому восхваляет представляющие в Минской группе Запад страны, благодаря которым, наконец, в предлагаемый документ вошли два вышеупомянутых принципа. Но ведь именно обеспечение гармонии этих принципов всегда являлось сутью всех наших дипломатических усилий на переговорах по урегулированию конфликта, ее главной целью… В том числе и в годы правления ЛТП *вплоть до 1997 года, когда эта гармония была нарушена и на столе переговоров появился документ, в котором было почти полностью проигнорировано право наций на самоопределение. Документ, под которым выразил готовность подписаться ЛТП, объясняя это необходимостью “отрезвления” и выбора между “войной и миром”.* Чем все это кончилось, мы все помним. И вот десть лет спустя ЛТП признается, что в предлагаемом сегодня сторонам конфликта документе Запад (т.к. роль России, по ЛТП, ничтожна) обеспечил гар-

монию столь волнующего нас принципа о праве наций на самоопределение с принципом территориальной целостности. И после всего этого, противореча самому себе, в финале речи ЛТП заявляет: “Нет сомнений, что Запад не упустит столь удобную для себя возможность решения Карабахского вопроса, что ставит власти Армении перед серьезнейшими проблемами”.

Так или иначе, в мыслительных упражнениях господина Тер-Петросяна, как бы он ни пытался запутать слушателей и читателей, очевидна одна реальность: урегулирование вопроса Нагорного Карабаха никогда не удовлетворит одновременно обе противоборствующие стороны. Очевидно, что не оправдаются ожидания ни азербайджанской, ни армянской стороны. Именно с учетом этого обстоятельства ЛТП готовит почву для своих дальнейших шагов, *чтобы в перспективе спекулировать на справедливом людском недовольстве, которое, несомненно, будет. С целью выставить себя в выгодном свете в дальнейшем Левон будет ссылаться на объявленный 17 октября на митинге призыв - проявлять сдержанность и не препятствовать властям для решения вопроса Нагорного Карабаха. Это для внутреннего употребления.*

Еще более примечательны претензии ЛТП, адресованные внешней аудитории. В своей речи он неприкрыто подчеркивает растущую в нашем регионе роль Запада и ослабление влияния России, втолковывая Западу , что, являясь реалистичным политическим деятелем, *он вовсе не имеет намерений связывать будущее нашей страны со сдающей позиции в регионе, Россией.* Более того, он в будущем представит также счет своим западным покровителям. Несомненно, что предъявит требования, утверждая, что, он, даже сознавая неблагоприятные для армянской стороны предложения по урегулированию Карабахского конфликта, тем не менее, *не только отправил народ по домам (создавая тем самым возможности для подписания невыгодного для армян документа), но и наделил наших противников - азербайджанцев возможностью разыгрывать карту “дефицита легитимности” президента РА Сержа Саргсяна…*

Читатель, безусловно, вправе спросить: неужели Россия не сознает, что в лице ЛТП имеет дело с достойным наследником Нерсеса Византийского (известный полководец, интриган и дипломат времен Юстиниана I)?... Пусть не получится, уважаемые читатели, что я только и делаю, что критикую Левона, можно чуток и похвалить, особенно, учитывая его стремление привносить византийскую политику в наши безрадостные политические будни. Полагаю, что Россия, конечно, прекрасно сознает, с кем имеет дело, не поддаваясь заблуждению хотя бы в связи с последним “гениальным” самопризнанием, украсившим речь ЛТП: “Армения пыталась быть ни пророссийской, ни прозападной, она руководствовалась исключительно собственным и национальными интересами. В годы моего президентства такая позиция называлась “балансированием” или политикой равновесия, при Кочаряне – “комплементаризмом” или политикой взаимодополнения, разница между кото-

рыми чисто терминологическая". Вот так-то, дорогой читатель, как сказал бы великий мыслитель, Геворик из АОДа: "Доехали до Улуханлу…"

Л.Т.-П., который 10 лет подряд устами подчиненных ему политических деятелей и аодовских СМИ "развенчивал" проводимую тандемом Кочарян-Осканян "антиармянскую" внешнюю политику, теперь, по собственному признанию, солидаризуется с ней и ее авторами. А момент для этого "случайно" совпал с предстоящим официальным визитом в Армению президента РФ Д. Медведева. То есть, главе России как бы посылается мессидж о том, что Л.Т.-П., став президентом в случае спровоцированной силами извне смены власти (надо полагать по итогам карабахского переговорного процесса), готов продолжить столь положительно воспринимающую Россией внешнюю политику Р.Кочаряна. И это он представляет в качестве противовеса, якобы, свершившемуся факту – повороту С. Саргсяна в сторону Запада. Левон отмечает, что хотя президент В. Путин одним из первых поздравил С. Саргсяна с победой на выборах, полагая, что он продолжит внешнеполитический курс Р.Кочаряна, однако, ожидания российского президента не оправдались. Вместе с тем между строк дает понять, что для России нежелательно возвращение в большую политику Роберта Кочаряна, так как с 1 марта с. г. 7-8 "левоновских" СМИ неустанно внушают народу мысль о единственно виновном в десяти жертвах 1-го марта, а именно – Р. Кочаряне. Так что наши русские друзья, знайте, ч*то единственный защитник ваших интересов в Армении не кто иной, как он сам – Левон Тер-Петросян.* Чтобы не грешить против истины, отмечу, что за прошедшие 10 лет в одном вопросе Л.Т.-П. и Р. Кочарян действовали действительно солидарно: в шагах, если не изолирующих полностью, то уменьшающих поле политической деятельности тех, кто сознавал важность русско-армянских стратегических отношений и полноценной экономической интеграции Армении и России. Это так, между прочим, при необходимости мы обратимся к опасности подобной политики отдельно, вскрывая ее крайне нежелательные для страны последствия.

Можно было бы привести еще несколько "жемчужин" из полной противоречий и двойственности речи Л.Т.-П., но думается, приведенные факты позволяют сделать несколько важных выводов.

ПЕРВОЕ. В ФОРМИРУЮЩИХСЯ НА ЮЖНОМ КАВКАЗЕ НОВЫХ УСЛОВИЯХ, ведущих к значительным геополитическим переменам, крайне опасно "связывать" президента РА с каким-либо одним центром силы (особенно с Западом), тем более что мы стоим на пороге мирного урегулирования Карабахского противостояния. Этого делать не следует тем более в том случае, когда приоритеты внешней политики РА четко сформированы в "Концепции национальной безопасности Армении", которая по сей день властями республики не отменялась и где четко обозначены наши внешнеполитические приоритеты.

ВТОРОЕ. НЕ МЕШАЛО БЫ, ЧТОБЫ СЧИТАЮЩИЕ СЕБЯ ПРОЗОРЛИВЫМИ и стратегически мыслящими политиками наши деятели раз и навсегда уяснили прос-

тую истину: да, США, Евросоюз и Российская Федерация действительно заинтересованы в утверждении на Южном Кавказе стабильного мира. Другой вопрос, что побудительные причины у России и Запада диаметрально противоположны. Россия, полагаю, хорошо сознает, что ее увеличивающееся с каждым днем влияние на Кавказе в числе прочих факторов в немалой степени обусловлено благожелательным отношением государств армян и аланов (осетин). Что касается Осетии (Северной и Южной), то после пятидневной грузино-осетинской войны у России с Осетией более прочные, совместно пролитой кровью ставшие незыблемыми отношения. Так что для создания проблем с Арменией, во-первых, нет никаких оснований, более того, это абсолютно не в интересах ни Республики Армения, ни Российской Федерации. Думаю, россияне прекрасно осведомлены, куда сегодня смотрят власти Грузии, куда смотрит руководитель Азербайджана. Первые- на США и Евросоюз, второй, как волк глядит в лес, так и Баку- на Анкару.

ТРЕТЬЕ. ТУРКИ, РАЗВЕРНУВ В РЕГИОНЕ БЕСПРЕЦЕДЕНТНУЮ АКТИВНОСТЬ и дипломатически заигрывая с РФ, дают понять американцам о недопустимости поощрения или создания независимого курдского государства на севере Ирака. А в геополитическом смысле не вызывает сомнений та непреложная истина, что Турция продолжает оставаться наиболее верным союзником США.

ЧЕТВЕРТОЕ. США, В СВОЮ ОЧЕРЕДЬ, ЗАИНТЕРЕСОВАНЫ в своем дальнейшем укреплении в регионе (кроме присутствия в Грузии) и были бы не прочь иметь на первых порах ограниченный воинский контингент миротворцев в зоне армянско- азербайджанского противостояния после “благополучного” завершения переговорного процесса по Карабаху. Для них особо важно размещение таких сил вдоль иранской границы. Почему- думаю, все понимают.

ПЯТОЕ. ЕВРОСОЮЗ ТАКЖЕ ЗАИНТЕРЕСОВАН В СКОРЕЙШЕМ РЕШЕНИИ ВОПРОСА НАГОРНОГО КАРАБАХА, причем, увы, в предпочтительном для азербайджанской стороны варианте, чтобы не только обеспечить перспективу бесперебойного поступления годовых 50 млн тонн нефти по нефтепроводу Баку- Тбилиси-Джейхан, но и в большей степени для того, чтобы предоставить Азербайджану возможность активизировать свои действия по инициированию строительства газопровода “Nabucco”. Заметим, что годовая пропускная способность этого газопровода составит 32 млрд кубометров газа, что позволит европейским странам смягчить свою зависимость от поставок российского газа. Нелишне отметить, что по этому проекту, имеющему протяженность в 3,5 тысячи километров, газопровод пройдет по дну Каспийского моря (минуя Россию), потом через Азербайджан, Грузию, Турцию газ из Центральной Азии поступит до Греции, Болгарии, Румынии, а оттуда- в Западную Европу. Отметим также, что стоимость проекта – около 7,5 млрд евро, а акционерами его строительства будут австрийские, германские, венгерские, болгарские, румынские и турецкие организации. Это обстоятельство само по себе проясняет позицию Евросоюза по вопросу урегулирования нагорно- карабахского конфликта.

ШЕСТОЕ. ВСЯ ВЗДОРНОСТЬ И АБСУРДНОСТЬ ИНИЦИИРОВАННОГО “ЛЕВОНОВЦАМИ” ПОЛИТИЧЕСКОГО БАЛАГАНА была бы ярче представлена и вскрыта, если бы входящие во властную коалицию силы, используя имеющиеся в силу своего положения широкие возможности, разъяснили бы общественности суть выступления С. Саргсяна на 63-ей Генеральной Ассамблее ООН. *Речь, в которой исчерпывающе изложены устраивающие нас подходы к решению карабахской проблемы.* И далее, тем же силам лучше было бы не созывать через день пустопорожние пресс- конференции, выдвигая на первый план несерьезных, специализирующихся на приготовлении долмы, далеких от политики женщин, которые “достали” общество своим неуместным морализаторством, а уж тем более деятелей, занимающихся саморекламой, которые также очень и очень далеко стоят от государственного управления. Я уже не говорю о разнообразных спекуляциях вокруг трагедии 1-го марта, когда на многочисленных пресс- конференциях, казалось бы, ставилась задача подчеркнуть свою исключительную “беспристрастность” и “честность”. При этом многочисленные наши деятели из правящей коалиции сколь постоянно, столь же искусно не вдавались в объяснение возможных трагических последствий этих событий, вплоть до развязывания гражданской войны, что могло бы стать итогом развязанных Л.Т.-П. перманентных митингов. Более того, в прессе появились публикации, в которых наиболее выигрышные моменты выступления президента РА на Генеральной Ассамблее ООН были расценены как “неудачные” или “особенно неудачные”. Думаю, правильнее было бы, чтобы представители власти разъясняли бы механизмы и подходы для противостояния вызовам времени, говорили бы о сплочении армянства во всем мире, необходимость чего, кстати, четко обозначена в выступлении С.Саркисяна на встрече с политической и экономической элитой армянской диаспоры в США.

СЕДЬМОЕ. В СЛОЖИВШЕЙСЯ ПОИСТИНЕ СЛОЖНОЙ СИТУАЦИИ пришел момент осознать, что мы сегодня располагаем текстом выступления Сержа Саркисяна в ООН, в котором даны ответы на волнующие нас вопросы, в особенности относительно приемлемых для Армении принципов урегулирования вопроса Карабаха. Таким образом, интересы нашего государства выдвигают только одну единственную задачу, а именно: *сплотиться, чтобы независимо от нашего личного отношения к действующим властям и президенту страны воплотить эти идеи в жизнь. Таково веление времени.*

И, наконец, никогда не следует забывать о том, что будет глубоким заблуждением со стороны тех, кто вознамерится игнорировать фактор военного участия нашего соседа и друга- Исламской Республики Иран в формирующейся ситуации в регионе Южного Кавказа.

Являясь председателем партии “Национальное Единение”, в эти судьбоносные для нашей страны дни, я вместе с моими коллегами не буду распространяться о многочисленных несправедливостях, которым мы подвергались, начиная с пер-

вого же месяца основания партии- февраля 1997г. Сейчас не время ворошить прошлое, а время единения всех патриотических сил республики.

Вместо послесловия. На днях я прочитал в российской прессе аналитическую статью русского патриота - государственника, признанного политического стратега, имеющего армянские корни. Среди многих интересных суждений приведу одно, в точности соответствующее случаю с Левоном: "Глупость- ближайшая соседка провокации. В молодости я считал, что глупость- следствие повреждения мозга, не более. Со временем убедился, что все обстоит куда более печально. Я научился уважать глупость, считаясь с ней, как с серьезным врагом". Выступление Левона Тер- Петросяна 17 октября умещается в рамках именно этой логики: являясь по своему содержанию совершенной глупостью, оно чрезвычайно опасно для нашего общества, для нашей государственности.

И еще. Честно говоря, внимательно прочитав Левона (как он советовал), я испытал, тем не менее, удивление, которое хотел бы выразить в форме вопроса к нему: "Господин Тер- Петросян! Отчего вы такой русофоб?"

"Голос Армении", 21.X.2008; "Новое Время", 21.X.2008; "Свободомыслие", 21.X.2008.

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆ ԱՐՄԵՆ ԴՈՒԼՅԱՆԻ «25 ՐՈՊԵ» ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱՇԱՐԻ ՀՅՈՒՐԸ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆՆ Է

(21.10.2008 թ.)

ԱՐՄԵՆ ԴՈՒԼՅԱՆ – Բարև Ձեզ, հարգելի հեռուստադիտողներ, սկսում ենք մեր հերթական հաղորդումը՝ «25 րոպե», և այսօր ուզում ենք խոսել մեր տարածաշրջանում վերջին ամիսներին կատարված աննախադեպ դեպքերի մասին: Միանգամից ներկայացնեմ՝ մեր հաղորդման այսօրվա հյուրը «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանն է: Շատ շնորհակալություն, պարոն Գեղամյան, որ եկաք: Սկսենք վրաց-ռուսական պատերազմից: Իմ կարծիքով, սա տարածաշրջանում ամենավատ բանն էր, որ տեղի է ունեցել վերջին 10-15 տարվա ընթացքում, իհարկե, Ղարաբաղյան պատերազմից հետո: Հայաստանը հայտնվեց մի անսովոր վիճակում, երբ իր բարեկամ երկու ընկերները սկսեցին կռվել, և Հայաստանն էլ իր բաժինը ստացավ, փաստորեն, ճանապարհները փակվեցին: Համաձա՞յն եք նման գնահատականի հետ և ի՞նչ եղավ դրանից հետո, դրա հետևանքները:

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ – Նախ, շնորհակալություն, որ հրավիրեցիք: Ձեր հարցադրումները միանգամայն տեղին են, այո, շատ ծանր իրադարձություններ տեղի ունեցան Հարավային Կովկասում, մասնավորապես, հարավօսեթական-վրացական պատերազմը, որին հարկադրված էր միջամտել նաև Ռուսաստանի Դաշնությունը: Պատմական կարճ ակնարկ անեմ. 1989 թ., երբ Ամերիկայի Միացյալ Նահանգներում նախագահում էր Ջորջ Բուշ Ավագը, նա դիմեց ամերիկյան ժողովրդին՝ ասելով, որ Պանամայում սպանվել է ամերիկացի զինծառայող, մյուս զինծառայողը վիրավորվել է, երրորդ զինծառայողը դաժան ծեծի է ենթարկվել և նրա կնոջ նկատմամբ սեքսուալ ոտնձգություններ են իրականացրել: Բավական է՝ ասել էր Բուշը: Եվ դրանից հետո սկսվեց ամերիկյան ներխուժումը Պանամա, և ամերիկացի ժողովուրդը մի մարդու պես պաշտպանեց պրեզիդենտ Բուշ Ավագի ռազմական գործողություններ սկսելու որոշումը: Հիմա, եթե այդ ֆոնի վրա վրացական դեպքերն ենք բնութագրում, կարելի է ասել, որ, այո, բոլորիս համար շատ ցավալի զարգացումներ եղան, բայց դա է իրողությունը: Կոնֆլիկտը, թերևս, անխուսափելի էր, եթե հաշվի առնենք այն գործընթացները, որի ականատեսը եղանք: Ի՞նչ էր ստացվում: Ստացվում էր այն, որ երբ Վրաստանն անդամակցում էր ՆԱՏՕ-ին, Ռուսաստանը, ասես թե, ընդհանրապես դուրս էր մղվում Հարավային Կովկասից: Իսկ դա խախտում էր ՆԱՏՕ-ի և Ռուսաստանի միջև եղած այն բո-

լոր պայմանավորվածությունները, որ ժամանակին ձեռք էին բերվել Գորբաչովի և Հելմուտ Կոլի միջև: Երբ Բեռլինը երկու մասի բաժանող պատը քանդվեց, փլուզվեց, պարտավորվածություն կար, որ ՆԱՏՕ-ն չի ընդարձակվելու դեպի Արևելք: Իսկ երբ ակնհայտ դարձավ, որ Վրաստանը կարող է անդամակցել Հյուսիսատլանտյան դաշինքին, ահա այս պայմաններում Ռուսաստանը, օգտվելով ՄԱԿ-ի, եթե չեմ սխալվում 51-րդ բանաձևից, պաշտպանեց Աբխազիայում և Հարավային Օսեթիայում գտնվող իր քաղաքացիներին, ինչպես Բուշ Ավագը Պանամայում պաշտպանեց իր քաղաքացիների անվտանգությունը: Դա, ինչ խոսք, Հայաստանի համար շատ ծանր հետևանքներ ունեցավ: Մասնավորապես, մեր հանրապետության վարչապետը վերջերս ասաց, որ էկոնոմիկան շուրջ 600-700 մլն դոլարի վնաս կրեց: Հիմա Հայաստանի պարագայում ի՞նչ էր նշանակում այս կոնֆլիկտը: Սա նշանակում էր՝ թող հույսները կտրեն բոլոր այն երկրները, որ մտածում են, թե կարող են ռազմական ճանապարհով լուծել քաղաքական նման լուրջ հարցեր ու խնդիրներ:

Ա. Դ. – Դա մեզ համար դրական էր:

Ա. Գ. – Անշուշտ, դրական էր: Կատարվածը վերջին մեկ տարվա ընթացքում երրորդ նախադեպը դարձավ, երբ ազգերի ինքնորոշման սկզբունքին տրվեց առաջնություն: Ես նկատի ունեմ Կոսովոն, նկատի ունեմ Հարավային Օսեթիան և Աբխազիան:

Ա. Դ. – Դա էլ է մեզ համար դրական:

Ա. Գ. – Դա էլ է մեզ համար դրական, առավել ևս, որ տարիներ առաջ Եթովպիայում ինքնորոշվել էին Էրիտրեյայի ժողովուրդը, Ինդոնեզիայում՝ Արևելյան Թիմորի: Անշուշտ, դա էլ դրական է: Այդ ֆոնի վրա ՄԱԿ-ի 63-րդ Գլխավոր Ասամբլեայում շատ հետաքրքիր ելույթով հանդես եկավ պրեզիդենտ Սարգսյանը…

Ա. Դ. – Տեսեք, Դուք պատերազմից հետո դրական երկու բան անվանեցիք, ես բացասականը նշեմ: Մենք առանց այն էլ հարևանություն ենք անում մի երկրի հետ՝ Իրանի հետ, որի նկատմամբ երկու բևեռների՝ Ռուսաստանի և ԱՄՆ-ի, այսպես ասենք, Արևմուտքի տեսակետները լրիվ հակասական են, տրամագծորեն հակառակ, այսինքն՝ Ռուսաստանը միջուկային ատոմակայան է կառուցում Իրանում, Բուշը հորդորում է Իրանին, որ եթե չդադարեցնեն ուրանի հարստացումը, ապա ամերիկացիները կդիմեն ցանկացած միջոցի, ենթադրվում է նաև ռազմական: Հիմա, ունենք նման հարևան, և երկրորդ՝ Վրաստանի հարևանությունը, որտեղ էլի երկու տերություններ բախվում են: Եթե հաշվի առնենք, որ մյուս երկու հարևանների հետ մեր հարաբերությունները բոլորը գիտեն, թե ինչպիսին են, չի՞ ստացվում, որ մենք այս հարցում հայտնվեցինք շատ վատ դրության մեջ:

Ա. Գ. – Մենք պետք է դիվանագիտական հմտություն դրսևորենք ու հեռատեսություն ունենանք, որ եղած բարդություններն օգտագործենք ի նպաստ մեր երկրի: Մասնավորապես, նույն Իրանի առկայությունը, թերևս, գալիս է համոզելու, որ Իրանի Իսլամական Հանրապետության շահերից է բխում, որ

Հայաստանի Հանրապետությունը Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը լուծի այն եղանակով, որպեսզի բացառվի միջազգային խաղաղարար ուժերի մուտքը մեր տարածաշրջան: Զարգացում, որն արևմտյան երկրները փորձում են անպայմանորեն կյանքի կոչել, ինչին, բնական է, դեմ է Ռուսաստանի Դաշնությունը: Այդ նույն արևմտյան երկրների դիրքորոշումները, երբեմն, ավա՜ղ, հայանպաստ չեն, և այդ պայմաններում Իրանը, կամա թե ակամա, դառնում է Հայաստանի Հանրապետության դաշնակիցը: Դա դրակա՞ն երևույթ է, անշուշտ: Մեր հարևաններին մենք չենք ընտրել, այդպես է ի վերուստ ստացվել և դա նաև դրական դեր է ունեցել: Հիշենք, հայ-ադրբեջանական հակամարտության տարիներին, երբ ազատագրված տարածքներից հազարավոր ադրբեջանցիներ անցան Իրանի սահմանը, այդ երկրի պետական այրերը դրսևորեցին հեռատեսություն և, ինչ խոսք, առաջին հերթին ելնելով իրենց երկրի շահերից կատարեցին հայանպաստ որոշումներ, այն է՝ չարտոնեցին, որ Իրանի տարածքով նրանք անցնեն Նախիջևան: Մենք դա պետք է գիտակցենք: Մեր մյուս բարեկամը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները, յուրահատուկ շահեր ունի Հարավային Կովկասի տարածաշրջանում և դրանք, ավա՜ղ, միշտ չէ, որ համընկնում են Հայաստանի ազգային շահերի հետ:

Ա. Դ. – Շատ լավ, բայց քանի որ խոսեցինք ինքնորոշման և Սերժ Սարգսյանի ելույթի մասին, ասեմ, բոլորս գիտենք, որ այդ ելույթից հետո դրա կապակցությամբ Հայաստանում հնչեց նաև քննադատություն, մասնավորապես, հենց այդ ինքնորոշման հետ կապված հարցերում: Դուք ի՞նչ կարծիքի եք այդ մասին:

Ա. Գ. – Տեսեք, թե կյանքը ի՞նչ հետաքրքիր է դասավորվում: Սերժ Սարգսյանի մոլեռանդ պաշտպանները հիմա նրան քննադատում են, իսկ մոլեռանդ քննադատողը հիմա պաշտպանելու է արդարությունը, իսկ պաշտպանելով արդարությունը, կստացվի, որ ես պաշտպանում եմ Նախագահ Սարգսյանի գիծը:

Ա. Դ. – Մեր երկրում հաճախ են նման բաներ տեղի ունենում:

Ա. Գ. – Այո: ՄԱԿ-ի 63-րդ Գլխավոր Ասամբլեայում պարոն Ս. Սարգսյանը, մասնավորապես, ասաց հետևյալը. ինքնորոշման իրավունքի իրականացումը շատ հաճախ համազոր է դառնում «ինքնասպանության»: Եվ դա քննադատվեց նրա հակառակորդների կողմից, նրանց կարծիքով, այդ միտքը ելույթի ամենաանհաջող դրվագն էր: Մինչդեռ դա ամենահաջող գնահատականներից էր և ասեմ, թե ինչու: Դեռ 1970 թ. ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայում ընդունվել է դեկլարացիա «Մարդու իրավունքների, հիմունքների և սկզբունքների մասին», որտեղ պետությունների փոխբարեկամական հարաբերությունների հիմքում առանձնահատուկ դրված են երկու՝ ազգերի ինքնորոշման և տարածքային ամբողջականության սկզբունքները: Փաստորեն, Նախագահ Սերժ Սարգսյանն ասաց՝ սիրելի ՄԱԿ, ՄԱԿ-ի անդամ երկրներ, ձեր աչքի առաջ ոտնահարվում է այդ հիմնարար դեկլարացիայի մայր սկզբունքներից մեկը: Դա, ըստ էության, ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի հասցեին ուղղված խիստ քննադատություն էր առ այն, որ այն, ինչ ամրագրվել է դեկլարացիայի մեջ և այսօր, երբ մենք մեր իսկ ընդունած որոշումը փորձում ենք

կյանքի կոչել, ապա այն դառնում է հավասարազոր ինքնասպանության: Շատ համարձակ հարցադրում էր: Ինչ վերաբերում է մյուս հարցերին այնտեղ ուրիշ երանգներ էլ կային, դրանք էլ թողնենք պարոն Սարգսյանի աշխատակազմի պարզաբանումներին:

Ա. Դ. – Այո, բայց քանի որ Ղարաբաղի հարցին անցանք, ասենք, որ եղավ մի քանի հայտարարություն: Առաջինը՝ Մեթյու Բրայզայի կողմից, հետո՝ Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի կողմից, Աբդուլլաի Գյուլն էլ տարածքների մասին ինչ-որ հայտարարություն արեց և այլն: Հայաստանի իշխանությունների լռությունը, այսինքն՝ դրանք անպատասխան թողնելը, հասարակությունում ձևավորեցին մտահոգություն, որ կատարվում է ինչ-որ մի բան, որի մասին իշխանությունները մեզ չեն ուզում ասել, բայց դրսից դա ինչ-որ չափով գաղտնազերծվում է: Եվ դրան ավելացրած Լևոն Տեր-Պետրոսյանի վերջին հավաքում հնչած այդ 10 կետերը, որոնց շրջանակում էլ, ենթադրաբար, պետք է լուծվի Ղարաբաղի հարցը:

Ա. Գ. – Դուք սկսեցիք Մեթյու Բրայզայի հայտնի հայտարարությունից, ըստ որի առաջնությունը պետք է տալ տարածքային ամբողջականության սկզբունքին, և որից մերոնք խրտնել էին: Ընդհակառակը, պետք է ողջունել Մեթյու Բրայզայի այդ միտքը, այն պարզ պատճառով, որ Ադրբեջանի տարածքային ամբողջականության պահպանման պայմաններում Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը Ադրբեջանի կողմից ենթարկվեց սպանդի, իսկ Մարդու իրավունքների հռչակագրի ամենակարևոր՝ մայր սկզբունքը, կյանքի իրավունքի ապահովման սկզբունքն է, և մնացած բոլոր սկզբունքները պետք է ենթարկեցնել այդ հիմնարար սկզբունքին: Ադրբեջանի տարածքային ամբողջականության պայմաններում Լեռնային Ղարաբաղի հայությունը էթնիկ զտումների ենթարկվեց, սպանդի ենթարկվեց, կնշանակի, հիմա արդեն տարածքային ամբողջականության և ազգերի ինքնորոշման իրավունքի այդ երկու սկզբունքները պետք է ենթարկեցնել Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության մայր իրավունքի երաշխավորմանը, այն է՝ ապրելու իրավունքի: Եվ դա պարտադրում է մեզ, որ առաջին պլան մղենք ինքնորոշման սկզբունքը, որը երաշխավորում է մարդկանց ապրելու իրավունքը, որովհետև մենք տարածքային ամբողջականության դառը, ողբերագական պտուղներն արդեն ճաշակել ենք:

Ինչ վերաբերում է Սերգեյ Վիկտորովիչ Լավրովի հայտնի հայտարարությանը՝ տրված «Ռոսիյսկայա գազետա»-ին (եթե չեմ սխալվում, հոկտեմբերի 7-ի կամ 6-ի համարում էր), ապա ես չզլացա և ուսումնասիրեցի նրա վերջին 3 ամիսների բոլոր ելույթները, մասնավորապես, կարդացի սեպտեմբերի 11-ին լեհական շատ ծանրակշիռ «Գազետա Վիբոռչա»-ին տված ինտերվյուն: Տեսեք, ի՞նչ է ասում այնտեղ Սերգեյ Վիկտորովիչը: Տարածքային ամբողջականության և ինքնորոշման սկզբունքները միջազգային իրավունքում ունեն հավասարազոր նշանակություն և դիալեկտիկորեն փոխշաղկապված են, նշում է նա: Դա ուղղակիորեն հաստատում է 1970 թ. միջազգային իրավունքի մասին ՄԱԿ-ի ընդունած դեկլարացիայի հիմնական դրույթները, ինչը ես հիշատակեցի, և որը հետագայում ամրագրվեց 1975 թ. Հելսինկյան պայմա-

նագրի եզրափակիչ փաստաթղթում: Հարավային Օսեթիան և Աբխազիան փաստացի եղել են անկախ պետություններ՝ համաձայն ԽՍՀՄ-ի 1990 թ. ապրիլի 3-ի օրենքի: Այդ օրենքի համաձայն՝ նաև Վրաստանն է անկախ ճանաչվել. սրանք Լավրովի խոսքերն են: Եվ հետո խոսվում է հետևյալի մասին. «Վրաստանի ղեկավարները բազմիցս ռազմական ճանապարհով փորձել են ենթարկեցնել Հարավային Օսեթիան, ամեն կերպ դիսկրիմինացիայի ենթարկելով նրա բնակիչներին, ընդհուպ մինչև զանգվածային սպանություններ, այսինքն՝ խախտել են մարդկանց մայր իրավունքը՝ ապրելու իրավունքը»: Փաստորեն, ամեն ինչ ճիշտ և ճիշտ նույնն է, ինչի ականատեսն ենք եղել Լեռնային Ղարաբաղում: Այնպես որ, մենք պետք է զինվենք համբերությամբ և երբ պահը գա այդ ժամանակ ասենք՝ հարգելի պարոն Բրայզա, Դուք շատ ճիշտ եք և Դուք, լինելով օրինապաշտ ամերիկացի, պետք է առաջնորդվեք միջազգային իրավունքի սկզբունքներով, որոնք տվյալ հարցի վերաբերյալ ամրագրված են 1970 թ. ՄԱԿ-ի հայտնի դեկլարացիայում: Իսկ Սերգեյ Վիկտորովիչ Լավրովին էլ խնդրենք, որ հավատարիմ մնա իր իսկ պնդումներին, որոնք նա արել է սեպտեմբերի 11-ին …

Ա. Դ. – Եվ նա Ձեզ կպատասխանի՝ ես դրա հետ նաև ասել եմ, որ Ղարաբաղի հարցը որևէ կապ չունի Հարավային Օսեթիայի և Աբխազիայի հետ:

Ա. Գ. – Հասկանալի է: Ձակերտները բացեմ. Ռուսաստանի Դաշնությունը շատ լավ գիտակցում է, որ Վրաստանի այսօրվա իշխանությունները նայում են դեպի ԱՄՆ և դեպի Եվրամիություն: Նա շատ լավ գիտակցում է, որ ադրբեջանական իշխանությունները, ինչպես գայլն է նայում անտառին, այնպես էլ նրանք են նայում Անկարային: Եվ այս պարագայում, ուզում ենք, թե չենք ուզում, Հայաստանի Հանրապետությունը իրապես դառնում է Ռուսաստանի Դաշնության ամենապահանջված ռազմաքաղաքական դաշնակիցը: Իսկ Լավրովը, բնականաբար, պետք է ասի այն, ինչ ասել է, որ վաղը, մյուս օրը արևմտյան մամուլը հակառուսական, թշնամական տեղեկատվական պատերազմ չծավալի՝ մեղադրելով Ռուսաստանի Դաշնությանը կայսերապաշտական նկրտումների մեջ, նրան վերագրի նոր բան, որ հիմա էլ ուզում է Լեռնային Ղարաբաղը ենթարկի անեքսիայի: Եվ, զարգացնելով այդ թեզը, շարունակի՝ ասելով, որ Ղարաբաղը տալով Հայաստանին՝ Ռուսաստանն ինքն է շարունակելու իշխել այդ տարածաշրջանում: Այնպես որ, ամեն ինչ գնում է բնականոն հունով, և ստեղծված իրավիճակում բարձր եմ գնահատում Հայաստանի իշխանությունների լռությունն այս հարցում, որովհետև, սովորաբար, խուճապահար, օրումեջ ասուլիսներ են անում իրենց վատ, թույլ զգացող իշխանությունները: Այս բոլոր երևույթների մեջ արդարացի կլիներ նաև դրականը տեսնել, առավել ևս, որ այդ դրականը, այո, կա:

Ա. Դ. – Լավ, պարոն Գեղամյան, քանի որ Անկարայի անունը տվեցիք, խոսենք նաև այդ մասին: էլի դա աննախադեպ բան էր, համենայնդեպս ես չեմ հիշում, որ որևէ հարցի շուրջ երկրորդ և երրորդ նախագահների միջև տարաձայնություն լինի: Այս դեպքում Ռոբերտ Քոչարյանն ակնհայտ ասաց, որ նա Հայաստան չէր հրավիրի Աբդուլլահ Գյուլին: Հի-

մա, տեսեք, հասարակության շրջանում երկու այսպիսի հարցադրում կա՝ ի՞նչու համար կանչեցին, մյուս կողմն էլ խորհում է՝ իսկ մի՞գուցե դա ինչ-որ հեռանկարային պրոցեսի սկիզբ է:

Ա. Գ. – Հասկանալի է: Ցավոք, մեր լրագողները, քավ լիցի, խոսքս ձեզ չի վերաբերում, ես ձեզ շատ հարգալից եմ վերաբերվում:

Ա. Դ. – Դե, խնդրում եմ, մյուս լրագրողներին էլ չքննադատեք:

Ա. Գ. – Չեմ քննադատում, ընդհակառակը, ես նրանց ուշադրությունը ուզում եմ հրավիրել հետևյալ հանգամանքի վրա. չէ՞ որ Վարդան Մինասիչը և Ռոբերտ Սեդրակիչը քանիցս ասել են, որ իրենք արտաքին ոլորտում փոխլրացման, կոմպլեմենտարիզմի քաղաքականություն են վարում: Այսինքն՝ մեկը շոյում է Ամերիկայի սիրտը, մյուսը՝ գուրգուրում Ռուսաստանին, երկուսն էլ ջերմությամբ են վերաբերվում Եվրամիությանը: Հիմա, պարոն Սերժ Սարգսյանը, տվյալ պարագայում, շոյեց Ամերիկայի սիրտը, իսկ Ռոբերտ Քոչարյանն էլ իր հայտարարությամբ՝ Ռուսաստանի սիրտը:

Ա. Դ. – Այսինքն՝ նույն կոմպլեմենտար...

Ա. Գ. – Այսինքն՝ նույն կոմպլեմենտար քաղաքականությունն է, ի՞նչ հակասությունների մասին կարող է խոսք լինել: Կա Հայաստանի ազգային պետական շահ, եթե Հայաստանի ազգային պետական շահը պահանջի, որ ես այսօր ամենասուր, խիստ քննադատության ենթարկեմ գործող Նախագահին, ես դա կանեմ, և Նախագահը դրան ըմբռնումով կմոտենա: Նույնը...

Ա. Դ. – Չէ, խոսքը դրա մասին չի, խոսքը հայ-թուրքական մերձեցման մասին է: Այ, դա ելնո՞ւմ է հայ ժողովրդի շահերից:

Ա. Գ. – Ասեմ, թե խնդիրն ինչում է. Թուրքիան ԱՄՆ-ին ակնարկեց, որ եթե Հյուսիսային Իրաքում շարունակեք ձեր սիրաշահելու քաղաքականությունը և դրանով հրահրեք Հյուսիսային Իրաքի քուրդ բնակչությանն անջատողական քայլերի՝ սեպարատիզմի, քրդական անկախ պետության ստեղծմանը (ինչը, անտարակույս, կհանգեցնի Հարավային Թուրքիայի և Հյուսիսային Իրաքի քրդերի միաձուլմանը, կբերի նաև սիրիաբնակ, իրանաբնակ քրդերի միավորմանը և կնպաստի քրդական երկրորդ միգա պետության կազմավորմանը), ապա, իմացեք, որ մենք արդեն իսկ պարտավորված չենք լինի այս տարածաշրջանում իրականացնել ձեր աշխարհաքաղաքական շահերը: Եվ մեր տարածաշրջանում Թուրքիայի կողմից վարվող քաղաքականությանն անհրաժեշտ է նայել հենց այդ տեսանկյունից: Հարավային Կովկասում մեծ քաղաքական խաղ է ընթանում, այլ բան մի փնտրեք, որովհետև ուրիշ բան պարզապես չկա: Եվ հաջորդ հարցը. ռուս-թուրքական հարաբերություններն այսօր բնութագրվում են տարեկան կտրվածքով 25 մլրդ դոլար ապրանքաշրջանառությամբ, և 2,5 մլն ռուս զբոսաշրջիկներ ամեն տարի իրենց մարմինները թուլացնում են Թուրքիայում, Անթալիայում: Էլ չշարունակեմ:

ԱՍՈՂԻՆ ԼՍՈՂ ԷՐ ՊԵՏՔ... ՀԻՄԱ , ԳՈՆԵ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԱԲԵԼ ԱՂԱՆԲԵԳՅԱՆԻՆ ԼՍԵՔ

Հայկական դրամը կտրուկ գերա-
գնահատված է և դա ողբերգություն է:
Աբել Աղանբեգյան

2006 թ. հոկտեմբերի 16-ին «հակակրիմինալ շարժման» կողմից կազմակերպված հասարակական լսումների ժամանակ զեկուցումով հանդես եկավ «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանը: Պրն Գեղամյանի ելույթում համոզիչ բացահայտված էր իշխանությունների վարած տնտեսական ու դրամավարկային արատավոր քաղաքականության վտանգավորությունը: Ելույթը տպագրվել էր «Իրավունք» թերթի 31.X–2.XI.2006 թ. համարում:

Օրերս, հոկտեմբերի 23-ին, Երևանում «Հայաստանի և Ռուսաստանի էկոնոմիկաները. այսօր և վաղը» կլոր սեղանի շրջանակում ելույթ էր ունեցել աշխարհահռչակ գիտնական, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Աբել Աղանբեգյանը:

Ուշագրավ է, որ Հայաստանի Հանրապետությունում վարվող դրամավարկային քաղաքականությանը մեծ գիտնականի կողմից տրված գնահատականները աներկբա հաստատում են դեռ երկու տարի առաջ Արտաշես Գեղամյանի կողմից տրված գնահատականների ճշմարտացիությունը:

Ձեզ ենք ներկայացնում (մասնակի կրճատումներով) Արտաշես Գեղամյանի 2006 թ. հոկտեմբերի 16-ի ելույթը:

Հարգելի գործընկերներ, այսօր քննարկվող հարցը, թերևս, այն եզակիներից է, որը, ասես թե, լուսապատճենում է երկրի ողջ տնտեսությունը: Ստորև փորձեմ ներկայացնել խնդրո առարկա հարցի էությունը:

Եվ, այսպես, ի՞նչ են ասում մեր իշխանավորները, երբ ճգնում են հիմնավորել դոլարի արժեզրկումը և դրամի արժևորումը: Նախևառաջ պնդում են, որ դա պայմանավորված է տնտեսության դինամիկ զարգացմամբ ու օտարերկրյա մեծածավալ ներդրումներով: Մի խոսքով, ուզում են ժողովրդին համոզել, որ Հայաստանի տնտեսությունը չափազանց առողջ է և դրա պտուղն էլ այն է, որ ազգային դրամն արժևորվում է: Մինչդեռ պաշտոնական վիճակագրությունը վկայում է ճիշտ հակառակը՝ տնտեսության լուրջ հիվանդ լինելու մասին: Տնտեսությունը բնութագրող ցուցանիշները, որ այժմ բերելու եմ, վերցված են Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական

ծառայության ու Կենտրոնական բանկի պաշտոնագրքերից:

Իշխանությունները, մասնավորապես, նշում են, որ դոլարի արժեզրկումն ու դրամի արժևորումը ՀՆԱ-ի աննախադեպ աճի հետևանք են: Ձեր ուշադրությանն եմ ներկայացնում հետևյալ թվերը. 2001 թ. մեկ դոլարի փոխարժեքը պաշտոնապես հայտարարված է եղել 555 դրամ: 2001 թ. ՀՆԱ-ի աճի տեմպերը նախորդ տարվա նկատմամբ եղել է 109,6%: 2002 թ. մեկ դոլարի փոխարժեքն աճել և դարձել է 573,35 դրամ, ՀՆԱ-ի աճի տեմպն էլ երկանիշ թվով է բնութագրվել. այն նախորդ տարվա նկատմամբ եղել է 112,9%: Շարունակեմ. 2003 թ. դոլարը կրկին արժևորվել է, մեկ դոլարն արժեցել է 578,77 դրամ և նույնպես արձանագրվել է ՀՆԱ-ի երկանիշ աճ, այն է՝ 113,9%: Այսինքն՝ պնդումը, թե դրամի արժևորումը պայմանավորված է տնտեսական աճով, վերը բերածս 3 տարվա ցուցանիշները փաստում են, որ դա ոչ այլ ինչ է, քան մեր իշխանությունների կողմից հրապարակ իջեցված ապատեղեկատվություն, բլեֆ: Իսկ երբ 2004 թ. արձանագրվում է արդեն ՀՆԱ-ի ավելի ցածր աճի տեմպ (եթե 2003 թ. 113,9% էր, ապա 2004 թ.՝ 110,1%), դոլարն արժեզրկվում է՝ դառնալով 533,40 դրամ: Նույն միտումն արձանագրվել է 2005 թ. և 2006 թ. ութ ամիսների ընթացքում: Իսկ ի՞նչպես կարելի է բացատրել այս ամենը. չէ՞ որ ՀՆԱ-ն ավելի դինամիկ էր աճում այն տարիներին, երբ աճ էր գրանցվել դոլարի փոխարժեքում: Պարզապես, 2003 թ. նախագահական և խորհրդարանական ընտրությունների ժամանակ իշխող տղերքն ընտրողներին կաշառք տալու համար ահագին ծախս էին քաշել և կրած «նյութական վնասը» վերականգնելու համար գտել էին եզակի ճանապարհը, այն է՝ ժողովրդից հետ վերցնել իրենց տված գումարները: Ինչո՞ւ եմ ժողովրդից ասում, որովհետև բնակչության զգալի մասն օգտվում է դրսից ստացվող դոլարային օգնությունից, այսպես կոչված, տրանսֆերտներից, ինչն էլ կողոպուտի ենթարկեցին: Անգամ իսկ հաշվի չառան այն, որ եթե դրսից ստացվող դոլարային օգնությունը չլինի, ապա բոլորս գիտենք, որ ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը սովի կմատնվի: Եվ դա արեցին շատ ու շատ հնարամտորեն: Մտահոգիչն այն է, որ հիշատակածս տարիների ընթացքում՝ 2001-2006 թթ., մենք ականատեսն ենք եղել ինչպես Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների, այնպես էլ առևտրային բացասական հաշվեկշռի աճի աննախադեպ տեմպերի, որը պետք է հանգեցներ դոլարի արժևորմանը, սակայն տեղի ունեցավ հակառակը: Պարզեցնեմ միտքս. այդ ընթացքում դրսից մեր երկիր ավելի շատ ապրանք է բերվել, քան հանրապետությունից հանվել է, և առևտրային հաշվեկշիռը, այսինքն՝ հիշատակածս ժամանակահատվածում ներմուծման ու արտահանման տարբերությունը, եղել է սոսկ և սոսկ բացասական, այն էլ՝ իր մեջ ներառելով աճի տեմպեր: Հիմա ձեզ հայտնեմ այդ թվերը: Եվ, այսպես, 2002 թ. ներմուծման աճի տեմպը 2001 թ. նկատմամբ կազմել է 113,3%, 2003 թ. 2002-ի նկատմամբ՝ 128%, 2004 թ. 2003-ի նկատմամբ՝ 106,4%, 2005 թ., երբ ՀՀ-ում արդեն շեշտակի արժեզրկվեց դոլարը, 130,8%, իսկ 2006 թ. հունվար-օգոստոսին, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, ներմուծման աճի տեմպը կազմել է 120%, բացասական հաշվեկշռի աճի տեմպն էլ՝ 150,4%: Այստեղ վտան-

գավորն այն է, որ արտահանման նվազում է տեղի ունենում, որի արդյունքում արդեն մեր՝ տեղական, հայրենական արտադրողը դժվարանում է իր արտադրանքը դրսում իրացնել: Դրա խոսուն վկայությունն այն է, ամենաթարմ թիվը բերեմ, որ նախորդ տարվա համեմատ 2006 թ. հունվար-օգոստոսին գրանցվել է արտահանման ծավալի կրճատում, որ կազմել է 96,4%: Այսինքն՝ արտահանման ծավալը սեղմվել է:

Հարց է առաջանում՝ ինչո՞ւ է երկրի մակրոտնտեսությունում ստեղծվել նման պարադոքսալ իրավիճակ և ո՞րն է դրա պատճառը: Հիշենք, որ 2005 թ. առևտրային հաշվեկշիռը եղել է բացասական՝ կազմելով 817,6 մլն դոլար: Վերստին բերեմ մի շարք ուշագրավ փաստեր: Այսպես, վիճակագրությունը վկայում է, որ դատական ատյանների կողմից ընդունված վճիռների չկատարումը հասնում է ծայրաստիճան վտանգավոր չափերի: Մասնավորապես այն վճիռների, որոնք տնտեսվարող սուբյեկտներին պարտադրել են պետության հասանելիք գումարները մուծել բյուջեի և Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի հաշվին: Մինչդեռ այդ գումարների զգալի մասն այդպես էլ չի վերականգնվել: Օրինակ, 2003 թ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեին, Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին, ֆիզիկական և իրավաբանական անձանց օգտին կատարողական բոլոր վարույթներով բռնագանձման ենթակա գումարներից չի վերականգնվել 47 մլրդ 705 մլն դրամ: Այլ կերպ ասած՝ ճարպիկ տղերքը ֆիկտիվ հիմնարկներ են ստեղծում, մեծածավալ գործարքներ կատարում, այդ գործարքներն անելուց հետո, արհեստականորեն այդ հիմնարկները փակում են, իբր, սնանկանալու պատճառով, և արդյունքում պետությունը, զորօրինակ, կրկնեմ, միայն 2003 թ. դատարանով որոշված 47 մլրդ 705 մլն դրամ այդպես էլ չի կարողացել վերականգնել: Այս թիվն արձանագրված է Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2003 թ. հունվար-դեկտեմբերին» պաշտոնագրքի էջ 170-171-ում: 2004 թ. նույնաբովանդակ ցուցանիշը կազմել է 31 մլրդ 534 մլն դրամ (տե՛ս 2004 թ. պաշտոնագրքի էջ 172-ը): Իսկ 2005 թ. չի վերականգնվել 25 մլրդ 803 մլն դրամ (տե՛ս համապատասխան պաշտոնագրքի էջ 165-ը): Ինչպես տեսնում եք, թալանի կիզակետը 2003 թ. էր՝ վերը հիշատակված պատճառով: Կրկնում եմ, տղերքը փող էին ծախսել և այն շտապ պետք էր ոչ միայն վերականգնել, այլև մի բան էլ ավել գռփել: Ասեմ նաև, որ պաշտոնագրքերի էջերը միտումնավոր ընթերցեցի, որովհետև իշխանական լրատվամիջոցները վաղը առանց անհարմար զգալու կհայտարարեն՝ բերվեցին թվեր, որոնք հայտնի չէ, թե որ աղբյուրից էին վերցված: Եվ, այսպես, վերջին երեք տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության բյուջեն, ինչպես նաև Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամը չեն ստացել 105 մլրդ դրամ գումար, այլ կերպ ասած՝ դրանք գրպանվել են: Անտարակույս, այդ գումարները գրպանվել են ոչ թե ընդդիմադիր քաղաքական գործիչների, այլ յուրացվել և թալանվել են իշխանության հովանու ներքո գործող օլիգարխների ու քրեածին անձանց կողմից: Սա ակնհայտ է բոլորիս համար, որովհետև խոսքը չի գնում անգամ իսկ 250-300 մլն դրամից հարկեր չմուծելու մասին,

ինչի համար մեծ խաբարով Ազգային ժողովի արտահերթ նիստ գումարեցին, պատրանք ստեղծելով, թե, իբր, կրիմինալի դեմ պայքար են ծավալում: Խոսքը, հարգելի գործընկերներ, գնում է 105 մլրդ դրամ յուրացված, թալանված գումարների մասին, ինչն արձանագրվել էր Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության պաշտոնագրքերում: Ասեմ ավելին. պաշտոնական վիճակագրության համաձայն 2005 թ., ըստ կազմակերպությունների ամփոփ ֆինանսական տվյալների, Հայաստանի Հանրապետությունում շինարարության ոլորտի միայն 65,5%-ն է, որ աշխատել է եկամուտով, կրկնում եմ, 65,5%-ը, իսկ 34,5%-ն էլ աշխատել է վնասով կամ առանց շահույթի: Ուղղակի վնասով աշխատող շինարարական կազմակերպությունների կշիռը կազմել է 12,9%, վերջիններիս կրած վնասն էլ 587,7 մլն դրամ: Եվ այս ցուցանիշներն իշխանություններն ընդունել են «հալած յուղի» տեղ: Ստացվում է, որ շինարարության ոլորտում աշխատող կազմակերպությունների ավելի քան մեկ երրորդը, չունենալով շահույթ կամ կրելով վնասներ, այնուամենայնիվ, 2005 թ. 2004 թ. նկատմամբ ընդհանուր առմամբ ապահովել է 134,2% շինարարության աճի տեմպ: Համենայն դեպս, վիճակագրական ծառայությունը սա է փաստում (տե՛ս 2005 թ. պաշտոնագրքի էջ 36-ը): Իսկ շինարարության ճնշող ծավալները, ինչպես փաստում է նույն վիճակագրությունը, 81,16%-ը, հայտնի է, որ իրականացվում է Երևան քաղաքում, այն էլ՝ էլիտար շենքերի կառուցումով: Այստեղ, ես տեսնում եմ, որ շինարարության հետ առնչվող մարդիկ կան, որ կհաստատեն հետևյալ թվերը. մեկ քառակուսի մետր բնակելի մակերեսն ամենաճոխացված թվերով այսօրվա շուկայական գներով շինարարի վրա նստում է լավագույն դեպքում 250-300 դոլար: Ամենաորակյալ շինանյութի օգտագործման պարագայում անգամ 300 դոլարը չի գերազանցում: Մինչդեռ, ինչպես գիտեք, մեկ քառակուսի մետրի համար վաճառքի գները նվազագույնը 750-ից 1500 դոլար են կազմում: Այլ կերպ ասած՝ մեկ քառակուսի բնակմակերեսի վաճառքից երաշխավորված է նվազագույնը 500 դոլար մաքուր շահույթ: Նշենք, որ, մասնավորապես, Երևան քաղաքում 2005 թ. շահագործման է հանձնվել 250923 մ^2 բնակմակերես: Արդյունքում՝ էլիտար շենքերի շինարարություն իրականացնող իշխանամերձ ձեռներեցները հարկային մարմիններից թաքցրել են նվազագույնը 124 մլն 461 հազար դոլար կամ 57 մլրդ 335 մլն դրամ շահույթ: Ահա սա է փաստում պաշտոնական վիճակագրությունը:

Հաջորդ իրողությունը: Երբ սահմանում էին էլեկտրաէներգիայի սակագները, հաշվարկային միավոր էր վերցվել 1 դոլարը 552,4 դրամ փոխարժեքով: Մինչ օրս էլ սակագնի հաշվարկման հիմքում այս փոխարժեքն է: Դոլար-դրամ վայրիվերումների արդյունքում ունեցանք հետևյալ պատկերը. 2006 թ., մասնավորապես, սեպտեմբերի դրությամբ, մեկ կիլովատ-ժամ էլեկտրաէներգիան, եթե 1999 թ. հաշվարկված էր ու կազմում էր 4,52 ցենտ, ապա հիմա կազմում է 6,58 ցենտ (սեպտեմբերին դոլարի արժեքը կազմել է 380 դրամ): Եվ դոլարի արհեստական արժեզրկման հետևանքով միլիարդավոր դրամներ դուրս են մնում պաշտոնական հաշվառումից: Որպեսզի ձեզ թվերով չհոգնեցնեմ, միայն բերեմ առավել կարևորները. 2004 թ. դոլարի արժեզրկման արդյուն-

քում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն ստացել է 6 մլն 377 հազ. դոլար կամ 3 մլրդ 401 մլն դրամի հավելյալ շահույթ: 2005 թ. այդ նույն ցուցանիշը կազմել է 17 մլրդ 978 մլն դրամ, իսկ 2006 թ. ութ ամիսների ընթացքում՝ 10 մլրդ 253 մլն դրամ: Եվ, այսպես, փաստորեն, 2 տարի 8 ամիսների ընթացքում հավելյալ շահույթը, որ դուրս է մնացել հարկային դաշտից և չի հարկվել, կազմել է 31 մլրդ 632 մլն դրամ: Ես միտումնավոր եմ ասում՝ դուրս են մնացել, որովհետև դա են վկայում այդ ՓԲԸ-ի հարկային մուտքերը: Սակայն համոզված կարելի է ասել, որ այդ գումարները պարզապես յուրացվել են, որովհետև պաշտոնական վիճակագրական և ոչ մի վերլուծության մեջ ստացված հավելյալ շահույթի ծավալները չկան: Այսինքն՝ 31 մլրդ 632 մլն դրամ էլ տղերքն այստեղ կերան: Ձավեշտն այն է, որն արդեն իսկ ավանդույթ է դառնում, երբ հարկերից խուսափելու կամ թալան անելու դեպքերն արդեն ակնհայտ են լինում, ազգային ջոջերը դիմում են հայտնի հնարքին, ռուսերեն ասած՝ “опускают концы в воду”. Պարզապես նրանք վաճառում են հարկերից խուսափող այդ ձեռնարկությունները, ինչի ականատեսը եղանք «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի դեպքում ևս: Նրանք «Միդլենդ ռեսուրսիս» կոչված շինծու կազմակերպությանը պատկանող «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն վաճառեցին ռուսական հայտնի «ՌԱՕ ԵԷՍ» հոլդինգի ստորաբաժանումներից մեկին: Վաճառքից հետո արդեն իսկ ուժի մեջ է մտնում “не поймaн, не вор” դիպուկ կարգախոսը:

Իշխանությունների, մեղմ ասած, թողտվության պայմաններում, հերթական մեծ կողոպուտ հիշեցնող փաստն ի հայտ եկավ արդեն «Արմենտելի» պարագայում: Վարչակազմը դոլար-դրամ փոխարժեքի հետ առնչվող հարցերում իր խարդավանքներում էնքան է խճճվել, որ գործը հասցրել է զավեշտի: Այսպես, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2005 թ. հունվար-դեկտեմբերին» պաշտոնագրքում (էջ 49) նշված է, որ հեռախոսային խոսակցություններից ստացված հասույթը կազմել է ոչ ավել, ոչ պակաս, քան 42 մլրդ 739,7 մլն դրամ: Եվ կողքն էլ գրված է՝ համադրելի գներով 2004 թ. նույն ժամանակահատվածի նկատմամբ գրանցված է 116,4% աճ: Նշենք, որ 2004 թ. հեռախոսային խոսակցություններից ստացված հասույթը կազմել է 45 մլրդ 461,3 մլն դրամ (տե՛ս 2004 թ. պաշտոնագիրք, էջ 56): Ստացվում է, որ 42 մլրդ 739,7 մլն դրամը, համաձայն պաշտոնական վիճակագրության, կազմում է 45 մլրդ 461,3 մլն դրամի 116,4%-ը: Այս զարմանահրաշ թվաբանության հետևում թաքնված է, մեղմ ասած, հարկերից խուսափելու միտում, եթե չասենք՝ կողոպուտ: Պարզեմ միտքս. 2004 թ. հեռախոսային խոսակցություններից գանձված 45 մլրդ 461,3 մլն դրամ հասույթը 116,4% աճի տեմպի ապահովման պարագայում պետք է գրանցեր 2005 թ. ստացված 52 մլրդ 916,9 մլն դրամի հասույթ, մինչդեռ վիճակագրական պաշտոնագրքում արձանագրված է 42 մլրդ 739,7 մլն դրամ: Ըստ էության, հաշվառումից դուրս է մնացել ավելի քան 10 մլրդ դրամ (52 մլրդ 916,9 մլն – 42 մլրդ 739,7 մլն): Այլ կերպ ասած՝ այդքան գումար կամ գրպանվել է, կամ չի հարկվել: Պաշտոնական տեղեկագրքում զետեղված թվեր են սրանք: Տղերքը խառնվել են ու մոռացել, որ 2005 թ. դոլարի փոխարժեքը 2004 թ. համեմատ արժեզրկվել է

16,4%-ով և եթե հեռախոսային խոսակցություններից ստացված հասույթի աճի տեմպերը բնութագրելիս լինեինք դոլարային արտահայտությամբ, ապա, իրոք, կգրանցվեր 116,4% աճի տեմպ: Այն աստիճանի են խառնվել, որ դոլարային արտահայտությամբ աճի տեմպը բռնել ու դրել են դրամով, երբ արձանագրված է նախորդ տարվա համեմատ փաստացի ավելի ցածր ցուցանիշ: Կատարված մեքենայությունների մեջ դրականը, թերևս, այն է, որ հետն էլ այս խարդավանքն ի հայտ են բերել: Եվ այստեղ, երբ համադրելի գներով ես վերլուծություն անում, ապա, իրոք, համոզվում ես, որ «Արմենտելում» 10 մլրդ 35 մլն դրամ առնվազն շրջանցել է հարկային ոլորտը, եթե չասենք՝ թալանվել է: Ձեռագիրը նույնն է: «Արմենտելն» էլ են վաճառում, արդեն իսկ տեղավորվելով այս դեպքը բնութագրելու համար սազական՝ “ищи ветра в поле” մեկ այլ կարգախոսում: Վաճառքից հետո էլ կասեն՝ «Արմենտելը» հարկային մարմիններին տարեկան հաշվետվություններ է ներկայացրել, պետական ատյաններն էլ ընդունել են դրանք, ոչ ոք այլևս մեղադրել չի կարող որևէ մեկին:

Անօրինականությունների, թալանի ցանկը կարելի է շարունակել, բայց, կարծում եմ, հիշատակածս փաստերը բավական են պնդելու, որ Հայաստանի Հանրապետության տնտեսության զգալի ոլորտը գործում է ստվերում: Եվ այդ ստվերում գործող «հերոսները» արդեն այն աստիճանի են լկտիացել, որ, տնտեսության զգալի մասը ստվերում գործելու պարագան նկատել չտալով, զբաղված են աչքակապությամբ՝ գլուխ գովելով, թե տնտեսությունն աճ է ապրում: Մինչդեռ մենք ականատեսն ենք երկրի մակրոէկոնոմիկայի լրջագույն հիվանդության: Այնուամենայնիվ, ո՞րն է հանելուկը, ինչպե՞ս է ստացվում, որ տնտեսության այս պայմաններում հանկարծ դրամն արժևորվում է, դոլարն էլ անկում է ապրում: Այսօր, խորհրդարանական լսումների ժամանակ Կենտրոնական բանկի խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանին դիմեցի հարցով, թե վճարային հաշվեկշիռն անցած տարիների ընթացքում ի՞նչ թվերով են բնութագրվում: Եվ, այսպես, համաձայն Կենտրոնական բանկի պաշտոնական տվյալների, վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշիվը բնութագրվել է հետևյալ ցուցանիշներով [պարզաբանեմ. ընթացիկ հաշիվ ասելով՝ նկատի ունեն երկիր մուտք գործող վճարների (ապրանքների) և երկրից դուրս իրականացվող վճարների հարաբերակցությունը որոշակի ժամանակահատվածում]: Կենտրոնական բանկը փաստում է, որ 2002 թ. վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշիվը եղել է բացասական, ունեցել է ճեղքվածք 148 մլն դոլարի չափով, 2003 թ.՝ 190 մլն դոլարի չափով, 2004 թ.՝ 161 մլն դոլարի չափով, 2005-ին՝ 104 մլն դոլար, 2006 թ. առաջին կիսամյակում՝ 187 մլն դոլարի չափով բացասական հաշվեկշիռ: Այսինքն, վերջին հաշվով, վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի ճեղքվածքի չափով երկրից դոլար ավելի է տարվել, քան ներմուծվել է: Եվ այս պարագայում արտարժույթի շուկայում պետք է հակառակ պրոցես ընթանար. եթե դոլարը երկրից դուրս է տարվում, ապա ֆինանսական շուկայում դոլարի պակասուրդ է զգացվում և վերջինիս փոխարժեքը, բնականաբար, պետք է բարձրանար: Իսկ մեզանում կատարվում է հակառակը: Բա այս հանելուկը, ո՞րն է: Հանելուկը շատ պարզ է. ազա-

տական շուկայական հարաբերություններ որդեգրած երկրներում տնտեսության բնականոն և նորմալ աշխատանքի համար մոնետիզացիայի գործակիցը նվազագույնը պետք է լինի 30-ից 40%, իսկ զարգացած այնպիսի երկրներում, ինչպիսիք են, մասնավորապես, Ֆրանսիան, Ճապոնիան՝ այն գերազանցում է 50%-ը: Ի՞նչ է նշանակում մոնետիզացիայի գործակից. դա շրջանառության մեջ առկա փողի զանգվածի տոկոսային հարաբերակցությունն է ՀՆԱ-ի նկատմամբ: Հիշատակածս անցած տարիներին Հայաստանի Հանրապետությունում այդ թիվը պաշտոնական տեղեկատվության համաձայն տատանվել ու կազմել է 15-18%: Մինչդեռ մակրոտնտեսության բնականոն գործունեության համար մոնետիզացիայի գործակիցը, ինչպես ասացի, պետք է կազմի նվազագույնը 30-40%: Բայց մեր երկրի տնտեսության մեջ այդ ցուցանիշը, կրկնեմ, կազմել է 15-18%, դա էլ այն դեպքում, երբ հաշվի չի առնվել ահռելի չափերի հասնող ստվերային տնտեսությունը: Իսկ վերը բերածս թվերը և, ինչու չէ, Համաշխարհային բանկի համապատասխան վերլուծությունները վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունում տնտեսության 40%-ը գործում է ստվերում: Հանգամանք, որը և ոչ մի հակառակ փաստարկով պետական որևէ մարմնի կողմից մինչ օրս չի հերքվել: Այսպիսով, եթե մենք ստվերում գործող տնտեսության 40%-ն էլ գումարելի ենք դարձնում ՀՆԱ-ին, ապա ստացվում է, որ մոնետիզացիայի գործակիցը կազմում է ոչ թե 15-18%, այլ իրականում՝ 10-12%: Իսկ ինչի՞ է դա հանգեցնում. մեր մակրոէկոնոմիկայում արհեստականորեն ստեղծում են դրամական բազայի պակասուրդ, որը կաթվածահար է անում տնտեսության բնականոն աշխատանքը: Սա հետևանք է այն բանի, որ դրամի բազան 4 անգամ պահանջվածից պակաս է: Իսկ մենք Ձեզ հետ գիտենք, որ երբ ապրանքի առաջարկը շատ ավելի քիչ է, քան պահանջարկը, ապա, բնականաբար, տեղի է ունենում մեծ պահանջարկ ունեցող ապրանքի գնի աճ: Տվյալ դեպքում ապրանքի դերում հանդես է գալիս ազգային դրամը: Եվ, ահա, սա է, որ արհեստականորեն արժևորում է դրամը: Եվ դա տեղի է ունենում պայմանավորված չլինելով այդ աճն ապահովող տնտեսական անհրաժեշտ համապատասխան ցուցանիշներով: Ավելի պարզ ասած՝ արհեստականորեն դրամի պակասուրդ են ստեղծում, իսկ դա էլ իր հերթին հանգեցնում է դրամի արժևորման: Ըստ որում, պահանջվածից 4 անգամ պակաս դրամի բազա է շրջանառվում երկրի էկոնոմիկայում: Եվ այն, որ Կենտրոնական բանկի խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանն ԱԺ լսումների ժամանակ հայտարարեց, թե, իբր, մեծածավալ ներդրումներ, մեծածավալ ինվեստիցիաներ են արվում երկրի տնտեսության մեջ, նույնպես հերքվեցին հենց իր կողմից՝ ՀՀ վճարային հաշվեկշռում բերված պաշտոնական թվերով: Պրն Տ. Սարգսյանը խոսում էր Հայաստանում իրականացվող միլիարդավոր դոլարների հասնող ներդրումների մասին, մինչդեռ Կենտրոնական բանկի տրամադրած ՀՀ վճարային հաշվեկշռի դինամիկան բնութագրող ցուցանիշները վկայում են միանգամայն այլ միտումների մասին: Այսպես, 2002 թ. օտարերկրյա ներդրումներն ուղղակի կազմել են 110,7 մլն դոլար, 2003 թ.՝ 125, 2004 թ.՝ 216, 2005 թ.՝ 251 և 2006-ի առաջին կիսամյակում՝ 107 մլն դոլար: Այսինքն՝ բերված թվերը վերստին հերքում են

Տ. Սարգսյանի պնդումները, որ դրամի արժևորումը պայմանավորված է եղել նաև Հայաստանում կատարվող միլիարդավոր դոլարների հասնող ներդրումներով: Կրկնեմ, որ էկոնոմիկայում արհեստականորեն պահանջվածից 4 անգամ պակաս դրամ կա շրջանառության մեջ, իսկ դոլարային կտրվածքով դա նվազագույնը 400 մլն դոլարին համարժեք պակաս դրամ է: Ինքնին հասկանալի է, որ տարեկան կտրվածքով հազիվ 200 մլն դոլարի հասնող ընդհանուր վճարային հաշվեկշիռը, ներառյալ ուղղակի օտարերկրյա ներդրումները, դրամի պակասուրդի նման չափերի պայմաններում դրա արժևորման համար դրական ազդեցություն, այն էլ այդքան շոշափելի, չպետք է ունենային: Այսօր արդեն որոշ պաշտոնյաներ փորձում են միջազգայացնել այս խնդիրը: Արդեն իսկ կան հրապարակումներ, որոնց հեղինակները դրամի նման արժևորումը բացատրելիս գյուտ են անում, ասելով, որ նման երևույթ ժամանակին արձանագրվել էր նաև զարգացած այնպիսի երկրների տնտեսությունների մեջ, ինչպիսիք են, մասնավորապես, Հոլանդիան, Մեծ Բրիտանիան, Նորվեգիան: Այդ երևույթն էլ տնտեսագետները որակել էին «Հոլանդական հիվանդություն» տերմինով: Նման տեսակետ հայտնողների հաշվարկը շատ պարզ է: Նրանք կարծում են, որ գործ ունեն այնպիսի մարդկանց հետ, ովքեր որ լսեն «Հոլանդական հիվանդության» մասին, իսկույն նրանց չոքերը կթուլանան, էլ հարցի մեջ չեն խորանա: Իսկ ի՞նչ է իրականում, այսպես կոչված, «Հոլանդական հիվանդությունը» իրենից ներկայացնում: Անցյալ դարի 50-ական թվականների վերջին — 60-ականների սկզբին Հյուսիսային ծովում հայտնաբերվեցին բնական գազի վիթխարի պաշարներ: Դրանց շահագործումից Հոլանդիայի տնտեսության մեջ դոլարային մեծածավալ ներհոսք եղավ: Այդ պայմաններում հոլանդական գուլդենն արժևորվեց (այն ժամանակ, պարզ է, որ գուլդենը, քանզի դեռ եվրո չկար), որովհետև մեծ քանակությամբ դոլար էր երկիր մտնում: Դոլարային մեծածավալ հոսքը ամրապնդեց գուլդենը՝ արժևորելով այն դոլարի նկատմամբ: Արդյունքում, բացի հումքային ոլորտից, որն ապահովում էր Հոլանդիայից ապրանքների արտահանման շոշափելի ծավալը, դոլարային կտրվածքով բարձրացավ տնտեսության մնացած բոլոր ճյուղերի արտադրանքի ինքնարժեքը: Ինքնարժեքը բարձրացավ, արտահանվող ապրանքների մրցունակությունը համաչափորեն ընկավ, ինչն իր հերթին բերեց Հոլանդիայից արտահանվող ապրանքների ծավալների կրճատմանը: Այս երևույթն իր հերթին հանգեցրեց Հոլանդիայի տնտեսության ոչ հումքային ճյուղերի ստագնացիային: Ահա հենց այս երևույթն էլ տնտեսագետները անվանեցին որպես «Հոլանդական հիվանդություն»: Ժամանակին դրանով հիվանդացել են, ինչպես ասվեց, նաև Մեծ Բրիտանիայի, Նորվեգիայի էկոնոմիկաները: Նորվեգիայի դեպքում «հիվանդության» պատճառ էր դարձել Հյուսիսային ծովում հայտնաբերված նավթի պաշարները, որոնց արտահանումից ստացվող արտարժույթը գրանցել էր օրըստօրե աճող ծավալներ: «Հիվանդացել» էին նաև Ինդոնեզիայի ու Կոլումբիայի էկոնոմիկաները: Հիմա կասեն՝ Կոլումբիան ուր, Հոլանդիան ու Նորվեգիան ուր: Կոլումբիայի էկոնոմիկան ենթարկվել էր նմանատիպ «հիվանդության», սակայն այլ պատճառով: 70-ական թվականներին Բրազիլիայում, խիստ անբա-

րենպաստ եղանակի հետևանքով, ինչպես փաստում է վիճակագրությունը, սուրճի բերքատվության շեշտակի անկում գրանցվեց: Ճիշտ այդ ժամանակ Գվատեմալայում երկրաշարժ տեղի ունեցավ, ինչն իր հերթին բերեց սուրճ արտադրող այդ երկրից արտահանման ծավալների զգալի նվազեցմանը: Սուրճ արտահանող այս երկու հիմնական երկրներում գրանցված արտահանման աննախադեպ անկման հետևանքով Կոլումբիայից համաշխարհային շուկա ներկրված սուրճի գները գրանցեցին զգալի աճ: Կոլումբիան դոլարային կտրվածքով սկսեց ստանալ մեծ եկամուտներ, որի արդյունքում երկրի էկոնոմիկայի մնացած ճյուղերը ենթարկվեցին նույն ցնցումներին, ինչին 60-ականների սկզբին ենթարկվել էր Հոլանդիայի տնտեսությունը: Հարց է ծագում, իսկ ո՞րն է Հայաստանի էկոնոմիկայում և ֆինանսական շուկայում ստեղծված իրավիճակի տարբերությունը հիշատակված երկրների համեմատությամբ: Ի տարբերություն վերոհիշյալ երկրների, Հայաստանի Հանրապետությունում ապրանքների արտահանումը գնալով նվազում է, անգամ, ինչպես ես հիշատակեցի, 2005-ի հունվար-օգոստոսի համեմատությամբ 2006 թ. երկրից արտահանվող ապրանքների ծավալը կրճատվել ու կազմել է 96,4%: Ամփոփելով միտքս ասեմ, որ «հոլանդական հիվանդության» հիշատակումը Հայաստանի պարագայում ոչ այլ ինչ է, քան իշխանությունների կողմից միտումնավոր հրապարակ նետված տերմին, որով կփորձեն մոլորեցնել մեր հանրությանը: Ի դեպ, Ռուսաստանի Դաշնությունում արդեն իսկ տարիներ շարունակ գրանցվում է արտահանման ծավալների (նավթի և գազի) դինամիկ աճ, որն ուղեկցվում է արտարժույթի աննախադեպ մեծ հոսքով երկրի ֆինանսական շուկա, սակայն այնտեղ պետական այրերը շատ հեռատես են վարվել: Մասնավորապես, մի քանի թիվ բերեմ: Եթե 1999-2000 թթ. Ռուսաստանի ոսկու և արտարժույթի պահուստները կազմում էին ընդամենը 12 մլրդ դոլար, ապա այժմ դրանք հասել են 287 մլրդ դոլարի: Ահա սա հասկանալի է, երբ այս ամենի արդյունքում ռուսական ռուբլին ամրապնդվում է արտարժույթի համեմատ: Ասեմ ավելին, այնտեղ խելացի են մտածել և այդ ավելցուկ դոլարներով ստեղծել են, հիմնել են վերականգնողական-հավասարակշռող ֆոնդ, այսպես կոչված, “стабилизационный фонд”, ուր այդ տարադրամային կուտակումները գնում են: Այլ կերպ ասած՝ ֆինանսական շուկայում իրականացվում է արտարժույթի (դոլարի) ստերիլիզացիայի քաղաքականություն, որի նպատակն է ավելցուկ դոլարները դուրս բերել շրջանառությունից, որ կարգավորեն, չթույլատրեն ռուսական ռուբլու արժևորումը: Պետական այրերն այնտեղ գիտակցում են, որ ռուբլու արժևորումը կբերի ռուսաստանյան արտադրության ապրանքների մրցունակության շեշտակի անկման: Իսկ արտահանման նվազեցումը, ինչպես վերն ասվեց, բերում է տեղական արտադրության ծավալների կրճատման, որն էլ իր հերթին հանգեցնում է արտադրության ծավալների սեղմման, շատ դեպքերում՝ փակման, ինչի արդյունքում աճում է գործազրկությունը: Ահա թե ինչ է կատարվում նորմալ, բնականոն ճանապարհով իշխանություն ձևավորած երկրներում: Եվ այս բոլորը, երբ վերլուծում ես, ակամայից հարց ես տալիս՝ իսկ ո՞ւմ է ձեռնտու Հայաստանում դրամի արհեստական արժևորումը: Պատմության փորձությունը բռնած

հայտնի հարցադրում է սա: Ձեռնտու է՝ օլիգարխներին, ձեռնտու է ճիշտ այն մարդկանց, ովքեր մասնագիտացել են ապրանքներ ներմուծելու մեջ, իսկ մենք ձեզ հետ քաջատեղյակ ենք, որ արտաքին առևտրի ոլորտը ամբողջովին մոնոպոլիզացված է:

Եվ, այսպես, ի՞նչ են շահում ներմուծողները. շահում են այն, որ եթե 2005 թ., ինչպես հիշատակեցի, դոլարի արժեզրկումը եղել է 16,4%, ապա կնշանակի, որ արդեն սահմանի վրա արտասահմանից ապրանքներ ներկրողները, մասնավորապես հիշատակածս մոնոպոլ ճյուղերում, նվազագույնը 10% երաշխավորված հավելյալ եկամուտներ ունեն՝ միայն դոլար-դրամ խաղից: 2005 թ. Հայաստան է ներմուծվել 1 մլրդ 717 մլն դոլարի ապրանք: Ի սկզբանե, ներմուծողները սահմանում առանց որևէ ջանք գործադրելու նվազագույնը 171 մլն դոլար հավելյալ շահույթ արդեն իսկ իրենց գրպաններն են դրել: Կրկնում եմ, առանց որևէ ջանքի, զուտ այդ խաղի արդյունքում: Սրանից մի քանի օր առաջ թերթերից մեկում տպագրվեց Վահրամ Ներսիսյանցի (պրն Քոչարյանի խորհրդականներից է) հարցազրույցը, ուր նա ասում էր. «Կարծում եմ, մեր ներկրողները, ներմուծողները, քանի որ դոլարի արժեզրկման արդյունքում արտոնյալ պայմաններում են հայտնվել, իրենք խիղճ կունենան (ուրեմն Վահրամ Ներսիսյանցն ապավինում է ներմուծողների խղճին – *Ա.Գ.*) և ներմուծվող ապրանքների գները չեն թանկացնի, որովհետև արդեն իսկ սահմանում իրենք երաշխավորված շահույթ են ստանում»: Մինչդեռ բոլորս գիտենք, որ տեղի է ունեցել նաև ներկրվող ապրանքների գների շեշտակի աճ՝ հենց դոլարային կտրվածքով: Մասնավորապես, տավարի մսի, դիզելային վառելիքի, բենզինի, ծխախոտի, շաքարավազի: Այսպես, վերջինիս գները դոլարային կտրվածքով աճել են 44%-ով, դիզելային վառելիքինը՝ 12%-ով, բենզինինը՝ 14%-ով, ծխախոտինը՝ շուրջ 45-50%-ով: 2006 թ. առաջին կիսամյակում ներկրվել է 62 միլիոն 984 հազ. տուփ ծխախոտ: Ներկրողների եկամուտները, ծխախոտի գների աճի պայմաններում, պատկերացրեք, շուրջ 50%-ով ավելացել են: Ընդհանուր առմամբ, ներկրումից ստացված հավելյալ շահույթը կազմել է առնվազն 350-400 մլն դոլար: Ինքնին հասկանալի է, և դա է վկայում գանձված ուղղակի հարկերի դինամիկան, որ շատ դեպքերում մենք գործ ունենք չհարկվող եկամուտների փաստի հետ:

Եվ երբ այս բոլոր թվերը վերլուծում ես ու այդ թվերի հետևում տեսնում ես, թե բարձրագույն իշխանություններն ինչպիսի գնահատականներ են տալիս խնդրո առարկա երևույթներին, ապա մնում ես զարմացած, երբ ասում են, թե հակակրիմինալ շարժման փուչիկը պայթեց: Ոչ, պարոնայք իշխանավորներ, այստեղ ոչ թե հակակրիմինալի փուչիկը պայթեց, այլ մեկ ուրիշ փուչիկ պայթեց: Այս դեպքում մենք ականատես դարձանք, որ տնտեսական ոլորտը սպասարկողները պարոն Քոչարյանին ապատեղեկացնելով, փաստորեն, դնում են փուչիկի տեղ և նրան անհեթեթ տեղեկատվություն տալիս: Ես երբեք ու երբեք չէի ուզենա քննարկումը անձնական դաշտ տեղափոխել, սակայն ինձ զարմանք է պատճառում այն գործընթացը, որին ականատես դարձանք վերջերս: Ազգային ժողովի վերջին արտահերթ նիստում (պատգամավորին դատական հետապնդման ենթարկելու հարցի քննարկման ժամա-

նակ), երբ ելույթ ունեցա, դիմեցի երկրի Գլխավոր դատախազին՝ վերը բերված փաստերի մասին ուղղակիորեն բարձրաձայնելով, նշելով նաև դրանց սկզբնաղբյուրները: Եվ, ի՞նչ եք կարծում, դրան ի՞նչ հետևեց: Ինչպես միշտ եղել է, ելույթս չհեռարձակվեց, ենթատեքստից կտրված առանձին պնդումներ եթեր արձակվեցին, որից թյուր տպավորություն կարող էր ստեղծվել (իհարկե, միամիտ մարդկանց մոտ, ովքեր մեր իշխանությունների հնարքներին ծանոթ չեն), որ ընդդիմությունը, մասնավորապես, «Ազգային Միաբանությունը», իբր, փորձ է անում պաշտպանել հենց իրենց՝ իշխանությունների հենասյունը հանդիսացող անձին, որը թույլ է տվել ֆինանսական կոպիտ չարաշահումներ: Ահա այսպես են փորձում թյուրիմացության մեջ գցել մարդկանց: Մինչդեռ, եթե ապրեինք նորմալ, իրավական երկրում, երբ, պաշտոնագրքերից բերված թվերով, հիշատակելով էջերը, մատնանշում ես խոշորածավալ, առնվազն չհարկված շահույթների մասին (իսկ մենք գործ ունեինք, ինչպես հիշում եք, մի դեպքում չհարկված 105 մլրդ դրամ շահույթի, մեկ այլ դեպքում՝ 31 մլրդ դրամի հետ) փոխանակ անհապաղ միջոցներ ձեռնարկեն պետության շահը վերականգնելու ուղղությամբ, խոսում են ինչ-որ փուչիկների մասին: Գիտակցելով այս ամենը Ազգային ժողովի ամբիոնից հայտարարվեց, որ մենք չենք մասնակցելու իշխանությունների կազմակերպած հերթական ֆարսին: Ավելին, ասվեց, որ այդ ֆարսը կրկին ապացուցում է, որ վարչակազմը պարզապես պատրանք է ստեղծում, թե պայքարում է կրիմինալի դեմ, իսկ իրականում թոզ է փչում ժողովրդի աչքերին:

Կարելի էր նաև բազմաթիվ այլ փաստեր ու փաստարկներ բերել, բայց, կարծում եմ, հետևություն անելու ժամանակն է: Հետևությունն էլ այն է, որ Կենտրոնական բանկը ֆորմալ առումով իրականացնում է Սահմանադրությամբ իրեն վերապահված գործառույթներ, վարելով սղաճի զսպման քաղաքականություն, ինչն իրականում ոչ այլ ինչ է, քան հանրությանը մոլորեցնելու գործընթաց: Ավելին, մենք ականատեսն ենք, որ Հայաստանի Հանրապետության տնտեսությունում թաքնված սղաճը բնութագրվում է երկանիշ թվերով: Վարվող դրամավարկային քաղաքականության արդյունքում Կենտրոնական բանկը, ըստ էության, կամա թե ակամա, քողարկում է ստվերային տնտեսությունում շրջանառվող միլիարդավոր դրամների հասնող կողոպուտը: Այսինքն՝ մենք ձեզ հետ ականատեսն ենք (անմեղության կանխավարկածից ելնելով, թերևս, զգուշավոր արտահայտվեմ) նվազագույնը բացարձակ անիրազեկ իշխանությունների կառավարման արդյունքում պետությանը հասցվող խոշորածավալ նյութական վնասների փաստի: Իսկ եթե իրերն անվանելու լինենք իրենց իսկական անուններով, ապա հարկ է արձանագրել, որ գործ ունենք քրեածին անձանց հետ սերտաճած ղեկավարության հովանու ներքո երկրում իրականացվող ալան-թալանի հետ: Կամ էլ, մեղմ ասած, վկաներն ենք նրանց անգրագիտության, կամ էլ բանկային համակարգի գործառույթների ու առավել ևս տնտեսական քաղաքականության չիմացության: Սակայն բոլորիս է հայտնի, որ նրանք այդ ամենը լավ էլ գիտեն, որովհետև որտեղ իրենց շահն է, լավ էլ հասկանում են: **Այս ամենի հետևանքով Հայաստանի Հանրապետության տնտեսությունը հայտնվել է նախակոլապսային**

իրավիճակում, որը հղի է երկրի համար վտանգավոր պայթյունով: Արտավոր նման քաղաքականության պտուղները մենք կճաշակենք 2007-2008 թթ., երբ կարձանագրվի, որ մեր հայրենական արտադրողները հարկադրված են եղել սեղմել արտադրությունը, փակել դրանք, որովհետև դոլար-դրամի արհեստական նման փոխարժեքի պայմաններում անգամ իսկ մեր երկրում սպառում ունեցող տեղական արտադրանքը չի դիմանա ներկրվող նմանատիպ ապրանքների մրցակցությանը: Առավել ևս, երբ ակնհայտ է Հայաստանի ներքին շուկան գրավելու միտումը՝ ներմուծվող ապրանքները դեմպինգային (այսինքն՝ ինքնարժեքից պակաս) գներով ողողելու միջոցով: Արդյունքում մենք կունենանք երկիր, որը գոյատևում է միայն ու միայն դրսից ստացվող օգնության, տրանսֆերտների շնորհիվ, ինչը շատ վտանգավոր երևույթ է:

Ամփոփեմ խոսքս. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկան գտնվում է խորը ճգնաժամի մեջ, վարվող դրամավարկային քաղաքականությունը քողարկում է մակրոէկոնոմիկան ճարակած հիվանդության վտանգավորությունը: Ուստի, նախ, անհրաժեշտ է անհապաղ ստվերից հարկային դաշտ դուրս բերել հարյուրավոր միլիարդ դրամի հասնող չհարկվող հավելյալ շահույթները: Երկրորդ, անհրաժեշտ է տալ Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսության իրական վիճակի գնահատականը, որից ելնելով մշակել դրամավարկային այնպիսի քաղաքականություն, որի մեխը լինի տնտեսության առողջացումը, հայրենական արտադրողների համար բարենպաստ պայմանների ստեղծումը, արտահանման խթանումը: Միմիայն նման քաղաքականության իրականացումը կնպաստի երկրի էկոնոմիկայի համաչափ ու դինամիկ զարգացմանը, որն էլ իր հերթին կզսպի սղաճը: Հակառակ պայմաններում մենք վտանգում ենք մեր երկրի ու Հայոց պետականության ապագան:

Հ.Գ. Կարծում ենք, եթե ժամանակին ուշադրությամբ վերլուծեին Արտաշես Գեղամյանի այս հիմնավոր առաջարկություններն ու գնահատականները և ձեռնամուխ լինեին ստեղծված ծանր վիճակի շտկմանը, ապա այսօր Հայաստանի Հանրապետության տնտեսության և ֆինանսների վիճակը մեծ գիտնական Աբել Աղանբեգյանի կողմից չէր բնութագրվի իբրև աֆրիկյան Սահարայի պետություններին ներհատուկ:

«Իրավունք», 28-30.X.2008:

ՀԱՄՈՁԻՉ ՊԱՏԱՍԽԱՆ

ՀՀՇ-ԱԿԱՆ ԿԱՍԱՆԴՐԱՆԵՐԻ ԵՎ ԴԵԼՖՅԱՆ ՄԱՐԳԱՐԵՆԵՐԻ ՏԱՐԲԵՐ ՏԵՍԱԿԻ ՄՏԱՎԱՐԺԱՆՔՆԵՐԻՆ

Վերջին ամիսներին հայ հասարակությունը բազմիցս կարդացել է զանազան «գուշակություններ» Արցախի վաճառքի թեմայով, ցնորամիտ արտահայտություններ Ռուսաստանի՝ ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացից դուրս մղվելու մասին, Թուրքիայի՝ առաջիկայում ակնկալվող միջնորդական գերակա առաքելության վերաբերյալ և այլն, և այլն: Մտահոգիչ էին հնչում նաև կասկածները, որոնք հայտնում էին Հայաստանում հավատարմագրված բարձրաստիճան դիվանագիտական պաշտոնյաները (ընդ որում, որքան էլ տարօրինակ է՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների ներկայացուցիչները), թե կարգավորման այս ֆորմատը թերևս անարդյունավետ է... Մի խոսքով, հոռետեսության պակաս չկար:

Այս տարվա նոյեմբերի 2-ին Ռուսաստանի Դաշնության նախագահ Դմիտրի Մեդվեդևի նստավայրում՝ Մայենդորֆի պալատում, ստորագրվեց Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ Ադրբեջանի, Հայաստանի և Ռուսաստանի նախագահների Հռչակագիրը: Ծանոթանալով Հռչակագրի տեքստի հետ՝ կարելի է արձանագրել հետևյալ անհերքելի փաստը. հակամարտության տարածքում մարտական գործողությունների դադարեցումից հետո 14 տարվա ընթացքում առաջին անգամ փաստաթուղթ է ստորագրվել Հայաստանի և Ադրբեջանի նախագահների կողմից: Ուշադիր ընթերցելով Հռչակագրի յուրաքանչյուր կետը՝ ակամա հիշում ես դասականի հայտնի արտահայտությունը՝ հակիրճությունը տաղանդի քույրն է: Արդ՝ ինչո՞ւմ է ընդունված Հռչակագրի ներքին ուժը:

Առաջին: Ռուսաստանը՝ ի դեմս նախագահ Դ. Մեդվեդևի, ևս մեկ անգամ հաստատեց իր վճռականությունը՝ հասնել Հարավային Կովկասում ցանկացած կոնֆլիկտի լուծմանը բացառապես խաղաղ ճանապարհով, միջազգային իրավունքների սկզբունքի հիման վրա: Կարծում եմ, ընդունված Հռչակագրի հիմքում ընկած այդ հիմնարար սկզբունքը կսառեցնի ապշերոնյան ռազմատենչ գործիչների «ավյունը» և նրանք կդադարեն մի քանի անգամ մեծացնել իրենց ռազմական բյուջեն: Այդ սկզբունքը նաև իր էական շտկումները կմտցնի ղարաբաղյան կոնֆլիկտի կարգավորման գաղափարախոսական հենքի մեջ, որը հանգում էր ռազմատենչ ռիտորիկայի:

Երկրորդ: Միջազգային իրավունքի հիման վրա հակամարտության կարգավորումը, անշուշտ, ենթադրում է, որ գերակա նշանակությունը տրվելու է հիմնարար իրավունքի, որն է՝ մարդու կյանքի իրավունքը: Հիշեցնենք, որ կյանքի իրավունքը հիմնարար սկզբունք է՝ դրված 1970 թվականի ՄԱԿ-ի Միջազգային իրավունքների մասին հռչակագրի հիմքում, որն ամրապնդվել է նաև ԵԱՀԽ 1975 թվականի հելսինկյան եզրափակիչ ակտով: Այստեղ արժե հիշատակել, որ 1970-ի Հռչակագրում ընդգծվում է, որ պետությունը (մեր դեպքում՝ Ադրբեջանը) օժտված է տարածքային ամբողջականությամբ, եթե այն հարգում է այդ տարածքում ապրող ժողովուրդների իրավունքները և չի դիմում այդ իրավունքները խախտող գործողությունների: Իսկ Ադրբեջանի ղեկավարները բազմիցս փորձեր են ձեռնարկել ենթարկեցնել Լեռնային Ղարաբաղը, հայ բնակչությանը ենթարկում էին խտրականության բոլոր ձևերի, ընդհուպ մինչև զանգվածային սպանությունները թե՛ Ղարաբաղում և թե՛ Ադրբեջանում (Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի ջարդերը):

Երրորդ: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների մասնակցությունը Հռչակագրի ստորագրման արարողությանը հստակ վերջակետ դրեց տարբեր տեսակի կոնյունկտուրային շահարկումներին՝ Մինսկի խմբի մոտալուտ վախճանի վերաբերյալ: Այժմ պարզ է դարձել, որ նրա մահվան մասին շրջանառվող լուրերը խիստ չափազանցված են: Ռուսաստանի կողմից բարի կամքի դրսևորումը կարևոր էր և միաժամանակ՝ խորհրդանշական: Ռուսաստանը ոչ միայն նախաձեռնեց Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հանդիպումը, այլև եզրափակիչ փուլում Հռչակագրի ստորագրմանը մասնակից դարձրեց Ֆրանսիայի և ԱՄՆ-ի համանախագահներին՝ այդպիսով հաստատելով իր հավատարմությունը միջազգային հարաբերությունների նոր ճարտարապետության կերտմանը, որի սկզբունքային մոտեցումները ձևակերպվել էին ՌԴ նախագահի կողմից հոկտեմբերի 8-ին՝ Էվիանում կայացած Միջազգային քաղաքականությանը նվիրված համաժողովում: Մասնավորապես, Ղարաբաղի հարցով Հռչակագրի կատարումը հիմնված է միջազգային հարաբերություններում ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառման անթույլատրելիության, հավասար անվտանգության ապահովման երաշխիքների վրա: Հենց այդ մոտեցումն էր ներկայացված Էվիանում Դ. Ա. Մեդվեդևի կողմից: Հրավիրելով ֆրանսիացի և ամերիկացի համանախագահներին Մոսկվա՝ նախագահ Դ. Ա. Մեդվեդևը գործնականում հաստատեց իր հավատարմությունը Էվիանում հնչեցված մեկ այլ գաղափարին. «Ոչ մի պետություն, ոչ մի միջազգային կազմակերպություն չի կարող ունենալ բացառիկ իրավունքներ Եվրոպայում խաղաղության և կայունության պահպանման հարցում: Դա ամբողջությամբ վերաբերում է նաև Ռուսաստանին»:

Չորրորդ: Հռչակագրի ընդունումը, կարծում եմ, կհանդարտեցնի վերին ատյանի ճշմարտության հավակնություն ունեցող այն տնաբույծ քաղաքական գործիչներին, որոնք վերջին երկու ամիսների ընթացքում վախեցնում

էին մեր քաղաքացիներին այն «սարսափազդու պատմություններով», իբր, Թուրքիան անմիջականորեն ներգրավված է կոնֆլիկտի կարգավորման միջնորդական առաքելության մեջ՝ դրանից բխող անցանկալի բոլոր հետևանքներով՝ ընդհուպ մինչև ռազմական գործողությունների վերսկսում: ԵԱՀԿ Մինսկի խումբը, ինչպես հայտարարվել է Մայենդորֆում, շարունակում է մնալ գլխավոր լեգիտիմ միջնորդը բանակցային գործընթացում:

Հինգերորդ: Հայ դիվանագիտության համար Հռչակագրի հինգերորդ կետը (Վստահության ամրապնդմանն ուղղված միջոցների համար պայմանների ստեղծման խրախուսումը) գործունեության լայն դաշտ է բացում: Անշուշտ, վստահության միջոցների ամրապնդումը ենթադրում է նախ՝ ՀՀ-ի դեմ Ադրբեջանի կողմից սանձազերծած տեղեկատվական պատերազմի մեղմացում, երկրորդ՝ ինչպես Թուրքիայի, այնպես էլ Ադրբեջանի հետ Հայաստանի սահմանների ապաշրջափակում: Եվ պատահական չէ, որ ներկայացնելով Հռչակագիրը, Դ. Ա. Մեդվեդևը կարդաց. «Ադրբեջանական Հանրապետության, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության նախագահները հայտարարում են. կետ առաջին, որ նպաստելու են Հարավային Կովկասում իրավիճակի առողջացմանը և տարածաշրջանում կայունության ու անվտանգության մթնոլորտի ապահովմանը՝ Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտի քաղաքական կարգավորման ճանապարհով՝ միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների, ինչպես նաև այդ շրջանակներում ընդունված որոշումների և փաստաթղթերի հիման վրա, ինչը բարենպաստ պայմաններ կստեղծի տարածաշրջանում տնտեսական զարգացման և բազմակողմանի համագործակցության համար» («Վեստի», 2 նոյեմբերի 2008 թ.): Եվ հիմա, երբ Հռչակագիրը ստորագրված է, կարծում եմ, որ թե Եվրամիության երկրների, թե, բնականաբար, նույն Թուրքիայի և թե ԱՄՆ-ի համար (որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահի) լայն հնարավորություններ են ստեղծվում մանրակրկիտ մոնիտորինգ անցկացնելու՝ հետևելով, թե ինչպես են կոնֆլիկտի կողմերը կատարում այս պարտավորությունը:

Վեցերորդ: Հռչակագրի երկրորդ կետը (Քաղաքական կարգավորման հիմնական սկզբունքների հետագա մշակում) միանշանակորեն ցույց է տալիս, որ ղարաբաղյան կոնֆլիկտի կարգավորման՝ ՀՀՇ-ական մամուլում շրջանառվող երեք (ԱՄՆ-ի, Եվրամիության և Ռուսաստանի) տարբերակներ իրականում գոյություն չունեին, կար միայն բանակցային գործընթաց, որը մայենդորֆյան Հռչակագրից հետո դուրս բերեց բանակցող կողմերին համագործակցության նոր մակարդակի, ինչը ճանապարհ է բացում ԽՍՀՄ փլուզումից հետո մնացած աշխարհաքաղաքական բարդագույն խնդիրների վերջնական կարգավորման համար:

Իմաստավորելով «մայենդորֆյան ճեղքման» արդյունքները, ակամա հիշում եմ մեր երիտասարդության տարիների հրաշալի ֆիլմը՝ «Հավատացեք ինձ, մարդիկ»: Կիրիլ Յուրևիչ Լավրովի փայլուն խաղը կամ գուցե կրկ-

նակի չափանիշների և մեծ, նավթի մեջ տարրալուծված ստի մեջ պահպանված ցանկությունն է՝ հավատալ, որ 2008-ի նոյեմբերի 2-ին Մայենդորֆյան պալատում դրվել է Հարավային Կովկասի բազմաչարչար ժողովուրդների բարգավաճման հուսալի հիմքը:

Վերջաբանի փոխարեն: Այժմ, երբ Հռչակագիրն արդեն կյանքի ուղեգիր է ստացել, հիշվում են Ռուսաստանի, Ադրբեջանի և Հայաստանի նախագահների վերջին տարիների ելույթները: Ռուսաստանը, տարածաշրջանում զինադադարի հաստատման պահից ի վեր, հավատարիմ մնաց իր սկզբունքային դիրքորոշմանը, որը կրկին հաստատվեց նոյեմբերի 2-ին. այն է՝ Ռուսաստանի դիրքորոշումը ղարաբաղյան կոնֆլիկտի հարցում կայանում է դրսից որևէ դեղատոմսի չպարտադրման մեջ: Ընդ որում, Ռուսաստանի սկզբունքային մոտեցումը, որը ելնում է նրանից, որ վերջնական ընտրության համար գլխավոր պատասխանատվությունն ընկնում է ադրբեջանցիների և հայերի վրա, անփոփոխ է մնում: Դա, իհարկե, հուսադրող է:

Հիշենք նաև, որ Ադրբեջանի առաջնորդն իր նախագահական պարտականությունները ստանձնելու առաջին իսկ օրվանից զբաղված էր բացառապես ռազմատենչ ռիտորիկայով և, ընդսմին, հնարավորինս նսեմացնում էր ԵԱՀԿ Մինսկի խմբի դերը և իր հայտարարություններում հույսը դնում է միայն կոնֆլիկտի ռազմական լուծման վրա: Մեզ համար նպաստավոր է, որ Ադրբեջանի ղեկավարությանը հատուկ ոգին իսպառ բացակայում է ընդունված Հռչակագրում:

Հայաստանի Նախագահը նույնպես հավատարիմ է ղարաբաղյան խաղաղ կարգավորման իր մոտեցումներին, որոնք հիմնված էին միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի վրա: Ուշադիր ծանոթության դեպքում կարելի է նկատել, որ ՀՀ Նախագահի առաջարկությունները, որոնք հնչեցվել են վերջերս ՄԱԿ-ի 63-րդ Գլխավոր վեհաժողովի ժամանակ, իրենց արտացոլումը գտան Ադրբեջանի, Հայաստանի և Ռուսաստանի՝ ղարաբաղյան կարգավորմանը նվիրված Հռչակագրում: Այդ փաստի արձանագրումը գուցե թե մանրուք է, այնուամենայնիվ, հաճելի է:

«Առավոտ», 4.XI.2008:

УБЕДИТЕЛЬНЫЙ ОТВЕТ ИЗЫСКАМ РАЗНОГО РОДА “ВЕЩИХ КАССАНДР”, “ДЕЛЬФИЙСКИХ ОРАКУЛОВ”, “ПРОРИЦАТЕЛЬНИЦ ПИФИЙ” ИЗ АОД

В течение последних месяцев армянская общественность начиталась разного рода заклинаний на тему “продажи Арцаха”, сумасбродных высказываний о выталкивании России на обочину переговорного процесса по вопросам урегулирования нагорно-карабахского конфликта, о предстоящей главенствующей посреднической миссии Турции и пр. пр. Настораживающе звучали и публичные сомнения аккредитованных в Армении высокопоставленных дипломатических чинов, как ни странно из числа сопредседателей Минской группы ОБСЕ, на счет чуть ли несостоятельности этого формата урегулировать конфликт… Словом, пессимистических прогнозов - полон рот.

Второго ноября текущего года в подмосковной резиденции Президента Российской Федерации Дмитрия Медведева - замке Майендорф- состоялось подписание Декларации Азербайджана, Армении и России по Нагорному Карабаху. Ознакомившись с текстом Декларации можно констатировать непреложный факт: после прекращения боевых действий в зоне конфликта за последние 14 лет впервые подписан документ президентами Армении и Азербайджана. Вчитываясь в каждый пункт Декларации, невольно приходит на память известное высказывание классика: краткость - сестра таланта. В чем же внутренняя сила принятой Декларации?

Первое. Россия, в лице Президента Д. Медведева, вновь подтвердила свою решимость добиваться урегулирования любого конфликта в регионе Южного Кавказа исключительно политическими мирными путями на основе принципов международного права. Думается, что этот основополагающий принцип, заложенный в принятой Декларации, остудит пыл воинственных апшеронских политиков, которые в последние годы не перестают в разы наращивать свой военный бюджет, и внесет существенные коррективы в идеологическую основу урегулирования нагорно-карабахского конфликта, сводящуюся к воинствующей риторике.

Второе. Урегулирование конфликта на основе принципов Международного права, безусловно, предполагает, что главенствующая роль будет отводиться основополагающему праву: праву человека на жизнь. Напомним, что Право на жизнь – это фундаментальный принцип, заложенный в основу Декларации ООН 1970 года о принципах международного права, в дальнейшем закрепленный в Хельсинском заключительном акте СБСЕ 1975 года. Здесь стоит упомянуть, что в отноше-

нии принципа территориальной целостности в Декларации 1970 года подчеркивается, что *государство (в нашем случае Азербайджан) обладает территориальной целостностью, если оно соблюдает права народов, проживающих на этой территории, не предпринимает действий, нарушающих эти права. Руководители же Азербайджана неоднократно предпринимали попытки вооруженным путем подчинить себе Нагорный Карабах, всячески ограничивали и дискриминировали армянское население, вплоть до массовых убийств - будь то в Карабахе или в Азербайджане (Сумгаитский, Бакинский, Кировадский погромы).*

Третье. Участие сопредседателей Минской группы ОБСЕ на церемонии подписания Декларации поставило жирную точку над разного рода конъюнктурными спекуляциями о скорой "кончине" Минской группы. Теперь стало ясно, что муссируемые слухи "о ее смерти", сильно преувеличены. Немаловажным и символическим одновременно явилось проявление доброй воли со стороны России, которая стала не только инициатором саммита глав Армении и Азербайджана, но и привлекла в завершающей стадии, подписании итогового документа, переговорного процесса сопредседателей Минской грппы ОБСЕ представителей Франции и США, подтвердив тем самым свою приверженность к выстраиванию новой архитектуры международных отношений, принципиальные подходы которой были заложены в выступлении президента РФ на Конференции по мировой политике в г. Эвиане 8 октября т. г. В частности, выполнение Декларации по Нагорному Карабаху основывается на гарантии недопустимости применения силы или угрозы ее применения в международных отношениях, обеспечении гарантии равной безопасности. Подход, заявленный Д. А. Медведевым в Эвиане. Пригласив же французских и американских сопредседателей в Москву, Президент Д. А. Медведев на практике подтвердил свою приверженность им же озвученной в Эвиане другой идее о том, что: "Ни одно государство и ни одна международная организация не могут иметь эксклюзивных прав на поддержание мира и стабильности в Европе. В полной мере это относится и к России".

Четвертое. Принятие Декларации, думается, успокоит притязания на право быть носителем истины в последней инстанции тех из доморощенных политиков, которые последние два месяца пугали наших сограждан страшилками о якобы непосредственном вовлечении Турции в посредническую миссию по урегулированию конфликта со всеми вытекающими из этого нежелательными последствиями, вплоть до возобновления военных действий. Минская группа ОБСЕ, как было заявлено в Майендорфе, продолжает оставаться главным легитимным посредником в переговорном процессе.

Пятое. Для армянской дипломатии пятый пункт Декларации (Поощрение создания условий для реализации мер по укреплению доверия) открывает широкое поле для деятельности. Бесспорно, что укрепление мер доверия предполагает во-первых, сведение к минимуму информационной войны, развязанной Азербайджаном

против РА, во-вторых, разблокирование границ Армении как с Турцией, так и с Азербайджаном. И неслучайно, что, представляя Декларацию, Д. А. Медведев зачитал: “Президенты Азербайджанской Республики, Республики Армения и Российской Федерации заявляют, пункт первый, что будут способствовать оздоровлению ситуации в Южном Кавказе и обеспечению установления в регионе обстановки стабильности и безопасности путем политического урегулирования нагорно-карабахского конфликта на основе принципов и норм международного права и принятых в этих рамках решений и документов, что создаст благоприятные условия для экономического развития и всестороннего сотрудничества в регионе” (“Вести”, 2 ноября 2008 г.). И теперь, когда Декларация подписана президентами, думается, что и странам Евросоюза и той же Турции, естественно, и США (как сопредседателю Минской группы ОБСЕ), открываются широкие возможности для тщательного мониторинга за выполнением сторонами конфликта данного обязательства.

Шестое. Второй пункт принятой Декларации (Дальнейшая разработка основных принципов политического урегулирования) со всей очевидностью показывает, что никаких муссируемых в аодовской прессе трех, разных вариантов (американского, евросоюзовского и российского) урегулирования нагорно-карабахского конфликта не было, а был всего лишь переговорный процесс, который после Майендорфской Декларации вывел переговаривающиеся стороны на более высокий уровень сотрудничества, открывающий путь для окончательного урегулирования этой одной из самых сложных геополитических проблем, образовавшихся в результате распада СССР.

Осмысливая итоги “Майендорфского прорыва”, невольно вспоминается прекрасный фильм нашей молодости: “Верьте мне люди”. То ли блистательная игра Кирилла Юрьевича Лаврова, то ли затаенное в нас желание в наш век двойных стандартов и большой, разжижженной в нефти, лжи поверить, что 2 ноября 2008 года в Майендорфском замке был заложен надежный фундамент процветания для народов многострадального региона Южного Кавказа.

Вместо послесловия. Теперь, когда Декларация уже получила путевку в жизнь, на память приходят выступления последних лет президентов России, Азербайджана и Армении. Россия, со дня установления перемирия в регионе, осталась верна своей принципиальной позиции, вновь подтвержденной и 2 ноября, а именно: позиция России в урегулировании нагорно-карабахского конфликта, заключается в ненавязывании участникам каких-либо рецептов извне. При этом принципиальный подход России, который исходит из того, что главная ответственность за окончательный выбор должна лежать на самих азербайджанцах и армянах, неизменен. Это, конечно, обнадеживает.

Вспомним также, что азербайджанский лидер с первого же дня отправления своих президентских полномочий придерживался исключительно воинственной риторики, при этом всячески умаливал роль Минской группы ОБСЕ, и в своих за-

явлениях уповал лишь на военный путь решения конфликта. К нашему удовлетворению подобный дух, присущий руководству Азербайджана, напрочь отсутствует в принятой Декларации.

Президент Армении также остался верен своим подходам к нагорно-карабахскому мирному урегулированию, которые базировались на принципах и нормах международного права. При внимательном ознакомлении можно заметить, что предложения президента РА, озвученные недавно, на 63-ей Генеральной Ассамблее ООН, нашли свое отражение в Декларации Азербайджана, Армении и России по урегулированию конфликта в Нагорном Карабахе. Констатация этого факта может и мелочь, а все-таки приятно.

"Новое Время", 04.XI.2008.

ԵՐԿՐԻ ԱՆԴՈՐԸ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՄԲ Է ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ …

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈՅԻ «ԲԱՑ ՆԱԽԱԳԻԾ» ՀԱՂՈՐԴԱՇԱՐԻ ՀԵՂԻՆԱԿ ՌՈՒԶԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԵՏ (14.11.2008 թ.)

Երանի նորանց՝ որ արդարության համար հալածված են,
որ նորանցն է երկնքի արքայությունը:

Ավետարան ըստ Մարկոսի, գլուխ Ե, 10

ՌՈՒԶԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ – Հանրային ռադիոյի ուղիղ եթերում «Բաց նախագիծ» հաղորդաշարն այսօր հյուրընկալել է «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանին: Պարոն Գեղամյան, այսօր Երևան ժամանեցին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները, արդեն հանդիպել են Արտաքին գործերի նախարար Էդուարդ Նալբանդյանի հետ, ծրագրված է հանդիպել երկրի Նախագահի հետ, այնուհետև մեկնելու են Ստեփանակերտ: Ուզում եմ Ձեզ հարցնել՝ դիվանագիտական այս արշավի արագացման արդյունքը ի՞նչ է լինելու՝ խաղաղության վերջնական հաստատո՞ւմ, պայմանագի՞ր, պատերա՞զմ, թե՞ մի այլ բան:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ – Նախ, շնորհակալություն հրավերի համար, Ձեր դիտարկումն միանգամայն տեղին է և ճիշտ: Վերջին ժամանակաշրջանում, հատկապես վրաց-օսական 5-օրյա պատերազմից հետո դիվանագիտական առանձնահատուկ աշխուժություն է տիրում մեր տարածաշրջանում և, թերևս, դա ունի իր խոր արմատները: Մասնավորապես, հիշենք այն Հռչակագիրը, որը ստորագրվեց նոյեմբերի 2-ին երեք երկրների նախագահների՝ Ռուսաստանի՝ Դմիտրի Մեդվեդևի, Ադրբեջանի՝ Իլհամ Ալիևի և Հայաստանի՝ Սերժ Սարգսյանի կողմից: Մայենդորֆյան հռչակագիրը որակական նոր մակարդակի վրա բարձրացրեց Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման խնդիրը: Նշեմ նաև, որ դեռ փոքր-ինչ ավելի վաղ, եթե հիշում եք, Թուրքիայի նախագահը և վարչապետը՝ Աբդուլլահ Գյուլն ու Ռեջեփ Թայիփ Էրդողանը հանդես եկան Կովկասյան կայունության և անվտանգության պլատֆորմով, որը ենթադրում է Թուքիայի դերակատարության շեշտակի ակտիվացում մեր տարածաշրջանում: Արդյոք դիվանգիտական այս արագընթաց գործերը կհանգեցնեն հանգուցալուծման, թե՞ ոչ…

Ռ. Խ. – Կամ ինչպիսի՞ հանգուցալուծման:

Ա. Գ. – Կամ ինչպիսի՞ հանգուցալուծում կլինի: Այդ հարցին պատասխա-

նելու համար հասկանանք, թե ի՞նչ է կատարվում մեր տարածաշրջանում ու աշխարհում, ինչպիսի զարգացումներ են ընթանում: Աշխարհը հայտնվել է ֆինանսական և տնտեսական խորը ճգնաժամի մեջ, արդեն իսկ միայն ծույլերը չեն արձանագրում, որ դա տևական բնույթ է կրելու, և համաշխարհային էկոնոմիկայի առաջատարներին, ինչպիսիք են, նախևառաջ, Ամերիկայի Միացյալ Նահանգները, արևմտաեվրոպական երկրները, Ճապոնիան, ինչու չէ, նաև Ռուսաստանը, այդ բոլոր երկրներին սպասվում են դժվար օրեր: Հատկապես բարդ է իրավիճակը Միացյալ Նահանգներում, որովհետև այդ երկրի ներքին ու արտաքին պարտքը կազմում է ոչ ավել, ոչ պակաս, քան շուրջ 100 տրիլիոն դոլար, մինչդեռ համախառն ներքին արդյունքը տարեկան կտրվածքով կազմում է 14-15 տրիլիոն դոլար: [ԱՄՆ-ի տրաստային ֆոնդերի պարտավորությունները կազմում են 53 տրիլիոն դոլար, յուրաքանչյուր տնային տնտեսության արտաքին պարտքը կազմում է 400.000 դոլար կամ բոլորինը ամբողջությամբ՝ ԱՄՆ ՀՆԱ-ի 135%-ը՝ շուրջ 17 տրիլիոն դոլար (տե՛ս Պիտեր Պիտերսոնի՝ Ռ.Նիքսոնի նախագահության օրոք ԱՄՆ առևտրի նախարարի հոդվածը “Профиль” ամսագրում (28.VII.2008, № 29)], ԱՄՆ ֆեդերալ պարտքերը գերազանցում են 11 տրիլիոն դոլարը, ֆոնդային արժեթղթերի գծով՝ 16.4 տրիլիոն դոլարը, հիպոթեքային պարտքերը՝ 6 տրիլիոն դոլարը]: Այս ամենից դուրս գալու համար ընդամենը երկու եղանակ կա. մի եղանակն այն է, որ հարկ է ամեն գնով փորձել խթանել էկոնոմիկան՝ պայմաններ ստեղծելով հնարավորինս արագ մարել կուտակված պարտքերը, երկրորդ եղանակը՝ անընդմեջ դեվալվացիայի ենթարկել ամերիկյան դոլարը՝ այդ բեռը բաժանել աշխարհի բոլոր երկրների վրա (հարկ է նշել, որ կուտակված պարտքերը ենթակա են ԱՄՆ դոլարով մարման): Ստեղծված իրավիճակում էլ տնտեսությունը խթանելու ամենադյուրին ճանապարհը, ավա՜ղ, պատերազմական գործողությունների ծավալումն է: Ուրիշ ճանապարհ, կարծում եմ, չկա: Եթե մենք ուշադիր հետադարձ հայացք գցենք Մեծ դեպրեսիայի տարիներին, երբ ԱՄՆ-ում իշխանության եկավ Ֆրանկլին Դելանո Ռուզվելտը, ապա կտեսնենք, որ դեպրեսիայի հաղթահարումը վերջնականապես պայմանավորվեց Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբով և ավարտով: Ամերիկյան տնտեսությունը վերակենդանացավ այն աստիճանի, որ 1944 թ., դեռ պատերազմը չավարտված, Ամերիկայի Միացյալ Նահանգները Նյու Հեմփշիրի Բրետտոն Վուդս քաղաքում գումարեցին աշխարհիս հզորների ֆինանսական համաժողով, որտեղ ԱՄՆ-ը դոլարը ոսկու հետ զուգահեռ ճանաչվեց համաշխարհային տարադրամ և այդտեղից էլ սկսվեց ամերիկյան գերիշխանությունը, որը շարունակվում էր մինչ օրս: Ուստիև, ճանապարհը մեկն է՝ կամ կարողանալ ԱՄՆ դոլարային պարտքերը բարդել բոլոր երկրների վրա, կամ խթանել սեփական տնտեսությունը: Սեփական տնտեսությունը խթանելու ճանապարհներից մեկն էլ այն է, ինչի ականատեսն ենք մենք այսօր, երբ Ամերիկան փորձում է, այնուամենայնիվ, իր գերիշխանությունը տարածել բնական ռեսուրսներով հարուստ տարածաշրջաններում, իսկ քայքայված ֆինանսների պայմաններում գերիշխանությունը կտարածվի այն ժամանակ, երբ ռազմական ուժը ներխուժի տվյալ տարածաշրջաններ: Իսկ այդ ուժը կարող է հիմնավորված ներխուժել, եթե ապակա-

յունանա իրավիճակը այդ տարածաշրջաններում, մասնավորապես նաև Հարավային Կովկասում: Վրաց-հարավ-օսական պատերազմի ժամանակ, ասես թե, ռուս ստրատեգները՝ ռազմագետները, շատ ճիշտ հաշվարկեցին և կարողացան ճշգրիտ, արագ գործողություններով կանխել վերը նշված հնարավոր զարգացումները:

Ռ. Խ. – Պարոն Գեղամյան, ընդհատեմ Ձեզ:

Ա. Գ. – Ավարտեմ միտքս: Հիմա ինչպիսի՞ շարունակություն կարելի է ակնկալել մեր տարածարջանում, ի՞նչ միջոցներ կարող են գործի դրվել: Միջամտելու երկու հանգամանք ունեն, ըստ որում ոչ միայն ամերիկացիները, այլև Եվրամիությունը ու Ռուսաստանի Դաշնությունը. մեկը՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման պատրվակով, և երկրորդը՝ Իրանի շուրջ ծավալվող զարգացումներով: Բարեբախտաբար, ԱՄՆ-ում իշխանության եկավ Բարաք Խուսեյնովիչ Օբաման, որը, թվում է, թե փոփոխությունների կողմնակից է և Ամերիկայի դերակատարության որակական փոփոխության ջատագով է: Ահա այսպիսին են մեր տարածաշրջանում առկա բարդությունների հիմքերը:

Ռ. Խ. – Պարոն Գեղամյան, Դուք խոսեցիք Ամերիկայի մասին, բայց հենց նույն ամերիկացի համանախագահ Մեթյու Բրայզան Բաքվում տված հարցազրույցում նույնիսկ հույս է հայտնել, ես բառացիորեն մեջբերեմ, եթե թարգմանությունը ճիշտ է, որ նա զգում է, որ հաջորդ տարվա ընթացքում կարող է լուծվել Ղարաբաղի հարցը: Նա այնքան էլ հոռետես չէ:

Ա. Գ. – Երբեք ու երբեք պետք չէ գերագնահատել Ամերիկայի համանախագահ Մեթյու Բրայզայի ասածները: Նա իրարամերժ հայտարարություններ անելու մեծ վարպետ է, որը դիվանագիտության մեջ հայտնի հնարք է: Այն է՝ շոշափել, թե ինչպիսին կլինի հասարակական կարծիքը այս կամ այն հայտարարության դեպքում, լինի դա ոչ հայանպաստ, ոչ ադրբեջանանպաստ…

Ռ. Խ. – Լավ, Ձեր կարծի՞քն ինչպիսին է, ե՞րբ կլուծվի հարցը:

Ա. Գ. – Հարցը մոտ ժամանակներում ենթակա չէ լուծման:

Ռ. Խ. – Նույնիսկ հաջո՞րդ տարում…

Ա. Գ. – Իհարկե, որովհետև Լեռնային Ղարաբաղի հարցի լուծումը պայմանավորված է, դժբախտաբար, թե բարեբախտաբար (ժամանակը ցույց կտա), թե ինչ պայմանավորվածությունների կգան Ռուսաստանը և Ամերիկայի Միացյալ Նահանգները, ինչու չէ, նաև Եվրամիությունը՝ կապված տարածաշրջանային ու աշխարհաքաղաքական զարգացումների հետ: Մասնավորապես, նկատի ունեմ, որ Բարաք Օբաման արդեն իսկ քանիցս հայտարարել է՝ 16 ամսվա ընթացքում ամերիկյան զորքերը դուրս կբերվեն Իրաքից: Իսկ դա նշանակում է, որ Իրաքում կմեծանա քրդական գործոնը, քանի որ ամենակազմակերպված, պետականության տարրեր կրող եզակի տարածքը այսօրվա Իրաքում Հյուսիսային Իրաքն է, որը բնակեցված է բացառապես քրդերով: Քրդական գործոնի բարձրացման պայմաններում Թուրքիան, անշուշտ, գիտակցում է, որ դա կարող է արթնացնել արդեն իր երկրի հյուսի-

սարևելյան շրջաններում բնակվող քրդերին: Քրդեր, որոնք ապրում են Հայաստանի սահմանամերձ տարածքներում՝ մեր պատմական հողերում, լինի դա էրզրումը, լինի Կարսը, լինի Վանը, լինի Դիարբեքիրը: Կրկնեմ, որ ազգաբնակչությունը այնտեղ հիմնականում, ոչ թե հիմնականում, այլ ճնշող մեծամասնությամբ քրդեր են: Գիտակցելով, որ առկա «սեպարատիստական» շարժումը կարող է հանգեցնել տարածաշրջանում քրդական մեծ պետության կազմավորմանը, Թուրքիան վերջերս դրսևորեց դիվանագիտական աննախադեպ ակտիվություն: Նպատակը՝ կանխել նման զարգացումները և դրա համար էլ ցանկացավ գոնե Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ ստեղծելով սահմանը բացել, հյուսիսարևելյան Թուրքիայում բնակվող քրդերի էկոնոմիկական կյանքը աշխուժացնել, մեղմել սոցիալական լարվածությունը այդ տարածաշրջանում: Նշենք, որ Թուրքիան փորձում է իրեն դաշնակից դարձնել նաև Ռուսաստանի Դաշնությանը, որը, անշուշտ, շահագրգռված չէ, որպեսզի իր հարավում, այն է՝ Հայաստանի և Թուրքիայի սահմաններում լարված իրավիճակ ստեղծվի: Ահա այս ամենի մեջ պետք է տեսնել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծման հնարավոր ճանապարհները: Եվ դա միայն և միայն հնարավոր է Ռուսաստան–ԱՄՆ–Եվրամիություն պայմանավորվածությունների շրջանակում, ինչու չէ, նաև տեսակետ կա՝ մասամբ ներգրավելով Թուրքիային: Ինքնին հասկանալի է, որ դուրս գալով Իրաքից, Միացյալ Նահանգները միաժամանակ կգիտակցեն, որ Թուրքիայի դերակատարությունն այստեղ՝ տարածաշրջանում պետք է մեծանա: Դա հնարավորություն կտա Թուրքիայի սահմանից վերահսկել Հյուսիսային Իրաքում տեղի ունեցող զարգացումները:

Խնդրո առարկայի շուրջ նշեմ նաև. Ռուսաստան – Թուրքիա մերձեցման պարագայում մենք արդեն ձեզ հետ միասին ականատեսը կլինենք մեր տարածաշրջանում Վրաստանի գործոնի շեշտակի անկման: Ռուսաստանը, ցամաքային կապ հաստատելով Հայաստանի միջոցով Թուրքիայի հետ, կկարողանա շրջանցել Վրաստանը: Դա հնարավորություն կտա, մասնավորապես, էներգետիկ բնագավառում լուրջ համագործակցություն ծավալել Թուրքիայի հետ՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ մեր էներգահամակարգը մեծամասնությամբ պատկանում է Ռուսաստանին, իսկ ատոմակայանն էլ տևական ժամանակով տրված է ռուսական կազմակերպությունների կառավարմանը:

Ռ. Խ. – Պարոն Գեղամյան, ճշտենք, Դուք, կարծեք թե, ասացիք, որ ներգրավեն Թուրքիային Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծմանը, ի՞նչ աստիճանի եք դա պատկերացնում:

Ա. Գ. – Ես նման միտք չեմ արտահայտել, ուրիշ բան, որ օդում այդ պնդումը կա:

Ռ. Խ. – Այդ դեպքում ի՞նչ կարծիքի եք Թուրքիայի վարչապետ պարոն Էրդողանի հայտարարության մասին. օրերս լրագրողները նրան հարց են ուղղել, թե ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի անդամ դառնալով Թուրքիան որքանո՞վ կարող է նպաստել, ասենք, Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծմանը: Պարոն Էրդողանը պատասխանել է, որ կարող է

արագացնել այդ: Դուք այդտեղ որևէ հնարավորություն տեսնո՞ւմ եք:

Ա. Գ. – Ես այդտեղ միայն դրական միտում եմ տեսնում այն կտրվածքով, որ Թուրքիայի ազդեցությունը Ադրբեջանի վրա բավական մեծ է, իսկ Հայաստանի վրա զրոյական: Ուստի, արագացումը պետք է դիտարկել միայն այն տեսանկյունից, որ Թուրքիան իր ողջ ազդեցությունը կնպատակամղի, որպեսզի Ադրբեջանը գնա զիջումների: Զիջումներ, որոնց շրջանակը հստակ է և այս էլ որերորդ անգամ դրանց մասին ասում է Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանը: Հրապարակված են հայտնի սզբունքները, որոնք անհրաժեշտության դեպքում կարող ենք…

Ռ. Խ. – Ձեզ հայտնի՞ են այդ սկզբունքները:

Ա. Գ. – Այդ սկզբունքները քանիցս կրկնվել են, առաջին սկզբունքը Լեռնային Ղարաբաղի …

Ռ. Խ. – Նկատի ունեք երեք սկզբունքնե՞րը:

Ա. Գ. – Այո:

Ռ. Խ. – Ինձ թվաց Մադրիդյան, ներողություն: Այստեղ մի կոնկրետացնող հարց, շատ հետաքրքիր է: Պարոն Բրայզան Բաքվում հայտարարել է, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրները տարածաշրջան խաղաղարարներ չպետք է ուղարկեն, այդ թվում նաև բախման մեջ եղած, հակամարտության մեջ գտնվող երկրների հարևանները: Այդ դեպքում Դուք պատկերացնո՞ւմ եք, թե խաղաղարարները ո՞ր երկրից կամ ի՞նչ մանդատ պետք է ունենան:

Ա. Գ. – Հարգելի Ռուզաննա, ես, նախ, չեմ հասկանում, թե ինչո՞ւ եք այդքան լուրջ ընդունում պարոն Բրայզայի ասածները, ասես թե, մի սուրբ ասել է, մենք էլ ոնց Ավետարանին ենք վերաբերվում, այդպես էլ Բրայզայի ասածների՞ն վերաբերվենք:

Ռ. Խ. – Դա ասել է Մինսկի խմբի համանախագահներից մեկը:

Ա. Գ. – Է՛, բան է, ասել է: Ну и что же? Ինչքան կարևորենք պարոն Բրայզայի ասածները, ինչքան դրա շուրջ մենք սկսենք բանավիճել, միմյանց նկատմամբ հարձակողական դրսևորումներ ունենալ, այդքանով մենք կդառնանք գերտերությունների խաղալիքները՝ լինի դա Միացյալ Նահանգները, լինի Ռուսաստանը, լինի Եվրամիությունը:

Ռ. Խ. – Դա տեղեկատվություն է, որի շուրջ մեկնաբանություն եմ խնդրում:

Ա. Գ. – Ոչ մի տեղեկատվություն պատահական չի եթեր սփռվում: Թող բոլորիս համար մեկընդմիշտ պարզ լինի, որ լինի դա ԱՄՆ-ն, լինի Ռուսաստանի Դաշնությունը, լինի Եվրամիությունը, նրանք բոլորն էլ հետապնդում են միայն և միայն սեփական երկրների շահերը: Եվ կարևոր է, որ հանկարծ չստացվի՝ բանակցային գործընթացում մենք դառնանք իրենց խաղերում օբյեկտ, այլ ոչ թե ինքնուրույն, իրավաբանական սուբյեկտ: Այ, ինչքան մենք շատ քննարկենք Բրայզայի ասածները, ինչու չէ, Մերզլյակովի, Բերնար Ֆասյեի ասածները, այնքան մենք տանուլ կտանք: Այն պահից, երբ մեր քաղաքական ընտրանին հասկանա, որ բանավեճերը պետք է գնան միայն և միայն մի ուղղությամբ, այն է՝ յուրաքանչյուրս ի՞նչ անենք, որ Լեռնային Ղարա-

բաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման նպատակով ամրագրված երեք հայտնի սկզբունքները կյանքի կոչենք, ահա, այդ պահից էլ մեր գործողությունները կլինեն նպաստավոր: Վերստին հիշեցնեմ այդ երեք սկզբունքները. Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի հաստատումը Ադրբեջանի կազմից դուրս, միջազգային ատյանների կողմից Լեռնային Ղարաբաղի ժողովրդի և ԼՂ հանրապետության անվտանգության փաստի ամրագրումը և Լեռնային Ղարաբաղի ու Հայաստանի Հանրապետության միջև ցամաքային կապի հաստատումն ու երաշխիքների ամրագրումը: Ահա, այ, սրա շուրջ է պետք բանավիճել:

Եվ եթե մի թագավորություն իր միջումը բաժանվի,
այն թագավորությունը կարող չէ կենալ:
Եվ եթե մի տուն իր միջումը բաժանվի,
այն տունը կարող չէ կենալ:

Ավետարան ըստ Մարկոսի, գլուխ Գ, 24-25

Ռ. Խ. – Պարոն Գեղամյան, ներքաղաքական իրավիճակից գուցե փոքր-ինչ խոսենք:

Ա. Գ. – Սիրով:

Ռ. Խ. – Դուք լուծումներ ունե՞ք բևեռացումից և, որակումներ չեմ ուզում տալ, այս իրավիճակից դուրս գալու համար:

Ա. Գ. – Անտարակույս, ունեմ, ուրիշ բան, թե որքանով է դա ընդունելի իմ գործընկերների կողմից՝ լինի դա արմատական ընդդիմություն, լինի իշխանություն: Ես պատահական չէ, որ օգտագործեցի այդ բառը՝ գործընկերներ. երբ վտանգված է Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծումը, արդեն չկա դիմություն, ընդդիմություն, կա արտաքին վտանգին դիմակայող խելամիտ ազգ, որը պետք է առաջնորդվի իր միակամ, միաբանված քաղաքական ընտրանիով: Իհարկե, ես տեսնում եմ լուծումներ և այդ լուծումների մասին եկեք մտքեր փոխանակենք: Դեռ Մոսկվայում պաշտոնական այցի ընթացքում, հայազգի գործարար և քաղաքական շրջանակների ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ պարոն Սերժ Սարգսյանը հայտ ներկայացրեց համախմբել հայկական ողջ ներուժը մեր երկրի առաջ ծառացած խնդիրների լուծման ուղղությամբ: Դա իր բավականին լուրջ զարգացումը գտավ ՄԱԿ-ի 63-րդ նստաշրջանի օրերին ամերիկահայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ: Ինչու չէ, նույնաբովանդակ խնդիրները իրենց զարգացումը գտան նաև վերջերս Բրյուսելում, կրկին հայ համայնքի հետ ՀՀ Նախագահի հանդիպման ժամանակ:

Ռ. Խ. – Ձեր առաջարկած լուծումները:

Ա. Գ. – Ասում եմ իմ առաջարկները: Սերժ Սարգսյանը հիշատակածս հանդիպումներում հայտ ներկայացրեց համազգային լիդեր դառնալու համար: Համազգային լիդեր դառնալու մեծագույն առաքելությունը, ըստ իս, ազգը կոնսոլիդացնելն է: Այսօր ազգի կոնսոլիդացիայի ապահովման գործում

առաջին քայլը ես տեսնում եմ նրանում, երբ մեր գործընկերները, միաժամանակ Սերժ Սարգսյանի մարտական ընկերները, որոնք այսօր քրեական համապատասխան հոդվածներով կամ դատարանի վճռին են սպասում, կամ էլ վճիռը կայացել է, պետք է ազատ արձակվեն: Կարծում եմ, որ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը այսօր անպայմանորեն պետք է վարվի այնպես, ինչպես վարվեց պարոն Ռոբերտ Քոչարյանը՝ իշխանության գալով: Հիշո՞ւմ եք, երբ Վահան Հովհաննիսյան+30, թե 31 գործով գնացող մարդկանց Ռոբերտ Քոչարյանը ազատ արձակեց՝ կիրառելով ՀՀ Քրեական օրենսգրքի հոդված 74-ի՝ «իրադրության փոփոխության հետևանքով կարճել քրեական գործը կամ դադարեցնել հետապնդումը»: Կյանքը ցույց տվեց, որ նա ճիշտ վարվեց, որովհետև այդ գործով գնացող Վահան Հովհաննիսյանը և Արմեն Ռուստամյանը հետագայում իրենց գերազանց դրսևորեցին, մասնավորապես ԵԱՀԿ և Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովներում հայանպաստ իրենց ելույթներով: Հիմա նույնը, եթե կիրառվի Հակոբ Հակոբյանի, Սասուն Միքայելյանի, Մյասնիկ Մալխասյանի, Սմբատ Այվազյանի, Աշոտ Զաքարյանի նկատմամբ, բոլորին չթվարկեմ, ես, կարծում եմ, որ, այո, լուրջ քայլ արած կլինի պարոն Սերժ Սարգսյանը՝ վերահաս վտանգի առաջ ազգը կոնսոլիդացնելու, համազգային լիդեր դառնալու ճանապարհին: Իրողություն, որն այսօր օդի ու ջրի պես պետք է ոչ այնքան տվյալ անձին, որքան երկրում ստեղծված իրավիճակն առողջացնելու համար: Համոզված կարող եմ ասել, որ այդ քայլից հետո իրավիճակը հանրապետությունում շեշտակիորեն կլիցքաթափվի: Իսկ ինձ համար առավել կարևոր է, որ Հայաստանն արդեն հանդես կգա համաշխարհային հանրության առաջ որպես միատարր, որպես միաբանված քաղաքական հասարակություն և այսօր ոմանք չեն հեգնի՝ ասելով, որ արտաքին քաղաքականության հաջողությունները դեռևս բավարար չեն Հայաստանի Հանրապետության Նախագահի համար, քանի որ երկրի ներսում անկայունություն կա:

Եվ ճշմարտությունը կճանաչէք.
եվ ճշմարտությունը կազատե ձեզ:

Ավետարան ըստ Յովհաննեսի, գլուխ Ը, 32

Ռ. Խ. – Պարոն Գեղամյան, ես առաջարկում եմ մեր զրույցի քաղաքական մասն ավարտել ու անցնել, կարծում եմ, բավական հաճելի մի մասի: Եվ, այսպես, «Բաց նախագծի» հարցաշարը Արտաշես Գեղամյանին: Պարոն Գեղամյան, Դուք հարցերին պետք է պատասխանեք՝ ճիշտ է կամ ճիշտ չէ, այլ պատասխան չի ենթադրվում:

Ա. Գ. – Այսինքն՝ դուք ինձ ռոբոտի դե՞ր եք ուզում վերապահել:

Ռ. Խ. – Ոչ, պարոն Գեղամյան, ես Ձեզ համար բավականին հաճելի հարցաշար եմ կազմել:

Ա. Գ. – Դա ռուս գրականության մեջ կոչվում է՝ “унтер- пришибеевщина, одобрямсь, не одомбрямсь”. Համեցեք:

Ռ. Խ. – Հայաստանի Ազգային ժողովի 2003 թ. ընտրություններում «Ազգային Միաբանություն կուսակցությունը» ստացել է ձայների 8.8%-ը՝ խորհրդարանում ստանալով պատգամավորական 9 տեղ: Ճի՞շտ է պատասխանը:

Ա. Գ. – Թվաքանակին ես կարևորություն չեմ տվել, որակապես շատ ավելի են եղել մեր զբաղեցրած դիրքերը:

Ռ. Խ. – Այսինքն՝ Դուք ընդունեցիք, որ պատասխանը ճիշտ է:

Ա. Գ. – Դուք հարցը տվեցիք, ես պատասխանեցի, թող ռադիոլսողը մեկնաբանի:

Ռ. Խ. – Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդուարդ Նալբանդյանը որպես Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունը նախագահող երկրի նախարար նոյեմբերի 24-ին մեկօրյա այցով լինելու է Ստամբուլում: Այդպե՞ս է:

Ա. Գ. – Բարով գնա, բարով գա:

Ռ. Խ. – Խորհրդային Միության կազմավորման պայմանագիրը ուժը կորցրած է ճանաչվել 1991 թ. դեկտեմբերին:

Ա. Գ. – Հիմա ողբանք, թե՞ ուրախանանք:

Ռ. Խ. – Հայաստանի Նախագահի 2008 թ. ընտրություններում առաջադրվել էր 19 թեկնածու:

Ա. Գ. – Առավել կարկառուններին եմ հիշում:

Ռ. Խ. – Ես Ձեր պատասխաններից զգում եմ, Դուք ճիշտ, հրաշալի հասկանում եք: Դուք մինչև այժմ բոլոր պատասխաններին ճիշտ եք պատասխանել, բոլոր հարցերին...

Ա. Գ. – Էս աշակերտի տեղ եք դրել, հա՞: Վերջում էլ կասեք՝ 10 բալանոց սիստեմով 11 ստացաք:

Ռ. Խ. – Չէ, բավական հետաքրքիր են մեկնաբանությունները: Արշակ Սադոյանը Հայաստանի խորհրդարանի պատգամավո՞ր է:

Ա. Գ. – Էրնեկ էն օրերին:

Ռ. Խ. – Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրը նշվում է դեկտեմբերի երկուսի՞ն:

Ա. Գ. – Դուք ի նկատի ունեիք իմ ծննդյան օրը, որովհետև ես իմ ողջ գործունեությամբ նպաստում եմ մարդու իրավունքների պաշտպանությանը:

Ռ. Խ. – 1884-1893 թթ. Երևանի վարչական տարածքի ղեկավար, պարզ ասած՝ քաղաքապետ է եղել Բարսեղ Գեղամյանը:

Ա. Գ. – Իմ բարեկամն է Բաքվի քահանա Եղիշե Գեղամյանը, գրական կեղծանունը՝ Հայկունի, Բարսեղ Գեղամյանի հետ ոչ մի առնչություն չունեմ:

Ռ. Խ. – Անկախությունից ի վեր Հայաստանի մշակույթի նախարարներից ամենաերկարը պաշտոնավարել է Գևորգ Գևորգյա՞նը:

Ա. Գ. – Գևորգ Գևորգյանին իմ ջերմ ողջույններն եմ հղում, ցավոք, եթե նա հակառակը, իրոք, ամենաերկարը պաշտոնավարեր, կարծում եմ, շատ արդյունավետ կաշխատեր, որովհետև «Հայֆիլմ» կինոստուդիայում աշխատած տարիները, գոնե կինոստուդիայի ստեղծագործական կոլեկտիվը շատ և շատ մեծ ջերմությամբ է հիշում:

Ռ. Խ. – Փաստորեն, պատասխանը ճիշտ է, Գևորգ Գևորգյանը ամենակարճն է պաշտոնավարել, 2006 թ. ընդամենը 3 ամիս, իսկ ամենաերկարը Ռոլանդ Շառոյանն է պաշտոնավարել՝ 5 տարի ու 1 ամիս: Հաջորդ հարցը: Դուք 10 հարցից 8 հարցին արդեն ճիշտ պատասխան եք տվել, որը ես որսում եմ պարզապես Ձեր պատասխաններից:

Ա. Գ. – Հաղորդումը «ֆիգուռնի կատանիա» դարձրեցիք, մնում էր այստեղ Տատյանա Տառասովան նստած լիներ, թույներ մեզ:

Ռ. Խ. – Պարզապես մի քիչ թեթևացնում ենք ծանր զրույցը:

Ա. Գ. – Համեցեք, թեթևացրեք:

Ռ. Խ. – Չինգիզ Այթմատովը իր «Եվ դարից երկար ձգվում է օրը» վեպի համար բնաբան է ընտրել Գրիգոր Նարեկացո՞ւց:

Ա. Գ. – Միանգամայն ճիշտ եք: Գիտե՞ք, Չինգիզ Այթմատովը իր այդ գործով ու մի քանի ուրիշ գործերի համար ներկայացվել էր գրականության բնագավառում Նոբելյան մրցանակի: Ի դեպ, «մանկուրտ» հասկացությունը համաշխարհային գրականության մեջ առաջինը հենց այդ վեպում մտցրեց Չինգիզ Այթմատովը: Եթե մարդ կորցնում և մոռանում է, թե որոնք են ակունքները, հետագայում նա անգամ թաղվելու, 2 քառակուսի մետր շիրմահողի չպետք է հավակնի:

Ռ. Խ. – Եկավ և 10-րդ հարցը: Ռուբեն Գևորգյանը Ազգային ժողովի պատգամավոր եղած ժամանակ մի անգամ միջանցքում արտասանել է «Չի ձի, փայտե ձի» բանաստեղծությունը:

Ա. Գ. – Դասականների նկատմամբ նա մեծ հակում ունի:

Ռ. Խ. – Եղավ, փաստորեն, ընդունենք, որ բոլոր հարցերին Դուք ճիշտ պատասխանեցիք: Անցնում ենք մեր հաղորդման երրորդ մասին: Պարոն Գեղամյան, անձնական, խիստ անձնական հարցերին անցնելուց առաջ, ասեք, Դուք ծագումով էրզրումի՞ց եք, թերևս, ցեղասպանության զոհերի հետնորդ: Այսպիսի մի հետաքրքիր հարց եմ ուզում Ձեզ տալ. մի թուրք գիտնական, որը Լոնդոնում է բնակվում, սեպտեմբերին հոդված էր հրապարակել «Դը Թրքիշ Դեյլի Նյուս» թերթում, որտեղ ասում էր, որ փնտրում էր, այսպես ասած, այնպիսի թուրքերի, որոնք ցեղասպանության ժամանակ ոչ թե սպանել են, տեղահանել են հայերին, այլ նրանց օգնել են: Նա վկայակոչում էր Հոլոքոստի դեպքը, երբ շատ գերմանացիներ օգնել են հրեաներին և ասում էր, որ եթե չկա մի թուրք, որը փրկել է մի հայի, ուրեմն ազգի համար դա շատ վատ է: Դուք այդ երևույթին ինչպե՞ս եք նայում, և ունե՞ք այդպիսի տեղեկություններ: Ես, օրինակ, այդպիսի տեղեկություն անձամբ ունեմ, իմ տատի ծնողներին ցեղասպանության ժամանակ սպանել են, բայց իրեն թուրք հարևանն է փրկել:

Ա. Գ. – Նախ, մի փոքր ճշտում կատարեմ. թե՛ հորս, թե՛ մորս պապերը միանգամայն ճիշտ էր ձեր դիտարկումը, էրզրումցիներ են, բայց նրանք գաղթել են 1830 թվականին:

Ռ. Խ. – Երևի Թբիլիսի՞:

Ա. Գ. – Ոչ: Եվ նրանց առաջնորդել է Կարնո հայոց հոգևոր թեմի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունին: Վերջինս, կարծես, Հայ

առաքելական եկեղեցու կողմից հետագայում կանոնակարգվեց ու դասվեց սրբերի դասին: Այնպես որ, 1830 թ. գաղթել են, գաղթել են 20 հազար ընտանիք, եկել են հիմնականում Ախլցխա, Ախալքալաք, Ծալկա, Լոռի-Փամբակ և, ինչու չէ, նաև Թիֆլիս, այնտեղից էլ՝ Դոնի Ռոստով: Մերոնք՝ պապերս, գաղթել են Ախլցխա, այնպես որ, բարեբախտաբար, իրենք մազապուրծ են եղել հետագայում բոլորիս համար ողբալի իրադարձություններից:

Երանի ողորմածներին, որ նորանք
ողորմություն կգտնեն: Երանի նորանց, որ սրտով
մաքուր են, որ նորանք Աստծուն կտեսնեն:

Ավետարան ըստ Մատթէոսի, գլուխ Ե, 7-8

Ռ. Խ. – Քանի որ մենք դեռ երեք րոպե ժամանակ ունենք, կուզենայի պատմեք Ձեր ընտանիքի մասին:

Ա. Գ. – Գիտեք, քաղաքական գործիչները իրենց ընտանիքի մասին պարտավոր են, թերևս, հաշվետու լինել հասարակությանը կամ չպետք է զբաղվեն քաղաքականությամբ: Ուստի, ասեմ հետևյալը. կինս Ճարտարագիտական համալսարանում, էկոնոմիկայի ամբիոնում դասախոսում է արդեն բավականին երկար ժամանակ, չեմ ասի, թե քանի տարի, որ չասի, թե ինչի՞ ես արհեստական ինձ մեծացնում: Որդիներս երկուսն էլ ունեն բարձրագույն կրթություն: Ավագը, Աստված կտա, առաջիկա 1-2 ամիսների ընթացքում կդառնա իրավաբանական գիտությունների թեկնածու, թեզն արդեն իսկ պատրաստ է: Կրտսեր որդիս ավարտել է Լոնդոնի «Մետրոպոլիտեն» համալսարանի մագիստրատուրան, միջազգային բիզնեսի գծով մագիստրոս է: Հարսներիս, տղաներիցս քիչ, բայց շատ եմ սիրում, երկուսն էլ շատ պարկեշտ, լավ անձնավորություններ են:

Ռ. Խ. – Իսկ թոռներին տղաներից քիչ, թե՞ տղաներից շատ եք սիրում:

Ա. Գ. – Գիտեք, դրանք տարբեր զգացմունքներ են: Ունեմ թոռ և թոռնուհի: Թոռս՝ Արտաշես Մամիկոնի Գեղամյան Կրտսերը և թոռնուհիս՝ Մարիա Գեղամյանը, երկուսն էլ ուտելու բալաներ են, ինչպես մեր հայ և, ընդհանրապես, համայն աշխարհի բոլոր թոռնիկները: Ես ուզում եմ նրանք ապրեն երջանիկ երկրում, ես ուզում եմ ժամանակի ընթացքում իրենք հպարտանան նախ իրենց ծնողներով և, ինչու չէ, նաև իրենց մեծ հայրիկով ու մեծ մայրիկով:

Շնորհակալություն, հրավերի համար:

«Հայոց Աշխարհ», 18.XI.2008, «Առավոտ», 18.XI.2008, «Փակագիծ», 18.XI.2008, «Իրավունք» 18-20.XI.2008:

СПОКОЙСТВИЕ СТРАНЫ В СПРАВЕДЛИВОСТИ…

ИНТЕРВЬЮ АРТАШЕСА ГЕГАМЯНА ВЕДУЩЕЙ АВТОРСКОЙ ПРОГРАММЫ “ОТКРЫТИЙ ПРОЕКТ” ОБЩЕСТВЕННОГО РАДИО РУЗАННЕ ХАЧАТРЯН (14.11.2008 г.)

Блаженны изгнанные за правду,
ибо их есть Царство Небесное.
Евангелие от Матфея, глава 5,10

РУЗАН ХАЧАТРЯН – В прямом эфире Общественного радио в передаче “Открытый проект” наш гость- председатель партии “Национальное Единение” Арташес Гегамян, а тема беседы-события уходящей недели, главным образом, в Армении и вокруг нее. Итак, господин Гегамян, начнем с самого свежего: сегодня вечером в Ереван прибыли сопредседатели Минской группы ОБСЕ, встретились с министром иностранных дел Эдуардом Налбандяном, будут приняты президентом страны, затем отправятся в Степанакерт. Хочу спросить, эта скоростная дипломатия, переходя на язык физики, большое ускорение – к какому результату приведет? К окончательному миру, договору, войне или еще чему-то? Ваше мнение.

АРТАШЕС ГЕГАМЯН – Позвольте вначале поблагодарить за приглашение. Согласен с вашей оценкой, в последнее время, в особенности после грузино-осетинской пятидневной войны, дипломатические процессы в регионе весьма оживилась, и это имеет свои глубинные корни. Вспомним, в частности, Майендорфскую Декларацию, подписанную 2 ноября т. г. президентами России, Армении и Азербайджана. Этот документ поднял на новый качественный уровень вопрос урегулирования по Нагорному Карабаху. В тот же период, чуть ранее, если помните, президент и премьер-министр Турции выступили с платформой Кавказской безопасности и стабильности, которая чревата резкой активизацией роли Турции в нашем регионе. Приведут ли эти дипломатические ускорения к развязке или нет…

Р. Х. – Или к какой развязке…

А. Г. – Или к какой развязке… Чтобы ответить на эти вопросы, давайте прикинем, что происходит в нашем регионе и в мире в целом. Как известно, мир вступил в глубокий финансовый и экономический кризис, и разве что ленивые не отмечают, что это надолго. Для лидеров мировой экономики, прежде всего США, западноевропейских стран, Японии, да и для России тоже – наступили тяжелые времена. Особенно сложная ситуация в США, где внутренний и внешний долги в совокупности составляют ни много ни мало около 100 триллионов долларов, и это

при том, что годовой внутренний валовый продукт у них в переделах 14-15 триллионов долларов. Финансовые обязательства трастовых фондов, которые должны гарантировать американцам пенсионные выплаты, не обеспечены реальными деньгами. А финансовые обязательства трастовых фондов составляют 53 триллиона долларов. Внешний долг *каждого домового хозяйства* составляет около 400 тысяч долларов, или в своей совокупности 135% ВВП США, то есть порядка 17 трлн. долларов (см. Питер Питерсон: "Мы должны слезть с мертвой лошади", журнал "Профиль", N 29 от 28.07.2008 г. К слову, Питер Питерсон был министром торговли США при президенте Ричарде Никсоне). Федеральный долг США сегодня превышает 11 трлн. долларов, по линии ценных бумаг фондового рынка по данным на июль 2007 г. – 16,4 трлн. долларов, плюс около 6 трлн. долларов составляют долги по ипотечным кредитам. Чтобы выйти из всего этого, на мой взгляд, есть два пути. Первый – стимулировать любой ценой экономику, тем самым создавая условия для возможно быстрого погашения долга. Второй - через перманентные девальвации доллара разделить эту ношу на остальные страны мира. Кстати, в сложившейся ситуации стимулирование экономики – наиболее доступно, но увы, развязыванием военных действий. Иного способа, казалось бы, нет. Если мы окинем ретроспективным взглядом годы Великой депрессии, когда к власти пришел Франклин Делано Рузвельт, то, пожалуй, уясним, что окончательное преодоление депрессии было во многом обусловлено Второй мировой войной, когда вся американская экономика возродилась до такой степени, что уже в 1944 г. (мы знаем, что война завершилась 9 мая 1945г.) в городе Бреттон Вудс (штат Нью-Гемпшир, США) на финансовом форуме держав было определено, что роль мировых денег наряду с золотом выполняет доллар США, который тогда же был признан мировой валютой. С той поры установилась американская гегемония, которая продолжается до наших дней. Так что, повторяю, возможно, либо взвалить долларовые долги США на другие страны, либо им стимулировать собственную экономику. Один из способов стимуляции динамичного экономического роста – это (чему мы все свидетели) попытка Америки распространить свою гегемонию в разных, в особенности богатых энергетическими и другими ресурсами регионах мира, а распространить ее в условиях кризиса финансов можно тогда, когда в отмеченных регионах будет обеспечено присутствие военной силы, причем, доминирующей военной силы. Военная же сила может объявиться, если на то будут причины, в частности, при условии дестабилизации обстановки в тех или иных регионах, в примеру, в регионе Южного Кавказа. Во время грузино-осетинской войны российские военные стратеги все это тонко проанализировали и сумели быстрыми, точными действиями предотвратить подобный сценарий развития событий.

Р. Х. – Прерву Вас, господин Гегамян…

А. Г. – Я уже завершаю. Так, каким может быть продолжение? Полагаю, что возможны два варианта вмешательства. Первый в случае возобновления военных

действий вокруг Нагорного Карабаха, и второй - через обострение ситуации вокруг Ирана. К счастью, на президентских выборах 4 ноября к власти в США пришел Барак Хусейнович Обама, который, похоже, сторонник эволюционных перемен в международных отношениях и качественного изменения роли Америки в мире. Вот какова, на мой взгляд, подоплека событий, разворачивающихся в нашем регионе.

Р. Х. – Господин Гегамян, вы сказали об Америке, однако, тот же американский сопредседатель Минской группы ОБСЕ Мэтью Брайза в Баку, в интерьвю "Day.Az" даже выразил надежду, я приведу дословную цитату (если перевод был верным), что он чувствует возможное решение вопроса Карабаха в будущем году. Он не так уж пессимистичен…

А. Г. – Никогда не следует переоценивать сказанное Мэтью Брайзой. Он большой мастер противоречивых заявлений, что является известным приемом в дипломатии. Поступая подобным образом он просто зондирует общественное мнение, независимо от того, выглядит ли сказанное им проармянским или наоборот…

Р. Х. – Хорошо, а когда, по-вашему, решится вопрос?

А. Г. – Думаю, что вопрос не подлежит решению в ближайшие времена.

Р. Х. – Даже в будущем году?

А. Г. – Конечно. Потому что решение Нагорно-Карабахского вопроса обусловлено (к счастью или несчастью, время покажет) тем, к каким соглашениям придут Россия и США, а также Евросоюз относительно своих региональных интересов, и не только региональных. Барак Обама уже не раз заявлял, что Америка выведет свои войска из Ирака в течении 16 месяцев. Это неизбежно приведет к активизации в Ираке курдского фактора. Отметим, что северная часть территории Ирака, заселенная исключительно курдами, является ныне наиболее организованной и обладающей относительно развитыми государствообразующими структурами. Турция, несомненно, сознает, что подобная активизация цепной реакцией отзовется на северо-востоке страны, среди курдов, населяющих исторические армянские территории: будь то Карс, Эрзрум или Ван, Диарбекир, где подавляющее большинство населения курды. Понимая, что "сепаратистское" движение курдов может привести к образованию крупного суверенного курдского государства, Турция в противовес захочет установить дипломатические отношения с Арменией, открыть границу, тем самым оживить экономическую жизнь в приграничных с Арменией областях, что, безусловно, облегчит социальное положение проживающих там курдов, задобрит их. Союзником этого своего плана турки хотят сделать Россию, которая, конечно, также вовсе не заинтересована в обострении ситуации в непосредственной близости от своих южных границ. Вот в этом клубке проблем следует искать пути возможного решения вопроса Нагорного Карабаха. И оно возможно только в контексте договоренностей между Россией, США и Евросоюзом. А также, почему бы и нет, не без участия Турции. Потому что, выводя свои войска из Ирака, США будут осознавать, что роль Турции в регионе должна возрасти, чтобы возможно

было со стороны Турции осуществлять контроль за разворачивающимся в северном Ираке событиями.

Обозначу еще один основной фактор. При дипломатическом сближении Турции с Россией мы с вами станем свидетелями резкого понижения роли Грузии в нашем регионе. Россия уже сможет, минуя Грузию, установить через Армению тесные связи с Турцией. К примеру, в той же энергетической сфере можно будет развернуть взаимовыгодную торговлю с Турцией. Это тем более возможно с учетом того, что наша энергетическая система в большей мере является собственностью России, а Армянская АЭС на длительную перспективу передана под доверительное управление российским организациям.

Р. Х. – Г-н Гегамян, уточним. Вы, кажется, сказали о привлечении Турции в решение вопроса нагорно-карабахского конфликта. Как Вы это представляете?

А. Г. – Вопрос возможного участия Турции, не секрет, что озвучивается, высказывается.

Р. Х. – В таком случае, какого Вы мнения о сделанном на днях заявлении премьер-министра Турции г-на Эрдогана? Напомню, что на вопрос журналистов, что может сделать Турция в решении Карабахского вопроса, став членом Совета Безопасности ООН, Эрдоган, ответил, что она может ускорить решение. Видите ли Вы такую возможность?

А. Г. – Я вижу в этом только положительную тенденцию, ибо влияние Турции на Азербайджан довольно велико, а на Армению – нулевое. Поэтому ускорение надо рассматривать в том ключе, что Турция употребит свое влияние, чтобы склонить Азербайджан к уступкам. Круг этих уступок очерчен, и президент Армении Серж Саркисян не раз говорил об известных принципах урегулирования вопроса, при необходимости можем…

Р. Х. – Вам известны эти принципы?

А. Г. – Они неоднократно повторялись, первый это …

Р. Х. – Вы имеете в виду три принципа, выдвигаемые официальным Ереваном?

А. Г. – Да.

Р. Х. – Мне послышались “Мадридские” принципы. Здесь мне хотелось бы конкретизировать вопрос: г-н Брайза в Баку заявил, что страны-сопредседатели Минской группы ОБСЕ не должны посылать в зону конфликта миротворцев из своих стран, а также в наш регион миротворцев не могут направлять и страны, соседствующие со сторонами конфликта. В таком случае Вы представляете себе, из какой страны должны быть миротворцы, с каким мандатом?

А. Г. – Уважаемая Рузанна, я прежде всего не возьму в толк, почему вы так серьезно воспринимаете все заявления Брайзы? Будто он святой какой-то, а мы должны к нему вроде, как к Библии относиться…

Р. Х. – Это сказал один из сопредседателей Минской группы.

А. Г. – Ну и что же? Подумаешь, взял да и сказал… Чем больше мы будем под-

черкивать заявления Брайзы, чем больше из-за них будем “хлестать” друг друга, тем более станем игрушкой в руках сверхдержав, будь то США, Евросоюз или Россия…

Р. Х. – Это информация, о которой я хотела бы выслушать Ваш комментарий.

А. Г. – Никакая информация не идет в эфир случайно. Пусть всем нам доподлинно будет известно, что будь то США, Россия или Евросоюз, все они преследуют только и исключительно свои государственные интересы и не получилось бы в итоге так, чтобы мы своими недальновидными действиями стали бы не юридическими субъектами в ходе переговорного процесса, а превратились бы в объекты их дипломатических упражнений. Чем больше мы будем комментировать фразы Брайзы, а также Мерзлякова, Фасье, тем больше проиграем. На этот счет мы имеем четко сформулированных три принципа. И нашей политической элите пора понять, что дискуссии должны вестись только в одном направлении, а именно в том ключе, когда каждый из нас будет нацелен на то, чтобы сделать все возможное для претворения в жизнь этих трех принципов: права народа Нагорного Карабаха на самоопределение вне состава Азербайджана, обеспечение международных гарантий безопасности НК и установление сухопутной связи между Арменией и Нагорным Карабахом. Вот на что мы должны быть нацелены.

Если царство разделится само в себе, не может
устоять царство то; и если дом разделится сам
в себе, не может устоять дом тот…

Евангелие от Марка, глава 3, 24-25

Р. Х. – Г-н Гегамян, может быть, нашу беседу переведем в плоскость анализа внутриполитической ситуации?

А. Г. – С удовольствием.

Р. Х. – У вас есть предложения по преодолению поляризации, … не хочу давать оценок, ситуации.

А. Г. – Несомненно, есть. Иное дело, как их воспримут партнеры: имею в виду коллег из радикальной оппозиции и власть. Я неслучайно использовал слово “партнеры”. Когда в опасности решение вопроса Нагорного Карабаха, то, по большому счету, уже неважно, кто власть, кто оппозиция… Есть рассудительная нация, которую призвана предводительствовать сплоченная воедино политическая элита. Конечно, я вижу нужные сейчас решения. Давайте поразмышляем о них. Так-вот, еще в Москве на встрече с представителями армянской диаспоры г-н Серж Саркисян призвал объединить весь потенциал армянского народа для решения важнейших для всего армянства вопросов. Эта тема нашла свое весомое продолжение в дни работы 63-й Генеральной Ассамблеи ООН, когда Президент встречался с политическими и экономическими кругами армян Америки. Обсуждение подобных же вопросов состоялось и в Брюсселе, в ходе аналогичной встречи с

представителями диаспоры.

Р. Х. – Каковы ваши предложения?

А. Г. – Извольте высказать свои предложения. В ходе этих встреч Серж Саргсян позиционировал себя в качестве лидера всего армянства. Главной же миссией общенационального лидера, как мне кажется, является способность консолидировать нацию. Сегодня первый шаг на пути к консолидации нации мне видится следующим образом: к нашим партнерам, коллегам, в том числе и боевым товарищам Сержа Саргсяна, которые осуждены в рамках дела "1-2 марта" или ожидают приговора суда, должен быть проявлен такой же подход, который проявил г-н Кочарян, придя к власти. Напомню, что в связи с изменением обстановки в рамках соответствующих правовых норм (статья 74 Уголовного кодекса РА) было прекращено уголовное преследование в отношении многих, проходящих по так называемому делу "Ваан Ованнисян +30". И в дальнейшем Ваан Ованнисян и Армен Рустамян прекрасно проявили себя, отстаивая интересы нашей страны, к примеру, в Парламентских Ассамблеях ОБСЕ и Совета Европы. Сегодня, если аналогичным образом подойти к Акопу Акопяну, Сасуну Микаеляну, Мяснику Малхасяну, Смбату Айвазяну, Ашоту Закаряну, не буду всех перечислять, то это будет серьезным шагом на пути становления Сержа Саргсяна в качестве общенационального лидера. Это реалии, диктующие действия, которые сегодня необходимы не столько самому президенту, сколько востребованы для оздоровления общей атмосферы в республике, но и, естественно, такой шаг в значительной мере разрядит и обстановку в Армении, послужит делу консолидации нации. Могу с уверенностью сказать, что этот шаг, повторюсь, не только разрядит обстановку в стране, но и, что очень важно, позволит Армении предстать перед мировым сообществом в качестве единого, консолидированного общества. И не будет больше поводов отдельным политиканам иронизировать о том, что успехов во внешней политике недостаточно для президента РА, потому что все еще сохраняется внутренняя нестабильность.

Вместо P.S : И познаете истину, и истина сделает вас свободными…

Евангелие от Иоанна, глава 8, 32

"Комсомольская Правда", 21-27.XI.2008.

ՓԱՐԻԶՈՒՄ ՁՄԵՌՆԵՐԸ, ԼԵՎՈՆ, ՇԱՏ ՑՈՒՐՏ ՉԵՆ...

ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԵՏ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՀՆՉԱԾ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՏԵՔՍՏԸ (20.11.2008 թ.)

ԼՏՊ-ական մամուլն արդեն երկու ամիս է ինչ հետևողականորեն ողողված է տարբեր մեկնաբանություններով, որոնց հեղինակները ոչ միայն Լևոնի Կոնգրեսի անդամ կուսակցություններ են, այլև երբեմն-երբեմն նաև, թվում է թե, չեզոք մեկնաբաններ: Սակայն բոլորի վերջնական պնդումը մեկն է, այն է՝ իշխանությունների կողմից հայ ժողովրդի թիկունքում դավեր են նյութվում՝ նպատակ ունենալով Արցախը «ծախել» ազերիներին: Ավա՜ղ, շատ հաճախ այդ հարցերը իշխանությունների կողմից մնում են անպատասխան կամ խիստ անհամարժեք հնչեցված «մեղադրանքներին»: Ո՞րն է նման երևույթի վտանգավորությունը:

Առաջին: Ասես թե նույն ազերիներին և նրանց թիկունքում կանգնած, նավթային խոշոր գումարներով ֆինանսավորվող միջազգային ամենատարբեր կառույցներում բույն դրած քաղաքական ուժերին գլխի են գցում. այ, տեսեք, Ղարաբաղի «ծախողների» դեմ անգամ իսկ ժողովուրդը ոտքի չի կանգնում, լռում է Արցախը: Ավելին, Նախագահի շուրջ կոալիցիոն քաղաքական ուժերը նույնպես վճռականություն չեն դրսևորում նման տեղեկությունների հեղինակներին կամ հակահարված հասցնեն, կամ երկրի Նախագահից, արտաքին գործերի նախարարից հաշիվ պահանջեն: Այլ կերպ ասած՝ իշխանության մաս կազմող քաղաքական ուժերը, ասես թե, ամլացած են: Թվում է, թե օտարին էլ գլխի են գցում՝ դե եկել է ձեր գործելու ժամանակը, Հայաստանի իշխանությունների վրա ճնշում գործադրելու ժամանակը: Անշուշտ, գլխի են գցում նաև, որ լևոնականները կարող են այդ գործընթացն ավելի արագացնել՝ ՀՀ Նախագահի շուրջ անվստահության մթնոլորտ ձևավորելով: Հետն էլ ակնարկում են, որ եթե նրանց՝ հեղափոխականներին պատշաճ չվերաբերվեն, ապա արմատականները ամեն կերպ կխոչընդոտեն ԼՂ հիմնահարցի խաղաղ կարգավորման գործընթացին:

Երկրորդ: Լևոնա-ՀՀՇ-ական թերթերը, ասես թե, մի խաչակրաց արշավ են սկսել Հայոց բանակի գեներալների դեմ: Գրեթե բոլորին ներկայացնում են հոռի, բացասական երանգներով: Անգամ իսկ նշում են, որ նրանցից յուրաքանչյուրի նկատմամբ կարելի է քրեական գործեր հարուցել, դատել: Եվ

դա մեկնաբանում են նրանով, որ այս հանգամանքի առկայությունն է, որ գեներալները բոլորն էլ «սսկվել» են, բերանները ջուր առել լռում են և չեն ընդվզում Գերագույն Գլխավոր հրամանատարի «պարտվողական» քաղաքականության դեմ: Տղերքն ասել կուզեն, որ ազերիներ՝ ձեր քարոզչությամբ խփեք հենց այս ուղղությամբ, բարձրաձայնեք, որ Արցախի ազատագրական պայքարի հաղթանակած ռազմական հրամանատարները բարոյազուրկ, հանցագործ տարրեր են, որոնց հետաքրքրում է միայն սեփական բիզնեսը: Ավելին, ասես թե, ստանձնել են գյուղնախարարության բուսաբուծության վարչության պետի պարտականություններ՝ տրտնջում են, որ նրանք այլևս պատերազմող չեն: Հետն էլ միջին սպայական կազմի, զինվորականների մոտ փորձում են առաջացնել խորը հիասթափություն բարձրագույն հրամանատարական կազմի հանդեպ: Թե ի՞նչ տխուր հետևանքների սա կարող է հանգեցնել, կարծում եմ, բոլորիս համար պարզ է:

Երրորդ: Առավել վտանգավոր քայլերի են դիմում լևոնականները, երբ իրենց հրապարակումներով փորձում են խուճապային տրամադրություններ սերմանել արդեն իսկ Արցախում, արցախցիների շրջանում: Ավելին, տպագրվող ճիզվիտական հրապարակումներով Արցախի ինքնապաշտպանության բանակի գեներալների շրջանում էլ են փորձում խուճապային տրամադրություններ սերմանել, անվստահություն՝ հանդեպ Արցախի Նախագահը, հանդեպ ՀՀ Նախագահը, հուսահատություն արմատավորել արցախահայության շրջանում: Եկեք տեսեք, որ Լևոնենք արդեն դարդ են քաշում, որ գեներալները Արցախի ազատագրված տարածքներում դեռ ոչ մի աշնանացան չեն արել: Ասել կուզեն, հասկացա՞ք արցախցիներ, թե ինչ կցուցանե գեներալների կողմից աշնանացան չցանելը, դե հիմա գլխներիդ ճարը տեսեք:

Եթե այս ամենը համադրենք հոկտեմբերի 17-ին մատենադարանամերձ հրապարակում ԼՏՊ-ի ճառի այն դրույթի հետ, երբ նա, իբր, Արցախի հիմնահարցի լուծման մոտալուտ հեռանկարի գիտակցումով կոչ արեց դադարեցնել հանրահավաքները, որ չխանգարեն իշխանություններին: Իր հաշվարկներում, այն է՝ որ ամենամոտ ապագայում Արցախի հարցը լուծվելու է, այն էլ ոչ հայանպաստ տարբերակով, նա սխալվեց: Սին դուրս եկան փայփայած այն հույսերը, որ ընդունվելիք այդ փաստաթուղթը կհանգեցնի ժողովրդի վճռական ապստամբությանը: Նոյեմբերի 2-ին Մայենդորֆյան Հռչակագրի ամրագրմամբ արմատականների ծրագրերը հօդս ցնդեցին: Եվ այստեղ է, որ սկսվեց Օնորե դը Բալզակի գրչին արժանի լևոնական սցենարով իրականացվող մարդկային կատակերգությունը: Այսպես, վերջին շրջանում ՀՀՇ-ական մամուլը անվերջ պնդում էր ԼՂ հարցի կարգավորման շուտափույթ և ոչ հայանպաստ լինելու մասին, հիմա էլ տղաները հուսահատ դժգոհում են, երբ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներն առանձին-առանձին, հետո երեքն էլ միասին հայտարարեցին, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործն այդքան էլ դյուրին խնդիր չէ, որ երկու-երեք

ամսում կամ էլ գարնանը կլուծվի: Եվ ի՞նչ եք կարծում, բացի հուսահատ, խուճապային հոդվածներից, ի՞նչ նոր բան մոգոնեցին տղերքը. արդեն «ներքևից», իբր, հնչում են պահանջներ վերսկսել հանրահավաքները: Այս ամենի կապակցությամբ տրամաբանական խնդիրներ են առաջ գալիս, թվարկեմ մի քանիսը, այն էլ՝ հարցերի տեսքով:

Հարց առաջին: Պարոն ԼՏՊ, եթե հանրահավաք եք ուզում կազմակերպել, միգուցե՞ հանուն Մինսկի խմբի համանախագահողների, որ որոշեցին տևական ժամանակով հետաձգել ԼՂ հիմնահարցի կարգավորման վերջնական փաստաթուղթ ստորագրելու հարցը: Չէ՞ որ Լևոնենց իմացածով այն պետք է լիներ հայերիս համար շատ անցանկալի: Եթե հանրահավաք անելու դրդպատճառը դա՞ է, դե ինչ, ձեր խոսքով ասած, կարելի է դրան «ըմբռնումով» մոտենալ:

Հարց երկրորդ: Եթե հանրահավաքները վերսկսելու նպատակը երկրում վիճակը ապակայունացնելն է, ինչը կարող է չափազանց վտանգավոր հետևանքների հանգեցնել տնտեսական և ֆինանսական սպասվող լուրջ ճգնաժամի պայմաններում (կառավարության բացահայտ ոչ համարժեք գործողությունների, ավելի ճիշտ դրանց իսպառ բացակայության հետևանքով), ապա ասեմ, որ այստեղ դուք կրակի հետ եք խաղում: Սթափվեք:

Հարց երրորդ: Ինչ խոսք, ակնհայտ է, որ Լևոնը իր քաղաքական բոլոր հաշվարկներում միշտ սխալ է գտնվել: Այսպես, լինի դա 1996 թվականի նախագահական կեղծված ընտրությունները և դրան հաջորդած ժողովրդի սեպտեմբերի 25-26-ի ջարդը, լինի ներքաղաքական այնպիսի պայմանների ձևավորումը, որն անխուսափելի դարձրեց 1998 թ. իշխանափոխությունը: Հիշենք նաև 1998 թ. ԼՏՊ-ական մամուլով թունավոր արշավանքն ուղղված ոչ, ոչ իշխանությունների դեմ, այլ ընդդիմության և հատկապես «Ազգային Միաբանության»: Չմոռանանք, որ անգամ իսկ 2003 թ. լևոնականների ջանքերն ավելի շատ ուղղված էին կրկին մեր կուսակցության շուրջ համախմբված ուժերի դեմ: Սխալվեց Լևոնը նաև 2008 թ. նախագահական ընտրություններից հետո, երբ մեր դյուրահավատ մարդկանց, ովքեր, իրավամբ, իշխանություններից դժգոհելու շատ և շատ պատճառներ ունեին, հասցրեց այն աստիճանի, որ Երևանի կենտրոնում մարտի 1-2-ին տեղի ունեցավ մեծ ողբերգություն: Այս կարճ պատմական ակնարկից հետո ճշտենք, թե հիմա ի՞նչ ուղղությամբ է պրպտելու ԼՏՊ-ն:

Խոստովանենք, որ Լևոնը, կարծես թե, այս անգամ ուզում է իր համար և տվյալ պարագայում, ինչու չէ, նաև հայ ժողովրդի համար լավ հաշվարկված, ճիշտ քայլ կատարի: Ո՞րն է լինելու այդ քայլը: Նա փորձ կանի «ժողովրդի պահանջով» ևս մի հանրահավաք կազմակերպել, որի ձախողումից հետո այլևս ակնհայտ կդառնա, որ նա Հայաստանի Հանրապետությունում անելիք չունի: Անշուշտ, ԼՏՊ-ն գիտակցում է, թե ինչ ծանր կացության մեջ է հայտն-

վել: Բավական է հիշատակել, որ օրերս նրա գլխավոր գաղափարախոսներից մեկը դարձավ դեռ 2004 թ. ապրիլի 12-13-ի դեպքերից հետո մի քանի օր ոստիկանության մութ սենյակում անցկացնելով վախից ղազագիր ստորագրած ՀՀՇ-ական թերթերից մեկի նորակոչ խմբագիրը:

ՀԵՏԳՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ: Այն, որ լևոնականները ժողովրդին ասելիք չունեն, վերջնականորեն պարզվեց, երբ նա և իր թիմակիցները հրաժարվեցին ընդունել Նախագահ Սերժ Սարգսյանի հրավերը ս.թ. նոյեմբերի 20-ին անցկացնել քննարկումներ Լեռնային Ղարաբաղի շուրջ ընթացող բանակցությունների վերաբերյալ: Պարզապես ես ափսոսանք եմ ապրում բանտերում հայտնված այն մարդկանց համար, ովքեր սեփական իսկ ազնվության արդյունքում մտքով անգամ իսկ չեն անցկացնում, որ բանտերում նրանց հայտնվելու ցավալի և մտահոգիչ փաստը այսօր ծեռնտու է միայն ու միայն Լևոնին ու մեր երկրից դուրս նրան հովանավորողներին, որոնք այդ հանգամանքը դարձրել են Հայաստանի վրա ճնշումներ գործադրելու միջոց:

Չեմ կարծում, որ այսօր երկրի անվտանգության տեսակետից, էլ չեմ խոսում մարդկային առումով էլ հանրապետության իշխանություններին գոհացնում է արցախյան ազատամարտի քաջարի մասնակիցների գտնվելը անազատության մեջ: Ուստի, Լևոն, մի խոչընդոտիր Արցախի ազատամարտի վետերաններին ՀՀ Քրեական օրենսգրքի հոդված 74-ի հիման վրա ազատ արձակելուն:

Ի մի բերելով վերը նշվածը, ամփոփեմ խոսքս: Դե ի՞նչ, Լևոն Փարիզում, էլ չեմ ասում Կալիֆոռնիայում, ձմեռները շատ ցուրտ չեն…

«Հայոց Աշխարհ», 21. XI.2008, «Ազատամտություն», 21. XI.2008:

А ЗИМЫ, ЛЕВОН, В ПАРИЖЕ НЕ ОЧЕНЬ-ТО ХОЛОДНЫЕ…

СОСТОЯЛАСЬ ВСТРЕЧА ПРЕЗИДЕНТА РА С ЛИДЕРАМИ ПОЛИТИЧЕСКИХ ПАРТИЙ. ПРЕДСТАВЛЯЕМ ПОЛНУЮ ВЕРСИЮ ВЫСТУПЛЕНИЯ НА ВСТРЕЧЕ РУКОВОДИТЕЛЯ ПАРТИИ "НАЦИОНАЛЬНОЕ ЕДИНЕНИЕ" АРТАШЕСА ГЕГАМЯНА (20.11.2008 г.)

Тер-Петросяновская пресса уже второй месяц последовательно забивается различными комментариями, авторами которых являются не только члены входящих в "левоновский" конгресс партий, но и лица вроде бы нейтральные. Однако суть этих публикаций сводится к тому, что за спиной армянского народа власти плетут заговор, намереваясь "продать" Арцах азербайджанцам. К сожалению, очень часто эти порывы "откровения" левоновской пропаганды игнорируются властями, либо не удостаиваются адекватной реакции на подобные "обвинения". В чем опасность такого нереагирования?

Первое. У тех же азеров, и стоящих за их спиной и подпитываемых крупными нефтедолларовыми вливаниями политических сил может сложиться впечатление, что, дескать посмотрите: против "продающих" Карабах армянских властей даже народ не протестует, да и сам Арцах безмолвствует. Более того, объединившиеся вокруг президента Армении члены правящей коалиции также не проявляют решительности, не дают должного отпора подобным инсинуациям экс- президента и не требуют отчета у действующего президента страны или министра иностранных дел. Иначе говоря, позиция властных политических сил как бы аморфна и оставляет впечатление, что несостоятельна и неспособна к решительным действиям. Это может быть со стороны азеров воспринято в качестве подсказки, намека на то, что пришло время ваших действий, вашего давления на армянское руководство. Несомненно, аодовцы дают также понять, что они могут и активизировать этот процесс, создавая вокруг президента РА атмосферу всеобщего недоверия в стране. Складывается впечатление, что наши радикалы дают понять, что, если ко всему этому международные силы, заинтересованные в урегулировании нагорно-карабахского конфликта, не отнесутся должным образом, тогда они всячески будут препятствовать процессу мирного урегулирования вопроса Нагорного Карабаха.

Второе. Левоно-аодовская пресса, казалось, развернула крестовый поход против генералов армянской армии. Почти все из них характеризируются отрицательно, вплоть до неприкрытых угроз и шантажа в том, что против каждого из них

можно возбудить уголовное дело и судить. Дальше, больше. Идет массированное промывание мозгов населения, имеющее цель вбить в сознание людей мысль, что генералы молчат и "набрали в рот воды" и не противятся "пораженческой" политике верховного главнокомандующего именно потому, что грешны и бояться "раскулачивания и судебных преследований" со стороны властей. То есть, наши "оппозиционеры" как бы подсказывают азерам: бейте в этом направлении, ссылайтесь на то, что армянская военная элита морально разложилась, наводнена криминалитетом и заинтересована лишь своим бизнесом, а стало быть воевать не будет. Заодно как в среднем офицерском звене, так и среди солдат пытаются посеять семена сомнения и разочарования по отношению к генералитету. К каким печальным последствиям все это может привести, полагаю, ни для кого не секрет.

Третье. Еще более опасны попытки левоновцев посеять панические настроения в Арцахе. Своими иезуитскими публикациями они стремятся деморализовать генералов Армии самообороны Арцаха, формировать атмосферу недоверия к президенту НКР и президенту РА в среде карабахцев. Гляньте-ка, левоновцы уже вовсю сокрушаются, что генералы еще не засеяли озимыми освобожденные территории Арцаха и прилегающих земель. То есть, намекают арцахцам на подоплеку о том, что они смирились с тем, что "сдают" освобожденные территории, да и Арцах, и побуждают к паническим действиям по принципу: спасайтесь, пока возможно.

Теперь сопоставьте все это с той частью выступления ЛТП у Матенадарана (17 октября), где он, так сказать, сознавая близость решения Карабахского вопроса, призвал своих сторонников к прекращению митингов с целью, якобы, не мешать властям. Ну что сказать - воплощенное благородство.

Его прогнозы о том, что решение арцахского вопроса не за горами, но оно будет отнюдь не в интересах армян. Более того, его предположения, что такой поворот событий приведет к всенародному возмущению и восстанию, также лопнуло, как мыльный пузырь, после подписания Майендорфской декларации от 2 ноября т.г. И тут в стане руководства радикальной оппозиции началась достойная перу Оноре де Бальзака "человеческая комедия". В последние дни аодовская пресса постоянно твердила о скорейшем и неблагоприятном для нас решении вопроса Карабаха, а теперь когда это оказалось пшиком, ребята возроптали. Когда сопредседатели Минской группы ОБСЕ, каждый в отдельности и все вместе заявили, что мирное урегулирование – дело не столь уж простое, чтобы решать в два-три месяца или к будущей весне, скрыть свое отчаяние радикалам уже было невозможно. И, как вы полагаете, к чему же пришли ребята после публикаций серии панически-безнадежных статей? Оказывается "снизу", в рядах оппозиции стали раздаваться призывы к возобновлению митингов. Отсюда логически вытекает ряд вопросов.

Вопрос первый. Вы что как спасители нации, собираетесь митинговать в знак солидарности и благодарности сопредседателям стран Минской группы? Ведь именно они объявили, что принятие итогового конечного документа по нагорнока-

рабахскому урегулированию откладывается на длительное время. Ведь по вашим же прогнозам этот документ был весьма нежелателен для армянской стороны… Если причина созыва митингов в этом, то к ней выражаясь лексиконом ЛТП, следует отнестись с пониманием.

Вопрос второй. Если же митинги возобновляются с целью дестабилизации обстановки в стране, то считаю своим долгом предупредить, что Вы, господин ЛТП, играете с огнем … Уже очевидно, что на фоне угрожающих последствий глобального экономического и финансового кризиса для экономики Армении, которая, увы, имеет тенденцию к углублению (вследствие абсолютно неадекватных действий армянского правительства, а скорее ее бездействия) любая дестабилизация ситуации может иметь для армянской государственности катастрофический исход.

Вопрос третий. Очевидно, что, начиная с первых лет независимости РА, Левон попадал впросак во всех своих политических расчетах. Будь то в случае сфальсифицированных президентских выборов в 1996 году, или последовавшее за этим избиение, разгон народа 25-26 сентября. Или не помешало бы вспомнить создание нездоровой и взрывоопасной внутриполитической атмосферы, которая сделала неизбежной смену власти в 1998 г. Вспомним также травлю тер-петросяновской прессой не властей, а оппозиции, в особенности партии “Национальное Единение”, когда аодовцы после своего провала 1998 года были вынуждены уйти в тень. Не будем также забывать, что даже в 2003 году мишенью “левоновцев” были не столько власти, сколько силы, объединившиеся вокруг нашей партии. Причина была проста: дискредитировать все оппозиционные силы, опустошить оппозиционное политическое поле и тем самым подготовить благодатную почву для своего нового пришествия… Осечку дал Левон и после президентских выборов 2008 года, когда довел часть доверчивой человеческой массы (имеющей, увы, много причин быть недовольными властями) до такой степени, что это привело к трагическим событиям 1-2 марта в центре Еревана…

Однако, в последнее время, после своего “майендорфского” отрезвления, когда его очередное предсказание о якобы изо дня в день уменьшающейся роли России в южнокавказских делах, потерпело фиаско, кажется, что Левон хочет сделать правильный шаг для себя и, почему бы и нет, и для армянского народа тоже. Каким представляется его очередной проект? Он попытается организовать еще один митинг, после его неизбежного провала станет окончательно ясно, что ему больше нечего делать в Армении. Несомненно, он и сейчас осознает, в какой безвыходной ситуации оказался, раз уж дошел до того, что взял себе в главные идеологи слабака, который после событий 12-13 апреля 2004 года, будучи на пару суток изолированным в темной комнате полиции, расписался в своей “несгибаемой” воле под “хазагиром” (ղազագիր).

ВМЕСТО ПОСЛЕСЛОВИЯ. То, что “левоновцам” больше нечего сказать, окончательно выявилось после отказа его и его команды от предложения президента

Сержа Саргсяна принять участие в обсуждении проблем, связанных с карабахским урегулированием, имевшем место 20 ноября т.г.

Подытоживая сказанное, сожалею о тех, кто оказался за решеткой, более того, в силу ряда причин все еще не осознал, что нынешнее их состояние вызывает искреннюю печаль у многих и многих, в то же время это выгодно лишь Левону и его закордонным опекунам, которые не преминут воспользоваться этим и, через своих разного рода лоббистов, обязательно постараются надавить на руководство Армении в авторитетных международных организациях. Это, безусловно, отрицательно скажется и на переговорном процессе. И ежу ясно, что подобное положение дел уж никак не в интересах властей и Республики Армения в целом.

В заключение так и хочется сказать: Левон, не препятствуй освобождению ветеранов Арцахской войны в соответствии со ст. 74 Уголовного кодекса РА. И, к слову, в Париже Левон, я уже не говорю о Калифорнии, зимы не очень-то холодные…

"Новое Время", 21. XI. 2008; "Свободомыслие", 21. XI.2008.

ՉՍՏԱՑՎԻ ՀԱՆԿԱՐԾ, ԹԵ ԵՍ ՓՆՈՎԵԼՈՒ ՄԻՏՈՒՄ ՈՒՆԵՄ, ՊԱՐԶԱՊԵՍ ՕԳՆԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅԱՄԲ ԵՄ ՄԻՏՎԱԾ ...

Այս նյութը տպագրելու մտադրություն մենք ամենևին էլ չունեինք: Սակայն, երբ անբարեխիղճ առանձին լրագրողներ «նեղսրտեցին», թե ինչո՞ւ Արտաշես Գեղամյանը լռում է, չի հայտնում իր կարծիքը Հայաստանի տնտեսության վրա Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հնարավոր հետևանքների մասին, երբ դրան էլ հաջորդեց ԼՏՊ-Ի տարաբնույթ անդաստիարակ խոսնակների՝ սուրենսարգսյանների անձնական վիրավորանքները, մեզ համար ակնհայտ դարձավ, որ ելույթը անհրաժեշտ է նաև տպագրել: Լևոնի աղանդի վկաներին, հավանաբար, զայրացրել էր, որ նոյեմբերի 28-ին Հանրային երկրորդ հեռուստաալիքով հեռարձակված հարցազրույցը՝ տրված «Խոսքի իրավունքը» հաղորդաշարի հեղինակ Շավարշ Գևորգյանին, իշխանությունների կողմից, ի պատիվ իրենց, ընկալվել էր որպես երկրի ճակատագրով մտահոգ մարդու խոսք:

Սիրելի ընթերցող, Ձեզ ենք ներկայացնում Արտաշես Գեղամյանի հարցազրույցն ամբողջությամբ:

ՇԱՎԱՐՇ ԳԵՎՈՐԳՅԱՆ – Բարի երեկո, «Խոսքի իրավունքն» է Հայկական 2-րդ հեռուստաալիքի եթերում: 4-րդ ստուդիայում այսօր, այս ժամին հյուրընկալել ենք «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանին: Բարև Ձեզ, պարոն Գեղամյան, շնորհակալություն, որ այսօր այստեղ եք:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ – Բարև ձեզ:

Շ. Գ. – Այսօր աշխարհում առկա ֆինանսական ճգնաժամը վերլուծելու և, ինչո՞ւ չէ, նաև դատողություններ անելու հնարավորություններ և առիթներ է ստեղծվում բոլորիս համար: Կուզեմ լսել Ձեր մեկնաբանություններն ու վերլուծությունները՝ ինչի՞ց սկսվեց և ինչպե՞ս սկսեց այս ճգնաժամը:

Ա. Գ. – Միանգամայն ճիշտ եք, ֆինանսական ճգնաժամը շարունակվում է և արդեն վերածվեց տնտեսական ճգնաժամի, դրան կհաջորդի ռեցեսիան, այն է՝ համաշխարհային համախառն ներքին արդյունքի տևական ժամանակահատվածում անկումը: Թերևս, դրա առաջին նախադրյալները ի հայտ եկան դեռ անցյալ տարի: Ինչևէ, հիմնական պատճառն այն է, որ, մասնավորապես, աշխարհի թիվ մեկ երկիրը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները, ուռճացրեցին, այսպես կոչված, ֆինանսական շուկան, որի միջոցով տեղի է ունենում ֆինանսական միջոցների բաշխում տնտեսական հարաբերություններ-

րի մասնակիցների միջև: Ըստ որում, վերջին ութ տարիների ընթացքում ամերիկացիների սպառողական ծախսերը սկսել էին շոշափելիորեն գերազանցել երկրի համախառն ներքին արդյունքի ծավալները: Այլ կերպ ասած՝ ԱՄՆ գլխավոր խնդիրը կայանում էր նրանում, որ նրանք ծախսում էին ավելի շատ, քան վաստակում էին: Իսկ ազգաբնակչության խնայողություններն էլ գրեթե զրոյական էին դարձել: Ուստի, ԱՄՆ-ն հարկադրված էր արտասահմանյան գումարներ հայթայթել, որ կարողանար փոխհատուցել կատարված ծախսերը: Այսպես, եթե ԱՄՆ-ին աշխարհում արտադրված ՀՆԱ-ի 22-25 %-ն է բաժին ընկնում, ապա նրանք սպառում են համաշխարհային ՀՆԱ-ի 37-40%-ը: Կնշանակի, ժողովրդական լեզվով ասած, նրանք իրենց ոտքերը վերմակի չափով չեն մեկնում: Անշուշտ, եթե նման ծավալի սպառում ունեն, ապա, ըստ էության, ապրում են պարտքով, որը վաղ թե ուշ պետք է մարեին, որևէ մեկի վրա պետք է բարդվեին, որևէ երկրի կամ երկրների վրա: Եվ արդյունքում ստեղծվեց մի իրավիճակ, երբ Միացյալ Նահանգները տարեկան կտրվածքով ունենալով միջին հաշվով 14 տրիլիոն դոլարի համախառն ներքին արդյունք, սպառում էին ավելի, քան ստեղծում և դրա հետևանքով այսօր արդեն իսկ կուտակել են 100 տրիլիոն, կրկնում եմ, 100 տրիլիոն դոլարի հասնող պարտքեր: Ըստ որում, միայն 53 տրիլիոն դոլար պարտք ընկնում է տրաստային ֆոնդերին: Դրանք էլ այն ֆոնդերն են, որոնք կոչված են ապահովել գումարներով Ամերիկայի Միացյալ Նահանգների կենսաթոշակային ֆոնդերը: Դրան պետք է ավելացնել 400 հազար դոլարի հասնող արտաքին պարտքը, որը բաժին է ընկնում Ամերիկայի Միացյալ Նահանգների յուրաքանչյուր տնային տնտեսության վրա, և դա այն պարագայում, երբ դրանց տարեկան եկամուտները կազմում են միջինը 40-50 հազար դոլար: Բնականաբար, դա չէր կարող չանդրադառնալ աշխարհի մյուս երկրների էկոնոմիկաների վրա, որովհետև գլոբալիզացիա ասածը իր հետ բերել է այն, որ պետությունների տնտեսությունների փոխշաղկապվածությունը ծայրաստիճան մեծացել է: Առավել ևս, հաշվի առնելով այն, որ 1944 թ. սկսած՝ համաձայն Բրետտոն-Վուդսում (ԱՄՆ, Նյու-Հեմբշիր) կնքված համաձայնագրի, դոլարը մինչ օրս էլ հանդիսանում է համաշխարհային հիմնական տարադրամը: Նշենք, որ մեր օրերում ԱՄՆ դոլարին փորձում է փոքր-ինչ մրցակցել եվրոն, սակայն, շոշափելի արդյունքի չի հասնում: Եվ, այսպես, ստեղծվեց մի իրավիճակ, երբ ԱՄՆ-ում կուտակված այդ 100 տրիլիոն դոլարային պարտքը պետք է փակեին ոչ միայն Միացյալ Նահանգները, այլ նաև աշխարհի բոլոր, հատկապես զարգացած երկրները, որոնք գլոբալիզացիայի շրջանակում արդեն ֆինանսական և տնտեսական փոխշաղկապված տարածությունում էին հայտնվել: Դրանով իսկ ուժգին հարված հասցվեց նաև արևմտաեվրոպական երկրներին, ինչպես նաև Ճապոնիային, Չինաստանին ու Ռուսաստանին: Ո՞րն էր պատճառը. մասնավորապես, Ռուսաստանը, թվում է, թե պետք է շարունակեր ապահովել սրընթաց աճի տեմպեր, ինչը վերջին տարիներին արձանագրվել էր 7-8%-ի սահմանում: Ավելին, ունենալով հսկայական պաշարներ նավթի (հիշատակման համար ասեմ, որ աշխարհի հետազոտված նավթի 10-12%-ը բաժին է ընկնում Ռուսաստանին), գազի (30-32%-ը), քարածխի (17%-ը), երկաթի (30%-ը), ան-

տառների (22%-ը), կարծես թե, այդ երկիրը պետք է չենթարկվեր համաշխարհային տնտեսական ու ֆինանսական ճգնաժամի բացասական ազդեցությանը: Ռուսաստանը մինչ ֆինանսական ճգնաժամի սկսվելը իր տարադրամի և ոսկու շուրջ 600 մլրդ դոլարի հասնող պահուստներով (աշխարհում այդ ցուցանիշից լինելով երրորդ տեղում), ինչո՞ւ հայտնվեց ֆինանսական ցնցումների կենտրոնում: Ռուսաստանը իր ուրույն տեղը զբաղեցնելով համաշխարհային թե՛ ֆինանսական և թե՛ տնտեսական շուկաներում ևս հայտնվեց բարդ իրավիճակում: Այսպես, ռուսական 120 խոշոր ձեռնարկություններ, ներգրավված լինելով Ռուսական առևտրային համակարգում (PTC), արդեն մի քանի տարի է, ինչ խոշոր ձեռնարկությունների արժեթղթերը հանում են համաշխարհային շուկա՝ տարածելով դրանք Լոնդոնի, Նյու Յորքի և ֆոնդային այլ բորսաներում: Դրանով իսկ արժեթղթերի շուկաների միջոցով կարողացել էին միջազգային ներդրողների, ինչպես նաև իր ձեռնարկությունների բաժնետերեր դարձած ազգաբնակչության կուտակած միջոցները տրանսֆորմացնել ներդրումների: Արդյունքում ստացվեց, որ ռուսաստանյան այդ 120 առաջատար ձեռնարկությունները թողարկած արժեթղթերի տարածման արդյունքում կուտակեցին 512 միլիարդ դոլարի պարտք, դառնալով միջազգային ինվեստորների պարտապանները: Այլ կերպ ասած, նրանք իրենց հիմնական պարտքերը, որոնք ձեռնարկությունների զարգացմանն ուղղվելիք պարտքեր էին, վերցրել էին հիշատակածս և այլ բորսաներում միջազգային ինվեստորներին ու բնակչությանը վաճառած արժեթղթերից: Եվ, ինչպես գիտեք, ֆինանսական ճգնաժամի առաջին դրսևորումներն ի հայտ եկան ԱՄՆ-ում, երբ փլուզվեցին “Fannie Mae” և “Freddie Mac” հիպոտեկային հայտնի բանկերը: Ավելորդ չեմ համարում նշել, որ ԱՄՆ-ում հիպոթեկային բանկերի կուտակած պարտքերը կազմում էին ընդամենը 6 տրիլիոն դոլար: Ուշադրություն դարձրեք, որ ԱՄՆ-ն կուտակել է 100 տրիլիոնի չափ պարտք, որոնցից հիպոտեկայինին բաժին է ընկնում 6 տրիլիոն: Դա էլ, փաստորեն, այն վառոդն էր, որը պայթեցրեց ԱՄՆ ֆինանսական համակարգը: Այս ամենի հետևանքով հիմա կապիտալի արտահոսք է նկատվում աշխարհի բոլոր երկրներից և, ի՞նչ եք կարծում, ուր, նույն Միացյալ Նահանգներ: Թվում է, թե պարադոքսալ իրավիճակ է, ֆինանսական ճգնաժամը ծնունդ առավ այնտեղից և կապիտալը էլի հետ է գնում Միացյալ Նահանգներ: Ինչո՞ւ է դա տեղի ունենում: Նախ, ամերիկյան ներդրողներն իրենց կապիտալը ետ են վերադարձնում հայրենիք: Ըստ որում, ֆինանսական հաշվարկների մեծ մասը կատարվում է դոլարով: Երկրորդ. համաշխարհային ֆինանսական շուկայում գործող վարկատուները շուտափույթ կերպով, զանգվածաբար սկսեցին ազատվել ձեռք բերած արժեթղթերից՝ դրանով իսկ, ըստ էության, համաշխարհային տնտեսության իրական հատվածը զրկելով ներդրումներից, և ֆինանսական հոսքերը հետ վերադարձնելով հիմնականում ԱՄՆ: Հաշվի առնելով այն, որ ներդրումներն ու վարկավորումն իրականացվել են դոլարներով, այլ ոչ թե ճապոնական յենով կամ չինական յուանով, համաշխարհային ֆինանսական շուկայում ամերիկյան տարադրամի պահանջարկը կտրուկ աճեց:

Երրորդ, հայտնվելով խորը ճգնաժամի պայմաններում, ամերիկյան կա-

պիտալը, որը ողողել էր համաշխարհային թե՛ ֆինանսական և թե՛ տնտեսական շուկան, սկսեց ազատվել իր օտարերկրյա սեփականությունից, դա նույնպես վաճառքի հանելով և նույնպես դոլարով: Այսինքն՝ այս գործընթացների արդյունքում ևս դոլարի հսկայական պահանջարկ գոյացավ: Եվ, վերջապես, առկա ֆինանսական ճգնաժամի մասշտաբները պատկերացնելու համար ասեմ. ինչպես նշում են համաշխարհային փորձագետները, նոյեմբերի 10-ի դրությամբ արդեն իսկ գերզարգացած երկրները տնտեսական և ֆինանսական ճգնաժամը հաղթահարելու համար մտադիր են հատկացնել 9,2 տրիլիոն դոլար: Հատկացվող այդ գումարները համեմատ տվյալ երկրի ՀՆԱ-ի բոլորից մեծ տեսակարար կշիռ ունեն, որքան էլ կարող է առաջին հայացքից տարօրինակ թվա, ոչ թե Միացյալ Նահանգները, այլ Մեծ Բրիտանիան, որը ճգնաժամը հաղթահարելու համար հավաքագրել է շուրջ 800 միլիարդ դոլար, այսինքն՝ իր համախառն ներքին արդյունքի շուրջ 37%-ը: Միացյալ Նահանգներն ու, մասնավորապես, Գերմանիան հավաքագրել են իրենց համախառն ներքին արդյունքի 25%-ը (ԱՄՆ՝ 3.5 տրիլիոն դոլար, Դաշնային Գերմանիան՝ 893 միլիարդ դոլար), Ռուսաստանի Դաշնությունը 225 միլիարդ դոլարի չափով կամ իր համախառն ներքին արդյունքի 13,9 %-ը: Ահա այս թվերը իրենց հերթին վկայում են, որ այսօր աշխարհի տնտեսությունն այնքան է փոխշաղկապված, որ հատկապես խոշոր տնտեսություններից մեկի ցնցումը, որպես կանոն, բացասաբար է անդրադառնում նաև մնացած բոլոր երկրների տնտեսությունների վրա:

Հիմա, ո՞րն է Չինաստանի գործոնը. չինական էկոնոմիկան այս էլ 10 տարի անընդմեջ 10% և ավելի համախառն ներքին արդյունքի աճ էր արձանագրում: Թվում էր, թե առողջ էկոնոմիկա է, աշխատուժն էլ բավարար քանակությամբ, սակայն համաշխարհային ֆինանսական և դրան հաջորդած տնտեսական ճգնաժամը իր բացասական հետևանքները ունեցավ նաև Չինաստանի էկոնոմիկայի վրա: Ի՞նչն էր պատճառը: Պատճառն այն էր, որ արդեն ամերիկացիները սեփական երկրի ներսում, կամա թե ակամա, կրճատեցին սպառումը, սկսեցին մի քիչ չափավոր կյանքով ապրել. գաղտնիք չէ, որ Չինաստան - Ամերիկա առևտրաշրջանառությունը ահռելի թվերի է հասնում, ըստ որում, առևտրաշրջանառության հաշվեկշռում Չինաստանն ունի դրական սալդո՝ շուրջ 450 միլիարդ դոլարի չափով: Արդյունքում՝ չինական ապրանքների արտահանման ծավալները Միացյալ Նահանգներ, բնականաբար, կրճատվեցին: Աշխարհը համակած ճգնաժամի պայմաններում, կրճատվեց նաև Չինաստան - Արևմտյան Եվրոպա առևտրաշրջանառությունը, ինչն էլ իր հետևից հանգեցրեց նրան, որ չինական արտադրության ապրանքների պահանջարկը աշխարհով մեկ նվազեց և, համաձայն համաշխարհային առևտրի կանոնների, առաջարկը պետք է հետևեր առկա պահանջարկին: Ուստի ակնհայտ է, որ առաջարկն էլ պետք է նվազեր, ինչը և Չինաստանում հանգեցրեց արտադրության սեղմմանը: Արդեն իսկ այսօր, փորձագետների գնահատմամբ, ինչքան էլ զարմանալի թվա, շուրջ 120 միլիոն աշխատողներ Չինաստանում վերջին 2-3 ամիսների ընթացքում դարձել են գործազուրկ: Սա, անշուշտ, շատ վտանգավոր է համայն մարդկության համար, որովհետև գլոբա-

լացված աշխարհում խաղաղ, կայուն նավահանգիստներ, ինչպես ի նկատի ունենալով Հայաստանը մեր հումորի զգացումով օժտված առանձին պաշտոնյաներ են ասում, գոյություն չունեն: Ահա համառոտ սրանք են աշխարհում թափ հավաքող ֆինանսական և տնտեսական ճգնաժամի որոշ պատճառները:

Շ. Գ. – Այսինքն...

Ա. Գ. – Այսինքն, ֆոնդային շուկաները կամ արժեթղթերի շուկաները, որոնք բաղկացած են փայատիրական թղթերից կամ ակցիաներից, ինչպես նաև դրանց ածանցյալ գործիքներից (դերիվատիվներից) ժամանակի ընթացքում, շրջանառվելով ֆոնդային բորսաներում, կորցրին կապը իրական տնտեսության հետ և, փաստորեն, վերածվեցին ֆիկտիվ կապիտալի շուկաների: Ուշագրավ է, որ ֆոնդային շուկաների ծավալները գնալով ավելի մեծ չափով որոշվում էին ոչ այնքան ծավալով և բուն ձեռնարկությունների արժեթղթերի (ակցիաների) իրական արժեքով, որքան, այսպես կոչված, տրանսակցիաների ծավալով, այսինքն՝ առք ու վաճառքի գործարքներով: Արդյունքում ֆոնդային շուկաների ծավալները սկսեցին զգալիորեն գերազանցել դրանց հիմքում դրված նյութական արժեքների ծավալները:

Շ. Գ. – Պարոն Գեղամյան, անշուշտ, կլինեն երկրներ, որոնց չի դիպել կամ անդրադարձել տնտեսական այս ճգնաժամը: Որո՞նք են այդ երկրները և որո՞նք են այն պատճառները, որ դրանց վրա չի անդրադարձել ճգնաժամը:

Ա. Գ. – Ես չեմ կարծում, որ այդ ճգնաժամն կանդրադառնար Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետությանը, Չադին, Կամերունին: Այսինքն՝ էն գլխից քյասիբության մեջ խեղդված երկրներ, որոնք բացարձակապես ներգրավված չեն համաշխարհային էկոնոմիկայի մեջ, չունեն ոչ ֆինանսական կայացած համակարգ, ոչ էլ՝ տնտեսական համակարգ: Նրանց վրա՝ "что ветер, что солнце", բացարձակապես և ոչ մի ճգնաժամ չէր ազդի:

Շ. Գ. – Արդյոք կա՞ն զարգացած պետություններ, որոնց վրա ճգնաժամը չի ազդել:

Ա. Գ. – Աշխարհիս երեսին դուք բացարձակապես չեք գտնի մի որևէ պետություն, որի վրա ճգնաժամը չի անդրադարձել: Այդ դիտանկյունից այսօր ամենահաջողակների թվին է դասվում Ֆրանսիան. ի՞նչ կտրվածքով: Այն կտրվածքով, որ փորձագետները կանխատեսում են, որ, այնուամենայնիվ, 2008 թ. ավարտին այս երկրում կարձանագրվի համախառն ներքին արդյունքի 0,5% աճ: Կանխատեսվում է նաև, որ Պորտուգալիան, որը ոչ անկում կարձանագրի, ոչ էլ ռեցեսիայի գրկում կհայտնվի, պարզապես կարձանագրի ՀՆԱ-ի զրո տոկոսանոց աճ: Եվրամիության, աշխարհի զարգացած մնացած բոլոր երկրները միջազգային հեղինակավոր վերլուծաբանների կանխատեսմամբ մտնելու են ռեցեսիայի ժամանակաշրջան: Այսինքն՝ տևական ժամանակաշրջանում համախառն ներքին արդյունքի նվազում է արձանագրվելու՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Ըստ որում, հետաքրքրականն այն է, որ աշխարհի ֆոնդային բորսաներից բոլորից խոշոր անկումն արձանագրվել էր Ռուսաստանի Առևտրային Համակարգում՝ РТС կոչվածում, վերջին 3 ամիսնե-

րի ընթացքում արձանագրելով ֆոնդային ինդեքսների 75%-ի անկում: Ուշագրավն այն է, որ դա այնքան էլ ցավալի չի անդրադարձել Ռուսաստանի ազգաբնակչության վրա, ինչքան Նյու Յորքի, Տոկիոյի, Մայնի Ֆրանֆուրտի և Լոնդոնի ֆոնդային բորսաներում արձանագրված ավելի սակավ անկումը: Պատճառն այն է, որ, մասնավորապես, Ռուսաստանի Դաշնության ֆոնդային բորսաներում, լինի դա РТС-ը կամ ММВБ-ն, շրջանառվող արժեթղթերի սեփականատեր են հանդիսանում ընդամենը 800 հազար մարդ, այսինքն՝ Ռուսաստանի ազգաբնակչության 0,6 %-ը, մինչդեռ ԱՄՆ-ում այդ ցուցանիշը հասնում է 54%, իսկ եվրոպական զարգացած երկրներում 13%-ից քիչ ավելին է կազմում: Սա է ֆինանսական և տնտեսական ճգնաժամի մյուս պարադոքսը: Ահա այսպիսին է ստեղծված իրավիճակը, և բացարձակապես պատահական չէ, որ վերջերս “Единая Россия” կուսակցության համագումարի ժամանակ Ռուսաստանը, ի դեմս իր երկրի պրեզիդենտի և վարչապետի, վերահաստատեցին, որ իրենք հետ չեն կանգնում Ռուսաստանի Դաշնության զարգացման հեռանկարային ծրագրից, որը հաստատված է 2008-2020 թթ. ժամանակաշրջանի համար:

Շ. Գ. – Հիմա գանք ամենահետաքրքրին...

Ա. Գ. – Հայաստանի՞ն:

Շ. Գ. – Այո, իհարկե: Ձեր գնահատմամբ այսօր Հայաստանում վիճակն ինչպիսի՞ն է և ի՞նչ զարգացում կարող է ունենալ:

Ա. Գ. – Եթե կենսուրախ հայտարարությունները, որով պարբերաբար հանդես են գալիս կառավարության և Կենտրոնական բանկի ղեկավարությունը, դնենք մի կողմ և անդրադառնանք նույն պետական կառույցների կողմից հրապարակվող թվերին, ապա վիճակը մտահոգիչ է: Պարզեցնեմ միտքս. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2008 թ. հունվար-սեպտեմբերին» պաշտոնական տեղեկագրքում գրված է, որ համախառն ներքին արդյունքում 469 միլիարդ դրամ բաժին է ընկել արդյունաբերությանը (առանց էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման): Դա կազմում է համախառն ներքին արդյունքի 18%-ը: Դրա մեջ՝ արդյունաբերության մեջ, հանքարդյունաբերությանը, մետաղագործական արդյունաբերությանը գումարային առումով բաժին է ընկնում 35,7%-ը: Հիմա այդ 35,7%-ը՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն է, Ագարակի, Կապանի կոմբինատներն են, Արարատի ոսկու հարստացուցիչ գործարանն է և Ալավերդու պղնձահումքային ամբողջ համալիրն է: 35,7 % կազմող արդյունաբերական համալիրը ներկայացնող սեփականատերերը արդեն իսկ բացահայտ ասում են, որ գնալու են կրճատումների: Գաղտնիք չէ, որ այսօր նրանք 2-3 ամիս պարտադիր պարապուրդի են ուղարկել իրենց հարյուրավոր աշխատակիցների, որոնց միգուցե կկարողանան մասնակիորեն աշխատավարձ վճարել: Սակայն պարապուրդից հետո, ավա՜ղ, այդ հարցում դրական տեղաշարժեր ևս չեն ակնկալվում: Ինչպես նշել էի, համաշխարհային տնտեսությունը թևակոխում է ռեցեսիայի շրջան, և այսօր մետաղի պահանջարկը համաշխարհային շուկայում շեշտակի, գրեթե 60%-ով կրճատվել է: Սա իր հերթին նշանակում է, որ եթե պահանջարկը կրճատվում է, իսկ առա-

ջարկը շարունակում է մնալ նախկին ծավալով, ապա, բնականաբար, գներն ընկնում են: Պղնձի, մոլիբդենի գների անկումը կազմել է շուրջ 50-60 %: Ինքնին հասկանալի է, որ մասնավոր սեփականության պայմաններում սեփականատիրոջ համար այդ գնով արդեն իսկ վնասակար է սպառում կազմակերպել, նախկին ծավալով արտադրություն իրականացնել: Կնշանակի՝ հազարավոր մարդիկ, ովքեր ներգրավված են հանքարդյունաբերության, մետաղաարդյունաբերության մեջ, ավա՜ղ, զրկվելու են թե՛ աշխատանքից և թե՛ դրա դիմաց ստանալիք աշխատավարձից: Արդյունքում՝ շեշտակիորեն անկում կարձանագրվի նաև բյուջետային մուտքերում, որովհետև գաղտնիք չէ, որ հիշատակածս ճյուղերը ապահովում են մեր հարկային մուտքերի նվազագույնը 17-18%-ը: Հարկային մուտքերը պակասելուն զուգընթաց՝ բյուջետային ծախսերը նույնպես կնվազեն: Բյուջետային ծախսերը նվազելու պարագայում, կսեղմվի նաև սպառումը, ապրանքների ընդհանուր պահանջարկը, վերջինիս սեղմման պատճառով, երբ ապրանքի պահանջարկը չկա (երբ չկա լույսը շռայլորեն վառելու հնարավորություն ու պահանջ, մեծ քանակությամբ ջուր օգտագործել և անգամ իսկ առաջին անհրաժեշտության սննդամթերք գնել և այլն), բնականաբար, սպառողական ապրանքների օգտագործման հարկադրված կրճատումը կբերի արտադրության սեղմման: Արտադրության սեղմումն իր հետևից կհանգեցնի գործազրկության նոր ալիքի: Ահա, փոխանակ այս հարցերը լրջագույնս վերլուծեն, տեսնեն, թե՞ տնտեսական, տնտեսականից բխող սոցիալական ինչ հնարավոր հետևանքների կարող է հանգեցնել այս ամենը, կանգնում ոգևորված ասում են, թե Հայաստանը համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պայմաններում դարձել է խաղաղ նավահանգիստ, թե “ACBA Credit Agricole”-ը (որը, ի դեպ, շնորհալի ղեկավարություն ունի) ստացել է 42 միլիոն դոլարի վարկ ֆրանսիական հայտնի “Credit Agricole” բանկից, որը իր կապիտալիզացիայի մակարդակով մտնում է աշխարհի 10 խոշոր բանկերի շարքը: Ոգևորությամբ նշվում է նաև, որ հայաստանյան այդ բանկը 18 մլն դոլարի վարկ է ստանալու Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկից: Կրկնեմ, հիացած ասում են՝ Հայաստանը կայուն հանգրվան է միջազգային ֆինանսական ճիրաններում հայտնված աշխարհի բանկերի համար: Փորձում են տպավորություն ստեղծել, որ ֆինանսական ցնցումներից խուսափելու համար ֆրանսիական “Credit Agricole”-ն Հայաստանի բանկերից մեկին 42 միլիոն դոլարի վարկ տրամադրելով՝ ստացվում է, որ ֆրանսիական բանկն այդպիսով փրկում է իր գումարները: Կանգնես, ասես, թե մի ալարեք, վերցնել “Economic Forum” հանդեսի 2008 թ. փետրվարի 4-ի վերլուծությունը, ուր տրված են աշխարհի հիմնական 200 բանկերը բնութագրող տեղեկությունները և այնտեղ ձեզ համար պարզ կդառնա, որ “Credit Agricole”-ի վերահսկողության ներքո է գտնվում 1 տրիլիոն 663 միլիարդ դոլար: Եվ ինչո՞ւ եք անտեղի շեփորահարում, թե 42 մլն դոլարով վարկավորելով՝ փրկել է իրեն ֆինանսական ճգնաժամի կործանարար ազդեցությունից: Ծուղրուղու են կանչում՝ առանց անհարմար զգալու: Իսկ մեզ համար կարևորագույնը չեն ասում. թմբկահարում են, թե, իբր, այդ ստացված գումարներով վարկավորելու են մանր և միջին բիզնեսը,

սակայն չեն ասում, թե հայ ձեռներեցներին տրամադրվող վարկի տոկոսադրույքն էլ արդեն իսկ սահմանել են 16-24%-ի չափով: Ասել կուզի, որ սրանք կարճաժամկետ վարկեր են լինելու: Կարճաժամկետ վարկերն էլ, գիտենք, միայն և միայն գնալու են առևտրի ոլորտ, այն էլ դրսից ներմուծվող ապրանքներ ներկրելու համար: Այսինքն՝ մանր և միջին բիզնեսին (բացառությամբ առևտրի ոլորտը) տրամադրվող վարկերը բացարձակապես դրանից չեն օգտվելու: Այդ վարկերից նրանց ոչ տաք է լինելու, ոչ՝ սառը: Իսկ նոր աշխատատեղերի ստեղծման մասին էլ ընդհանրապես մոռանանք: Եվ սա էլ այն դեպքում, երբ այդ չափից ավելի բարձր տոկոսադրույքներն էլ դրել են, երբ նույն Ամերիկայի Միացյալ Նահանգներում Դաշնային Պահուստային Համակարգը (Федеральная Резервная Система) վերջին մեկ ամսվա ընթացքում 1,5 տոկոսային կետով իջեցրել է առևտրային բանկերի վերաֆինանսավորման տոկոսադրույքը, այն դարձնելով ընդամենը 1%: Ուրեմն՝ 0,5 %-ային կետով իջեցվել է նաև եվրոպական Կենտրոնական բանկի սահմանած վերաֆինանսավորման տոկոսադրույքը, այսինքն՝ Եվրամիության 27 երկրների բանկերին սպասարկող բանկը այդ ցուցանիշը 3,75-ից դարձրել է 3,25 %: 1,5 %-ային կետով իջեցվել է Անգլիայի Կենտրոնական բանկի սահմանած վերաֆինանսավորման դրույքաչափը՝ 4,5 %-ից դարձել է 3%: Բա տնաշեններ, առանց անհարմար զգալու ճգնաժամում հայտնված մեր երկրի ձեռներեցին 24 %-ով դուք վարկ եք տալիս, ի՞նչ, դրանով մանր ու միջին բիզնես զարգացնի՞:

Նման հարցերին, ավա՜ղ, մեզանում մոտենում են շատ ու շատ մակերեսորեն: Մասնավորապես, ասեմ, որ վերջերս ինձ հիասթափեցրեց այն, որ երբ Ազգային ժողովում քննարկվում էր բյուջեն, մեր վարչապետը (թվում է, թե գոնե նա այս հարցերին պետք է տիրապետեր), ցավոք, ելույթ ունեցավ և այդ ելույթում ճգնաժամը հաղթահարելու համար ոչ համարժեք մոտեցումներ դրսևորեց և հարցադրումներ արեց: Չստացվի հանկարծ, թե ես փնովելու միտում ունեմ, պարզապես օգնելու ցանկությամբ եմ միտված վերլուծում իրավիճակը: Որ վաղը, մյուս օրը չմեղադրվեմ, հանկարծ չասեն՝ եթե գիտեիր, որ այստեղ ստորջրյա խութեր կային, ինչո՞ւ չահազանգեցիր: Բյուջետային քննարկումների ժամանակ հնչած մի երկու հարցի անդրադառնամ, որ ասելիքըս պարզ լինի: Ահա «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթում տպագրված վարչապետի ելույթը. այստեղ, 5-րդ կետում նշված է՝ «Եվրամիության և ԱՄՆ-ի հետ առևտրային պայմանագրերի կնքում, որոնք կստեղծեն բարենպաստ պայմաններ մեր արտահանողների համար»: Ախր, բարենպաստ պայման ստեղծել-չստեղծելն անձնական լավ հարաբերություններով չի պայմանավորված, այլ բխում է մեր տարածաշրջանում հիշատակված երկրների շահերով և ոչ թե Հայաստանի: Համաշխարհային առևտրի կազմակերպություն (ВТО) կա, այնտեղ պարզորոշ կանոնակարգված է, թե ինչ կանոններով պետք է ընթանա միջազգային առևտուրը: Հայաստանն էլ, ինչպես գիտեք, արդեն մի քանի տարի է դրա անդամն է: Այնպես որ, ժողովրդին, հանրությանը մոլորության մեջ գցել և խոսել «բարենպաստ պայմաններ» ստեղծելու մասին, տեղին չէ: Հետո, ի՞նչ են կարծում, որքանո՞վ են իրատեսական

իրենց սպասումները ԱՄՆ-ից և ԵՄ-ից, երբ, մասնավորապես, Միացյալ Նահանգները, որը այդ նույն Համաշխարհային առևտրի կազմակերպության հիմնադիր երկիրն է, այսօր հրապարակայնորեն քննարկում է 25 միլիարդ դոլարի չափով օգնություն տրամադրի ամերիկյան ավտոարդյունաբերության երեք հսկաներին՝ «Ջենեռալ Մոթորս», «Կռայսլեր», «Ֆորդ» ընկերություններին: Նման խիստ մրցակցության, լինել-չլինելու պայմաններում, ի՞նչ արտոնյալ պայմանների մասին կարող է խոսք լինել, ինչո՞ւ եք մարդկանց թյուրիմացության մեջ գցում: Գրում են, որ մանր ու միջին բիզնեսին խթանելու համար 350 միլիոն դոլարի վարկեր են վերցնելու, գերազանց է: Հայտարարվել է, որ 250 միլիոն դոլարը Համաշխարհային բանկի կողմից, 50 միլիոն դոլարը կառավարությունն է վարկավորելու, 50-ն էլ՝ Վերակառուցման և Զարգացման Եվրոպական, Ասիական բանկերից են տրամադրվելու: Հա, լավ, վերցնելու եք, որտե՞ղ եք ծախսելու, որտե՞ղ է այն հաշվարկը, ուր կա հստակ գրված, որ մենք պետք է խրախուսենք և սատարենք, սուբսիդավորենք, վարկավորենք այս-այս ճյուղերը, որովհետև այդ ճյուղերն այսօր շրջանառու միջոցների պակաս ունեն: Կա արդյո՞ք այն ձեռնարկությունների ցանկը, ուր լրացնելով դրանց շրջանառու միջոցները կկարողանանք հավելյալ արտադրանք ունենալ, որն էլ երաշխավորած սպառում կունենա: Չէ՞ որ ճգնաժամի ընթացքում (ամիսներին, տարիներին) առավել է սաստկանում մրցապայքարը սպառման շուկաներում ամրանալու համար: Եվ այդ մրցակցությունում, որտե՞ղ է ձեր հաշվարկը, որ մեր արտադրողները հաղթող դուրս կգան: Ճիշտ ձեր հեռուստասրահում, եթե հիշում եք, ամենայն լրջությամբ խոսվեց տեղական արտադրողներին, արտահանողներին սատարելու անհրաժեշտության մասին, և դուք պաշտպանեցիք այդ տեսակետը: Մենք եկանք ընդհանուր եզրահանգման, որ Հայաստանի Հանրապետությունը պետք է անհապաղ միջոցներ ձեռնարկի՝ խնդիր ունենալով հնարավորինս սեղմել ներմուծման ծավալները և դրան զուգընթաց խրախուսել արտահանումը: Մեր զրույցից անցել է 2-3 ամիս, և եթե մեր կողմից հնչեցված տագնապին ականջալուր լինեին, ապա այսօր մենք հստակ կիմանայինք մեր անելիքները և ոչ թե մեր ժողովուրդը այդ վարդագույն ապագա խոստացող թվերը սոսկ ականջով կլսեր: Հետո թերահավատությամբ լցված կգնար, սեփական սառնարանի դուռը կբացեր ու կտեսներ, որ հակառակ պաշտոնյաների կողմից հնչող լավատեսական ճառերի, օրեցօր այնտեղ նվազում է սննդամթերքը: Կհետևեին մեր հորդորներին, այսօր կունենայինք հոգեբանական մեկ այլ իրավիճակ, երբ մարդիկ հույսով ու հավատով կլցվեին հայրենյաց կառավարության նկատմամբ, իսկ որն ավելի կարևոր է՝ կհասկանային, որ գործադիրում գիտակ մարդիկ են աշխատում: Վերջին հաշվով մեր ժողովրդին անընդհատ չի կարելի ասել՝ գիտեք ի՞նչ, եթե դուք ձեր բերանում դառնություն եք զգում, ապա շարունակաբար հալվա ասեք, և կտեսնեք, որ կքաղցրանա ձեր բերանը: Հալվան բերեք, մատուցեք, որ ուտի բերանն էլ քաղցրանա:

Շ. Գ. – Ձեր անհանգստությունը միայն նրանո՞վ է պայմանավորված, որ հնարավոր է, որ հայտնվենք վատ վիճակում, թե՞ դրանք նաև քաղաքական բացասական հետևանքներ իրենց հետ կարող են բերել:

Դա՞ է Ձեր անհանգստության պատճառը:

Ա. Գ. – Շատ տեղին է ձեր հարցը: Տեսեք, թե ի՞նչ է ստացվում. արդեն տևական ժամանակ է անցել, երբ հոկտեմբերի 17-ից հետո Լևոն տերպետրոսյանական կոնգրեսը, ասես թե, ձեռքերը լվացել, մի կողմ է քաշվել: Այսպես, չեն խոչընդոտում, որ Լեռնային Ղարաբաղի շուրջ ընթացող բանակցությունները շարունակվեն, հանրահավաքներ չեն կազմերպում, որ երկրում ապակայունություն չլինի, այսինքն՝ իշխանություններին, ի պատիվ իրենց, ստացվում է, որ սատարում են: Ինչ խոսք, նրանց դրսևորած վարքագիծը խրախուսելի է, մինչդեռ մենք գիտենք, որ դրանց դրդապատճառներն այլ են: Սակայն դա ուրիշ խոսակցության նյութ է: Ըստ էության, նրանք ասում են՝ ՀՀ իշխանություններ՝ աշխատեք, աշխարհում վիճակը բարդ է, ֆինանսական, տնտեսական ճգնաժամ է, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման գործում էլ սպասվում են անբարենպաստ, ոչ հայանպաստ լուծումներ: Դե աշխատեք: Ստեղծված այս նուրբ իրավիճակում գործադիրը փոխանակ կարողանա մեր ժողովրդին հիմնավոր կերպով բացատրի, որ, այո, մտահոգ է ազգի սոցիալ-տնտեսական հեռանկարային զարգացման խնդիրներով և դրանք լուծելու համար ձեռնարկում է անհրաժեշտ քայլեր, ավա՜ղ, միայն ելույթներով է հանդես գալիս: Իսկ երբ դրանք ուսումնասիրում ես, ապա գալիս ես այն եզրահանգման, որ մինչ օրս, ցավոք, համաշխարհային ֆինանսական և տնտեսական ճգնաժամի հնարավոր հետևանքների մասին մերոնք չեն էլ գիտակցել: Հակառակ պարագայում, եթե գիտակցեին, ապա բյուջետային քննարկումների ժամանակ վարչապետը իր ելույթի մեջ չէր հնչեցնի ստեղծված իրավիճակի հետ առնչություն չունեցող կոչ-հորդորը, ըստ որի՝ «հազարավոր մեր հայրենակիցներ ԱՊՀ երկրներում, որոնց հարվածեց ֆինանսական ճգնաժամը, փնտրում են հուսալի ներդրումների և խնայողությունների պահպանման հնարավորություն: Մեր պարտքն է ուղղորդել նրանց և ստեղծել առավել նպաստավոր պայմաններ իրենց խնայողությունները հայկական բանկային համակարգում տեղաբաշխելու համար»: Հիմա կանգնես, ասես, լավ, այդ խնայողություն ունեցող առանձին հաջողակ հայ ձեռներեցը բերեց իր կուտակածը և մեր բանկում տեղադրեց, բա էն հարյուր հազարավոր արտագնա աշխատանքի մեկնողները, որոնք մի կերպ են կարողանում ծայրը ծայրին հասցնել, բա դրանք ի՞նչ անեն: Դուք չե՞ք մտածել արդյոք հայրենյաց կառավարություն այս հարցի մասին: Չէ՞ որ այդ մարդիկ առաջինն են ընկնելու այս ճգնաժամի ճնշման, մամլիչի տակ, որովհետև նույն Ռուսաստանում, եթե նրանք դեռ աշխատում են, հավատացնում եմ ձեզ, ապա վաղը գործատուն ճգնաժամի հետևանքով, երբ հարկադրված կլինի սեղմել արտադրությունը, առաջին հերթին եկվորներին աշխատանքից կազատի, նոր տեղացիներին: Եվ դա ինքնին հասկանալի ու պարզ է: Բա, եթե վտանգ կա, որ այդ 100 հազարավոր մարդիկ աշխատելու հնարավորությունից կարող են զրկվել, ի՞նչ եք անելու: Փոխանակ այսօրվանից մտածեք՝ էդ հսկայական հոսքը, որ գալու է, վերադառնալու է Հայաստան ինչո՞վ է այստեղ զբաղվելու, ի՞նչ միջոցներով է ապրելու… Արդյո՞ք ձեզ հարց տվել եք, թե ի՞նչ նորանոր աշխատատեղերով եք ապահովելու նրանց: Ի՞նչ

զբաղմունքի տեր դարձնես նրանց, որ հնարավոր սոցիալական, այո, տվյալ դեպքում հնարավոր պայթյունից կարողանաս զերծ պահել մեր երկիրը: Առավել ևս, մենք պարտավոր ենք հաշվի առնել նաև այն, որ, այո, մենք ունենք Լեռնային Ղարաբաղի առայժմ չկարգավորված հիմնահարց:

Այս բոլոր հարցերը տնտեսագիտական, ֆինանսական ամենալուրջ վերլուծության ենթակա հարցեր են և ոչ թե արդեն իսկ ծանծրույթ առաջացնող կարգախոսերը, ինչը 17 տարի է լսում ենք. Համաշխարհային բանկի հետ, Արժույթի միջազգային հիմնադրամի հետ մանր և միջին բիզնեսի զարգացման համար, իբր, ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ, մշակվում են տիպային նախագծեր… Հասկացանք, լավ, Հայաստանը Ռուսաստան չէ, անծայրածիր չէ, մի բուռ երկիր ունենք: Ամեն մարզի կտրվածքով բոլորս գիտենք, թե ինչի տեր ենք: Եվ ի՞նչու են ուզում հեծանիվ մոգոնել, երբ երկիրը զարգացնելու համար հասարակ լուծումներ կան: Մասնավորապես, սակավահող Հայաստանի պայմաններում մենք ականատեսն ենք, որ վարելահողերի նվազագույնը 40%-ը, եթե ոչ 45-50%-ը, չի մշակվում: Դրա դիմաց, տարեկան կտրվածքով, շուրջ 350 հազար տոննա ցորեն է դրսից ներկրվում, մեծ քանակով բուսական յուղ, հավի միս, տավարի միս է բերվում: Մտածեք, լուծումներ տվեք, տեղական գյուղատնտեսությունը, արտադրությունը զարգացրեք: Չէ՞ որ այսօր, ինչքան էլ տարօրինակ հնչի, կան բավականին լուրջ նախադրյալներ Հայաստանում տեղական արտադրությանը, հատկապես գյուղատնտեսությանը զարկ տալու համար: Ինչո՞ւ չէ, նաև արդյունաբերության այն ճյուղերին, որտեղ մենք կկարողանանք, այո, եթե ոչ համաշխարհային շուկաներ գրավել, ապա առնվազն ներքին պահանջարկը կբավարարենք:

Շ. Գ. – Շատ լավ, պարոն Գեղամյան, կուզեմ խոսենք նաև Ղարաբաղի հարցի շուրջ, մասնավորապես Մայենդորֆյան հռչակագրից և անցած շաբաթ Հանրապետության Նախագահի նախաձեռնությամբ Հայաստանում գրանցված և գործող կուսակցությունների ղեկավարների մասնակցությամբ կայացած քննարկման մասին: Նախ, Մայենդորֆյան հռչակագիրը, ըստ Ձեզ, ի՞նչ խնդիր է լուծում Հայաստանի համար, Ադրբեջանի համար և ի՞նչ խնդիր Ռուսաստանի համար:

Ա. Գ. – Դիվանագիտության մեջ հաջողակ են նրանք, ովքեր կարողանում են եղած փաստաթղթերից սեփական երկրի համար մաքսիմումը կորզել: Ես գտնում եմ, որ շատ դրական էր Հայաստանի Հանրապետության համար այդ Հռչակագրի ստորագրումը: Ինչո՞ւ էր դրական: Այն պարզ պատճառով, որ, թերևս, հակամարտության ավարտից հետո վերջին 14 տարիների ընթացքում առաջի դեպքն էր, երբ Ադրբեջանի նախագահը ստորագրեց մի փաստաթղթի տակ, ուր բացառապես նշված է, որ այդ հարցը միայն և միայն խաղաղ ճանապարհով է ենթակա կարգավորման: Դրա երաշխավորը հանդիսացավ Ռուսաստանի Դաշնության նախագահը: Սա ամենամեծ ձեռքբերումն ու նվաճումն էր: Այն է, որ արդեն Ալիևը պետք է 10 անգամ մտածի, ապա ցանկացած հեռուստաելույթում «ահի ու սարսափի» ենթարկելով հայ հեռուստադիտողին կամ թերթի ընթերցողին հիշատակի, որ Ադրբեջանի

ռազմական բյուջեն հավասարեցնելու է Հայաստանի բյուջեին: Արդեն Ալիևը, բնականաբար, իր այդ մտադրությունների մասին, եթե բացահայտորեն ասի, ապա արդեն զավթիչի, ագրեսորի պիտակը նրան կկպնի: Դա առաջին դրական հանգամանքն է: Երկրորդ դրական հանգամանքն այն է, որ արդեն իսկ Ադրբեջանը (ինչպես նաև Հայաստանը) սեփական իսկ նախաձեռնությամբ պարտավորություն են վերցրել վերջ տալ ռազմական հռետորությանը, ռազմատենչ ելույթներին: Ավելին, հնարավորինս մեղմել այդ ռազմաշունչ քաղաքականության արդյունքում ստեղծված ազգամիջյան թշնամանքի մթնոլորտը, որը ներհատուկ էր հատկապես Ադրբեջանին: Ինչո՞ւ եմ ես սա կարևորում, որովհետև դեռ նախանցյալ տարի ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի ոչ հայանպաստ հայտնի բանաձևի տակ, որը դատապարտում էր Հայաստանը «ադրբեջանական տարածքները բռնազավթելու» համար, ստորագրել էին հիմնականում Իսլամական Կոնֆերանս Կազմակերպության անդամ երկրները, չհաշված Ուկրաինան, Մոլդովան և Վրաստանը: Այսինքն՝ Իսլամական Կոնֆերանս Կազմակերպության անդամները, որոնք, անշուշտ, մեծապես տպավորված էին ռազմաշունչ այն հայտարարություններով, որոնք տարեցտարի հնչել են հենց այդ նույն կազմակերպության գագաթնաժողովների ժամանակ՝ արժանանալով նրանց պաշտպանությանը, հիմա արդեն, Մայենդորֆյան հռչակագրի ընդունումից հետո ուշադիր կմտածեն նման բանաձևերի տակ դնեն իրենց ստորագրությունը, թե՝ ոչ: Երրորդ հանգամանքն այն է, որ գրված է՝ միջազգային իրավունքի նորմերին համահունչ պետք է լինի Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը: 1970 թ. ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան ընդունել է Հռչակագիր՝ միջազգային իրավունքի սկզբունքների մասին, վերաբերվող պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության, որտեղ կարևորագույն սկզբունք է ճանաչվել մարդու ապրելու իրավունքը: Այդ հիմնատար սկզբունքը հետագայում ամրագրվեց 1975 թ. եվրոպական 33 երկրների, ԱՄՆ-ի և Կանադայի կողմից Հելսինկիում ստորագրված Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության դեռ այն ժամանակ սաղմնավորվող կազմակերպության եզրափակիչ ակտում: Սա նշանակում է հետևյալը. հայկական դիվանագիտությունը կարող է որպես հաղթաքարտ վերցնել այն իրողությունը, որ մենք արդեն իսկ ունենք փորձ, երբ Լեռնային Ղարաբաղում, երբ նա Խորհրդային Ադրբեջանի կազմում էր, վտանգվեց ամենակարևորագույնը՝ հայ ազգաբնակչության ապրելու իրավունքը Ադրբեջանում և եղան սումգայիթյան ջարդերը, Բաքվի, Կիրովաբադի, Մինգեչաուրի, Շամխորի հայության ջարդերը: Եվ դա կարող է մեր դիվանագիտության զինանոցում ամենահամոզիչ հիմնավորումը լինել, եթե, նախ, մեր երկրի ներսում կռռացողները քիչ լինեն և երկրորդ, եթե այդ հիմնավորումը բանակցությունների ժամանակ հայկական կողմը դարձնի իր համար ելակետ: Առավել ևս այդ սկզբունքի վրա հենվեց Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Վիկտորովիչ Լավրովը, երբ սեպտեմբերի 11-ին հայտնի հարցազրույց տվեց լեհական բավականաչափ ծանրակշիռ “Gazeta Wyborcza” թերթին, ուր մասնավորապես ասել էր, որ Հարավային Օսեթիայի և Աբխազիայի պարագայում խախտվել էր հիշատա-

կածս հռչակագրի մայր սկզբունքը, վտանգված էր սեփական հողի վրա հարավօսեթացիների և աբխազների ապրելու իրավունքը: Ահա այս սկզբունքի կիրառումը պետք է կարողանալ անպայմանորեն դարձնել մեր դիվանագիտության համար հաղթաքարտ: Կարելի է տարբեր երանգներ գտնել, որոնք, թերևս, ցանկալի կլիներ, որ, այո, ամրագրված լինեին Մայենդորֆյան հռչակագրում: Մասնավորապես, լավ կլիներ, որ Լեռնային Ղարաբաղի արդեն իսկ կայացած անկախ պետության նախագահի ստորագրությունը նույնպես լիներ ընդունված փաստաթղթի տակ, բայց դրա պարզաբանումները, կարծում եմ, բավականին հանգիստ և համոզիչ տրվեց Հայաստանի Նախագահի կողմից: Ադրբեջանի և Հայաստանի նախագահների հանդիպման նախաձեռնողը, հրավիրողը Դմիտրի Մեդվեդևն էր, դա ոնց որ մեկը քեզ ղոնաղ կանչի, դու էլ ասես չէ, գիտես ի՞նչ կա, ես առանց եղբորս տղայի չեմ գա քո տուն. այդպես չի լինում:

Շ. Գ. – Շատ լավ, հիմա Նախագահի հետ կայացած հանդիպման մասին մի հարց: Գիտե՞ք, այսպիսի մտքեր են արտահայտում, թե շատ դժվար էր այդ հանդիպումից լուրջ ակնկալիք ունենալ, քանի որ հանդիպմանը չէր մասնակցում երկրի ընդդիմությունը: Այ, համամի՞տ եք այս թեզի հետ, այստեղ երկու կոնտեքստ կա, կարծում եմ:

Ա. Գ. – Նախ, ո՞րն էր հանդիպման դրդապատճառը՝ Լեռնային Ղարաբաղի բանակցային գործընթացի վերաբերյալ պարզություն մտցնելը: Հայաստանի քաղաքական ընտրանիում, այսպես ասենք, կա որոշակի շերտ, որը կարծում է, թե աշխարհը պտույտ է գալիս իր շուրջ և եթե հանկարծ այդ մարդիկ էպիկենտրոնում չեն, ապա աշխարհը ցենտրովկայից կընկնի: Հիմա, այդ մարդիկ չեն մասնակցել հանդիպմանը, բացարձակ տեղյակ էլ չեն, թե ի՞նչ մթնոլորտում է այն անցել, ի՞նչ հարցեր են քննարկվել և քանի որ իրենք չեն մասնակցել, ըստ որում, իրենք են իրենց խաղից դուրս դրել, բնականաբար, պետք է ամեն կերպ ստվերեն այն: Հանդիպումը, կարծում եմ, շատ օգտակար էր: Եվ օգտակարությունը պայմանավորված էր հանդիպման ընթացքում ստեղծված մթնոլորտով, որը դրդում էր մարդկանց անկեղծության: Եվ արդյունքը հեռահար, դրական որոշակի զարգացումներ կարող է ստանալ, եթե համարժեքորեն կարողանան դա նեկայացնել հանրությանը, անշուշտ, հավատարիմ մնալով այն պայմանավորվածությանը, որ հանդիպման սկզբում ձեռք բերվեց, այն է՝ հղումներ չանել երկրի Նախագահին, բնականաբար, ոչ թե չգաղտնազերծելու համար, այլ նրան ադրբեջանական, թուրքական քարոզչության կողմից խոցելի չդարձնելու համար: Արդյունքում բոլորի համար, հանդիպմանը ներկա 50 կուսակցությունների լիդերների համար ակնհայտ դարձավ, որ ոչ ոք իրավունք չունի իրեն վերագրել Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման մենաշնորհը: Ավելին, որ Լեռնային Ղարաբաղի հարցի խաղաղ կարգավորման լուծումում հերոսներ, հաղթողներ, ինչպես նաև պարտվածներ չպետք է լինեն: Եվ, վերջապես, ըստ իս, ամենամեծ ձեռքբերումն այն էր, որ անգամ իսկ երկրի ներքաղաքական զարգացումների, ինչու չէ, նաև արտաքին քաղաքական վեկտորների վերաբերյալ իրարամերժ գաղափարախոսություն ունեցող կուսակցություններ, իրարամերժ մոտեցումներ ունե-

ցող կուսակցությունների ղեկավարներ եկան այն համոզման, որ Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման հարցը, այն է՝ անկախության հարցը, բոլորիս համար ակնհայտ իրողություն է և ԼՂՀ-ն երբեք ու երբեք չի կարող դիտարկվել Ադրբեջանի կազմում: Սա, կրկնում եմ, միաձայն ընդունված առաջին եզրահանգումն է:

Շ. Գ. – Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծումը, ըստ Ձեզ, կենսական հարց է, թե՞ բնազդային: Շատ կարճ պատասխան եմ ակնկալում:

Ա. Գ. – Ի՞նչը նկատի ունեք:

Շ. Գ. – Ղարաբաղի հարցը հայերիս համար կենսական է, թե՞ բնազդով:

Ա. Գ. – Ուրեմն, այն երկրները, որոնք բնակեցված են բնազդով առաջնորդվող ժողովուրդներով կամ ցեղախմբերով, վաղուց ի վեր համաշխարհային քաղաքականության գործոն չեն: Սա մեզ՝ հայերիս համար կենսական, ապագա ունենալ-չունենալու հարց է և այդ գիտակցմամբ էր պայմանավորված, որ խնդրո առարկայի շուրջ բոլորը միակարծիք էին: Երկրորդ դրույթը, որը նույնպես հավանության արժանացավ բոլորի կողմից, այն է՝ անպայմանորեն պետք է երաշխավորված լինի Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի Հանրապետության ցամաքային կապը: Երրորդը՝ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի և պետության անվտանգությունը պետք է գերհզոր պետությունների կողմից երաշխավորված լինի: Այստեղ շատ կարևոր եմ համարում հետևյալ հիշատակումը. այս երեք սկզբունքները բոլորիս համար ընդունելի են, սակայն խիստ անհրաժեշտ է, որ հիմա գիտակցենք, որ ամենադժվարին հարցերն են բոլորիս առաջ ծառանում: Այս փուլում յուրաքանչյուրս պետք է անպայմանորեն օգնենք մեր իշխանություններին, բանակցող կողմին: Ասեմ՝ ի՞նչ հարցում: Ի՞նչ է նշանակում Լեռնային Ղարաբաղի ժողովրդի և հանրապետության անվտանգության երաշխավորումը: Խորհենք միասին. արդյոք մենք կկարողանա՞նք դա ապահովել, եթե Քելբաջարն ենք հանձնում, եթե Հորադիզից ենք դուրս գալիս, արդյոք մենք կկարողանա՞նք անվտանգությունը երաշխավորել: Եթե Լեռնային Ղարաբաղ - Լաչինի միջանցքը, լինի դիցուք, ընդամենը 15 կիլոմետր լայնությամբ, դա անվտանգությունը երաշխավորո՞ւմ է, թե ոչ: Մենք պետք է հարց տանք, եթե նույն Քելբաջարը հանձնում ենք միջազգային ուժերի հսկողությանը, դուրս ենք գալիս այնտեղից, ապա ի՞նչ երաշխիքներ ունենք, որ Լեռնային Ղարաբաղի խմելու ջրի 85%-ի աղբյուրների ակունքները, որոնք սկիզբ են առնում Քելբաջարի լեռներից, չեն թունավորվի կամ դրանց հունը չի փոխվի: Այսինքն՝ Լեռնային Ղարաբաղը չեն մատնի սոցիալական ծայրաստիճան ճգնաժամի՝ զրկելով ժողովրդին խմելու ջրից: Կամ՝ այդ նույն աղբյուրները Արփա և Որոտան գետերի ակունքներն են, իսկ վերջիններիս ջրերը Արփա - Սևան թունելով գալիս են Սևան: Այսինքն՝ հիմա արդեն ճիշտ կլինի, որ ցանկացած հայ մարդ, մասնագետ, լուրջ փորձագետ իր մասնագիտությանը ներհատուկ հարցերի հսկայական մի շղթա դնի իր առաջ, որոնք բխում են հիշատակածս երեք սկզբունքներից: Եվ դրված կենսահույզ հարցերի պատասխաններով զինի բա-

նակցող հայկական կողմին՝ ակնկալելով, որ, այո, այդ ամենի լուծումները մենք ակնկալում ենք ոչ միայն Իլհամ Ալիևի, այլ, ինչո՞ւ չէ, նաև Մինսկի խմբի համանախագահ երկրների կողմից: Ես, կարծում եմ, այսօր առանձնահատուկ բարենպաստ պահ է բոլորիս համար և այդ պահը պարտավոր ենք լիարժեք օգտագործել: Դրա դրական նախանշանները տեսնում եմ նաև, այո, թող տարօրինակ չհնչի, մեր շախմատային հերոսների կրած հաղթանակի մեջ: Մեր շախմատիստները ցույց տվեցին, թե ինչ է նշանակում մտածող, համախմբված, միասնականորեն գործող հայ մարդը և ինչ արդյունքի նա կարող է հասնել: Կրկնեմ, եթե հայը միասնական, մտածելով, առանց նախանձի է գործում, ուրախանում է մյուսի հաջողությամբ, ապա արդյունքը լինում է այն, ինչի ականատեսը եղանք Դրեզդենի շախմատային օլիմպիադայի ավարտին:

«Հայոց Աշխարհ», 10-12.XII.2008:

Я НЕ ОДЕРЖИМ ЖЕЛАНИЕМ ПОРИЦАТЬ… ХОЧЕТСЯ ПО ВОЗМОЖНОСТИ ПОМОЧЬ

Мы отнюдь не были намерены напечатать этот материал. Однако, когда отдельные недобросовестные левоновские писаки стали сокру¬шать¬ся: почему это Арташес Гегамян молчит, не высказывает свое мнение о последствиях Мирового финансового кризиса на Армению, другие же, из числа левоновских разношерстных спокменов-суренсаркисянов, перешли на привычные для невоспитанных тунеядцев личные оскорбления в адрес А. Гегамяна, то нам стало ясно, что интервью следует обязательно напечатать. Видимо, сектантов от «Свидетели Левона» встревожило то, что власти восприняли сказанное Арташесом Гегамяном, как слово озабоченного судьбой республики политика.

Уважаемый читатель, представляем Вашему вниманию интервью Арташеса Гегамяна от 28 ноября 2008 года автору программы «Право слова» Шаваршу Геворкяну.

ШАВАРШ ГЕВОРКЯН – Доврый вечер! В эфире 2-го армянского телеканала передача «Право слова» и гость 4- ой студии сегодня – председатель партии «Национальное Единение» Арташес Гегамян. Господин Гегамян, возможность проанализировать и высказать свои суждения относительно разразившегося мирового финансового кризиса предоставлены всем, в особенности политическим деятелям. Хотелось бы выслушать Ваш комментарий и анализ, с чего и как начался этот кризис.

АРТАШЕС ГЕГАМЯН – Вы совершенно правы. Финансовый кризис продолжается и уже обернулся экономическим, чему последует рецессия, то есть уменьшение мирового валового внутреннего продукта в течение продолжительного времени. Пожалуй, первые признаки надвигающегося кризиса проявились еще в прошлом году. Основная причина, по моему мнению, заключается в том, что мировая держава № 1, США, раздула так называемый финансовый рынок, посредством которого происходит распределение денежных средств между участниками экономических отношений. При этом в последние восемь лет потребление в самих США превосходило производимый ими валовой внутренний продукт. То есть главная проблема США заключалась в том, что американцы тратили значительно больше, чем зарабатывали. Норма же сбережений в стране была фактически равна нулю. Поэтому США были вынуждены занимать деньги за границей, чтобы возместить свои чрезмерные затраты. Так, если на США приходится 22 – 25% валового мирового продукта, то потребляют они по данным экспертов от 37 до 40% мирово-

го ВВП, т.е., выражаясь народным языком, не по одежке протягивают ножки. Несомненно, имея объемы потребления, которые значительно превышали производство, они по существу все последние годы жили в долг, а расплатиться по счетам рано или поздно пришлось бы, на ком-то эта ноша должна была бы сказаться. В результате, Соединенные Штаты, имея среднегодовой валовой внутренний продукт порядка 14 триллионов долларов, сегодня уже накопили 100 трлн. долларов долгов. Причем, к примеру, финансовые обязательства так называемых трастовых фондов составляют 53 трлн. долл. Трастовые фонды, это те фонды, которые призваны обеспечить деньгами пенсионные фонды США. К этому следует прибавить 400 тысяч долларов внешнего долга, приходящегося на каждое домохозяйство США, и это при их ежегодном доходе в 40-50 тысяч долларов. То есть на выплату этих долгов уйдут десятилетия. Естественно, это не могло не отразиться на экономике других стран, потому что в условиях глобализации степень взаимозависимости экономик крайне велика, тем более с учетом Бреттон- Вудских соглашений /США, Нью Гемпшир, 1944 г./, согласно которым доллар до сих пор является основной мировой валютой. Правда в последние годы с ним пытается конкурировать евро, но пока без особого успеха. Итак, в условиях сложившейся мировой финансовой системы долг США в 100 трлн долларов вынуждены были закрыть не только сами американцы, но и все остальные, в особенности развитые страны, взаимозависимые друг от друга в условиях глобальной мировой финансовой и экономической систем. В результате мирового финансового кризиса сильнейший удар был нанесен, в особенности, западноевропейским странам, а также Японии, Китаю и России. В чем причина? К примеру, Россия, в последние годы зафиксировавшая высокие темпы экономического роста на уровне 8%, к тому же располагающая громадными запасами нефти /10-12% разведанных мировых запасов/, газа /30-32%/, угля /17%/, железа /30%/, леса /22%/, казалось бы должна была избежать кризиса. Более того, почему Россия, обладающая к началу финансового кризиса третьими в мире золотовалютными резервами в размере около 600 млрд. долларов, не смогла остаться в стороне от бурных финансовых потрясений? Все дело в том, что 120 наиболее продвинутых крупнейших российских компаний вот уже несколько лет выставляют свои акции на мировых фондовых биржах Лондона, Нью-Йорка и др. И тем самым посредством рынка акций они активно трансформировали денежные накопления инвесторов и части населения, являющихся владельцами акций этих предприятий, в инвестиции. Поэтому вполне закономерно что, они оказались в зоне мирового финансового кризиса. В результате эти 120 компаний и обслуживающие их российские банки, которые стремительно наращивали заимствования за рубежом, оказались под бременем долговых обязательств по акциям и ценным бумагам своих предприятий, владельцами которых стали международные инвесторы. Долговые обязательства, заимствованные в целях развития этих компаний, к началу кризиса были в размере 512 млрд. долларов. Как вы знаете, кризис

обнаружил свои первые проявления в системе ипотечных кредитов США, когда лопнули известные банки ¦ Fannie Mae§ u ¦ Freddie Mac§. Не лишне упомянуть, что долг по ипотекам в банках США составил лишь 6 трлн. долларов. Вдумайтесь, при 100 трлн. общих долгов США, лишь 6 трлн. долгов по ипотеке, которые фактически стали порохом, взорвавшим всю финансовую систему этой страны. Теперь по всему миру наблюдается отток капиталов из всех стран и куда, как вы думайте? В те же США. На первый взгляд это может показаться парадоксальным. Ведь кризис вначале разразился в США и теперь туда же возвращается капитал. Почему? Прежде всего потому, что американские инвесторы возвращают капиталы на родину. При этом большая часть расчетов производится в долларах. С учетом того, что инвестиции и кредитование производилось в основном в долларах, а не в японских йенах или британских фунтах стерлингов, на мировом финансовом рынке возник громадный спрос на американскую валюту. Второе. Уже в условиях нарастающего экономического кризиса американский капитал, который заполонил мировой финансовый и экономический рынок, постепенно освобождается от своей зарубежной собственности, выставляя и ее на продажу, и тоже в долларах. То есть и тут возникает большая потребность в долларах. И, наконец, на 10 ноября т.г. наиболее развитые страны приняли решение о выделении около 9,2 трлн долларов с целью преодоления финансового и экономического кризисов. Первыми по удельному весу выделяемых на эти цели средств являются, как это ни странно, не США, а Великобритания, которая для преодоления финансового кризиса намерена израсходовать 795 млрд долларов, т.е. около 37% своего валового внутреннего продукта. США и Германия израсходуют по 25% от своего ВВП,или, соответственно, 3,5 трлн долларов и 893 млрд долларов, Россия 13% ВВП, или 225 млрд долларов. Эти выделяемые средства наглядно демонстрируют, что мировая экономика сегодня тесно взаимосвязана и потрясения в одной из крупнейших экономик мира неизбежно сказываются на финансах и экономике других стран. Теперь о китайском факторе. Общеизвестно, что 10 и более лет в Китае наблюдался ежегодный более чем 10%- ный рост валового внутреннего продукта. Казалось, здоровая экономика и все такое прочее. Но у них наблюдаемое сейчас замедление темпов экономического роста имеет другие причины. Практика последних месяцев показывает, что американцы волей- неволей были вынуждены умерить свои расходы на потребление. А ведь не секрет, что в огромном, исчисляемом триллионами, товарообороте Китай – Америка, положительное сальдо торгового баланса за Китаем и составляет порядка 450 млрд долларов. В результате разразившегося кризиса объем вывозимых китайских товаров в США значительно сократился. Сократился экспорт китайских товаров и в Западную Европу тоже. То есть. Спрос на товары китайского производства снизился, а значит за этим должно было последовать уменьшение и их предложения, выходит должно было сократиться и их производство. И сегодня, как это не выглядит удивительным, в течении последних двух-трех месяцев

120 млн людей в Китае стали безработными. Это сегодняшние реалии, которые несомненно очень опасны. И на этом фоне мирового финансового и экономического кризисов некоторые из наших высокопоставленных должностных лиц, имея в виду Армению разглагольствуют о каких-то стабильных мирных гаванях для мировых финансов, что выглядет по меньшей мере несерьезно. Вот вкратце некоторые причины охватившего мир кризиса.

Ш. Г. – То есть…

А. Г. – То есть, фондовые рынки или рынки ценных бумаг, состоящие из долевых бумаг, или акций, а также их производных инструментов (деривативов) со временем, обращаясь на фондовых биржах, потеряли всякую связь с реальной экономикой и фактически стали рынками фиктивного капитала. Примечательно, что при этом объем фондовых рынков все в большей степени стал определяться не столько объемом и ценностью самих акций компаний, сколько объемом трансакций, то есть сделок по их купле- продаже. При этом объемы фондовых рынков стали значительно превосходить объемы, заложенных под них материальных ценностей.

Ш. Г. – Г-н Гегамян, несомненно, есть страны, которых кризис не коснулся. Какие это страны и в чем причины, что финансовый и экономический кризисы их не затронули?

А. Г. – Я не думаю, что кризис мог отразиться, к примеру, на Центрально- Африканской Республике, Чаде, Камеруне, погрязших в нищете странах, в которых нет состоявшейся финансовой и экономической систем. Для них, что ветер, что солнце - безразлично.

Ш. Г. – Есть ли развитые страны, на которых кризис не сказался?

А. Г. – Вы не найдете на планете ни одного состоявшегося государства, на котором кризис в той или иной мере не отразился бы. К числу относительно благополучных стран относят Францию имея ввиду, что по прогнозам экспертов в 2008 году предполагается рост ее ВВП в объеме 0,5%. И еще отмечается Португалия, экономика которой останется на прежнем уровне: по итогам 2008 года здесь не будет зафиксировано ни роста, ни падения. Все остальные страны войдут в рецессию, то есть в этих странах будет наблюдаться относительно умеренный некритический спад производимого ВВП на длительное время со всеми вытекающими из этого последствиями. И вот, что еще примечательно. В ходе кризиса наиболее обвальное падение зафиксировано в российской торговой системе, РТС, (индексы самых ликвидных акций, обращающихся в РТС за последние 3 месяца обвалилась на 75%.) Однако, это обвальное падение фондовых индексов не так сильно отразилось на населении России в сравнении с издержками от падения фондовых индексов на ведущих мировых биржах Нью-Йорка, Токио, Франкфурта – на – Майне и, конечно же, Лондона. Дело в том, что владельцами акций и других ценных бумаг в России являются всего 800 тысяч человек (т.е. 0,6% населения страны), а в США 54% домохозяйств владеют акциями, в странах ЕС этот показатель чуть более 13%. В этом

другой парадокс финансового и экономического кризисов. И поэтому вовсе не случайно, что, выступая недавно на съезде партии «Единая Россия», президент Российской Федерации Дмитрий Медведев и председатель правительства Владимир Путин подтвердили, что они не отказываются от целей, заявленных в перспективной программе развития РФ, рассчитанной на период до 2020 года.

Ш. Г. – А теперь о самом интересном…

А. Г. – Об Армении?

Ш. Г. – Да, конечно. Какова, по вашему, ситуация в Армении и чего можно ожидать?

А. Г. – Если отложить в сторону радужные заявления, с которыми периодически выступает руководство Правительства и ЦБ, и обратиться к официальной статистике, то ситуация тревожная. Так, согласно данным Национальной статистической службы Республики Армения, в январе – сентябре 2008 года в валовом внутреннем продукте РА более 469 млрд драмов приходилось на промышленность, за вычетом производства, распределения и потребления электроэнергии, воды и газа. Это составляет около 18% ВВП. В промышленности республики удельный вес горнодобывающей и металлургической отраслей в совокупности составляют 35,7%. В эти 35,7% входят Зангезурский и Агаракский медно- молибденовые комбинаты, Капанский комбинат, Зодская фабрика, Араратская золотоизвлекательная фабрика и весь Алавердский горно- рудный медный комплекс. Руководство указанных отраслей уже открыто заявляет, что будет вынуждено пойти на сокращения, вследствие вынужденного простоя производства на 2-3 месяца отправит работников в отпуск, может быть частично оплачиваемый. Но после этого, учитывая, что из –за рецессии имеет место почти 60%- ное сокращение спроса на металл на мировом рынке, а это в условиях частной собственности для владельцев указанных отраслей станет убыточной организация производства любой ценой. Это приведет к тому, что тысячи людей, занятых в горно- рудной и металлургической отраслях, увы, лишатся рабочих мест. В условиях свертывания производства резко сократятся поступления в государственный бюджет, потому что не секрет, что указанные отрасли обеспечивают, как минимум, 17-18% бюджетных поступлений. Сокращение поступлений в бюджет, в свою очередь приведет к сокращению бюджетных расходов. В условиях снижения бюджетных расходов уменьшится общий спрос на товары. Сократится потребление электричества, воды, даже продуктов питания первой необходимости и т.п. Естественно, это приведет к сокращению совокупного спроса, а стало быть приведет к дальнейшему сворачиванию производства, что, в свою очередь обернется новой волной безработицы…

В этих условиях вместо того, чтобы тщательнейшим образом проанализировать возникающие проблемы и подумать, к каким социальным последствиям могут привести эти экономические процессы, принять неотложные меры по их предупреждению и нейтрализации, звучат оптимистические речи о том, что, к примеру,

армянский банк «ACBA Credit Agricole» (кстати, имеющий профессиональное и умелое руководство) получил кредит в 42 млн долларов от известного французского банка «Credit Agricole», входящего в мировую банковскую десятку, и еще получит 18 млн долларов из Европейского банка реконструкции и развития. Восхищенно утверждают, что Армения - это островок финансовой стабильности для оказавшихся в кризисе международных финансов и преподносят это кредитование так, что, дескать, опасаясь внешних потрясений, «Credit Agricole», предоставив Армении кредит в 42 млн долларов, спасает свои финансы. Так и хочется сказать, ребята, не поленитесь заглянуть в журнал «Economic Forum» (от 4 февраля 2008 г.), где в списке 200 крупнейших банков мира вы найдете и «Credit Agricole» и увидете, что этим банком контролируется капитал, составляющий 1 трлн 663 млрд. долларов, в котором эти пресловутые 42 млн долларов даже не капля в бассейне воды. А наши все щебечат про мирную гавань …

А о самом существенном и в то же время тревожном при этом не говорят. А тревожно то, что на полученные кредиты банком выдаются ссуды для «малого и среднего» бизнеса под необъяснимо высокие проценты- от 16 до 24%. То есть, ссуды под такие непомерно высокие проценты, естественно будут краткосрочными. А деньги эти, мы знаем, пойдут в торговую сферу, причем, как правило, попадут в руки олигархов (через их подставных лиц), специализирующихся на монопольном ввозе в страну, на импорте жизненно необходимых товаров. То есть, малому и среднему бизнесу, за исключением указанной сферы, от зтих кредитов ни холодно, ни жарко. Замечу, что во всех коммерческих банках Армении установлены, уже не первый год, убийственно высокие проценты кредитования. И это в том случае, когда в тех же США Федеральная Резервная Система снизила за последний месяц на 1,5 процентных пункта учетную ставку рефинансирования, довела всего до 1% годовых. На 0,5 процентных пункта снизил учетную ставку рефинансирования Европейский Центральный Банк, обслуживающий 27 стран Евросоюза, доведя этот показатель с 3,75 до 3,25%. На 1,5 процентных пункта снизили учетную ставку рефинансирования и в Британском Центральном Банке: с 4,5% до 3% годовых. А наши, господа хорошие, как только додумались до выделения предпринимателю оказавшейся в кризисе страны кредитов под 24%. Что ему с этой ссудой делать? Подход к таким вопросам со стороны исполнительной и финансовой властей, к сожалению, весьма поверхностный. Скажу больше. Не так давно меня разочаровало выступление премьер-министра в ходе обсуждения проекта бюджета РА на 2009 год. Казалось, уж он-то должен быть в курсе всех этих вопросов, однако, в его выступлении в Национальном Собрании были предложены неадекватные подходы по преодолению кризиса. Не хотелось, чтобы сложилось впечатление, что я, так сказать, одержим желанием порицать. Вовсе нет, хочется по возможности помочь, чтобы завтра меня же не упрекнули: чего же ты молчал, раз знал об опасных последствиях.

Коснусь двух моментов, чтобы стало ясно, о чем речь. В тексте вышеупомянутого выступления варчапета, напечатанной в газете «Айастани Анрапетутюн», в 5-ом пункте сказано о якобы достигнутых с Евросоюзом и США договоренностях, согласно которым они согласились создать благоприятные условия для наших экспортеров. Но ведь создание (или нет) благоприятных условий не связано с хорошими личными отношениями договаривающихся сторон, а обусловлено интересами, преследуемыми упомянутыми странами в Армении. Есть Всемирная Торговая Организация, там жестко регламентировано, по каким правилом должна вестись международная торговля, а Армения уже несколько лет является членом ВТО. И что они думают, если сегодня США, гегемон в той же ВТО, оказались в такой затруднительной ситуации, что объявляют о необходимости выделения 25 млрд. долларов для поддержания трех гигантов американской автомобильной промышленности (Дженерал Моторс, Крайслер, Форд), станут создавать привилегированные условия для экспортеров из других стран? Не вводите людей в заблуждение. Или же, говорится, что для стимулирования малого и среднего бизнеса Армения получит кредиты на сумму в 350 млн долларов: 250 млн долл. из Всемирного банка, 50 – из Европейского банка реконструкции и развития, 50- выделит правительство республики. Прекрасно. Получили кредиты, а что потом, что с ними делать-то будут? Куда они пойдут? Где та конкретная программа, в которой было бы предметно указано, что ссуды будут выделены на развитие таких-то сфер экономики, которые и в условиях кризиса дееспособны, но сейчас ощущают нехватку оборотных средств и поэтому, удовлетворив их потребность в финансах, мы сможем утверждать, что они в состоянии выпустить определенное количество продукции, имеющей гарантированный спрос. Ведь не новость, что в период кризиса с каждым месяцем ужесточается конкуренция между товаропроизводителями. И где ваши доводы о том, что мы победим в этой конкурентной борьбе?

В этой же студии, если помните, со всей серьезностью обсуждалось о необходимости всяческого поощрения экспорта, и вы согласились с тем, что Армения должна принять неотложные меры, чтобы по возможности сократить импорт и стимулировать вывоз. Прошло 2-3 месяца и если бы правительство ответственно подошло к нашим предложениям, то сегодня мы говорили бы о конкретно принятых мерах в указанном направлении, а наш народ, услышав краем уха какие-то цифры о том, как хорошо он стал жить, не испытал бы очередное разочарование, когда открывая дверцу холодильника вынужден был бы подумать о том, что продукты питания там все убавляются и убавляются. Вместе с тем, увидев, что власти предпринимают практические шаги по преодолению кризиса, народ исполнился бы веры и уважения к правительству и, что крайне важно, убедился бы, что там работают компетентные люди, знающие реальное положение дел в стране. В конце концов, нельзя до бесконечности мудрствовать лукаво, советуя народу, что, если во рту горько, следует постоянно говорить «халва» и тогда станет сладко. Надо лю-

дям эту «халву» предложить…

Ш. Г. – – Ваша обеспокоенность связана только с тем, что мы окажемся в тяжелой ситуации или еще с тем, что это может обернуться негативными политическими последствиями?

А. Г. – Весьма уместный вопрос. Смотрите, что получается. Вот уже длительное время «терпетросяновский» конгресс после 17 октября вроде бы умыл руки, отошел в сторону. Но это - только на первый взгляд. Они, вроде бы, не препятствуют, чтобы переговорный процесс по мирному урегулированию нагорно-карабахского конфликта проходил бы в обстановке стабильности в Республике Армения: левоновцы, в частности, не митингуют, не делают ничего такого, что могло бы дестабилизировать ситуацию. То есть, формально содействуют властям, что, конечно, похвально (хотя мы прекрасно понимаем, что истинные причины подобного поведения иные). Этим своим подходом они как бы говорят властям: работайте, работайте же, кто вам мешает. В своих газетах они пишут, что ситуация в мире тревожная, финансовый кризис, по Нагорному Карабаху намечаются неблагоприятные (в их представлении) для нас решения. Работайте же, наконец. Ну, а те, кому адресованы их призывы, вместо того, чтобы своими действиями доказать, что озабочены социально-экономическими перспективами народа, порой, такое говорят, что видно: они все еще не поняли всей опасности последствий кризиса для армянской государственности. Если бы поняли, тогда в одном из пунктов антикризисных мер, озвученных варчапетом, не указали бы, что с учетом финансовой нестабильности в мире нам следует посоветовать нашим соотечественникам свои внешние вклады перевести и разместить их в армянских банках. Ладно, допустим те, кто имеют вклады, перевел их. А что бы вы посоветовали сотням тысячам нашим соотечественникам – гастарбайтерам, которые за рубежом еле сводят концы с концами? Вы не подумали, дорогое правительство, что эти люди первыми попадут под пресс кризиса, потому что в той же России, где они в основном работают, их, как и остальных приезжих, первыми уволят с работы, а только потом очередь дойдет до местных. И это само по себе понятно. Так, если уже для нас очевидно, что под большим вопросом находится возможность сохранения работы для этих сотен тысяч человек, вы подумали, как и где их можно трудоустроить в случае возвращения на Родину, в Армению? Ведь сегодня это архиважный вопрос, решение которого сейчас поможет избежать возможного социального взрыва в будущем. Предотвратить возможный опасный сценарий развития событий для нас тем более актуален, потому что мы пребываем в условиях неурегулированного Карабахского вопроса…

Все эти вопросы подлежат серьезнейшему экономическому, финансовому, внутри и внешнеполитическому анализу, а мы только и слышим уже 17 лет , что наше правительство имеет договоренность со Всемирным банком, МВФ о том, что будут выделены кредиты под развитие малого и среднего бизнеса …

Понятно, что Армения - это не Россия с ее 11-ью часовыми поясами. И мы

прекрасно знаем, что происходит и как обстоят дела в марзах Республики Армения. И зачем хотят изобрести велосипед, если есть простые решения. Так, в малоземельной Армении не менее 40% (если не все 45-50%) пахотных земель не обрабатываются. Вследствие этого ежегодно в республику ввозится порядка 350 тысяч тонн зерна, большое количество растительного масла, говядины, куриного мяса и других продуктов питания. Так надо же призадуматься над всем этим. Предлагайте решения. Ведь, как ни странно, есть в Армении достаточно серьезные предпосылки для развития сельского хозяйства, да и всего агропромышленного комплекса. А также тех отраслей промышленности, где мы сможем если не занять свою нишу на мировом рынке, то хотя бы удовлетворить наш внутренний спрос.

Ш. Г. – Хорошо, господин Гегамян. Давайте поговорим о вопросе Карабаха, в частности, о Майендорфской декларации, и инициированном президентом страны обсуждении этих задач с руководителями зарегистрированных и действующих партий. Какие вопросы, по вашему, решает Майендорфская декларация для Армении, Азербайджана и России?

А. Г. – В дипломатии успеха достигают те из дипломатов, которые умеют извлечь из уже имеющихся документов максимум выгод для своей страны. Я считаю подписание этой декларации весьма положительным для Армении по той простой причине, что после окончания военных действий, за последние 14 лет – это первый случай, когда президент Азербайджана подписывается под документом, где говорится об исключительно и только мирном урегулировании вопроса. Гарантом этого стал поставивший под этим документом свою подпись президент Российской Федерации. Это - самое большое приобретение и достижение. То есть, теперь Г.Алиев должен раз 10 подумать прежде чем в каждом телевыступлении упоминать о возможности военного разрешения конфликта, повергая в «ужас» армян информацией о том, что военные расходы Азербайджана в скором времени будут равны бюджету Армении. Если он будет продолжать говорить об этом открыто, то приобретет репутацию ястреба, агрессора. Это первый положительный момент. Второй - заключается в том, что Азербайджан, согласно этой декларации (как и Армения), обязуется покончить с военной риторикой, воинственными выступлениями и, по возможности, смягчить ту милитаристскую политику, которая ему присуща. Почему я это выделяю? Потому что под известной резолюцией Генеральной Ассамблеи ООН, осуждающей Армению за ¦ оккупацию азербайджанских территорий§ в позапрошлом году подписались, главным образом, исламские страны, а также Украина, Молдавия и Грузия. То есть, свои подписи поставили, в основном, члены Организации Исламская Конференция. В последние годы, судя по всему, их весьма впечатлили воинственные заявления азербайджанского руководства, звучавшие в постоянном режиме на их саммитах. Теперь они, прежде чем голосовать за подобные резолюции, также подумают.

А третий положительный вывод в том, что в декларации констатировано, что

решение вопроса Карабаха должно быть в соответствии с нормами международного права. В 1970 году Генассамблея ООН приняла Декларацию о принципах международного права, касающихся дружественных отношений и сотрудничества между государствами, в которой важнейшим незыблемым правом утверждено право человека жить, право на жизнь. Это важнейшее основополагающее право в последствии было закреплено в Хельсинкском Заключительном акте СБСЕ в 1975 году. Это означает, что армянская дипломатия может в качестве непререкаемого, решающего аргумента использовать неопровержимый факт того, что в составе Советского Азербайджана неоднократно подвергалось опасности само право армян, проживающих в Азербайджане и НКАО, на жизнь. Об этом свидетельствуют имевшие место погромы в Сумгаите, Кировабаде, Баку, Шамхоре и др. областях Азербайджана. Это может стать весомым доводом, если конечно число лиц, «каркающих» внутри страны, поубавится, и второе, если в ходе переговоров принцип права на жизнь сделать постоянно акцентируемым. Тем более, что аналогичным образом поступил министр иностранных дел России Сергей Лавров в своем интервью авторитетной газете «Газета Выборча» от 11 сентября т. г., когда комментировал грузино-югоосетинскую войну. С. В. Лавров пояснил, что в ситуации с Южной Осетией и Абхазией был просто-напросто нарушен основополагающий принцип конвенции вышеупомянутой Декларации, а именно: право на жизнь осетин и абхазов. Вот в какую точку должна бить наша дипломатия.

Оценивая Майендорфскую декларацию, можно найти также и нежелательные нюансы, скажем, было бы хорошо, если б декларацию подписал также и президент уже состоявшейся, независимой НКР, однако, думается, на эту тему с обстоятельными и убедительными комментариями выступил президент. В конце концов в Москву приглашал Д.Медведев, и негоже говорить приглашающему, что без племянника я к тебе домой не ходок…

Ш. Г. – Хорошо. А теперь насчет состоявшегося обсуждения с президентом вопросов урегулирования нагорно-карабахского конфликта. Высказывается такое мнение, что трудно ждать от этой встречи серьезных результатов, потому что оппозиция в ней не участвовала. Согласны ли вы с этим? Думается, здесь есть два подтекста…

А. Г. – Прежде всего причиной встречи была необходимость внесения ясности в расхожие мнения о сути вопросов, которые на самом деле обсуждаются входе переговорного процесса. Надо было разобраться, где правда, а что является вымыслом разного рода политиканов. В армянской политической элите есть такой слой, которому кажется, что весь мир вращается вокруг них и если они не в центре событий, то мир собьется с орбиты. Теперь эти люди не участвовали в обсуждении, а стало быть они не в курсе того, о чем там был разговор на самом деле, в какой атмосфере происходила встреча, какие обсуждались вопросы. То обстоятельство, что они не участвовали в обсуждениях сами, тем самым поставив себя вне

игры, теперь ими значение встречи, естественно, всячески будет принижаться. Встреча была очень полезной и прежде всего благодаря доброжелательной, но в то же время деловой атмосфере, которая расположила собравшихся к искренности. И результаты консультаций с президентом страны в перспективе могут быть весьма и весьма положительными. Важно все произошедшее адекватно довести до сознания нашей общественности, естественно, с учетом достигнутой на встрече договоренности – не ссылаться на президента страны, чтобы не сделать его в определенной степени уязвимым для азербайджанской или турецкой пропаганды. В результате лидеры 50 партий выступили с солидарной позицией, о том, что никто не имеет монопольное право на решение вопроса Нагорного Карабаха. В мирном решении этого вопроса не должно быть людей, которые своими выступлениями позиционируют себя в качестве героев, а также не должно быть политиков, которые поспешат объявить себя победителями или лиц, кого объявят побежденными. И, наконец, главное приобретение в том, что среди всех участников обсуждения, деятелей с разными взглядами и идеологией, главенствовало убеждение в том, что самоопределение Нагорного Карабаха, его независимость – это реальность, а Нагорный Карабах ни в коем случае невозможно представить в составе Азербайджана. Это самое главное достижение.

Ш. Г. – Жизненный вопрос или инстиктивный? Ответьте по возможности короче…

А. Г. – Что вы имеете в виду?

Ш. Г. – Вопрос Карабаха для армян жизненно важный или мы воспринимаем его на инстинктивном уровне?

А. Г. – Значит так. Государства, народы и племенные группы которого руководствовались инстинктами, уже давно не являются фактором в мировой политике. Карабахский вопрос для нас судьбоносный, жизненно важный вопрос. От его решения зависит - быть или не быть нашему будущему и в осознании этого, думаю, что мы все единодушны.

Второй вывод, по которому состоялся консенсус на встрече с президентом, в том, что была подтверждена обязательность обеспечения сухопутной связи между Нагорным Карабахом и Республикой Армения. Третье заключение, к которому пришли лидеры всех партий, - сверхдержавы должны стать гарантами безопасности как народа, так и государства Нагорного Карабаха.

Здесь я считаю очень важным сделать следующее уточнение. Эти три принципа для всех нас, конечно, приемлемы. Теперь предстоит самое трудное. Каждый, кто чем может, должен помочь нашим властям, ведущим переговоры дипломатам. Скажу, в каком вопросе. Например, что означает обеспечение безопасности народа Карабаха? Сможем ли мы обеспечить безопасность, если, например, сдадим Кельбаджар, если выведем силы самообороны из освобожденного Горадиза? Если ширина коридора в районе Лачина будет, скажем, 15-километровой? Это доста-

точная гарантия для безопасности или нет? Мы должны понять, задаться вопросом, если даже Кельбаджар, допустим, будет под контролем международных сил, то кто даст гарантии, что не нарушится бесперебойное снабжение питьевой водой Арцаха? Ведь 85% водных запасов Карабаха обеспечивается реками, истоки которых находятся в Кельбаджаре, нашем историческом Карвачаре? Кто поручится, что эту воду не отравят, а русла рек не изменят? Кстати, здесь же находятся истоки рек Арпа и Воротан, которые в конечном итоге по туннелю вливаются в Севан…

Словом, каждый из нас должен вдуматься во все эти вопросы. Эти проблемы должны проработать специалисты, предложить свое видение по их решению. Чтобы все эти насущные проблемы (помимо приемлемых для нас и оговоренных выше трех принципов мирного урегулирования) в ходе переговорного процесса обязательно озвучивались бы с армянской стороны. Необходимо, чтобы ответы на них давала не только азербайджанская сторона в лице Ильхама Алиева, но и страны –сопредседатели Минской группы ОБСЕ.

Я полагаю, что сегодня сложилась особая, думается, в целом благоприятная ситуация для всех нас и мы обязаны ею воспользоваться. Я здесь вижу положительные симптомы и, не удивляйтесь, есть хорошее знамение в победе наших шахматных героев. Они показали, каков потенциал сплоченных воедино, думающих и нацеленных на победу армян. Когда мы вместе, когда действуем без зависти, слитно идем к единой цели – получается то, что мы все увидели в Дрездене на шахматной олимпиаде.

“Комсомольская Правда”, 12-18. XII. 2008.

Ո՞ՐՆ Է ԱԶԳԸ ՀԱՄԱԽՄԲԵԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԸ

«ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ» ԱՌԱՋՆՈՐԴ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԸ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ԻՐ ՏԱՐԲԵՐԱԿԸ

– Պարոն Գեղամյան, ինչպես հայտնի է, ԵԽԽՎ Մոնիտորինգի հանձնաժողովի նիստում օրերս քննարկվեց Հայաստանի կողմից 1609 և 1620 բանաձևերի կատարման վերաբերյալ Թոմաս Համարբերգի զեկույցը: Ընդունվել է առաջարկ հունվարյան նստաշրջանում զրկել Հայաստանի պատվիրակությանը ձայնի իրավունքից: Ինչպե՞ս եք գնահատում Մոնիտորինգի հանձնաժողովի ընդունած որոշումը:

– Նախ, ուզում եմ ընթերցողների ուշադրությունը սևեռել աչք զարնող հետևյալ իրողության վրա: Առաջին տպավորությունն այնպիսին է, որ ԼՏՊ-ն իր թիմակիցների հետ այնպիսի ցնծություն և բավարարվածություն չէին ապրի մարտի 1-2-ի գործով կալանավորվածներին համաներում շնորհելու պարագայում, ինչքան ըմբոշխնում են հիմա, երբ Եվրախորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի Մոնիտորինգի հանձնաժողովն ընդունեց բանաձևի նախագիծ, որը ներկայացվելու է 2009 թ. հունվարի 26-30-ին տեղի ունենալիք ԵԽԽՎ նստաշրջանի քննարկմանը:

Փարիզում ակնկալված իրադարձություն է տեղի ունեցել, բայց եթե հիմա փորձենք ձեզ հետ զուտ գնահատականներ տալ կատարվածին, ապա ի սկզբանե սխալ ուղի ընտրած կլինենք: Ասեմ՝ ինչո՞ւ:

Փաստորեն, Եվրախորհուրդը, լինելով քաղաքական մարմին, ներկայումս ավելի շատ հակված է գործունեություն ծավալել իրավական դաշտում: Գիտենալով դա, պարտավոր էինք ձեզ հետ միասին նախապես Եվրախորհրդի առաջ խնդիր դնել, որ այդ կազմակերպությունը տա մարտի 1-ին Հայաստանում տեղի ունեցածի քաղաքական գնահատականը: Այդ դեպքում նրա գործունեությունը, այն է՝ քաղաքական գնահատական տալը, ինքնին հասկանալի և ընդունելի կլիներ:

Այլապես, ստացվում է, որ Հայաստանի Հանրապետության իշխանություններին և, ինչու չէ, ժողովրդին փորձում են պատժել զուտ նրա համար, որ իշխանությունները մարտի 1-ից հետո մեր երկրում կարողացան կանխել քաղաքացիական պատերազմը՝ դրանից բխող ամենածանր հետևանքներով: Փաստենք, որ եթե մարտի 1-ին չձեռնարկվեին կտրուկ միջոցներ, իրադարձությունները ինքնահոսի թողնվեին, ապա Հայաստանի Հանրապետությունում սկիզբ էր առնելու զինված առճակատում՝ մեծաթիվ մարդկային զոհե-

րով: Սա է դաժան ճշմարտությունը:

Եվ հիմա, ըստ էության, Եվրախորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի քննարկմանն է ներկայացվում մի նախագիծ, ուր առաջարկվում է «կասեցնել Հայաստանի խորհրդարանական պատվիրակության քվեարկելու իրավունքը, քանի դեռ Հայաստանի իշխանությունները հստակորեն չեն ցուցաբերել իրենց քաղաքական կամքը՝ լուծելու 2008 թ. մարտի 1-2-ի իրադարձություններից հետո կալանավորվածներին ազատ արձակելու հարցը»: Մի խոսքով, պատժում են իշխանություններին, որ նրանք կանխել են քաղաքացիական պատերազմը:

Ինքնին հասկանալի է, որ բավական էր մի վաշտ, մի գումարտակ անցներ ընդդիմադիրների կողմը, բախումը՝ արյունալի հետևանքներով, անտարակույս, տեղի կունենար: Քաղաքացիական պատերազմին կհետևեր այն, որ Ադրբեջանը կսկսեր պատերազմական գործողություններ Լեռնային Ղարաբաղի ամբողջ սահմանի երկայնքով, ինչու չէ, նաև Հայաստանի Հանրապետության հյուսիսարևելյան սահմանում: Եվ այն, ինչ կանխվեց Ռուսաստանի միջամտության պայմաններում Հարավային Օսիայում և Աբխազիայում, նույնը կլիներ Հայաստանի Հանրապետությունում:

– 1609 և 1620 բանաձևերի պահանջների կատարման ուղղությամբ դրական որոշակի քայլեր, այնուամենայնիվ, արձանագրվել են: Սակայն դրականը նկատելով հանդերձ՝ կայացվել է կոշտ որոշում: Եվրախորհրդի Մոնիտորինգի հանձնաժողովը ինչո՞ւ է դիմել այս քայլին:

– Այդ հարցերի պատասխանները այբբենական ճշմարտություններ են: Ինչո՞ւ է Եվրախորհրդի հանձնաժողովը դիմել այդ քայլին. այն պարզ պատճառով, որ լծակ ունենա ազդել Հարավային Կովկասում Ռուսաստանի Դաշնության միակ ռազմաքաղաքական դաշնակցի՝ Հայաստանի Հանրապետության իշխանությունների վրա: Այդ լծակն անհրաժեշտ է, որովհետև թե՛ Եվրամիության, թե՛ Միացյալ Նահանգների գերխնդիրներից մեկը մեր տարածաշրջանում այն է, որ կարողանան Ռուսաստանի ազդեցությունը Հարավային Կովկասի երկրներում հնարավորինս թուլացնել, մասնավորապես ՌԴ-ն շրջանցող նոր նավթա և գազատարներ անցկացնել այստեղով: Դա հնարավորություն կտա Եվրոպայի էներգամատակարարումը դիվերսիֆիկացիայի ենթարկել, ավելին՝ Կենտրոնական Ասիայի և Ադրբեջանի նավթային ու գազային ռեսուրսները, կրկնում եմ, Ռուսաստանին շրջանցելով, մղել Եվրոպա:

Ահա այս դիտանկյունից պետք է վերլուծենք մեր երկրի շուրջ ընթացող զարգացումները: Դատեք ինքներդ՝ հարցը հասել է այնտեղ, որ եվրոպացիները, ավա՜ղ, մեզ վերաբերող հարցերում արդեն իսկ իրենք իրենց հակասում են: Որովհետև Փարիզում ընդունած բանաձևով իրենց դրել են շատ խոցելի վիճակում:

Ո՞րն է դա: Հիշեցնեմ, որ կա Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական դատարան, որի նստավայրը Ստրասբուրգում է: Երբ ուշադիր

վերլուծության ես ենթարկում Եվրախորհրդի, ինչու չէ, նաև ԵԱՀԿ և միջազգային այլ կառույցների պաշտոնյաների հայտարարությունները, ապա տպավորություն է ստեղծվում, որ նրանք, ըստ էության, ստանձնել են Ստրասբուրգի դատարանի գործառույթները: Ավելին, դեռ դատական վճիռները չլինելու պայմաններում արդեն տալիս են գնահատականներ, հայտարարում, որ Հայաստանում կան քաղբանտարկյալներ:

Պարոն Համարբերգը ասում է, որ դատաքննչական մարմինների կողմից տրված եզրակացությունների մեջ նկատվում է պրոֆեսիոնալիզմի պակաս, այսինքն՝ Եվրախորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարը գնահատական է տալիս քննչական մարմնին: Եվ դա արվում է քննության ընթացքում, երբ դեռ բացակայում է դատարանի ընդունած վճիռը, էլ չենք ասում՝ Եվրադատարանի կողմից:

Ուշագրավն այն է, որ, ըստ նրա, «մարտի 1-ի» գործով ազատազրկվածների գործողությունների մեջ բացարձակապես չկար միտում բռնի ուժով հեղաշրջում անել Հայաստանում: Ընդունենք, այո, ճիշտ է ասում պարոն Համարբերգը: Ի՞նչ է սա նշանակում. նշանակում է, որ մարտի 1-ին իշխանափոխություն անելու քաղաքական խնդիր օրակարգում չի եղել: Իսկ եթե չի եղել, ապա նա ինքն իրեն հակասում է: Եթե հեղաշրջում անելու փորձ չկար, այն է՝ քաղաքական խնդիրներ դրված չէին, ապա ինչպե՞ս կարելի է այդ ամենի հետևում կանգնածներին քաղաքական դատապարտյալ, քաղաքական կալանավորներ համարել:

– Անդրադառնանք 1609 և 1620 բանաձևերի պահանջների կատարման հարցին:

– Ամբողջ խնդիրն այն է, որ ոմանք 1609 և 1620 բանաձևերը դարձնում են, ասես թե, աստվածաշնչյան սուրբ պահանջներ: Մինչև 1609, 1620 բանաձևերի պահանջների կատարումը պետք է հակընդդեմ հարցադրում արվեր: Մասնավորապես, ինչո՞ւ Եվրախորհրդի Խորհրդարանական Վեհաժողովը 16 տարի շարունակ բերանը ջուր առած լռում է, երբ Հայաստանի Հանրապետությունը Եվրախորհրդի անդամ երկու երկրների կողմից ենթարկվում է շրջափակման՝ տարեկան 800 միլիոնից 1 միլիարդ դոլարի վնաս կրելով:

Ինչո՞ւ նույն Եվրախորհրդի Խորհրդարանական Վեհաժողովը բերանը ջուր է առել և բացարձակապես չի արձագանքում, երբ Կառլա դել Պոնտեն, որը նախկին Հարավսլավիայի գործերով Հաագայի միջազգային դատարանի դատախազն էր, մոտ մեկ տարի առաջ հրապարակել է գիրք, որտեղ ուղղակիորեն գրված է, որ Կոսովոյում կենդանի մարդկանց՝ սերբերի ներքին օրգաններ են վաճառվել:

Հարգարժան ԵԽԽՎ-ն այս բոլոր հարցերը թողել է մի կողմ և ընկել է Հայաստանի հետևից: Հասկացանք, թե այդ ամենի հետևում ինչ շահեր են հետապնդվում, և ովքեր են կանգնած դրանց թիկունքում: Ուրիշ բան, որ հարկադրված ենք լռել, «աշխարհի» հետ միանգամից կռիվ տալ չենք կարող, ու-

րիշ բան, որ իշխանություններն էլ, ցավոք, ստեղծված իրավիճակում շատ խոցելի են:

Ցավոք եմ ասում ոչ թե նրա համար, որ դարդ եմ անում իրենց խոցելիության համար, այլ դարդ եմ անում երկրիս համար, որ տրամվայով գործի գնացող ցանկացած եվրոպական չինովնիկ գալիս է Հայաստան և հանդգնում է փորձ կատարել ու մի ամբողջ երկիր շիշը մտցնել: Այ, դարդս դա է:

– Ձեր կարծիքով, ինչո՞ւ Մոնիտորինգի հանձնաժողովի 80-ից ավելի անդամներից այդ քննարկումներին մասնակցել էր ընդամենը 15 պատվիրակ:

– Ես գտնում եմ, որ եթե թե՛ մեր պատվիրակությունը, և թե՛ մեր դիվանագիտական կորպուսը լավ աշխատեին, արդյունքը կլիներ ուրիշ: Չեմ կարծում, որ Հայաստանի Հանրապետությունը Եվրախորհրդի կազմում, եթե չեմ սխալվում, 46 անդամ երկրներից ընդամենը 5 բարեկամ ունի, որոնք էլ դեմ են եղել Մոնիտորինգի հանձնաժողովի կողմից առաջարկված բանաձևի ընդունմանը:

– Այսօր շատ է խոսվում այն մասին, թե «մարտի 1»-ի գործով անցնողներին կարելի է ազատ արձակել:

– Ինչ վերաբերում է նրանց ազատ արձակելուն, ապա, ինչպես ասում են, չկա չարիք, առանց բարիքի: Ո՞րն է այստեղ չարիքը, ո՞րը՝ բարիքը: Իր գործողություններով Նախագահ Սերժ Սարգսյանը, ասես թե, հանրությանը բերեց այն համոզմունքին, որ մեր բանտարկված ընկերներին չազատելու մեջ միակ շահագրգիռ անձը Լ. Տեր-Պետրոսյանն է:

Ակամայից մտքիս է գալիս Սողոմոն Իմաստունին հռչակ բերած դատը: Հիշո՞ւմ եք, երբ երկու կանայք վիճարկում էին նորածին երեխայի մայրության հարցը: Երբ իրական մայրը գիտակցաբար հրաժարվում է իր զավակից, համաձայնելով նրան տալ օտար մի կնոջ, քանի որ հասկանում է, թե հակառակ պարագայում ի՞նչ վտանգի առաջ կկանգնի նորածինը. Սողոմոն Իմաստունը սպառնացել էր երեխային երկու կես անել և տալ մայրության հավակնող երկու կանանց:

Հիմա, եթե մեր Մյասնիկ Մալխասյանը, Սասուն Միքայելյանը, Հակոբ Հակոբյանը և մյուս ազատամարտիկները իսկապես թանկ էին Լ. Տեր-Պետրոսյանի համար, իսկ նրանք էլ գիտենք, ավա՜ղ, առողջական լուրջ խնդիրներ ունեն, ինչո՞ւ այդ ամենը իմանալով ԼՏՊ-ն հանուն իրեն կուրորեն հավատացածների, իր հոգևոր զավակների փրկության, չի ասում՝ եղբայր, այո, մեղավոր են, սխալ են արել: Չէ՞ որ, եթե նա ազատման խնդրանքով դիմեր, համոզված եմ, որ Նախագահ Սերժ Սարգսյանի կողմից այդ միջնորդությունը կբավարարվեր:

– Դուք Տեր-Պետրոսյանին ինչ-որ տարբերա՞կ եք առաջարկում, միգուցե կօգտվե՞ն ձեր այդ տարբերակից:

– Խելք ունենային օր առաջ կօգտվեին, բայց ես այլ տարբերակ եմ

առաջարկել, հիմա կրկնեմ: Իմ առաջարկը հետևյալն է. եթե հիշում եք, 1998 թ. Նախագահ Ռոբերտ Քոչարյանը բանտից ազատեց մի խումբ դաշնակցականների, այդ թվում՝ Վահան Հովհաննիսյանին, Արմեն Ռուստամյանին և այլոց՝ Քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի համաձայն:

Հիմա նույնը, կարծում եմ, պետք է անի Սերժ Սարգսյանը: Չէ՞ որ արդեն իսկ ակնհայտ է, մարդիկ հասկացել են, որ միայն Լ. Տեր-Պետրոսյանը չի ցանկանում դա: Ստեղծված այս նոր իրավիճակում, կարծում եմ, խանգարող և ոչ մի այլ հանգամանք չկա:

Նորից եմ կրկնում՝ ճանապարհը Քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի կիրառումն է: Թե չէ ինչի՞ ականատեսն ենք մենք հիմա: Լևոնականները մի կողմից ասում են՝ իշխանություններին հանգիստ թողնենք, քանի որ Լեռնային Ղարաբաղի հարցն է լուծվում, սակայն, մյուս կողմից՝ դրսի ուժերի, զանազան միջազգային կազմակերպությունների միջոցով փորձում են իշխանություններին ծնկի բերել, թուլացնել, երկրի վիճակն էլ ապակայունացնել: Ահա մենք սրա ականատեսն ենք:

Եվ ամենահետաքրքրականն այն է, որ մեր երկրի դեմ ուղղված գործողությունները անում են ինքնամոռաց, ավելին՝ դա դարձրել են գերնպատակ ու գերխնդիր:

Անազատության մեջ գտնվողները՝ Սասուն Միքայելյանը, Մյասնիկ Մալխասյանը, Հակոբ Հակոբյանը, վատառողջ են, Լևոն, եթե նրանց հարազատ ես, դու դիմիր, գիտես, որ իրենք պատվով, թասիբով տղերք են..., ինքդ դիմի Նախագահին՝ ասելով, որ դու սխալ ես, բայց ինձ համար այս մարդկանց կյանքը շատ ավելի թանկ է: Գործնականում ապացուցիր, որ դա այդպես է և ավելի է գերադասելի քեզ համար, քան երկրի ներսում ապակայունություն ստեղծելով՝ իշխանափոխություն անելը: Եվ դու՝ Լևոն, դրանից միայն ու միայն կշահես:

Մինչդեռ իմ տպավորությունն այնպիսին է, որ Հանրապետության Նախագահը, ելույթներ ունենալով Նյու Յորքում, Մոսկվայում և Բրյուսելում, սփյուռքահայ մտավորականների, գործարարների առջև հայտ ներկայացրեց համազգային լիդեր դառնալու: Իսկ համազգային լիդեր դառնալու ամենավեհ առաքելությունը ազգը կոնսոլիդացիայի ենթարկելն է: Ազգը կոնսոլիդացիայի ենթարկելու եզակի ճանապարհը, ըստ իս, Քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի կամ էլ Սահմանադրության հոդված 54-ի 17-րդ կետի կիրառումն է:

ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

«Հայոց Աշխարհ», 20. XII. 2008:

ԺԱՄԱՆԱԿԸ ԱՄԵՆ ԻՆՉ, Ի ՎԵՐՋՈ, ԿԴՆԻ ԻՐ ՏԵՂԸ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ» ԱՌԱՋՆՈՐԴ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԻ ՀԵՏ

– Պարոն Գեղամյան, արտաքին քաղաքական ի՞նչ իրավիճակում է մեր երկիրն այսօր, երբ ԵԽԽՎ-ն քննարկելու է Հայաստանին վերաբերող բանաձևերը կատարելու արդյունքները:

– Եթե նպատակ ունենք անկողմնակալ վերլուծության արդյունքում պարզել, թե առաջիկայում ի՞նչ է սպասում մեր երկրին արտաքին քաղաքական ասպարեզում, ապա պետք է անդրադառնանք այս հարթությունում անցած մեկ տարում տեղի ունեցած կարևորագույն իրադարձություններին: 2008 թվականին շրջադարձային մի շարք իրադարձություններ են տեղի ունեցել, որոնք պայմանավորված էին Հայաստանի նորընտիր Նախագահի արտաքին քաղաքական աննախադեպ և երբեմն ոչ ստանդարտ դիրքորոշումներով:

Մասնավորապես, ցանկանում եմ հիշեցնել, որ 2008 թ. հունիսի 23-25-ին Մոսկվա կատարած առաջին պաշտոնական այցի ժամանակ Նախագահ Սերժ Սարգսյանը Ռուսաստանի հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ ելույթ ունենալով ուղղակիորեն հրավիրել էր Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլին Երևան՝ միասին դիտելու երկու երկրների ֆուտբոլի հավաքականների մրցախաղը: Բնականաբար, հանդիպման առաջարկ անելիս բնավ սպորտային որևէ նպատակ չէր հետապնդվում, պարզապես մենք ականատեսը դարձանք, երբ մեր երկրի Նախագահը առանց որևէ միջնորդի Թուրքիայի նախագահին հրավիրեց Հայաստան: Այդ նախաձեռնությունը արտաքին քաղաքական ոլորտում թողեց երկրաշարժին համարժեք ազդեցություն: Քաղաքական այս քայլի ունեցած տպավորությունն առավել մեծ եղավ, քանի որ այն հնչեց ՀՀ ռազմաքաղաքական դաշնակից Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվայում: Ինչո՞ւ եմ սա հատուկ ընդգծում, որովհետև հիշենք՝ վերանկախացած Հայաստանի տասնյոթամյա նորագույն պատմության ընթացքում և՛ ԱՄՆ-ը, և՛ Եվրամիությունը քանիցս պատրաստակամություն էին հայտնել հանդես գալ որպես միջնորդ Հայաստան - Թուրքիա բարձր մակարդակի որևէ հանդիպում կազմակերպելու առաքելությամբ: Ինքնին հասկանալի է, որ դրանով իսկ շեշտակի կբարձրանար նրանց դերակատարությունը մեր տարածաշրջանում՝ մեր երկրի համար անորոշությանը զուգընթաց:

2008-ի հաջորդ արտաքին քաղաքական կարևորագույն իրադարձությունը մոսկվայամերձ Մայենդորֆյան ամրոցում տեղի ունեցած եռակողմ

հանդիպումն էր, որի արդյունքը Հայաստանի Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կողմից Հռչակագրի ընդունումն էր: Հռչակագիրը, անշուշտ, աննախադեպ արձանագրում է հենց այն առումով, որ Արցախում պատերազմական գործողությունների դադարից 14 տարի անց առաջին անգամ Հայաստանի և Ադրբեջանի նախագահները ստորագրեցին մի փաստաթղթի տակ, որի հենց առաջին իսկ հոդվածը կողմերին պարտավորեցնում է ապահովել տարածաշրջանում կայունություն և անվտանգություն՝ հակամարտությունը քաղաքական ճանապարհով, միջազգային իրավունքի շրջանակում կարգավորելու համար: Որշագրավ է, որ այս խնդրի լուծման երաշխավորն է Ռուսաստանի Դաշնությունը՝ ի դեմս նախագահ Դմիտրի Մեդվեդևի, որը նույնպես ստորագրել էր Հռչակագրի տակ:

Նկատենք, որ Մայենդորֆյան հռչակագիրը առավել կարևորում եմ այն առումով, քանզի դրան նախորդել էր 2008 թ. սեպտեմբերի 25-ին ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 63-րդ նստաշրջանում ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի ծրագրային ելույթը: Ելույթ, որտեղ միջազգային այդ հեղինակավոր կազմակերպության ամբիոնից ի լուր աշխարհի հայտարարվել էին անքննելի այն սկզբունքները, որոնց շրջանակում հնարավոր է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորումը: Մեկ անգամ ևս ամրագրվեցին ու հռչակվեցին այն երեք հիմնարար դրույթները, որոնցով Հայաստանի Հանրապետությունը առաջնորդվում է՝ հակամարտությունը խաղաղ լուծելու բանակցային գործընթացում: Աշխարհին վերստին հայտարարվեց, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը պետք է ինքնորոշվի և բացառվում է Ադրբեջանի կազմում որևէ կարգավիճակով նրա ներկայությունը, որ Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունները պետք է ունենան ցամաքային ընդհանուր սահման, և որ պետք է ապահովվեն Լեռնային Ղարաբաղի ու նրա ժողովրդի անվտանգությունը միջազգային երաշխիքներով:

Հատուկ ուշադրություն եմ հրավիրում այն փաստի վրա, որ նշածս բոլոր իրադարձությունների ժամանակ Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Նախագահ Սերժ Սարգսյանի, դրսևորել է բացառիկ ինքնուրույնություն: Ասել կուզի, որ նրա որևէ գործողություն արտաքին ուժերի թելադրանքով կամ ազդեցությամբ պայմանավորված չի եղել, այլ գտնում եմ, որ բխել է Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման գերխնդրից: Իսկ երբ պետությունն ինքնուրույն է գործում, և, ինչպես ասացի, առաջնորդվում է սեփական երկրի ու ժողովրդի շահերով, ապա դրանք, ավա՜ղ, միշտ չէ, որ համընկնում են մեր տարածաշրջանում ուժի միջազգային կենտրոնների, հզոր պետությունների, անգամ բարեկամ երկրների աշխարհաքաղաքական շահերին: Արտաքին քաղաքական լրջագույն ձեռքբերումների արդյունքն էր նաև Իրան - Հայաստան գազատարը շահագործման հանձնելու կայացած իրողությունը, ինչը վերահաստատեց Հայաստանի և Իրանի Իսլամական Հանրապետությունների փոխշահավետ համագործակցության շարունակականությունը, և որը մեր ժողովուրդների միջև բարեկամական հարաբերությունների խորացման նոր դրսևորում էր:

Ավա՜ղ, այս համապատկերում մենք նաև ականատեսը եղանք, թե ինչպես «Հազարամյակի մարտահրավերներ» ԱՄՆ-ի կորպորացիան սառեցրեց Հայաստանի մարզերում ու գյուղական համայքներում իրագործվող գյուղատնտեսական ծրագրերի իրականացումը: Մինչդեռ այս ծրագրերը վաղօրոք մանրակրկտորեն փոխհամաձայնեցված էին և նպատակ էին հետապնդում թեթևացնելու մեր երկրի գյուղական բնակչության սոցիալական հոգսերը ու բարելավելու նրա տնտեսական վիճակը:

Ահա, այս ամենը համադրելով կարող ենք հասկանալ մի պարզ ճշմարտություն: Աշխարհաքաղաքական առկա բարդագույն իրավիճակում մեր երկրի որդեգրած ինքնուրույն արտաքին քաղաքական գործելաձևը ոչ բոլորի սրտով է: Բնականաբար, նրանք, ովքեր դժգոհ են Հայաստանի այս կեցվածքից, պետք է նաև միջոցներ որոնեին մեր երկրի իշխանությունների նման հպարտ ինքնուրույնությունը իրենց աշխարհաքաղաքական շահերին ենթարկեցնելու համար: Եվ այսօր, եթե այս դիտանկյունից փորձենք վերլուծել Հայաստանի շուրջ ստեղծված արտաքին քաղաքական իրավիճակը, ապա պարտավոր ենք փաստել, որ Հայաստանի նկատմամբ Եվրոպայի ու ԱՄՆ-ի ազդեցությունը, նաև նրանց դերակատարությունը մեր երկրում նվազելու միտում է արձանագրում:

Բնավ, նման պայմանները չէին կարող գոհացնել թե՛ ԱՄՆ-ին և թե՛ ԵՄ-ին, որոնք, ինչ խոսք, ունեն սեփական հետաքրքրություններն ու շահերը Հարավային Կովկասի տարածաշրջանում: Ուստի, մենք պետք է ակնկալեինք նրանց կողմից որոշակի քայլեր և դրանք իրենց երկար սպասեցնել չտվեցին: Այսպես, նախ Եվրամիությունը 2008 թ. դեկտեմբերի 12-ին Լեհաստանի և Շվեդիայի նախաձեռնությամբ ընդունեց «Արևելյան գործընկերություն» ծրագիրը, համաձայն որի ԱՊՀ մի շարք երկրներ՝ Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը, Ուկրաինան, Մոլդովան և Բելոռուսը ընդգրկվեցին այդ ծրագրի մեջ, որի առանցքն է հիշատակածս երկրների՝ լինի դա օրենսդրություն, լինի արժեհամակարգի համապատասխանեցումը ԵՄ երկրներին, սակայն առանց Եվրամիությանը անդամակցության պայմանի: Ըստ որոշ փորձագետների՝ հիմք դրվեց «բարեկամության»՝ ուղղված ՌԴ-ի դեմ: Սա բլիթն է: Իսկ Հայաստանի Հանրապետությունը «դարձի բերելու» մտրակը գործի դնելու առաջադրանքը հանձնարարվեց այս քաղաքականության ջատագով հանդիսացող այն ուժերին, որոնք առավել կակտիվանան (ինչպես նախկինում դրա ականատեսն էինք) ԵԽԽՎ-ի հունվարի 27-ին, այսօր, կայանալիք նստաշրջանում:

– Դուք ակնարկում եք, որ իրենց սեփական շահերը հետապնդող աշխարհաքաղաքական ուժերի համար Հայաստանի ժողովրդավարացումը միայն մեր ներքին գործերին միջամտելու առի՞թ է:

– Աշխարհաքաղաքական հնարավոր զարգացումները պետք է ակնկալել ներկայացված համապատկերի շրջանակներում: Վերջերս Ուկրաինայի կողմից սանձազերծված «գազային պատերազմի» պայմաններում ԵՄ-ի հա-

մար խիստ արդիականացավ Կենտրոնական Ասիայի և Ադրբեջանի գազային պաշարների արտահանումը այլընտրանքային «ՆԱԲՈՒԿԿՈ» գազատարով, որը, շրջանցելով Ռուսաստանի Դաշնությունը, ծրագրում են անցկացնել Հարավային Կովկասով: Իսկ այն, որ այդ «գազային պատերազմը» սկսվեց Ուկրաինայի վերնախավի որոշակի թևի կողմից, փաստ է, որն այլևս կասկած չի հարուցում և ոչ մի ողջամիտ մարդու մոտ, ինչպես նաև կասկած չի հարուցում այն իրողությունը, որ այդ երկրի իշխանության հիշատակած հատվածի թիկունքում ամենևին էլ Ուկրաինայի ժողովուրդն ու քաղաքական ընտրանու մեծամասնությունը չէ, որ կանգնած էր, այլ բացառապես քաղաքական այն ուժերն էին, որոնք ցուցումներ էին ստանում հեռու հեռուներից:

Այս իսկ պատճառով, կրկնեմ, գերկարևոր աշխարհաքաղաքական գործոն դարձավ դեպի Արևմուտք նոր գազատար կառուցելու խնդիրը: Սկսվեցին «ՆԱԲՈՒԿԿՈ» գազատարի նախագծման ու կառուցման համար հիմքեր ստեղծելու աշխատանքները: Վերստին հիշեցնեմ, որ այս գազատարը պետք է անցնի մեր տարածաշրջանով և Կենտրոնական Ասիայի ու Ադրբեջանի գազը տեղափոխի Եվրոպա: Այստեղ է, որ աշխարհաքաղաքական հզոր ուժերի համար առավել կարևոր է դառնում մեր տարածաշրջանում կայուն խաղաղության հաստատման հրամայականը, որը շուրջ 8 մլրդ եվրո արժողությամբ այդ գազատարի կառուցման նախապայմանն է: Հանգամանք, որն էլ Ադրբեջանի «մատուցմամբ» հնարավոր է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի ադրբեջանանպաստ լուծման պայմաններում: Եվ ամենևին էլ պատահական չէր, որ 2008 թ. նոյեմբերին Բաքվում կայացավ արևելաեվրոպական, Վրաստանի, Ադրբեջանի՝ 15 երկրների ղեկավարների գագաթաժողովը խնդրո առարկայի շուրջ: Ինքնին հասկանալի է, թե այդ գագաթաժողովի արդյունքում հռչակագիր ստորագրած Եվրախորհրդի անդամ երկրների դիրքորոշումներն ինչպիսին կլինեն, երբ ԵԽԽՎ-ում նժարի վրա դրվեն Հայաստանի և Ադրբեջանի համար կենսահույզ հարցեր... Այստեղ կրկին ու կրկին նշենք, որ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի մեզ բավարարող լուծումները խարսխված պետք է լինեն վերը հիշատակված երեք հիմնարար սկզբունքների անվերապահ կատարման վրա:

ԵԽԽՎ-ում Հայաստանին վերաբերող օրակարգային հարցի քննարկումների արդյունքները նախևառաջ պայմանավորված կլինեն այն հանգամանքով, թե քննարկմանը մասնակից աշխարհաքաղաքական շահագրգիռ ուժերը ի՞նչ չափով տուրք կտան Ադրբեջանին հաճոյանալու ցանկությանը: Եթե գերիշխի ողջամտությունը, ապա հենց Ադրբեջանի հովանավոր երկրները չպետք է հաստատեն մոնիտորինգի խմբի համազեկուցողների ներկայացրած բանաձևի նախագիծը: Այլապես պատժամիջոցներ կիրառելու պարագայում Հայաստանը էլ ավելի կօտարեն իրենցից: Հանձինս այդ երկրների մենք չենք տեսնի անկողմնակալ ու անշահախնդիր գործող պետություններ: Այլ նրանց կընկալենք աշխարհաքաղաքական որոշակի ուժերի դրածոներ, որոնք իրենց նավթագազային շահերը գերադասում են իրական ժողովրդավարական զար-

գացումներին աջակցելուց: Հակառակ պարագայում մենք ականատեսը կլինենք այն իրավիճակի, որը բնութագրվում է ձգտմամբ՝ երևալ ավելի կաթոլիկ, քան Հռոմի պապը կամ էլ այս դեպքում կստացվի, որ Եվրոպան ուզում է ավելի հայամետ ու հայանպաստ երևալ, քան մենք՝ հայերս: Եվրոպայի այսպիսի դրսևորումը, եթե դա տեղի ունենա, առնվազն համոզիչ չի լինի և Եվրախորհրդի պառլամենտականներին պատիվ չի բերի: Ավա՜ղ, հնարավոր նման դրսևորման դեպքում նրանց հետապնդած իրական շահերը մեր երկրում ժողովրդավարություն հաստատելու ցանկության հետ որևէ կապ չեն ունենա: Իսկ եթե նրանց համար կարևորն ու առաջնայինը իրապես ժողովրդավարությունն է, ապա նրանք քանիցս պարտավոր էին արձանագրել, որ Լեռնային Ղարաբաղում ժողովրդավարությունը կրկնակի բարձր մակարդակում է, քան Ադրբեջանում, և, ինչու ոչ, ավելի բարձր է, քան Հայաստանի Հանրապետությունում՝ դրանից բխող համապատասխան եզրակացությունների արձանագրմամբ:

– Ինչպիսի՞ հնարավորություններ ունեն մեր պատվիրակության անդամները իրավիճակի վրա ազդելու համար: Արդա՞ր է նրանց համարել քավության նոխազ, եթե շահախնդիր Եվրոպան պատժամիջոց կիրառելու որոշում կայացնի:

– Երբեք ու երբեք ստեղծված իրավիճակի հիմնական պատասխանատվությունը չի կարելի բարդել խորհրդարանական մեր պատվիրակության անդամների վրա: Պարզապես պետք է գնահատել, թե նրանք կարողացե՞լ են արդյոք համոզիչ ու մատչելիորեն մեր երկրում 2008 թ. նախագահական ընտրություններից հետո ստեղծված իրավիճակը անկողմնակալ ներկայացնել ԵԽԽՎ պատգամավորներին՝ նրանց, ովքեր պետք է քվեարկեն: Չէ՞ որ այնտեղ միայն նավթային լոբբինգի ազդեցությամբ ու նավթային շահեր սպասարկող պատգամավորներ չեն ներկայացված: Նրանցից շատ-շատերն ազնիվ, անկախ և խորաթափանց քաղաքական գործիչներ են: Եթե նրանց ճշգրտորեն մատուցվեն խնդրո առարկայի շուրջ պատճառահետևանքային կապերը, դրանց թիկունքում կանգնած ճիշտ այդ նույն նավթագազային և դրանից բխող աշխարհաքաղաքական նպատակներ հետապնդող ուժերի նկրտումները, ապա Եվրախորհրդի պատվիրակները, կարծում եմ, իրենց ճիշտ հետևությունները կանեն:

– Պարոն Գեղամյան, ինչպե՞ս եք գնահատում մեր պատվիրակության վիճակը, երբ իր պարտականությունները կատարելուց հրաժարվել է խորհրդարանական միակ ընդդիմադիր ուժի ներկայացուցիչը, իսկ նրան հակառակ Ստրասբուրգ է մեկնել արմատական ընդդիմադիրների ոչ պաշտոնական պատվիրակությունը:

– Բնականաբար, ինձ հետաքրքիր էլ չէ ստեղծված այդ իրողությունը, առավել ևս, թե դա ի՞նչ արձագանք կգտնի եվրոպական երկրների պատվիրակությունների մոտ: Կարևորն այն է, որ մեր երկրի ժողովուրդը տեսնի ու հասկանա, թե ի՞նչ է տեղի ունենում: Ցարական Ռուսաստանի անվանի գեներալ-

լեյտենատ Անտոն Դենիկինը, որը հրաշքով մազապուրծ էր եղել և 1920 թ. գտնվում էր վտարանդության մեջ, երբ տեղեկացավ, որ ֆաշիստական Գերմանիայի զորքերն ընդհուպ մոտեցել են Մոսկվային, գրավոր դիմեց սովետական իշխանություններին՝ պատրաստակամություն հայտնելով իր ռազմական հմտություններն ու փորձը ծառայեցնել հայրենիքի փրկության գործին, թեկուզև շարքային զինվորի կարգավիճակով...

Կարծում եմ, սա է հայրենասիրությունը: Մինչդեռ ոմանք իրենց գործողություններով, ըստ էության, թուլացնելով իշխանություններին, կամա թե ակամա նպաստում են, պարարտ հող են ստեղծում դրսի ուժերի համար՝ մեր երկրի վզով ամենաանբարենպաստ որոշումներ փաթաթել: Դրանով իսկ մեր երկիրը խոցելի դարձնելով ուժի միջազգային կենտրոնների առջև, որոնք ժողովրդավարության հաստատման, մարդու իրավունքների պաշտպանության և նմանատիպ այլնի քողի ներքո շատ հաճախ մեր տարածաշրջանում հետապնդում են ոչ հայանպաստ շահեր: Եթե այս պարզ ճշմարտությունը ոմանք չեն հասկանում կամ իրենց պատվիրատու ուժերի հանձնարարությամբ միտումնավոր նեղացածի կեցվածք են ընդունում, ապա նրանց վարքագիծը թող ժողովուրդը գնահատի: Ժամանակն ամեն ինչ, ի վերջո, կդնի իր տեղը:

ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Հայոց Աշխարհ», 27-28. I. 2009:

ՃԳՆԱԺԱՄԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԵՐԿՈՒ ՈՒՂԻՆԵՐԸ: ԴԱՍԸՆԹԱՑ ՌՈՄԱՆՏԻԿ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԱ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՐՍ Հ 2 ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔՈՎ ԽՈՍԵՑ «ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ» ՆԱԽԱԳԱՀ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԸ

Երկիրը թևակոխել է ճգնաժամի արդեն իսկ նոր փուլ, և դեռ տնտեսության անկման հատակին չենք հասել, որ նախանշենք դրանից դուրս գալու քայլը: Եվ այսօր ամենակարևորն այն է, որ իշխանությունները պետք է մանրակրկիտ վերլուծեն ու հստակ ձևակերպեն, թե որո՞նք են հայաստանյան ճգնաժամի յուրահատկությունները և ինչո՞վ են դրանք պայմանավորված: Գործընթաց, որը, ավաղ, հապաղում են կատարել:

Ի դեպ, նկատենք, որ հանրապետության էկոնոմիկան առանց այդ էլ կուտակել էր ճգնաժամային «ներուժ»: Դրա հետ մեկտեղ հարկ է հաշվի առնել նաև այն, որ համաշխարհային գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամը, ինչ խոսք, իր բացասական հետևանքները թողեց մեր էկոնոմիկայի վրա: Նշենք, որ 2008 թ. ՀՀ-ում իրականացված շինարարության ծավալի աճի տեմպը 2007 թ. նկատմամբ կազմել է ընդամենը 107,1%, իսկ շինարարությունում հիմնական միջոցների գործարկման ծավալը 2007թ. նկատմամբ կազմել է ընդամենը 81,9%, շեշտակի անկում է արձանագրվել քիմիական արդյունաբերությունում, որտեղ 2008 թ. արտադրության ծավալները կազմել են 2007թ. արտադրության ծավալների 85,2 տոկոսը, մետաղագործական արդյունաբերությունում՝ 90,4%, մեքենաների և սարքավորումների արտադրությունում՝ 82,4%: Աճի տեմպի զգալի անկում է արձանագրվել նաև գյուղատնտեսության մեջ: 2008 թ. գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի աճի տեմպը 2007 թ. նկատմամբ կազմել է ընդամենը 101,3%:

Հիշեցնեմ, որ անցած 5 տարիների ընթացքում շինարարության և գյուղատնտեսության բարձր, անգամ իսկ մինչև 35-40 տոկոսի հասնող, աճի տեմպերով էին մեծապես պայմանավորված Հայաստանի ՀՆԱ-ի երկանիշ աճի տեմպերը: Կարծում եմ, այս թվերը ավելի քան խոսուն են և անլրջության ոլորտ են մղվում Հայաստանը փոթորիկներից հեռու, հանգիստ նավահանգիստ, պաշտպանված կղզյակ ներկայացնող կառավարական և կենտրոնաբանկային ռոմանտիկ պաշտոնյաների կողմից:

Այնուամենայնիվ, որո՞նք էին հայաստանյան ճգնաժամի նման դրսևորման պատճառները: Ահա այդ հարցին պատասխանելու համար հակիրճ վեր-

լուծություն կատարենք: Ըստ որում, հայտնած բոլոր թվերը բերված են միայն և միայն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական զեկույցներից:

Եվ, այսպես, 2003-2008 թթ. Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքն աճել է 2,25 անգամ. հիանալի թիվ է: Ճիշտ այդ նույն ժամանակաշրջանում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 2,8 անգամ: Մատուցվող ծառայությունների ծավալն աճել է 3,38 անգամ: Դրա հետ մեկտեղ իրական տնօրինած եկամուտներն աճել են 1,8 անգամ, շեշտակի աճել են ներմուծվող ապրանքների ծավալները՝ 3,47 անգամ:

Ի՞նչ է ստացվում: Ստացվում է, որ անցած 5 տարիների ընթացքում արձանագրվել է սպառողական ներքին պահանջարկի բարձր մակարդակ, որը գերազանցել է ՀՆԱ-ի աճի տեմպը: Այլ կերպ ասած՝ Հայաստանի Հանրապետության արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, շինարարությունը, մատուցվող ծառայությունները չեն հասցրել բավարարել աճող սպառողական ներքին պահանջարկը: Դա իր հետեւից բերել է ներմուծման ծավալների շեշտակի բարձրացում: Անցած 6 տարիների ընթացքում, ինչպես արդեն ասացի, 3,47-ով աճել են ներմուծման ծավալները:

Ինչպե՞ս է ստացվել, որ մեզանում համախառն ներքին արդյունքի աճի համեմատ, առաջանցիկ տեմպերով աճել է սպառողական ներքին պահանջարկը: Պատասխանը մեկն է. Հայաստանի Հանրապետությունը, որքան էլ տարօրինակ թվա, արտահանող երկիր է, բայց, ի տարբերություն Ռուսաստանի, Սաուդյան Արաբիայի և էներգետիկ ռեսուրսներ, այլ հանքանյութեր արտահանող երկրների, մեր երկիրը արտահանել է, թող ներվի ասել, ապրանք, բանվորական աշխատուժ: Այն էլ հարյուր հազարներով մարդիկ են մեկնել արտագնա աշխատանքի, հիմնականում Ռուսաստանի Դաշնություն, որոնք իրենց աշխատավարձի որոշակի, եթե չասենք զգալի մասը տրանսֆերտների միջոցով ուղարկել են Հայաստանի Հանրապետություն, որ իրենց հարազատները, բարեկամները կարողանան այստեղ իրենց գոյությունը պահպանել:

Եվ ինչպես ժամանակին, երբ 1959 թ. Հոլանդիայում հայտնաբերվեցին գազի մեծ պաշարներ, որոնց արդյունաբերական շահագործումից 1960-1970-ական թվականներին Հոլանդիա եկած կապիտալի մեծածավալ հոսքից զգալիորեն աճեց բնակչության գնողունակությունը, որն իր հերթին խթանեց սպառողական ներքին պահանջարկի աննախադեպ աճ: Տեղական արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը ի զորու չեղան բավարարել օրըստօրե աճող սպառողական ներքին պահանջարկը: Արտարժույթի մեծաքանակ հոսքը Հոլանդիա ուժեղացրեց այդ երկրի ազգային տարադրամը, ինչն էլ իր հերթին բացասաբար անդրադարձավ տեղական ապրանքների մրցունակության վրա, զարկ տվեց նմանատիպ ապրանքների ներմուծմանը, տեղական արդյունաբերության զարգացման դադարեցմանը: Այդ երևույթը կոչվեց «Հոլանդական հիվանդություն»:

Հիմա, նմանատիպ իրավիճակ էր արձանագրվել նաև Հայաստանում, երբ արտարժույթի զգալի ներհոսք արձանագրվեց, որի հիմնական աղբյուրը հանդիսացավ մեր «արտահանված աշխատուժը» մի կողմից, իսկ դրան նաև գումարվեց ներդրումային որոշակի գումարների մուտքը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկա, ֆինանսական շուկա: Մեծաքանակ դոլարի հեղեղման պարագայում արժևորվեց մեր դրամի փոխարժեքը, քանի որ սպառողական հիմնական ծախսերը մարդիկ պետք է կատարեին դրամով՝ հոսանքի, ջրի, հացի և այլնի համար: Հայկական դրամի փոխարժեքը արհեստականորեն բարձրացավ, ինչին մեծապես նպաստեց նաև այն, որ մեր Կենտրոնական բանկը, ավաղ, վարում էր դրամավարկային կոշտ քաղաքականություն, այն է՝ արհեստականորեն սեղմում էր դրամական զանգվածի շրջանառությունն էկոնոմիկայում, մասնավորապես մոնետիզացիայի մակարդակը՝ դրամական զանգվածի և ՀՆԱ-ի հարաբերակցությունը հասցնելով 15-22 տոկոսի (մինչդեռ, անգամ իսկ զարգացող էկոնոմիկա ունեցող երկրներում մոնետիզացիայի նվազագույն մակարդակը գերազանցում է 30%-ը):

Սա՝ հարցի զուտ տնտեսագիտական մասով: Իսկ նման քաղաքականությունը ինչի՞ հանգեցրեց. նրան, որ Հայաստանի Հանրապետությունը հեղեղվեց ներմուծվող ապրանքներով և եթե դրամական արտահայտությամբ անցած 6 տարիների ընթացքում 1,25-ով պակասել էր արտահանման ծավալները, ապա ներմուծմանը, ինչպես ասացի, գրեթե 3,5 անգամ ավելացել էր: Այսինքն՝ այն պարագայում, երբ դրսից ներմուծվում էր ապրանք և ներմուծելն ավելի ձեռնտու էր ներմուծողների համար, որովհետեւ դրամի փոխարժեքը արհեստականորեն արժևորված էր, դոլարի կուրսն էլ արհեստականորեն ընկած:

Ճշմարտության առաջ չմեղանչելու համար նշենք, որ այդ տարիներին դոլարի կուրսը համաշխարհային ֆինանսական շուկայում նույնպես անկում էր արձանագրել, սակայն շատ ավելի պակաս, քան մեզանում: Արդյունքում՝ կրճատվեց մեր երկրից ապրանքների արտահանումը, կրճատվեցին աշխատատեղերը և անգամ շատ արտադրություններ փակվեցին:

Մասնավորապես, ինձ ցավ պատճառեց, երբ գրեթե փակվեց ադամանդագործությունը որպես այդպիսին: Խոսքս այն մասին է, որ Հայաստանի Հանրապետություն մուտք էր գործել այնպիսի հզոր ադամանդագործ, ինչպիսին էր պարոն Լևաևը: Այդ ճյուղը զարգացնելու լուրջ հեռանկարներ կային, սակայն նա ծավալվել էր այն ժամանակ, երբ դրամի փոխարժեքը 560-570 դրամ էր մեկ դոլարի դիմաց: Ասենք, 1 միլիոն դոլար փոխանակելով՝ նա ունենում էր 560-570 միլիոն դրամ և դրանով կարողանում էր փակել բանվորների աշխատավարձը: Իսկ երբ դոլարի փոխարժեքն իջավ 306-ի, արդեն չէր կարողանա նման պայմաններում իրեն գոհացնող շահույթներ ունենալ, և հասկանալի է, թե նա ինչու ընդամենը ճամպրուկը վերցրեց ու գնաց: Մինչդեռ նշեմ, որ ադամանդագործությունը Հայաստանի Հանրապետության վիճակում հայտնված երկրի համար գտած էր: Գտած էր, որովհետև հումքը մեկ ճամպրուկով կարող ես ներկրել:

Այժմ մենք ականատեսն ենք, որ կրճատվում են դրսից երկիր եկող տրանսֆերտները, սեղմվում են արտահանման ծավալները (մասնավորապես, 2008 թ. արտահանման ծավալները կազմեցին 2007 թ. 92,8%-ը), որոնք էլ հանգեցրին ֆինանսական լուրջ ճգնաժամի: Դրա արտահայտությունը տեսնում ենք հետևյալ ցուցանիշների համադրման մեջ:

2007 թ. 2006 թ. համեմատությամբ ՀՀ Կենտրոնական բանկի միջազգային պահուստներն աճել էին 55%-ով, այն է՝ 587 միլիոն դոլարով՝ հասնելով 1 մլրդ 659,2 մլն դոլարի, սակայն 2007թ. ընթացքում պահուստները պակասեցին ավելի քան 250 մլն դոլարով: Եվ ավելին, արդեն իսկ 2009 թ. հունվարի 27-ից փետրվարի 3-ն ընկած ժամանակահատվածում մեր միջազգային արտարժութային պահուստները կրկին կրճատվեցին ավելի քան 69 մլն դոլարով: Միայն փետրվարի 2-ին և 3-ին բորսայում իրականացված գործարքների ժամանակ Կենտրոնական բանկի կողմից վաճառվել էր համապատասխանաբար 16,479 միլիոն դոլար և 10,8 մլն ԱՄՆ դոլար: Հետաքրքրականն այն է, որ վաճառքի գինը նշված ժամանակահատվածում կազմել է 305 դրամ՝ մեկ դոլարի դիմաց: Այլ կերպ ասած՝ ֆինանսական շուկայում դրամ-դոլար փոխարժեքի ազատ գնագոյացման մասին խոսք անգամ լինել չի կարող:

Ինչո՞ւ եմ խորանում այս հարցերի մեջ: Իմ վերջին հեռուստաելույթից հետո, երբ եթերում հնչեց հույժ կարևոր խնդիր՝ արդիականացնել ներմուծման փոխարինելիության գործը և զարկ տալ տեղական արտադրանքին՝ խնդիր ունենալով հնարավորինս կրճատել ներմուծումը, կառավարությունը դրան ընթացք տվեց, դա վերցրեց իր զինանոցի մեջ: Հրաշալի և ճիշտ որոշում: Այդ որոշումից հետո, թվում էր, թե պետք է համապատասխան սրբագրման ենթարկվեր վարվող դրամավարկային քաղաքականությունը: Այն է՝ դոլարային ինտերվենցիաներ կատարելով՝ չշարունակեին պահել դոլար-դրամ փոխարժեքը, որն այսօր էլ կազմելով 305 դրամ 1 դոլարի դիմաց, փաստորեն, խթանում է ոչ թե տեղական արտադրողին, այլ օժանդակում ներմուծողին: Կնշանակի՝ բանավոր խոսքով ասվում և հռչակվում է մի քաղաքականություն, իսկ գործնականում վարվում է հակառակ արդյունքների հանգեցնող քաղաքականություն:

Ինչո՞ւ եմ այս հարցերի վրա շեշտադրում կատարում, որովհետև սրանք հղի են լուրջ, վտանգավոր հետևանքներով: Իսկ դա պայմանավորված է հետևյալով. եթե 2006 թ. մեր միջազգային արտարժութային պահուստներով հնարավոր էր ապահովել 9 ամսվա ՀՀ ներմուծման ծավալները, ապա 2007 թ. այդ թիվը հասավ 6 ամսվա, իսկ 2008 թ.՝ 3 ամիս 24 օրվա:

Ինչի՞ եմ սա կարևորում, որովհետև, ավաղ, Հայաստանի Հանրապետությունում ապրանքաշրջանառության շուրջ 40 տոկոսը բաժին է ընկնում ներմուծմանը: Իսկ հաշվի առնելով մեր տարածաշրջանում ստեղծված իրավիճակը, դա չափազանց մտահոգիչ է: Եթե հիշում եք, 2008 թ. օգոստոսի 7-ին սկսած հնգօրյա վրաց-հարավօսական պատերազմի ժամանակ, երբ պայ-

թեցվեց երկաթուղային կամուրջը, 15 օր ապրանքաշրջանառությունն այդ գծով դադարեց, իսկ այդ գծով տեղափոխվում էր Հայաստան եկող ապրանքների 70-ից ավելի տոկոսը և մեր էկոնոմիկան հայտնվեց գրեթե կաթվածահար վիճակում:

Այսինքն՝ խոցելի լինելով նաև աշխարհաքաղաքական նման պայմաններում և շարունակել ներմուծում խրախուսող դրամավարկային քաղաքականություն, դա հղի է վտանգավոր հետևանքներով:

Ճգնաժամից դուրս գալու արդարացված 2 ճանապարհ կա: Ըստ որում, դա չեն վիճարկում ժամանակակից տնտեսագիտության կորիֆեյները՝ լինեն Քեյնսի կողմնակիցները, նեոքեյնսիանականության ջատագովները, լինեն մոնետարիստները, թե ռեյգանոմիկայի հետևորդները: Որո՞նք են այդ ուղիները: Կամ պետությունը պետք է իր վարած տնտեսական քաղաքականությամբ ամեն կերպ խրախուսի սպառողական ներքին պահանջարկի աճը, կամ պետք է զարկ տա ներդրումներին:

Հայաստանում, փաստորեն, տնտեսագիտական բոլոր հաշվարկներն ու վերլուծությունները ցույց են տալիս, որ վտանգն այն է, որ մեզանում գնալով սեղմվելու է համախառն ներքին պահանջարկը: Արձանագրենք, որ գործազրկության աճի նշաններն արդեն բացահայտորեն կան, դրանց զուգահեռ դրսից եկող տրանսֆերտները կրճատվում են և, ցավոք, միտում կա դրանց էլ ավելի կրճատման: Այս ամենը հրամայական է դարձնում, որ հարկ է վարվող քաղաքականությամբ ամեն կերպ խրախուսվի սպառողական ներքին պահանջարկի աճը, որ անգամ իսկ այն ապրանքները, որոնք մինչև ճգնաժամի այս նոր փուլ թևակոխելը ներմուծվել էին Հայաստան, գտնեն իրենց սպառումը:

Դրա հետ մեկտեղ զուգահեռ իրականացված ներդրումները մասնակիորեն նույնպես խթանում են ներքին պահանջարկի աճին, քանի որ ներդրումային ծրագրերը իրացնելիս ներգրավվում է հավելյալ բանվորական ուժ: Ներդրումները կնպաստեն նաև հեռահար ժամանակաշրջանում ապրանքների առաջարկի ավելացմանը:

Այս երկու ուղղություններն են, որոնք առանցքային նշանակություն պետք է ունենան: Այնպես որ, կարճաժամկետ ժամանակաշրջանի համար կառավարության բացարձակ առաջնայնություն պետք է հանդիսանան սպառողական ներքին պահանջարկի ավելացմանն ուղղված գործառույթները, որից հետո միայն՝ ներդրումների խրախուսումը:

Հայաստանի առևտրային բանկերի մասին պետք է ասել հետևյալը: 22 առևտրային բանկերն էլ իրենց ավանդների պաշտպանվածության առումով բավականաչափ ամուր դիրքեր ունեն: Անկողմնակալ վերլուծությունը դա է վկայում: Կա, այսպես կոչված, “Базельский комитет по банковскому надзору”, որտեղ 2004 թ. հաստատվեցին նոր համաձայնագրեր բանկային կապիտալի համարժեքության մասին, ուր սահմանաչափեր էին սահմանվել՝ ռիսկայնության և բանկերի հուսալիության բարձրացման առումով: Ընդունված սահմա-

նաչափերը Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերը, ի պատիվ Կենտրոնական բանկի վարած քաղաքականության (այ, տեսեք, դրականն էլ պետք է ասվի), պահանջվածից գրեթե 2 անգամ ավելի մեծ ապահովության պաշար ունեն:

Ինչ վերաբերում է առևտրային բանկերի կողմից վերջին շրջանում դրսի տարբեր աղբյուրներից գումարների ստացմանը, ապա, մասնավորապես, «Ակբա Կրեդիտ Ագրիկոլը» և մի շարք այլ բանկեր ստացել են կամ ստանալու են արտարժութային վարկավորում: Դրանք, ինչ խոսք, շատ լավ են, բայց, ավաղ, չնչին տոկոսադրույքներով ստացված այդ վարկերը, հետագայում արդեն իսկ մեր ձեռնարկատերերին վարկավորելիս սահմանում են 17-24 տոկոսանոց տոկոսադրույքներով: Իսկ 17-24% վարկավորման տոկոսադրույքի պարագայում երկրում ներդրումային քաղաքականություն իրականացնել հնարավոր չէ: Լավագույն դեպքում ստացված վարկերը նույնպես կգնան արտաքին առևտրի ոլորտ՝ ներմուծման վարկավորմանը, որը կրկին ու կրկին բացասաբար կանդրադառնա տեղական արտադրողի վրա:

Տոկոսադրույքը կտրուկ իջեցնելը նույնպես սխալ, պոպուլիստական մոտեցում կլինի: Միայն 2008 թ. սպառողական գների ինդեքսը կազմել է 109%, այսինքն՝ սղաճը 9%-ի սահմանում է եղել, բնական է, որ տոկոսադրույք սահմանելիս դա էլ պետք է հաշվի առնվի: Սակայն չսահմանվի այնպիսի տոկոսադրույք, որը բանկերին գերշահույթ ապահովելով, միաժամանակ վարկերը անհասանելի դարձնի փոքր և միջին ձեռներեցների համար:

Հարց է ծագում՝ ինչպե՞ս վարվել: Կա այսպիսի գաղափար՝ տոկոսադրույքի սուբսիդավորում: Եթե երկիրը, պետությունը կարողանում է լրացուցիչ վարկեր հայթայթել, ապա կարող է այն ճյուղերում, որտեղ ընդունելի տոկոսադրույքի պայմաններում հնարավոր է վարկավորելու ճանապարհով և՛ աշխատատեղ ստեղծել, և՛ բավարարել ներմուծման փոխարինելիության խնդիրը, ապա այդ դեպքում կա հետևյալ լուծումը: Պետությունը առևտրային բանկերի վարկավորման 17-24% տոկոսադրույքի որոշակի մասի սուբսիդավորումը վերցնում է իր վրա և դա ձևակերպում է որպես երկարաժամկետ վարկ՝ տրված հիշատակած պայմանները բավարարող ձեռներեցներին:

Հակառակ դեպքում, եթե ստիպողաբար իրենց պարտադրենք ցածր տոկոսադրույք, ինչի իրավունքը, իհարկե, չունենք, որովհետև բանկերի մասին օրենսդրությամբ առևտրային բանկերն այս իմաստով պաշտպանված են, ապա այդ պարագայում կա մեկ այլ վտանգ. վարկային նպատակով հայթայթված բոլոր գումարները կգնան ոչ թե տեղական արտադրության խրախուսմանը, այլ կվերածվեն արտարժույթի և կմղվեն ներմուծումների ոլորտ:

Առևտրային բանկերի կողմից սահմանված վարկային բարձր տոկոսադրույքների պայմաններում ստեղծվել է խիստ մտահոգիչ իրավիճակ, երբ բանկային համակարգում զուտ շահույթները վերջին 6 տարիների ընթացքում տատանվել են 19-40%-ի սահմանում, մինչդեռ արդյունաբերության, գյուղատնտեսության և տնտեսության մնացյալ ոլորտներում և ոչ մի բնագա-

վառ չեք գտնի, որտեղ ապահովվի այդպիսի բարձր շահութաբերություն: Այսինքն՝ վարվող դրամավարկային քաղաքականությունը չի կորելացվել տնտեսական քաղաքականության հետ և պարադոքսալ մի իրավիճակ է ստեղծվել:

Կենտրոնական բանկի երկարամյա ղեկավար հարգարժան Տիգրան Սարգսյանը, առաջնորդվելով միայն և միայն Սահմանադրությամբ, սահմանադրական պահանջներով, թվում է, թե ամեն ինչ արել էր, որ սղաճը զսպի: Սակայն սղաճը զսպվել է հիմնականում ի հաշիվ տեղական արտադրության սեղմման, ի հաշիվ տեղական ձեռնարկատիրության կասեցման: Որպես Կենտրոնական բանկի ղեկավար նա միգուցե իր տեսանկյունից գործել է օրենքի սահմաններում, մինչդեռ ներկայումս վարվող սխալ դրամավարկային քաղաքականության բոլոր բացասական հետևանքները որպես վարչապետ ստիպված է ճաշակել: Եվ սա է մտահոգիչ:

Չկա այնպիսի երկիր, որտեղ թույլ էկոնոմիկայի պայմաններում ունեն ուժեղ արտարժույթ, գնալով ուժեղացող, արժևորվող արտարժույթ: Դա էկոնոմիկա գիտության առումով նոնսենս է, անհնարինություն է, դա հնարավոր բան չէ:

Բացարձակապես խնդիրը չպետք է դրվի, որ դրամի շեշտակի անկում լինի: Պետք է սահմանվի դոլար-դրամ լողացող կուրս: Դա ժամանակին կար, բայց, ավաղ, չէին թողնում, որ լիարժեքորեն, առանց արտարժութային ինտերվենցիաների բնականոն իրականացվի: Պետք է, այո, նպաստել, որ դրամի փոխարժեքի անկումը դոլարի նկատմամբ սահուն բնույթ կրի, ինչպես դա արվում է Ռուսաստանի Դաշնությունում: Այնտեղ Կենտրոնական բանկը որոշակի արտարժույթի ծավալ շաբաթական կտրվածքով Մոսկվայի միջբանկային արտարժութային բորսայում (Московская межбанковская валютная биржа) հանում է վաճառքի, որ ապահովվի ռուբլի-դոլար փոխարժեքի նախատեսված սահուն անկումը:

Այս գործում հարկ է լուրջ հաշվարկ կատարել, որի հիմքում պետք է լինեն հետևյալ հարցերի հստակ պատասխանները. ինչպիսի՞ ակնկալիքներ ենք ունենալու ոչ միայն տվյալ ճյուղում լրացուցիչ աշխատատեղեր ստեղծելու, արտադրանքի երաշխավորված սպառում ապահովելու տեսակետից, այլև տվյալ ճյուղում ներգրավված աշխատողների և նրանց ընտանիքների սպառողական պահանջարկի ավելացման տեսակետից:

Անշուշտ, կարևոր է հաշվարկել նաև հնարավոր բոլոր բացասական դրսևորումները: Եվ առաջին հայացքից ինչքան էլ տարօրինակ թվա, հիմա դոլար-դրամ իրական փոխարժեքին անցնելն այնքան հիվանդագին չի լինի, որքան կարելի է պատկերացնել: Եթե խնդիր ենք դրել ներմուծման փոխարինելիություն ապահովել, և մենք ճարահատյալ պետք է գնանք դրան, որ զարկ տանք տեղական արտադրությանը, էլ չեմ խոսում արտահանող ճյուղերի զարգացման մասին, ապա պետք է գիտակցենք, որ դրամի առկա բարձր փոխարժեքի պայմաններում դրանց լուծումն ապահովելը անհեռանկար գործ

կդառնա: Եվ բնականաբար, փոխարժեքի ազատ գնագոյացման պայմաններում տեղական արտադրանքի գները, սակագները մրցունակ կլինեն ներմուծվող ապրանքների գների հետ:

Ինքնին հասկանալի է, որ եթե ավելի բարձր դրամական հատուցում ես տալիս մեկ դոլարի դիմաց, ուրեմն ներմուծվող ապրանքները դրամական արտահայտությամբ ավելի բարձր սակագին են ունենալու: Եվ նման նոր պայմաններում մեր գյուղացին արդեն 45% վարելահողը անմշակ չի թողնի, որովհետև նա դնում, թուղթը մատիտը ձեռքին հաշվում է, թե հողը մշակելիս ծախսերն ինչպիսին են լինելու, թե արտադրված գյուղմթերքի վաճառքի գներն ինչպիսին են լինելու: Այլապես, եթե ամեն ինչ մնա հնի պես, ապա գյուղացին կրկին ու կրկին համեմատելով իր ապրանքների հնարավոր վաճառքի գինը ներմուծվող ապրանքների վաճառքի գնի հետ, կտեսնի, որ, ռուսի ասած, իր չարչարանքը ոչ այլ ինչ, քան “артель напрасный труд” է: Նա ոչ մի եկամուտ չի ունենա, իսկ եթե եկամուտ չունեցավ, իր չարչարանքն արդեն կափսոսա և կգերադասի մեկնել արտագնա աշխատանքի:

Իսկ առաջարկվող քաղաքականության արդյունքում, կրկնում եմ, երբ նա հաշվարկի ու տեսնի, որ եկամուտ ունի, բնականաբար, կմշակի իր հողերը: Անվիճելի է, որ տեղական շուկան, ինչքան էլ տարօրինակ հնչի, գյուղմթերքների իրացման համար հսկայական ռեզերվներ ունի: Այսպես, ցորենի գրեթե կեսը, նայած տարի, նայած բերքատվության, հանրապետություն է ներմուծվում, զգալի չափով ներմուծվում է նաև հավի, տավարի, խոզի միսը, էլ չեմ խոսում ամենատարբեր ձեթերի, կարագի, շաքարավազի, անգամ իսկ ծխախոտի մասին: Ի դեպ, Հայաստանի Հանրապետությունում ինչ քանակով տուփ ծխախոտ է արտադրվում, գրեթե նույնքան էլ ներմուծվում է: Ներմուծման փոխարինելիության համար շոշափելի հնարավորություններ են այստեղ, անշուշտ, այո: Առավել ևս ծխախոտագործության բնագավառում շնորհաշատ ձեռներեց ունենք, է՞, հնարավորություն տվեք, վարկավորեք, միջոցներ հատկացրեք, որ Տավուշի, Լոռվա, Սյունիքի, Գեղարքունիքի մարզերի այն բոլոր տարածքները, որոնք ժամանակին, դեռ Խորհրդային Միության օրոք, դրված էին ծխախոտագործության տակ, թող վերականգնեն: Այդպիսով՝ կկարողանանք գյուղատնտեսության և վերամշակման ոլորտներում մեծ թվով մարդկանց ներգրավել հանրօգուտ աշխատանքի, և նրանք իրենց գլուխները կպահեն:

Արդյունքում՝ դա նույնպես կխթանի ներքին սպառողական պահանջարկի բարձրացումը, էկոնոմիկան կշնչի, ինչն էլ շատ ավելի շահեկան կլինի, քան եթե մենք նմանօրինակ ապրանքները ներմուծենք:

Կա հետևյալ տեսակետը. այս կամ այն գաղափարի համար մարդիկ կարող են ոտքի չկանգնել այն դեպքում, եթե դրանց հակադիր գաղափարն ավելի համոզիչ երանգ է ունենում: Բայց քաղցած մարդը ոչ մի գաղափարի չի հետևի, եթե նա թունելի վերջում լույսը չի տեսնում: Ահա այդ վտանգը, ցավոք, ծառացած է մեր երկրում:

Վերջերս մամուլում մի վերլուծություն տպագրվեց, թե ինչքանով է աճում գործազուրկների և այն մարդկանց թիվը, որոնք դիմում են սոցիալական ապահովագրության ծառայություններին՝ խնդրելով, որ ստանան նպաստ, գործազուրկի կարգավիճակ: Այս իրողությունը հղի է շատուշատ ավելի մեծ վտանգներով, քան «մարտի 1»-ը: «Մարտի 1»-ը բոլորիս համար տխուր տարելից է լինելու: Սակայն, բառիս իսկական առումով, պետք է հանցագործ լինել, որ երկրում ֆինանսական, տնտեսական առկա լուրջ մարտահրավերներն իմանալով հանդերձ, դեռ խնդիր դնես սասանել Հայոց պետականությունը:

Շատ և շատ հարցեր, հատկապես տնտեսական, դրամավարկային քաղաքականությանը վերաբերող, որ վարում են այսօրվա գործադիր ու ֆինանսական իշխանությունները, սրտովս չեն, ավելին՝ դրանք շատ տագնապահարույց են: Բայց ստեղծված իրավիճակում երբեք ու երբեք մտքովդ անգամ չես կարող անցկացնել, որ կարելի է վարվել այնպես, ոնց որ մարդ գնա դեպի անդունդը, դու էլ գնաս թիկունքից հրես, որ վայր ընկնի: Հետո էլ չարախնդաս, որ դու դրա մասին կանխավ զգուշացրել ես:

Իմ քննադատական վերլուծությունը մի նպատակ ուներ՝ համ ձեռք մեկնել իշխանություններին, համ էլ պատնեշել գահավիժումը: Ասել, որ գյուտեր մի արեք, արհեստականորեն դրամի բարձր փոխարժեք մի պահեք, դուք չունեք ապահովագրության արտարժութային այն պաշարները, այսպես կոչված, դոլարային բալիշը, որ ձեզ իրավունք եք վերապահում 12 օրերի ընթացքում ավելի քան 69 մլն դոլարի չափով գումարներ վաճառել ֆինանսական բորսայում, որ կարողանաք արհեստականորեն պահել մի դոլարի դիմաց 305 դրամի փոխարժեքը: Դա կործանարար քաղաքականություն է:

Բայց ուրիշ բան, որ նրանք սեփական երգի կոկորդին կանգնել չեն կարող: Վարվող տնտեսական քաղաքականության կուրսը փոխելիս պետք է խոստովանեն, որ մինչ այս իրականացվող դրամավարկային քաղաքականությունը, ավաղ, խիստ խոցելի է դարձրել մեր էկոնոմիկան: Այս մասին դեռ 2006 թ. հոկտեմբերին ձեր խոնարհ ծառան ելույթ ունեցավ 600 հոգիանոց լսարանի առաջ, մանրակրկիտ ներկայացրեց ֆինանսներում և էկոնոմիկայում ստեղծված մտահոգիչ իրավիճակը: Ելույթս տպագրվեց թե՛ մամուլում, և թե՛ գրքում, դրան հետևեց քար լռություն: Ֆինանսական իշխանությունները բացարձակապես չարձագանքեցին:

Պետք է անցներ երկու տարուց ավելի, պետք է աշխարհահռչակ գիտնական, ակադեմիկոս Աբել Աղանբեգյանը գար Հայաստան, մամուլում հանդես գար և ասեր, որ անհեթեթ փոխարժեք է դրամ-դոլարի միջև, անհեթեթ դրամավարկային քաղաքականություն է իրականացվում: Դրանից հետո ոնց որ մի քիչ տեղից շարժվեցին:

Եվ ամենատարօրինակը, չասեմ վիրավորականը, այն է, որ մտահոգիչ այս պայմաններում դեռ հանդգնում են, չգիտես ինչու, նվաճումների մասին խոսել: Ասում են, որ մեր ֆինանսական համակարգը խաղաղ նավահանգիստ է, պաշտպանված կղզյակ է, Մալյորկա դարձրին տնաշենները:

Ինչ վերաբերում է ԵԽ ԽՎ վերջին նստաշրջանին և 1643 բանաձևին, ապա, օգտվելով առիթից, ուզում եմ իմ գոհունակությունը հայտնել թե՛ հայաստանյան պատվիրակության ծավալած գործունեությանը, և թե՛ Կոնգրեսի պատվիրակության գործունեությանը:

Այո, ասածս Կոնգրեսի մասով լեզվի սայթաքում չէ և մտքի շեղում էլ չէ: Որովհետև երկուստեք գործողությունները համոզեցին Եվրախորհրդի Խորհրդարանական Վեհաժողովին, որ, այո, Հայաստանի Հանրապետությունը արդեն ունի ժողովրդավարության այն մակարդակը և այնպիսի մակարդակ, որ առաջին հայացքից իրարամերժ, թշնամաբար տրամադրված քաղաքական երկու թևեր՝ մի կողմից կոալիցիան, մյուսից՝ Կոնգրեսը, այն աստիճանի են վարակված դրականի առումով ժողովրդավարությամբ, որ կարողանում են ամենուր ազատորեն իրենց մտքերն արտահայտել և դրա առջև ոչ մի արգելք չի դրվում:

Դուք պատկերացրեք, 6 տարի շարունակ ես մասնակցել եմ, Ազգային ժողովի պատվիրակության կազմում եղել եմ ԵԽ ԽՎ-ում, չեմ հիշում անգամ իսկ մի դեպք, երբ Ադրբեջանին վերաբերող հարցերի ամենաթեժ քննարկման ժամանակ այդ երկրից որևէ ընդդիմադիր գործիչ քիթը մտցներ Եվրախորհրդի շենք: Չի եղել այդպիսի բան: Այսինքն՝ սա կողմնակիորեն ապացուցում է, որ մեր երկրում, այնուամենայնիվ, ժողովրդավարություն կա:

Կոնգրեսին նաև շնորհակալություն պետք է հայտնել, որ իրենք, փաստորեն, վերակենդանացրին ադրբեջանական պատվիրակությանը: Դա նույնպես հեռահար խնդիր ունի: Այն է, երբ արդեն Լեռնային Ղարաբաղի հարցը խաղաղ կարգավորվի, այլևս անհրաժեշտ չի լինի, որ որևէ մեկը բարեկամական կապեր, կամուրջներ ստեղծի: Իրենք՝ կոնգրեսականները, կարող են ստեղծել:

Եզակի դեպքի ականատեսը եղանք, երբ ադրբեջանական պատվիրակությունն արդեն իր ելույթներում մեջբերումներ է անում Կոնգրեսի լիդերից: Մասնավորապես, Գանիրա Փաշաևան կամ Գյուլթակին Գաջիևան, կամ Սամեդ Սեյիդովը մեջբերումներ են անում Լևոն Տեր-Պետրոսյանից: Դա որոշակի իմաստով գոհացնում է:

Չթաքցնեմ, ժամանակին ես էլ եմ մեջբերում արել Հեյդար Ալիևից, բայց իմ մեջբերումը ես կարդացել եմ բառացիորեն «Բակինսկի ռաբոչի» թերթից, ուր Հեյդար Ալիևն ասում էր, որ Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար եղած ժամանակ իրենից կախված ամեն բան արել է, որ հնարավորինս Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը հայաթափվի: Իսկ հիմա, տեսեք, մեջբերում են անում Լևոնից և այն էլ ինչ տեսակետից: Մի խոսքով, Կոնգրեսի պատվիրակները վերակենդանացրեցին ԵԽԽՎ-ում ադրբեջանական պատվիրակությանը:

Եվ որ պակաս կարևոր չէ, նույն ՀԱԿ-ի կողմնակից լրատվամիջոցները նույնպես Ստրասբուրգում էին: Այսինքն՝ եվրոպացիներին երկուստեք համոզեցին, որ Հայաստանում ժողովրդավարություն կա և այդ ժողովրդավարու-

թյունը, որը կա, երկուստեք ձգտում կա բարելավելու: Կնշանակի՝ Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը ձայնի իրավունքից զրկելը նման իրավիճակում կլիներ անհեթեթություն: Ինչը և տեղի չունեցավ:

Իսկ ինչ վերաբերում է ընդունված բանաձևի բովանդակային մասին, ապա, գիտեք, կան հարցեր, որ պետք է լուծվեն, և 1643 բանաձևը հենց այդ հարցերի վրա է հրավիրում Հայաստանի Հանրապետության իշխանությունների ուշադրությունը: Մինչդեռ այն, ինչ ասելու եմ «մարտի 1»-ի կապակցությամբ, կունենա իր քննադատները:

Ստեղծված իրավիճակում, եթե մեր առջև ընտրության է դրված Հայաստանի լինել-չլինելու, թե ժողովրդավար ձևանալու մեջ, ապա պետք է առանցքայինը լինի Հայաստանի Հանրապետության պետականության լինելիության հարցը և որդեգրվեն ժողովրդավարության այն դրսևորումները, որոնք այս ճգնաժամային պայմաններում կնպաստեն մեր պետականության անսասանությանը: Ես այսպես եմ մոտենում այդ հարցերին:

«Հայոց Աշխարհ», 10-12. II. 2009:

ՀՆԱՐԱՎՈ՞Ր Է ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ՄՏՆԵԼ ՄԻԵՎՆՈՒՅՆ ԳԵՏԸ

… Ուրեմն խնդիրը հենց այն է , որ մայիսի 31-ին տեղի ունենալիք Երևանի քաղաքապետի ընտրություններում ոչ մի պարագայում թույլ չտրվի «իշխանություն - ընդիմություն» դիմակայության խաղարկումը՝ դրանից բխող բացասական բոլոր հետևանքներով հանդերձ: Բայց Երևանի քաղաքապետի անուղղակի ընտրությունների ցուցանիշերն առաջադրելու համար մնացած մոտ մեկ շաբաթվա ընթացքում մի՞թե հնարավոր է կանխել դեպքերի նման ընթացքը: Թվում է, թե հնարավոր չէ անտեսել այն փաստը, որ քաղաքական կոալիցիայի առաջատար ուժը՝ Հանրապետական կուսակցությունը, արդեն հստակեցրել է իր թեկնածուին՝գործող քաղաքապետ Գ. Բեգլարյանին, «Բարգավաճ Հայաստանը»՝ առողջապահության նախարար Հ. Քուշկյանին և այլն, և այլն: Կարծում ենք, նման սցենարի հաջողությունը միանգամայն հնարավոր է, եթե ասպարեզում հայտնվի «երրորդ թեկնածուն», բայց ոչ թե իշխանության, այլ հենց ընդդիմության ճամբարից, օրինակ, «Ազգային Միաբանության» առաջնորդ Արտաշես Գեղամյանը: Վերջինս իր կենսագրությամբ ու հարուստ փորձով կարող է մարմնավորել այն իսկապես «պրոֆեսիոնալ քաղաքապետի» հատկանիշները, որի հետ քաղաքական հաշվեհարդար տեսնելուց հետո ժամանակին իշխանության եկած Լ. Տեր-Պետրոսյանը յուր «քաղաքական դիլետանտների» թիմով սկսեց ավերել ու թալանել ծաղկուն մայրաքաղաք Երևանը:

Հիմա, երբ Լ. Տեր-Պետրոսյանը ձևացնում է, թե իբր ինքն է հավակնում Երևանի քաղաքապետի աթոռին, հենց իր նախագահության օրոք հեռացված այդ իսկապես պրոֆեսիոնալ քաղաքապետը, իսկ այժմ քաղաքական գործիչը նրան շատ բան կունենա հիշեցնելու…

Կարծում ենք, բուն խնդիրը ամենևին էլ այն չէ, թե ո՞վ կդառնա Երևանի քաղաքապետ: Իրականում Երևանի քաղաքապետի անուղղակի ընտրությունների քաղաքականացման ցանկացած տարբերակը լինելու է Լ. Տեր-Պետրոսյանի ու նրա քաղաքական թիմի, իսկ այդ սցենարը ամեն գնով, անգամ «երրորդ» կամ որևէ այլ թեկնածուի միջոցով կանխելու հեռատեսությունը՝ պետության և ժողովրդի հաղթանակը:

«Հայոց Աշխարհ», 17. III. 2009:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՄԱՐՏԻ 13-ԻՆ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՈՒՆԵՑԱԾ ԶՐՈՒՅՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թերևս հարկ չէր լինի հատուկ անդրադառնալ վարչապետի մարտի 13-ի հարցազրույցին, եթե Հայաստանի Հանրապետությունը հայտնված չլիներ սոցիալ-տնտեսական ճգնաժամի մեջ: Դա հրամայական է դարձնում ճգնաժամի պատճառների ճշգրիտ ախտորոշումը և համարժեք գործողությունների իրականացումը: Ներկայումս հրատապ խնդիր է մշակել և գործի դնել այնպիսի տնտեսական քաղաքականություն, որը կմեղմի թե՛ գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները մեր երկրում և թե՛ կբացահայտի այն արատները, որոնք առկա են Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայում, սակայն, ավա՜ղ, դրանք դիմագրավելու, առաջն առնելու գործառույթները մինչև օրս իսպառ բացակայում են:

Եթե խնդրո առարկային մոտենանք այս դիտանկյունից, ապա լրագրողի տված հենց առաջին հարցին վարչապետի տված պատասխանի ամենախոցելի տեղն այն է, որ ՀՀ-ում ստեղծված իրավիճակը նա ամբողջովին պայմանավորում և կապում է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետ: Մինչդեռ ընդամենը 3-4 ամիս առաջ, միմյանց հերթ չտալով, թե՛ վարչապետը, թե՛ Կենտրոնական բանկի նախագահը, թե՛ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարները մամուլով և էլեկտրոնային լրատվամիջոցներով եռանդագին հայտարարում էին, որ ճգնաժամի առաջին ալիքը հաղթահարել ենք, ՀՀ-ն խաղաղ նավահանգիստ է, ունենք ուժեղ գործիքներ ճգնաժամին դիմակայելու համար և անում նմանատիպ անհիմն այլ պնդումներ: Գնահատելով այսօր երկրում ստեղծված սոցիալ-տնտեսական վիճակը, հարկ է նշել, որ այն խիստ մտահոգիչ է: Դրա վկայությունը ՀՀ ազգային վիճակագրական ծառայության վերջերս հրապարակած տվյալներն են: Մասնավորապես, 2009 թ. հունվար ամսին 2008 թ. դեկտեմբերի համեմատ ՀՆԱ-ն կազմել է 37,2%, գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալը 32,1%, շինարարության ծավալը 13,7%, մանրածախ առևտրի շրջանառությունը 36,47%, իսկ միջին ամսական անվանական աշխատավարձը այս տարվա հունվարին կազմել է նախորդ տարվա դեկտեմբերի աշխատավարձի ընդամենը 78,3%-ը: Թվում էր, թե վարչապետը լրագրողների հետ հանդիպման ժամանակ պետք է առարկայական վերլուծություն կատարեր՝ վեր հանելով

տնտեսության անկման պատճառները, մատնանշելով դրանց հաղթահարման ուղիները: Ավա՜ղ, դա տեղի չունեցավ: Տպավորություն է ստեղծվում, որ կառավարությունը և Կենտրոնական բանկը մակերեսորեն են տիրապետում մեր երկրի տնտեսական վիճակին, չեն դրսևորում այն համարժեք գնահատելու ունակություն: Այս ամենի արդյունքում կորսվում է հնարավոր հեռանկարային զարգացման տեսլականը, բացակայում է հնարավոր զարգացումների հիմնավոր կանխատեսումներ անելու պահանջված գործառույթը: Առավել վտանգավոր է, որ երկրի տնտեսական վիճակի կանխանկատվող հետագա վատթարացումը ամբողջությամբ և բացառապես պայմանավորում են համաշխարհային ճգնաժամով՝ անտեսելով էկոնոմիկայի վրա ոչ պակաս բացասական ազդեցություն ունեցող ներքին բազում տնտեսության առաջընթաց զարգացումն արգելակող գործոնները: Այս պայմաններում էկոնոմիկայում առկա տագնապահարույց միտումները ամբողջովին պայմանավորել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով, նախ, տնտեսագիտորեն հիմնավոր չէ, երկրորդ, հղի է չարդարացված հակաճգնաժամային միջոցառումների իրականացմամբ և դրա արդյունքում տնտեսության փլուզման վտանգով: Այլ կերպ ասած՝ կառավարությունը, վարչապետը վարվող տնտեսական քաղաքականության բացասական հետևանքները գնահատելու փոխարեն, ըստ էության, ընտրել են համաշխարհային ճգնաժամի թիկունքում թաքնվելու մարտավարություն: Մինչդեռ նշենք, որ պատասխանատվությունից խուսափելու այս դրսևորումը կարող է սոցիալ-տնտեսական ծայրահեղ հետևանքներ ունենալ մեր երկրի և պետականության համար:

Անհրաժեշտ է, որ օր առաջ ՀՀ կառավարությունն ու Կենտրոնական բանկը մեր տնտեսության համար բացասական հետևանքները, որոնք պայմանավորված են համաշխարհային ճգնաժամով, պարզորոշ սահմանազատեն մեր էկոնոմիկային ներհատուկ այն գործոններից, որոնք խիստ բացասաբար են անդրադառնում զարգացման վրա և պայմանավորված են հենց նույն՝ երկրում վարվող անհեռանկար տնտեսական քաղաքականությամբ: Մասնավորապես, ՀՀ կենսագոյության համար առաջին անհրաժեշտության ապրանքների շուկաներում ստեղծված է մենաշնորհային գերիշխանություն, որը արգելակում է ազատ գնագոյացումը ու մրցակցությունը: Բացի այդ, առկա է տնտեսվարող սուբյեկտների վրա հարկային բեռի խիստ անհավասար բաժանում: Մենք ականատեսն ենք, երբ հարկային բեռի անհամաչափ և անարդարացի մեծ տեսակարար կշիռը բաժին է ընկնում փոքր և միջին բիզնեսին, ինչն էլ վկայում է փոքր և միջին բիզնեսի պաշտպանված չլինելու մասին: Ավելին, վերջերս մենք ականատեսը դարձանք, երբ պետական օրենսդրական ակտերի և որոշումների հիման վրա (որոնց կիրառումը ոչ ճգնաժամային պայմաններում միգուցե արդարացված լիներ), ըստ էության, արգելակում է փոքր բիզնեսի կայացումը և վերջինս, փաստորեն, դադարեցնում է իր գործունեությունը՝ լինեն դրանք տաքսու վարորդներ, տոնավաճառի վաճառողներ և այլոք:

Դրա հետ մեկտեղ տպավորություն է ստեղծվում, որ կառավարությունն ամբողջությամբ ձեռքերը լվացել է գյուղացիական մենատնտեսություններից, ֆերմերներին համակարգված օգնություն ցույց տալու մարտավարությունից:

Մինչ օրս, կրկնեմ, չեն սահմանազատվել գլոբալ ճգնաժամով պայմանավորված մեր տնտեսության վրա բացասաբար ներգործած հետևանքները էկոնոմիկայում ներքին արատներով պայմանավորված իրողություններից: Արդյունքում, չկան տարբերակված հակաճգնաժամային ծրագրեր, որոնք իրենց ամբողջականությամբ հիմք կհանդիսանային հակաճգնաժամային համալիր ծրագրի համար: Համալիր ծրագիր, որտեղ կմատնանշվեին միջոցառումներ՝ ուղղված համաշխարհային ճգնաժամի թողած բացասական հետևանքների մինիմալացմանը ՀՀ-ի էկոնոմիկայի վրա, դրա հետ մեկտեղ կմշակվեր ծրագիր՝ երկրի զարգացմանը խանգարող ներքին գործոնների հաղթահարման ուղղությամբ:

Հետևություն. պատասխանելով լրագրողի առաջին իսկ հարցին, ուր մասնավորապես ասված էր՝ «Պարոն վարչապետ, կառավարության նիստում Դուք հայտարարեցիք՝ այսօր որևէ կազմակերպություն չի կարող ապագայի վերաբերյալ հստակ կանխատեսումներ անել, անորոշություններն այս պահին չափազանց մեծ են… Դուք անցած ամիսների ընթացքում՝ անգամ ենթադրելով, որ մեր տնտեսությունն ավելի հրապուրիչ կարող է դառնալ ներդրումների համար, անգամ 9% աճ էիք կանխատեսել», վարչապետը դրսևորեց, մեղմ ասած, ոչ լիարժեք իրազեկություն կամ, քողարկելով իր գլխավորած կառավարության անօգնականությունը, պարզապես տվեց խուսափողական պատասխան: Վարչապետի պարզաբանումները ավելի շատ ուղղված էին տնտեսագիտական տարրական գիտելիքներից զուրկ մարդկանց ուշադրությունը շեղելուն՝ երկրում վարվող տնտեսական քաղաքականության ձախողումները բարդելով համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի վրա:

Երկրորդ. այս հարցին վարչապետի տված պատասխանը, թերևս, հուշում է, որ անգամ իսկ հայտնվելով խորը ճգնաժամում, այդպես էլ բացակայում է այն պարզ ճշմարտության գիտակցումը, որ առկա ճգնաժամը հիմնականում արդյունք է երկրում շարունակ իրականացվող «վայրի ազատականության» կիրառման: Տնտեսական այնպիսի քաղաքականություն, երբ պետությանը հատկացվել էր «գիշերային պահակի» դերակատարություն: Պահակություն կատարել, որ չնչին գումարներով սեփականաշնորհված ձեռնարկություններ-ը գիշերային ժամերին չկողոպտվեն ընչազուրկ դարձած նախկին աշխատակիցների, բանվորության կողմից: Անհրաժեշտ է հստակ գիտակցել ու բարձրաձայնել, որ երկրում առկա ֆինանսատնտեսական արատավոր համակարգի պայմաններում (որի ստեղծման համահեղինակներից մեկն էլ ճիշտ ինքը՝ ՀՀ ԿԲ նախկին նախագահ, ներկայիս վարչապետ Տիգրան Սարգսյանն է) չէր կարող ձևավորվել օրենսդրական այնպիսի դաշտ, որով հնարավոր լի-

ներ մեր էկոնոմիկայում լայնորեն արմատավորել սոցիալապես պարտավորեցնող մասնավոր սեփականություն: Մասնավոր սեփականության այն ձևը, որը կիրառվելով հետպատերազմյան Գերմանիայում Լյուդվիգ Էրհարդի կառավարության օրոք հնարավոր դարձրեց շատ կարճ ժամանակում այդ երկրի քայքայված տնտեսությունը ոտքի կանգնեցնել, նաև շնորհիվ ստեղծված ազգային համերաշխության մթնոլորտի: Ցավոք, մեզանում բացակայում է օրենսդրական այն դաշտը, որը կնպաստեր հատկապես խոշոր սեփականատերերին առաջնային համարել սոցիալապես առաջընթաց ապահովող գործառույթների իրականացումը: Նման պայմաններում հարկ չէր լինի այսօր ներկրողներին կամայական գներ սահմանելու համար ադմինիստրատիվ մեթոդների կիրառմամբ սպառնալ, դա էլ այն դեպքում, երբ Սահմանադրությամբ Հայաստանի Հանրապետությունը հռչակված է սոցիալական, իրավական պետություն, ուր երաշխավորված են տնտեսական գործունեության ազատականությունն ու տնտեսական ազատ մրցակցությունը, ազատ շուկայական գնագոյացումը:

Սոցիալական շուկայական տնտեսության հիմնում՝ ահա սա է մեր երկրի համար ամենացանկալի ուղին, հանգամանք, որի ձևավորման անհրաժեշտության մասին տարիներ շարունակ բարձրաձայնում է «Ազգային Միաբանություն կուսակցությունը»:

Լրագրողի երկրորդ հարցին («Հարցս վերաբերում է խոշոր ձեռնարկություններին, որոնց 99%-ը սեփականաշնորհված է, և ցավոք սրտի, այսօրվա դրությամբ դրանք կամ կիսով չափ են աշխատում, կամ չեն աշխատում...») վարչապետը նախ պատասխանում է՝ «Պետական ձեռնարկությունների գերակշիռ մասը սեփականաշնորհվեցին 1990-1995 թթ.», հետո էլ արդարանում է. «Մենք չունեինք գիտելիքներ՝ ինչպես կազմակերպել այդ ձեռնարկությունների աշխատանքը»: Ակամայից ուզում ես բարեկամաբար ասել՝ ա՜յ, տնաշեն, այդ ժամանակներից արդեն անցել է 15 տարի, դեռ չսովորեցի՞նք ինչպես աշխատել, բա մեր հարևան գործընկեր պետությունները մեր մասին ի՞նչ կմտածեն...

Առնվազն տարօրինակ է, որ փոխանակ, ըստ էության, խոսվի ՀՀ-ում գործող խոշոր արտադրությունների տարիներ շարունակ թերբեռնված կամ պարապուրդի մատնված գործարանների վերակենդանացման, վերագործարկման մասին, պատմում են ինչ-որ անհասկանալի ուղղվածության պատմություններ: Ասած ռուսի՝ “Ни уму, ни сердцу”.

Արդյոք զավեշտ չէ՞, որ Խորհրդային Միության փլուզումից 18 տարի անց, այսօրվա արդյունաբերության կաթվածահար վիճակը դեռ շարունակում են պայմանավորել միասնական սովետական տնտեսական համակարգի փլուզմամբ: Կարծում եմ, ավելի արդարացի կլիներ, եթե վարչապետն ազնվաբար խոստովաներ, որ անցած 18 տարիների ընթացքում երկրում այդպես էլ չի մշակվել և իրականացվել տնտեսական այնպիսի քաղաքակա-

նություն, որը կնպաստեր մեր երկրում մրցունակ արդյունաբերություն և գյուղատնտեսություն հիմնելու գործին: Իսկ առավել արդարացի կլիներ, եթե Տիգրան Սարգսյանը խոստովաներ, որ ԿԲ նախագահի պաշտոնում շուրջ 10 տարի շարունակ իրականացրել է դրամավարկային այնպիսի քաղաքականությունն, որն ուղղված է եղել (իր փաստացի հետևանքներով) տեղական արդյունաբերության կազմալուծմանը, հատկապես արտահանող ճյուղերի ձեռնարկությունների սնանկացմանը՝ ի շահ խոշոր ներկրողների և առևտրային բանկերի, էլ չենք խոսում ներմուծումից երկրի վտանգավոր կախվածության մասին: Ըստ որում, քանիցս թմբկահարվում է բանկային համակարգի կայացման մասին, ինչը, մեղմ ասած, չափազանցություն է: Բերեմ ընդամենը երկու թիվ. այսպես, 2008 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ-ում գործող 22 առևտրային բանկերի կողմից տնտեսությանը և անհատներին տրված վարկերի ծավալը կազմել է 634 մլրդ 495 մլն դրամ կամ 2008 թ. ՀՆԱ-ի 17,38%-ը, իսկ բանկերի ակտիվները կազմել են ընդամենը 1 տրլն 24 մլրդ 232 մլն դրամ կամ ՀՆԱ-ի 28,06%-ը: Այս կարգի թվերը նույնիսկ ոչ առաջատար երկրների առանձին վերցրած առևտրային բանկերի համար են շատ համեստ: Եթե նշենք, որ հատկացված վարկերի զգալի մասը կազմում են առևտրային վարկերը, ապա կարելի է պնդել, որ ՀՀ բանկային համակարգը, իշխանությունների ջանքերով հայտնվելով անհամեմատ շահութաբեր վիճակում, քան տնտեսության իրական հատվածը, այդպես էլ չի դարձել այն արյունատար անոթը, որը կոչված էին սնուցել երկրի տնտեսության նյութական արտադրությունը, հատկապես արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտները: Եվ, վերջապես, խորհենք վարչապետի մեկ այլ պատասխանի շուրջ: Նա ասում է, որ այսօր կառավարությունը «նոր հայեցակարգ է առաջ քաշել՝ պետություն-մասնավոր համագործակցության հայեցակարգը, որը ենթադրում է՝ պետությունը այդ ձեռնարկությունները ոչ թե նորից դարձնի պետական, այլ՝ համագործակցելով մասնավոր սեփականատերերի հետ, պետք է մշակի երկարաժամկետ և արդյունավետ ծրագրեր: Որտեղ պետությունը կարող է աջակցել՝ պետք է աջակցի, իսկ որտեղ սեփականատերերը պետք է ռիսկերը վերցնեն իրենց վրա և ներդրումներ կատարեն, պետք է դա անեն»: Գնահատելով վարչապետի այս խոսքը, ասել կուզի, թե նա հրապարակավ հրաժարվում է արդեն իսկ մեկուկես տասնամյակ ՀՀ-ում իրականացվող մոնետարիստական քաղաքականությունից, մոնետարիզմից, որի հիմքում դրված է եղել պետության կառավարման այնպիսի հայեցակարգ, համաձայն որի տնտեսական գործունեության պրոցեսներում, տնտեսվարության մեջ որոշիչ դեր է հատկացվում շրջանառության մեջ առկա փողի զանգվածին, որը անմիջական ազդեցություն է թողնում ապրանքների գնագոյացման, արտադրության ծավալի և զբաղվածության վրա: Մոնետարիստները կարևորում են նաև ազգային փոխարժեքի, վարկային տոկոսադրույքների, հարկերի և մաքսատուրքերի կարգավորումը: Սակայն վարչապետի վերը հռ-

չակած նոր մոտեցումներն էլ գործնականում գալիս են ապացուցելու, որ նա կամ անկեղծ չէ, կամ էլ չի ուզում խոստովանել, որ, ըստ էության, թե՛ գործող կառավարությունը, և թե՛ Կենտրոնական բանկն այսօր էլ իրենց պրակտիկ գործունեությամբ շարունակում են իրականացնել մոնետարիզմին բնորոշ գործառույթներ: Այն է՝ էկոնոմիկայի վրա գերազդող գործոններ են շարունակում մնալ դրամական զանգվածի դրամայնացման գործակցի սեղմման քաղաքականության շարունակականությունը: Բավական է նշել, որ 2008 թ. դրամայնացման գործակիցը կազմել է աննախադեպ ցածր՝ 14,7%, դա, այսպես կոչված, "коэффициент монетизации"–ին է, որը դրամական զանգվածի M2-ի և ՀՆԱ-ի հարաբերակցությունն է. այդ ցուցանիշը ՌԴ-ում 2008 թ. կազմել է 33%, զարգացած տնտեսություններում՝ 80-120%, ԱՄՆ-ում 60%, իսկ Չինաստանում՝ 180%: Երկրորդ՝ տնտեսության վրա ներազդող մյուս կարևոր գործիք է շարունակում մնալ արտարժույթի փոխարժեքի կարգավորման միջոցով գործելը, ինչպես նաև բանկային տոկոսադրույքների, հարկային և մաքսային տոկոսադրույքների միջոցով իրականացվող քաղաքականությունը: Ստացվում է այնպես, որ Տիգրան Սարգսյանը հռչակելով, որ պետությունը ստանձնում է նոր դերակատարություն, այն է՝ բարձրացնում է կառավարության պատրաստակամությունը տեղական արտադրողներին աջակցելու գործում, դրա հետ մեկտեղ գործնականում իրականացնում է կոշտ մոնետարիստական քաղաքականություն, որի կիրառումը համաշխարհային ճգնաժամի պարագայում, մեղմ ասած, անհեթեթություն է: Հանգամանք, որի վերաբերյալ ամենախիստ ձևակերպումներն իր հրապարակային ելույթներում տվել է ազատական տնտեսություն ունեցող այնպիսի երկրի ղեկավար, ինչպիսին է Մեծ Բրիտանիայի նախկին ֆիննախարար, ներկայիս վարչապետ Գորդոն Բրաունը:

Տնտեսագիտական լեզվով ասած՝ մեր վարչապետը իր տված հարցազրույցում խոսքով հռչակում է էկոնոմիկայի զարգացման գործում պետության կարգավորիչ դերակատարության մոտեցումներ որդեգրելու անհրաժեշտությունը (այդ քաղաքականությունը տնտեսագիտության մեջ հայտնի է որպես Քեյնսի տեսություն), իսկ գործնականում շարունակում է մոնետարիզմին ներհատուկ քաղաքականության կիրառումը, որի հիմնադիր Միլտոն Ֆրիդմանը Ջոն Մեյնարդ Քեյնսի տեսության մոլեռանդ հակառակորդն էր: Արդյունքում կվիժեցվի մեր օրերում խիստ պահանջված՝ պետության կողմից տնտեսությանը աջակցելու քաղաքականությունը: Այս դեպքում ակնհայտ է, որ գործ ունենք հերթական տնտեսագիտական նոնսենսի, անհամատեղելիության հետ:

Այստեղ հարկ է անդրադառնալ տագնապահարույց ևս մեկ հարցի: Երբ վարչապետն ասում է, որ «Այս համատեղ համագործակցությունը մասնավոր սեփականատերերին երաշխավորում է, որ այդ ծրագրերը համահունչ են կառավարության ծրագրերին, և օրենսդրական դաշտը ապագայում խոչընդոտ

չի լինի այդ բիզնեսի զարգացման համար», կնշանակի, որ նա ընդունում է, որ այսօր գործող օրենքները խոչընդոտ են արտադրության ոլորտում գործունեություն ծավալած մասնավոր սեփականատերերի համար: Այս քննադատությունը կարելի էր կառուցողական համարել, եթե դրա մասին խոսեր ոչ թե գործադիր իշխանության ղեկավարը, որը Ազգային ժողովում բացարձակ մեծամասնություն կազմող կոալիցիայի կողմից երաշխավորված վարչապետ է, այլ ընդդիմադիր գործիչ: Գործիչ, որը զուրկ է մասնավոր ձեռներեցների բիզնեսին խոչընդոտող օրենսդրական դրույթները փոխելու հնարավորությունից՝ Ազգային ժողովում չունենալով համապատասխան լծակներ:

Պատասխանելով լրագրողի տված երրորդ հարցին («Մարտի 3-ի երեկոյան առաջին անհրաժեշտության ապրանքների շրջանակում՝ ձեթ, շաքարավազ, ալյուր, ստեղծվեց խուճապային իրավիճակ… Որքանո՞վ է դա կապված առաջին անհրաժեշտության ապրանքների շուկայի մենաշնորհային իրավիճակի հետ, և արդյոք հնարավո՞ր է ինչ-որ բան անել՝ մենաշնորհային վիճակը փոխելու համար»)՝ վարչապետը ինքն իրեն հակասում է: Այսպես, մինչ այդ նա խոսում էր նոր տնտեսական քաղաքականություն իրականացնելու, այն է՝ պետություն-սեփականատեր, պետություն-մասնավոր համագործակցության հայեցակարգի մշակման մասին, համաձայն որի պետությունը պետք է աջակցի սեփականատերերին: Իսկ ահա արտաքին առևտրում մենաշնորհների առկայության խիստ բացասական դերակատարության փաստը, որով էլ պայմանավորված է գնագոյացման մրցակցային դաշտի բացակայությունը, ասես թե, փորձում է արդարացնել: «Միակ ճանապարհը, - ասում է վարչապետը, - որով կարողանում ենք ապրանքների ներմուծում և արտահանում իրականացնել Վրաստանով է, որտեղ կան լուրջ խնդիրներ ապրանքների տեղափոխման հետ: … Ապրանքներն աշխարհի ցանկացած տեղից հասցնել Փոթի նավահանգիստ կամ Բաթումի շատ ավելի հեշտ է և ավել էժան, քան այնտեղից տեղափոխել Հայաստան: Սա ստեղծում է լուրջ խոչընդոտներ փոքր և միջին բիզնեսի համար: Փոքր և միջին ձեռնարկատերերը չեն կարող հաղթահարել այդ բարդությունները: Այդ խնդիրը կարողանում է լուծել խոշոր բիզնեսը՝ ապագայում ձեռք բերելով հարաբերական առավելություն ներքին շուկայում և իր առավելությունը չարաշահում է»: Նախ նշենք, որ 1999 թ. առ 2008 թ. ներառյալ արտաքին առևտրաշրջանառությունն ավելացել է ավելի քան 5 անգամ, ըստ որում ներմուծումը՝ ավելի քան 5,5 անգամ: Միայն 2008 թ. առևտրաշրջանառության աճի տեմպը նախորդ տարվա համեմատ կազմել է 123,46%, իսկ ներմուծման աճի տեմպը՝ 135%, այն էլ գերակշիռ մասը նույն Փոթիի և Բաթումի նավահանգիստներից:

Իսկ ո՞վ է խանգարում կառավարությանը արտաքին առևտրում աջակցել ոչ միայն մենաշնորհային դիրք ունեցող խոշոր ներկրողներին, այլ նաև այդ ոլորտում զբաղված փոքր և միջին բիզնեսին: Չէ՞ որ վերջիններիս աջակցելու մասին արդեն առաջին տարին չէ, որ խոսում են իրար հաջորդող

կառավարությունները: Վարչապետը խոսում է բոլորի նկատմամբ հավասար պայմանների ստեղծման, օրենքի հավասար կիրառման մասին: Տրամաբանական հարց է առաջանում՝ իսկ ո՞վ է խոչընդոտում այսօրվա կառավարությանը (այս հարցադրումը բխում է վարչապետի խոսքի ենթատեքստից) այդ պայմանները կիրառելու համար՝ Ազգային ժողովը, թե՞ ՀՀ Նախագահի աշխատակազմը: Եթե նման խոչընդոտներ չկան, ապա սեփական անվճռականությունը անորոշ, ոչ մի բան չասող պատասխաններով հարկ չէ քողարկել: Միգուցե ճիշտ նման պատասխաններն են հիմք ծառայում տերպետրոսյանական լրատվամիջոցներին հետևողականորեն խփել նույն նշանակետին՝ ասելով, որ վարչապետի փոփոխությամբ և ոչ մի հասունացած խնդիր երկրում չի լուծվի, ուստի և նրանց պնդմամբ «անհրաժեշտ է երկրի նախագահի փոփոխություն», «ավազակապետության» կազմաքանդում:

Եվ, վերջապես, պետք չէ կառավարության անսկզբունք և հարմարվողական քաղաքականության արդյունքում տնտեսությունում առկա լուրջ արատները՝ մրցակցային դաշտի բացակայություն, արտաքին առևտրաշրջանառությունում գերիշխող մենաշնորհների կամայականությունների առաջն առնելը, պատասխանատվությունը չփորձել բարդել ուրիշների վրա, սին փորձեր չկատարել՝ դա պայմանավորելով Տնտեսական մրցակցության հանձնաժողովի դերի և նշանակության բարձրացմամբ: Այո, մենք դրան դեմ չենք, սակայն մինչ «հիվանդության» հետևանքները վերացնելը, ճիշտ կլիներ, որ արմատախիլ արվեին այդ հիվանդությունը ծնող պատճառները: Ի դեպ, հենց այդ հարցերին լուծում տալը պետք է լիներ Տ. Սարգսյանի ղեկավարած կառավարության կարևորագույն գործերից մեկը:

Ամփոփելով այս հարցին վարչապետի տված պատասխանը, նկատենք. առաջին, վարչապետի կողմից հռչակված նոր մոտեցումները՝ օգնել փոքր և միջին բիզնեսին, ամենևին չեն տարածվում արտաքին ապրանքաշրջանառության ոլորտ փոքր և միջին բիզնեսի մուտքին, մրցակցության համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, այս ոլորտում առկա մենաշնորհների կազմալուծմանը: Երկրորդ՝ խոսելով Տնտեսական մրցակցության հանձնաժողովի դերի բարձրացման անհրաժեշտության մասին, ինչն անշուշտ չէր խանգարի, վարչապետը, ըստ էության, «ձեռքերը» լվանում է արտաքին առևտրում մրցակցային դաշտի գործնականում ստեղծման գաղափարից, ոչ մի առաջարկ չի անում փոքր և միջին բիզնեսին աջակցելու ուղղությամբ: Տվյալ պարագայում նա միայն սահմանափակվում է հավասար հարկային պայմաններ ստեղծելու կարգախոսով:

Անդրադառնալով լրագրողի հարցին՝ «... ինչո՞ւ մինչև ավելի լավ ժամանակներ չհետաձգել այն ծրագրերը, որոնք կապված են, օրինակ, մանր առևտրականների, տաքսիստների, կոշկակարների, անհատ գորգագործների հետ, այսինքն՝ հանգիստ թողնել այն խավերին, որոնք քիչ թե շատ ապահովում են իրենց, պետությունից աշխատատեղեր չեն ուզում: Ո՞րն է տրամա-

բանությունը», վարչապետը մասնավորապես նշում է, որ « … ՀԴՄ-ների կիրառումն առաջին հերթին նպատակ ունի խոշոր բիզնեսը բերել հարկային դաշտ… Այսինքն՝ մենք ձևավորում ենք նոր ինստիտուտներ, որոնք, իհարկե, որոշակի դժվարություններով են ներդրվում, բայց ես համոզված եմ, որ դրանք անխուսափելիորեն մեծ արդյունք են տալու: Այսօր արդեն իսկ հարկերի հավաքագրման ոլորտում այդ արդյունքն էական է»: Վարչապետի նման բացատրություններն առնվազն տարօրինակ են: Հետևելով նրա տրամաբանությանը, ստացվում է այնպես, որ կառավարությունն անզոր է ուղղակիորեն հարկային դաշտ բերել 20-30 խոշոր ներկրողների և այդ խնդիրը փորձում է լուծել փոքր ու միջին բիզնեսի միջոցով, այն է՝ այս հարցի լուծման պատասխանատվությունը բարդելով տասնյակ հազարավոր մարդկանց վրա: Իսկ այն, որ խոշոր ներկրողը կարող է մանրածախ առևտրով զբաղվողներին վաճառել, ընդունենք, 500 կգ կարագ, իսկ դրա դիմաց տրամադրել միայն 250 կգ կարագի հաշիվ-անդորրագիր, այդ դեպքում ի՞նչ պետք է անի փոքր բիզնեսով զբաղվող մեր անպաշտպան քաղաքացին: Եթե կասեք՝ թող փաստաթուղթ պահանջի, ապա ես էլ ձեզ եմ հանդիպակաց հարց տալիս՝ ինչո՞ւ դուք՝ կառավարություն, ինքներդ չեք պահանջում խոշոր ներկրողներից ներմուծված ապրանքների համար սպառիչ պատասխաններ պարունակող համապատասխան փաստաթղթեր: Չէ՞ որ փոքր ձեռներեցը հարկադրված է լինելու հետագայում էլ արդեն մանրածախ առևտուր իրականացնելիս մեկումեջ ՀԴՄ-ների կտրոններ չտալ, որ տեղավորվի իր ձեռքի տակ եղած փաստաթղթերում նշված ապրանքների ծավալների մեջ: Այստեղ է, որ հարկային տեսուչը կգա և կտուգանի այնպես, որ մի երկու ամսվա ապրուստի միջոցից կզրկի նրան: Ահա սա է մեր դառը իրականությունը: Կառավարություն եք, ուրեմն բարի եղեք գտնել այն մեխանիզմը, որը խոշոր ներմուծողներին կպարտադրի մանրածախ առևտուր իրականացնողներին տրամադրել փաստացի այնպիսի հաշիվ-անդորրագրեր, որտեղ նշված թվերը ճշգրիտ համապատասխանում են բաց թողնված ապրանքի ծավալին: Այդ դեպքում ՀԴՄ-ների համատարած կիրառումը չի ընդունվի այդ աստիճանի սրությամբ:

Եվ, վերջապես, ժամանակը չէ՞, որ վարչապետը իր բոլոր հրապարակային ելույթներում պարբերաբար կրկնելով «մենք ընդունել ենք բազմաթիվ օրենքներ, որոնք էապես թեթևացրել են բեռը առաջին հերթին փոքր և միջին բիզնեսի համար», գեթ մեկ անգամ վերլուծի ընդունված այդ օենքների փաստացի արդյունքները: Եթե այդ վերլուծությունը չի արվել, ապա օգնեմ: Այսպես, բերեմ օրինակ՝ 300 խոշոր հարկատուների 2008 թ. մուծած հարկերի մասին: Վարչապետի արդեն իսկ քանիցս կրկնվող այն պնդումները, որ կառավարությունը հարկային քաղաքականության մեջ շեշտը դնում է հարկային բեռը հիմնականում տեղափոխել խոշոր բիզնեսի վրա, մեղմ ասած, չեն համապատասխանում իրականությանը: Մասնավորապես, 2008 թ. 300 խոշոր հարկատուների հարկային մուծումները 2007 թ. նկատմամբ արձանագրել

են շուրջ 114,4% աճի տեմպ, մինչդեռ այդ նույն ժամանակաշրջանում հարկային մուտքերի աճի տեմպը կազմել է 120%: Ինքնին հասկանալի է, որ այդ աճի տեմպը առավելապես պայմանավորված է փոքր և միջին բիզնեսի կողմից հարկային մուտքերի առաջանցիկ (խոշոր բիզնեսի համեմատ) աճի տեմպերով: Ավելին, առաջին 10 խոշոր հարկատուները 2008 թ. շուրջ 12,5 մլրդ դրամ պակաս են հարկեր մուծել, քան 2007 թ., դրանով իսկ արձանագրելով, որ իրենք ավելի քան 9%-ով նվազեցրել են սեփական հարկային մուծումները: Ասենք նաև, որ այդ նույն ժամանակաշրջանում շուրջ 2%-ով էլ նվազել են առաջին 20 խոշոր հարկատուների վճարած հարկերը:

Վերլուծելով վարչապետին տրված վերը նշված հարցի պատասխանը, գալիս ենք հետևյալ եզրակացության. այսօրվա կառավարությունը, նրա վարչապետն իրենց գործն են համարում երկրում առկա խիստ վտանգավոր դրսևորումներին բացատրություններ տալը, ինչպես նաև հեռահար ծրագրերի մասին խոսելը, փոխանակ զեկուցելու, հաշվետու լինելու, թե գործնական, առարկայական ի՞նչ միջոցառումներ են իրականացվել երկրում ստեղծված ճգնաժամային վիճակը հաղթահարելու համար:

Իսկ այն ոգևորությունը, որ արտահայտվեց վարչապետի կողմից՝ պայմանավորված ՀՌՄ-ների կիրառմամբ, այն է՝ 2009 թ. հունվարին 7-8 անգամ ապրանքաշրջանառությունն ավելացել է 2008 թ. դեկտեմբերի համեմատ, ապա արդարության առաջ չմեղանչելու համար կարելի էր դրան զուգահեռ ասել նաև, որ 2009 թ. հունվարին մանրածախ առևտրի շրջանառությունը 2008 թ. դեկտեմբերի նկատմամբ կազմել է 36,47%, ծառայությունների ծավալը (առանց առևտրի) 66,44%: Կարծում եմ, այս թվերը նույնպես արժեր հիշատակել, որ պատկերը ամբողջական լիներ:

Կարելի էր նաև վերլուծել լրագրողների հետ վարչապետի ունեցած զրույցի մյուս պատասխանները նույնպես: Սակայն, կարծում եմ, ասվածից էլ դժվար չէ գալ այն եզրակացության, որ մարդիկ հոգնել են ընդհանուր դատողություններ լսելուց, մարդիկ իրենց հուզող հարցերի հասկանալի և ճշգրիտ պատասխաններն են ակնկալում ստանալ կառավարությունից: Ճգնաժամային այս մութ թունելի վերջում ժողովուրդը լույս է ուզում տեսնել, լույս է փնտրում: Չդրդենք նրանց, որ կրկին ու կրկին կանգնեն նույն փոցխի վրա և ճարահատյալ իրենք էլ վանկարկեն՝ պայքար, պայքար, պայքար մինչև վերջ…

«Հայոց Աշխարհ», 18-20.III.2009, «Փակագիծ», 20. III. 2009:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Հարգելի ընթերցող, մինչև վերլուծելը, թե ինչպիսիք են համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի թողած հետևանքները Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա, համառոտ վերհիշենք այդ մասին մեր կառավարության և Կենտրոնական բանկի պաշտոնապես տված գնահատականները: Այս խնդիրը կարևոր եմ համարում ոչ այն պատճառով, որ 2008 թ. հոկտեմբերից մինչ օրս համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների ազդեցությունը մեր էկոնոմիկայի վրա իրարամերժ գնահատականների են արժանացել, այլ նպատակ ունեմ անկողմնակալ ներկայացնել դրանց հիմնավորվածության աստիճանը: Ըստ որում, գործադիր և ֆինանսական իշխանությունների կողմից խնդրո առարկայի վերաբերյալ տրված իրարամերժ մեկնաբանությունների մասին քանիցս ամենայն բծախնդրությամբ և ճշգրտությամբ նշվել է ամենատարբեր՝ թե՛ իշխանամետ, թե՛ անկախ և թե՛ տերպետրոսյանական մամուլում: Եվ, ցավոք, այդ բոլոր հրապարակումները իշխանությունների կողմից մնացել են առանց համարժեք պարզաբանումների կամ պատասխանի: Ինչո՞ւ եմ մանրամասնում այս հարցը, որովհետև եթե չկա ընթացող պրոցեսների հիմնավոր վերլուծություն, եթե բացակայում է դրանց անկողմնակալ գնահատականը, ապա հուսալ, որ կառավարության և ֆինանսական իշխանությունների կողմից ձեռնարկվող հակաճգնաժամային միջոցառումները հաջողությամբ կպսակվեն, կլիներ, մեղմ ասած, չարդարացված չափազանցություն: Եվ այսպես, որո՞նք էին գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամին տված մեր վարչապետի վերջին եզրահանգումները:

Շուրջ մեկ ամիս առաջ պարոն Տ. Սարգսյանը ելույթ ունեցավ Ծաղկաձորում՝ համեստորեն «Հայկական Դավոս» կոչված կոնֆերանսում (հավանաբար, դրա աշխատանքներին մասնակցում էին էկոնոմիկայում Նոբելյան մրցանակի դափնեկիրներ՝ Պոլ Կրուգմանը, Ռոբերտ Մանդելլը, Դուգլաս Նորտը, Նուրիէլ Ռուբինին, Ջոզեֆ Ստիգլիցը և աշխարհահռչակ այլ գիտնականներ, որոնք անհագուրդ մղում ունեին օր առաջ գալ և մասնակցել ապագա համաշխարհային ֆինանսական կենտրոն հռչակված Հայաստանում կազմակերպված Ծաղկաձոր-Դավոս ֆորումի աշխատանքներին): Այդ կոնֆերանսում հարգելի վարչապետը, մեջբերում անելով աշխարհի թիվ 2-րդ մեծահարուստ Ուորրեն Բաֆֆետի՝ “Berkshire Hathaway Incorporation” ընկերության բաժնետերերին ուղղված հայտնի բաց նամակից, ասաց, որ այն, ինչ տեղի է

ունենում աշխարհում ոչ թե ճգնաժամ է, այլ՝ քաոս: Իհարկե, պարոն վարչապետը հարկ չհամարեց հղում կատարել իր կողմից հնչեցված գնահատականի հեղինակի նամակի վրա: Հավանաբար, մտածել էր, որ դա լսարանի կողմից կարող է ընկալվել որպես ճնշման յուրօրինակ մի միջոց, երբ փորձում ես ասածներդ անհերքելի դարձնելու համար հղում կատարել տվյալ ոլորտում անվիճելի հեղինակություն ունեցողի ասածի վրա: Սակայն տարօրինակն այն է, որ վարչապետի խոսքում չհնչեցին Ուորրեն Բաֆֆետի երկու այլ դիտարկումները ևս, այն է՝ իր գլխավորած կառույցը մինչև մոլեգնող այս ճգնաժամը 44 տարի հիմնականում եղել է եկամտաբեր, այսուհետ էլ, համոզված է Բաֆֆետը, 44 տարի էլ շարունակելու է մնալ եկամտաբեր: Եվ 2-րդ գնահատականն էլ այն էր, որ “Berkshire Hathaway Incorporation” ընկերության կրած վնասները (ճգնաժամի արդյունքում կորպորացիան և ինքը՝ Բաֆֆետը, ունեցել են կապիտալիզացիայի ընդամենը 5%-ի կորուստ) Բաֆֆետը ինքնաքննադատաբար որակեց իբրև «սեփական իդիոտական սխալների» հետևանք: Ծաղկաձորում ունեցած զեկուցումից 2-3 շաբաթ անց պարոն վարչապետը ելույթ է ունենում արդեն իսկ Սլավոնական համալսարանի կողմից կազմակերպված նմանօրինակ կոնֆերանսում: Այստեղ արդեն համաշխարհային ֆինանսական ճգնաժամին հետևած գործառույթները բնութագրելիս նա իրավացիորեն կրկնում է ռուսաստանցի մի շարք ճանաչված վերլուծաբանների (Միխայիլ Խազին, Միխայիլ Լեոնտև, Միխայիլ Դելյագին, Սերգեյ Կուրղինյան) հրապարակային ելույթներում և հոդվածներում տրված հայտնի գնահատականները: Այն է՝ ֆինանսական տնտեսական ճգնաժամը հանգեցրեց նրան, որ առաջատար երկրները, խնդիր ունենալով փրկել սեփական երկրների համակարգաստեղծ ձեռնարկությունները սնանկությունից, սկսեցին իրականացնել հովանավորչական քաղաքականություն՝ անտեսելով արդյունաբերական այդ նույն հսկաների աշխարհով մեկ սփռված մասնաճյուղերի ճակատագիրը: Այլ կերպ ասած՝ վերլուծաբանները եզրակացրեցին, որ համաշխարհային լիդերները որդեգրել են մի քաղաքականություն, ըստ որի կենտրոնանում են սեփական երկրների հոգսերը հոգալու խնդիրների վրա, մի կողմ թողնելով տրանսազգային խոշոր կոմպանիաների աշխարհասփյուռ հազարավոր մասնաճյուղերի խնդիրներին լուծումներ տալու գործառույթները: Ահա, այս երևույթը հաշվի առնելով էր, որ դեռ վարչապետի այս ելույթից ամիսներ առաջ հիշատակածս վերլուծաբանները հայտարարեցին, որ համաշխարահային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքներից մեկն էլ այն եղավ, որ գլոբալ համաշխարհային տնտեսությունը դրսևորում է լոկալիզացիայի միտումներ՝ լոկալիզացվում է, գլոբալիզացիան վերածվում է լոկալիզացիայի: Այս դեպքում էլ վարչապետի կողմից չեղան համապատասխան հղումներ հեղինակներին: Հավանաբար, պրն Տ. Սարգսյանը կրկին առաջնորդվել է այն նույն տրամաբանությամբ՝ հանկարծ լսարանի մոտ տպավորություն չստեղծվի, որ վարչապետը իր խոսքը համոզիչ դարձնելու համար հիմա էլ հղումներ

է կատարում ճանաչված ռուս վերլուծաբանների տված գնահատականների վրա: Ի դեպ, գլոբալիզացիայից լոկալիզացիայի անցման եզրահանգման փաստը արձանագրվել էր դեռ ամիսներ առաջ, երբ Ֆրանսիայի նախագահ Նիկոլյա Սարկոզին, Գերմանիայի բունդեսկանցլեր Անգելա Մերկելը, ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման գրեթե նույն ժամանակաշրջանում հայտարարել էին իրենց երկրների ավտոարդյունաբերական հսկաներին ֆինանսական խոշոր օգնություն հատկացնելու մասին: Ավելին, Բարաք Օբաման հանդես էր եկել կոչով՝ ուղղված ամերիկացիներին. գնել միայն Ամերիկայում արտադրված ապրանքներ: Մասնավորապես, Սլավոնական համալսարանի իր այդ ելույթում վարչապետը, ասես թե, պատկերավոր բնութագրելու համար համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամին տրված մեկնաբանությունները, նշեց, որ, պաշտոնական այցով լինելով ԱՄՆ-ում, նա ուսումնասիրել և հայտնաբերել էր, որ մեծ պահանջարկ ունի, և գրախանութներում սպառվել է Կարլ Մարքսի «Կապիտալը»: Ինչ խոսք, գովելի է, որ պարոն վարչապետը ԱՄՆ կատարած պաշտոնական այցի ընթացքում ժամանակ է գտնում այցելել գրախանութներ և անձամբ ուսումնասիրություն կատարել, թե որ հեղինակների գրքերն են առավել մեծ պահանջարկ վայելում: Մինչդեռ դրա անհրաժեշտությունն ամենևին էլ չէր լինի, եթե գործուղումից առաջ կառավարության աշխատակազմը փոքր-ինչ ուսումնասիրեր, թե ի՞նչ են գրում այդ օրերին ամերիկյան հեղինակավոր թերթերը ֆինանսատնտեսակկան ճգնաժամի մասին: Արդարության առաջ չմեղանչելու համար խոստովանենք, որ, այո՛, Տիգրան Սարգսյանի անձնական դիտարկումը, որ ամերիկյան գրախանութներից անհետացել են Մարքսի աշխատությունները, միանգամայն ճշգրիտ է և հաստատում է իր այցից դեռ ամիսներ առաջ կատարվածը ու մամուլում լայնորեն լուսաբանված այդ երևույթը: Եվ դրա պատճառներից մեկն էլ այն է, որ դեռ 1867 թ., երբ առաջին անգամ լույս տեսավ «Կապիտալի» առաջին հատորը (ի դեպ, ոչ թե 1860 թ., ինչպես հնչել էր Տիգրան Սարգսյանի խոսքում), Կարլ Մարքսը այնտեղ գրել էր. «Կապիտալի սեփականատերերը խթանելու են բանվոր դասակարգին՝ գնել ավելի ու ավելի թանկարժեք ապրանքներ, շենքեր և տեխնիկա, դրանով իսկ պարտադրելով նրանց վերցնել գնալով թանկացող վարկեր, մինչև այն պահը, երբ վարկավորվածները կդառնան անվճարունակ: Չվերադարձված վարկերը կբերեն բանկերի սնանկացման, որոնք կազգայնացվեն պետության կողմից, որի արդյունքում անխուսափելի է կոմունիզմի ծագումը»: Ահա, 142 տարի առաջ արված այս կանխատեսման համար, որն ասես թե 100%-ով բնութագրում է ԱՄՆ-ին ճարակած ճգնաժամը, Կ. Մաքսի «Կապիտալը» հատկապես այդ երկրում դարձել է բեստսելլեր:

Այս մանրամասներին ես անդրադարձա՝ խնդիր ունենալով հուշել, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամին տված վարչապետի գնահատականները բերված են տնտեսագիտական իրարամերժ մոտեցում-

ներ ունեցող գործիչների հայտարարություններից՝ մի կողմից Ուորրեն Բաֆֆետ, մյուս կողմից՝ Միխայիլ Խազին, Կուրղինյան, Լեոնտև: Եվ, վերջապես, եթե այս ամենին գումարենք մարտի 13-ին լրագրողների հետ պարոն Տ. Սարգսյանի զրույցի ժամանակ իր մասին արտահայտած այն միտքը, որ «պատկերացնում եք, թե ինչ իրավիճակ կլինի, եթե կանգնի ու ասի՝ ժողովուրդ, կործանվում ենք», ապա ակամայից հարցեր են առաջանում: Արդոք մեր այդ նույն ժողովուրդը օրական լսելով իրարամերժ մոտեցումներ ունեցող հեղինակների կողմից ճգնաժամին տված որակումները, դրանք համադրելով մարտյան փոփոխական եղանակ հիշեցնող կառավարության ֆինանսատնտեսական բլոկի, վարչապետի, Կենտրոնական բանկի նախագահի վերջին չորս-հինգ ամիսներին արտահայտած գնահատականներին, չի գա՞ տրամաբանական մի պարզ եզրահանգման: Այն է՝ այո, եթե այսպես շարունակվի, ապա մենք, իրոք, կկործանվենք:

Այստեղ հարկ եմ համարում մեկ վտանգավոր դիտարկման մասին նույնպես հիշատակել: Վերջին ամիսներին, մեր հանրությունը քանիցս հնարավորություն է ունեցել արձանագրողը դառնալու, որ կառավարության և Կենտրոնական բանկի՝ տնտեսությանը վերաբերող և հաճախակի փոխվող կանխատեսումները մշտապես քողարկում և արդարանում են Արժույթի Միջազգային Հիմնադրամի, Համաշխարհային բանկի և միջազգային այլ հեղինակավոր կառույցների փոփոխվող գնահատականների փաստով: Ահա հենց այստեղ է, որ անհրաժեշտ է հերթական անգամ արձանագրել՝ Հայաստանի Հանրապետությանը ճարակած տագնապահարույց ֆինանսատնտեսական ճգնաժամը հիմնականում պայմանավորված է մեր տնտեսությանը ներհատուկ արատներով՝ մրցունակ արդյունաբերական, գյուղատնտեսական ծյուղերի գրեթե բացակայություն, մենաշնորհային կարգավիճակում հայտնված արտաքին առևտրի ոլորտ, բարենպաստ ներդրումային միջավայրի բացակայություն, տնտեսության իրական հատվածի վարկավորման խիստ անբավարար մակարդակ, պետության սեփականություն հանդիսացող գույքի և արտադրական հզորությունների ոչ նախաձեռնողական կառավարում ու անարդյունավետ շահագործում, և, վերջապես, արդեն տևական ժամանակ վարվող չարդարացված, հայրենական արտադրողին ոչ միայն չսատարող, այլև տեղական արդյունաբերությունն արգելակող (հատկապես արտահանող ծյուղերի) դրամավարկային քաղաքականություն: Անշուշտ, սխալ կլիներ անտեսել նաև համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները, որոնք իրենց բացասական ազդեցությունը ունեցան մեր էկոնոմիկայի վրա: Այստեղ հատկապես տուժեց լեռնամետալուրգիական և լեռնահանքային արդյունաբերությունը, հատկապես՝ Զանգեզուրի, Ագարակի, Կապանի, Ալավերդու ենթաշրջանի արտադրական ձեռնարկությունները:

Առավելագույն հարված հասցվեց նաև մեր հայրենակիցներին դրսից ստացվող օգնության, այսպես կոչված՝ տրանսֆերտների կրճատման պատ-

ճառով: Ընդ որում, այս հանգամանքը խիստ բացասաբար անդրադարձավ երկրի վճարային հաշվեկշռի վրա նաև այն պատճառով, որ դրան գումարվեց մեկ բացասական դրսևորում ևս: Այսպես, արտահանումից ստացվող արտարժույթի ծավալի շոշափելի կրճատումները հանգեցրին նրան, որ Կենտրոնական բանկը վճարային հաշվեկշիռը հավասարակշիռ պահելու նպատակով հարկադրված եղավ Միջազգային պահուստներից արտարժույթի մեծ քանակ հանել վաճառքի, որ կարողանար չեզոքացնել ընդհանուր վճարային հաշվեկշռի պակասուրդը, դրա հետ մեկտեղ ժամանակավորապես պահել հայկական տարադրամի տնտեսագիտորեն չհիմնավորված, նույն այդ տնտեսության «տունը քանդող» դրամի բարձր փոխարժեքը:

Արված եզրակացությունները համոզիչ դարձնելու համար (նշենք, որ տնտեսության զարգացման կառուցվածքային խոչընդոտների և զարգացումն արգելակող այլ խնդիրների ցանկը կարելի էր շարունակել) փոքր-ինչ մանրամասնենք:

Այսպես, հանրապետության տնտեսության գրեթե անմրցունակ լինելու, ինչպես նաև ներդրումային բարենպաստ միջավայրի բացակայության մասին են վկայում Ազգային վիճակագրական ծառայության հետևյալ խոսուն թվերը: Այսպես, եթե 2003 թ. ՀՀ-ում արտահանման տեսակարար կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ կազմել է 25,28% , ապա 2008 թ. դա եղել է 8,96% (դրամական արտահայտությամբ): Ավելին, եթե 2003 թ. ներմուծման ծավալները արտահանման ծավալներին գերազանցել է 1,8 անգամ, ապա 2008 թ. արդյունքով ներմուծման ծավալները գերազանցել են արտահանման ծավալներին ավելի քան 4,12 անգամ, էլ չասեմ, որ 2009 թ. հունվարին այդ հարաբերակցությունը կազմել է 6,4 անգամ: Այս թվերը վկայում են այն մասին, որ մեր տեղական արտադրանքը կորցրել է ոչ միայն արտաքին շուկաները, այլ նաև շատ դեպքերում զիջում է իր դիրքերը հայաստանյան շուկայում նույնպես, ներմուծվող ապրանքների օրըստօրե աճող ճնշման արդյունքում:

Հաջորդ դիտարկումը: Ամենևին չնսեմացնելով մասնագիտացված ամենատարբեր միջազգային կազմակերպությունների ներդրումային գրավչության մասին եզրակացությունների պիտանելիությունը, ասեմ հետևյալը: Փորձառու ներդրողը ինչի վրա առաջինը ուշադրություն կդարձնի, դա այն է, թե ՀՀ պետական բյուջեում ի՞նչ տեսակարար կշիռ են կազմում երկրի տնտեսության շահութաբերությունն անուղղակիորեն բնութագրող ցուցանիշները, մասնավորապես՝ շահութահարկն ու եկամտահարկը, և ոչ թե կկարևորի ռեյտինգային տարբեր ցուցանիշներ: Եվ այսպես, 2008 թ. ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտներում ուղղակի հարկերի՝ շահութահարկի և եկամտահարկի տեսակարար կշիռը կազմել է համապատասխանաբար 14,4% և 9%, մինչդեռ անուղղակի հարկերից ավելացված արժեքի հարկին բաժին է ընկել հարկային եկամուտների ավելի քան 53% -ը: Այս թվերի պայմաններում խոսել ներդրումների գրավչության մասին, կարծում եմ, անիմաստ է: Բնակա-

նաբար, ներդրումներ անելու պատրաստվող ինվեստորը կհետաքրքրվի նաև երկրում առկա հարկային օրենսդրության դերակատարության և գրավչության մասին: Ահա այստեղ է, որ նա կրկին կհիասթափվի: Այսպես, 2000-2008 թթ. կատարողական վարույթ է ընդունվել տնտեսվարող սուբյեկտների դեմ հարկերի գանձման խնդիրներին վերաբերող 402221 գործ, միայն 2008 թ.՝ 55991: Եվ այս խոսուն թվերը արձանագրվել են Հայաստանի Հանրապետության նման փոքր տնտեսություն ունեցող երկրում: Եթե սրան ավելացնենք նաև այն, որ այդ նույն ժամանակաշրջանում դատարանների որոշումների չկատարման արդյունքում բյուջեում չվերականգնված գումարը կազմել է 296 մլրդ 742 մլն 448 հազար դրամ, իսկ 2008 թ. չվերականգնված գումարը կազմել է 18 մլրդ 541 մլն 607,8 հազար դրամ, պատկերը պարզ կդառնա: Բերված թվերն ավելի տպավորիչ դարձնելու համար նշենք, որ 2000-2008 թթ. բռնագանձված (փաստացի) գումարի տեսակարար կշիռը բռնագանձման ենթակա գումարի նկատմամբ կազմել է ընդամենը 16%: Ահա այսպիսին է մեր տնտեսվարողների իրավական վիճակը բնութագրող վիճակագրությունը: Այստեղ հարկ է նշել նաև, որ ներդրումային գրավչության օգտին չեն խոսում և առևտրային բանկերի կողմից սահմանված վարկավորման շատ բարձր (16-24%) տոկոսադրույքները: Մինչդեռ ներդրումային առումով, թերևս, գրավիչ է միայն ՀՀ բանկային համակարգը: Աշխարհում դժվար թե գտնվի մեկ այլ երկիր, որի տնտեսությունն աչքի է ընկնում խիստ ցածր շահութաբերությամբ, ինչի մասին արդեն իսկ գրվել է, իսկ դրան հակառակ, բանկային համակարգում տարիներ շարունակ արձանագրվում է աննախադեպ բարձր շահութաբերություն: Այսպես, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում 2008 թ. ընթացքում առևտրային բանկերն ապահովել են ընդհանուր 27,1 մլրդ դրամ զուտ շահույթ, ինչը 2007 թ. զուտ շահույթը գերազանցել է 30,5% -ով: Նշենք, որ 2008 թ. առևտրային բանկերն ապահովել են ընդհանուր 171,1 մլրդ դրամի համախառն եկամուտ: Բնականաբար, տրամաբանական հարց է ծագում՝ այդ ինչպե՞ս է ստացվում, որ ճգնաժամում հայտնված երկրում, երբ տնտեսությունն արձանագրում է աննախադեպ անկում, բանկային համակարգը ծաղկում է: Ինչպես նաև հարց է առաջանում, այդ ու՞մ հաշվին են ծլում, ծաղկում ու բարգավաճում Հայաստանի Հանրապետության 22 առևտրային բանկերից 19-ը (միայն 3 բանկեր են, որ 2008 թ. աշխատել են վնասով): Կասկածից վեր է, որ նման շահութաբերությամբ առևտրային բանկերը աշխատում են մեր տնտեսվարողների, իսկ մեծ հաշվով՝ ամբողջ ժողովրդի հաշվին: Այսպես, սահմանելով տնտեսական իրավիճակից չբխող (սղաճի համեմատաբար ցածր՝ մինչև 7% մակարդակ, միջին ռիսկայնություն) բարձր տոկոսադրույքները, բանկերը, ի սկզբանե, տեղական արտադրողին պարտադրում են դա ներառել արտադրվող ապրանքի ինքնարժեքի մեջ, իսկ առևտրային կազմակերպություններին էլ, որոնք վարկավորվում են առևտրային բանկերի կողմից, դա հաշվառել

վաճառքի հանվող ապրանքների սակագնի մեջ: Իսկ քանի որ շուկայական տնտեսության պայմաններում յուրաքանչյուր ապրանք վաճառվում է սպառողին, ուստի հենց նա էլ, ի վերջո, բարձր տոկոսադրույքների բեռի կրողն է դառնում: Չմոռանանք հիշեցնել նաև, որ մեր 22 առևտրային բանկերից 21-ում առկա է օտարերկրյա փայատերերի մասնակցությունը, ըստ որում՝ դրանցից 12-ում նրանց մասնակցությունը գերազանցում է 50%-ը: Ավելին՝ 9 առևտրային բանկերում օտարերկրյա փայատերերի մասնաբաժինը գերազանցում է 95%-ը: Այլ կերպ ասած՝ մեր բանկերի մեծ մասում սեփական կապիտալի կեսից ավելին տնօրինում են օտարերկրյա փայատերերը: Դրա հետ մեկտեղ նրանք սեփական ներդրումներին ոչ համարժեք բարձր դիվիդենտներ են ստանում (շատ ավելի բարձր, քան իրենց իսկ երկրներում), դրան զուգահեռ, դրսում մեր հայրենակիցների դառը քրտինքով վաստակած և Հայաստան ուղարկած օգնությունը, որը ստացվում է դոլարով, նրանք (մեր հայրենակիցները) հարկադրված են փոխանակել ցածր փոխարժեքով առօրեական հոգսերը հոգալու համար: Իսկ դրան հակառակ, այդ նույն դոլարները հայկական առևտրային բանկերի օտարերկրյա սեփականատերերի կողմից գնվում են հայկական դրամով, որի փոխարժեքը, կրկնեմ, արհեստականորեն բարձրացված է, հետագայում էլ դուրս բերվում հանրապետությունից՝ ֆինանսական կապիտալի տեսքով: Ավա՜ղ, իսկ հիշատակածս բանկիրները այդպես էլ և ոչ մի լուրջ ներդրումային նախաձեռնությամբ վերջին տասնամյակում չնկատվեցին: Հարկ է նաև հիշատակել, որ Հայաստանի Հանրապետությունից արտարժույթի արտահոսքի մեծ քանակությունը բաժին է ընկնում մեր երկրի խոշորագույն այն ձեռնարկություններին, որոնք ունեն օտարերկրյա սեփականատերեր, ինչպիսիք են՝ Արմենտել-Բիլայնը, Վիվասել-ՄՏՍ-ը, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը, «Երևանջուրը» և այլ ձեռնարկություններ: Չմոռանանք շեշտել, որ երկրից ֆինանսական կապիտալի արտահոսքը հավելյալ լարվածություն է առաջացնում վճարային հաշվեկշռում, ինչն էլ իր հերթին հանգեցնում է կամ ՀՀ ԿԲ միջազգային պահուստների նվազեցմանը, կամ էլ հարկադրում է արտասահմանյան նոր պարտքերի լծի տակ ընկնելուն, կամ էլ այդ երկու միջոցները կիրառվում են զուգահեռաբար:

Մի քանի դիտարկում էլ անենք արտաքին առևտրում ձևավորված վիճակի վերաբերյալ: Վերջին տարիներին իրականացվող դրամավարկային քաղաքականությունը, որի հենքն էին կազմում դրամական զանգվածի աննախադեպ սեղմման միջոցով ազգային դրամի բարձր փոխարժեքի ապահովման, վարկավորման բարձր տոկոսադրույքների սահմանումով թանկ փողերի քաղաքականության գործառույթները, ունեցան շատ ծանր հետևանքներ թե՛ արդյունաբերության, թե՛ գյուղատնտեսության համար: Արդեն իսկ մեր երկրում, ինչպես վերը ասվել էր, ստեղծվել է մի այնպիսի իրավիճակ, որ տեղական արտադրանքը թե՛ հանրապետության ներսում, թե՛ արտաքին շուկա-

ներում դարձել է անմրցունակ: Տարեցտարի մեծացան ներմուծման ծավալները, դրանով իսկ մեծացավ Հայաստանի կախվածությունը արտասահմանից: Բավական է նշել, որ լայն սպառման ապրանքների ավելի քան 40%-ը բաժին է ընկնում ներմուծվող ապրանքներին: Առանձնահատուկ նշենք, որ բնակչության սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող 17 ապրանքատեսակներ ներմուծելու համար միայն անցյալ տարի ծախսվել է 1 մլրդ 313 մլն 827 հազար դոլար: Եվ ահա հենց այստեղ է, որ պետությունը, ինքնամեկուսանալով արտաքին առևտրի ոլորտից, այն ամբողջությամբ հանձնեց խոշոր ներկրողների քմահաճ կամայականություններին, ավելին, իր կրավորական դիրքորոշումով նպաստեց մի նոր խավի գոյացմանը: Գործի էր դրվել որքան պարզունակ, այնքան էլ ցինիկ գործառույթ, այն է՝ արհեստականորեն պահվող բարձր դրամի փոխարժեքի պայմաններում ստեղծվել էր մի զավեշտալի իրավիճակ: Եթե ԱՄՆ դոլարի փոխարժեքի անկումը եվրոյի, բրիտանական ֆունտ ստեռլինգի, շվեյցարական ֆրանկի նկատմամբ արձանագրում էր փոխանակման որոշակի փոխարժեք, ապա մեզ մոտ՝ Հայաստանում դոլարի փոխարժեքը առնվազն 10-12 տոկոսային կետով ավելի ցածր էր: Արդյունքում, մեր խոշոր ներկրողները, փոխանակելով դրամը դոլարներով, ի սկզբանե ունեին երաշխավորված 10-12% շահույթ: Սակայն դա ամենևին էլ չէր անդրադառնում էժան դոլարներով գնված ներմուծվող ապրանքների մեծածախ և մանրածախ գների վրա: Պատճառը, չհաշված վերջիններիս ագահությունը, մեկն է. արտաքին առևտրում գերիշխում է մենաշնորհային կարգավիճակը, ուստիև բացակայում է մրցակցությունն ու ազատ գնագոյացումը: Ստացվում է այնպես, որ համաշխարհային պարենի շուկայում ցորենի, բրնձի, շաքարավազի գների զգալի անկման պայմաններում (էլ չեմ խոսում նավթի գնի շուրջ 3 անգամ անկման մասին), արտաքին առևտրում արձանագրված միտումներին մեր շուկան կամ չէր արձագանքում, կամ լավագույն դեպքում ցույց էր տալիս կենդանության և համարժեք գործելու շատ թույլ, հազիվ նշմարելի նշաններ: Հակառակ դրան, երբ միջազգային բորսաներում դեռ ընդամենը հայտարարվում էր գների բարձրացման մասին, ապա հայաստանյան շուկան անմիջապես արձագանքում էր այդ լուրին, հայտարարված թանկացումներից էլ մի բան ավելի բարձրացնելով գները: Հետագայում դեպքերը զարգանում էին հայտնի սցենարով. Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի խիստ նախազգուշացումներ, մի քանի համեմատաբար անպաշտպան սլաքավարների նկատմամբ կիրառվող պատժամիջոցներ և վերջ: Մի խոսքով, ծավալվում էր պայքար ոչ թե «հիվանդության» պատճառների վերացմանը միտված, այն է՝ արտաքին առևտրաշրջանառությունում մենաշնորհների կազմալուծման ուղղությամբ, այլ ծավալվում էր «անողոք» պայքար դրա հետևանքների, գները բարձրացնող մանրածախ առևտուր իրականացնողների դեմ: Հայաստանյան ֆինանսատնտեսական ճգնաժամի ներքին պատճառների մասին կարե-

լի էր այլ օրինակներ ևս բերել, սակայն բավարարվենք այսքանով:

Անդրադառնանք մեր էկոնոմիկայի վրա գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի թողած բացասական հետևանքների վրա: Ինչպես վերը նշվել էր, համաշխարհային ճգնաժամի հետևանքով զգալիորեն պակասել էին մեր հայրենակիցների կողմից Հայաստան՝ իրենց հարազատներին ուղարկվող օգնության, տրանսֆերտների ծավալները: Այս տարվա անցած երկու ամիսների ընթացքում միայն բանկային համակարգով ստացված տրանսֆերտները կրճատվել են ավելի քանի 20%-ով, մինչդեռ բոլորիս համար ակնհայտ էր, որ բանկային համակարգով ստացված տրանսֆերտները լավագույն դեպքում կազմում են ընդհանուր օգնության 65-70%-ը: Այս տոկոսներին ենք գալիս, եթե վեր ենք լուծում 2008, ինչպես նաև նախորդ տարիների ընդհանուր վճարային հաշվեկշռի գումարելիները:

Անշուշտ, համաշխարհային ճգնաժամի հետևանքներին պետք է դասել նաև այն, որ մեր էկոնոմիկայում կրճատվելու միտում է արձանագրվում ուղղակի ներդրումների ծավալներում: Վերցնենք թեկուզ Ալավերդու մետալուրգիական համալիրում նախատեսվող ներդրումային ծախսերի հետաձգումը, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի արտերկրի սեփականատիրոջ կողմից ներդրումներ կատարելուց հրաժարվելու փաստը, որի հոգսը այս նեղ վիճակում հարկադրված եղավ իր վրա վերցնել մեր կառավարությունը, հաշվի առնելով այդ կոմբինատի համակարգաստեղծ և քաղաքաստեղծ լինելու գործոնը թե՛ Քաջարանի, թե՛ Սյունյաց մարզի համար (այստեղ ավելորդ չէ հիշել, որ այդ կոմբինատը մինչև սեփականաշնորհումը տարեկան ապահովում էր 120-130 մլն դոլարի շահութաբերություն և եթե համաշխարհային շուկայում մոլիբդենի գներն ընկել են ավելի քան 3 անգամ, ապա այդ համալիրի շահութաբերությունն էլ թող ընկներ 4 անգամ՝ կազմելով նվազագույնը 30 մլն դոլար տարեկան: Մինչդեռ խորը ճգնաժամի մեջ հայտնված մեր պետությունը այսօր հարկադրված է միջազգային առանց այն էլ իր սահմանափակ հնարավորություններից 10 մլն դոլար հատկացնել դրան): Ուղղակի ներդրումների ծավալի կրճատումը տրանսֆերտների կրճատման հետ մեկտեղ առաջացրեց երկրի վճարային հաշվեկշռում լուրջ լարվածություն, ինչն ավելի խորացավ, երբ 2009 թ. միայն հունվար ամսին առևտրաշրջանառության հաշվեկշիռը բացասական էր, այն էլ՝ 185,9 մլն դոլարի չափով:

Ամփոփելով ասվածը՝ կարելի է արձանագրել, որ ՀՀ-ի համար գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի հիմնական բացասական գործոններն էին՝ դրսից ստացվող տրանսֆերտների ծավալի զգալի նվազումը, համաշխարհային շուկայում, մասնավորապես, պղնձի, մոլիբդենի գների շեշտակի անկումը՝ պայմանավորված դրանց նկատմամբ պահանջարկի անկմամբ, որը շոշափելի հարված հասցրեց մեր արտահանման ծավալներին՝ կրճատելով դրանք, մեծացնելով արտաքին առևտրաշրջանառության հաշվեկշռի

բացասական սալդոն: Բացասական ազդեցություն ունեցան նաև ուղղակի ներդրումների և ընդհանուր ներդրումների ծավալների սեղմումը, ինչպես նաև միջազգային տուրիզմից, իրականացվող միջազգային այլ ծառայություններից Հայաստան ներհոսող կապիտալի ծավալների կրճատումները: Այս ամենի առկայությունը հանգեցրեց նրան, որ վճարային հաշվեկշռում գոյացավ մեծ պակասուրդ, որը, ինչպես վերն ասված էր, լրացնելու տնտեսագիտությանը մինչև օրս հայտնի երեք ճանապարհ կա: Վճարային հաշվեկշռում առաջացած պակասուրդը պետք է փակվի կամ ՀՀ ԿԲ միջազգային պահուստների հաշվին, կամ միջազգային ֆինանսատնտեսական կառույցներից, երկրներից փոխառություններով, կամ էլ այդ երկու գործոնների միաժամանակյա կիրառմամբ: Ահա սրանք են համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական հետևանքները Հայաստանի վրա:

Կատարված վերլուծությունից հետո առնվազն տարօրինակ են հնչում վարչապետի և Կենտրոնական բանկի նախագահի այն հայտարարությունները, որ դրամի փոխարժեքի կարգավորումը նախօրոք մտածված, հեռատես քաղաքականություն էր: Հիշո՞ւմ եք, հայտարարում էին, որ ամեն ինչ գտնվում էր իրենց հսկողության ներքո և հնչում էին նմանատիպ այլ, մեղմ ասած, ստեղծված իրավիճակին ոչ համարժեք արտահայտություններ: Քիչ թե շատ գիտելիքներ ունեցող մարդկանց համար համաշխարհային ճգնաժամի առանձին անխուսափելի դրսևորումները և դրանց առաջն առնելու միջոցները առաջին իսկ օրերից էին պարզ: Կարծում եմ, դրանք պարզ էին նաև կառավարության ու Կենտրոնական բանկի ղեկավարության համար, այլապես Երևանից Մոսկվա, Պեկին, Վաշինգտոն, չգիտեմ այլուր ստիպված չէին լինի պատվիրակություններ ուղարկել՝ խնդիր դնելով ամեն կերպ փրկել ստեղծված մտահոգիչ իրավիճակը, որն արդյունք է տարիների ընթացքում կուտակված սեփական սխալների՝ վարվող դրամավարկային, հարկաբյուջետային քաղաքականության: Այնպիսի մի քաղաքականություն, որի վտանգավոր հետևանքները էլ ավելի ցցուն դարձան համաշխարհային ճգնաժամի պայմաններում:

Հաշվի առնելով այս ամենը՝ առավել կարևորվում է մեր ժողովրդի կողմից կառավարության, ֆինանսական մարմինների հանդեպ ունեցած վստահության կորստի հարցը, հայտարարված նպատակների և իրականում կատարվող գործառույթների միջև եղած անջրպետը: Պարզեցնեմ, թե ինչ երևույթների մասին է խոսքը:

Կենտրոնական բանկի հայտնի որոշումից հետո, այն է՝ վերադառնալ դրամի ազատ լողացող փոխարժեքի քաղաքականությանը, Կենտրոնական բանկի նախագահը մարտի 3-ին հայտարարեց, որ մենք ունենք 1 մլրդ 200 մլն դոլարից ավելի Միջազգային պահուստներ: Մինչդեռ ս/թ հունվարի 8-ից մինչև մարտի 2-ը ներառյալ, «ՆԱՍԴԱՔ - ՕԷՄԷՔՍ Արմենիա» բորսայում իրականացված գործարքների համաձայն, վաճառվել է 466 մլն 425 հազար դոլար

(1 դոլարի դիմաց 305 դրամով): Ըստ որում, վաճառվել է Կենտրոնական բանկի միջազգային պահուստներից, որի արդյունքում 2008 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա 1 մլրդ 401,2 մլն դոլարի միջազգային պահուստները կրճատվել են՝ հասնելով 935 մլն 775 հազար դոլարի: Սրա հետ մեկտեղ նշենք, որ 2008 թ. նոյեմբերի 5-ից մինչև դեկտեմբերի 30-ը նույն այդ բորսայում վաճառվել է 292 մլն 949 հազար դոլար, որից զգալի մասը բաժին է ընկնում նույնպես միջազգային պահուստներից վաճառված արտարժույթին (նշենք, որ 2008 թ. ընթացքում ՀՀ միջազգային պահուստները կրճատվել են 254 մլն 200 հազար դոլարով, 2007 թ. դեկտեմբերի 31-ին գրանցված 1 մլրդ 659 մլն 200 հազար դոլարից հասնելով 1 մլրդ 405 մլն դոլարի): Նման պարագայում զարմանք է հարուցում նաև այն, որ վարչապետը մարտի 4-ին, պատասխանելով հեռուստալրագրողների հարցին, որպես դրական ձեռքբերում ներկայացրեց այն, որ մինչև մարտի 3-ը (դրամի շուրջ 22%-ով արժեզրկումը դոլարի նկատմամբ) առևտրային բանկերը կարողացել էին արտարժույթով ավելի քան 120 մլն դոլարով ավելացնել իրենց լիկվիդային միջոցները՝ դրանք հասցնելով 700 մլն դոլարի: Հիրավի, լուրջ մտահոգվում ես, երբ երկրի վարչապետը դրական է ներկայացնում այն փաստը, որ երկիրը խորը ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում, գիտենալով, որ օրեր հետո արժեզրկվելու է հայկական դրամը, իր միջազգային պահուստներից շուկայական գնից առնվազն 22%-ով ավելի էժան, ֆիքսված գներով բորսայում վաճառում է առևտրային բանկերին 120 մլն դոլար, իսկ հետո էլ հպարտանում դրանով: Այլ կերպ ասած՝ կառավարությունը և Կենտրոնական բանկը իրենց վարած քաղաքականությամբ նպաստել են, որ առևտրային բանկերը հաշված օրերի ընթացքում այսօր կարող են ստանալ գերշահույթ, այն է՝ ֆիքսված 305 դրամ 1 դոլարի դիմաց գնված 120 մլն դոլարը այսօր իսկ այդ նույն բորսայում հանելով վաճառքի միջինը 370 դրամ 1 դոլարի դիմաց՝ կունենան շուրջ 8 մլրդ դրամի շահույթ: Վերը նշել էինք, որ 2008 թ. ՀՀ առևտրային բանկերն արձանագրել էին 27 մլրդ 100 մլն դրամի զուտ շահույթ, ուստի ի՞նչն էր խանգարում, որ այդ զուտ շահույթից նրանք հավելյալ 8 մլրդ դրամ հատկացնեին և իրենց անհրաժեշտ 120 մլն դոլարը գնեին ազատ լողացող փոխարժեքի քաղաքականությանը վերադառնալուց, մարտի 2-ից հետո: Թող դիմանային, հաշտվեին այն մտքի հետ, որ այդ 8 մլրդ դրամը մեծ բեռ չէր լինի արձանագրված 27 մլրդ 100 մլն դրամ զուտ շահույթի մեջ: Ընդունենք նաև, որ դրամի արժեզրկման պայմաններում, այո, առևտրային բանկերը նախկինում արտարժույթով տված վարկերի վերահաշվարկի արդյունքում թող կրած լինեին իրենց կողմից հայտարարված 4,5 մլրդ դրամի վնասներ: Չէ՞ որ ընդհանուր առմամբ անցած տարվա արձանագրված զուտ շահույթի 30,5% աճի տեմպի պայմաններում կրած այդ վնասը ընդհանրապես հիվանդագին չէր անդրադառնա առևտրային բանկերի վրա, որքանով դա անդրադարձավ հատկապես մեր անապահով խավի վրա, ով մարտի 2-ից հետո հարկադրված էր 10-15%-

ով ավելի վճարներ կատարել առաջին անհրաժեշտության ապրանքներ գնելիս: Թե ինչպես անվանել այս քաղաքականությունը, եթե չասենք՝ գործարք, թողնում եմ ընթերցողի եզրակացությանը: Բնականաբար, բանկերի կողմից ստացված այդ հավելյալ 8 մլրդ դրամ շահույթի «ջարման» քաշողը դառնալու է նույնպես մեր ժողովուրդը: Չէ որ հայտնի տրամաբանությունն է գործում՝ եթե մեկը շահում է, իսկ տվյալ դեպքում շահողը առևտրային բանկերն ու խոշոր ներկրողներն են, ապա մյուսները պետք է տուժեն: Մեր դեպքում կորցնողը մեր ժողովուրդն է, որը հարկադրված է իր կենսագոյությունը պահպանելու համար գնել անհրաժեշտ ապրանքներ, որոնց զգալի մասը ներկրվելու է Հայաստան արդեն իսկ ավելի բարձր փոխարժեք ունեցող դոլարով կամ եվրոյով և վաճառվելու է էլ ավելի թանկ գներով:

Կարծում եմ, բերված փաստացի նյութերը բավարար են անելու մի եզրակացություն. վարվող տնտեսական և դրամավարկային քաղաքականությունն ուղղված է միայն և միայն խիստ սահմանափակ թվով մարդկանց հարստացմանը՝ այն էլ ժողովրդական ամենալայն զանգվածների հետագա աղքատացման հաշվին: Այդ քաղաքականությունը ոչ միայն չի նպաստում, այլև արգելակում է փոքր և միջին բիզնեսի կայացումը: Այսպես շարունակելու դեպքում երկիրը կհայտնվի դժվար հաղթահարելի մարտահրավերների առաջ, դա էլ, մեղմ ասած, լավագույն դեպքում: Իսկ հաշվի առնելով ներքաղաքական գերլարված իրավիճակը, Արցախյան հիմնահարցի առկախ լինելու իրողությունը, կարծում եմ, հրամայական են դարձնում գործնական քայլերի մշակումը ստեղծված վիճակը շտկելու ուղղությամբ, իսկ հապաղելը կարող է կործանարար հետևանքներ ունենալ Հայոց պետականության համար: Եվ սա չափազանցություն չէ:

Քննադատական այս վերլուծությունը նպատակ ունի հաստատելու մի պարզ և հայտնի ճշմարտության պահանջված լինելու փաստը: Լավ է ապրել համաձայն «ով նախազգուշացված է, նա զինված է» սկզբունքի, քան դառնալ 5-րդ դարի գալա-հռոմեական գրող, Արվերնի եպիսկոպոս Սիդոնիուս Ապոլինարիսի սինդրոմի զոհը՝ համառորեն չտեսնելով քո գլխի վրա կախված վտանգը, երբ դա տեսանելի է արդեն իսկ շատերին:

«Ազատամտություն», 24-25. III. 2009:

МИРОВОЙ ФИНАНСОВО – ЭКОНОМИЧЕСКИЙ КРИЗИС И АРМЕНИЯ

Уважаемый читатель, прежде чем поговорить о последствиях мирового финансово-экономического кризиса для экономики Армении, вспомним официальные оценки правительства и Центрального Банка. Считаю это важным не потому, что воздействию мирового финансово-экономического кризиса (с октября 2008г. по сей день) на экономику нашей страны давались взаимоисключающие оценки. Моя цель - объективно представить степень их обоснованности. Причем о взаимоисключающих комментариях исполнительной и финансовой властей неоднократно говорили - со всей педантичностью и точностью - и провластные, и независимые, и тер-петросяновские СМИ. Увы, все эти публикации власти оставили без должного ответа. Почему я так подробно останавливаюсь на этом? Потому что если нет основательного анализа происходящих процессов, если им не дается объективная оценка, то надеяться, что антикризисные меры, предпринимаемые правительством и финансовыми властями, увенчаются успехом, было бы неоправданным преувеличением. Итак, каковы последние заявления премьер-министра о глобальном финансово-экономическом кризисе?

Примерно месяц назад премьер-министр Саркисян выступил на конференции в Цахкадзоре, скромно названном «армянским Давосом» (по-видимому, в ее работе участвовали лауреаты Нобелевской премии в области экономики Пол Кругман, Роберт Манделл, Дуглас Норт, Нуриэль Рубини, Джозеф Стиглиц и другие всемирно известные ученые, которые рвались в провозглашенный будущим финансовым центром мира Цахкадзор-Давос). На конференции премьер-министр, приведя цитату из открытого письма Уоррена Баффетта, второго богатейшего человека в мире, акционерам компании «Berkshire Hathaway Incorporation», сказал: то, что происходит в мире, - не кризис, а хаос. Наш премьер, конечно же, не счел нужным сослаться на письмо автора данных строк. По-видимому, господин Саркисян подумал, что аудитория сочтет это как давление, когда человек в подтверждение неоспоримости своих слов ссылается на авторитета в данной области. Однако странно то, что в выступлении премьер-министра не прозвучали два других замечания Уоррена Баффетта, а именно: до этого кризиса возглавляемая им компания 44 года была прибыльной и останется таковой, по мнению Баффетта, еще 44 года. Кроме того, ущерб «Berkshire Hathaway Incorporation» Баффетт весьма самокритично назвал следствием «собственных идиотских ошибок» (потери капитализации корпорации и самого Баффетта составили 5 процентов). Через две-три недели пос-

ле цахкадзорского форума премьер-министр выступил на аналогичной конференции в Славянском университете. Здесь уже, характеризуя последовавшие за мировым кризисом операции, он справедливо повторил оценки, озвученные в публичных выступлениях и статьях известных российских аналитиков (Михаил Хазин, Михаил Леонтьев, Михаил Делягин, Сергей Кургинян). А именно: финансово-экономический кризис привел к тому, что ведущие государства, желая спасти от банкротства системообразующие предприятия своих стран, начали осуществлять политику протекционизма и не подумали о судьбе действующих во всем мире филиалов этих промышленных гигантов. Иными словами, аналитики пришли к выводу, что мировые лидеры взяли на вооружение политику, в соответствии с которой концентрируют все свое внимание на решении проблем своих стран, а не филиалов крупных транснациональных корпораций. Учитывая данное обстоятельство, вышеназванные аналитики, еще за несколько месяцев до выступления премьер-министра Армении, заявили: одним из последствий мирового финансово-экономического кризиса явилось то, что глобальная мировая экономика стала проявлять тенденцию к локализации - глобализация трансформировалась в локализацию. Здесь премьер-министр также не сослался на авторов. По-видимому, господин Саркисян руководствовался той же логикой: чтобы у аудитории вдруг не создалось впечатления, что в подтверждение своих слов он ссылается на известных российских аналитиков. Кстати, факт перехода от глобализации к локализации был отмечен еще несколько месяцев назад, когда президент Франции Николя Саркози, федеральный канцлер Германии Ангела Меркель, президент США Барак Обама почти одновременно объявили о предоставлении крупной финансовой помощи своим автомобильным гигантам. В частности, в своем выступлении в Славянском университете премьер-министр, как бы желая образно охарактеризовать определения мирового кризиса, отметил: во время официального визита в США он выяснил, что «Капитал» Карла Маркса пользуется большим спросом и активно раскупается. Что и говорить, похвально, что в ходе официального визита в США премьер-министр выкроил время для посещения книжных магазинов, и лично убедился, книги каких авторов пользуются спросом. Между тем в этом не было бы никакой необходимости, если бы до поездки аппарат правительства ознакомился с тем, что писали о мировом финансово-экономическом кризисе ведущие американские газеты. Справедливости ради отметим, что личное наблюдение Тиграна Саркисяна абсолютно точно и подтверждает то, что произошло несколько месяцев назад и широко освещалось в прессе. Еще в 1867 г. (а не в 1860 г., как было сказано в выступлении Т. Саркисяна), когда вышел в свет первый том «Капитала», Карл Маркс писал: «Владельцы капитала будут стимулировать рабочий класс покупать все больше и больше дорогих товаров, зданий и техники, тем самым вынуждая их брать все более дорогие кредиты, до тех пор, пока те не станут невыплачиваемыми. Невыплачиваемые кредиты приведут к банкротству банков, которые будут национализированы государ-

ством, что в итоге приведет к возникновению коммунизма». Именно этот сделанный 142 года назад прогноз, который почти со стопроцентной точностью характеризует начавшийся в США кризис, и сделал «Капитал» бестселлером.

Я подробно остановился на этом, чтобы показать, что оценки премьер-министра базируются на заявлениях людей, придерживающихся взаимоисключающих экономических подходов, - с одной стороны, Баффетта, с другой - Хазина, Кургиняна и Леонтьева. И, наконец, если к сказанному прибавить слова, прозвучавшие 13 марта на встрече г-на Саркисяна с журналистами («вы представляете, что случится, если мы вдруг скажем: люди, мы гибнем»), то возникнет целый ряд вопросов. Неужели наш народ, который каждый день слышит мнение людей, придерживающихся взаимоисключающих взглядов, и сравнивает их с напоминающими переменчивую мартовскую погоду оценками ответственных представителей финансово-экономического блока правительства, премьер-министра, председателя ЦБ, не придет к вполне логичному выводу? А именно: если так будет продолжаться и дальше, то мы действительно погибнем.

Здесь, на мой взгляд, вполне уместно поговорить об одном опасном явлении. В последние месяцы наша общественность не раз имела возможность констатировать, что часто меняющиеся экономические прогнозы правительства и ЦБ постоянно маскируются и оправдываются переменчивыми оценками Международного валютного фонда, Всемирного банка и других авторитетных международных структур. Вот тут мы должны отметить следующее: охвативший Армению финансово-экономический кризис обусловлен главным образом пороками нашей экономики - практическим отсутствием конкурентоспособных отраслей промышленности и сельского хозяйства, оказавшейся в монопольном положении сферой внешней торговли, отсутствием благоприятного инвестиционного климата, крайне неудовлетворительным уровнем кредитования реального сектора экономики, безынициативным управлением и неэффективным использованием государственного имущества и производственных мощностей, являющихся государственной собственностью, и, наконец, неоправданной кредитно-денежной политикой, не только не поддерживающей местного производителя, но и тормозящей развитие отечественной промышленности (особенно экспортных отраслей). Конечно, было бы неверно игнорировать последствия мирового кризиса, оказавшего негативное воздействие на нашу экономику. Особенно пострадали горнометаллургическая и горнорудная промышленность, в частности, Зангезурское, Агаракское, Капанское и Алавердское промышленные предприятия.

Большим ударом для наших соотечественников стало и сокращение поступающих из-за рубежа трансфертов. Причем данное обстоятельство крайне негативно отразилось на платежном балансе страны, в том числе и в силу другого отрицательного явления. Так, существенное сокращение объема иностранной валюты, получаемой от экспорта, привело к тому, что ЦБ был вынужден продать большое количест-

во инвалюты из международных резервов, чтобы нейтрализовать дефицит в общем платежном балансе и вместе с тем временно сохранить высокий курс армянского драма, экономически необоснованный и разрушительный для нашей экономики.

Чтобы приведенные доводы были более убедительными (скажем, что перечень проблем, препятствующих структурному развитию экономики и тормозящих общее развитие, можно было бы продолжить), поговорим о них поподробнее.

Так, о неконкурентоспособности экономики республики и об отсутствии благоприятного инвестиционного климата свидетельствуют следующие данные Национальной статистической службы. Если в 2003 г. удельный вес экспорта в ВВП составлял 25,28%, то в 2008 г. - 8,96% (в армянских драмах). Более того, если в 2003 г. объем импорта превосходил объем экспорта в 1,8 раза, то по итогам 2008 г. - более чем в 4,12 раза. Уже не говоря о том, что в январе 2009 г. соотношение импорта и экспорта составило 6,4 раза. Эти цифры говорят о том, что отечественная продукция заметно сдала свои позиции не только на внешнем, но и на армянском рынке - вследствие растущего давления импорта.

Далее. Отнюдь не желая принизить значение доводов и заключений соответствующих международных организаций об инвестиционной привлекательности Армении, скажу следующее. На что в первую очередь обратит внимание опытный инвестор? На то, какой удельный вес составляют прибыльность экономики и ее косвенные показатели в бюджете РА, в частности налог на прибыль и подоходный налог. Он не будет смотреть на разные рейтинговые данные. Итак, удельный вес прямых налогов (налог на прибыль и подоходный налог) в доходах госбюджета 2008 г. составил соответственно 14,4 и 9%. В то время как на НДС (косвенный налог) приходится более 53% налоговых доходов. Думаю, что говорить в этих условиях об инвестиционной привлекательности просто бессмысленно. Предприниматель, собирающийся инвестировать финансовые средства, будет интересоваться и налоговым законодательством, тем, насколько оно привлекательно. И здесь он вновь разочаруется. Так, в 2000-2008 гг. в исполнительное производство было принято 402221 дело против хозяйствующих субъектов по вопросу взимания налогов, из которых 55991 - только в 2008 г. И эти цифры были зарегистрированы в такой имеющей маленькую экономику стране, как Армения. Если к сказанному добавить и то, что в тот же период невосстановленная в бюджете вследствие невыполнения судебных решений сумма составила 296 млрд 742 млн 448 тысяч драмов, из которых 18 млрд 541 млн 607,8 драмов - в 2008 г., все станет ясно. Дабы приведенные цифры были более убедительными, скажем, что в 2000-2008 гг. удельный вес взысканной суммы составил всего 16% суммы, подлежащей взысканию. Такова статистика, характеризующая правовое положение наших хозяйствующих субъектов. Здесь нужно отметить и то, что крайне высокие (16-24%) процентные ставки кредитования, установленные коммерческими банками, также не говорят об инвестиционной привлекательности. Между тем в плане инвестиций привлекательна только банко-

вская система РА. В мире едва ли найдется другая страна, экономика которой имела бы крайне низкую степень прибыльности, а банковская система на протяжении многих лет была бы беспрецедентно прибыльной. Так, в 2008 г. в условиях мирового кризиса коммерческие банки получили 27,1 млрд чистой прибыли, превысившей показатель 2007 г. на 30,5%. Отметим, что валовой доход коммерческих банков в 2008 г. составил в общей сложности 171,1 млрд драмов. Возникает вполне резонный вопрос: как получается, что в переживающей кризис стране, экономика которой находится в упадке, банковская система процветает? Или же: за чей счет процветают 19 из 22 коммерческих банков Армении (только три банка в минувшем году были убыточными)?

Вне сомнений, наши коммерческие банки работают с такой прибылью за счет хозяйствующих субъектов, а по большому счету - за счет народа. Так, устанавливая высокие, экономически не обоснованные (при инфляции около 7 процентов и средней степени риска) процентные ставки, банки с самого начала обязывают местных производителей включать их в себестоимость производимого товара, а торговые организации - учитывать их при определении тарифа выставляемых на продажу товаров. А поскольку за любой товар платит рядовой покупатель, то именно на него и ложится основное бремя процентных ставок. Напомним также, что в 21-м из 22 наших коммерческих банков наличествует участие зарубежных пайщиков, при этом в 12 банках их доля выше 50%. Более того, в 9 коммерческих банках долевое участие иностранцев превышает 95%. Иначе говоря, в большей части наших банков более половины собственного капитала находится в распоряжении иностранных пайщиков. При этом они получают высокие дивиденды, не соответствующие их инвестициям (намного выше, чем они получают в своих странах), а кроме того, материальные средства, тяжелым трудом зарабатываемые нашими соотечественниками за рубежом и отправляемые в Армению в долларах, их родные и близкие вынуждены обменивать по низкому курсу на армянские драмы, что, естественно, отрицательно сказывается на их благосостоянии. Зато зарубежные акционеры армянских коммерческих банков покупают те же доллары за армянский драм, чей обменный курс, повторяю, искусственно завышен, и затем вывозят их за пределы республики в виде финансового капитала. А упомянутые мною банкиры, увы, ни с одной серьезной инвестиционной программой так и не выступили. Следует также отметить, что основная масса вывозимой из Армении валюты приходится на долю тех крупнейших предприятий, которые имеют зарубежных собственников, как, например, «Арменгел-Билайн», «Вивасел-МТС», Зангезурский медномолибденовый комбинат, «Айджур» и другие. Не забудем подчеркнуть, что отток из страны финансового капитала вносит дополнительное напряжение в платежный баланс, а это в свою очередь приводит к сокращению международных валютных резервов ЦБ или вынуждает влезать в новые долги, а порой эти меры применяются одновременно.

Несколько замечаний о положении дел в сфере внешней торговли. Кредитно-денежная политика последних лет, в основу которой были положены завышение курса национальной валюты посредством беспрецедентного сокращения денежной массы, высокие процентные ставки кредитования, привели к тяжелым последствиям как в промышленности, так и в сельском хозяйстве. Уже и в нашей стране, как об этом говорилось выше, сложилась такая ситуация, что местная продукция стала неконкурентоспособной как на внутреннем, так и на внешнем рынках. Из года в год увеличивались объемы импорта, что только усилило зависимость Армении от внешнего мира. Достаточно сказать, что более 40% товаров первой необходимости завозится из-за рубежа. Особо подчеркнем, что только для импортирования 17 видов товаров широкого потребления в прошлом году было затрачено 1 313 827 000 долларов. Совершенно очевидно, что государство поставило себя вне международной торговой сферы и отдало ее на откуп капризам импортеров, более того, своей инертной позицией оно содействовало рождению новой прослойки. В дело были пущены насколько примитивные, настолько и циничные операции, поскольку в условиях искусственно поддерживаемого высокого курса драма создалась забавная ситуация. Если понижение курса доллара США по отношению к евро, британскому фунту стерлингов, швейцарскому франку отмечалось в мире вполне определенным обменным курсом, то у нас курс доллара был как минимум на 10-12 процентных пунктов ниже. В результате наши крупные импортеры, обменивая драмы на доллары, с самого начала имели гарантированную прибыль в 10-12 процентов. Однако это никак не отражалось на оптовых и розничных ценах товаров, завозимых в республику на относительно дешево купленные доллары. Причина, помимо алчности импортеров, одна: монополизация внешней торговли и как следствие - отсутствие конкуренции и свободного ценообразования. Получается так, что в условиях значительного падения на мировом продовольственном рынке цен на зерно, рис, сахарный песок (уже не говорю о почти в три раза подешевевшей нефти) наш рынок или вообще не реагировал на эти тенденции, или - в лучшем случае - подавал очень слабые, едва уловимые признаки жизни. И наоборот, когда на международных биржах всего лишь заявлялось о повышении цен, армянский рынок откликался моментально, взвинчивая цены до более высокого уровня, чем предусматривалось. В дальнейшем события развивались по известному сценарию: строгие предупреждения со стороны Комиссии по защите экономической конкуренции, наказание нескольких недостаточно защищенных стрелочников - и все. Словом, борьба шла не против причин «болезни» - ликвидации монополий в сфере внешней торговли, - а против следствий, против тех, кто торговал в розницу. О внутренних причинах отечественного экономического кризиса можно говорить и на других примерах, однако, ограничимся этим.

Обратимся к негативному воздействию на нас глобального финансово-экономического кризиса. Как говорилось выше, в результате мирового кризиса значи-

тельно снизились объемы помощи, присылаемой нашими соотечественниками из-за рубежа, своим родным и близким в Армению. За два месяца текущего года трансферты, полученные посредством только банковской системы, сократились на 20-25%, а между тем всем нам хорошо известно, что через банковскую систему в лучшем случае проходит лишь 65-70% трансфертов. К этим цифрам приводит нас анализ слагаемых общего платежного баланса за 2008-й и предыдущие годы.

Безусловно, к последствиям мирового кризиса следует причислить и тенденцию сокращения объема прямых инвестиций в нашу экономику. Взять хотя бы отсрочку запланированных инвестиционных расходов в Алавердском металлургическом комплексе, отказ от вложения средств в Зангезурский медномолибденовый комбинат со стороны его зарубежного владельца, в результате чего эту заботу пришлось взять на себя нашему правительству, учитывая огромное значение комбината как системообразующего и градообразующего предприятия, как для города Каджарана, так и области Сюник (здесь нелишне вспомнить, что до приватизации этот комбинат обеспечивал в год 120-130 млн долларов прибыли, и если цены на молибден на мировом рынке снизились втрое, пусть бы прибыльность комбината сократилась вчетверо - до 30 млн долларов в год. Между тем наше государство, оказавшееся в глубоком кризисе, вынуждено из своих весьма ограниченных средств выделить комбинату 10 млн долларов). Уменьшение объемов прямых инвестиций вкупе с сокращением трансфертных поступлений вызвало серьезное напряжение платежного баланса страны, усугубило положение и привело к отрицательному сальдо торгового баланса в размере 185,9 млн долларов только за январь 2009 г.

Подводя итог сказанному, можно констатировать, что основными негативными факторами глобального финансово-экономического кризиса для РА стали ощутимое сокращение объема трансфертов, резкое падение на мировом рынке цен, в частности, на медь, молибден, вызванное понижением спроса на них, что нанесло чувствительный удар по нашему экспорту, увеличивая отрицательное сальдо внешнеторгового баланса. Негативное воздействие оказало сокращение объемов прямых и общих инвестиций, а также средств, обеспечиваемых иностранным туризмом и другими международными услугами. Все это привело к образованию дефицита платежного баланса, что, как отмечено выше, возможно восполнить тремя известными на сегодня путями. Дефицит платежного баланса должен быть устранен за счет международных резервов ЦБ или займов, предоставляемых всемирными финансово-экономическими структурами, или при использовании обеих этих возможностей одновременно. Таковы отрицательные последствия мирового финансово-экономического кризиса на Армению.

В свете вышеизложенного анализа по крайней мере звучат странно заявления премьер-министра и председателя ЦБ о том, что регулирование курса драма было продуманной и дальновидной политикой. Помните, они говорили, что все под контролем, и высказывали другие, мягко говоря, неадекватные создавшейся ситуации

мысли. Мало-мальски экономически грамотные люди изначально понимали, каковы отдельные, неизбежные проявления мирового кризиса и как их можно предотвратить. Думаю, понимали это и в правительстве и в руководстве ЦБ, иначе не отправляли бы делегации в Москву, Пекин, Вашингтон и еще куда-то, дабы во что бы то ни стало преодолеть создавшуюся тревожную ситуацию, являющуюся, впрочем, следствием собственных ошибок, прежде всего неверной кредитно-денежной и налогово-бюджетной политики.

С учетом всего сказанного особо важное значение приобретает вопрос утраты доверия народа к правительству и финансовым структурам, водораздела между декларированными целями и осуществляемыми на деле операциями. Поясню, о каких явлениях идет речь.

После известного решения ЦБ о возвращении к политике плавающего курса национльной валюты- драма, председатель банка заявил, что наши международные валютные резервы составляют свыше 1 млрд 200 млн долларов. Между тем с 8 января по 2 марта этого года во время торгов на бирже «НАСДАК-ОЭМЭКС Армения» было продано 466 млн 425 тысяч долларов (по цене 305 драмов за один доллар). Причем продавались средства из международных резервов ЦБ, вследствие чего, по данным на 31 декабря 2008 г., они сократились с 1 млрд 401,2 млн до 935 млн 775 тысяч долларов. Отметим также, что в период с 5 ноября до 30 декабря прошлого года на этой же бирже было продано 292 млн 949 тысяч долларов, значительная часть которых опять-таки приходится на долю международных резервов (скажем, что в 2008 г. международные резервы РА сократились на 254 млн 200 тысяч долларов, с 1 млрд 659 млн 200 тысяч - по данным на 31 декабря 2007 г. - достигнув 1 млрд 405 млн долларов к концу 2008 г.). В подобных условиях вызывает удивление, что 4 марта в беседе с журналистами премьер-министр представил как достижение тот факт, что до 3 марта (когда драм обесценился почти на 22%) коммерческим банкам удалось увеличить свои ликвидные средства (собственный капитал банков) в инвалюте примерно на 120 млн долларов, доведя их до 700 млн долларов. Ну как, скажите, можно не испытывать серьезного беспокойства, когда премьер-министр положительно оценивает тот факт, что в условиях глубокого финансово-экономического кризиса правительство, понимая, что через несколько дней армянский драм девальвируется, продает коммерческим банкам 120 млн долларов из международных резервов ЦБ, причем по фиксированным ценам, на 22% ниже рыночных, а потом гордится этим? Иначе говоря, вследствие политики правительства и ЦБ коммерческие банки могут получить сегодня сверхприбыль, если выставят на продажу эти 120 млн долларов, купленных по цене 305 драмов за доллар, но уже по другой цене - в среднем 370 драмов за доллар. Это принесет им прибыль в размере 8 млрд драмов. Выше мы уже отметили, что в 2008 году коммерческие банки получили 27 млрд 100 млн драмов чистой прибыли. Так что же им мешало выделить из этой суммы чистой прибыли дополнительно 8 млрд драмов на покупку столь необходимых

120 млн долларов выплатив за 1 доллар - 372 драмов после возвращения ЦБ к политике плавающего обменного курса национальной валюты? Пусть бы потерпели и смирились с мыслью, что эти дополнительно выплаченные 8 млрд драмов ведь не станут тяжким бременем в общей прибыли в 27 млрд 100 млн драмов. Пусть бы в условиях девальвации драма коммерческие банки, как они заявили, - вследствие перерасчета ранее выданных долларовых кредитов в условиях обменного курса 305 драмов за один доллар – затем при девальвации драма понесли бы потери в 4,5 млрд драмов. Ведь при 30,5-процентном росте чистой прибыли, отмеченной в минувшем году, этот ущерб не отразился бы на наших коммерческих банках столь же болезненно, как на социально необеспеченных слоях населения, которое после 2 марта вынуждено было тратить на товары первой необходимости на 10-15% больше, чем раньше. Как назвать эту политику, если не сказать - сделку, пусть решают читатели. Естественно, все бремя дополнительной прибыли в 8 млрд драмов, полученной коммерческими банками, опять же ляжет на плечи нашего народа. Ведь как известно, если кто-то выигрывает, то остальные, как правило, проигрывают. В нашем случае проигрывает народ, вынужденный покупать товары первой необходимости, значительная часть которых будет завозиться в Армению по более высокому курсу доллара или евро и продаваться по более дорогой цене.

Думаю, приведенного фактического материала вполне достаточно, чтобы сделать следующий вывод: осуществляемая в нашей стране экономическая и кредитно-денежная политика приводит к обогащению ограниченного круга людей за счет обнищания широких масс народа. Эта политика не только не способствует развитию малого и среднего бизнеса, но и тормозит его. Если это будет продолжаться и дальше, наша страна окажется перед трудно преодолимыми проблемами, да и то в лучшем случае. А крайне напряженная внутриполитическая ситуация и наличие Арцахской проблемы требуют безотлагательного принятия практических мер по исправлению положения. Промедление для армянской государственности смерти подобно. И это не преувеличение.

Данный критический анализ имеет целью подтвердить факт востребованности простой и известной истины. Лучше жить по принципу «кто предупрежден, тот вооружен», чем стать жертвой синдрома Сидония Аполлинария, галло-римского писателя, епископа Арверны - не замечать висящей над твоей головой опасности, когда ее уже видят многие.

“Свободомыслие”, 24-25. III. 2009.

ԴԱՍԵՐ G-20-Ի ԼՈՆԴՈՆՅԱՆ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻՑ

Հոդվածով հանդես գալ ինձ դրդեցին մամուլում տեղ գտած այն բազում հրապարակումները, զանազան հեռուստաբանավեճերը, «կլոր սեղանները», որտեղ, ցավոք, հիմնականում տրվում էին մակերեսային, հաճախ էլ սխալ գնահատականներ Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամին՝ հասարակության մեջ ձևավորելով թյուր, իրականության հետ կապ չունեցող եզրահանգումներ: Ակամայից դրանք հիշեցնում են անեկդոտ դարձած հայտնի երկխոսությունը. «Խանութի դռանը բազմամարդ հերթին շնչակտուր մոտենում է մի տղամարդ և վերջում կանգնածին դիմում հարցով. «Ինչի՞ համար է հերթը»: «Սարտրի համար», – պատասխանում են նրան: Տղամարդը խնդրում է պարզաբանեն՝ արդյո՞ք Սարտրը Կրեմպլինից ավելի պինդ է: Ինչին ստանում է հերթի կանգնածի համոզիչ պատասխանը. «Չգիտեմ, չեմ խմել ոչ մեկը, ոչ էլ մյուսը»:

Եվ, այսպես, ապրիլի 2-ին Լոնդոնում հավաքվել էին աշխարհի հզորագույն էկոնոմիկա ունեցող 21 երկրների ղեկավարներ, նաև Չեխիայի, որի «պաշտոնաթող» վարչապետ Տոպոլանեկը գագաթաժողովին մասնակցում էր որպես Եվրամիությունում նախագահող երկրի ղեկավար, ինչպես և միջազգային ֆինանսական ու տնտեսական 8 խոշոր կազմակերպությունների ղեկավարները: Ուշագրավ էր և այն, որ Լոնդոն էր ժամանել նաև Իսպանիայի վարչապետ Սապատերոն: Հիշենք՝ 2008 թ. նոյեմբերին Վաշինգտոնում կայացած G-20 գագաթաժողովին Իսպանիայի վարչապետին Զորջ Բուշը հրավեր չէր ուղարկել, չներելով նրան, որ Սապատերոն, պաշտոնին անցնելուն պես, Իրաքից հետ կանչեց իսպանական ռազմական բոլոր ուժերը:

Լոնդոնյան գագաթաժողովի ընդունած բանաձևի նշանակությունը, դրա հնարավոր ազդեցությունը համաշխարհային ֆինանսների և էկոնոմիկայի վրա համակողմանի գնահատելու համար անհրաժեշտ է համառոտ վերլուծել այդ իրադարձությանը նախորդած գործառույթները:

Աշխարհը ճարակած ֆինանսատնտեսական ճգնաժամի խորությունը պատկերացնելու համար նշենք, որ 1929 թ. սկիզբ առած Ամերիկյան Մեծ դեպրեսիայի ժամանակ ֆոնդային բորսաներում շրջանառվող ակցիաների գնանշումների (կոտիրովկաների) ծավալը գերազանցում էր ԱՄՆ-ի համախառն ներքին արդյունքն ընդամենը 20%-ով:

Համեմատության համար հիշեցնեմ, որ ներկայիս գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի մեկնարկին ֆոնդային գնանշումները գնահատվում էին 1600 տրլն դոլար կամ ԱՄՆ համախառն ներքին արդյունքը (որը 2008 թ. կազմել էր շուրջ 15 տրլն դոլար) գերազանցում էին ավելի քան 106,6 անգամ, համաշխարհային ՀՆԱ-ին էլ ավելի քան 26 անգամ: Ուրեմն՝ 1929 թվա-

կանին ֆոնդային բորսաներում ներկայացված կապիտալը կազմել էր Միացյալ Նահանգների ՀՆԱ-ի 120%-ը, իսկ 2008 թ. ավելի քան 10660%-ը, համաշխարհային ՀՆԱ-ի էլ ավելի քան 2660%-ը:

Այս աննախադեպ բարձր տոկոսները փաստում են այն իրողությունը, որ ֆոնդային բորսաներում հայտագրված ակցիաների հիմքում բացակայում է նյութականացված համարժեք կապիտալը: Ինչպես պատկերավոր արտահայտվել էր ճանաչված փորձագետներից մեկը, համաշխարհային 60 տրլն ՀՆԱ-ի վրա կառուցվել էր 1600 տրլն դոլարանոց «Բաբելոնյան աշտարակ»՝ հիմնված ֆինանսական շուկաների ածանցյալ գործիքների (ֆյուչերսներ, ֆորվարդներ, օպցիոններ, սվոպեր), այսպես կոչված, դերիվատիվների վրա: Բնական է, որ նյութական հիմքեր չունեցող ֆինանսական այդ պղպջակները վաղ թե ուշ պետք է պայթեին: Ինչն էլ տեղի ունեցավ, և վառոդի դեր կատարեցին ամերիկյան հիպոթեկային հայտնի բանկերը՝ “Freddie Mac”-ը և “Fannie Mae”-ը, որոնք պայթեցին դեռ 2007 թ. ամռանը: Դրանից հետո բանկերի սնանկացման գործընթացն օրըստօրե ահագնացավ և, թերևս, հասավ իր գագաթնակետին, երբ սնանկ ճանաչվեց Wall Street-ի ամերիկյան ֆինանսական կայսրության այնպիսի հսկան, ինչպիսին է “Lehman Brothers”-ը:

Գլոբալացված աշխարհի բոլոր մայրցամաքներում սկիզբ առան և բուռն զարգացում ունեցան ֆինանսական ու տնտեսական ճգնաժամին ներհատուկ գործընթացներ: Այստեղ ուշագրավ է, որ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման վերջերս ունեցած իր ելույթներում հրապարակավ ընդունել է, որ գլոբալ ֆինանսական ճգնաժամի հիմնական պատճառներից է վերջին տարիներին Wall Street-ում փչված ֆինանսական պղպջակների գերիշխանությունը համաշխարհային ֆինանսական շուկայում:

Այստեղ, կարծում եմ, ավելորդ չէր լինի շեշտել, որ ֆինանսական նման պղպջակների առկայության համար պարարտ հող ստեղծվեց 20-րդ դարի 70-80-ական թվականներին: Մասնավորապես, 1971թ. ԱՄՆ-ը (երբ ԱՄՆ-ի նախագահն էր Ռիչարդ Նիքսոնը) միակողմանի հայտարարեց, որ հրաժարվում է 1944 թ. Նյու Հեմփշիր նահանգի Բրետտոն Վուդս քաղաքում ընդունված պայմանավորվածություններից: Դրանց համաձայն՝ ԱՄՆ-ի դոլարը ճանաչվել էր միջազգային պահուստային արժույթ, որը երաշխավորում էր ապահովել դոլարի փոխարինելիություն ոսկով՝ սահմանելով 35 դոլար ոսկու 1 ունցիայի դիմաց: 1971 թ. ընդունված այդ որոշումը 5 տարի անց 1976 թ. վավերացվեց Յամայկայում կայացած լիազոր միջազգային համաժողովի կողմից:

Ազատվելով դոլարը ոսկով երաշխավորված փոխարինելի լինելու պարտավորությունից՝ ԱՄՆ Դաշնային Պահուստային Համակարգը (ԴՊՀ) (Федеральная Резервная Система) որդեգրեց ֆինանսական այնպիսի քաղաքականություն, որ տպավորություն էր ստեղծվում, թե հետին պլան են մղվել ԱՄՆ դոլարը որպես համաշխարհային պահուստային արժույթ լինելու փաստից բխող պարտավորությունները: Սակայն դա ամենևին չէր խանգարում ամերիկացիներին լիարժեքորեն օգտագործել դոլարի այդ կարգավիճակից բխող առավելությունները:

Այսպես, 1981թ. սկսած, երբ նախագահի պաշտոնը ստանձնեց Հանրապետական կուսակցության առաջնորդ Ռոնալդ Ռեյգանը, ԴՊՀ-ը գործի դրեց

«փող տպող» հաստոցը: Մինչեւ 2008 թ. ներառյալ ԱՄՆ-ի բյուջեն փակվում էր շատ մեծ պակասուրդով՝ բյուջեի ծախսային մասը զգալիորեն գերազանցում էր բյուջեի եկամտային մասին: ԱՄՆ բյուջեն, թերևս, պրոֆիցիտային էր միայն Բիլ Քլինթոնի նախագահության վերջին շրջանում՝ 1998-2000 թթ., իսկ 2001 թ., երբ նախագահի պաշտոնը ստանձնեց Ջորջ Բուշ Կրտսերը և մինչև նրա պաշտոնավարման ավարտը, ԱՄՆ-ի բյուջեն կազմվել է մեծ պակասուրդով:

Այլ կերպ ասած՝ սկսած 1981 թվականից ամերիկացիները ծախսում էին շատ ավելի, քան ստեղծում: Ըստ էության, նրանք ապրում էին պարտքով, այն բանի շնորհիվ, որ բյուջեի պակասուրդի ծածկման յուրահատուկ ձև էին գտել, այսպես կոչված, ամերիկյան տրեժերիսների միջոցով: Տրեժերիս ասածը ամերիկյան կառավարության թողարկած գանձապետական երկարաժամկետ և կարճաժամկետ պարտատոմսեր են (Treasury bonds and notes): Դրանք էլ վաճառքի հանելով՝ նրանք հաստատեցին համայն աշխարհում յուրահատուկ, իր նմանը չունեցող մի կարգավիճակ: Այդ կարգավիճակի եզակիությունն այն է, որ աշխարհի թիվ 1 էկոնոմիկա ունեցող երկիրը, որի տարեկան համախառն ներքին արդյունքը կազմում է համաշխարհային ՀՆԱ-ի 25%-ը, տարիներ շարունակ հնարավորություն էր ստացել սպառել համաշխարհային ՀՆԱ-ի շուրջ 40%-ը:

Սեփական ՀՆԱ-ն գերազանցող ավելցուկ սպառման ծախսերը, ըստ էության, կատարում էին ԱՄՆ գանձապետական պարտատոմսեր ձեռք բերած երկրները, որոնք, փաստորեն, հայտնվեցին ԱՄՆ-ին վարկավորողների դերում: Դրանց շարքում են, առավելապես, Չինաստանը, որը, ի դեպ, միայն 2008 թ. իր ներդրումներն ամերիկյան գանձապետական պարտատոմսերի՝ տրեժերիսների մեջ ավելացրեց 46%-ով, տնօրինած տրեժերիսների արժեքը հասցնելով 740 մլրդ դոլարի, որը կազմում է դրանց ընդհանուր արժեքի 22%-ը: Երկրորդ երկիրը (այդ ցուցանիշով) Ճապոնիան է, որտեղ բաշխված է ԱՄՆ տրեժերիսների 20%-ը, երրորդը՝ Պարսից ծոցի երկրներն են, որոնք իրենց բազմամիլիարդ նավթադոլարները գերադասում են պահել ամերիկյան կառավարության պարտատոմսերում՝ տրեժերիսներում, նրանց բաժին է ընկնում բաշխված տրեժերիսների 10%-ը:

Հարկ է նաև նշել, որ Ռուսաստանի Դաշնությունը վերջերս նույնպես 150 մլրդ դոլարից ավելի տեղադրեց ԱՄՆ գանձապետական այդ պարտատոմսերում՝ ճիշտ այդ նույն տրեժերիսները ձեռքբերելով: Ասեմ, որ Չինաստանի և Ռուսաստանի օրինակներն ամենևին էլ պատահական չեմ բերում: Միաժամանակ, ընթերցողի մոտ թող հանկարծ թյուր կարծիք չստեղծվի, թե ճգնաժամի պատճառները հիմնականում պայմանավորված էին համաշխարհային ֆինանսական շուկայում հիշատակածս տրեժերիսների շրջանառությամբ: Դրանք պարզապես ֆինանսական այն գործիքներն են, որոնք կիրառելով Միացյալ Նահանգների կառավարությունը ֆինանսավորում է երկրի բյուջեի պակասուրդը:

Համաշխարհային ֆինանսական շուկաներում լուրջ լարվածություն առաջացավ, երբ ֆոնդային բորսաներում ներկայացված ընկերությունների

թողարկած ակցիաներից զատ, հատկապես վերջին տասնամյակում սկսեցին մեծապես շրջանառվել, կրկնեմ, ածանցյալ ֆինանսական գործիքները, դերիվատիվները, որոնք, իբր, կոչված էին ապահովագրել բորսայում իրականացվող գործարքների ռիսկերը: Իրականում, ինչպես ցույց տվեցին անցած 1-2 տարիների զարգացումները, դրանք հիմնականում ոչ այլ ինչ էին, քան լրացուցիչ, սպեկուլյատիվ շահույթներ կորզելու միջոցներ:

Այստեղ ուշագրավն այն է, որ դերիվատիվները նյութական ու առաջնային բուն ֆինանսական ակտիվների առքուվաճառքի հետ ուղղակի և ոչ մի կապ չունեն: Եվ, ինչպես արդեն ասվեց, դրանք ավելի քան 10660 տոկոսով գերազանցում էին ԱՄՆ-ի ՀՆԱ-ն: Այստեղ, թերևս, ավելորդ չեմ համարում մեկ տվյալ էլ ներկայացնել: Այսօր համաշխարհային բանկային համակարգի հետ հանգուցված պարտքերը կազմում են շուրջ 90 տրլն դոլար, դա էլ այն դեպքում, երբ դրանց հիմնական կապիտալը չի գերազանցում 4 տրլն դոլարը: Ահա սրանք էին ամերիկյան ծագում ունեցող գլոբալ ֆինանսական ճգնաժամի հիմնական պատճառները:

Դրանց գումարվեցին նաև Եվրամիության երկրների ֆոնդային բորսաներում առկա գրեթե նույնաբովանդակ, սակայն ավելի փոքր ծավալներ ունեցող, անհամաչափությունները ևս: Եվրոպական ֆոնդային բորսաներում ներգրավված ֆինանսական գործիքների գնանշումները գերազանցում էին Եվրամիության անդամ երկրների սեփական կապիտալը ոչ ավելի, քան 40-ից 60%-ով: Ուստիև ֆինանսական գլոբալ ճգնաժամի հետևանքները այդ աստիճանի ցավագին չեղան եվրոպական երկրների համար: Ահա այս իրողությունների խորապատկերի վրա, համաշխարհային տնտեսության շոշափելի անկման պայմաններում էլ ապրիլի 2-ին Լոնդոնում գումարվեց G-20 գագաթաժողովը:

Անհրաժեշտ է հատուկ նշել, որ այս գագաթաժողովի գումարմանը աշխարհի հզորները մոտեցել էին ամենայն պատասխանատվությամբ, նախօրոք արտահայտելով իրենց երկրների սկզբունքային մոտեցումները ճգնաժամի պատճառների վերաբերյալ, կատարել ճգնաժամի հաղթահարմանն ուղղված առարկայական առաջարկություններ:

Փոքր-ինչ մանրամասնենք դրանք: Այսպես, Ռուսաստանի Դաշնությունը Լոնդոնի G-20 գագաթաժողովից երկու շաբաթ առաջ հանդես եկավ Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը հաղթահարելու իր առաջարկություններով: Հատկանշականն այն է, որ այդ փաստաթղթում ուղղակիորեն ասվում է, որ ընթացող գլոբալ տնտեսական ճգնաժամը ձևավորված ֆինանսական համակարգի փլուզման արդյունք է: Ռուսաստանի պաշտոնական տեսակետի համաձայն՝ դա էլ իր հերթին ֆինանսական շուկաների ցածրորակ կարգավորման հետևանք է, որի պատճառով հսկայական ռիսկեր դուրս էին մնացել անհրաժեշտ վերահսկողությունից:

Այդ փաստաթղթում պաշտոնական Մոսկվան մատնանշում է, որ ֆինանսական կարգավորման հարցերով զբաղվող համաշխարհային ինստիտուտները վերջին տարիներին տեղի ունեցող գործընթացներին համարժեք քայլերով չեն հակազդել՝ հոգալու համար ժամանակակից բազմաբևեռ աշխար-

հի կարիքները: Դրա հետևանքով աշխարհը դեմ առավ, բախվեց տնտեսական լուրջ ցնցումների, որոնք տանում են աճող գլոբալ սոցիալական անկայունության:

Եվ տրամաբանական էր, որ Ռուսաստանի առաջարկների առանցքն էին կազմում՝ մակրոտնտեսական և բյուջետային կարգավորման, ճգնաժամի ժամանակաշրջանում ներքին պահանջարկի խթանմանը, միջազգային պահուստային արժույթների, վերազգային բնույթի կարգավորման գործիքների ազգային բնույթ ունեցող կարգավորիչ գործիքների հակասությունների հարթեցմանն ուղղված առաջարկությունները: Ինչպես նաև՝ միջազգային ֆինանսաարժութային համակարգի ռեֆորմը, միջազգային ֆինանսական ինստիտուտների (կառույցների) բարեփոխումները և այլն:

Իսկ ինչպիսի՞ քաղաքականություն էր որդեգրել Եվրոպան:

Հետաքրքիր է, որ Եվրամիության անդամ երկրների ղեկավարները, չհաշված նրանց երկկողմանի պարբերական շփումները, նեղ կազմով՝ արևմտաեվրոպական, այսպես կոչված, «հին» Եվրոպայի լիդերները մարտի 1-ին հավաքվել էին Բրյուսելում որոշելու Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հաղթահարմանն ուղղված իրենց մարտավարությունը թե՛ ԵՄ ներսում, թե՛ արտաքին աշխարհում:

Այստեղ ավելորդ չէ նշել, որ այդ հանդիպման ժամանակ «հին» Եվրոպայի ղեկավարները մերժեցին արևելաեվրոպական երկրներին հատկացնել 190 մլրդ եվրո օգնություն, մինչդեռ վերջիններս ակնկալում էին ստանալ 300 մլրդ եվրոյի չափով ֆինանսական աջակցություն: Ստեղծված իրավիճակը ամբողջությամբ ներկայացնելու համար ասենք, որ արևելաեվրոպական երկրները պարտք են իրենց արևմտյան հարևաններին ավելի քան 1,25 տրլն դոլար: Խորհրդանշական է նաև այն, որ Մեծ Բրիտանիայի վարչապետ Գորդոն Բրաունը այդ ժամանակ խորհուրդ է տվել Եվրամիության նոր անդամ երկրներին ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով դիմել Արժույթի Միջազգային Հիմնադրամին, այլ կերպ ասած՝ ԱՄՆ-ին, քանի որ ԱՄՀ-ում որոշիչ է վերջինիս խոսքը: Միացյալ Նահանգները, տնօրինելով ձայների ընդամենը 17%-ը, ունի ցանկացած որոշման վրա վետո դնելու արտոնություն:

Պարզաբանման համար հիշատակեմ՝ համաձայն Բրետտոն Վուդսի համաձայնագրի, յուրաքանչյուր որոշում ընդունելու համար ձայների 50%-ից ավելի ունեն ԱՄՆ-ն, Եվրամիությունը և Ճապոնիան միասին: Ի դեպ, նշենք, որ Հունգարիան և Լատվիան ԱՄՀ-ից արդեն իսկ ստացել էին համապատասխանաբար 14,5 և 1,5 մլրդ դոլարի օգնություն:

Բրյուսելյան հանդիպմանը հաջորդեց մարտի 21-22-ին Բեռլինում կայացած Եվրամիության անդամ բոլոր երկրների առաջնորդների մասնակցությամբ լիագումար գագաթաժողովը: Ֆրանսիայի նախագահ Նիկոլյա Սարկոզին, ասես թե, ընդհանրացրեց եվրոպացիների կարծիքը՝ հայտարարելով. «Անհրաժեշտ է վերստին կառուցել կապիտալիզմը զրոյից, դարձնելով այն ավելի բարոյական»:

Կարծում եմ, հասկանալի է, թե ինչ նկատի ուներ Ֆրանսիայի նախագահը: Թե՛ Ֆրանսիան, թե՛ Դաշնային Գերմանիան քանիցս հայտնել են իրենց

դժգոհությունն ամերիկյան ֆինանսական իշխանություններից: Վերջիններս, օգտվելով այն հանգամանքից, որ ամերիկյան դոլարը լինելով ազգային արժույթ, միաժամանակ նաև համաշխարհային պահուստային արժույթ է, արդեն տևական ժամանակ է, ինչ այդ հանգամանքը ծառայեցնում են ԱՄՆ-ի ֆինանսատնտեսական համակարգի խոցելի կողմերը չեզոքացնելու համար: Ամերիկյան էկոնոմիկան շահեկան դիրքերում պահելու համար պահանջվող հարյուրավոր միլիարդների հասնող ծախսերը (շնորհիվ դոլարի յուրահատուկ կարգավիճակի) ամերիկացիները բարդում էին համայն աշխարհի պետությունների վրա: Դա հնարավորություն էր ընձեռում ամերիկացիների համար ստեղծել մրցակցային ավելի բարենպաստ պայմաններ այլ պետությունների, հատկապես Եվրամիության անդամ երկրների նկատմամբ:

Հիշենք, որ վերջին տարիների ընթացքում արևմտաեվրոպացիները գերադասում էին ապրանքավորվել, գնումներ կատարել ԱՄՆ-ում՝ այնտեղի գների շոշափելիորեն ավելի էժան լինելու պատճառով: Անգամ իսկ Եվրոպա-ԱՄՆ - Եվրոպա ճանապարհածախսը հաշվի առնելով էլ ԱՄՆ-ում գնումներ կատարելը ձեռնտու էր եվրոպացիներին: Կրկնեմ, որ ԱՄՆ-ն արտադրելով համաշխարհային ՀՆԱ-ի 25%-ը իր երկրի ներսում սպառում էր դրա 40%-ի չափով: Այնպես որ, ամենևին էլ պատահական չէր, որ թե՛ Լոնդոնի G-20-ի նախօրեին և թե՛ բուն գագաթաժողովի ժամանակ առավել կոշտ դիրքորոշումներով հանդես էին գալիս Եվրամիության էկոնոմիկայի առաջատար երկրների ղեկավարները, այն է՝ Դաշնային Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը և Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին:

Ավելին, Ֆրանսիայի և Գերմանիայի առաջնորդները սեփական դիրքորոշումները առավել հստակ ներկայացնելու նպատակով ապրիլի 1-ին Լոնդոնում անցկացրեցին համատեղ ասուլիս, որտեղ հայտարարվեց. «Ֆրանսիան ու Գերմանիան գագաթաժողովին խոսելու են միասնական ձայնով»: Մասնավորապես, Ա. Մերկելը շեշտել է, որ գագաթաժողովը պարտավոր է որոշել համաշխարհային ֆինանսական շուկայի նոր ճարտարապետության շրջանակները: Միաժամանակ կարևորել է ֆինանսական կառույցների գործունեության վերանայման անհրաժեշտությունը՝ խնդիր ունենալով ուժեղացնել դրանց աշխատանքի նկատմամբ վերահսկողությունը: Մերկելը անհրաժեշտ է համարել նաև հստակեցնել ու կոշտացնել խեդժ-ֆոնդերի (ինվեստիցիոն կազմակերպություններ, որոնք զբաղվում են ֆիրմաների արժեթղթերի առքուվաճառքով) գործունեության կանոնները, ինչպեսև ապահովել դրանց աշխատանքի թափանցիկությունը, լուծումներ տալ օֆշորային գոտիներում, այսպես կոչված, հարկային օազիսներում գործող ֆինանսական կենտրոնների նկատմամբ աշխատունակ ֆինանսական վերահսկողության համակարգի ստեղծմանն ուղղված խնդիրներին:

Անգելա Մերկելն իր վրա է վերցրել պատասխանատվություն՝ քննադատել պաշտոնական Վաշինգտոնին, ասելով, որ ամերիկյան իշխանություններն անգամ իսկ փորձ էլ չեն անում վերջ դնել միակողմանի իրականացվող հովանավորչությանը, վերանայել ֆինանսական ինստիտուտների գործունեությունը, և, ընդհանրապես, անհրաժեշտ է համարել փոխել այն միտվածությունը,

երբ կողմերը չեն զբաղվում վերը հիշատակված խնդիրներով՝ գտնել ճգնաժամի գլխավոր պրոբլեմները, դեռ ավելին՝ չեն էլ կատարում նախկինում ստանձնած պարտավորությունները:

Ամփոփելով վերն ասվածը՝ արձանագրենք. Լոնդոնի գագաթաժողովում Ֆրանսիայի և Գերմանիայի լիդերները կատարեցին իրենց խոստումը՝ հանդես էին գալիս միասնական դիրքերից: Հասկանալի է, որ նման դիրքորոշումը բխում է ԵՄ քաղաքական և ռազմավարական շահերից՝ հնարավորինս վերահսկելի դարձնել ԱՄՆ-ի տնտեսական հզորության հնարավոր բացասական ազդեցությունը իրենց երկրների վրա, միաժամանակ չհայտնվել «ամերիկյան մուրճի և չինական մանգաղի արանքում»:

Անշուշտ, Լոնդոնի G-20 գագաթաժողովում շատ կարևոր էր նաև Չինաստանի դիրքորոշումը: Այսպես, դեռ մարտի 21-ին Չինաստանի Կենտրոնական բանկի նախագահ Չժոու Սյաոչուանի «Համաշխարհային արտարժութային համակարգի ռեֆորմը» վերտառությամբ մեկուկես էջանոց հրապարակումը, ըստ էության, «նոր էպոխայի սկզբի» հռչակագիր էր: Այդ փաստաթղթի հիմնական առանցքն այն էր, որ երկարաժամկետ հեռանկարում անհրաժեշտ է դոլարը որպես համաշխարհային պահուստային արժույթ փոխարինել պահուստային այլ արժույթով, որը կիրառվում է Արժույթի Միջազգային Հիմնադրամի շրջանակում:

Համաշխարհային պահուստային նոր արժույթին անցնելու մասին մարտի 21-ի Չինաստանի առաջարկությունը հաջորդ իսկ օրը պաշտպանություն էր գտել Ռուսաստանի կողմից: ԱՄՆ-ում արձագանքը միարժեք չեղավ: Նախագահ Բարաք Օբաման, Դաշնային պահուստային համակարգի ղեկավար Բեն Բերնանկեն և ֆինանսների նախարար Թիմոթի Գայթները մերժեցին Չինաստանի այդ գաղափարը ու վերահաստատեցին, որ դոլարը նախկինի պես ամուր է: Սակայն այդ հայտարարություններն արվեցին այն բանից հետո, երբ Թ. Գայթներն արդեն իսկ հայտարարել էր, որ նա «միանգամայն բաց է» Չժոու Սյաոչուանի առաջարկությունները քննարկելու համար:

Ինչո՞ւ է անհրաժեշտ հատկապես կարևորել Չինաստանի հիշատակածս առաջարկությունը. նախ, այս երկիրը ԱՄՆ-ի ամենախոշոր առևտրային գործընկերն է և, երկրորդ, Չինաստանը, ունենալով շուրջ 2 տրլն դոլարին համարժեք միջազգային պահուստներ, դրանց երկու երրորդը (տարբեր գնահատականներով 1,2-1,7 տրլն դոլար) պահում է դոլարներով կամ դոլարով արտահայտված ամերիկյան գանձապետական արժեթղթերի տեսքով:

Եվ, վերջապես, դիտարկենք, թե լոնդոնյան գագաթաժողովի նախօրեին և հենց G-20-ի ընթացքում ինչպիսի՞ն էր ԱՄՆ-ի դիրքորոշումը, որո՞նք էին նրանց առաջարկությունները: Ամերիկացիները գտնում են, որ G-20-ի գլխավոր խնդիրը պետք է լինի համերաշխ գործելու պատրաստակամությունը: Նրանք գտնում են, որ ներկայումս անհրաժեշտ է առաջնային կարգով պահպանել դոլարի ամրությունն ու կայունությունը, որպես համաշխարհային պահուստային արժույթ, իսկ ֆինանսական հոսքերի վրա հսկողության սահմանումը, դրա մեխանիզմների մշակումը ամերիկացիները համարում են հետագայում լուծվելիք խնդիրներ: Միացյալ Նահանգների իշխանությունների

տրամաբանությունը պարզ է. անհրաժեշտ է խոշորածավալ դոլարային ներարկումներ կատարել թե՛ ԱՄՆ-ի տնտեսությունում և թե՛ աշխարհով մեկ՝ խնդիր ունենալով հաղթահարել ճգնաժամը տնտեսագիտությանը հայտնի երկու մոտեցումների միաժամանակյա կիրառմամբ:

Առաջին՝ այդ դոլարային ներարկումներն անհրաժեշտ է ծառայեցնել համախառն պահանջարկի խթանմանը թե՛ ԱՄՆ-ում, թե՛ այլ երկրներում:

Երկրորդ՝ ֆինանսական միջոցների մի մասն էլ հարկ է ուղղել ներդրումների ակտիվացմանը, ինչը կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը, իսկ դա էլ իր հերթին կբերի համախառն սպառողական պահանջարկի խթանմանը: Ըստ ամերիկացիների, այդ երկու միջոցների կիրառումը կհանգեցնի նրան, որ ներարկվող ֆինանսների մի մասը կծախսվի ապրանքների ներմուծման նպատակով, որն էլ կօգնի ոչ միայն ներմուծող երկրներին, այլև արտահանում իրականացնող նրանց արտասահմանյան առևտրային գործընկերներին: Նման մոտեցում որդեգրելու պայմաններում, ըստ ամերիկացիների, եթե երկրները գործեն կոորդինացված, ապա, նրանք համոզված են, դա կտա առավելագույն արդյունք Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հաղթահարման գործում:

ԱՄՆ-ի այս դիրքորոշումը, որը վերստին հնչեցվեց Լոնդոնում, միահամուռ հավանության արժանացավ բրիտանացիների և ճապոնացիների պատվիրակությունների կողմից: Հարկ է նշել, որ ըստ հեղինակավոր վերլուծաբան-տնտեսագետների, այդ թվում և ամերիկյան, Բարաք Օբաման կրկնում է իր նախորդի՝ Ջորջ Բուշի վարած տնտեսական քաղաքականության սխալը, այն է՝ խթանել էկոնոմիկան պետական ծախսերի աճի և արտաքին պարտքի զգալի ավելացմամբ: Եվ, փաստորեն, ԱՄՆ գործող վարչակարգը փորձում է իր որդեգրած նման քաղաքականության ռիսկայնությունը բաժանել այլ երկրների վրա նույնպես, երբ կոչ է անում հետևել իր առաջարկած հակաճգնաժամային քաղաքականությանը:

Ինքնին հասկանալի է, որ եթե խոշոր երկրները հետևեն ԱՄՆ-ի խորհրդին, ապա նրանք նույնպես կկուտակեն մեծ պարտքեր: Արդյունքում, մասնավորապես, եվրոպացիները հասկանում են, որ այդ պարագայում նրանց էկոնոմիկաները կդառնան սակավ գրավիչ ներդրողների համար, որոնք չեն շտապի «փախչել» ԱՄՆ-ից:

Կարծիք կար, թե երբ G-20-ի հիմնական խաղացողներից՝ Ռուսաստանը, Ֆրանսիան, Գերմանիան մի կողմից, Չինաստանը մյուս կողմից, իրենց առաջարկությունների հիմքում դրել էին սկզբունքորեն տարբերվող մոտեցումներ հատկապես ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Ճապոնիայի մոտեցումներից, ապա գագաթաժողովը պետք է որ չկարողանար ընդունել միասնական փաստաթուղթ:

Բարեբախտաբար, աշխարհի խոշոր երկրների լիդերները գտնվեցին անհրաժեշտ բարձրության վրա՝ խորապես գիտակցելով, որ համայն աշխարհը, առանց չափազանցության, կանգնած է լինել-չլինելու ընտրության առաջ: Արդյունքում՝ ընդունվեց 29 հոդվածներից բաղկացած կոմյունիկե: Դրանում հաշվի են առնվել Ռուսաստանի, Գերմանիայի, Ֆրանսիայի առաջարկություններից շատերը:

Հարկ է նշել, որ ԱՄՆ-ն նույնպես բավարարված է, քանի որ ԱՄՆ դոլարը շարունակելու է մնալ համաշխարհային պահուստային արժույթ. այս հանգամանքը ամերիկացիների համար, թերևս, ամենակարևորն է: Առաջիկայում կկարևորվի Արժույթի Միջազգային Հիմնադրամի և նրա ակտիվության տարածությունում շրջանառվող SDR-ը (Special drawing rights. Փոխառության հատուկ իրավունք՝ ՓՀԻ), որը պայմանական հաշվարկային միավոր է ոչ բանկնոտային կամ մետաղադրամի տեսքով: Փոխառության հատուկ իրավունքի (SDR), որի էմիսիան իրականացնում է ԱՄՀ-ը, գնանշումում այսօր 44%-ը բաժին է ընկնում ԱՄՆ դոլարին, 32%-ը՝ եվրոյին, 11%-ը՝ ճապոնական իենին, 11%-ը՝ բրիտանական ֆունտ ստեռլինգին:

Նշենք, որ G-20-ի ընդունած կոմյունիկեով նախատեսված է ճգնաժամից առավել տուժած երկրներին օգնելու նպատակով հատկացնել հավելյալ 1 տրլն 100 մլրդ դոլար: Հատկացվող այդ գումարից 500 մլրդ դոլարը տրամադրվելու է ԱՄՀ-ին: Դրա չափի մասին առավել ամբողջական պատկերացում կազմելու համար ասենք, որ ԱՄՀ-ի ներկայիս ռեսուրսները կազմում են 328 մլրդ դոլար:

Ասվածից փորձենք անել որոշ հետևություններ:

Առաջին. այսօր համաշխարհային ֆինանսական շուկայում ստեղծվել է մի իրավիճակ, երբ ԱՄՆ-ի դոլարը դարձել է իրար հակասող նպատակների պատանդը: Մի կողմից, եթե նա որպես համաշխարհային հիմնական պահուստային արժույթ սկսի բավարարել համաշխարհային էկոնոմիկայի պահանջները, ապա ԱՄՆ-ի իշխանությունները սեփական երկրի ներսում կարող են կորցնել սղաճի նկատմամբ գործնական վերահսկողություն իրականացնելու հնարավորությունը:

Միաժամանակ ԱՄՆ-ի դոլարը, իրականացնելով ազգային արժույթ լինելու իր գործառույթը, երկրի ներսում առաջացնում է այլ բնույթի խնդիրներ, ինչի ականատեսն ենք մեր օրերում: Այսպես, 2009 թ. ֆինանսական տարում (2008 թ. հոկտեմբեր – 2009 թ. հոկտեմբեր) խնդիր դնելով խթանել համախառն ներքին պահանջարկը, ԱՄՆ-ում նախատեսել են պետական պարտքի շեշտակի ավելացում՝ հաստատելով բյուջե, որի պակասուրդը կազմում է 1 տրլն 150 մլրդ դոլար: Այդ պակասուրդը լրացնելու են, ըստ էության, այն բոլոր երկրները, որոնք ստեղծված համաշխարհային ֆինանսական համակարգի պայմաններում, երբ դոլարը միջազգային պահուստների եզակի արժութային միջոցն է, իրենց երկրների ազգային արժույթները պահուստի վերածելու նպատակով հարկադրված կլինեն գնել կամ դոլար, կամ ամերիկյան գանձապետական արժեթղթերը՝ տրեժերիսները:

Այլ կերպ ասած՝ դոլարն այսօր այլոց համար խնդիրներ առաջացնելով է դեռ կարողանում միաժամանակ իրականացնել ազգային արժույթի և համաշխարհային պահուստային արժույթի (շատ դեպքերում իրար հակասող) ֆունկցիաները: Այդ երկու գործառույթների միաժամանակյա իրականացումը երկարաժամկետ հեռանկարում կարող է աշխատեցնել Տրիֆֆինի, այսպես կոչված, պարադոքսը՝ աշխարհում ինչքան շատ է դոլարը տարածվում որպես համաշխարհային պահուստային արժույթ, այդքան ԱՄՆ-ին դժվար է

լինելու վերահսկել սեփական արժույթի փոխարժեքը: Սպորտային լեզվով ասած՝ միշտ չէ, որ խաղացող դատավորը օգտակար է իր թիմի համար:

Ահա այս ամենը հաշվի առնելով էր, որ Լոնդոնի գագաթաժողովի նախորեին արվեցին (Չինաստանի, Ռուսաստանի, Ղազախստանի կողմից) վերազգային արժույթի անցնելու առաջարկություններ: Ահա սրանով էր պայմանավորված համաշխարհային ֆինանսական շուկայում Փոխառության հատուկ իրավունքի (SDR) դերակատարությունը բարձրացնելուն ուղղված առաջարկները:

Երկրորդ. ԱՄՆ-ի գործող իշխանություններն այսօր փորձում են ճգնաժամի առաջն առնել պետական ծախսերի աննախադեպ ավելացմամբ, ըստ որում, լայնորեն կիրառելով դոլարային էմիսիա, որը, ի վերջո, բերում է արտաքին պարտքի ավելացում: Ինչպես արդեն վերն ասացի, նման քաղաքականություն կիրառվել էր դեռ 1981 թվականից և արդեն իսկ հանգեցրել է Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի: Տրամաբանությունը հուշում է, որ այդ քաղաքականությունը շարունակելու դեպքում, անգամ իսկ հաղթահարելով ներկայիս ճգնաժամը, մենք ստեղծում ենք նախադրյալներ արդեն իսկ ապագայում նոր ճգնաժամի մեջ հայտնվելու համար:

Այդ տեսակետից հաստատվում է այն թեզը, որ կապիտալիստական համակարգին ներհատուկ են ցիկլիկ ճգնաժամեր: Դրանում աշխարհը համոզվեց 1929-1933 թթ. Մեծ դեպրեսիայի (որը ճարակեց ԱՄՆ-ն, Կանադան և Արևմտյան Եվրոպայի զարգացած երկրները), 1997-1998 թթ. Արևելյան Ասիայի, Ռուսաստանի, Լատինական Ամերիկայի և ներկայիս ճգնաժամի օրինակով:

Սակայն մյուս կողմից էլ պետք է արձանագրենք, որ ճգնաժամը հաղթահարելու դեղամիջոց է առաջարկվում ճիշտ այն նույն քաղաքականության իրականացմամբ, որն անզոր գտնվեց կանխել այսօրվա ֆինանսական ճգնաժամը: Այլ կերպ ասած՝ գործող կապիտալիստական համակարգն ի զորու չէ իր զինանոցից առաջարկել իր իսկ ներսում ծագած ֆինանսատնտեսական ճգնաժամերը կանխարգելող միջոցներ: Կնշանակի, որ մենք գործ ունենք նաև կապիտալիզմի համակարգային ճգնաժամի հետ: Եվ ամենևին էլ պատահական չէր, որ Ֆրանսիայի նախագահ Նիկոլյա Սարկոզին, ինչպես ասվեց, հայտարարել էր. «Անհրաժեշտ է վերստին կառուցել կապիտալիզմը զրոյից, դարձնելով այն ավելի բարոյական»:

Երրորդ ուշագրավ հետևությունն էլ, ըստ իս, այն է, որ G-20-ի գագաթաժողովը, ընդունելով Ռուսաստանի, Գերմանիայի և Ֆրանսիայի լիդերների առաջարկությունները՝ ուղղված ֆինանսական շուկաների գործունեության կարգավորմանը, ֆինանսական հոսքերի վերահսկելիության ապահովմանը, պետությունների դերակատարության բարձրացմանն առևտրի և հետճգնաժամային էկոնոմիկաների վերականգման գործում, ըստ էության, վերջ դրեցին ազատական կապիտալիզմի անգլո-սաքսոնական մոդելին, որը գործում էր առնվազն 1980-ական թվականներից: Անգլո-սաքսոնական մոդելին ներհատուկ էր ազատ շուկաների ինքնակարգավորիչ դերի բացարձակացումը, բիզնեսի ազատ գործելու առաջնայնության ապահովումը:

Նկատենք, որ G-20-ի կողմից ընդունված վերը նշված առաջարկները հիմնականում բնորոշ են էկոնոմիկայում հայտնի, այսպես կոչված, «Հռենոսի մոդելին», որն առավել ուժեղ կիրառում գտավ Գերմանիայում 1949 թվականից հետո: Դրան ներհատուկ է բանվորների և կապիտալիստների համագործակցությունը, պետության կարգավորիչ դերի կարևորումը, ինչը նպաստում է կապիտալիզմին բնորոշ հակասությունների մեղմմանը:

Չորրորդ. G-20-ի շրջանակում արդեն իսկ հստակ առանձնացան սկզբունքորեն տարբեր երկու հիմնական դիրքորոշում: Մի կողմից՝ ամերիկա-բրիտանա-ճապոնականը, որի առանցքն է՝ այսուհետ էլ դոլարն ընդունել որպես համաշխարհային պահուստային արժույթ: Մյուս կողմից՝ Ռուսաստանի և Չինաստանի մոտեցումը, որը թեպետ չդարձավ G-20-ի օրակարգային հարց, սակայն դրա մասին արդեն իսկ այդ երկրները պաշտոնապես արտահայտվել են:

Այստեղ հարկ է փաստել, որ Չինաստանի նյութական բարեկեցությունն այսօր մեծապես պայմանավորված է ԱՄՆ դոլարի ամրությամբ, քանի որ, ինչպես վերը ասվեց, նրա միջազգային պահուստներում դոլարին բաժին է ընկնում երկու երրորդը: Այնպես որ, մինչև գագաթաժողովը բարձրացնելով վերազգային արժույթի մասին հարցադրումները, իրենց ձայնը լսելի դարձրեցին մեկ այլ հարցում. Չինաստանի հատուկ ադմինիստրատիվ շրջանները՝ Հոնկոնգը և Մաքաոն չընդգրկվեցին օֆշորային գոտիների «սև ցուցակում», ինչը նրանց հնարավորություն կտա շարունակել օգտվել հարկային դաշտի արտոնություններից: Խոսքը վերաբերում է համաշխարհային վերազգային նոր արժույթին անցնելու գաղափարին:

Այստեղ հետաքրքրական էր Գերմանիա - Ֆրանսիա տանդեմի դիրքորոշումը. նրանք չբարձրաձայնեցին նոր համաշխարհային պահուստային արժույթին անցնելու անհրաժեշտության գաղափարը, սակայն իրենց առաջարկներով, որոնք մասամբ ընդունվեցին, փորձեցին սահմանափակել դոլարի այսօրվա «միահեծան» համաշխարհային պահուստային արժույթ լինելու առաքելությունը, և դրա միջոցով ԱՄՆ-ին վերապահված համաշխարհային հեգեմոնի դերակատարությունը:

Ահա նման հետաքրքիր ժամանակում ենք մենք ապրում: Ժամանակ, որը հրամայական է դարձնում որդեգրել համաշխարհային մարտահրավերները դիմակայելու և ապագային միտված զարգացման համազգային ծրագրի մշակման անհրաժեշտությունը:

«Հայոց Աշխարհ», 8 -10. VI. 2009:

XXI ԴԱՐՈՒՄ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԿՀԱՍՆԵՆ...

Հայ-թուրքական ներկայիս հարաբերությունների, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման շուրջ ցանկացած վերլուծություն դատապարտված է լինել ոչ ամբողջական, եթե հաշվի չառնվեն արտաքին քաղաքական զարգացումները, որոնք տեղի են ունենում ոչ միայն մեր տարածաշրջանում՝ Հարավային Կովկասում, այլև մեր սահմաններից դուրս ընթացող աշխարհաքաղաքական գործընթացներում: Եվ սա արդի պայմաններում արտացոլումն է աշխարհի երկրների գնալով ավելի սերտ փոխշաղկապվածության, գլոբալիզացիայի:

Ուստի վերհիշենք, թե ինչպիսի՞ք էին վերջին մեկ տարվա ընթացքում աշխարհաքաղաքական զարգացումները, որոնք ուղղակի անդրադարձ ունեցան Հարավային Կովկասի երկրների վրա: Եվ այդ համապատկերում փորձենք բացահայտել դրանց միջև եղած կապը, պարզենք, որոնք են այդ գործընթացներում ընդգրկված հիմնական խաղացող երկրները և ուժի միջազգային կենտրոնները: Իսկ ամենակարևորը՝ աշխատենք պարզորոշ ձևակերպել, թե ի՞նչ շահեր են հետապնդում Հարավային Կովկասում հիմնական խաղացողները՝ Ռուսաստանի Դաշնությունը, ԱՄՆ-ն, Եվրամիությունը և ռեգիոնալ տերությունները՝ Թուրքիան ու Իրանը:

Ահա այս խնդիրների լուսաբանումից հետո նոր կկարողանանք ոչ միայն անկողմնակալ գնահատել այդ ամենի հետևանք հանդիսացող հայ-թուրքական «Ճանապարհային քարտեզի» աշխարհ գալու հանգամանքները, այլև ճիշտ հետևություններ անել, թե ի՞նչ նպատակներ էին հետապնդում թուրքական իշխանությունները, երբ “Sabah” թերթում ս.թ. ապրիլի 24-ին տպագրում էին այն 5 հարցերը (ինչն ամենևին էլ պատահական չէր), որոնք կազմում են «Ճանապարհային քարտեզի» բուն բովանդակությունը:

Եթե նման մոտեցմամբ առաջնորդվենք, ապա մեզ համար ավելի հասկանալի կլինի, թե ինչո՞ւ այդ փաստաթուղթը լույս աշխարհ եկավ Մեծ եղեռնի 94-րդ տարելիցի նախօրեին: Դրա լույսի ներքո մեզ համար ավելի հասկանալի կդառնան ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի ապրիլի 24-ի ուղերձում առկա երանգները՝ հայերենով «Մեծ եղեռն» բառակապակցության երկու անգամ օգտագործմամբ:

Եթե մեր վերլուծությունը չկառուցենք այս տրամաբանության շրջանակում, ապա այդ դեպքում դա պարզապես կվերածվի պարապ դատողությունների շարադրման, ինչը, անտարակույս, ժամանակի անիմաստ կորուստ կդառնա և՛ հոդվածի հեղինակի, և՛ ընթերցողի համար:

Եվ այսպես, փաստենք, որ վերջին մեկ տարվա ընթացքում Հարավային Կովկասը հայտնվել է ԱՄՆ-ի, Եվրամիության, Ռուսաստանի Դաշնության,

ինչպես նաև Թուրքիայի ու Իրանի դիվանագիտական աննախադեպ ակտիվացման կիզակետում: Դրա մեկնարկը դրվեց 2008 թ. մայիսի 26-ին, երբ Լեհաստանի արտաքին գործերի նախարարը Եվրախորհրդարանի Շվեդիայի ներկայացուցչի մասնակցությամբ Եվրամիության արտաքին հարաբերությունների խորհրդում հանդես եկան առաջարկությամբ՝ նախաձեռնել «Արևելյան գործընկերություն» ծրագիրը՝ դրան հրավիրելով մասնակցելու Հայաստանին, Ադրբեջանին, Մոլդովային, Վրաստանին, Ուկրաինային և Բելոռուսին: Ծրագրին վերջինիս մասնակցության հարցը դրական լուծում գտավ միայն 2009 թ. փետրվարի 23-ին Եվրամիության անդամ 27 երկրների արտգործնախարարների Բրյուսելում կայացած գագաթաժողովի ժամանակ:

Հռչակվեց, որ «Արևելյան գործընկերության» ծրագրի նպատակներն են՝ առևտրի ազատ գոտիների ստեղծման շուրջ բանակցությունների դյուրին պայմանների ապահովումը, Եվրամիության անդամ երկրների հետ ծառայությունների և գյուղմթերքների ազատ առևտրի կազմակերպումը, ինչպես նաև գործընկերության մասին պայմանագրերի կնքման ու վիզային ռեժիմի հեշտացմանն ուղղված հարցերի կարգավորումը: Ի դեպ, այստեղ նշենք, որ «Արևելյան գործընկերություն» ծրագրի պաշտոնական մեկնարկը կհայտարարվի ս. թ. մայիսի 7-ին՝ Պրահայում նախատեսված ԵՄ անդամ երկրների գագաթաժողովի ժամանակ:

«Արևելյան գործընկերության» մասին հայտարարվելուց մեկ ամիս անց Նախագահ Սերժ Սարգսյանը հունիսի 23-25-ին, պաշտոնական այցով գտնվելով Մոսկվայում՝ հայ համայնքի գործարար շրջանների և մտավորականության ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ, հանդես եկավ շատ համարձակ առաջարկով՝ Երևան հրավիրեց Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլին՝ Հայաստան - Թուրքիա ֆուտբոլային խաղը դիտելու: Հրավերը չմերժվեց, սեպտեմբերի 6-ին Գյուլը ժամանեց Երևան:

Շարունակենք տարածաշրջանային զարգացումների ժամանակագրական շարադրանքը: Ասես թե ամենքի համար ճշմարտության պահեր էին, թե՛ տարածաշրջանային, թե՛ համաշխարհային քաղաքական ընտրանու կտրվածքով, երբ օգոստոսի 9-13-ը բռնկվեց վրաց – հարավ-օսական պատերազմը ու դրան հաջորդած զարգացումները: Այստեղ հարկ է հիշատակել մի կարևոր իրադարձության մասին ևս. օգոստոսի 11-ին, երբ պատերազմական գործողությունները գնալով թեժանում էին, Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հանդես եկավ «Կովկասյան ալյանսի»՝ «Խաղաղության պակտի» ձևավորման առաջարկով:

Կարճ ժամանակ անց նա պաշտոնական այցով եղավ Մոսկվայում: Թուրքիայի վարչապետի նախաձեռնությունն արժանացավ Ռուսաստանի իշխանությունների հավանությանը: Էրդողանն իր այս առաջարկը օգոստոսի 20-ին վերաձևակերպեց «Կովկասում կայունության և համագործակցության պլատֆորմ» պաշտոնական անվանմամբ: Այդ համագործակցության շրջանակների մեջ Թուրքիան առաջարկում է ընդգրկել Հայաստանին, Վրաստանին, Ադրբեջանին, ինչպես նաև ԱՄՆ-ին ու Ռուսաստանի Դաշնությանը:

Այս համատեքստում ուշագրավ է և այն, որ Հարավային Կովկասում արձանագրվեց երկու անկախ պետությունների հռչակում՝ 2008 թ. օգոստոսի

26-ին Ռուսաստանի Դաշնությունը պաշտոնապես ճանաչեց Աբխազիայի ու Հարավային Օսիայի անկախությունը:

Առանձնահատուկ հիշատակության է արժանի 2008 թ. հուլիսի 3-ին Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդևի պաշտոնական այցը Ադրբեջան ու այնտեղ Իլհամ Ալիևի հետ «Ադրբեջանի Հանրապետության ու Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության և ռազմավարական գործընկերության մասին» հռչակագրի ընդունումը ու դրան հաջորդած հոկտեմբերի 20-22-ին Ռուսաստանի նախագահի պաշտոնական այցը Հայաստանի Հանրապետություն:

Ինչո՞ւ ենք առանձնապես կարևորում այս այցերը, որովհետեւ դրանք հնարավոր դարձրին նոյեմբերի 2-ին Մայենդորֆյան հռչակագրի ընդունումը: Հռչակագիր, որը, ըստ էության, զգալիորեն նվազեցրեց Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ պատերազմի սանձազերծումը, որի վտանգն անտեսելը Հայաստանի կողմից կլիներ քաղաքական բախտախնդրություն: Չմոռանանք նաև, որ 2008 թ. դեկտեմբերի սկզբին ԵԱՀԿ անդամ 56 երկրների արտաքին գործերի նախարարները, Մինսկի խմբի համանախագահող երկրների արտգործնախարարները ընդունեցին հայտարարություններ, որոնք միանգամայն համահունչ են Մայենդորֆյան հռչակագրին: Այստեղ հարկ է նաև հիշատակել վերջերս Մոսկվայում կայացած Ալիև-Մեդվեդև ու Սարգսյան-Մեդվեդև հանդիպումները:

Մեծ նշանակություն և կարևորություն են ներկայացնում Նախագահ Սերժ Սարգսյանի վերջերս կատարած պաշտոնական այցը Իրանի Իսլամական Հանրապետություն և դրա ընթացքում ձեռքբերված տնտեսական ու ռազմավարական համագործակցության լուրջ երանգներ ունեցող պայմանավորվածություններն ու այն գնահատականները, որոնք տրվեցին Նախագահ Սարգսյանի կողմից մեր փորձության տարիների բարեկամ Իրանի իշխանություններին և ժողովրդին:

Եվ, վերջապես, խոր մտորումների տեղիք են տալիս ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի, ինչպես նաև դրան նախորդած Հիլարի Քլինթոնի մարտ-ապրիլյան պաշտոնական այցերը Թուրքիա:

Ահա, երբ այս աչքի զարնող դիվանագիտական ակտիվությամբ բոլոր փաստերը համադրում ես, ապա գալիս ես մի եզրակացության, այն է՝ մեր տարածաշրջանում խաչվել են աշխարհիս հզորներից ԱՄՆ-ի, ՌԴ-ի և Եվրամիության շահերը: Եվ ստեղծված վիճակում տրամաբանական է ենթադրել, որ ռեգիոնալ խոշոր պետությունները՝ Իրանն ու Թուրքիան, կանեն ամենը, որ տարածաշրջանային հնարավոր զարգացումների պայմաններում պահպանվեն իրենց պետական շահերը, որոնք միշտ չէ, որ համընկնում են, եթե չասենք, որ շատ դեպքերում մտնում են սուր հակասության մեջ վերոհիշյալ ուժի միջազգային կենտրոնների շահերի հետ:

Ինչո՞վ է պայմանավորված տարածաշրջանային աչքի զարնող վերջին շրջանի ակտիվությունը:

Վիճարկվող խնդիրը մեկն է՝ թե՛ Կասպից ծովի և թե՛ Կենտրոնական Ասիայի նավթային ու գազային պաշարները ի՞նչ ճանապարհով, ո՞ր երկրների

տարածքով կհասցվեն Հարավային և Արևելյան Եվրոպա, Եվրամիության անդամ երկրներին: Այս հարցերն ամենայն սրությամբ դրվեցին, երբ 2005-2006 թթ. և 2008-2009 թթ. ջեռուցման ձմեռային սեզոնին ծագեցին ռուս-ուկրաինական գազային կոնֆլիկտները, որ հրահրել էին երրորդ ուժերը: Գազային անհամաձայնությունների պատճառով եվրոպացիների համար հրամայական դարձավ գազամատակարարումը դիվերսիֆիկացնելու խնդիրը՝ նպատակ ունենալով թուլացնել Եվրամիության անդամ երկրների կախվածությունը ռուսաստանյան գազամատակարարումից:

Իսկ որո՞նք են էներգակիրների մատակարարման այլընտրանքային հնարավոր ճանապարհները: Դա նախևառաջ Ռուսաստանը շրջանցող “Nabucco” գազատարի շինարարությունն է: Ինչպես նաև մարտի 23-ին Բրյուսելում Եվրահանձնաժողովի և Ուկրաինայի նախագահ Վիկտոր Յուշչենկոյի ու վարչապետ Յուլիա Տիմոշենկոյի ստորագրած հռչակագիրն է, համաձայն որի Եվրամիությունը պատրաստակամություն է հայտնել Ուկրաինային տրամադրել 2,5 մլրդ դոլար (միջազգային երեք բանկերի մասնակցությամբ) երկրի գազատրանսպորտային համակարգը արդիականացնելու նպատակով: Ինքնին հասկանալի է, որ եթե այդ ծրագիրը իրագործվի, ապա զգալիորեն կաճի Ուկրաինայի գազատրանսպորտային համակարգի թողունակությունը:

Ավելին՝ համաձայն այդ հռչակագրի, Ռուսաստանը պետք է սեփական գազը վաճառի Ուկրաինային Ռուսաստան - Ուկրաինա սահմանագծին: Այս ամենն իր հերթին խիստ հարցականի տակ կդնի Բալթիկ ծովի հատակով կառուցվող ռուս-գերմանական «Հյուսիսային հոսք» (“Северный поток”- “Nord Stream”) գազատարի նպատակահարմարությունը: Հիշեցնեմ, որ այդ գազատարը, որի կառուցումը կպահանջի շուրջ 7,4 մլրդ եվրո ներդրում, ունենալու է տարեկան 55 մլրդ խորանարդ մետր թողունակություն: Այսինքն՝ այդ ծավալի գազ է տեղափոխվելու Բալթիկ ծովի ՌԴ սահմանից Դաշնային Գերմանիա (ծովի հատակով)՝ ազատելով Ռուսաստանին Ուկրաինայի տարածքով գազային տրանզիտի գլխացավանքից: Նշենք, որ գազատարի շինարարությունը սկսվել է 2007 թ. նոյեմբերի 5-ին և շահագործման հաշվարկային ժամկետ է սահմանված 2010 թ. աշունը:

Բնական է, որ ՌԴ իշխանությունները չէին կարող անհետևանք թողնել գազային տրանզիտի շուրջ ծավալվող այդ զարգացումները: Եվ, ահա, Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդևը ապրիլի 20-21-ին, երբ պաշտոնական այցով Ֆինլանդիայում էր, հայտարարեց, որ ՌԴ-ն Եվրոպայի իր գործընկերներին առաջարկում է հիմնատար (բազային) փաստաթուղթ, որը կանոնակարգում է էներգետիկայի ոլորտում միջազգային համագործակցության հարցերը, այդ թվում՝ տրանզիտային համաձայնության վերաբերյալ առաջարկները: Համաձայն Ռուսաստանի ներկայացրած «Էներգետիկայի ոլորտում միջազգային համագործակցության նոր հիմնարար (բազային) իրավական հայեցակարգային մոտեցումներ» առաջարկի, գազ մատակարարող երկրներին իրավունք է վերապահվում մուտք գործել մինչև գազի վերջնական սպառողները: Ինչպես տեսնում ենք, մեր օրերում էլ էներգակիրների

մատակարարման խնդիրները շարունակում են մնալ թեժ քննարկումների առարկա:

Այժմ անդրադառնանք եվրոպացիների առաջարկած այլընտրանքային գազատարին՝ “Nabucco”-ին: Դա 3,3 հազար կիլոմետր երկարությամբ նախագծվող գազատար է, որը հնարավորություն կընձեռի Կենտրոնական Ասիայից (Թուրքմենստան, Ուզբեկստան), ինչպես նաև Կասպից ծովի ադրբեջանական Շահ-Դենիզ հանքավայրի գազը Թուրքիայի, ապա հարավ-եվրոպական երկրների տարածքներով հասցնել Ավստրիա ու Գերմանիա: Այդ գազատարի նախագծային հզորությունն է տարեկան 26-32 մլրդ խմ գազի թողունակություն: Գազատարի նախագծային արժեքը 7,9 մլրդ եվրո է: Դրա շինարարությանը մասնակցելու են ավստրիական, թուրքական, բուլղարական, ռումինական, հունգարական և գերմանական կազմակերպություններ: Գազատարը, համաձայն նախագծի, կառուցվելու է՝ շրջանցելով Ռուսաստանը:

Ի սկզբանե նախատեսված էր, որ այդ գազատարին պետք է գազ մատակարարեն նաև Իրանի «Հարավային Պարս» հանքավայրը (տարեկան հզորությունն է 15-25 մլրդ խմ), ադրբեջանական Շահ-Դենիզը (8 մլրդ խմ տարեկան հզորությամբ) և թուրքմենական Դովլեթաբադ ու այլ հանքավայրերը (տարեկան 20-30 մլրդ խմ հզորությամբ):

Հասկանալի է, որ Ռուսաստանն ամենևին էլ շահագրգռված չէ այդ նախագծի իրագործմամբ, քանի որ ինքն է հանդես գալիս “Nabucco”-ին այլընտրանքային՝ «Հարավային հոսք» (“Южный поток”-“South Stream”) գազատարի շինարարության նախաձեռնությամբ: Հիշեցնեմ, որ «Հարավային հոսքը» ռուս-իտալական նախագիծ է, որը ենթադրվում է, որ պետք է անցնի Սև ծովի հատակով՝ Նովոռոսիյսկից բուլղարական Վառնա, այնուհետև գազատարը ճյուղավորվելու է Բալկանյան թերակղզի, այնտեղից էլ Իտալիա և Ավստրիա: Ծովի հատակով գցված գազատարի 900 կմ երկարությամբ հատվածը հավասարապես (50% մասնաբաժիններով) պատկանելու է ռուսական «Գազպրոմին» և իտալական “Eni”-ին, տարեկան թողունակությունը կազմելու է 30 մլրդ խմ գազ: Նախագծի ներդրումային արժեքն է շուրջ 25 մլրդ եվրո:

Այստեղ հարկ է նաև հիշատակել «Երկնագույն հոսք» (“Голубой поток”-“Blue Stream”) գազատարի մասին, որը կապում է Ռուսաստանը (սևծովային Արխիպովո-Օսիպովկան) Թուրքիայի տարածքում գտնվող «Դուրուսու» տերմինալի հետ (Սամսուն քաղաքից 60 կմ հեռավորության վրա): Գազատարի երկարությունը 1213 կմ է, որի ծովային հատվածի երկարությունը կազմում է 396 կմ՝ տարեկան 16 մլրդ խմ գազի տեղափոխման թողունակությամբ: 3,2 մլրդ դոլար արժողությամբ այդ գազատարը շահագործման է հանձնվել 2003 թ. փետրվարին: Ուշագրավ է, որ գազի մատակարարման առավելագույն ծավալը դեպի Թուրքիա արձանագրվել է 2007թ.՝ 9,5 մլրդ խմ: Ծրագրված է, որ 2009 թ. այն տարեկան կազմելու է 14 մլրդ խմ, իսկ 2010 թ.՝ 16 մլրդ խմ գազ:

Հասկանալի է, որ թե՛ Թուրքիան և թե՛ Ադրբեջանը, գիտակցելով սեփական երկրների աշխարհագրական դիրքերի ակնհայտ առավելությունը

Կենտրոնական Ասիայից դեպի Եվրոպա գազի տեղափոխման գործում, փորձում են առավելագույնը շահել դրանից: Արդեն իսկ Թուրքիան ավելի կարծրացած դիրքերից է խոսում Եվրամիությանն անդամակցելու իրեն ներկայացված առաջարկների կատարման շուրջ, չափազանցություն չի լինի ասել, որ շանտաժի է ենթարկում եվրոպացիներին՝ հայտարարելով, որ դուրս կգա “Nabucco” ծրագրից:

Իսկ Ադրբեջանի քեֆին էլ քեֆ չի հասնում, երևանյան բարբառով ասած, խաղեր է, որ տալիս է: Մասնավորապես, անցած օրերին, գտնվելով Մոսկվայում, Իլհամ Ալիևը հարցազրույց տալով «ԻՏԱՌ-ՏԱՍՍԻՆ» և «Վեստիին», նախ գլուխ գովեց, թե ներկայումս Ադրբեջանը տնօրինում է տարեկան ավելի քան 20 մլրդ խմ գազային ռեսուրս, իսկ Ադրբեջանի ապացուցված գազի պաշարները կազմում են 2 տրլն խմ, ավելին, հեռանկարում այդ ծավալը կարող է հասնել 5 տրլն խմ-ի: Այս տպավորիչ թվերը հիշատակելուց հետո նա հավելեց, որ կարևոր է Ռուսաստանի հետ գալ հնարավոր համաձայնության՝ տրանզիտի խնդիրները լուծելու նպատակով, պատրաստակամություն հայտնեց գազի գնում - վաճառքի հարցերը Ռուսաստանի Դաշնության հետ կարգավորելու գործում:

Ադրբեջանի նախագահի ակնարկն ինքնին հասկանալի էր՝ նկատի ունենալով Ռուսաստանի շահագրգռությունը Կենտրոնական Ասիայի և Կասպից ծովի գազը սեփական երկրի տարածքով տեղափոխելու հարցում: Իսկ լրագրողների հարցին՝ արդյո՞ք ադրբեջանական նավթագազային ընկերությունները կմասնակցեն “Nabucco” ծրագրին, նա տվեց խուսափողական պատասխան: Իլհամ Ալիևն ասաց, որ այդ նախագիծը քննարկվում է և, իհարկե, ցանկացած երկրի համար նոր շուկաներ մուտք գործելու հնարավորությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում: «Ինչքան մեծ է շուկան, այնքան մեծ է մրցակցությունը, այդքան լավն է գինը, այդքան շատ են երաշխիքները, որ մատակարարումները այս կամ այն պատճառով չեն ընդհատվի», – ահա այսպիսին էր Ի. Ալիևի պատասխանը: Դրա համար, չթաքցրեց նա, ադրբեջանցիները, անշուշտ, շահագրգռված են մասնակցել այդ նախագծին, եթե այն իրականանա: Ժողովրդական լեզվով ասած՝ հերթական անգամ ռուսներին թասիբի գցեց:

Նշենք, որ “Nabucco”-ի տարբերությունը և գրավչությունն այլ նախագծերից, ի մասնավորի նրանցից, որոնց Ադրբեջանը ներկայումս մասնակցում է, այն է, որ “Nabucco”-ի պարագայում նախագծի շինարարությունը ոչ թե մատակարարողի, այլ սպառողի խնդիրն է: Չնայած պաշտոնական այցի ժամանակ Ռուսաստանին հանգստացնող հավաստիացումներին ու խոստումներին՝ ՌԴ-ին դիտել գազամատակարարման և տրանզիտի գլխավոր գործընկեր, դա բացարձակապես չխանգարեց նույն Իլհամ Ալիևին 2009 թ. ապրիլի 24-25-ին Սոֆիայում մասնակցել «Բնական գազ Եվրոպայի համար: Անվտանգություն, հուսալիություն և գործընկերություն» համաժողովին: Դրա եզրափակիչ փաստաթղթում 29 մասնակից երկրների ղեկավարներ ընդունեցին փոխզիջումային որոշում՝ կարևորելով, թե՛ “Nabucco”-ի և թե՛ «Հարավային հոսք» իրար մրցակից հանդիսացող նախագծերի իրագործման արդիականությունը:

Այդ խորհրդաժողովի հետաքրքիր կողմերից էր նաև այն, որ ԱՄՆ պետքարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ռիչարդ Մորնինգսթարը, որը ներկայացնում էր Միացյալ Նահանգները, մամուլի ասուլիսի ժամանակ հանդես եկավ չեզոք դիրքերից՝ նշելով, որ «Հարավային հոսքը» շատ թանկ նախագիծ է և դրա ֆինանսական կառուցվածքի հետ կապված կան շատ հարցեր»: Խոսելով “Nabucco”-ի այլընտրանքային գազատարի մասին, ԱՄՆ ներկայացուցիչը նաև ասել էր, որ դրա իրագործումը, «շատ կարևոր» լինելով հանդերձ, չի կարող լինել բոլոր չարիքների համադարման:

Պարզից էլ պարզ է, որ պաշտոնական Բաքուն իր արտաքին քաղաքականության հիմքում դրել է ԱՄՆ-ի, Եվրամիության ու Ռուսաստանի Դաշնության կողմից մեր տարածաշրջանում հետապնդվող իրարամերժ նպատակների շահարկման գաղափարը:

Դրան հակառակ, պաշտոնական Երևանը՝ վարելով կանխատեսելի ու հավասարակշռված քաղաքականություն, դիրքավորում է Հայաստանը Հարավային Կովկասում որպես լուրջ և կայուն աշխարհաքաղաքական օբյեկտի և ոչ երբեք սուբյեկտի: Ասվածի օգտին է աշխատում նաև (ի թիվս այլ գործոնների) հայ-իրանական բարեկամական հարաբերությունների հանգամանքը: Բոլոր շահագրգիռ երկրների համար էլ հասկանալի է, որ մեր տարածաշրջանում միլիարդավոր դոլարների հասնող նախագծերի իրականացումը մեծապես պայմանավորված է լինելու այստեղ կայուն խաղաղություն հաստատելու երաշխիքներով: Պարտադիր մի նախապայման, որի ապահովումն անհնարին կլինի առանց Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարի կամքի դրսևորման:

Ահա այս բուռն զարգացումների ներքո հասկանալի են Էրդողանի և Ալիևի չափից դուրս ինքնավստահ լինելու դրդապատճառները: Ավելին՝ Թուրքիան քաջ գիտակցում է նաև, որ ԱՄՆ նոր նախագահը, որն իր նախընտրական ելույթներում քանիցս կրկնել էր, որ մեկ-մեկուկես տարվա ընթացքում Իրաքից հիմնականում դուրս կբերվեն ԱՄՆ զորքերը և զինտեխնիկան, կամա թե ակամա, կարևորեց թուրքական «Ինջիրլիկ» օդանավակայանը, ինչպես նաև Միջերկրական ծովի թուրքական նավահանգիստների նշանակությունը սպասվելիք գործընթացներում: Հասկանալի պատճառներով Իրաքից Սիրիայի և Իրանի վրայով ամերիկյան զինուժի դուրսբերումն այսօր իրական չէ: Այս հանգամանքը նույնպես շատ ոգևորեց թուրքական իշխանություններին:

Ինչ վերաբերում է Ադրբեջանի «խռովելուն» Թուրքիայից՝ պայմանավորված հայ-թուրքական հարաբերությունների հնարավոր կարգավորման հետ, ապա սա շատ պարզ, երկուստեք շահավետ քաղաքականություն է: Թուրքիան դա կփորձի «թանկ ծախել» ԱՄՆ-ին և Եվրամիությանը, ներկայացնելով, թե ինչ «մեծ» կորուստներով է հղի հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը ինչպես երկրի ներսում, այնպես էլ երկրից դուրս:

Մասնավորապես, թուրքական կողմը իր դժգոհությունն է հայտնում, որ հարվածի տակ են դրվում նրա և իր մերձավոր դաշնակցի՝ Ադրբեջանի հետ հարաբերությունները: Ադրբեջանն էլ «նեղացածի» կեցվածք ընդունելով՝ մի-

աժամանակ հասկացնել է տալիս Ռուսաստանին, առ այն, թե ինչ աստիճանի է զգայուն Հայաստանի նկատմամբ դրական երանգներ ունեցող ցանկացած հարցի առնչությամբ, անգամ իսկ Թուրքիայի նման բարեկամ երկրի պարագայում: Այնպես որ, գործում է ժողովրդական բանահյուսության, այս դեպքում արդեն՝ քաղաքական դրսևորումը. Թուրքիա քեզ եմ ասում, Ռուսաստան հետևություն դու արա:

Կարծում եմ, որ ներկայիս ռուսական քաղաքական իշխանությունները շատ լավ ծանոթ են թուրք-ադրբեջանական, իրենց էությամբ բյուզանդական դիվանագիտությանը ներհատուկ նման հնարքին: Հաշվարկը պարզ է. փորձել գտնել սեփական երկրների համար առավել նպաստավոր հանգրվան մեր տարածաշրջանում ձևավորվող աշխարհաքաղաքական նոր բևեռում:

Այստեղ հարկ է հիշենք, որ ընթացող աշխարհաքաղաքական զարգացումների անխուսափելիության մասին կանխատեսումներն արվել էին դեռ 2007 թ. ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի փետրվարի 10-ին Մյունխենում կայացած «Անվտանգության քաղաքականության հարցեր» միջազգային կոնֆերանսում ունեցած ելույթում և հետագայում էլ դրանք գործնական, պրագմատիկ քաղաքական հարթության վրա են դրվել արդեն իսկ նախագահ Դմիտրի Մեդվեդևի 2008 թ. հոկտեմբերի 8-ին Ֆրանսիայի Էվիանում կայացած Համաշխարհային քաղաքականության հարցերին նվիրված կոնֆերանսում ունեցած ելույթում:

Այո, ժամանակները փոխվել են, այլևս էրդողանը և Գյուլը «ռուսաց թագավորներին» մոլորության մեջ գցող նամակներ չեն գրի, ինչպես դա տեղի էր ունեցել 1920 թ. ապրիլի 26-ին, երբ Մուստաֆա Քեմալը նամակ էր հղում Լենինին՝ հայկական հողերին տիրելու ու տարածաշրջանում Թուրքիայի դերակատարությունը բարձրացնելու նպատակով: Այսօրվա Ռուսաստանի Դաշնության առաջնորդները՝ Վլադիմիր Պուտինը և Դմիտրի Մեդվեդևը պրագմատիկ, «դերժավնիկ» լիդերներ են, որոնք, կարծում եմ, լավ էլ գիտակցում են մեր տարածաշրջանում արդի Թուրքիայի իշխանությունների կողմից իրականացվող կայսերապաշտական քաղաքականության վտանգները: Վտանգներ, որոնք հմտորեն քողարկվում են խաղաղասիրական զանազան պլատֆորմների պատմուճաններով:

XXI դարում չեն կարող ստորագրվել 1921թ. Կարսի պայմանագրի ոգով գրված նոր պայմանագրեր: Ինչպես կասեր իմ լավ ուսուցիչներից Ալեքսան Կիրակոսյանը, «Ներկայիս ժամանակներն այլ են»: Կարծում եմ, ակնհայտ են դառնում Թուրքիայի նկրտումները, երբ նրանց զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Իլկեր Բաշբուգը մամուլի ասուլիսում արդեն իսկ պահանջներ է ներկայացնում պաշտոնական Երևանին՝ մեր երկրի «Անկախության հռչակագրի» այն դրույթի վերաբերյալ, որտեղ հիշատակված է Արևմտյան Հայաստանը, պարզաբանումներ է պահանջում 1921թ. հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրի առնչությամբ: Վերակենդանացնելով Կարսի պայմանագիրը, Թուրքիան հիմա էլ Ռուսաստանի Դաշնությանը փորձում է մոլորեցնել՝ առաջարկելով Հարավային Կովկասի, Ռուսաստանի, Ղազախստանի և այլ երկրների հետ (ինչի մասին վկայում է Պետական դումայի պատգամավոր Սերգեյ Մարկովի վերջերս խնդ-

որ առարկայի շուրջ հրապարակած հոդվածը) ձևավորել Եվրամիության նմանությամբ մի նոր միություն: Դրանով իսկ առաջ է տարվում Էրդողանի հեղինակած «Կովկասում կայունության և համագործակցության պլատֆորմ» նախագծի տակ միջազգային իրավունքի իրավական բազայի հիմնավորումը, այն է՝ ՀՀ-ի կողմից Կարսի պայմանագրի ճանաչմամբ միջազգային իրավունքի տեսանկյունից, դրա լույսի ներքո պաշտոնական Երևանն այլևս և ոչ մի պահանջատիրական խնդիր չի կարող ունենալ Թուրքիայի նկատմամբ:

Թուրքերն իրենց հաշվարկում հաշվի չեն առել մի շատ կարևոր գործոն՝ Հարավային Կովկասում համագործակցության ու կայունության հաստատումն անհնարին է առանց Իրանի ամենաակտիվ մասնակցության: Իսկ Իրանի Իսլամական Հանրապետության մասնակցությունը Թուրքիայի կողմից առաջարկվող Կովկասի այս ձևաչափին, առաջին հերթին, բխում է հենց Հայաստանի պետական շահերից: Հատկապես հաշվի առնելով այն համաձայնությունները, որ կայացել են Հայաստանի ու Իրանի միջև Նախագահ Սերժ Սարգսյանի վերջին պաշտոնական այցի ժամանակ: Մի դիտարկում ևս: Կարծում եմ, սխալ կլինի անտեսել Իրանի իշխանությունների հնարավոր վերաբերմունքը 1921թ. Կարսի պայմանագրի արդիականացման գործընթացի կապակցությամբ: Վերստին հիշենք, որ այդ պայմանագրի հոդված 5-ի համաձայն Թուրքիայի, Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունները պարտավորվել էին ճանաչել Նախիջևանի մարզի հիման վրա ինքնավար հանրապետության հռչակումը Ադրբեջանի հովանավորության ներքո: Իրանի Իսլամական Հանրապետությունը երբեք ու երբեք գոհունակություն չի հայտնի Հայաստանին Կարսի պայմանագրի ճանաչման կապակցությամբ թեկուզև այն պատճառով, որ Հյուսիսային Իրանի տարածքը, պատմական մեր Ատրպատականը, ամբողջությամբ բնակեցված է էթնիկ ադրբեջանցիներով, որոնց անջատողական նկրտումները քանիցս հանգեցրել են արյունահեղության:

Ահա այս բոլոր մանրամասների համատեքստում անհրաժեշտ է հստակ կողմնորոշվել, թե ինչպիսի՞ արտաքին քաղաքականություն պետք է վարեն Հայաստանի իշխանությունները, որպեսզի տարածաշրջանում ընթացող զարգացումներից կարողանան պաշտպանել մեր պետական ու ազգային շահերը: Եվ այստեղ անհրաժեշտ է նշել, որ ճիշտ կողմնորոշվելու դեպքում Հայաստանի Հանրապետության համար լավ հեռանկարներ կարող են բացվել:

Առաջին պարտադիր պայմանն այն է, որ հարկ է կարողանալ պարզորոշ պատասխաններ գտնել այն հարցին, թե որո՞նք են Հարավային Կովկասի տարածաշրջանում Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Եվրամիության հետաքրքրությունները, ինչպիսի՞ն են Թուրքիայի ու Իրանի հեռահար նպատակները: Ապա այդ ամենից հետո անհրաժեշտ է ձևակերպել մեր երկրի դերակատարությունը, հնարավոր մասնակցությունն այդ գործընթացներին՝ գնահատելով դրանք ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից:

Արդարացված կլինի, եթե մենք մեր վերլուծությունների առանցքում նկատի ունենանք, որ Հարավային Կովկասում ընթացող զարգացումներին առավել ներգրավված են Ռուսաստանի Դաշնությունը, Ամերիկայի Միացյալ

Նահանգները և Եվրամիությունը, նաև, բնականաբար, Իրանն ու Թուրքիան:

Եվ այստեղ հարկ է նշել, որ ուժի միջազգային այդ երեք կենտրոնները մեր տարածաշրջանում հետապնդում են ոչ միշտ համընկնող, երբեմն էլ ուղղակի հակասող շահեր: Օրինակ, եթե Միացյալ Նահանգների ու Եվրամիության շահերը "Nabucco"-ի կառուցման հարցում համընկնում են, հաշվի առնելով, որ այդ գազատարը, շրջանցելով Ռուսաստանի Դաշնության տարածքը, կթուլացնի եվրոպական երկրների կախվածությունը Ռուսաստանից, ապա այդ նույն հեռանկարը խիստ հակասում է վերջինիս շահերին:

Ինքնին հասկանալի է, որ ներկայիս ՌԴ-ն, մեր տարածաշրջանում ունենալով շատ ավելի մեծ դերակատարություն, շահագրգռված է էլ ավելի ամրապնդել իր դիրքերը՝ Կենտրոնական Ասիայից և Կասպից ծովից արտահանվող գազը տեղափոխելով հենց իր տարածքով: Ըստ որում, Ռուսաստանի իշխանություններն արդեն հայտարարում են իրենց պատրաստակամության մասին՝ արտահանման ենթակա գազի ամբողջ քանակը գնել Ռուսաստանի սահմանին, այն էլ բավական բարձր սակագնով: Թեկուզ այս շահերի առկա հակասությունը, որն անմիջականորեն կապված է մեր հարևանների հետ, կարող է Հայաստանի համար լուրջ մարտահրավերի առաջացման պատճառ դառնալ: Այնպես որ, Հայաստանի Հանրապետությունն իր արտաքին քաղաքականությունն իրականացնելիս անպայման պետք է հաշվարկի, թե որոնք են Միացյալ Նահանգների կենսական շահերը մեր տարածաշրջանում և ոչ միայն գազատարի տրանզիտային ճանապարհներով պայմանավորված, որոնք են Եվրամիության ու Ռուսաստանի Դաշնության շահերը:

Չափազանց կարևոր է, որ անպայմանորեն ընդունվի սկզբունքային այնպիսի մոտեցում, որը կբացառի ցանկացած փորձ կառուցելու սեփական արտաքին քաղաքականությունը՝ խարսխված մեր տարածաշրջանում գերտերությունների հակասությունների շուրջ մանևրելու վրա: Նման քաղաքականությունը շատ ու շատ վտանգավոր է, պարզապես բախտախնդրություն կլինի: Մենք պետք է մեր արտաքին քաղաքականությունը փորձենք իրականացնել՝ համադրելով ուժի միջազգային այդ երեք կենտրոնների շահերը այս տարածաշրջանում:

Բնականաբար, հարց է ծագում՝ կա՞ն արդյոք ընդհանուր ելակետեր: Պարզվում է, որ կան: Հիշատակած երկրները, այո, շահագրգռված են (թեպետ տարբեր դրդապատճառներից ելնելով), որ Հարավային Կովկասում հաստատվի կայուն խաղաղություն: Արևմուտքը չի ցանկանա, որ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարի տրանզիտային ճանապարհների հարևանությամբ ծավալվեն ռազմական գործողություններ, առավել ևս, երբ դեռ անկայուն է վիճակը Իրաքում, հանգիստ չեն էթնիկ քրդերով բնակեցված թուրքական գավառները, դեռ ծխում է Մերձավոր Արևելքի պաղեստինա-իսրայելական հակամարտությունը:

Ռուսաստանի Դաշնությունը նույնպես չի ցանկանա, որ իր երկրի հարավային սահմանների մոտ վիճակը սրվի, առավել ևս, երբ այդտեղ դեռ վերջնականապես չեն հաղթահարվել Հյուսիսային Կովկասի ծայրահեղականների՝ զոհերով ուղեկցվող ոտնձգությունները: Էլ չասենք ռուս - վրացական

լարված հարաբերությունների, նորանկախ Աբխազիայի, Հարավային Օսիայի ու Վրաստանի միջև գոյություն ունեցող լարվածության մասին:

Այստեղ անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ սեփական արտաքին քաղաքականությունը իրագործելիս մենք հաշվարկենք, որ դա հանկարծ չհակասի Իրանի շահերին՝ հաշվի առնելով մեր երկրների բարիդրացիական կապերն ու հեռահար դրական նպատակներ հետապնդող պայմանավորվածությունները, որոնք ձեռք են բերվել վերջերս Նախագահ Ս. Սարգսյանի Իրան կատարած պաշտոնական այցի ժամանակ:

Ամփոփելով նշենք, որ Հարավային Կովկասում լուրջ դերակատարություն ունեցող բոլոր երկրներն էլ, տարբեր դրդապատճառներով, շահագրգռված են, որ Հարավային Կովկասում տևական ու ամուր խաղաղություն հաստատվի:

Ահա տարածաշրջանային զարգացումների այս համապատկերում ապրիլի 22-ի լույս 23-ի գիշերը հրապարակ է գալիս Հայաստանի և Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունների կողմից Շվեյցարիայում ընդունված «Ճանապարհային քարտեզ» փաստաթուղթը: Ուշագրավ է, որ դրա ընդունման հաջորդ իսկ օրը՝ ապրիլի 24-ին, թուրքական կառավարական շրջաններին մոտ կանգնած “Sabah” թերթում տպագրվում է (հայտնի ձևակերպմամբ՝ նախաբանում վկայակոչելով իրենց մոտ կանգնած արտգործնախարարության հավաստի աղբյուրները՝ պարզվեց, որ...) «Ճանապարհային քարտեզի» 5 կետից բաղկացած մի փաստաթուղթ:

Հրապարակված կետերից երկուսը մեզ լուրջ խորհելու տեղիք են տալիս: Առաջին կետի համաձայն՝ Հայաստանը պետք է ճանաչի Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի և Ռուսաստանի միջև 1921թ. կնքված Կարսի պայմանագիրը: Համաձայն երկրորդ կետի՝ Հայաստանն ու Թուրքիան պետք է պատմաբանների համատեղ հանձնաժողով ստեղծեն՝ «ցեղասպանության մեղադրանքները ուսումնասիրելու համար»: ՀՀ-ի կողմից Կարսի պայմանագրի ռատիֆիկացիայի հնարավոր հետևանքների մասին արդեն իսկ ասվել է: Ինչ վերաբերում է պատմաբանների համատեղ հանձնաժողով ստեղծելու գաղափարին, ապա, կարծում եմ, խնդրո առարկայի շուրջ քաղաքականություն իրականացնելիս մեր դիվանագետները պետք է առանձնահատուկ շեշտադրեն, որ Հայոց ցեղասպանությունն արդեն ճանաչել են աշխարհի 20 երկրներ, այդ թվում՝ նաև Ռուսաստանի Դաշնությունն ու Ֆրանսիան:

Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա հարկ է որպես զորեղ կռվան օգտագործել հետևյալ հանգամանքը. 2007 թ. հունվարի 30-ին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի կոնգրեսականներ Շիֆը, Ռադանովիչը, Փալոնը, Նոլենբերգը, Շերմանը և Մակոտերը արտաքին հարաբերությունների կոմիտե էին ներկայացրել բանաձև, որը հաստատում էր ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության վերաբերյալ առկա փաստաթղթերի ռեեստրը: Այդ փաստաթուղթն էլ կազմեց 110-րդ գումարման Կոնգրեսի № 106 բանաձևի առանցքը: Այդ բանաձևում բերված էին ԱՄՆ նախագահների, Կոնգրեսի նախկինում ընդունած բանաձևերից մեջբերումներ, որոնցում ուղղակիորեն հիշատակվում էին

1500000 հայերի ցեղասպանության կամ ոչնչացման փաստերը: Օրինակ, փաստաթուղթ, որտեղ մասնավորապես բերված են 1981թ. ապրիլի 22-ին ԱՄՆ նախագահ Ռոնալդ Ռեյգանի ուղերձից (ելույթ 4838) մեջբերում, ուր նա ասում է. «Ինչպես առաջներում իրագործված Հայերի ցեղասպանությունը, և ինչպես ուրիշ շատ այլ փաստեր ուրիշ շատ ժողովուրդների հետապնդման, «Հոլոքոստը» երբեք չպետք է մոռացվի»:

Խոսուն փաստ է նաև ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի թիվ 148 համատեղ բանաձևը՝ ընդունված 1975 թ. ապրիլի 8-ին, որով որոշվել է՝ «Սույնով 1975 թ. ապրիլի 24-ը նշանակվել է որպես «Մարդու նկատմամբ մարդու կողմից անմարդկայնության Ազգային հիշատակի օր» և Միացյալ Նահանգների նախագահը լիազորված է ելույթ ունենալ պրոկլամացիայով՝ կոչ անելով ԱՄՆ-ի ժողովրդին դիտարկել այդ օրը որպես ցեղասպանության բոլոր զոհերի հիշատակի օր, հատկապես հայկական ծագում ունեցող»:

Հիշատակման արժանի է նաև ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի 1984 թ. ապրիլի 10-ին ընդունած համատեղ բանաձևը, որում ասվում է. «1985 թ. ապրիլի 24-ը սույնով ճանաչվում է որպես «Մարդու նկատմամբ մարդու կողմից անմարդկայնության Ազգային հիշատակի օր» և Միացյալ Նահանգների նախագահը լիազորված է ելույթ ունենալ հայտարարությամբ (պրոկլամացիայով)՝ կոչ անելով ԱՄՆ-ի ողջ ժողովրդին այդ օրը դիտարկել որպես ցեղասպանության բոլոր զոհերի հիշատակի օր, հատկապես մեկուկես միլիոն հայկական ծագում ունեցող մարդկանց»:

Այս և բազմաթիվ այլ երկրների կողմից ընդունված նման փաստաթղթերը պարտավորեցնում են հայ դիվանագիտությանը, բարձրագույն իշխանություններին լինել շատ զգոն: Մենք իրավունք չունենք վիրավորել Միացյալ Նահանգների լավագույն նախագահներից մեկի՝ Ռոնալդ Ռեյգանի հիշատակը, նախագահ, որն առաջին անգամ հնչեցրեց Հայոց ցեղասպանության փաստը, ինչպես նաև չենք կարող վիրավորել ԱՄՆ ավելի քան 40 նահանգների ժողովրդին, որոնք նույնպես պաշտոնապես ընդունել են Հայոց ցեղասպանության փաստը: Մենք չենք կարող ցավ պատճառել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների կառավարություններին ու ժողովուրդներին, որոնք, ինչպես վերը նշվել էր, նույնպես պաշտոնապես ճանաչել են 1915 թ. Հայոց ցեղասպանությունը: Էլ չեմ ասում, որ անարդար կլինի մեր կողմից վիրավորել ավստրալացիներին, որոնք մեկ շաբաթ առաջ պաշտոնապես ճանաչեցին Հայոց ցեղասպանությունը:

Այնպես որ, մենք պետք է խնդիր դնենք վերածնակերպել պատմաբանների հանձնաժողով ստեղծելու թուրքական կողմի պահանջը՝ պատրաստակամություն հայտնելով թուրքական իշխանություններին տրամադրել Հայաստանի Հանրապետության տրամադրության տակ գտնվող բոլոր փաստաթղթերը, խնդիր ունենալով օգնել թուրք պետական գործիչներին ու պատմաբաններին՝ վերստին համոզվելու Հայոց ցեղասպանությունը հաստատող անհերքելի ապացույցների մեջ: Առավել ևս կան Հայոց ցեղասպանությանը վերաբերող ամերիկյան ու եվրոպական արխիվներում եղած փաստաթղթերի հիման վրա կատարված գիտական ֆունդամենտալ հետազոտու-

թյուններ, մասնավորապես, անվանի գիտնականներ Մկրտիչ Ներսիսյանի, Ջոն Կիրակոսյանի, Ստեփան Ստեփանյանի, Հրաչիկ Սիմոնյանի, Վահագն Տատրյանի աշխատությունները:

Ավելին, Հայոց ցեղասպանության փաստը կասկածի տակ դնողներին կարելի կլինի նաև հուշել եվրոպական երկրների արխիվներում, ԱՄՆ Կոնգրեսի գրադարանում պահպանվող սկզբնաղբյուրների ճշգրիտ անվանումները, ականատեսների վկայությունների հասցեները: Կարծում եմ, այսպիսին պետք է լինի խնդրո առարկայի շուրջ մեր արտաքին գործերի նախարարության որդեգրելիք քաղաքականությունը:

Եվ վերջում անդրադառնանք ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի ապրիլի 24-ի ուղերձին: Կարծում եմ, մեր խնդիրն է համապատասխան առիթի դեպքում, հրապարակային ելույթներ ունենալիս շնորհակալություն հայտնել ԱՄՆ նախագահին, որ նա, այնուամենայնիվ, չդրժեց նախընտրական իր խոստումը և երկու անգամ օգտագործեց «Մեծ եղեռն» արտահայտությունը, որը միջազգային իրավունքի լեզվով նույնն է, ինչ ցեղասպանությունը, իսկ հրեա ժողովրդի մոտ «Հոլոքոստը»:

Ավելին, Բարաք Օբաման, ինչպես Թուրքիայում, այնպես էլ ուղերձում վերահաստատեց, որ չի փոխել մի քանի անգամ նախկինում հայտնած իր տեսակետը, այն է՝ 1915 թ. Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրագործվել է Ցեղասպանություն: Յուրաքանչյուր առաջնորդի կողմից արված ցանկացած հայտարարություն պետք է գնահատել քաղաքական այն ֆոնի վրա, երբ դա արվել է:

Արդարացի կլիներ, որ մենք չմոռանանք նախագահ Օբամայի մեկ այլ նախընտրական խոստման մասին ևս: ԱՄՆ նորընտիր նախագահը, ինչպես վերն ասվեց, խոստացել էր մեկ-մեկուկես տարում Իրաքից դուրս բերել ամերիկյան զորքերը: Կրկնեմ, այսօրվա քաղաքական իրողությունների պայմաններում զորքերի դուրսբերման եզակի ճանապարհը Թուրքիայի տարածքով է՝ օգտագործելով թե՛ Միջերկրական ծովի թուրքական նավահանգիստները և թե՛ «Ինջիրլիկ» ռազմական օդանավակայանը: Իրաքին սահմանամերձ Սիրիայի ու Իրանի տարածքներով հասկանալի է, որ ներկա պայմաններում ամերիկյան զորքերի դուրսբերումը բացառվում է: Ինչ վերաբերում է Իրաք-Հորդանան սահմանին, ապա տվյալ ճանապարհն էլ հարմար չէ այդ նպատակի համար: Գիտակցելով այս ամենը՝ եզրակացությունը մեկն է. ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի ապրիլի 24-ի ուղերձն աննախադեպ ազնիվ և բարոյական քայլ էր: Եվ համայն աշխարհի հայերս դա չպետք է ուրանանք: Չէ՞ որ հայերս շնորհակալ քրիստոնյա ազգ ենք...

Հայաստանի Հանրապետությունը թևակոխել է իր նորագույն պատմության, թերևս, ամենաբախտորոշ ու ամենահետաքրքիր ժամանակաշրջանը: Հատկապես արտաքին քաղաքականության ոլորտում ձեռնարկվում են համարձակ, նախաձեռնողական քայլեր: Եվ ստեղծված այս բարդ թե՛ տնտեսական, թե՛ սոցիալական, թե՛ ներքին մտահոգիչ, թե՛ արտաքին վտանգավոր զարգացումների պայմաններում Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանը, համոզված եմ, նոր շունչ կհաղորդի վարվող քաղաքականու-

թյանը՝ նկատի ունենալով բոլոր բնագավառներում բարձր պրոֆեսիոնալիզմի տեր մարդկանց դերակատարության զգալի բարձրացումը: Նման մոտեցումը առավել քան պահանջված է:

Դրան այլընտրանք կլինի այն, որ անգամ իսկ, օրինակ, նախաձեռնողական հայանպաստ արտաքին քաղաքականությունը կարող է չընկալվել, եթե երկրի ներսում չկազմավորվի պրոֆեսիոնալների կուռ բանակ, որն ի զորու կլինի այդ քաղաքականության նրբերանգները դարձնել ժողովրդական ամենալայն զանգվածների սեփականությունը, հպարտության առարկան:

Մյուս կողմից, երկրի ներսում անհրաժեշտ է Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում իրականացնել հակաճգնաժամային այնպիսի քաղաքականություն, որը հավատ կներշնչի մեր մարդկանց, հույս կարթնացնի սեփական ուժերի, ապագայի նկատմամբ:

XXI դարում հաջողության կհասնեն այն ազգերը, այն պետությունները, որտեղ կհաղթանակեն այս և այլ պարզ ճշմարտություններ:

«Հայոց Աշխարհ», 5 -8. V. 2009:

ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԸ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՐՁԱՆՈՒՏՈՒՄ

Երևանի ավագանու ընտրության շուրջ ծավալվող զարգացումները հրամայական են դարձնում վերլուծել քաղաքապետ ընտրվելու հավակնորդներից մեկի՝ Լ. Տեր-Պետրոսյանի քարոզարշավի ուղղվածությունը, որն երևանցիների առօրյա հոգսերի հետ և ոչ մի ընդհանուր եզր չունի ու ամբողջովին վերաբերում է իշխանությունների վարած արտաքին քաղաքականությանը:

Ավա՜ղ, անպտուղ, հետն էլ նրա կողմից պետության համար վտանգավոր փորձեր են արվում նսեմացնել մեր դիվանագիտության բացառիկ համարձակ քայլերը, որոնց շնորհիվ, անկասկած, ճեղքում է արձանագրվել հայ-թուրքական հարաբերությունների հաստատմանն ուղղված գործառույթներում:

Ավելին, բուռն գործունեություն է ծավալվում Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի ժողովրդին, ինչպես նաև աշխարհասփյուռ հայությանը արտաքին հարաբերությունների ոլորտում ակնհայտ դարձած դրական միտումները հրամցնել որպես լուրջ ձախողում, մեր դիվանագիտության «ապիկարության ու պարտության հետևանք»:

Կանխավ կցանկանայի նշել, որ այս հոդվածի կառուցվածքը, բերվող գնահատականները խիստ համահունչ են մատենադարանամերձ հրապարակում մայիսի 15-ի հանրահավաքում ԼՏՊ-ի ունեցած ելույթի դրույթներին:

Այո, թեև համահունչ են, բայց, արդարության առաջ չմեղանչելու համար, նշենք՝ մի տարբերությամբ. բերված գնահատականների ու ձևակերպումների թիրախը (վարչապետ Տիգրան Սարգսյանի ականջը կանչի, իր սիրած խոսքն օգտագործելու համար) ոչ թե մեր իշխանություններն են, այլ ճիշտ և ճիշտ ինքը՝ մեր «հերոսը», Լ. Տեր-Պետրոսյանը: Նման մոտեցում որդեգրելու պատճառները երկուսն են:

Առաջին. լևոնիզացիայի զոհը դարձած թվով ոչ քիչ մեր հայրենակիցների շրջանում փարատել այն թյուր մտայնությունը, ըստ որի ես ի սկզբանե մերժում եմ Տեր-Պետրոսյանը կողմից հնչեցրած ցանկացած մոտեցում կամ միտք, ելույթներում տրված գնահատական և դրույթ:

Երկրորդ. չթվա, թե անտեսվում են նրա կողմից անհատական կենսաթոշակի արժանացած, մասնագիտական անբանության հետևանքով ձախողված, զանազան անդեմ նախկին պաշտոնյաներ, աշոտսարգսյաններ, որոնք պարբերաբար վայրահաչում են իմ հասցեին և նման քստմնելի աշխատանք կատարելով վաստակում օրվա լափը:

Քավ լիցի, մտահոգությունս պայմանավորված չէ անձերով, այլ վերաբերում է մեր պետականության համար վտանգավոր դարձած նրանց գործունեությանը: Եվ, այսպես, ամենայն խոհեմությամբ, ինչպես կասեր Տիգրան Կարապետիչը՝ «առաջնորդվելով սիրով մերձավորի նկատմամբ», վերլուծենք ԼՏՊ-ի մայիսի 15-ի ելույթը:

ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Հայ-թուրքական հաշտեցմանն ուղղված մեր իշխանությունների վարած առավել քան հաջողված նախաձեռնողական քաղաքականությունը, չգիտես ինչ հիմնավորմամբ, ըստ Լևոնի, հանգեցրեց նրան, որ «նախորդ հանրահավաքից հետո, մենք ականատեսը եղանք երեք անսպասելի և ուշագրավ իրադարձությունների, որոնք անհնար է շրջանցել»:

Այո, այս պարագայում կարելի է համաձայնել ելույթում հնչած «երեք» թվի հետ, երբ բնութագրում ես վերջին շրջանի արտաքին քաղաքական զարգացումները: Սակայն հայ-թուրքական հարաբերություններում ընթացող պրոցեսները և ոչ մի աղերս չունեն Լևոնի գնահատականների հետ: Ըստ իս, արդարացի կլինի, եթե խոսքը գնա հետևյալի մասին:

1. Հայաստանի իշխանությունները սեփական նախաձեռնությամբ միանգամայն կշռադատված որոշում կայացրին, երբ հրաժարվեցին մասնակցել Վրաստանում անցկացվող ՆԱՏՕ-ի զորավարժություններին: Դա սիմետրիկ պատասխան էր ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յաապ դե Հոոպ Սխեֆերի այն հայտարարությանը, որը նա արել էր զորավարժությունների մեկնարկից մի քանի օր առաջ Իլհամ Ալիևի Բրյուսել կատարած պաշտոնական այցի արդյունքների ամփոփման կապակցությամբ հրավիրված մամուլի ասուլիսում: ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը հայտարարել էր, որ ճանաչում է Ադրբեջանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը՝ նկատի ունենալով նաև Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղը:

Հայաստանի իշխանությունների ընդունած որոշումը՝ չմասնակցել զորավարժություններին, թերևս, նուրբ նախազգուշացում էր այդ հեղինակավոր կառույցին: Նախազգուշացում՝ հարգել Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման շուրջ 2007 թ. նոյեմբերի 29-ին ԵԱՀԿ անդամ-երկրների արտաքին գործերի նախարարների խորհրդի XV նիստի շրջանակում Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների (Մինսկի խմբի համանախագահների մասնակցությամբ) բանակցությունների արդյունքում Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ուղղությամբ Մադրիդյան սկզբունքներ անվանմամբ ձեռքբերված պայմանավորվածությունները: Դրանց հիմնարար դրույթները, ինչպես քանիցս պաշտոնապես հայտարարել են թե՛ համանախագահողները, թե՛ մեր իշխանությունները, խարսխված են երեք սկզբունքների միաժամանակյա համադրման վրա, որոնք դրված են ԼՂ-ի հիմնահարցի կարգավորման հիմքում: Դրանք միջազգային իրավունքի հետևյալ նորմերն են՝ տարածքային ամբողջականության, ազգերի ինքնորոշման և ուժի կիրառման բացառումը:

2. Երիցս ճշմարիտ է Լևոնը, երբ հանրահավաքում ունեցած ելույթում ասում էր. «Լեռնային Ղարաբաղում, ամենավերին մակարդակով և, անշուշտ, Հայաստանի իշխանությունների հավանությամբ, սկսվեց լուրջ (սակայն ոչ թե ըստ Լևոնի թվացող - *Ա.Գ.*) շարժում՝ ԼՂՀ-ն հակամարտության լիիրավ կողմ ճանաչելու, այսինքն՝ ԵԱՀԿ-ի բուդապեշտյան գագաթաժողովի որոշմամբ սահմանված կարգավիճակը վերականգնելու ուղղությամբ»:

Այո, վերջերս Լեռնային Ղարաբաղում ընթացող գործառույթները տեղի են ունեցել ճիշտ ժամանակին և եղել են խիստ պահանջված: Խոսքը վերաբերում է ԼՂ-ի Ազգային ժողովում ընթացող զարգացումներին, արտաքին գործերի նախարարի ու ինքնապաշտպանության բանակի հրամանատարի հավասարակշռված և միաժամանակ էլ կոշտ հայտարարություններին: Կարծում եմ, որ ԼՂՀ-ում ընթացող վերջին զարգացումներին Արցախում տրված պաշտոնական գնահատականները կսթափեցնեն ագրեսիվ հայտարարություններով հանդես եկող ադրբեջանա-թուրքական առանձին պաշտոնյաներին, ինչպես նաև նրանց թիկունքում կանգնած միջազգային տարբեր կառույցներում ծվարած երկրպագուներին: Ավելին, նրանց անպայմանորեն կհուշեն որոշ պարզ ճշմարտություններ:

Առաջին. Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը և իշխանությունները, դրսևորելով լայնախոհություն, վերջին 10 տարիների ընթացքում, ըստ էության, ոչ իրենց կամքով, պատվիրակել էին, որ միջազգային ատյաններում Արցախի շահերը ներկայացնեն ու պաշտպանեն Հայաստանի Հանրապետության իշխանությունները: Դա մեծապես պայմանավորված է եղել այն իրողությամբ, որ ՀՀ ղեկավարները միջազգային ամենահեղինակավոր կազմակերպությունների ամբիոններից մշտապես հնչեցրել են ԼՂՀ-ի հակամարտության հիմնարար երեք սկզբունքներին հավատարիմ լինելու անկոտրում վճռականությունը:

Այդ սկզբունքներն են՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ Ադրբեջանին մաս կազմելու անգամ իսկ գաղափարի բացառումը: Ապա, միջազգային հեղինակավոր կազմակերպությունների և հզոր երկրների կողմից փաստաթղթերով ամրագրված երաշխիքները՝ Լեռնային Ղարաբաղի սահմանի ամբողջ երկայնքով ապահովել անվտանգությունը և սահմանի անսասանությունը: Եվ, վերջապես, երաշխավորել Լեռնային Ղարաբաղի ու Հայաստանի Հանրապետությունների միջև ցամաքային կապն ու դրա անվտանգության ապահովումը:

Երկրորդ. Լեռնային Ղարաբաղի իշխանությունների հայտարարությունները թուրք-ադրբեջանական պաշտոնյաներին, ինչպես նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրներին, ասես թե, հուշեցին, որ ԼՂՀ հակամարտության շուրջ ընթացող բանակցություններում իրենք կպաշտպանեն Նախագահ Սերժ Սարգսյանի կողմից բազմիցս հնչեցված, այդ թվում՝ 2006 թ. դեկտեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի ամբիոնից վերը հիշատակված երեք սկզբունքների կենսագործման ուղղությամբ ձեռնարկվելիք բոլոր քայլերը:

Այս ամենը մեկ բան է նշանակում. բանակցային գործընթացի նման ուղղվածությունից ցանկացած շեղում, որն ամեն գնով փորձում է իրականացնել ադրբեջանա-թուրքական կողմը, հարցի կարգավորումը հետ կշպրտի նվազագույնը 11 տարով: Ըստ որում, բանակցությունները կվերադառնան իրենց բնականոն հունը. փաստացի կունենանք հակամարտության երկու հիմնական կողմ՝ Ադրբեջանի Հանրապետություն - Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, որոնց միջև էլ պետք է ընթանան բանակցություններ: Իսկ Հայաստանի Հանրապետությունն էլ կստանձնի ԼՂՀ-ի անվտանգության ապահովության երաշխավորի առաքելությունը: Ժամանակն է, որ այս պարզ ճշմարտությունը ընկալեն բանակցային բոլոր կողմերը:

Երրորդ. Լեռնային Ղարաբաղի թե՛ քաղաքական ընտրանին, թե՛ ողջ ժողովուրդը քաջատեղյակ են Կոսովոյի, Հարավային Օսիայի ու Աբխազիայի անկախության ճանաչմանը նախորդած գործընթացներին, անկախության ճանաչման օգտին բերված հիմնավորումներին: Եվ այդ ամենին իրազեկ լինելու հանգամանքը համոզմունք է ներշնչում արցախահայությանը, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության ճանաչումն անխուսափելի է:

Դրա հիմքում դրված է այն, որ Արցախի անկախության օգտին առկա հիմնավորումները միջազգային իրավունքի նորմերի կիրառման տեսակետից անխոցելի են, առավել ևս շահեկան են վերը նշված նախադեպերի համեմատությամբ: Ուստի, ԼՂՀ-ի իշխանություններն այդ իրողության իրավաբանական վավերացումը խոհեմաբար թողել են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահի երկրների որոշմանը:

Հավատարիմ մնալով Լ. Տեր-Պետրոսյանի ճառի կառուցվածքին՝ անդրադառնանք «Իրադարձությունների զարգացումը» գլխի հաջորդ կետին:

«3. Մայիսի 7-ին Պրահայում, Ադրբեջանի նախագահի հետ լարված մթնոլորտում անցած հանդիպման ժամանակ,– ինչպես արդարացիորեն ասել էր ԼՏՊ-ն, – Սերժ Սարգսյանը կոշտացրեց իր դիրքորոշումը հակամարտության կարգավորման խնդրում»:

Հիացմունք է առաջացնում ԼՏՊ-ի մեծահոգության հերթական այն դրսևորումը, երբ նա, շարունակելով խոսքը, հայտնում է իր մտահոգությունն առ այն, որ Մինսկի խմբի համանախագահները խնդրո առարկայի շուրջ պրահյան հանդիպումից հետո դրսևորեցին սին լավատեսություն, ինչի մասին էլ, ըստ հռետորի, «վկայում են թուրքական և ադրբեջանական լրատվամիջոցները, իսկ ավելի հստակորեն՝ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Բեռնար Քուշները»:

Ախր, շա՛տ է հոգատար մեր Լևոնը. հիմա էլ մարդը դարդ է անում համանախագահողների համար, որից հետո մեծահոգաբար փորձում է բացատրել...

Ի՞ՆՉ Է ՍԱ ՆՇԱՆԱԿՈՒՄ

«Կամ ինչո՞վ բացատրել Հայաստանի, ավելի ճիշտ՝ Սերժ Սարգսյանի այս կտրուկ քայլերը»,- կրկին տագնապում է ԼՏՊ-ն: Իրականում տերպետրոսյանական անհանգստությունը ոչ մի կապ չունի Սերժ Սարգսյանի այդ կտրվածքով գործունեության հետ: Պարզապես Լևոնը շվարել է այն իրողությունից, որ հայկական կողմին հաջողվել է հայ-թուրքական բանակցային գործընթացում վարել այնպիսի քաղաքականություն, որի արդյունքում մայիսի 7-ին Չեխիայի մայրաքաղաքում տեղի ունեցած հայ-թուրքական բարձր մակարդակի (Սերժ Սարգսյան - Աբդուլլահ Գյուլ) հանդիպման ընթացքում համաձայնություն է կայացվել «հարգել նախկինում ձեռքբերված բոլոր պայմանավորվածությունները և առաջ շարժվել հայ-թուրքական հարաբերություններն առանց նախապայմանների և ողջամիտ ժամկետներում կարգավորելու ուղղությամբ»:

Ախր, ինչպե՞ս չմտահոգվի Լևոնը, երբ այդ հայտարարությունից օրեր անց, մայիսի 13-14-ին Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը Բաքու կատարած պաշտոնական այցի ժամանակ, ելույթ ունենալով Ադրբեջանի Մեջլիսում, հայտարարել էր. «Թուրքիան Հայաստանի հետ սահմանը չի բացի մինչև չլուծվի Լեռնային Ղարաբաղի հարցը»: Ապա ավելացրել էր, որ Երևանի հետ հարաբերությունների կարգավորումը «չի սասանի Թուրքիայի հետաքրքրությունը Ադրբեջանի նկատմամբ»: Այլ կերպ ասած՝ իր այս ձևակերպումներով վարչապետը, ըստ էության, հարցականի տակ էր դրել նախագահ Գյուլի մեկ շաբաթ առաջ Պրահայում արած վերը նշված հայտարարությունը՝ «առանց նախապայմանների և ողջամիտ ժամկետներում» կարգավորելու հայ-թուրքական հարաբերությունները:

Լևոնի՝ «ջղաձգություններ չեն հիշեցնում կամ քաղաքական դեմարշի տպավորություն չեն թողնում» ձևակերպումը, որը նա հասցեագրել էր Սերժ Սարգսյանին, արդյո՞ք այս համատեքստում ավելի ճշմարտացի չէր բնութագրի Թուրքիայի «Արդարություն և զարգացում» իշխող կուսակցության երկու առաջնորդների վարքագիծը, որոնք յոթ օրերի ընթացքում հանդես եկան վերը հիշատակված իրարամերժ հայտարարություններով: Այս ամենի մասին թող խորհի նույն ինքը՝ Լևոնը, ինչպես նաև իրեն հարց տա՝ Թուրքիայի ղեկավարների նման պահվածքը միգուցե հայ դիվանագիտության ճշգրիտ հաշվարկի արդյունքում կատարված գործողությունների տրամաբանական հետևա՞նքն է:

Կարծում եմ, այս պարագայում տեղին կլիներ օգտագործել Լևոնի ձևակերպումները ու նշել, որ նման զավեշտալի վիճակում թուրքական ղեկավարության հայտնվելու պատճառն այն է, որ վերջիններս «իրենց Ամերիկայի կողմից խաբված են զգում»: Քանի որ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման Թուրքիա կատարած այցի ժամանակ հրապարակավ հայտարարել էր, որ հավատարիմ է մնում 1915 թ. Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ կատար-

ված ոճրագործության կապակցությամբ իր հայտնած տեսակետին, ըստ որի կատարվածը որակվել էր որպես ցեղասպանություն՝ անգամ իսկ նախագահական ընտրապայքարի ընթացքում:

Ավելին, նախագահ Օբաման Թուրքիա կատարած իր պաշտոնական այցով, ըստ էության, մի կողմից շատ կարևորել էր Թուրքիայի նշանակությունը ԱՄՆ-ի համար, մյուս կողմից էլ, դա չխոչընդոտեց ապրիլի 24-ի իր ուղերձում երկու անգամ շեշտել «Մեծ եղեռն» բնութագրումը՝ միաժամանակ վերահաստատելով խնդրո առարկայի շուրջ սեփական հայտնի տեսակետը:

Թուրքական իշխանությունների դյուրագրգիռ դրսևորումների շարունակականությանը, անշուշտ, կնպաստեն նաև ս. թ. ապրիլի 29-ին Նախագահ Սերժ Սարգսյանի ստորագրած հրամանագրերը: Մասնավորապես, Հայոց ցեղասպանության ուսումնասիրության գործում ներդրած նշանակալի գիտական ավանդի համար Վահագն Տատրյանը (ԱՄՆ) և Վոլֆգանգ Գուստը (Գերմանիա)՝ Հայոց ցեղասպանությանն առնչվող գերմանական արխիվային փաստաթղթերը գիտական շրջանառության մեջ դնելու ու մեկնաբանելու համար արժանացել են Հանրապետության Նախագահի 2008 թ. մրցանակների:

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործում Հայաստանի իշխանությունների կողմից առանց նախապայմանների Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման ու սահմանի բացմանն ուղղված սկզբունքային և բաց քաղաքականությունը բացահայտեցին թուրքական կողմի իրական նպատակը: Այն է՝ գեթ մեկ տարով էլ հետաձգել, ցանկացած գնով խոչընդոտել ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման հարցը՝ տպավորություն ստեղծելով, որ դա կարող է արգելակել երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների ու սահմանի բացման արդեն իսկ հասունացած խնդրի լուծումը:

Թուրքական դիվանագիտությունն այս հարցում կարծես թե ճաքեր տվեց: Նման եզրակացություն անելու համար հիմք է հանդիսանում օրերս ԱՄՆ-ի պետքարտուղար Հիլարի Քլինթոնի՝ Սերժ Սարգսյանին ուղղած նամակը, որում վերահաստատվել է ԱՄՆ-ի պատրաստակամությունը՝ հետևողականորեն զորավիգ լինելու ինչպես հայ-թուրքական հարաբերությունների լիակատար կարգավորմանը, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ուղղությամբ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում տարվող միջնորդական աշխատանքներին:

Ասել կուզի, որ ԼՏՊ-ի բարոյախոսությունը՝ ուղղված երկրի Նախագահին, որ «զայրույթը և նմանատիպ այլ զգացմունքային հակազդեցությունները ոչ միայն ամենևին չեն նպաստում գործած սխալների շտկմանը, այլև նորանոր սխալների պատճառ են դառնում», Հիլարի Քլինթոնի նամակից հետո միարժեքորեն կարելի է վերագրել ոչ թե Սերժ Սարգսյանին, այլ թուրքական ու ադրբեջանական իշխանություններին: Ինքնին հասկանալի է, թե ինչու. սխալ քաղաքականություն վարող երկրին ԱՄՆ պետքարտուղարը «զորավիգ» չէր լինի:

Այնպես որ, ԼՏՊ-ն իր սպասումների մեջ երեխայի պես խաբված է իրեն զգում և նրա հուսահատությունն ու զայրույթը միանգամայն «հասկանալի մարդկային զգացումներ են»: Մինչդեռ ԼՏՊ-ն, հայտնվելով այսքան ողորմելի վիճակում, թերևս, չպետք է հուսահատվի. չէ՞ որ իր նամակում Հիլարի Քլինթոնը կարևորել է նաև Երևանի ավագանու առաջիկա ընտրությունները նույնպես, նշելով, որ դրանց ազատ ու արդար անցկացումը «հնարավորություն է նորովի դրսևորելու հավատարմությունը ժողովրդավարական սկզբունքների հանդեպ»:

ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ ԱՐԵՎՄՈՒՏՔԻՆ

Միամիտ պետք է լինել կարծելու համար, թե Արևմուտքն անպատասխան է թողնելու մայիսի 15-ի հանրահավաքում իր նկատմամբ ԼՏՊ-ի կատարած դեմարշը:

1. ԼՏՊ-ն հանրահավաքում հայտարարելով, որ «Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովը (ԵԽԽՎ) անսպասելիորեն որոշեց իր հունիսյան նստաշրջանում կրկին քննարկման դնել ժողովրդավարության և մարդու իրավունքների բնագավառում Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարման հարցը», ըստ էության, շատ լուրջ մեղադրանք է ներկայացնում ԵԽԽՎ-ին: Փաստորեն, նա Եվրախորհրդին ամբաստանում է Թուրքիայի և Ադրբեջանի կողմից աշխատանքի վարձահրավերն ընդունելու մեջ:

2. Պակաս ծանր վիրավորանք չի հասցնում ԼՏՊ-ն նաև ԱՄՆ-ի կառավարությանը, նշելով, որ «2010 թ. բյուջեի նախագծով, նախատեսված է շուրջ 40%-ով կրճատել Հայաստանին հատկացվող ֆինանսական օգնությունը, դադարեցնել ԼՂՀ-ին հատկացվող հումանիտար օգնությունը»: Այս պնդումով ԼՏՊ-ն կասկածի տակ է վերցնում ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի վերը նշված հարցերի շուրջ Հայաստանին զորավիգ լինելու պատրաստակամության անկեղծությունը:

Եվ ամենևին էլ պատահական չէր, որ տերպետրոսյանական մամուլի խնդրո առարկայի շուրջ մեկնաբանություններին («Հայկական ժամանակ», «Չորրորդ իշխանություն», 09.05.2009 թ.) անմիջապես արձագանքեց Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դեսպան Մարի Յովանովիչը:

3. Եվ, վերջապես, հանրահավաքի իր ելույթում ԼՏՊ-ն, որպես Արևմուտքի պատասխան «Սերժ Սարգսյանի դեմարշին», հղում կատարելով «Ժամանակ» թերթին (08.05.2009 թ.), բարձրաձայնեց, որ «Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանը սպառնաց օգտվելով իր երկրի՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ լինելու հանգամանքից, ջանքեր գործադրել՝ այդ ատյանում Հայաստանը օկուպանտ-երկիր ճանաչելու ուղղությամբ»:

Դրանով իսկ Լևոնը սեփական կամքին հակառակ, ըստ էության, անհարմար վիճակի մեջ է գցում նույն Էրդողանին: Եվ ահա թե ինչո՞ւ: ՄԱԿ-ի Անվ-

տանգության խորհրդի երեք մշտական ներկայացուցիչ երկրները՝ Ռուսաստանի Դաշնությունը, Ամերիկայի Միացյալ Նահանգները և Ֆրանսիան, միաժամանակ հանդիսանալով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ, պարբերաբար հրապարակավ հայտարարել են, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցը պետք է լուծում գտնի ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում: Այլ կերպ ասած՝ ԼՏՊ-ն իր վերը նշված դրույթով Թուրքիայի վարչապետին հակադրում է ԱՄՆ-ին, Ռուսաստանին և Ֆրանսիային: Կարծում եմ, որ ստեղծված այս իրավիճակում, եթե անգամ իսկ խնդիրներ հարուցվեն, ապա դրանք կշրջանցեն Հայաստանի Հանրապետությունը:

Մի՞թե այս պարզ ճշմարտությունները ԼՏՊ-ն չի հասկանում, երբ իր ելույթում պնդում է, որ «նշված խստություններն, ըստ որում, ուղղված են ոչ թե Սերժ Սարգսյանի, այլ Հայաստանի ու նրա ժողովրդի դեմ»:

Վերլուծելով ԼՏՊ-ի՝ «Արևմուտքի պատասխանները Սերժ Սարգսյանի դեմարշին» ենթավերնագրի ներքո շարադրված նյութը, հանգում ենք շատ ուշագրավ հետևությունների:

Այն, որ ԼՏՊ-ն ու իր թիմակիցների ճնշող մեծամասնությունը ռուսատյաց են, քաջ հայտնի է մեր հանրությանը. բավական է պարբերաբար ընթերցել տերպետրոսյանական մամուլը: Սակայն նորություն կարելի է համարել Լևոնի չարությունը Արևմուտքի հանդեպ, որը, ճիշտ է, քողարկված, բայց ակնհայտ է դառնում հանրահավաքում ունեցած նրա ելույթը ուշադիր կարդալու պարագայում:

2008 թ. նախագահական ընտրություններում ձախողվելուց հետո, կարծում եմ, Հանրապետության առաջին Նախագահին հարիր չէր դրսևորել պետության հիմքերի խարխլմանն ուղղված գործողություններ այս ճակատագրական ժամանակներում: Երկրի թեկուզև նախկին Նախագահը պետք է հետևեր սեփական իսկ խոսքերին, այն է՝ «ցանկացած իրավիճակում պետության ղեկավարից պահանջվում է լիակատար սառնասրտություն և պահի թելադրանքին չենթարկվելու կամ հապշտապ ու չհաշվարկված որոշումներ չկայացնելու անհրաժեշտ կարողություն», առավել ևս՝ ձեռնպահ մնար ամբախ-զամբախ ելույթներ ունենալու գայթակղությունից:

Ո՞ՐՆ Է ԵԼՔԸ

ԼՏՊ-ն ունի իր համար ստեղծված փակուղային վիճակից դուրս գալու երկու ճանապարհ.

1. Երևանի քաղաքապետի թեկնածու Լ. Տեր-Պետրոսյանին (արդարության առաջ չմեղանչելու համար նշեմ և ոչ միայն նրան, այլև քաղաքապետի մյուս հավակնորդներին) խորհուրդ կտայի նեղություն քաշել ու կարդալ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքը: Եթե նրանք ժամանակի սղության պատճառով հնարավորություն չունեն օրենքը ամբողջությամբ կարդալ, ապա գոնե ծանոթանան օրենքի երկրորդ էջում

տպագրված «Տարածքային կառավարումը Երևանում» հոդված 9-ի բովանդակությանը, որտեղ հստակ գրված է. «1. Տարածքային կառավարումը Երևանում իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունը (նախարար Արմեն Գևորգյան - *Ա.Գ.*): 2. Կառավարության որոշմամբ Երևանում տարածքային կառավարման որոշակի գործառույթներ կարող են փոխանցվել գործադիր իշխանության հանրապետական այլ մարմինների»:

Կարծում եմ, օրենքով սահմանված այս դրույթը կհուշի Երևանի ընտրողներին նորովի ընկալել Երևանի ավագանու անդամի ու քաղաքապետի պաշտոնին հավակնող գործիչների «պայծառատեսական» ելույթները կամ տիեզերական խոստումներ շռայլողների ելույթները:

Անտարակույս, ընտրողները սխալված չեն լինի, եթե դրանք համադրեն Նախագահ Սերժ Սարգսյանի նախընտրական ծրագրում ներառված դրույթների հետ: Ինչո՞ւ, որովհետև երբ Ազգային ժողովի կողմից հաստատվում էր կառավարության ծրագիրը, արձանագրվեց, որ այն նպատակամղվելու է Հանրապետության Նախագահի ծրագրերի կենսագործմանը: Երևանի նորընտիր ավագանին և քաղաքապետն էլ, ղեկավարվելով տարածքային կառավարման նախարարության կողմից, ըստ էության, նույնպես ձեռնամուխ են լինելու այդ ծրագրերի իրագործմանը:

2. Խոստովանելով Երևան քաղաքի առջև կանգնած խնդիրների հաղթահարման գործում դրսևորած սեփական ապիկարությունը, որը բացահայտ դարձավ ընտրապայքարի այս օրերին, ԼՏՊ-ն պետք է ընդունի եզակի ճիշտ որոշում՝ պատվով դուրս գալ Երևանի ավագանու ընտրապայքարից ու հեռանալ քաղաքականությունից:

Քաղաքականությունը Լևոնի համար ոչ թե պատասխանատվություն է, այլ մարդկանց մեջ ատելություն, թշնամանք սերմանելու զբաղմունք, ամեն գնով ազգը կոնսոլիդացնելու ճանապարհին պատնեշ ստեղծելու միջոց:

«Հայոց Աշխարհ», 19-21. V. 2009:

ЛЕВОН ТЕР-ПЕТРОСЯН В ПУЧИНЕ ГЕОПОЛИТИЧЕСКИХ КОНФЛИКТОВ И ВЫБОРОВ В СОВЕТ СТАРЕЙШИН Г. ЕРЕВАНА

В преддверии выборов в Совет старейшин было бы уместно обратиться к вопросам, касающимся местного и территориального управления столицы в свете Закона РА “О самоуправлении в г. Ереване”. Но развитие событий вокруг выборов в Совет старейшин Еревана актуализирует необходимость обращения к предвыборной агитации одного из кандидатов — Левона Тер-Петросяна. Агитации, не имеющей ничего общего с насущными проблемами ереванцев и полностью сконцентрированной на критике внешней политики, проводимой властями республики. Тем самым предпринимаются бесплодные, но, увы, вместе с тем опасные для государства попытки принизить беспрецедентно смелые шаги нашей дипломатии, благодаря которым, несомненно, наметились сдвиги в армяно-турецких отношениях. Более того, разворачивается бурная деятельность по представлению положительных перемен во внешней политике в качестве серьезного провала и “последствий бессилия” нашей дипломатии.

Прежде всего, хотелось бы отметить, что структура данной статьи и содержащиеся в ней оценки строго идентичны оценкам и положениям, прозвучавшим в выступлении ЛТП на митинге у Матенадарана, состоявшемся 15 мая с. г. С той только разницей, что главным фигурантом приводимых оценок и формулировок являются не власть предержащие, а никто иной как сам наш “герой” — Левон Тер-Петросян. На то имеются две причины. Во-первых, развеять у немалой части соотечественников, ставших жертвами левонизации, заблуждение в том, что я изначально отвергаю любую мысль или оценку, озвучиваемую Левоном в его выступлениях. Во-вторых, пусть ни у кого не складывается ложное впечатление, что мною игнорируются различные безликие чиновники, разного рода ашотсаркисяны, которые в свое время будучи марзпетами провалили работу в результате профессиональной негодности и бездеятельности, а затем удостоились персональной пенсии со стороны Левона, сегодня же периодически пустозвонят и злословят в мой адрес, таким образом выражают свое подобострастие своему боссу, заодно зарабатывают ежедневную похлебку. Но, боже упаси, мое беспокойство связано не с этими безликими людьми, а с их деятельностью, порой представляющей опасность для страны. Итак, со всем благоразумием и, как сказал бы ссылаясь на Библию Тигран

Карапетыч, “руководствуясь любовью к ближнему”, проанализируем выступление ЛТП, имевшее место 15 мая.

РАЗВИТИЕ СОБЫТИЙ

Более чем успешная политика наших властей, направленная на армяно-турецкое примирение, согласно Левону, привела к тому, что “после предыдущего митинга мы стали свидетелями трех неожиданных и примечательных событий, которые невозможно обойти вниманием”. В данном контексте можно согласиться лишь с упомянутым в выступлении числом “три”, имея ввиду политические события последнего времени, но никак не с дальнейшими его оценками процессов, происходящих в армяно-турецких отношениях. По-моему будет справедливо, если разговор пойдет о следующем.

1. Власти Армении приняли весьма взвешенное решение, когда по собственной инициативе воздержались от участия в проводимых в Грузии военных учениях НАТО. Это был симметричный ответ на заявление Генерального секретаря НАТО Яаапа де Хооп Схеффера, который в ходе официального визита Ильхама Алиева в Брюссель за несколько дней до начала учений на пресс-конференции заявил, что признает территориальную целостность Азербайджана, имея ввиду также и Нагорный Карабах в составе Азербайджана. Решение, принятое властями Армении, своего рода мягкое предупреждение этой авторитетной организации. Месседж уважать договоренности, известные как “Мадридские принципы”. Это договоренности по урегулированию Нагорно-Карабахского конфликта, достигнутые в ходе переговоров министров иностранных дел Армении и Азербайджана 29 ноября 2007 г. в рамках XV сессии Совета министров иностранных дел стран-членов ОБСЕ (с участием сопредседателей Минской группы ОБСЕ). Их основополагающие положения, о чем неоднократно на официальном уровне подчеркивали как наши власти, так и сопредседатели Минской группы ОБСЕ, основаны на одновременном учете трех норм международного права — территориальной целостности, права наций на самоопределение и исключения угрозы применения силы. По поводу опасений Левона о том, что решение о неучастии в учениях НАТО якобы было принято под давлением государств — членов ОДКБ, также не выдерживает никакой критики. Следует напомнить, что в рамках программы НАТО “Партнерство во имя мира” 29 сентября 2008 г. на территории РА были проведены учения Cooperative Longbow/Lancer-2008. Данный факт примечателен еще и тем, что после этих учений НАТО с 5 сентября 2008 г. председательство в ОДКБ перешло к Армении. В качестве напоминания отметим также, что двумя месяцами ранее, 22 июля, в рамках ОДКБ в Армении с успехом прошли маневры “Рубеж-2008”.

2. Трижды прав Левон, говоря в своем выступлении: “В Нагорном Карабахе на самом высоком уровне и, конечно, с одобрения властей Армении начался серь-

езный (а не кажущийся, по Левону) процесс по признанию НКР полноправной стороной переговорного процесса, т.е. по восстановлению установленного согласно решению будапештского саммита ОБСЕ статуса". Да, процессы, идущие в последнее время в НКР, крайне своевременны и востребованы. Речь идет о процессах в парламенте НКР, об уравновешенных и вместе с тем жестких заявлениях министра иностранных дел и командующего Армией самообороны Нагорного Карабаха. Полагаю, официальные оценки, данные последним событиям, прозвучавшие в Арцахе остудят пыл некоторых апшеронских политиков, выступающих с агрессивными заявлениями, равно как стоящих за ними лоббистов из различных международных структур. А также напомнят последним о некоторых простых истинах.

Первая. Карабахский народ, власти НКР в силу сложившихся обстоятельств, в течение последних 10 лет, проявив дальновидность, делегировали властям Армении право представлять и защищать интересы Арцаха в международных структурах. Это во многом было обусловлено тем, что власти РА постоянно с самых авторитетных международных трибун озвучивали свою непреклонную решимость оставаться верными трем вышеотмеченным основополагающим принципам урегулирования карабахского конфликта. Как известно, это - принцип исключения самой идеи признания Нагорного Карабаха составной частью Азербайджана, второй принцип - обеспечение безопасности и нерушимости границ Нагорного Карабаха по всему их периметру. И, наконец, предоставление международных гарантий сухопутного сообщения между НКР и Арменией и обеспечение его безопасности.

Вторая. Прозвучавшие в последние дни заявления властей НКР стали напоминанием о том, что они готовы поддерживать все шаги властей Армении в рамках упомянутых трех принципов, однако, любое отклонение от этих основополагающих принципов переговорного процесса, что пытается осуществить азербайджано-турецкая сторона, может отбросить решение проблемы, по меньшей мере, на 11 лет назад. При этом переговоры вернутся в свое естественное русло. Фактически будут иметь место переговоры между двумя основными сторонами противостояния: Азербайджанской Республикой и Нагорно-Карабахской Республикой. Именно между ними и должны проходить переговоры. В этом раскладе Республика Армения возьмет на себя миссию гаранта обеспечения безопасности НКР. Настало время, чтобы эту простую истину восприняли все стороны переговорного процесса.

Третья. Политической элите Нагорного Карабаха, как и всему народу, хорошо известны процессы и обоснования, предшествующие признанию независимости Косово, Южной Осетии и Абхазии. Данное обстоятельство придает арцахскому армянству уверенность в том, что признание независимости их Родины, неизбежно. В основе этой уверенности лежит то, что с точки зрения применения норм международного права все обоснования в пользу независимости НКР неуязвимы и в сравнении с вышеупомянутыми прецедентами более убедительны. Поэтому правовое обоснование этих реалий власти НКР предусмотрительно оставили на решение го-

сударств — сопредседателей Минской группы ОБСЕ...

Оставаясь верным структуре выступления Левона, вернемся к следующему пункту главы “Развитие событий”.

3. “В ходе встречи с президентом Азербайджана 7 мая в Праге, прошедшей в напряженной атмосфере, — как справедливо заметил ЛТП, — Серж Саргсян ужесточил свою позицию по вопросу урегулирования противостояния”. Вызывает восхищение очередное проявление сердобольности со стороны ЛТП, когда, продолжая свою речь на митинге, он выражает озабоченность по поводу того, что сопредседатели Минской группы ОБСЕ после пражской встречи проявили “пустой” оптимизм, о чем, по словам оратора, “свидетельствуют турецкие и азербайджанские СМИ, а более отчетливо — министр иностранных дел Франции Бернар Кушнер”. Очень уж заботлив наш Левон, когда печется о сопредседателях, пытаясь найти ответ на следующий вопрос...

ЧТО ЭТО ОЗНАЧАЕТ?

“Чем объяснить столь резкие шаги Армении, точнее Сержа Саргсяна?” — вновь тревожится ЛТП. В действительности же тер-петросяновское беспокойство в данном контексте не имеет ни малейшей связи с деятельностью Сержа Саргсяна. Левон попросту не желает признаваться, что ошеломлен тем обстоятельством, что армянской стороне удалось в процессе встречи на высшем уровне Гюль — Саргсян 7 мая в Праге достичь соглашения “об уважении ранее достигнутых договоренностей” и “урегулирования армяно-турецких взаимоотношений без предварительных условий и в разумные сроки”.

Ну как же Левону не беспокоиться, если спустя всего несколько дней, 13-14 мая, во время официального визита в Баку премьер-министр Турции Реджеп Тайип Эрдоган заявил в своем выступлении: “Турция не откроет границу, пока проблема Нагорного Карабаха не будет решена”, добавив, что отношения с Ереваном “не могут повлиять на интересы Турции к Азербайджану”. Иначе говоря, премьер-министр поставил под сомнение заявление президента Турции на Пражском саммите продолжить армяно-турецкие переговоры “без предварительных условий и в разумные сроки”. В этом контексте адресованная Сержу Саргсяну реплика Левона о том, что “его шаги оставляют впечатление судорог или политического демарша”, была бы куда более уместной для характеристики позиций двух лидеров турецкой правящей Партии справедливости и развития, выступавших в течение недели с взаимоисключающими заявлениями. Об этом на досуге пусть поразмышляет сам Левон, а именно: не являются ли подобные заявления турецких лидеров логическим следствием выверенных шагов армянской дипломатии.

Полагаю, что в этом контексте было бы к месту переадресовать Турции и другое определение Левона, констатировав — причина курьезной ситуации, в которой оказалось турецкое руководство, в том, что последние “чувствуют себя обманутыми со стороны США”. Ведь президент США Барак Обама во время своего первого официального визита в Турцию публично заявил о своей приверженности, ранее заявленной им же точке зрения о совершенном в 1915 г. злодеянии в Османской Турции в отношении армян. Бараком Обамой неоднократно в ходе выборной президентской кампании содеянное турками квалифицировалось как геноцид. Более того, с одной стороны, визит американского президента подчеркнул важность Турции для США, а с другой, этот визит не стал препятствием для того, чтобы в президентском послании 24 апреля Барак Обама два раза употребил выражение “Мец егерн”, подчеркнув тем самым неизменность своей позиции. Продолжению дальнейших вспыльчивых выпадов турецких властей, конечно, будут способствовать также и указы президента С.Саргсяна от 29 апреля т. г. В частности, указы о награждении Ваагна Тадряна (США) премией Президента РА за весомый научный вклад в деле изучения Геноцида армян и Вольфганга Густа (Германия) за введение в научное пользование документов германских архивов, свидетельствующих о Геноциде армян в Османской империи. Открытая и принципиальная политика властей Армении в деле установления дипломатических отношений и открытия армяно-турецкой границы без предварительных условий, по сути, спровоцировали турецкую сторону раскрыть свои истинные намерения. В частности, любой ценой хотя бы на год оттянуть официальное признание геноцида армян со стороны США путем формирования такого впечатления, что это может воспрепятствовать установлению дипотношений между двумя странами, равно как уже созревшему решению открытия границ.

Однако, похоже, что турецкая дипломатия в этом вопросе, дала трещину. Основанием для подобного вывода является письмо Госсекретаря США Хиллари Клинтон, адресованное президенту РА Сержу Саргсяну, где говорилось о готовности США оказывать последовательное содействие в полноценном урегулировании армяно-турецких отношений, равно как разрешению карабахской проблемы в рамках Минской группы ОБСЕ. В контексте этого послания нравоучения ЛТП о том, что “гнев и прочие подобные чувства не только не способствуют исправлению сделанных ошибок, но становятся причиной новых”, нужно отнести не к Сержу Саргсяну, а к турецко-азербайджанским властям. По той простой причине, что якобы ошибочной политике, проводимой официальным Ереваном, глава Госдепа не стала бы оказывать поддержку. Так что ЛТП в своих ожиданиях чувствует себя обманутым ребенком, и его разочарование и гнев “вполне понятные человеческие чувства”. Между тем ЛТП оказавшись в столь жалком состоянии, пожалуй, не должен отчаиваться. Ведь в письме, адресованном президенту РА, Хиллари Клинтон придала важное значение также и выборам в Совет старейшин Еревана, отме-

тив их свободное и честное проведение “возможность по-новому проявить верность демократическим принципам”.

ОТВЕТЫ ЛЕВОНА ТЕР-ПЕТРОСЯНА ЗАПАДУ

Нужно быть наивным, полагая, что Запад оставит без внимания демарш ЛТП, имевший место на митинге 15 мая.

1. ЛТП заявив на митинге, что “Парламентская Ассамблея Совета Европы неожиданно решив, что в ходе своей июньской сессии вновь поставит на обсуждение вопрос о ходе исполнения Арменией принятых обязательств по развитию демократии и соблюдению прав человека”, по сути, предъявил Совету Европы серьезное обвинение. Фактически он обвиняет ПАСЕ в ангажированности со стороны Турции и Азербайджана.

2. Не менее тяжелое обвинение предъявляет ЛТП также и правительству США, заявляя на митинге о том, что “по проекту бюджета на 2010г. предусмотрено сокращение финансовой помощи Армении около 40%-ов”. Этим утверждением ЛТП ставит под сомнение искренность заявлений госсекретаря США Хиллари Клинтон о готовности США поддержать Армению в свете вышесказанного. И вовсе не случайно, что на комментарии по данному вопросу в тер-петросяновской прессе (“Айкакан жаманак”, “Чоррорд ишханутюн”, 09.05.2009 г.) незамедлительно отреагировала Чрезвычайный и Полномочный посол США в Армении Мари Йованович, напомнив левоновцам, что “международное содействие Армении началось 20 лет назад, после землетрясения 1988 г., и начиная с этого времени США предоставили гуманитарную помощь более 2 млрд долларов, направленную в экономическую, социальную и управленческую сферы”.

3. Наконец, в своем выступлении ЛТП, ссылаясь на газету “Жаманак” (08.05.2009 г.), заявил: “Премьер- министр Турции Реджеп Тайип Эрдоган, воспользовавшись тем обстоятельством, что его страна в настоящее время представлена в Совете Безопасности ООН (в качестве одного из 10-и непостоянных членов Совета Безопасности ООН - А.Г.) и пригрозил, что может приложить усилия, чтобы Совбез ООН признал Армению государством - оккупантом. По сути, вопреки собственной воле, Левон ставит в неловкое положение того же самого Эрдогана. Иными словами, ЛТП своим высказыванием противопоставляет премьера Турции постоянным членам Совбеза ООН — США, России и Франции, которые, являясь сопредседателями Минской группы ОБСЕ, неоднократно заявляли, что видят разрешение карабахского конфликта в рамках Минской группы. Полагаю, в данной ситуации если даже возникнут проблемы, то они обойдут Республику Армения. Неужто эти простые истины непонятны ЛТП, утверждающему в своем выступлении, что “санкции направлены не против Сержа Саргсяна, а против Армении и армянского народа”.

Анализируя часть выступления ЛТП с подзаголовком “Ответы Запада на демарш Сержа Саргсяна”, можно прийти и к весьма примечательным выводам.

То, что ЛТП и подавляющее большинство его сподвижников являются русофобами – хорошо известно общественности нашей республики. Для этого достаточно лишь пролистать тер-петросяновскую прессу. Однако, неожиданной новостью, а скорее всего казусом можно считать озлобленность Левона по отношению к Западу, на первый взгляд, замаскированную, но отчетливо проявляющую при внимательном прочтении текста его выступления на последнем митинге в Ереване.

После провала на президентских выборах 2008 г. первому президенту третьей республики, думаю, в судьбоносное для страны время не подобало разворачивать деятельность, направленную на расшатывание основ государства. Президенту страны, пусть и бывшему, не к лицу отступать от собственных слов о том, что “в любой ситуации от лидера государства требуется полное хладнокровие, умение не подчиняться требованию момента или принимать непросчитанные скоропалительные решения”. Тем паче стоило бы воздерживаться от соблазна иметь столь нелепые выступления.

ГДЕ ЖЕ ВЫХОД?

ЛТП имеет для себя два выхода из создавшейся тупиковой ситуации.

1. Кандидату в мэры Еревана Левону Тер-Петросяну и, справедливости ради, и другим претендентам на эту должность я бы посоветовал ознакомиться всего лишь с законом РА “О местном самоуправлении города Еревана”. Прочитать придется всего-то 70 страниц. В случае, если из-за дефицита времени у них нет возможности прочитать закон в целом, пусть хотя бы ознакомятся со ст.9 на 2-й странице, где черным по белому написано: “Территориальное управление в Ереване осуществляет Министерство территориального управления РА (министр Армен Геворкян — А. Г.). По решению правительства, определенные функции территориального управления Еревана могут возлагаться на исполнительную власть, другие республиканские органы”.

Полагаю, что данное положение, установленное законом, даст возможность избирателям Еревана по-новому воспринимать “пророческие” выступления левоновцев или во истину космические обещания и других кандидатов в члены Совета старейшин г. Еревана, претендующих на пост мэра столицы. Избиратели, безусловно, не ошибутся, сопоставив их предвыборные обещания с положениями программы президента Сержа Саргсяна.

Учитывая, что, в соответствии с решением Национального Собрания, Правительство РА должно претворять в жизнь предвыборную программу Президента, следует ясно понять, что ее реализация должна быть положена в основу работы новоизбранного Совета старейшин Еревана, Мэра столицы. Еще раз напомню, что

руководство г.Ереваном по закону РА в компетенции Министерства территориального управления.

2. Признав собственное бессилие по выполнению задач, стоящих перед городом Ереваном, ставшее особенно очевидным в ходе текущей предвыборной кампании, ЛТП должен принять единственно правильное для себя решение — с честью отказаться от дальнейшей предвыборной борьбы в Совет старейшин и удалиться из политики. Ибо, как показали перечисленные выше факты, а также внутриполитический кошмар последних полутора лет, одним из главных соавторов которого являлся он сам, ЛТП, — политика для него не есть ответственность, а средство сеять в людях ненависть и вражду. Средство — любой ценой создать преграду на пути консолидации нации.

"Новое Время", 21. V. 2009.

Ո՞ՒՄ ԱՆՈՒՆԻՑ ԵՆ ՀԱՆԴԵՍ ԳԱԼԻՍ ԱՅԴ ՄԱՐԴԻԿ

Համաներումը որքանո՞վ կմեղմի անհանդուրժողականության մթնոլորտը հասարակության մեջ, եթե արմատականները հայտարարում են, թե մեկ է՝ սրանց, այսինքն՝ իշխանություններին, «համաներումն էլ չի փրկի»:

«Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանի կարծիքով՝ «Մեր հասարակությունը նրանով է հետաքրքիր, որ ամենատարբեր մոտեցումներ ունի ցանկացած հարցի վերաբերյալ: Այն, որ մարդիկ ազատորեն արտահայտում են իրենց տեսակետները, ցույց է տալիս, որ, այո, ժողովրդավարությունը Հայաստանում հաստատակամ քայլերով առաջ է ընթանում: Այնքան հաստատակամ, որ անգամ իսկ հանդուրժվում են նման անհեթեթ պնդումներ, որոնք, վերջին հաշվով, իրենց մեջ որոշակի փիլիսոփայություն են պարունակում՝ մեզանից հետո թեկուզ ջրհեղեղ:

Հետաքրքիր է՝ ո՞ւմ անունից են հանդես գալիս այդ մարդիկ, արդյոք հարցրե՞լ են կալանավայրերում հայտնված անձանց, նրանց հարազատների, ընկերների, բարեկամների կարծիքը, թե՞ փորձում են սեփական քաղաքական խնդիրները լուծել ուրիշին կրակը գցելու հաշվին, ուրիշին ներքաշելով նեղ, ճղճիմ նկրտումների իրականացման հորձանուտ»:

ՍԱ ԱՅՆ ՀԱՐՑԸ ՉԷ, ՈՐ ՊԵՏՔ Է ԿԱՄ ԿԱՐԵԼԻ Է ՔԱՂԱՔԱԿԱՆԱՑՆԵԼ

Նախորդ օրը , անդրադառնալով համաներման նախաձեռնությամբ հանդես գալու հնարավորությանը, Նախագահ Սերժ Սարգսյանը հայտարարեց. «Եթե կա այդպիսի ցանկություն հասարակության մեջ, ապա ես անմիջապես կդիմեմ Ազգային ժողովին՝ օրենք ընդունելու առաջարկով»:

«Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյան.

– Մայիսի 28-ին իր խոսքում Նախագահ Սերժ Սարգսյանը միանգամայն արդարացիորեն նշեց, որ վերջին համաներումը եղել է 3 տարի առաջ: Անցած երեք տարիների ընթացքում կալանավայրերում գտնվող հարյուրավոր մեր հայրենակիցները և տասնյակ հազարավոր նրանց բարեկամները, վստահ եմ, մտովի քննադատաբար վերլուծել են՝ ինչպե՞ս եղավ, որ թույլ տվեցին այնպիսի սայթաքում, որի համար այսօր հարկադրված են պատիժը կրել ուղղիչ վայրերում:

Եվ ոչ միայն իմաստավորել են, այլև զղջացել, ու ամենայն անհամբերությամբ սպասում են, թե երբ հանրապետության առաջին դեմքը կօգտվի Սահմանադրությամբ իրեն վերապահված իրավասությունից և կհայտարարի համաներում: Այս առումով, անկասկած, դրական եմ վերաբերվում համաներման գաղափարին, և միայն կողջունեմ, եթե լինի այդպիսի համաներում:

– Արդարացվա՞ծ եք համարում մոտեցումը, թե համաներման հիմնական «թիրախը» կամ նպատակակետը «մարտի 1»-ի գործով դատապարտյալներին ազատ արձակելն է:

– Կարծում եմ, երբեք մեր քաղաքացիների միջև տարբերություն չպետք է դնել: Պատահական չէր, որ հիշատակեցի այն մարդկանց, որոնք երեք տարի շարունակ, վերջին համաներման առաջին իսկ օրվանից, սպասում են, թե երբ է նորից համաներում հայտարարվելու, ակնկալելով, որ իրենք ևս կարող են բավարարել այդ համաներման պահանջները ու հայտնվել ազատ արձակվածների ցուցակում:

Սա այն դեպքն է, որը երբեք ու երբեք չպետք է քաղաքականացնել: Օրենքը միասնական է բոլորի համար, և համաներումը օրենքով տարածվում է նախատեսված պատիժը կրող բոլոր անձանց նկատմամբ, որոնք բավարարում են սահմանված չափանիշներին: Կարծում եմ, այս ամենը բացարձակապես պետք չէ քաղաքականացնել, և խնդրո առարկայի շուրջ արհեստական լարվածություն ստեղծելը նույնպես անիմաստ է: Վերջին հաշվով, յուրաքանչյուրս, այս մասին խոսելիս, նախևառաջ փորձենք պատկերացնել այն հազարավոր մարդկանց վիճակը, որոնց հարազատները, մտերիմները և ընկերները այսօր կալանավայրերում կրում են իրենց պատիժը:

– Հունիսի 1-ի հետ կապված ի՞նչ կանխատեսումներ ունեք՝ կհաջողվի՞ խուսափել հետընտրական նոր վայրիվերումներից:

– Հունիսի 1-ը չի լինի այնպիսին, ինչպես մայիսի 31-ը, և, իհարկե, չի լինի այնպիսին, ինչպիսին կլինի հունիսի 2-ը: Երեխաների պաշտպանության օրը, կարծում եմ, հայ ժողովուրդը կտոնի համախմբված՝ հանուն մեր երեխաների պաշտպանության, մեր երեխաների ապագայի:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

«Հայոց Աշխարհ», 30. V. 2009:

ԽԱՎԱՐԻ ՁԱՎԱԿՆԵՐԸ ԿԱՄ ԼԵՎՈՆԻԶՄԻ ՊԵՐՃԱՆՔՆ ՈՒ ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Կարելի էր չանդրադառնալ հունիսի 1-ին մատենադարանամերձ հրապարակում Լևոն Տեր-Պետրոսյանի ելույթին, սակայն մարդասիրությունը, թերևս, գերիշխեց քաղաքական հաշվարկին: Դա ինձ պարտավորեցրեց կրկին օգնության ձեռք մեկնել ծանր կացության մեջ հայտնված Հայ ազգային կոնգրեսի ղեկավարին: Այս մոտեցումը պայմանավորված է այն իրողությամբ, որ Լևոն Տեր-Պետրոսյանը կարիք ունի օգնության, քանզի սխալը սխալի հետևից է կատարում: Այսպես, մայիսի 29-ի հանրահավաքից հետո, երբ իր կազմակերպած երթի մասնակիցներն անցնում էին «Ազգային Միաբանություն կուսակցության» կենտրոնական գրասենյակի մոտով, Լևոնը կարող էր օգտվել իր նկատմամբ մեր կուսակցության ղեկավարների բարիդրացիական վերաբերմունքից, մտնել գրասենյակ, խոստովանել, որ նոր մտքերի պակաս ունի, այն էլ այն աստիճանի, որ անգամ կիրթ և գրագետ կազմված նախադասությունները չեն մեղմում վերջին ելույթների զրոյական ազդեցությունը: Դե ինչ, մարդը չցանկացավ գալ, մեզ հետ մարդավարի խորհրդակցել, փոխարենը գերադասեց զինակիցների հետ շենքի առաջ «հու» բղավել: Ինչպես կասեր ռուսը՝ бывает, պատահում է: Արդարության առաջ չմեղանչելու համար նշեմ, որ Լևոնի մերձավոր շրջապատից հաջորդ իսկ առավոտյան մեզ հավաստիացրին, որ լևոնականները բղավելով հետապնդել են մեկ նպատակ՝ արթնացնել քնով տարված շենքի պահակին, որ հանկարծ բաց չթողներ պատմական այդ երթի պահը, դուրս գար շքերթն ընդուներ:

Ինչևէ, եթե պարոն Տեր-Պետրոսյանը գար և հունիսի 1-ի հանրահավաքից առաջ խորհրդակցեր, ապա այդ օրը չէր ունենա այդ աստիճանի խոցելի, երբեմն էլ անտրամաբանական հարցադրումներով առատ ճառ: Ասվածը մերկապարանոց չլինելու համար՝ հիմնավորեմ փաստերով:

Ելույթից առաջին տպավորությունն այն է, որ Հայաստանում բոլորը վատն են, հասկանալի է, բացառությամբ Լևոնի ու իր շրջապատի: Հատկապես Լ. Տեր-Պետրոսյանը դժգոհում է եվրոպացիներից, Արևմուտքից ընդհանրապես: Նա ելույթում բողոքում է. «… մենք տեսնում ենք, իրականում, որ յուրաքանչյուր հաջորդ ընտրություն շատ ավելի այլանդակ է լինում, քան նախորդը: Եթե սա է Եվրոպայի, Արևմուտքի պատկերացումը պրոգրեսի մասին, ապա կամ նրանք զբաղված են երգիծաբանությամբ, կամ էլ պարզապես ձեռ են առնում մեր ժողովրդին՝ նրան դնելով երկրորդ սորտի մարդկանց տեղ… Միջազգային հանրությունը այսպիսով ոչ թե նպաստում է ժողովրդա-

վարության հաստատմանը, այլ կարծես թե դիտավորյալ խոչընդոտում է այդ զարգացումը»: ՀԱԿ-ի առաջնորդը զայրացած է, որ Երևանի ավագանու ընտրությանը միջազգային հանրությունը «անլուրջ» է մոտեցել՝ ուղարկելով ընդամենը 15 դիտորդ:

Արար երկրորդ. Լևոնը խիստ դժգոհում է նաև Երևանի ընտրողներից՝ ասելով, որ «կեղծման գլխավոր մեխանիզմը եղել է ընտրակաշառքը, որին տուրք է տվել ընտրողների մի զգալի մաս: Սխալված չեմ լինի, եթե ասեմ՝ 100-150 հազար մարդ քվեարկել է ուղղակի կաշառված»: Ասել է թե՝ Երևանի ավագանու ընտրություններին մասնակցած ընտրողների շուրջ 37%-ը եղել է կաշառված:

Արար երրորդ. Տեր-Պետրոսյանը նաև խիստ դժգոհում է Երևանի ավագանու ընտրություններին մասնակցած խորհրդարանական՝ «Բարգավաճ Հայաստան», «Օրինաց երկիր» և Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցություններից: Ըստ որում, վերջին երկուսին էլ իր խոսքում պարտքի տակ է գցում՝ եզրակացություն անելով, որ «եթե չլիներ ընդդիմությունը (նկատի ունի ինքն իրեն.- *Ա.Գ.*)՝ «Օրինաց երկիրը», Դաշնակցությունը չէին կարող երազել կոալիցիայի կազմում ընդգրկվելու մասին»: Ինչպես ասում են, Օրինացն ու Դաշնակցությունը Լևոնին «մաղարիչ» ունեն անելու, կարծում եմ, պարտքի տակ չեն մնա: Առանձնահատուկ է Լևոն Տեր-Պետրոսյանի վերաբերմունքը «Բարգավաճ Հայաստան» կուսակցության և, մասնավորապես, նրա առաջնորդ Գագիկ Ծառուկյանի նկատմամբ: Դեռ 2007 թ. սեպտեմբերից մինչև օրս Լևոնը առիթը բաց չի թողնում և հրապարակավ դարդ է անում, թե Գագիկ Ծառուկյանի սեփականությունը հեսա-հեսա «վերաբաշխելու են»: Լևոնին հանգիստ չտվող, նրա երևակայության այդ մտասևեռումը ռուսերենով կարելի է ախտորոշել որպես “навязчивая идея”՝ «կպչուն գաղափար»: Դա արդեն իսկ վերածվում է բայղուշության, յուրատեսակ մի նավսի: Ակամայից ուզում ես ասել. հանգստացի՛ր, Լևոն, հետապնդածդ նպատակը շատ պարզունակ է, խասյաթդ թարգիր, կռիվ մի գցիր Բարգավաճի և Հանրապետականի միջև, կարծում եմ, պարապ զբաղմունք է...

Լևոնի վերջին ելույթից հետո պարտքի տակ ընկավ նաև Վազգեն Մանուկյանը: Պարզվում է, որ «եթե չլիներ այս (Լևոնի ղեկավարած - *Ա.Գ.*) ընդդիմությունը՝ Վազգեն Մանուկյանը երբևէ նախագահ չէր դառնա, իսկ այսօր դարձել է Հանրային խորհրդի նախագահ, վերջապես այս մարդը հասավ մուրազին՝ ընդդիմության շնորհիվ»: Տեսնո՞ւմ եք, մարդն ամեն ինչ գիտի՝ ում հետ, ինչ կատարվեց, ով, ինչ մուրազ ունի: Հետն էլ այնքան համեստ է, որ իր մուրազի մասին՝ բոլոր կուսակցություններին իրար դեմ հանել, քաղաքական գործիչներին կռվեցնել, ժողովրդին պառակտել՝ այդպես էլ պարոն Տեր-Պետրոսյանը լռում է:

Նշեմ մի քանի ուշագրավ դիտարկումներ ևս: Ելույթում Լևոնն իր պատկերացրած ընդդիմադիր դաշտից, բացառությամբ ՀԺԿ-ի ու ՀՀՇ-ի, ուրիշ ոչ մի կուսակցության անուն չի տալիս: Չլինի՞ թե նեղացած է հնչակներից,

ազատականներից, մարքսիստներից, «Հանրապետությունից» և մյուսներից: Անուշադրության է մատնված նաև «Ժառանգություն» կուսակցությունը: Հավանաբար, վիրավորանքը շատ խորն է եղել, երբ «Ժառանգությունը» երկուերեք ամիս առաջ հեռատեսություն էր դրսևորել՝ առաջարկելով, որ Երևանի ավագանու ընտրություններին լևոնականները «Ժառանգության» հետ միասնական ցուցակով հանդես գային, իսկ, ամենակարևորը, որ ընտրացուցակի առաջին հորիզոնականն էլ զբաղեցներ իր ներկայացուցիչը: Չանսացին ընդդիմադիր գործընկերոջ խորհրդին նույնպես, արդյունքում տեսաք, թե ի՞նչ ստացվեց: Սակայն նրա ելույթում կային նաև հուսադրող երանգներ: Պարզվում է, եթե չլիներ Լևոնի գլխավորած ընդդիմությունը, «այսօր Հայաստանում մանր և միջին ձեռնարկատիրություն գոյություն չէր ունենա… Եթե չլիներ այս ընդդիմությունը՝ այս օլիգարխների մի զգալի մասն էլ կորցրած կլիներ հարստությունը, մյուսները՝ ավելի զորբաները, արդեն վերաբաշխած կլինեին այդ հարստությունը»: Այլ կերպ ասած, այսօր բանտերում հայտնված կամ ընդհատակում գտնվող ձեռներեցները, փաստորեն, «խերվել են», դրա համար էլ նրանք ևս պետք է շնորհակալ լինեն Լևոնին: Իհարկե, այստեղ նա խորամանկում է՝ փորձելով սիրաշահել օլիգարխներին, միջին բիզնեսի այն հատվածին, որոնք, որպես կանոն, ցանկացած վարչակազմի ժամանակ եղել են իշխանությունների կողքին, ոչ թե, որ խելքները գնում է նրանց համար, այլ պարզապես հարկերից խուսափելու նպատակով: Հիմա, երբ ճգնաժամ է և հարկային մարմինները որոշ չափով խստացրել են վարչարարությունն ու զգուշավոր փորձեր են անում խոշոր բիզնեսն առավել ընդգրկուն բերել հարկահավաքման ոլորտ՝ առաջացնելով վերջինների տրտունջը, Լևոնը պահը չի կորցնում, դրանից բխող դժգոհություններից էլ է ուզում օգտվել:

Շատ համառոտ ներկայացրի, ասած Լևոն Տեր-Պետրոսյանի, ընդդիմության երկու գործառույթներից «ներքինը»: Այստեղ ամեն ինչ, կարծում եմ, պարզ դարձավ:

Հիմա անդրադառնանք նրան, թե, ի դեմս Լևոնի, ինչպես է կատարում «ընդդիմությունը կարևոր գործառույթը, որն ունի նաև երկրի արտաքին քաղաքականության մեջ»: Ահա այստեղ արդեն առավել քան ցցուն են Լևոնի իրական նպատակները: Մասնավորապես, հանրահավաքում իր ելույթի սկզբնամասում իշխանություններին բնութագրելիս ասաց. «Չկանգնելով ոչ մի քայլի առջև … եթե պետք է բռնություն գործադրել ընտրությունների վրա՝ գործադրեք, եթե պետք է գնդակահարել ընդդիմադիրներին, սառնասրտորեն գնդակահարեք՝ ինչպես գնդակահարեցին Կարեն Դեմիրճյանին և Վազգեն Սարգսյանին, եթե պետք է ժողովրդի սպանդ կազմակերպել այդ էլ կանենք և այդ էլ արեցին մարտի 1-ին…»: Հարգելի ընթերցող, տես ի՞նչ ճիզվիտության է դիմում Լևոնը 1999 թվականին երկրի իշխանական առաջին դեմքերից՝ Ազգային ժողովի նախագահին և վարչապետին նույնացնելով այսօրվա ընդդիմության, այն է՝ իր հետ: Հաշվարկը պարզ է. փորձում է մարդկանց կողմից

ասոցիացվել, ընկալվել որպես անմեղ զոհերի գործի շարունակողը… Իսկ այն հանգամանքը, որ նույն Վազգեն Սարգսյանն էր նախաձեռնողներից մեկը, որ 1998 թ. Լևոն Տեր-Պետրոսյանը, մեղմ ասած, իր պարտվողական քաղաքականության պատճառով հարկադրված էր հրաժարական տալ, ապա հոգ չէ, հիմա դա ո՞վ է հիշում: Ինչո՞ւ ելույթի այս դրվագը մեջբերեցի, որովհետև նույն Լևոնը նման ծանր մեղադրանքից հետո, խունջիկ-մունջիկ գալով՝ զարմանում է, թե ինչպես կարելի է, որ Սերժ Սարգսյանը՝ «Մարդ ինքն իրեն զրկի այսպիսի գործիքից»: Լևոնը Տեր-Պետրոսյանը, փաստորեն, Սերժ Սարգսյանին խնդրում է, որ արտաքին քաղաքականություն վարելիս իրեն օգտագործի որպես գործիք. «Եթե Սերժ Սարգսյանը հանդուրժեր ընդդիմություն, օրինակ, երբ նրան առաջարկեին ստորագրել հայ և թուրք պատմաբանների հանձնաժողովի ստեղծման այդ պահանջը՝ հանգիստ կարող էր ասել՝ ես չեմ կարող դա բացատրել իմ ժողովրդին, որովհետև այնտեղ կա մի գազան՝ Հայ ազգային կոնգրես է անունը, որը ինձ կհոշոտի, թույլ չի տա սա ստորագրել»: Կարծում եմ, Լևոնի այս անթաքույց խնդրանքից հետո քիչ չեն լինի այն մարդիկ, որոնք ՀՀ Նախագահին կհորդորեն՝ լավ, եթե որպես գործիք չես օգտագործում, գոնե որպես գազան կողքդ պահի: Տեսեք, այս մարդը ՀՀ Նախագահին ինչ համեստ պահանջներ է ներկայացնում՝ ոչ Հանրային խորհրդի նախագահ է փորձում դառնալ, ոչ էլ իշխանական կոալիցիայի կազմում ընդգրկվել: Էս մարդու ուզածը կամ որպես գործիք, կամ էլ որպես գազան օգտագործվելն է: Սակայն բավ է Նախագահը տուրք տա այդ կարծիքներին, ապա նույն եվրոպացիները, ամերիկացիները, ռուսները, եթե չարտահայտվեն էլ, ապա, անշուշտ, կմտածեն՝ այս ինչ թույլ դիրքեր ունի Սերժ Սարգսյանը երկրի ներսում, որ տեղի տվեց Լևոն Տեր-Պետրոսյանի շանտաժին, այն մարդուն, որն իրեն զարհուրելի մեղադրանքներ է ներկայացրել: Իհարկե, լրջմիտ դիտորդները կարծիք կկազմեն նաև սույն հռետորի մասին: Եվ անկողմնակալ լինելու դեպքում նրանց ուշադրությունից չի վրիպի Լևոնի ինքնահռչակ սկզբունքայնության, ինչու չէ, նաև բարոյականության մասին խրատների իրական գինը, եթե նա, իր բնութագրմամբ, պատրաստ է որպես «գործիք» օգտագործվել ընդդիմությանը մարտի 1-ին «գնդակահարողի», «ժողովրդի սպանդ կազմակերպողի», «հարյուրավոր մարդկանց բանտ լցնողի» ձեռքում:

Հունիսի 1-ի ելույթում կան նաև ինքնախոստովանական երանգներով հատվածներ: 2008 թ. փետրվարի 19-ից հետո առաջին անգամ է, որ Լևոնը հրապարակավ ընդունում է, որ չի հաղթել նախագահական ընտրություններում: Այսպես, նա կարծում է, որ այդ ընտրությունների ժամանակ Սերժ Սարգսյանը ստացել է ընտրողների 42-43% քվեն: Եվ քանի որ Տեր-Պետրոսյանը երբեք կասկածի տակ չի դրել Նախագահի մյուս թեկնածուների ստացած քվեները, մասնավորապես, Արթուր Բաղդասարյանի՝ 16,67%-ը, Վահան Հովհաննիսյանի՝ 6,12%-ը, ապա, առաջնորդվելով նրա թվաբանությամբ, նախագահական ընտրություններում Լևոնը կարող էր առավելագույնը ստա-

ցած լիներ ընտրողների 32,4%-ի ձայները: Բա լավ, եթե նա նախօրոք գիտեր, որ ստացել է ընդամենը 32,4%, ապա ինչո՞ւ էին փետրվարի 20-ից սկսած հարայ-հրոց գցել, թե հաղթել են նախագահական ընտրություններում, այն էլ՝ առաջին իսկ փուլում: Ինչո՞ւ էիք հազարավոր դյուրահավատ հայ մարդկանց սրտերն ալեկոծում, հասցնում անկառավարելի հոգեվիճակի: Բացահայտ սուտ տարածելով, թե հաղթել եք նախագահական ընտրություններում՝ դրսի ուժերից ո՞ւմ ջրաղացին էիք ջուր լցնում:

Իհարկե, այս հարցում չէր, որ Լևոն Տեր-Պետրոսյանի ինքնաբացահայտումը վերջնականորեն պատռեց նրա դիմակը: Դա տեղի ունեցավ մեկ այլ պարագայում: Խոսելով Երևանի ավագանու ընտրությունների բացասական հետևանքների մասին՝ նա գուժում է. «Չեմ կասկածում, որ հերթական կեղծված ընտրություններն առավելագույնս կօգտագործվեն Սերժ Սարգսյանից նորանոր զիջումներ կորզելու համար՝ թե՛ Թուրքիայի, թե՛ Ղարաբաղի հարցում»: Լևոնը խոստովանում է, որ կան ուժեր, որոնք առիթ են փնտրում Հայաստանի վրա ճնշումներ գործադրելու և Երևանի ավագանու ընտրություններն էլ սև գույնով ներկայացնելիս, հաստատ գիտի, որ կարող են այդ առիթն ընձեռել: Բայց այստեղ է, որ նրա մտածածը, գոնե այս փուլում, կարծես, հիմքից զուրկ է: Չէ՞ որ հունիսի 1-ի առավոտյան Եվրախորհրդի տեղական ու տարածքային իշխանությունների կոնգրեսի ներկայացուցիչները մամուլի ասուլիսում հայտարարել են, որ Երևանի ավագանու ընտրությունների կազմակերպումն ու անցկացումը, ընդհանուր առմամբ, համապատասխանել են եվրոպական չափանիշներին: Այսինքն՝ մի կողմից Լևոնը շատ լավ հասկանում է, որ եկել է «լրջանալու պահը», շատ լավ գիտակցում է, որ թուրք-ադրբեջանական կողմը և նրանց թիկունքին կանգնած մեր տարածաշրջանում նավթագազային շահեր հետապնդող ուժի միջազգային կենտրոնները մեզ վրա ճնշում գործադրելու առիթը բաց չեն թողնի: Մյուս կողմից էլ հասկանում է, որ ԵԽ դիտորդական առաքելություն իրականացնող համապատասխան կառույցն իր այս հայտարարությամբ նման առիթ չի տվել նրանց, ուստի սկսում է ինքը գործել: Զավեշտ է, որ Լևոնն ու նրա կողմնակիցները դժգոհում են, «որ այս ընտրությունները դիտարկելու համար նրանք (միջազգային կազմակերպությունները - *Ա.Գ.*) ուղարկել էին ընդամենը 15 հոգի», ապա Լևոնը սրտապնդվելով ասում է՝ «Երբ լրագրողներից մեկն այդ դիտորդական առաքելության ղեկավարին հարցրել էր արդյո՞ք 15 հոգին բավական է ընտրությունները դիտարկելու և օբյեկտիվ գնահատելու համար, այդ խմբի ղեկավարը առանց քաշվելու ասել էր՝ գիտեք ինչ, հարյուր հոգին էլ բավարար չէր լինի»: Եվրոպացիներին, Արևմուտքին ձեռի հետ խրատներ տալուց հետո նա, այնուամենայնիվ, գիտակցում է, որ վերջիններն այս պահին բավարար հիմքեր չունեն Հայաստանի վրա ճնշումներ գործադրելու: Այդ իսկ պատճառով հենց ինքն անձամբ է ստանձնում դրսի ուժերին փաստեր տրամադրելու առաքելությունը: Դրա համար էլ, իր իսկ խոսքերով, որն ուղղել էր բացահայտ սխալ հասցեատիրոջ՝ ՀՀ Նախագահին, գնահատենք նույն Լևոնի փաստացի

արածը. «վստահ եղեք, նա թուլացրեց մեր պետությունը և այն դարձրեց արտաքին ճնշումների հանդեպ խոցելի»:

Ավելին, գիտակցելով, որ հողն իր ոտքի տակից գնում է, Լևոն Տեր Պետրոսյանը դիմում է բացահայտ շանտաժի: ՀՀՇ-ի կողմից վերահսկվող մամուլի միջոցով փորձում է իր ցինիկ խաղի մեջ ներքաշել ԱՄՆ դեսպան Մարի Յովանովիչին, այն է՝ 8/08 և 8/09 ընտրատեղամասերում վերջինիս այցելության ժամանակ, իբր, հանրապետականների կողմից կատարվել են քվեաթերթիկների լցոնումներ: Այստեղ էլ Լևոնն ինքն իրեն հակասում է: Ելույթում նա հայտարարում է, որ ընտրակեղծիքների մեջ իշխանություններն այն աստիճանի են կատարելագործվել, որ «Ոչ մի բնագավառում Հայաստանն այնպիսի հաջողությունների չի հասել, ինչպես ընտրությունների կեղծման մեխանիզմների մշակման մեջ … կարելի է ասել գրոսմայստերներ են»: Բա, լավ, եթե ընտրակեղծիքների մեջ այդ աստիճան հմտացել էին, ապա այդ դեպքում, ի՞նչ, անհամբեր սպասում էին, որ ԱՄՆ դեսպանը գար այդ ընտրատեղամասերը, որ ճիշտ նրա աչքի առաջ լցոնումնե՞ր անեին: Իսկ գուցե դա Լևոնի «փրկած» առանձին օլիգարխների սափրագլուխներն էին, որ նպատակահարմար էին գտել դեսպանի ներկայությամբ ընտրակեղծիքներ կատարել …

Կարծում եմ, ասվածն էլ բավարար է եզրակացնելու, որ Երևանում դեռ կան շուրջ 70000 ընտրողներ, ովքեր, ձայնը տալով Լևոն Տեր-Պետրոսյանին, մեղսակից են դառնում նրա «բոլոր դավաճանություններին, ոչ միայն ներազգային, այլև դավաճանական գործերին»: Իսկ Լևոնի դավաճանական վերջին ամենահամոզիչ դրսևորումների շարքին կարելի է դասել հունիսի 1-ի ելույթը, որով նա իր խոսքով՝ «այն Հուդայի գործողության» արդյունքում հող նախապատրաստեց թուրք-ադրբեջանական կողմի և նրանց թիկունքում կանգնած միջազգային որոշակի ուժերի համար Հայաստանի վրա ճնշումներ գործադրելու նպատակով: Դրանով իսկ Լևոնը «վտանգեց մեր պետությունը, թուլացրեց, այն ավելի խոցելի դարձրեց արտաքին աշխարհի համար»: Դրա հետ մեկտեղ տերպետրոսյանական թիմը «կորցրեց չափազանց կարևոր շանս՝ այս երկրի հոգեբանական վիճակը բարելավելու համար», այն է՝ 13 պատվիրակով ներկայացված լինելով Երևանի նորընտիր ավագանու կազմում ապացուցել ժողովրդին, մեր հանրությանը, որ թշնամանք սերմանելուց, նոր մարտի 1-եր հրահրելուց զատ, կարող են նաև արարել: Անցածի, կատարվածի մասին մտորելիս ակամա հիշեցի Օնորե դը Բալզակի հայտնի վեպը՝ «Կուրտիզանուհիների պերճանքն ու թշվառությունը»: Ինչո՞ւ դա հիշեցի, որովհետև մեր օրերում էլ, ասես, պարտադրված ենք հանդուրժել լևոնիզմի պերճանքին ու թշվառությանը, որն արդեն վերածվում է ազգային չարիքի:

«Ազատամտություն», 06. VI. 2009:

ДЕТИ ТЬМЫ,
ИЛИ БЛЕСК И НИЩЕТА ЛЕВОНИЗМА

Можно было и не обращаться к выступлению Левона Тер-Петросяна на митинге, имевшем место 1 июня перед Матенадараном. Однако гуманность возобладала над политическим расчетом. Это заставило меня вновь протянуть руку помощи лидеру Армянского национального конгресса, оказавшемуся в трудном положении. Такая позиция обусловлена осознанием той реальности, что Левон Тер-Петросян опять-таки нуждается в помощи, поскольку совершает одну ошибку за другой. Так, после митинга 29 мая, когда участники организованного им шествия проходили мимо офиса партии "Национальное единение", Левон мог бы воспользоваться доброжелательным отношением к нему со стороны руководителей нашей партии, удосужить себя и подняться к нам, без стеснения откровенно признаться, что у него наблюдается "наличие полного отсутствия" новых идей, причем это проявляется до такой степени, что даже его, надо откровенно признать, грамотно составленные на армянском языке предложения, присущие образованному человеку, не в состоянии смягчить нулевое воздействие на аудиторию его выступлений последнего периода.

Ну что ж, не пожелал человек зайти к нам, посоветоваться по-человечески, вместо этого он предпочел вместе со своими соратниками дружно выразить свое невежество выкриками "у-у" перед нашим зданием. Как сказал бы русский - ну что же, бывает... Дабы не погрешить против истины, отмечу, что буквально на следующее же утро из ближайшего окружения Левона нас заверили, что хоровые выкрики левоновцев преследовали лишь одну единственную цель - разбудить задремавшего сторожа, чтобы тот не проспал "величия" их исторического шествия и соблаговолил бы выйти на террасу принять парад.

Ну, да ладно... Если бы Левон Тер-Петросян набрался трезвости ума, пришел посоветоваться, до митинга 1 июня о том, о чем народная молва сетует, то в тот день не выступил бы со столь уязвимой, местами изобилующей алогизмами речью. Дабы не быть голословным, в подтверждение сказанного приведу конкретные факты.

Первое впечатление от его выступления на митинге было таким: в Армении все плохие - понятно, за исключением Левона и его окружения. В частности, возмутили Тер-Петросяна европейцы, да и вообще Запад. В своей речи он сетовал: "...в действительности мы видим, что каждые следующие выборы бывают позорнее предыдущих. Если представление Европы и, вообще, Запада о прогрессе таково, то либо они занимаются сатирой, либо просто издеваются над нашим народом, считая

нас людьми второго сорта... Международная общественность, таким образом, не способствует установлению демократии, а словно нарочно тормозит этот процесс". Лидер АНК возмущен, что международная общественность отнеслась к выборам в совет старейшин Еревана "несерьезно", делегировав всего 15 наблюдателей...

Акт второй: Левон сильно возмущен и ереванскими избирателями, утверждая, что "основным механизмом фальсификаций была предвыборная взятка, чему отдала дань большая часть избирателей. Не ошибусь, если скажу, что 100-150 тысяч человек голосовали за взятку". Иными словами, во время выборов совета старейшин столицы, по утверждению Левона, около 37% избирателей были подкуплены властями.

Акт третий: Тер-Петросян был крайне недоволен и участвовавшими в выборах совета старейшин столицы парламентскими партиями "Процветающая Армения", "Страна закона", и "Армянская революционная федерация Дашнакцутюн". Причем в своей речи он не преминул упрекнуть две последние партии - мол, "если бы не оппозиция (имеет в виду самого себя - А.Г.), то и "Дашнакцутюн", и "Страна закона" мечтать не могли бы о вступлении в состав коалиции". Как говорится, "партия "Страна закона" и Дашнакцутюн еще должны Левону сделать магарыч и, думаю, в долгу они не останутся. Особое отношение у Левона Тер-Петросяна к партии "Процветающая Армения" и к ее лидеру Гагику Царукяну. С сентября 2007 г. и по сей день Левон не упускает случая, чтобы публично не выразить "тревогу" о том, что имущество Гагика Царукяна вот-вот "перераспределят" Эта не дающая Левону покоя напасть по-русски называется просто - навязчивая идея.

Часто повторяемое сие упоминание уже превращается в карканье, своеобразную порчу. Невольно хочется сказать: да успокойся, Левон, цель, которую ты преследуешь, предельно ясна, брось ты эту свою дурную привычку, не натравливай друг на друга "Процветающую..." и Республиканскую партии, думаю, пустое это занятие...

После левоновского выступления оказалось, что в долгу перед ним остался и Вазген Манукян. Видите ли, “если бы не было этой (руководимой Левоном - А. Г.) оппозиции, то Вазген Манукян не стал бы никогда председателем (а сегодня он - председатель Общественного совета - А. Г.). Наконец этот человек достиг того, чего хотел - и все благодаря оппозиции". Умиляйтесь, армяне - все знает этот человек - что, с кем случилось, у кого какая мечта. И к тому же он у нас такой скромный, что молчит о своей собственной мечте, своих грезах - то есть натравить все партии друг против друга, рассорить всех политических деятелей, расколоть народ... Но господин Тер-Петросян стоически молчит об этом...

Отмечу еще несколько любопытных наблюдений. В своей речи (за исключением НПА и АОД) Левон не упоминает ни одну из входящих в АНК партий. Уж не обиделся ли он на гнчаков, либералов, марксистов, "Республику" и других? Обойдена его вниманием и партия "Наследие". Видимо, уж очень глубока обида на них за то, что два-три месяца назад "Наследие", проявив дальновидность, предложила левоновцам идти на выборы в столичный совет старейшин единым списком, и самое главное в том,

чтобы первую строчку списка занимал их представитель. Не вняли совету оппозиционного коллеги - и видите, что из этого получилось? Но были в его речи и обнадеживающие нотки. Оказывается, не будь возглавляемой Левоном оппозиции, "не существовало бы сегодня в Армении малых и средних предприятий... Не было бы этой оппозиции - значительная часть этих олигархов потеряла бы свое богатство, потому что другие, более нахраписты, уже перераспределили бы их богатство".

Иначе говоря, крупно "повезло" тем предпринимателям, кто в соответствии с "мудрой" политикой Левона сегодня оказался за решеткой или, как в Великую Отечественную, действует в подполье, за это тоже они должны быть благодарны Левону. Конечно, тут он лукавит, пытаясь подмаслить олигархов. Отметим, что они, как правило, при любом режиме были приближены к власти, и не потому, что жить без нее не могли, а просто чтобы избежать налогов. А сегодня, когда свирепствует кризис и налоговые органы ужесточили администрирование и пытаются полнее вовлечь крупный бизнес в налогооблагаемую сферу (что вызывает у последних ропот), Левон не упускает момента и старается сыграть и на этом тоже.

Я очень коротко представил, как говорит Левон Тер-Петросян, характеризуя одну из двух миссий оппозиции: действия во внутриполитическом пространстве. Тут все, полагаю, стало ясно.

А теперь обратимся к тому, как оппозиция в лице Левона выполняет свою "основную функцию во внешнеполитической сфере страны". Вот тут-то особенно явно высвечиваются истинные цели Левона. В частности, в начале своего выступления на митинге, характеризуя руководство республики, он вынес "приговор", сказав: "Не останавливаясь ни перед чем... если понадобится силой воздействовать на ход выборов - воздействуют силой, если понадобится расстрелять оппозиционеров - расстреляют хладнокровно, точно так же, как расстреляли Карена Демирчяна и Вазгена Саркисяна, если понадобится организовать бойню - сделают и это, как они это сделали 1 марта...". Дорогой читатель, посмотрите, к какому иезуитству прибегает Левон, отождествляя первых лиц государства в 1999 г. - спикера парламента и премьер-министра с сегодняшней оппозицией, то есть с самим собой.

Расчет прозрачен: в восприятии людей, слушающих эту тавтологию, он хочет ассоциироваться в качестве последователя дела невинных жертв... А то обстоятельство, что Вазген Саркисян был одним из инициаторов того, чтобы в 1998 г. Левон Тер-Петросян, мягко говоря, по причине своей пораженческой политики вынужден был подать в отставку - ну, это не столь и важно, кто теперь об этом помнит! Почему я упомянул этот фрагмент его выступления - потому что тот же Левон после такого тяжкого обвинения в адрес руководства РА далее кокетничал - удивляясь, как это можно, чтобы Серж Саргсян "лишил себя такого инструмента". Фактически Тер-Петросян просит Сержа Саргсяна, чтобы тот, проводя внешнюю политику, использовал его в качестве инструмента: "Если бы Серж Саргсян прислушивался к оппозиции, например, когда ему предложили подписать это требова-

ние о создании комиссии армянских и турецких историков - то он спокойно мог бы сказать: я не могу объяснить это моему народу, потому что там есть зверь по имени Армянский национальный конгресс, который меня растерзает, но не даст это подписать". Думаю, после такой откровенной просьбы Левона немало будет тех, которые начнут подталкивать президента - дескать, ладно, если не хочешь его использовать в качестве инструмента, то хотя бы держи его как зверя на привязи. Смотрите, какие скромные требования он предъявляет президенту страны - не пытается стать ни председателем Общественного совета, ни в правящую коалицию войти... Всего-то и хочет этот человек - быть использованным или в качестве инструмента, или в качестве зверя. Однако, думается, что президенту хватит-таки идти на поводу таким настроениям, потому что те же европейцы, американцы, русские - они даже если не будут высказываться, то уж точно подумают: позиции у Сержа Саргсяна, видимо, слабы в своей собственной стране, если он поддался на шантаж Левона Тер-Петросяна, человека, который выдвинул против него чудовищные обвинения. Конечно, трезвомыслящие наблюдатели составят мнение об этом ораторе тоже. И если они будут беспристрастными, то от их внимания не ускользнет истинная цена самовосхваляемой принципиальности Левона и, почему нет, моралистских сентенций Левона, высвечивающихся в том, что он готов, по его же определению, быть использованным в качестве инструмента в руках того самого человека, кто организовал "расстрел" 1 марта, кто "организовал бойню народа", кто "бросил в застенки сотни людей".

В выступлении Левона на митинге, состоявшемся 1 июня, есть и фрагменты с оттенками исповеди. Впервые после 19 февраля 2008г. Левон публично признается, что в президентских выборах он не победил. Так, он считает, что на тех выборах Серж Саргсян получил 42-43% голосов избирателей. А так как Тер-Петросян никогда не ставил под сомнение голоса, полученные другими претендентами, в частности, Артуром Багдасаряном - 16,67%, Вааном Ованисяном - 6,12%, то руководствуясь его же арифметикой, во время президентских выборов Левон мог получить максимум 32,4% голосов избирателей. Ну ладно, если он заранее знал, что получил всего 32,4% голосов избирателей, то почему после 20 февраля он же сам шумел-вопил, что победил в президентских выборах, причем в первом же туре? Почему вы, Левон Акопович, будоражили и мутили души тысяч и тысяч армянских избирателей, доводя их до неконтролируемого, порой невменяемого состояния? Распространяя откровенную и заведомую ложь о победе на выборах, на чью мельницу вы лили воду?

Конечно, не признанием Левона Тер-Петросяна в этом вопросе была окончательно сорвана его маска. Это произошло в очередной раз, тогда же, но при иных обстоятельствах. Говоря о негативных последствиях нарушений, имевших место во время выборов в совет старейшин, он предостерегает: "Не сомневаюсь, что очередные подтасованные выборы будут максимально использованы для того, чтобы вы-

тянуть у Сержа Саргсяна новые уступки как в вопросе Карабаха, так и в вопросе Турции". Левон признается, что существуют силы, которые только и ищут повод, чтобы оказать давление на Армению, и, представляя выборы в совет старейшин Еревана в черном цвете, он точно знает, что этим он может сам предоставить этот повод. Но именно тут задуманное им (во всяком случае на данном этапе) лишено конкретных оснований. Ведь 1 июня утром представители конгресса местных и региональных властей Совета Европы на пресс-конференции заявили, что организация и проведение выборов в совет старейшин Еревана в общем соответствовали европейским критериям.

То есть, с одной стороны, Левон прекрасно понимает, что пришло время "посерьезнеть" (его же пророчество 1997г. - А.Г.), прекрасно осознает, что турецко-азербайджанская сторона и покровительствующие им силы в международных организациях, преследующие свои нефтегазовые интересы в нашем регионе, не упустят момента с тем, чтобы оказать давление на Армению. С другой же стороны, он также понимает, что соответствующая структура, выполняющая наблюдательскую миссию Совета Европы, этим своим заявлением по сути лишает последних такой возможности и стало быть это обязывает его самому начинать действовать. Смешно, когда Левон и его сторонники выражают недовольство тем, что "для наблюдения за этими выборами они (международные организации - А.Г.) послали всего 15 человек", а Левон в своей речи подбадривает: "Когда один из журналистов спросил руководителя наблюдательской миссии, достаточно ли 15 человек для наблюдения и объективной оценки выборов, то этот руководитель без обиняков ответил, что и ста человек было бы недостаточно".

Облагодетельствовав европейцев своими советами, а заодно и Запад в целом, он, тем не менее, сознает, что у них на данный момент нет достаточных оснований, чтобы оказывать давление на Армению. Именно по этой причине он, в соответствии со своими "высокими моральными качествами", по собственной инициативе берет на себя миссию предоставления нужных определенным внешним силам "фактов" для давления на Армению. И потому оценим совершенное Левоном на основании его собственных слов, (направленных по совершенно неправильному адресу - президенту РА): "Будьте уверены, он ослабил наше государство и сделал его уязвимым для давления извне".

Более того, осознавая, что земля уходит из-под его ног, Левон Тер-Петросян прибегает к откровенному шантажу. Через прессу, контролируемую аодовцами, он пытается втянуть в свою грязную игру и посла США Мари Йованович, а именно: якобы в день выборов во время ее последнего посещения избирательных участков 8/08 и 8/09 республиканцы организовали вброс бюллетеней в избирательные урны. И здесь Левон противоречит самому себе любимому. В выступлении на митинге 1 июня он заявил, что власти настолько поднаторели в махинациях, "что ни в одной другой области Армения не достигла таких успехов, как в механизмах фальсифи-

кации выборов... можно сказать, гроссмейстерами стали". Ну ладно, если они так "насобачились" в махинациях, они что - ждали момента, когда на участок придет посол США и у нее на глазах они пачками ввбрасывали бюллетени в урны? А может, это были бритоголовые из числа тех отдельных олигархов, "спасенных" Левоном, которые нашли целесообразным заниматься нарушениями Закона о выборах именно в присутствии посла США или Великобритании?

Полагаю, сказанного вполне достаточно, чтобы прийти к выводу: в Ереване есть около 70000 избирателей, которые, проголосовав за Левона, стали соучастниками, выражаясь его же словами, "всех его предательств не только внутри национальных, но и всех предательских деяний". А к числу последних и самых убедительных предательских ипостасей Левона можно причислить и его выступление 1 июня, которым он "аки Иуда" подготовил почву для оказания давления на Армению со стороны турецко-азербайджанской стороны и стоящих за ними определенных международных сил. Этим шагом Левон "поставил под угрозу наше государство, ослабил его, сделал уязвимым перед внешним миром". Вместе с тем тер-петросяновская команда "упустила чрезвычайно важный шанс для улучшения психологической атмосферы в стране", а именно - быть представленными в новоизбранном совете старейшин столицы 13 делегатами и доказать народу, всему нашему обществу, что кроме провоцирования новых "1 марта" они могут и созидать.

Размышляя о прошедшем и происшедшем, я невольно вспомнил роман Оноре де Бальзака - "Блеск и нищета куртизанок". Почему вспомнил? Потому что сегодня мы словно обречены терпеть блеск и нищету левонизма, который уже превращается в национальное зло.

"Свободомыслие", 06. VI. 2009.

«Հ 2» ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆ ՇԱՎԱՐՇ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ «ԽՈՍՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ» ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱՇԱՐԻ ՀՅՈՒՐԸ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆՆ Է

(10.06.2009 թ.)

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՇՈՒՐՋ

(Հարցազրույցի սղագրությունը)

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայում իր բացասական ներգործությունն է շարունակում ունենալ Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, որի չքուլացող ազդեցությունը նաև մեծապես պայմանավորված է մեր գործադիր և ֆինանսական իշխանությունների կողմից վարվող ոչ արդյունավետ ու անհեռանկար քաղաքականությամբ: Փորձենք միասին գնահատել տնտեսական այն իրավիճակը, որում հայտնվել է Հայաստանի Հանրապետությունը:

Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տեղեկատվության համաձայն ՀՀ համախառն ներքին արդյունքը 2009 թ. հունվար-ապրիլին 2008 թ. նույն ժամանակաշրջանի համեմատ կազմել է 90,3%: Մտահոգիչ է, որ ապրիլ ամսվա ՀՆԱ-ն կազմել է մարտ ամսվա ՀՆԱ-ի 94,6%-ը, այլ կերպ ասած՝ վերջին երկու ամիսներին նկատվում է անկման միտում: 2009 թ. առաջին չորս ամիսների արդյունքում առավել շեշտակի անկում է գրանցվել արդյունաբերությունում. նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ այն կազմել է 88,9%, շինարարությունում՝ 57,6%, արտահանման ծավալները կազմել են 52,2%, ներմուծման ծավալները՝ 75%, ընդհանուր արտաքին առևտրաշրջանառությունը կազմել է 2008 թ. հունվար-ապրիլի 70%-ը: Անկում է գրանցվել նաև գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալում, այն կազմել է՝ 95,9%:

Բնականաբար, ՀՆԱ-ի ծավալների անկումն իր հետևից հանգեցրեց բյուջետային մուտքերի կրճատման: Այսպես, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի եկամուտները նվազել են 9,9%-ով կամ 21,5 մլրդ դրամով: Ավելին, 2009 թ. հունվար-ապրիլ ամիսներին պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 151 մլրդ դրամի հարկեր ու տուրքեր, որոնք կազմում են տարեկան ծրագրի ընդամենը 20,7%-ը: Եթե տնտեսության գահավիժման այս տեմպերի առաջը չառնվի, ապա տարեկան բյուջեն կկատարվի լավագույն դեպքում 62-63 %-ով՝ դրանից բխող ամենածանր հետևանքներով: Թերևս, նման զարգացումների վերլուծություններն էին, որ

երկու-երեք շաբաթ առաջ տեղ գտան Արժույթի Միջազգային Հիմնադրամի կողմից հրապարակված Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրներում իրական ՀՆԱ-ի կանխատեսվող աճի տեմպի վերաբերյալ զեկուցման մեջ: Այդ տարածաշրջանի 8 երկրների (Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի, Թուրքմենստանի, Ուզբեկստանի) էկոնոմիկաների մասին զեկույցը վերստին ընդգծում է մեր երկրի տնտեսության մեջ վտանգավոր միտումները (աղբյուրը տե՛ս www.imf.org): Հա-

ԵՐԿՐՆԵՐ	2007	2008	2009 կանխատեսվող	2010 կանխատեսվող
Կովկաս և Կենտրոնական Ասիա	12,0	6,3	0,9	8,0
Հայաստան	13,8	6,8	-5,0	0
Ադրբեջան	23,4	11,6	2,5	12,3
Վրաստան	12,1	2,0	1,0	3,0
Ղազախստան	0,9	3,2	-2,0	1,5
Ղրղզստան	8,5	7,6	0,9	2,9
Տաջիկստան	0,8	7,9	2,0	3,0
Թուրքմենստան	11,6	9,8	6,9	7,0
Ուզբեկստան	9,5	9,0	7,0	7,0

մաձայն այդ զեկույցի՝ կանխատեսվում է հետևյալ պատկերը.

Ինչպես երևում է այս աղյուսակից, այս տարի և 2010 թ. ՀՆԱ-ի ամենացածր ցուցանիշներ են կանխատեսվում Հայաստանի էկոնոմիկայում: Առավել քան մտահոգիչ է այն հանգամանքը, որ եթե Հայաստանում 2009 թ. արձանագրվելու է ՀՆԱ-ի անկում 5%-ի չափով, ապա 2010 թ. աճի տեմպ, ինչպես վկայում է ուսումնասիրությունը, չի արձանագրվելու: Մինչդեռ, հարևան Ադրբեջանում այս տարի կանխատեսում են, որ գրանցվելու է շուրջ 2,5% ՀՆԱ-ի աճի տեմպ, իսկ հաջորդ տարի սպասվում է 12,36% աճի տեմպ: Եթե սրան գումարենք այն, որ ադրբեջանական ՀՆԱ-ի ծավալները եռակի անգամ գերազանցում են Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքի ծավալները, ապա, կարծում եմ, որ հարցին անհրաժեշտ է մոտենալ ոչ միայն տնտեսական մրցակցության, այլև ազգային անվտանգության տեսանկյունից: Այս պարագայում ավելորդ չեմ համարում հիշեցման կարգով նշել հետևյալ իրողությունը. վերջին կես տարվա ընթացքում մենք ականատես ենք եղել, որ միջազգային ֆինանսական տարբեր կազմակերպությունների, մասնավորապես՝ Համաշխարհային բանկի, Արժույթի Միջազգային Հիմնադրամի պատվիրակությունները պարբերաբար Հայաստան ժամանելիս, մեր հիմնական հեռուստաալիքներով, իրար հերթ չտալով, գովերգում էին հանրապետության ֆինանսատնտեսական իշխանությունների կողմից

վարվող քաղաքականությունը, խորհրդաժողովներ, սեմինարներ էին անցկացնում՝ դրականորեն ներկայացնելով կառավարության կողմից ձեռնարկվող քայլերն ու գործողությունները: Արդյունքում՝ այսօր, ավա՜ղ, մեր ՀՆԱ-ի անկման տեմպերով վստահորեն զբաղեցնում ենք Կովկասի և Կենտրոնական Ասիայի 8 երկրներից վերջին հորիզոնականը: Ինչպե՞ս կարելի է գնահատել ֆինանսների և մակրոէկոնոմիկայի միջազգային այդ փորձագետների աշխատանքը մեր երկրում: Արդյո՞ք որպես մասնագիտական խոտան, թե բազմիցս կրկնվող թարգմանչական սխալ, որը ներհատուկ էր նաև նախկին արտգործնախարարին: Եթե հիշում եք, միջազգային ատյաններում Լեռնային Ղարաբաղին հարող ազատագրված տարածքները նա անգլերենով օկուպացվածի իմաստ հաղորդելով, այնուհետև արդարանում էր, թե թարգմանչական սխալի արդյունք է:

Տնտեսությունում առկա վտանգավոր զարգացումները միայն հիշատակծս թվերով չէ, որ հիմնավորվում են: Մասնավորապես, 2009 թ. հունվար-ապրիլին հավաքագրված ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ), այն է՝ 67,8 մլրդ դրամից (ինչը 22,2%-ով կամ 19,3 մլրդ դրամով զիջել է նախորդ տարվա նույն ցուցանիշը) ավելի քան 45,4 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին կատարված հարկումից: Նշենք, որ դա կազմում է ընդհանուր ԱԱՀ-ի 67%-ը, իսկ ապրանքների և ծառայությունների ներքին շրջանառությունից այն կազմել է 22,4 մլրդ դրամ կամ՝ 33%-ը: Սա միջնորդավորված խոսում է այն մասին, որ ՀՀ բյուջետային մուտքերը շարունակում են զգալիորեն պայմանավորված լինել արտաքին առևտրաշրջանառությունից, հատկապես՝ ներմուծումից: Այս հանգամանքին նույնպես պետք է մոտենալ նաև մեր երկրի տնտեսական անվտանգության տեսանկյունից, հատկապես հաշվի առնելով տարածաշրջանում ստեղծված կոմունիկացիաների անվտանգության տեսակետից ոչ միարժեք դրությունը:

Իսկ ինչպիսի՞ իրավիճակ է ստեղծվել մեր բանկային համակարգում: Նախ, առանձնահատուկ պետք է նշել, որ ԱՊՀ, թերևս և ոչ մի երկրում բանկային համակարգին չի հատկացվել այնպիսի օգնություն, ինչպիսին հատկացվել է Հայաստանում: Այսպես, վերջին տարիներին երկրում իրականացվող դրամավարկային քաղաքականությունը նպաստավոր պայմաններ է ստեղծել (գերշահույթներ ստանալու տեսանկյունից) տնտեսության երկու սեգմենտներին՝ արտաքին առևտրաշրջանառությունում մենաշնորհային դիրքեր ունեցող ներմուծողներին և բանկային համակարգին: Ասվածի ապացույցն է, դիցուք, այն, որ 2008 թ. ներմուծման ծավալները գերազանցել են արտահանման ծավալներն ավելի քան 4,1 անգամ, և գերազանցել են 1999 թ. ներմուծման ծավալները 5,5 անգամ: 2001 թ. սկսած ՀՀ բանկային համակարգի զուտ շահույթի աճի տեմպերը նույնպես եղել են աննախադեպ բարձր: Այսպես, վերջին 5 տարիների ընթացքում գրանցվել են զուտ շահույթի աճի հետևյալ ցուցանիշները. 2004 թ. այն կազմել է 24,93%, 2005 թ.՝ 27,72%, 2006 թ.՝40,8%, 2007 թ.՝12,36%: Իսկ, ահա 2008 թ., երբ արդեն իսկ ֆինանսական ճգնաժամն աշխարհով մեկ ծնկի էր բերում կայացած ֆինանսական համակարգեր ունեցող երկրների բանկային ամբողջ ոլորտը,

Հայաստանի առևտրային 22 բանկերից 19-ը գրանցեց զուտ շահույթների աննախադեպ բարձր աճի տեմպ՝ 30,5%: 2008 թ. ընթացքում առևտրային բանկերը միասին ապահովել են 27,1 մլրդ դրամ զուտ շահույթ: Տարվա ընթացքում, կրկնեմ, 19 բանկ աշխատել է շահութով և միայն 3 բանկ՝ վնասով: Նման ցուցանիշներ ապահովվել են ներմուծողների և բանկային համակարգում որպես իրավաբանական անձ հանդիսացողների, ըստ էության, կորպորատիվ շահերի համընկման արդյունքում, և դա իրականացվել է ի հաշիվ տնտեսության իրական հատվածի: Այստեղ, ինքնին հասկանալի է, որ խոսքը բանկերին հատկացվող օգնության տեսակարար կշռի մասին է՝ բանկային ընդհանուր ակտիվների մեջ: Իհարկե, Ռուսաստանի Դաշնությունը այս գնահատականի մեջ չի ներառվում, որովհետև այնտեղ բանկային համակարգին ուղղված աննախադեպ խոշոր ֆինանսական օգնությունը մեծապես պայմանավորված էր ՌԴ-ի ռազմավարական նշանակություն ունեցող հսկաների՝ օտարերկրյա բանկերին ունեցած վարկային պարտքերի մարումով: ՌԴ կառավարությունը խնդիր էր դրել վերջիններիս փրկել վարկատուների կողմից օտարված լինելու վտանգից: Իսկ Հայաստանի Հանրապետությունում պատկերն այլ է: Ընդհուպ մինչև 2009 թ. մարտի 2-ը, հայրենի կառավարության ֆինանսատնտեսական բլոկի ղեկավարները (նախարարներ, փոխնախարարներ, վարչության պետեր), ինչպես նաև Կենտրոնական բանկի ղեկավարությունն անդադար խոսում էին հայկական դրամի կայունության, դրա անառիկ ամրոց լինելու մասին: Հավանաբար, մտքներով անցնում էր, որ հայկական դրամի 15 տարի շրջանառության մեջ լինելու կապակցությամբ, երբ Կենտրոնական բանկի դիմաց փողի միավորի պատվին արձան կանգնեցրին, սխալ եզրակացության եկան, ենթադրելով, որ դրանով դրամը դարձրին ավելի կայուն, հետն էլ այն արժևորեցին: Ըստ որում, ասեմ, որ նման արձանաշինությունը մեր հավատքին խիստ անհարիր քայլ էր: Հինավուրց քրիստոնյա ազգ ենք և պետական մակարդակով, ասես թե, մարտահրավեր ենք նետում Տիրոջը, նրա պատգամին՝ Նոր Կտակարանի պատվիրանին՝ «Երկնքում, երկրի վրա և երկրի խորքի ջրերի մեջ որևէ կուռքեր չպիտի կերտես ու չպիտի պաշտես դրանց, որովհետև ես եմ քո Տեր Աստվածը»: Էլ չհիշեցնենք այն, որ չի կարելի ծառայել և՛ Մամմոնային, և՛ Աստծուն: Վերադառնալով բուն հարցին, արձանագրենք, որ մեր դյուրահավատ, ազնիվ ժողովուրդը հավատաց երկրի ֆինանսատնտեսական իշխանություններին և դրա համար … խստագույնս պատժվեց: Այսպես, 2009 թ. մարտի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերում հայկական դրամով ավանդների ծավալը կազմել է 153 մլրդ 309 մլն դրամ: Այդ օրը գրանցել էր 1 դոլարի դիմաց 305 դրամ փոխարժեք: Այդ պայմաններում, մեր հայրենակիցների դրամով արտահայտված ավանդները դոլարային փոխարժեքի վերածելու դեպքում կկազմեին 502 մլն 652 հազար 459 դոլար: Մինչդեռ 2 օր անց, մարտի 3-ին արդեն նոր միջին 365 դրամ մեկ դոլարի դիմաց փոխարժեքի պայմաններում, այդ նույն ավանդատուների դրամով արտահայտված ավանդների դոլարային արտահայտությունը կազմեց 420 մլն 24 հազար 657 դոլար: Այլ խոսքով ասած՝ մեր հարյուր հազարավոր ավանդատուները մեկ-

երկու օրերի ընթացքում, հավատալով գործադիր և բանկային իշխանություններին, կորցրին (կողոպտվեցին նրանց կողմից) 82 մլն 627 հազար 802 դոլարի չափով: Հարգելի ընթերցողներ, մեկնաբանությունները թողնում եմ Ձեզ:

Սա, իհարկե, իր բացասական անդրադարձը դեռ կթողնի բանկային համակարգի, ֆինանսական ողջ համակարգի վրա: Արդեն իսկ վերջին ամիսներին գրանցվել են շոշափելի փոփոխություններ ավանդների կառուցվածքի մեջ: Այսպես, եթե 2008 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդամենը ավանդների կազմում դրամով ներգրավված ավանդների տեսակարար կշիռը ավանդների ընդհանուր ծավալում կազմել էր 46,55%, ապա 2009 թ. մայիսի 1-ի դրությամբ այդ ցուցանիշը կազմել էր ընդամենը 26,74%: Այլ կերպ ասած՝ մեր ազգաբնակչության մոտ զգալիորեն մեծացել է թերահավատությունը հայկական դրամի նկատմամբ և դա, ինչ խոսք, հղի է բացասական հետևանքներով, հատկապես ֆինանսական ճգնաժամի կողմից դեռ սպասվելիք տհաճ անակնկալներով, որոնք, ավա՜ղ, մեզանով չեն պայմանավորված, որ կարողանանք դրանց առաջն առնել: Սա նույնպես ազգային անվտանգությանն առկա հնարավոր սպառնալիքների ոլորտից է:

Իսկ ինչպե՞ս կարելի է բնութագրել ձեռնարկվող քայլերը, ճգնաժամի բացասական ազդեցության հետևանքները մեղմելու ուղղությամբ: Ցավոք, դա կարելի է բնութագրել մեկ բառով՝ անարդյունավետ: Այսօր էլ մեր բանկային համակարգը առավելապես վարկավորում է մեր էկոնոմիկայի հիմնականում առևտրի և սպառողական ոլորտները: Այսպես, 2009 թ. մայիսի 1-ի դրությամբ, ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ հանդիսացող տնտեսությունում կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների (դրամով և արտարժույթով) կազմել են համապատասխանաբար առևտրում՝ 138 մլրդ 895 մլն դրամ կամ ընդամենը վարկային ծավալի 22,1%, սպառողական վարկերը կազմել են 152 մլրդ 711 մլն դրամ, կամ ընդամենը վարկերի 24,3%, մինչդեռ արդյունաբերության ոլորտում վարկերը կազմել են ընդհանուրի 14,9%, գյուղատնտեսությունում՝ 7,1%: Այլ կերպ ասած՝ նյութական արտադրության ոլորտի վարկավորումը՝ գյուղատնտեսություն-արդյունաբերություն միասին վերցված իր ծավալով նույնն է, ինչ առևտրային վարկերն են և զիջում է սպառողական ոլորտի վարկավորմանը: Իսկ մենք շատ լավ հասկանում ենք, որ թե՛ առևտրային և թե՛ սպառողական ոլորտների կողմից մատուցվող արտադրանքի առյուծի բաժինը ներմուծվում է: Այսինքն, անգամ իսկ ճգնաժամի պայմաններում մենք խթանում ենք օտար երկրների էկոնոմիկաները կրկնակի ավելի շատ, քան՝ տեղական արտադրողներին: Եվ սա էլ այն պայմաններում, երբ 2009 թ. Հայաստանի Հանրապետությունը դրսից՝ Համաշխարհային բանկի, Ռուսաստանի Դաշնության, Արժույթի Միջազգային Հիմնադրամի, Եվրասիական բանկի, Եվրոպայի Զարգացման և Վերակառուցման բանկի կողմից ակնկալում է ստանալ նվազագույնը շուրջ 1,5 մլրդ դոլարի արտոնյալ վարկեր: Դրսից ստացվող վարկերի կեսից ավելին մեր բանկային համակարգի միջոցով, այսպես թե այնպես, ծառայելու են Հայաստան ապրանքներ ներմուծող երկրների էկոնոմիկաների խթանմանը: Եվ դա

մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, որ վարվող «թանկ փողերի» քաղաքականությունը, երբ առևտրային բանկերի կողմից սահմանվում են վարկավորման այնպիսի տոկոսադրույքներ, որոնք 3-3,5 անգամ գերազանցում են Կենտրոնական բանկի կողմից պաշտոնապես ընդունված վերաֆինանսավորման տոկոսադրույքը (որը հունիսի 9-ին ԿԲ-ի խորհուրդը իջեցրել է 0,25 տոկոսային կետով՝ այն սահմանելով 6,00%), դրանք՝ այդ վարկերը դառնում են անմատչելի նյութական արտադրության ոլորտի համար: Հանգամանք, որը չի կարող մեզ չմտահոգել:

Ինչո՞ւ այսքան մանրամասնեցի, որովհետև վերը հիշատակված 1,5 մլրդ դոլարի հասնող վարկերի հետ, եթե վարվենք արդյունավետ, ապա դրանք կարող են բեկումնային նշանակություն ունենալ մեր տնտեսության զարգացման համար: Բավական է հիշեցնել, թե դրական ինչ դերակատարություն ունեցավ հետպատերազմյան արևմտաեվրոպական երկրների էկոնոմիկաների վերականգման գործում ԱՄՆ արտաքին գործերի նախարար (պետական քարտուղար) Ջորջ Մարշալի «Եվրոպայի վերականգնման ծրագիրը» (Marshall Plan, “Программа восстановления Европы”), որը նա հնչեցրեց 1947 թ. հունիսի 5-ին Հարվարդի համալսարանում, իսկ պաշտոնապես սկսեց կյանքի կոչվել 1948 թվականից: Հիշո՞ւմ եք, այդ ծրագրի համաձայն, 1948 թվականից մինչև 1951 թվականը ներառյալ, եվրոպական 17 երկրի պետք է տրամադրվեր ընդամենը 12,4 մլրդ դոլար: Այդ թվում՝ Արևմտյան Գերմանիային, որի տնտեսությունն առավել շատ էր քայքայվել 2-րդ համաշխարհային պատերազմի արդյունքում, 4 տարվա ընթացքում տրամադրվելու էր 1,3 մլրդ դոլարի օգնություն, Իտալիային՝ 1,3 մլրդ, Ֆրանսիային՝ 2,5 մլրդ, Մեծ Բրիտանիային՝ 2,8 մլրդ դոլար: Թե ինչ բարերար ազդեցություն թողեց այդ երկրների վրա հատկացված օգնությունը, տեղական ռեսուրսների հետ ճիշտ համադրման, նպատակասլաց տնտեսական քաղաքականության իրականացման արդյունքում, կարծում եմ, մեկնաբանությունների պահանջ չի առաջացնում:

Մեկ այլ կարևոր հարցի մասին էլ խորհենք ու այն հաշվի առնենք: Առնվազն 2009 թ. ընթացքում մեր ազգաբնակչության հոգսերը զգալիորեն թեթևացնող հիմնական աղբյուրը՝ օտար երկրներում, հատկապես Ռուսաստանի Դաշնությունում աշխատող իրենց հարազատներից, բարեկամներից ստացվող տրանսֆերտները, ավա՜ղ, շարունակելու են կրճատվել: Այսպես, այդ երկրներից ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումների զուտ մուտքերը, եթե 2008 թ. հունվար-ապրիլին կազմել են 318 մլն 50 հազար դոլար, ապա 2009 թ. առաջին չորս ամիսներին դրանք կազմել են 207 մլն 558 հազար դոլար կամ նախորդ տարվա 65,3%-ը: Հասկանալի է, որ այս գումարներին իրենց քանակով համադրելի են նաև բանկային համակարգը շրջանցող, այսպես կոչված, ծրարային տրանսֆերտները՝ առձեռն հանձնվող, կանխիկ արտարժութային օգնությունները, որոնք նույնպես համաչափորեն կրճատվել են: Այս իրողությունները մի կողմից, մյուս կողմից էլ արտահանման ծավալների առաջանցիկ կրճատումը ներմուծման ծավալների համեմատ կարող են լրա-

ցուցիչ ճնշում գործել ՀՀ վճարային հաշվեկշռի վրա, որն իր հերթին կարող է հանգեցնել դոլարի նկատմամբ դրամի փոխարժեքի անկման: Դա էլ կբերի ներմուծվող ապրանքների թանկացմանը, գնաճի ավելացմանը, որն էլ կհանգեցնի առևտրային բանկերի կողմից վարկային տոկոսադրույքների էլ ավելի բարձրացմանը: Այս ամենի արդյունքում ավելի կփոքրանա վարկային ներդրումների ծավալի մեջ նյութական արտադրության ոլորտին հատկացվող վարկերի չափը, որն առանց այդ էլ փոքր ծավալների էր: Սա էլ կհանգեցնի վտանգավոր չափերի հասնող էկոնոմիկայի իրական հատվածի վարկավորման շեշտակի կրճատման:

Այս և նմանատիպ այլ հարցերը պետք է դառնային այն հիմնական բաղադրիչները, որոնք պետք է դրվեին կառավարության և Կենտրոնական բանկի կողմից մշակվող հակաճգնաժամային ծրագրի, ինչպես նաև հարկաբյուջետային ու դրամավարկային քաղաքականության հիմքում: Այսօր անհրաժեշտ է արձանագրել, որ ֆինանսական հսկայական հոսքերի պայմաններում, այն է՝ 1,5 մլրդ դոլարի հասնող սպասվող վարկերի պարագայում, ՀՀ ֆինանսական համակարգը, որը կոչված է էկոնոմիկան, հատկապես նյութական արտադրանքի ոլորտը, ասես թե, արյունատար անոթների նման սնուցել, անհրաժեշտ չափով չի կատարում իր այդ հիմնական դերակատարությունը: Իսկ շինարարության ոլորտի խոստացված մեծածավալ վարկավորումը, խոսքը բացառապես, այսպես կոչված, էլիտար բնակարանային շինարարության մասին է, մեղմ ասած, չի դիմանում և ոչ մի քննադատության: Մոտ մեկուկես ամիս առաջ մեր հարգարժան վարչապետն իր ելույթներից մեկում նշել էր, որ այդ շենքերում այսօր կան ավելի քան 4000 պատրաստի բնակարաններ, որոնք, գնորդ չլինելու պատճառով, չեն վաճառվում: Բա, լավ, ֆինանսական այս նեղ պայմաններում, երբ էկոնոմիկայում առաջանում են հրատապ լուծումներ պահանջող բազում խնդիրներ, ի՞նչ, այդ 4000 բնակարանին ևս 1000 բնակարան ավելացնենք: Դրանով տնտեսության իրական աշխուժացում կապահովե՞նք: Մի՞թե մենք իրավունք ունենք դրսից ստացվող վարկերը (որոնց ստացումը մեծապես պայմանավորված է գրագետ նախաձեռնողական արտաքին քաղաքականությամբ) նման անարդյունավետ ձևով օգտագործել: Լավ, այդ մակրոէկոնոմիկա ասվածը որպես գիտություն, չէ՞ որ դեռ ոչ ոք չի արգելել, կեղծ գիտություն չի հայտարարել: Պատմությունից հիշում ենք, որ նման դեպքեր ժամանակին եղել են, երբ Կիբեռնետիկան, Գենետիկան Սովետական Միությունում հայտարարվել էին կեղծ գիտություններ, արդյունքում հսկայական վնաս հասցնելով երկրի ռազմաարդյունաբերական ճյուղին, ինչպես նաև՝ բժշկությանը, գյուղատնտեսությանը, տասնամյակներով հետ գցելով դրանց զարգացումը: Չէ՞ որ Մակրոէկոնոմիկայի հայտնի դրույթների համաձայն պետք է վարվի տնտեսական այնպիսի քաղաքականություն, որի պայմաններում ներդրումների նպատակային իրականացումն իր հետևից բերելու էր արտադրանքի ծավալի աճ. այդ օրինաչափությունը հայտնի է որպես բազմապատկչի էֆեկտ: Տնտեսական բազմապատկիչը հաշվարկվում է որպես ՀՆԱ-ի հավելաճի և ներդրումների ծավալի հարաբերություն, որն առաջացրել է այդ հավելաճը: Ահա, գործադիր իշխա-

նությունների արհեստավարժության աստիճանը նաև որոշվում է ներդրումներն առավել արդյունավետ կատարելու նրանց հմտությամբ, որն էլ մեծապես պայմանավորված է տնտեսությունում ներդրումային այնպիսի միջավայրի ձևավորմամբ, որտեղ բանկային նույն համակարգը շահագրգռված լինի վարկավորել ոլորտներ, ուր առավել բարձր է տնտեսական բազմապատկիչը, հավասար է 2-ի, 3-ի: Այդ պայմաններում 1,5 մլրդ վարկային դոլար ներդնելով՝ էկոնոմիկան կարող էր ակնկալել, որ մեկ-երկու տարիների ընթացքում այն միայն դրա արդյունքում կերաշխավորի ՀՆԱ-ի հավելաճ, որը կկազմի նվազագույնը 3 մլրդ դոլարին համարժեք: Այդ պայմաններում, բնական է, որ չես նախընտրի ֆինանսավորել սպառման շուկա չունեցող էլիտար շենքերի կառուցում՝ գրգռելով տասնյակ հազարավոր ընտանիքների, ում բնակարանային պայմանները չեն դիմանում սանիտարական և ոչ մի չափանիշի, էլ չասեմ՝ բնակարանազուրկ երիտասարդ ընտանիքների մասին:

Ինվեստիցիոն քաղաքականության փիլիսոփայությունը պետք է լինի մեկը. ստեղծել պայմաններ, որպեսզի վարկերը նպաստեն նոր աշխատատեղերի ստեղծմանը, գործող այն ձեռնարկությունների խթանմանը, որոնք ունեն թողարկած արտադրանքի երաշխավորված սպառման շուկա, անգամ իսկ դրանց ծավալների դինամիկ աճի դեպքում: Դրան պետք է նպաստի նաև վարվող հարկային քաղաքականությունը, բյուջետային քաղաքականությունը: Այստեղ հարկ է խնդիր դնել, որ բյուջետային ծախսված յուրաքանչյուր դրամը ավելացնի տեղական արտադրության ապրանքների ու ծառայությունների սպառողական պահանջարկի աճի առաջանցիկ տեմպի ապահովումը սպառողական առաջարկի նկատմամբ: Դա էլ իր հերթին ավելի հրապուրիչ կդարձնի այդ ճյուղերի զարգացումը: Սակայն սա արդեն մեկ այլ վերլուծության նյութ է:

Բ. Տ. Վերջերս, հունիսի 4-ից 6-ը Սանկտ Պետերբուրգում տեղի ունեցավ ավանդական դարձած Միջազգային տնտեսական ֆորումը: Անգամ իսկ դրա կազմակերպիչների համար անակնկալ էր, որ համաժողովը այդքան ներկայացուցչական եղավ՝ ֆորումի աշխատանքներին մասնակցում էին 83 երկրներից ավելի քան 3500 մասնակիցներ, այդ թվում՝ տարբեր երկրների նախագահներ, վարչապետեր, նախարարներ, տրանսազգային ընկերությունների ղեկավարներ, աշխարհահռչակ գիտնականներ, էկոնոմիկայի գծով Նոբելյան մրցանակի դափնեկիրներ: Ահա այս մարդկանց շրջանում ֆորումի կազմակերպիչները հարցում էին անցկացրել՝ «Ճգնաժամը հաղթահարելու համար ի՞նչ պետք է անեն կառավարությունները առաջին հերթին»: Հարցվածների 39% պատասխանել էր. «Ներդրումներ իրականացնել ինֆրակառուցվածքի մեջ», երկրորդ ծանրակշիռ պատասխանն էր՝ «Անհրաժեշտ է բանկային կառուցվածքի խոչընդոտները վերացնել»: Նման առաջարկով հանդես էին եկել հարցվածների 38%ը:

Այս պատասխանների մասին խորհելը և այդ ուղղությամբ առանց հապաղելու գործնական քայլեր կատարելը հրամայական պահանջ է նաև մեզ համար:

ՊԱՐԿԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՉՊԵՏՔ Է ԴԱՏԱՊԱՐՏԵԼԻ ԼԻՆԻ ԱՆԳԱՄ ՄԵԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ «ՀԱՅԼՈՒՐ. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ»-Ի ՀՅՈՒՐՆ Է «ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ» ՆԱԽԱԳԱՀ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԸ
(12.06.2009 թ.)

ՍՈՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ – Բարի երեկո, եթերում «Հայլուր. հարցազրույց»-ն է և մեր հյուրն է «Ազգային Միաբանություն կուսակցության» առաջնորդ Արտաշես Գեղամյանը: Բարի երեկո, պարոն Գեղամյան:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ – Բարև ձեզ:

Ս. Թ. – Պարոն Գեղամյան, նախ, խոսենք ԱՄՆ կառավարության «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիայի որոշման մասին: Երկու օր առաջ Վաշինգտոնում տեղի ունեցավ ընկերության տնօրենների խորհրդի նիստ, որի ավարտին ընդունվեց եզրակացություն, համաձայն որի կորպորացիան չի վերսկսի մեր երկրի ճանապարհային և վերականգնողական աշխատանքների ֆինանսավորումը: Սա, իհարկե, ծրագրի մի մասն է միայն, առավել խոշոր հատվածը ոռոգման համակարգինն է, որը շարունակվում է: Բայց և այնպես, Դուք ինչպե՞ս եք գնահատում այս որոշումը և ինչի՞ն էր այն ուղղված, եթե մեր երկրի ժողովրդավարացմանն եղած խնդիրների լուծմանը, ապա կարո՞ղ է արդյոք նման որոշումը նպաստել այդ նպատակներին:

Ա.Գ. – Ձեր հարցադրումը տեղին է: Այո, հունիսի 10-ին «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիայի տնօրենների խորհուրդը կայացրել է որոշում՝ դադարեցնել Հայաստանում ճանապարհաշինարարական ենթածրագրի ֆինանսավորումը, որը կյանքի կոչելու համար նախատեսվում էր հատկացնել շուրջ 68 մլն դոլար: Հիշեցնեմ, որ ՀՀ-ի հետ կնքած համաձայնագրով «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիան մեր երկրին պետք է տրամադրեր 235 մլն 600 հազար դոլար գումար, որից ճանապարհների ենթածրագրի համար նախատեսվում էր հատկացնել շուրջ 68 մլն դոլար և գյուղերում ոռոգման համակարգի արդիականացման ու նորոգման նպատակով ծրագրված էր հատկացնել 160 մլն դոլար: Այս ծրագիրը դեռ դադարեցված չէ, սակայն կորպորացիան իրավունք ունի կասեցնելու կամ դադարեցնելու ծրագիրն ամբողջությամբ կամ դրա առանձին ենթածրագրերը, եթե երկիրն անհրաժեշտ առաջընթաց չի ապահովում ժողովրդավարական մի շարք ցուցանիշներով: Դրանցից են՝ մամուլի ազատությունը, կոռուպցի-

այի դեմ պայքարը, կառավարության գործունեության թափանցիկությունը, ժողովրդավարական կառավարումը: Ահա այս մասին նիստից հետո հայտնել էր կորպորացիայի գործադիր տնօրենը՝ Ռոդնի Բենտը: Այսինքն՝ 160 մլն դոլարի տրամադրումը Հայաստանին նույնպես հարցականի տակ է: Հետաքրքրական է, որ տնօրենների խորհրդի հիշատակած նիստը նախագահում էր ԱՄՆ-ի պետական քարտուղար Հիլարի Քլինթոնը:

Հարկ է նշել, որ հունիսի 10-ին ԱՄՆ-ի պետական դեպարտամենտը հրապարակել է նաև ժողովրդավարության և մարդու իրավունքների մասին զեկույց, որում կոշտ քննադատության է ենթարկել Հայաստանի Հանրապետության իշխանություններին: Այս պարագայում ուշագրավ է, որ ս. թ. փետրվարի 25-ին հնչեցվել, իսկ 26-ին արդեն հրապարակվել էր ԱՄՆ Պետքարտուղարության «Աշխարհում մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարության մասին» ամենամյա զեկույցը: Ըստ որում, այդ զեկույցը նույնպես ընդունվել է ԱՄՆ նոր վարչակազմի իշխանության գալուց հետո: Երրորդ ուշագրավ դիտարկումն այն է, որ հունիսի 11-ի Վիեննայում, ԵԱՀԿ-ում ԱՄՆ մշտական ներկայացուցչության գրասենյակի գործերի ժամանակավոր հավատարմատար Կայլ Սքոթը մայիսի 31-ին կայացած Երևանի ավագանու ընտրությունների կապակցությամբ տարածել էր հայտարարություն: Այնտեղ տրված էին, ընդհանուր առմամբ, կոռեկտ և հավասարակշռված գնահատականներ: Դրանք համահունչ էին Եվրախորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի պատվիրակության՝ ընտրություններին տված գնահատականներին:

Ի՞նչ է այս ամենը նշանակում, արդյո՞ք սա պարզապես զուգադիպություն է, երբ մեր բարեկամ երկիրը՝ ԱՄՆ-ն (Պետքարտուղարությունը, «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիան, ԵԱՀԿ-ում ԱՄՆ մշտական ներկայացուցչությունը), մեկ-երկու օրերի ընթացքում երեք անգամ պաշտոնական նման բարձր մակարդակով անդրադառնում է մեր երկրի ներքին խնդիրներին:

Ահա, երբ փորձում ես այս երեք հարցերը վերլուծել, խնդիր ունենալով պարզել՝ մի՞թե ամերիկյան կողմը մտածում է, որ գյուղական քարուքանդ ճանապարհների վերակառուցումը դադարեցնելով «պատժում են» ՀՀ իշխանություններին և ոչ թե կոտրում հուսադրված գյուղացիների լավատեսությունը երկրի ապագայի հանդեպ, ապա հանգում ես հետևյալին: Այս հարցի պատասխանը, որքան էլ տարօրինակ հնչի, տվեց, ի՞նչ եք կարծում, ո՞վ՝ Թուրքիայի պաշտպանության նախարար Վեժդի Գյունելը 2009 թ. հունիսի 4-ին Վաշինգտոնում գումարված ամերիկաթուրքական խորհրդի 28-րդ նիստի ժամանակ: Ինչպես հայտնի է, ս. թ. հունիսի 1-ից 5-ը Միացյալ Նահանգներում իր առաջին պաշտոնական այցով էր գտնվում Թուրքիայի արտաքին գործերի նորանշանակ նախարար Ահմետ Դավութօղլուն, այդ ընթացքում տեղի ունեցավ վերը հիշատակած նիստը: Այցի շրջանակում նա քանիցս հանդիպումներ է ունեցել Սպիտակ տանը, Պետական քարտուղարությու-

նում, մասնավորապես, Հիլարի Քլինթոնի հետ: Թուրքիայի պաշտպանության նախարարն իր ելույթում հայտարարել էր. պետք է ձգտել նրան, որպեսզի Հայաստանը մերձենա Արևմուտքին և ոչ թե Ռուսաստանին ու Իրանին: Թուրքիայի պաշտպանության նախարարի նման հարցադրումը մատնեց թուրքերի իրական քաղաքականության ուղղվածությունը մեր տարածաշրջանում, բացահայտեց դրա նպատակը: Կարծում եմ, ԱՄՆ-ի՝ մեզ համար բարեկամ երկրի, շեշտեմ դա, ընդունած վերջին որոշումներն անուղղակիորեն նպատակամղված են օժանդակելու Թուրքիային՝ իր առջև դրված այդ խնդրի լուծմանը: Պարզապես, ներկա ժամանակում Հարավային Կովկասի տարածաշրջանում, ինչպես նաև ողջ աշխարհում աշխարհաքաղաքական շատ բարդ խնդիրներ են հասունացել, որոնք սպասում են իրենց լուծմանը: Այդ խնդիրները նոր չեն ծագել, դրանց մասին հռչակվել է դեռ սրանից երկու տարի առաջ՝ 2007 թ. փետրվար ամսին Դաշնային Գերմանիայում, երբ Ռուսաստանի Դաշնության այն ժամանակվա նախագահ Վլադիմիր Պուտինը Մյունխենի անվտանգության հարցերին նվիրված միջազգային վեհաժողովի ժամանակ շեշտել էր, որ աշխարհն այլևս չի կարող միաբևեռ մնալ, այն պետք է դառնա բազմաբևեռ, դա է ժամանակի հրամայականը: Ուժի միջազգային կենտրոններում մարդիկ կային, ովքեր կարծում էին, թե 2008 թ. նախագահական ընտրություններից հետո Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը և ՌԴ-ի դիրքորոշումները կարող են փոփոխության ենթարկվել: Բայց, ահա, եկեք տեսեք, որ 2008 թ. հոկտեմբերի 8-ին արդեն իսկ Ֆրանսիայում՝ Էվիանում, Համաշխարհային քաղաքականության հարցերին նվիրված միջազգային համաժողովում Ռուսաստանի նախագահ Դմիտրի Անատոլիևիչ Մեդվեդևը էլ ավելի խորացրեց տարիուկես առաջ Մյունխենում արված այդ հարցադրումները:

Այնուամենայնիվ, այս երկու-երեք ամիսների ընթացքում արմատական ի՞նչ փոփոխություններ եղան, որ Միացյալ Նահանգների պետական քարտուղարությունը 2 անգամ անդրադառնում է Հայաստանի նման փոքր Հանրապետությանը և արդյո՞ք այստեղ գերիշխող են ժողովրդավարության զարգացման, մարդու իրավունքների պաշտպանության, ինչ խոսք, շատ կարևոր խնդիրները, թե կան աշխարհաքաղաքական ուրիշ հարցեր: Ահա այստեղ ավելորդ չեմ համարում հիշատակել նաև Եվրամիություն - Թուրքիա ընթացող զարգացումները: Այսպես, 2009 թ. մայիսի 10-ին Բեռլինում կայացած ֆրանսիացի և գերմանացի երիտասարդների համաժողովին մասնակցած Գերմանիայի Դաշնային Հանրապետության կանցլեր Անգելա Մերկելը և Ֆրանսիայի նախագահ Նիկոլյա Սարկոզին հանդես էին եկել ելույթներով: Մասնավորապես, Անգելա Մերկելը, անդրադառնալով Եվրամիության հետագա ընդարձակմանը, հայտարարել էր, որ իմաստ չի տեսնում Եվրամիության շրջանակների հետագա ընդլայնման մեջ ավելի մեծ թվով երկրների ընդգրկմամբ և, որ դրանից Եվրամիությունն ավելի մարտունակ չի դառնա: Դրան հաջորդել էր Ֆրանսիայի նախագահ Նիկոլյա Սարկոզիի ելույթը, որտեղ նշել

էր. «Եվրոպան առանց սահմանների՝ դա Եվրոպա է առանց արժեքների» և որ «մենք չպետք է Թուրքիային դատարկ խոստումներ շռայլենք»: Թուրքիայի վարչապետն ու արտգործնախարարը քննադատության էին ենթարկել Մերկելի և Սարկոզիի հայտարարությունները՝ կոչ անելով Եվրամիության անդամ երկրներին Անկարայի մուտքը Եվրամիություն չդարձնել «ներքին օգտագործման» հարց: Պատահական չէր նաև Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի ջղաձիգ այն հայտարարությունը, որում ասել էր. եթե դուք չեք ուզում Թուրքիային, այդպես էլ ասեք: Դուք մեզ չեք ընդունում Եվրամիություն, որովհետև Թուրքիայի ազգաբնակչության մեծամասնությունը մահմեդական է: Իսկ Թուրքիայի նախագահ Գյուլն էլ հայտարարել էր, որ իր երկիրը երկրորդ աշխարհամարտից սկսած կարևոր դեր է խաղացել Եվրոպայի համար. «Թուրքիան այն երկիրն է, որը մեծ զոհաբերությունների է գնացել սառը պատերազմի տարիներին եվրոպացիներին պաշտպանելու համար և հիմա այդպես վարվել Թուրքիայի հետ անարդարացի է»: Վերջապես, Թուրքիայի նման ակտիվությունն ի՞նչ էր նշանակում: Սա նշանակում էր, որ վերջին ամիսներին թուրքական իշխանությունների կատարած բոլոր աշխատանքները, ասես թե, ջուրն են լցվում: Թվում է, թե մեր հարցերի հետ այս ամենն ի՞նչ կապ ունի:

Անցած ժամանակաշրջանում Թուրքիան ամեն բան արեց, որպեսզի սիրաշահի և ուղղորդի Ադրբեջանին մասնակիցը դառնալ Թուրքիայի տարածքով, շրջանցելով Ռուսաստանը, տարեկան 26-ից 32 մլրդ խորանարդ մետր գազաթողունակությամբ “Nabucco” գազատարի շինարարությանը: Այդ գազատարով պետք է Կենտրոնական Ասիայի և Կասպից ծովի գազային պաշարները տեղափոխեին դեպի եվրոպական երկրներ, մինչև Ավստրիա ներառյալ: Եվ այդ գազատարի անցկացումը միանշանակորեն ներդաշնակ է ԱՄՆ-ի կողմից մեր տարածաշրջանում հետապնդվող նպատակներին: Եթե այդ գազատարը շրջանցում է Ռուսաստանը, ապա վերջինիս տնտեսական ազդեցությունը Եվրամիության անդամ երկրների վրա կնվազի, կթուլանան նաև Ռուսաստանի հնարավորությունները Եվրոպայում սեփական երկրի համար տնտեսական ու քաղաքական առավելագույն բարենպաստ խնդիրների լուծման տեսակետից: Դրա հետ մեկտեղ, նշենք, որ ապրիլի 24-25-ին Սոֆիայում՝ Բուլղարիայում, կայացավ Հարավարևելյան Եվրոպայի, Կասպից ու Սև ծովերի տարածաշրջանի երկրների, ինչպես նաև Կենտրոնական Ասիայի, ԱՄՆ-ի, ՌԴ-ի, թվով 29 երկրների ղեկավարների և Եվրամիության մասնակցությամբ էներգետիկական գագաթաժողով: Գագաթաժողովի նշանաբանն էր՝ բնական գազ Եվրոպայի համար. անվտանգության համագործակցության ներքո: Էներգետիկական այդ գագաթաժողովի ժամանակ ընդունվեց եզրափակիչ փաստաթուղթ, որի համաձայն հավանության էին արժանացել իրարամերժ գազատարեր կառուցելու երկու ծրագիր. մեկը «Հարավային հոսքն» է, որով նախատեսվում է Կենտրոնական Ասիայի և Կասպից ծովի գազային պաշարները մղել դեպի Եվրոպա Ռուսաստանի տարածքով՝ Սև ծովի

հատակով: Հավանության արժանացավ նաև երկրորդ նախագիծը՝ հիշատակածս “Nabucco”-ն: Ներկայումս մեր տարածաշրջանում ծավալվող զարգացումները հիմնականում պայմանավորված են նրանով, թե այդ երկու նախագծերից, ո՞րը կհաջողվի կյանքի կոչել: Թուրքիան ամեն կերպ ձգտում է առաջնություն տալ “Nabucco” ծրագրի իրագործմանը: Այդ հարցում նրան անթաքույց սատարում է ԱՄՆ-ն, ինչպես նաև Եվրամիության մի շարք անդամ երկրներ: «Հարավային հոսք» գազատարի շինարարությանը կողմնակից է Ռուսաստանը, Իտալիան, ինչպես նաև Ղազախստանը, Ուզբեկստանը: Ահա, մրցակցության այս իրավիճակում Ադրբեջանը, գիտակցելով այս հարցում իր որոշակի դերակատարությունը, ժողովրդական լեզվով ասած, խաղեր է, որ տալիս է: Ինքնին հասկանալի է, որ Կենտրոնական Ասիայից ու Կասպից ծովից գազի տեղափոխման երեք ճանապարհ կա. մեկը՝ Ադրբեջանի վրայով, մյուսը՝ Ռուսաստանի տարածքով և երրորդը՝ Իրանի տարածքով, ինչն այսօր, հասկանալի պատճառներով, անիրականանալի է: Կրկնում եմ, Ադրբեջանը, գիտակցելով, որ այս խնդրի լուծման բանալին իր ձեռքում է, ամեն կերպ մանևրում է, այն է՝ Ռուսաստանին հուսադրում է, ասելով, որ ինքն անպայմանորեն կողմնակից կլինի, որ այդ գազատարը գնա Ռուսաստանի վրայով: Ավելին, վերջերս՝ հունիսի 4-ին, Սանկտ Պետերբուրգում Սարգսյան-Ալիև-Մեդվեդև հանդիպումից առաջ Ադրբեջանի արտաքին գործերի փոխնախարարը հանդես էր եկել հայտարարությամբ, ասելով, որ “Nabuccon”-ն անիրականանալի ծրագիր է, և որ դա շահագործելու համար պարզապես անհրաժեշտ ծավալի գազ չի լինի: Իր հերթին Թուրքիան էլ հասկանում է, որ եթե զրկվի “Nabucco”-ի շահագործմամբ Եվրոպայի վրա ներազդելու այդ լծակից, ապա մեր տարածաշրջանում չի կարողանա կատարել այն դերակատարությունը, որը հռչակվել է Թուրքիայի իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության կողմից, այն է՝ մեր տարածաշրջանում դառնալ հեգեմոն ուժ: Նման զարգացումներով, երբ Թուրքիայի դերակատարությունը Հարավային Կովկասում մեծանում է, շատ ու շատ շահագրգռված է ԱՄՆ-ն: Եվ պատահականություն չէր, որ ստեղծված խորապատկերում մայիսի 7-ին Պրահայում Եվրամիության գագաթաժողովի օրերին, որը թեպետ նվիրված էր «Արևելյան գործընկերություն» ծրագրի վավերացմանը, այնուամենայնիվ կազմակերպվել էր Սարգսյան-Ալիև հանդիպումը: Դրա ավարտին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը հանդես եկավ հստակ ձևակերպված հայանպաստ դիրքորոշումներով: Պրահյան հանդիպումների ժամանակ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրների կարգավորման ուղղությամբ հայկական կողմից հնչեցված կոշտ գնահատականներն ադրբեջանաթուրքական քաղաքական ընտրանու մոտ լուրջ խուճապ առաջացրին: Նրանց համար ակնհայտ դարձավ, որ Հայաստանը խնդրո առարկայի շուրջ իր սկզբունքային դիրքորոշումներից մեկ քայլ անգամ չի նահանջի: Իսկ այդ սկզբունքների մասին մենք լավ գիտենք, այնպես որ, հարկ չկա դրանց անդրադառնալ: Եվ, ահա, այստեղ էր, որ բլիթի այն քաղաքականությունը, որը Հայաստանի հանդեպ իրա-

կանացնում էր Միացյալ Նահանգները, փոխարինվեց մտրակին անցնելու քաղաքականությամբ: Բլիթի քաղաքականության շրջանակում հիշո՞ւմ եք, վերջերս, գրեթե մեկ շաբաթվա ընթացքում, ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը երկու անգամ հաղորդակցվել էր պարոն Սերժ Սարգսյանի հետ՝ մեկ անգամ հեռախոսազրույց էր տեղի ունեցել, մեկ անգամ էլ դիմել էր նամակով: Ս. թ. ապրիլի 7-ին ելույթ ունենալով Թուրքիայի պառլամենտում ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման ասել էր, որ շարունակում է մնալ 1915 թ. Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ կատարվածի վերաբերյալ նախկինում հայտնած իր տեսակետներին: Թուրքիայում Օբամայի կողմից կատարված այս հայտարարությունը շատ նշանակալի է: Ապրիլի 7-ին այցելելով Թուրքիա՝ Բարաք Օբաման ավարտեց Եվրոպա կատարած իր առաջին պաշտոնական այցը: Դա մեկնարկել էր Լոնդոնում հրավիրված G-20 գագաթաժողովին մասնակցությամբ, այնուհետև շարունակվել էր Ստրասբուրգում և Կելում ՆԱՏՕ-ի գագաթաժողովին ու Պրահայում Եվրամիության գագաթաժողովին մասնակցությամբ: Թուրքիա կատարած իր պաշտոնական այցով Օբաման վերահաստատեց, որ Թուրքիային տեսնում է որպես ոչ միայն ՆԱՏՕ-ի իր հուսալի դաշնակցի, այլ նաև, իբր, Արևմուտքը իսլամական աշխարհին կապող կարևոր միջնորդի: Դրանից օրեր անց, ապրիլի 24-ին ԱՄՆ նախագահն իր ուղերձում, ճիշտ է, ցեղասպանություն բառը չէր օգտագործել, սակայն երկու անգամ ասել էր «Մեծ եղեռն» բառակապակցությունը: Հետագայում, երբ նրանք տեսան, որ Հայաստանի համար կան մայր այնպիսի սկզբունքներ և ճակատագրական հարցեր, որոնք անբեկանելի են, դրանց նկատմամբ և ոչ մի զիջում երբեք ու երբեք չի կարող լինել, լինի դա երկրի Նախագահը, լինի՝ արտգործնախարարը, այդ ժամանակ էլ անցան մտրակի քաղաքականության: Ի պատիվ մեր իշխանությունների, վերջիններիս քանիցս հայտարարել են, որ այդ հարցերում լինելու են անդրդվելի, անգամ իսկ եթե մյուս կողմը նախընտրի ճնշումներ գործադրելու ճանապարհը: Հայաստանի նկատմամբ ճնշումներ գործադրելու ճանապարհ է, օրինակ, այն իրողությունը, որ ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիան սկզբից 68 մլն դոլարից է մեզ զրկում, ապա նաև ակնարկում, որ 160 մլն դոլար ոռոգման համակարգի արդիականացման նպատակով հաստատված ծրագիրն էլ է հարցականի տակ: Եվ հետաքրքրականն այն է, որ երբ կարդում ես ԱՄՆ պետական դեպարտամենտի հրապարակած զեկույցը, ուսումնասիրում այնտեղ առկա հարցադրումները, ապա տեսնում ես, որ ԱՄՆ-ի այսօրվա իրողությունների հետ մեր իրողությունները մի զարմանալի նմանություն ունեն: Այսպես, զեկույցում Հայաստանի Հանրապետությանը, ի թիվս այլ հարցերի, մեղադրում են նրանում, որ մեր երկրում «բանտային պայմանները շարունակել են մնալ անբավարար ու անառողջ»: Արդարացի քննադատություն է, իրոք, արդարացի է: Բայց, ի դեպ, բանտային պայմանների խայտառակ լինելու մասին խոսել էր նույն ինքը՝ Բարաք Օբաման, իր նախընտրական քարոզարշավի ժամանակ՝ մատնանշելով Կուբայի ամերիկյան Գու-

անտանամոռ ռազմական բազայում տիրող բարքերն ու պայմանները, նաև ասել էր, որ դրանք այնտեղ անմարդկային են: Եվ խիստ գովելի էր, որ 2009 թ. հունվարի 22-ին ԱՄՆ նորընտիր նախագահ Բարաք Օբաման հրամանագիր էր ստորագրել Գուանտանամոյի բանտը փակելու վերաբերյալ:

Հայաստանին մեղադրում են նրանում, որ «ոստիկանությունը ծեծել է նախաքննության փուլում գտնվող կալանավորներին և որոշ դեպքերում չի ապահովել արդարացի քննություն»: Ավա՜ղ, նման դեպքեր նույնպես արձանագրվել են: Բայց մենք գիտենք, 2006 թ. Ջորջ Բուշը վավերացրել էր «Ռազմական հանձնաժողովների մասին» օրենքը, որը, ըստ էության, հատուկ ծառայություններին իրավունք էր վերապահում ահաբեկչության մեջ կասկածվող կալանավորվածների նկատմամբ խոշտանգումներ կիրառել: Բարաք Օբաման արգելել էր նաև այդ օրենքի կիրառումը: Համաձայն նրա մեկ այլ հրամանագրի, ցանկացած հետաքննություն պետք է համապատասխանի Ժնևի Կոնվենցիայի պահանջներին: Այսինքն՝ այս հարցում նույնպես մեր իշխանությունները, ասես թե, ժամանակին ընդօրինակել են այն, ինչ ամերիկացիները, ժողովրդավարության հարցերում լինելով առաջամարտիկ, կիրառել են իրենց երկրում: Եվ, վերջապես, այս շարքից երրորդ հարցադրումը, առ այն, որ «ՀՀ իշխանությունները ոչ միշտ են հարգել քաղաքացիների անձնական կյանքի գաղտնիությունը»: Այս կապակցությամբ նշենք, որ 2001 թ. սեպտեմբերի 11-ի զարհուրելի ահաբեկչությունից հետո ԱՄՆ Կոնգրեսն ընդունել էր “USA Patriot Act” օրենքը, որն արդեն հոկտեմբերի 20-ին ստորագրել էր նախագահ Ջորջ Բուշը: Այդ օրենքը մեծապես հեշտացրել էր իրավապահ մարմինների աշխատանքը՝ կիրառել այնպիսի գործողություններ, ինչպիսիք են՝ կասկածյալների հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումներ, արտաքին հսկողություն: Այս օրենքը դժգոհության մեծ ալիք էր բարձրացրել իրավապաշտպան կազմակերպությունների միջավայրում, սակայն այն 2005 թ. հուլիսի 22-ին ԱՄՆ Կոնգրեսի կողմից երկարաձգվեց: Ավելին, 2006 թ. մարտի 10-ին Սպիտակ տանը հատուկ արարողակարգի պայմաններում Ջորջ Բուշը իր ստորագրությունը դրեց “USA Patriot Act” օրենքի կիրառումը երկարացնելու մասին Կոնգրեսի կողմից ընդունված որոշման տակ: Ի նկատի ունենալով, որ ամերիկյան կոմունիկացիոն կապ իրականացնող տեխնիկական միջոցները աշխարհի լավագույններից են, դա ԱՄՆ հատուկ ծառայություններին հնարավորություն էր ընձեռել անհապաղ գրանցել յուրաքանչյուր դեպք, երբ ցանկացած անձ բավական է հեռախոսով հիշատակեր Ալ Կաեդա կամ Օսամա Բեն Լադեն անունները, որպեսզի իսկույն կալանավորվեր: Ասվածից կարելի է գալ այն եզրակացության, որ Ամերիկայի Պետքարտուղարությունը մեղադրում է մեզ, միգուցե և արդարացի, ճիշտ այն հարցերում, որոնք հատուկ են նաև իրենց երկրին և որոնք խիստ քննադատվել են Բարաք Օբամայի կողմից իր նախընտրական քարոզարշավի շրջանակում: Կարծում եմ, այս պարագայում մեր Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանն իր գործընկեր Բարաք Օբամայի հետ պետք է ըն-

թանան այն ուղղությամբ, որի մասին իրենց նախընտրական քարոզարշավների ժամանակ երկուսն էլ հայտարարել են՝ օրինականության հաստատման և այդ գործում իրենց վճռականության մասին: Այնպես որ, ԱՄՆ պետքարտուղարության կողմից մեզ տրված այդ կոշտ գնահատականները, կարծում եմ, նաև Միացյալ Նահանգներում ներքին օգտագործման համար են: ԱՄՆ վարչակազմը, ասես թե, ամերիկացիներին ասելիս լինի՝ տեսեք, եթե մենք Հայաստանին նախատում ենք այս արատների համար, ապա մենք պետք է բարի լինենք և բարոյական գտնվենք սեփական երկրում դրանք նույնպես վերացնել: Ինչո՞ւ չէ, մեր հասցեին հնչած քննադատությունը մեծ նվեր էր թուրք-ադրբեջանական կողմի համար: Եվ հակված եմ մտածելու, որ ամենևին էլ պատահական չէր այն, որ Հայաստանի Հանրապետությանը վերաբերող ԱՄՆ կողմից ընդունված այդ երեք փաստաթղթերը՝ ԱՄՆ-ի պետքարտուղարության տարեկան զեկույցը, «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիայի տնօրենների խորհրդի որոշումը և ԵԱՀԿ-ում ԱՄՆ-ի մշտական ներկայացուցչության տարածած հայտարարությունը կայացվեցին ս. թ. հունիսի 10-11-ին: Այսինքն՝ Միացյալ Նահանգներից Ահմետ Դավութօղլու գլխավորությամբ թուրքական պատվիրակության Թուրքիա վերադարձից հաշված օրեր անց: Եվ թուրքերին հատուկ երկդիմությամբ՝ վերադառնալուց երկու օր անց նրանք տեղական լրատվամիջոցները ողողեցին արտգործնախարար պարոն Դավութօղլու հայտարարություններով՝ վերջ Հայաստանի և Թուրքիայի միջև սառը պատերազմին, դա այլևս ավարտված է և «մենք պատրաստակամություն ենք հայտնում Հայաստանի հետ նորովի կառուցել մեր հարաբերությունները»: Կարելի էր դրանց հեղինակին կողքից հուշել, որ իր հիշատակած անգամ իսկ սառը պատերազմի ամենածանր տարիներին Եվրոպայում բացարձակապես ոչ մի սահման փակ չի եղել, եվրոպական և ոչ մի երկիր Սովետական Միության կողմից շրջափակման չի ենթարկվել: Այո, երբ համատեքստում խոսում են ժողովրդավարությունից, երբ խոսում են մարդու իրավունքներից, ապա դրանք առավել ազդեցիկ դարձնելու նպատակով կարելի էր նաև ինքնաքննադատորեն անդրադառնալ այն հարցին, որ 1993 թ. սկսած Թուրքիայի իշխանությունները միակողմանի փակել են հայ-թուրքական սահմանը՝ կոպտորեն խախտելով ազատ տեղաշարժվելու մարդու իրավունքը: Որ Թուրքիայի կողմից իրականացվող շրջափակման, բլոկադայի արդյունքում մեր հանրապետությունը տարեկան կտրվածքով կրում է նվազագույնը 700-850 մլն դոլարի վնաս: Այդ վնասները կրում են ճիշտ այն նույն գյուղացիները, որոնց կոչված էր օգնել Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագիրը: Մեր զրույցը փոքր-ինչ լիցքաթափելու համար ասեմ, գիտե՞ք, թե այդ ծրագիրը ինչպես է ծնվել: Պաշտոնական տեղեկությունների համաձայն, 1980-2000 թթ. Միացյալ Նահանգները 170 մլրդ դոլարի օգնություն է հատկացրել աշխարհի 150 երկրի: Հետագայում Համաշխարհային բանկն ուսումնասիրել է, թե ինչպիսին է եղել այդ օգնության արդյունավետությունը: Արդ-

յունքում պարզվել է, որ 150 երկրներից 100-ում արձանագրվել է, որ մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքի ծավալը 1076 դոլարից կրճատվել է՝ հասնելով 994 դոլարի: Դրանից ելնելով էլ՝ Ջորջ Բուշ Կրտսերը, ԱՄՆ օգնության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, 2004 թ. հիմնեց «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագիրը, որին առ այսօր, եթե չեմ սխալվում, անդամակցում է 23 երկիր:

Ամփոփելով այս ամենը, կարծում եմ, որ Հայաստանի Հանրապետությունը բարոյական իրավունք ունի ռազմաքաղաքական իր դաշնակիցներին ասել, որ արտաքին քաղաքականություն իրականացնելիս մեր երկիրը հավատարիմ է եղել իր դաշնակցային պարտավորությունների կատարմանը: Սակայն, վերջին հաշվով, մեր տարածաշրջանում Թուրքիայի գերիշխանություն հաստատելու նպատակի իրականացմանը խոչընդոտ լինելու փաստով են պայմանավորված Հայաստանի նկատմամբ իրականացվող ճնշումները: Եվ Թուրքիայի դերակատարության բարձրացումը, Հարավային Կովկասում գերիշխանություն հաստատելը, ավա՜ղ, բխում է նաև Ամերիկայի Միացյալ Նահանգների շահերից: Կրկնում եմ, այդ խնդրի լուծմանը, փաստերը դա են վկայում, խոչընդոտ է հանդիսանում մեր երկիրը: Վերջերս Հայաստանի Հանրապետությունը առավել կոշտ գնահատականների արժանացավ նաև այն պատճառով, որ հայկական իշխանությունները, իսկապես, հեռատեսություն դրսևորեցին՝ անդավաճան գտնվեցին Ռուսաստանի Դաշնության նկատմամբ, ականջալուր եղան պրեզիդենտ Դ. Մեդվեդևի հորդորներին և չմասնակցեցին ս. թ. մայիսի 6-ից հունիսի 10-ը Վրաստանում անցկացվող ՆԱՏՕ-ի “Cooperative Longbow 09/Cooperative Lancer” զորավարժություններին: Ի դեպ, նշեմ, որ բացի մեր երկրից, դրանց չմասնակցեցին նաև Մոլդովան, Սերբիան, Ղազախստանը, Էստոնիան և Լատվիան, 6 երկիր: Ծրագրված էր, որ զորավարժություններին մասնակից երկրների թիվը կազմելու էր 19-ը: Այսինքն՝ երկրին պատժում են դաշնակցային պարտավորություններին հավատարիմ մնալու և մեր դաշնակիցներին նվիրված մնալու համար: Եվ այս պարագայում, կարծում եմ, մեր գլխավոր ռազմավարական դաշնակից երկիրը՝ Ռուսաստանի Դաշնությունը, ինչպես և նախկինում, ցույց կտա իր բարոյական, ինչո՞ւ չէ, նաև տնտեսական աջակցությունը Հայաստանին և իր հնարավորության շրջանակներում անպայմանորեն կնպաստի, մասնավորապես, գյուղական ճանապարհաշինության ծրագրերի կենսագործմանը: Մեր ժողովուրդը պետք է ականատեսը դառնա, որ երբ Հայաստանի Հանրապետությունը մինչև վերջ պարկեշտություն, բարոյականություն է դրսևորում թե՛ իր դաշնակիցների և թե՛, ինչու ոչ, իր բարեկամների նկատմամբ, ապա դրա հետևանքով նա չպետք է կրի ոչ բարոյական և ոչ էլ նյութական կորուստներ: Մասնավորապես, հայ-թուրքական հարաբերությունների կայացման գործում մեր իշխանությունները ԱՄՆ-ին այս հարցում երբեք ու երբեք խնդիրների առաջ չեն կանգնեցրել: Ավելին, նրանք ենթարկվել են կոշտ, երբեմն դաժան քննադատության, ծանր հարվածներ են ստացել սեփական երկրում և ոչ

միայն ընդդիմության կողմից: Եվ տարածաշրջանային զարգացումները գալիս են համոզելու՝ այսօր օդ ու ջրի պես անհրաժեշտ է, որ մեր երկրի քաղաքական ընտրանին կոնսոլիդացիայի ենթարկվի, համախմբվի ու հասկանա, որ մենք ապրում ենք բախտորոշ ժամանակաշրջանում և որ խնդիրն ամենևին Հայաստանի ժողովրդավարացման, մարդու իրավունքների պաշտպանության հետ և ոչ մի աղերս չունի, այլ պայմանավորված է նրանով, ինչի մասին հրապարակավ հայտարարել էր Թուրքիայի պաշտպանության նախարարը՝ Վեժդի Գյունելը. «Հայաստանին պետք է ամեն գնով կտրել Ռուսաստանից և Իրանից»: Ահա այս շղթայում է պետք նայել, թե «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիայի տնօրենների խորհուրդը ինչո՞ւ ի վնաս Հայաստանի նման կողմնակալ որոշում ընդունեց, ինչո՞ւ ԱՄՆ-ի պետքարտուղարությունը հանդես եկավ կոշտ զեկույցով, ինչո՞ւ ԵԱՀԿ-ում Միացյալ Նահանգների մշտական ներկայացուցչությունը Երևանի ավագանու ընտրությունների վերաբերյալ ընդունեց հատուկ որոշում: Չէ՞ որ ձեզ հետ մենք շատ լավ գիտենք, որ մայիսի 31-ի ընտրությունների հաջորդ իսկ օրը Եվրախորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի 15 հոգուց բաղկացած մասնագիտացված պատվիրակությունը հունիսի 1-ի առավոտյան հրավիրել էր մամուլի ասուլիս, որտեղ ասվել էր, որ Երևանի ավագանու ընտրությունները հիմնականում համահունչ են եվրոպական չափանիշներին:

Ս. Թ. – Պարոն Գեղամյան, եթե թույլ կտաք, հաջորդ հարցս հենց այդ ընտրություններին է վերաբերում: Եվ այսպես, Երևանի ավագանու ընտրություններն ավարտվեցին, և հենց երեկ տեղի ունեցավ մայրաքաղաքի նորընտիր քաղաքապետի երդման արարողությունը, և, ինչպես Դուք նշեցիք, բոլորս էլ գիտենք, որ թե՛ ընտրարշավի, թե՛ բուն ընտրության ընթացքում միջազգային դիտորդներն իրենց գնահատականներում նշել են, որ ընտրությունները, ընդհանուր առմամբ, անցան եվրոչափանիշներին համապատասխան: Եվ, այո, Եվրախորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի պատվիրակությունը հենց հաջորդ օրը մամուլի ասուլիսում նշեց և նույնիսկ ողջունեց, որ Հայաստանը սեփական ներուժով նպաստեց տեղական ժողովրդավարության ներդրմանը: Եվ, ինչպես Դուք արդեն հիշատակեցիք, ԵԱՀԿ-ում ԱՄՆ դիվանագիտական առաքելությունը նույնպես հանդես եկավ զեկույցով, որտեղ ողջունվում էր լրատվական դաշտի ապահովումը, բայց միևնույն ժամանակ նշվում էր, որ ընտրությունների վրա ստվեր էին գցում ընտրակեղծիքները, որ տեղի է ունեցել լցոնում, նաև սպառնալիքներ են եղել դիտորդների ու վստահված անձանց նկատմամբ: Հիմա խոսենք այս ամենի մասին, Ձեր գնահատականները:

Ա.Գ. – Իմ գնահատականն այսպիսին է. ինչ խոսք, իդեալական ընտրություններ չեն եղել, բայց ընտրական պրոցեսը պետք է դիտարկել իր շարժընթացի, դինամիկայի մեջ: Եթե մենք նայում ենք դինամիկայի մեջ, ապա ձեզ

հետ համոզվում ենք, որ ընտրական անցած գործառույթներում առաջխաղացում, այնուամենայնիվ, արձանագրվել է: Իսկ ինձ համար առավել կարևորն այն է, որ արձանագրված խախտումների կապակցությամբ շատ արագ միջոցներ ձեռնարկվեցին հանրապետության Գլխավոր դատախազության, ներքին գործերի մարմինների կողմից այն բոլոր դեպքերի առնչությամբ, որոնք գրանցված են եղել և՛ դիտորդական առաքելության կողմից և՛, ինչու չէ, նաև վստահված անձանց բողոքներում: Քաղաքապետարանում երեկ տեղի ունեցած նորընտիր քաղաքապետի երդմնակալության արարողության ժամանակ Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանն իր ելույթում վերահաստատեց, որ այն բոլոր անձինք, ովքեր զբաղված են եղել ընտրակեղծիքներով, անպայմանորեն խիստ պատասխանատվության կենթարկվեն: Այստեղ հարկ է նշել, որ Երևանի ավագանու ընտրություններն ընդամենը պատրվակ էր, որպեսզի դրսից կարողանան միջամտել Հայաստանի Հանրապետության ներքին գործերին՝ նպատակ ունենալով Հարավային Կովկասում հասնել աշխարհաքաղաքական որոշակի խնդիրների լուծման: Խնդիրը հենց այս է, և կան ուժեր, որոնք ցանկացած գնով փորձում են դա անել ու բացարձակապես պատահական չէ, որ դրան է նաև ուղղված այն դրսևորումը, որի ականատեսը եղանք ձեզ հետ: Խոսքը հետևյալի մասին է. երեկ չէ առաջին օրը, հունիսի 10-ին Ազգային ժողովի հայտարարությունների ժամին «Ժառանգություն» խմբակցության պատգամավորներից մեկը հանդես եկավ հայտարարությամբ (կարծում եմ, այդ ելույթը միայն և միայն հայրենասիրական մղումներով էր դրդված), որտեղ ասվում էր. Հայաստանի Հանրապետությունը պետք է պաշտոնապես ճանաչի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը: Դուք պատկերացնո՞ւմ եք, թե ի՞նչ փաստի առաջ կկանգներ մեր երկիրը, եթե հանկարծ առաջնորդվեինք նման պարզունակ հայրենասիրությամբ: Դրա արդյունքում Ադրբեջանն արդեն իսկ բարոյական բոլոր հիմնավորումները կունենար հայտարարելու՝ բա, որ ես ասում էի՝ Հայաստանի հետ միայն ուժի դիրքերից պետք է խոսել: Մատնացույց կանեին, որ բանակցային գործընթացի վճռական փուլին, երբ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարը հունիս 4-ի Սանկտ Պետերբուրգի հանդիպումից հետո հայտարարեց, որ առաջընթաց քայլ է արձանագրվել, Հայաստանն ընդունում է միակողմանի որոշում, որը վիժեցնում է բանակցային ողջ գործընթացը: Առավել ևս, երբ հուլիսին չի բացառվում, որ կարող է տեղի ունենալ Ալիև-Սերժ Սարգսյան հերթական հանդիպումը: Ավելին, արդեն իսկ շրջանառվում և խոսվում է այն մասին, որ չի բացառվում հուլիսի 6-ից 8-ը Բարաք Օբամայի Ռուսաստան կատարելիք պաշտոնական այցի ժամանակ կայանա Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների հանդիպումը: Ըստ որում, վերլուծաբանները հնարավոր են համարում, որ այդ հանդիպմանը նաև հրավիրվի Ֆրանսիայի նախագահ Նիկոլյա Սարկոզին (որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ հանդիսացող երկիր): Եվ նման պատասխանատու փուլից առաջ ՀՀ Ազգային ժողովի ամբիոնից հնչում են նման հայ-

տարարություններ: Ես դավադրությունների տեսության կողմնակիցը չեմ, բայց սիրում եմ փաստերը հրապարակել և թող բոլորս, հատկապես քաղաքականության մեջ ներգրավված մարդիկ, մեկ անգամ ևս վերլուծեն՝ արդյո՞ք պատահականություն է, որ երեքշաբթի օրը առավոտյան Դենիել Ֆրիդին փոխարինած Ֆիլիպ Գորդոնը՝ ԱՄՆ-ի պետքարտուղարի Եվրոպայի և Եվրասիայի հարցերով տեղակալը, որը մայիսի 15-ին այդ պաշտոնում փոխարինեց Դենիել Ֆրիդին, հանդիպում է ունենում «Ժառանգություն» խմբակցության առաջնորդի հետ, իսկ նույն օրը երեկոյան հայտարարություն է հնչում Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչման մասին: Ես մեր գործընկերների հայրենասիրության մեջ չեմ կասկածում, պարզապես ցանկացած հայտարարություն անելիս պետք է անպայմանորեն մեզ հաշիվ տանք՝ հնարավոր ի՞նչ հետևանքների կարող է դա հանգեցնել և այդ հետևանքները այսօր որքանո՞վ են պահանջված Հայաստանի Հանրապետության համար: Չէ՞ որ ամենևին էլ պատահական չէր, որ հունիսի 4-ին Սանկտ Պետերբուրգում Սարգսյան-Մեդվեդև-Ալիև հանդիպումը ոչ թե պաշտոնական էր, որտեղ բանակցություններ վարեցին, այլ այն անցավ ընթրիքի սեղանի շուրջ և արդյունքում քաղաքական ոչ մի հայտարարություն չարվեց: Կնշանակի, ռազմաքաղաքական մեր հիմնական դաշնակից Ռուսաստանի Դաշնությունը, ի դեմս երկրի նախագահ Դմիտրի Մեդվեդևի, ներկայումս ձեռնպահ է մնում մեր տարածաշրջանի հետ կապված որևէ կտրուկ գործողություն կատարելուց: Որովհետև նա շատ լավ հասկանում է, թե ի՞նչ խմորումներ կան և ի՞նչ ուժեր են կանգնած այս շատ բարդ թնջուկի հետևում: Խնդիրը, որ հետապնդում են մեր երկրի հակառակորդները, մեկն է՝ պատրանք ստեղծել, որ Ադրբեջանի Հանրապետությունը Ռուսաստանից նեղացածի կեցվածք է ընդունել, որն էլ պարարտ հող կստեղծի, որ այդ “Nabucco” կոչվածն անցնի Ադրբեջանի տարածքով դեպի Թուրքիա՝ շրջանցելով Ռուսաստանը: Ահա, հիմա, դրդելով ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը, մենք նման վտանգավոր քայլ կատարելով՝ անկանխատեսելի ու անհուսալի գործընկերոջ համարում ձեռք կբերենք, կվանենք մեզնից Ռուսաստանին, որովհետև այդ պարագայում նույն Թուրքիան, Ադրբեջանը, նույն Միացյալ Նահանգներն ու Եվրամիությունը կեզրակացնեն, որ Հայաստանի Հանրապետությունն առանց իր ռազմաքաղաքական դաշնակցի՝ Ռուսաստանի հետ համաձայնեցնելու նման քայլ չէր կատարի: Ահա այս բարդ իրավիճակում որոշակի մարդկանց, քաղաքական որոշակի ուժերի կարելի էր խորհուրդ տալ՝ պետք է տասը անգամ մտածել, որից հետո նոր քաղաքական նման հայտարարությամբ հանդես գալ: Չնայած այդ հայտարարությունները, իրենց վտանգավորությամբ հանդերձ, իրենց մեջ նաև դրական լիցք էլ են կրում: Եվ գիտե՞ք, թե ինչու: Լսելով այդ բովանդակությամբ հայտարարություններ և իմանալով, թե քաղաքական յուրաքանչյուր ուժ աշխարհաքաղաքական ի՞նչ հայացքների կրող է, դու արդեն տրամաբանելով կարող ես որոշել, թե նման հարցադրումների, այդ հայացքների կրողների թիկունքում

ուժի միջազգային որ կենտրոնն է կանգնած, ի՞նչ խաղ էր ուզում ձեռնարկել այդ ուժը մեր տարածաշրջանում՝ ներքաշելով դավադրության մեջ և Հայաստանի Հանրապետությունը: Մենք, հայերս, գոնե այս անգամ, ի սկզբանե, պետք է օգտվենք հայի վերջին իմաստության խորհրդանիշ դարձած հայի «հետին խելքի» գաղափարից:

Ս.Թ. – Պարոն Գեղամյան, տարածաշրջանային խնդիրներից դեռ անպայման կխոսենք, նորից դառնանք Երևանի ավագանու ընտրություններին և ԵԱՀԿ-ում ԱՄՆ դիվանագիտական առաքելության գնահատականին, որը եզրափակվում է հետևյալ դիտարկմամբ. չնայած ընտրություններն անթերի չէին, սակայն Երևանի խորհրդում մի ընդդիմադիր կուսակցություն ստացել է զգալի ձայներ և կոչ էր արվում ընդդիմության առաջնորդներին «ընդունել խորհրդում իրենց մանդատներն և ներկայացնել իրենց ընտրողներին Երևանի ղեկավարման գործում իրենց ակտիվ և լիարժեք մասնակցությամբ»:

Ա.Գ. – Շատ ողջունելի կոչ է և ասեմ, որ նման մոտեցման պահանջված լինելն ինքս ինձ վրա եմ զգացել: Այսպես, 2003 թ. Ազգային ժողովի ընտրություններից հետո «Ազգային Միաբանություն» խմբակցությունը, պահանջելով անցկացնել Սահմանադրական դատարանի կողմից առաջարկված ՀՀ Նախագահի վստահության հանրաքվե, ինչպես հիշում եք, բոյկոտել էր Ազգային ժողովի նստաշրջանները: Սակայն այդ նույն ժամանակաշրջանում, ակտիվորեն մասնակցում էինք Ազգային ժողովի կազմակերպած բոլոր միջոցառումներին: Մասնավորապես, այդ շրջանում ես թուրքերի, ադրբեջանցիների համար մի քանի շատ ծանր ելույթներ եմ ունեցել Ստրասբուրգում, Վիեննայում, Եվրախորհրդում և ԵԱՀԿ-ում: Կրկնում եմ, բայց ԱԺ նիստերին չէինք մասնակցում: Հետո գործընկերներով քննարկեցինք, թե բոյկոտից մեր շահածը ո՞րն է: Մենք, փաստորեն, ԱԺ ամբիոնը կորցնում ենք, դրա ընձեռած հնարավորությունները չենք օգտագործում և մարդկանց, մեր ընտրողների մոտ կարող է տպավորություն ստեղծվել, որ պարզապես ասելիք չունենք: Որոշվեց դադարեցնել բոյկոտը: Այսօրվա պես հիշում եմ՝ գնացինք, մասնակցեցինք նիստին, որի ժամանակ քննարկվում էր ամենածանր հարցը՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստորաբաժանում Իրաք գործուղելու մասին: Խնդրո առարկայի շուրջ ես երկու անգամ ելույթ ունեցա, որովհետև ես դրա լրջությունն ու կարևորությունն էի հասկանում: Հասկանում էի, որ նման բարդ իրավիճակում ամենադյուրինը, թերևս, կլիներ մի կողմ քաշվել ու տեսնել, թե ի՞նչ կանեն իշխանական ուժերը, որովհետև ցանկացած որոշման դեպքում կարող էր մի դաշնակիցը նեղանար, մյուսը չհասկանար, երրորդ բարեկամը ողջուներ: Բայց մենք մեր դիրքորոշումը հստակ արտահայտեցինք: Անցել է չորսուկես տարի, խոստովանեմ, որ ինձ համար անակնկալ էր, ըստ որում, դրական անակնկալ, երբ հիմնական զեկուցողը՝ այն ժամանակվա պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը, իր եզրափակիչ ելույթում ասաց, որ, թերևս, Գեղամյանի ելույթից հետո կարելի էր ընդհանրապես այս քննարկումը սահմա-

նափակել, որովհետև բոլոր հարցերին սպառիչ պատասխաններ տրվեցին: Արդյունքում՝ ԱԺ-ն ընդունեց երկրի համար հույժ կարևոր որոշում: Ասածս այն մասին է, որ տվյալ դեպքում Երևանի ավագանու այդ ամբիոնը, եթե ասելիք ունես, եթե սիրտդ ցավում է երկրիդ, քաղաքիդ համար, պետք է բոլոր հնարավորություններն օգտագործես: Ես գտնում եմ, որ «Ազգային Միաբանություն» խմբակցությունը, բոյկոտելով ԱԺ նիստերը, քաղաքական սխալ էր թույլ տվել և դրանում մեղքի մեծ բաժինը իմն էր, որովհետև ցանկացած որոշում կայացնելիս որոշիչը, այնուամենայնիվ, իմ ձայնն էր, և մենք մի քանի ամիս, ըստ էության, անարդյունավետ օգտագործեցինք: Հիմա, այս դեպքում, ընտրապայքարի ընթացքում հիասքանչ հարցադրումներ են եղել ավագանու թեկնածուների կողմից, ինչո՞ւ չէ, նաև Հայ Ազգային Կոնգրեսի նախընտրական ծրագրում օգտակար առաջարկներ էլ կան: Գնացեք, պայքարեք, և եթե գործող մեծամասնությունը, տվյալ դեպքում՝ Հանրապետական կուսակցությունը, նորընտիր քաղաքապետ Գագիկ Բեգլարյանը (ըստ որում, օգտվելով առիթից սրտանց շնորհավորում եմ նրան քաղաքապետ ընտրվելու կապակցությամբ) ժողովրդին տված խոստումները չկատարեն, ապա դիմեք ընտրողներին, ասեք՝ ժողովուրդ, տեսեք, այս մարդիկ անգամ իսկ այն, ինչը հնարավոր էր անել, այն, ինչն այսօր խիստ պահանջված է երևանցիների համար, անգամ իսկ դա չեն իրականացնում: Եվ ժողովուրդը, եթե նման դրսևորումների ականատեսը դարձավ, ապա, անշուշտ, կմտածի՝ միգուցե՞ սխալ է կատարել իր ընտրությունը, միգուցե՞ ճիշտ կլիներ ՀԱԿ-ին ավելի շատ քվեներ տրվեր և ոչ թե 70000 հազար: Կարծում եմ, այն մարտավարությունը, որն ընտրել է ՀԱԿ-ը, պայքարի պասիվ ձև է: Ուրիշ բան, որ ստեղծված իրավիճակում նրանք նույնպես պայքարում են, բայց պայքարում են ոչ թե հանուն Երևանի, ոչ թե հանուն Հայաստանի Հանրապետության, այլ՝ ընդդեմ Հայաստանի պետականության: Ասվածի ամենավառ ապացույցն այն էր, որ հունիս 1-ի հանրահավաքում, երբ արդեն իսկ հրապարակվել էին Եվրախորհրդի ձեր հիշատակած կոնգրեսի դրական գնահատականները, այսինքն՝ պաշտոնական առաջին գնահատականն արդեն հնչել էր, մատենադարանամերձ հրապարակից հայտարարում էին, որ խայտառակ ընտրությունների արձագանքները մենք դեռ կտեսնեք և դրանք կլինեն ճնշումների տեսքով: Ասես թե՝ կոնգրեսը, նախօրոք, տեղեկացված էր, թե ի՞նչ խմորումներ են լինելու մեր տարածաշրջանում, թե նախանշված ի՞նչ սցենարներ կան: Եվ ես չեմ բացառում, որ, այո, նրանք տեղեկացված էին ընթացող զարգացումների մասին: Կրկնում եմ, այսօր մեր տարածաշրջանում ձևավորվում է աշխարհաքաղաքական մի նոր բևեռ, և դա բոլորից պահանջում է լինել ավելի խոհեմ ու հեռատես, որ սեփական երկրին վնաս չպատճառեն: Եվ այդ նոր բևեռի ձևավորման ճանապարհին Հայաստանի դերակատարությունը թերագնահատել կարող են միայն թերուսները: Հարավային Կովկասի տարածաշրջանում շատ և շատ է բարձրացել մեր երկրի կարևորությունը, շնորհիվ հաշվենկատ նախաձեռնողական արտաքին քաղաքականության մենք դարձել ենք աշխարհաքաղաքական

բավականին դրական և մեծ դերակատություն ունեցող սուբյեկտ, որի հետ բոլորը հաշվի են նստում: Անցած 17 տարիների ընթացքում այդ ե՞րբ էր եղել, որ մեկ շաբաթվա ընթացքում Ամերիկայի Միացյալ Նահանգների պետքարտուղարը երկու անգամ հաղորդակցվեր Հայաստանի Հանրապետության Նախագահի հետ, ԱՄՆ նախագահը դիմեր մեր Հանրապետության Նախագահին: Դա խոսում է այն մասին, որ, կնշանակի, հաշվի են նստում մեզ հետ: Կնշանակի, ցանկանում են, թե չեն ցանկանում, բայց գոնե հասկանում են, որ Հայաստանի հետ պետք է խորհրդակցել: Ավելին, մեկ տարվա ընթացքում տասից ավելի հանդիպումներ են եղել մեր Նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի միջև: Սա պատահականություն չէ, մեծ քաղաքականության մեջ նման պատահականություններ չեն լինում: Եվ մենք, ահա, այս ամենը պետք է կարողանանք ձեզ հետ ծառայեցնել մեր պետության շահերին, դրա արդյունքում մեր երկրի, մեր պետության համար մաքսիմումը քաղած լինենք, առավելագույն օգուտը բերած լինենք: Չէ՞ որ մենք ձեզ հետ գիտակցում ենք, թե ի՞նչ վտանգավոր ժամանակաշրջանում է հայտնվել մեր տարածաշրջանը:

Ս.Թ. – Պարոն Գեղամյան, դարձյալ հայ-թուրքական հարաբերությունների մասով, ինչպե՞ս եք գնահատում վերջին զարգացումները, մասնավորապես, առանց նախապայմանների հարաբերությունները կարգավորելու փորձերի ֆոնին Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ էրդողանի հայտարարությունները և ինչպե՞ս եք գնահատում վերջին օրերին արտգործանարար Դավութօղլուի արած հայտարարությանը:

Ա.Գ. – Գիտեք, թուրքական դիվանագիտությունը հայտնվել է շատ անորոշ վիճակում: Իր դրած ծուղակի մեջ հենց ինքն է հայտնվել, և դրա ամենահամոզիչ ապացույցն այն է, որ Թուրքիայի առաջին երկու դեմքերը վերջերս հանդես են գալիս գրեթե իրարամերժ հայտարարություններով: Մասնավորապես, նախագահ Աբդուլլահ Գյուլը, անդրադառնալով հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը, ասում է, որ, այո, մենք պետք է ամեն ինչ անենք այդ հարաբերությունները շտկելու համար, նաև անուղղակիորեն նշում է՝ առանց նախապայմանների: Ճիշտ այդ նույն ժամանակաշրջանում, վերջին 2-3 ամսվա պատմություններն եմ հիշատակում, Ռեջեփ Թայիփ էրդողանը Գերմանիայում Գերհարդ Շրյոդերի ծննդյան արարողությունից հետո մամուլի ասուլիս է հրավիրում, որտեղ հայտարարում է՝ բացարձակապես հնարավոր չէ հայ-թուրքական հարաբերությունների մերձեցում, նորմալացում, եթե դրանց զուգահեռ չլուծվի Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը, եթե Հայաստանի Հանրապետության զորքերը դուրս չբերվեն այդ տարածաշրջանից: Իսկ ահա Ահմետ Դավութօղլուն, անցած երկու օրերին գրեթե հեղեղել էր թուրքական ողջ մամուլը, և, ինչու չէ, նաև արևմտաեվրոպական մամուլը իր հայտարարություններով, որոնց համաձայն, Հայաստանի հետ հարաբերություններում Թուրքիան նոր էջ է բացում, վերջ է դնում սառը պատերազմին: Ուշագրավ է, սրանից մոտ 20 օր առաջ պաշտոնական այցով Ադրբեջանում գտնվելիս՝ Բաքվում Դավութօղլուն արել էր մեկ այլ հայտարարություն նույն-

պես. «Ես եկել եմ Ադրբեջան որպես իմ երկրորդ հայրենիք»: Կարծում եմ, հասկանալի է, որ եթե ձեզ հետ այդ ամենն արձանագրում ենք, ուրեմն, համոզված եղեք, որ միջպետական հարաբերություններին վերաբերող հարցերի մեջ խորացած էքսպերտները, փորձագետները նույնպես այդ ամենը գրանցում են: Եվ ոչ միայն գրանցում, այլև հասկանում են մի բան. այսօր Թուրքիան Հայաստանի նկատմամբ չի իրականացնի այնպիսի ճնշումներ, որոնք կարող են հանգեցնել Ռուսաստանի հետ ուղղակի առճակատման, նա նման քայլի չի գնա, չի դիմում այդ քայլին, որովհետև գիտակցում է, որ դրա արդյունքում կպարտվի: Նրանք հասկանում են, որ 2009 թ. Ռուսաստանը, չնայած ճգնաժամին, ելցինյան նախկին Ռուսաստանը չէ, որի էկոնոմիկան քայքայված էր, ռազմական հզորությունը՝ թուլացած, այսօր դա բացարձակապես ուրիշ երկիր է: Մյուս կողմից, թուրքերը նաև գիտակցում են, որ մեր տարածաշրջանում հզորանալու միայն մի ճանապարհ ունեն, սեփական դերակատարությունը բարձրացնելու եզակի ուղին մեկն է: Թուրքիան պետք է վարվի այնպես, ինչպես Միացյալ Նահանգներում, Վաշինգտոնում, հունիսի 4-ին հրապարակավ հայտարարել էր Վեժդի Գյունելը, այն է՝ պետք է Հայաստանը կտրել Ռուսաստանից, Հայաստանը պետք է կտրել Իրանից:

Ես կարծում եմ, որ այս վճռական ժամանակաշրջանում եկել է ժամանակը, որ մեր արտաքին քաղաքականություն իրականացնող գերատեսչությունը հանդես գա համապարփակ հայտարարությամբ, ի մի բերելով, թեկուզ, վերջին մեկ տարվա կատարած աշխատանքը, իսկ աշխատանքը, պետք է ասել զգալի է, մատնանշելով նաև այն դժվարություններն ու վտանգները, որոնք, անտարակույս, դարանակալած են մեր երկրի առաջ նրա արտաքին քաղաքականության բնագավառում: Առավել ևս, որ հրապարակում կան բավականաչափ լուրջ վերլուծական նյութեր՝ կապված Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հարցերի հետ: Մասնավորապես, շատ հետաքրքիր վերլուծություններով էր հանդես եկել քաղաքագիտության դոկտոր, գեներալ Հայկ Քոթանջյանը, մեր ուրիշ քաղաքագետների մոտ նույնպես կան նյութեր: Գտնում եմ, որ անհրաժեշտ է հրապարակում եղած արժեքավոր բոլոր վերլուծություններն ի մի բերել, կազմել անալիտիկ լուրջ փաստաթուղթ և հրապարակել, որպեսզի մեր գլխավոր ռազմական դաշնակից Ռուսաստանի Դաշնությունը, բարեկամ երկրները, մասնավորապես, Իրանի Իսլամական Հանրապետությունը տեղեկացված լինեն, որ Հայաստանի Հանրապետությունը պարկեշտ է և իր պայմանավորվածություններին հավատարիմ մնալու քաղաքականության իրականացման արդյունքում շոշափելի կորուստներ է կրել: Որ մեր բարեկամ Միացյալ Նահանգները նույնպես գիտակցեն, որ ՀՀ իշխանությունները, ականջալուր լինելով Միացյալ Նահանգների հորդորներին հայ-թուրքական հարաբերությունների զարգացմանն ընդառաջ գնալով, դրսևորեցին մեծ խոհեմություն, որի արդյունքում ուժգին հարվածներ ստացան թե՛ երկրի ներսում, թե՛ դրսից: Ըստ որում, այդ հարվածների հիմնական նշանակետը դարձավ Հանրապետության Նախա-

գահը: Պետք է բոլորը հասկանան և գիտակցեն, որ պարկեշտությունը չպետք է դատապարտվի անգամ մեծ քաղաքականության մեջ: Պետք է բոլորին պարզ լինի, որ միակողմանի զիջումներ չեն լինում, ինչը, ըստ էության, ուզում են կորզել մեր երկրից: Եթե Հայաստանի իշխանությունները հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում այդքան հարվածներ են ընդունել, ապա թող բարի լինեն կոմպենսացնել դրանք և ոչ թե դադարեցնեն 68 մլն դոլարի «Գյուղական ճանապարհներ» ենթածրագրի կատարումը: Այստեղ մի դիտարկում էլ անենք. ես շատ բարձր եմ գնահատում այն օգնությունը, որը ցույց է տվել Միացյալ Նահանգները Հայաստանի Հանրապետությանը անկախության շրջանում, դա ավելի է, քան 2 մլրդ դոլարը, բայց դրա հետ մեկտեղ կան հարցեր, որոնք իրենց հերթին նոր հարցեր են առաջացնում: Մի ուշագրավ փաստի մասին էլ հիշեցնեմ. անցյալ տարի «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիան՝ “Millennium Challenge Corporation”-ը, դադարեցրել էր օգնությունը Նիկարագուային: Եվ դրա հիմնական պատճառը, ինչպես նշում են վերլուծաբանները, ոչ թե հայտարարվածը, այն էր, որ Նիկարագուայի կառավարությունը Դանիել Օրտեգայի գլխավորությամբ ճանաչել էր Հարավային Օսեթիայի և Աբխազիայի անկախությունը: Ուրեմն, եթե մենք, իրոք, ժողովրդավարության և մարդու իրավունքների կողմնակիցներն ու ջատագովներն ենք, ապա եկեք դա չկապենք աշխարհաքաղաքական խնդիրների հետ: Պարզ և պարզ ասեք, որ, գիտեք ինչ, այսպես է, եթե դուք մեզ բարեկամ եք, ապա հաշիվ տվեք ձեզ, որ մեր հատկացված օգնությունը 235 մլն 600 հազար դոլարի չափով, որը նախատեսված է այդ ծրագրի շրջանակներում, պարտավորեցնում է ձեզ այս և այն հարցերում դրսևորել քաղաքական որոշակի վարքագիծ: Եթե նման մոտեցումն ընդունելի է, ապա շարունակում ենք ծրագրեր իրականացնել, եթե ոչ՝ դադարեցնում ենք: Այս մոտեցմանը չխառնենք ժողովրդավարությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը: Դրանք, ինչ խոսք, կարևոր հարցեր են, բայց տվյալ դեպքում եկեք տեսեք, որ հիմնական խնդիրներն այլ հարթության վրա են: Եվ մի դիտարկում էլ. 1776 թ. Ամերիկայի Միացյալ Նահանգները անկախացան, 200 տարուց ավել պահանջվեց, որ մարդու իրավունքների բնագավառում ամենակոպիտ խախտումներն այնտեղ հաղթահարվեն, որ ռասայական սեգրեգացիան վերացվի: Սակայն, ինչպես վկայեցին նույն Բարաք Օբամայի շատ ընդունելի վերջին ելույթները, մարդու իրավունքների պաշտպանության հետ կապված խնդիրները դեռ մինչև վերջ չեն հաղթահարվել, որի ապացույցը Գուանտանամոյի բանտում տիրող բարքերն են, մարդկանց անձնական կյանքի գաղտնիությունը չերաշխավորող գործառույթներն են, ֆիզիկական ուժի ներազդեցության կիրառման հետ պայմանավորված իրողությունները, և այլն, և այլն:

Ս.Թ. – Պարոն Գեղամյան, իսկ ինչպե՞ս եք գնահատում Ղարաբաղյան խնդրի կարգավորման վերջին փուլը:

С. Т. - Г-н Гегамян, вновь об армяно-турецких отношениях, как вы оцениваете последнее развитие событий, в частности, на фоне попыток урегулирования межгосударственных отношений без предварительных условий. Как вы оцениваете последние заявления премьер-министра Турции Р.Эрдогана и как оцениваете сделанное на днях заявление министра иностранных дел Давутоглу?

А. Г. - Знаете, турецкая дипломатия оказалась в весьма незавидном положении. Оказалась в расставленной ими же самими ловушке, и самым убедительным доказательством сказанному является тот факт, что два первых лица Турции выступают с почти взаимоисключающими заявлениями. В частности, президент Абдуллах Гюль, касаясь урегулирования армяно- турецких отношений, нехотя, но добавляет также - без предварительных условий. В то же самое время, я имею ввиду последние 2-3 месяца, Реджеп Таип Эрдоган, находясь в Германии на торжествах по случаю празднования дня рождения Герхарда Шредера, созывает затем пресс-конференцию, где заявляет о невозможности потепления, нормализации армяно-турецких отношений, если параллельно не будет решен вопрос Нагорного Карабаха, если войска РА не будут выведены оттуда. А вот Ахмет Давутоглу за прошедшие два дня наводнил всю турецкую, а также западноевропейскую прессу своими заявлениями, согласно которым Турция открывает новую страницу в отношениях с Арменией, прекращает "холодную войну". Примечательно, что примерно за 20 дней до этого, находясь с официальным визитом в Баку, Давутоглу сделал и другое заявление: "Я прибыл в Азербайджан, как в свою вторую родину…" Думаю, понятно, что если мы все это с вами констатируем, то эксперты, поднаторевшие в вопросах межгосударственных отношений также все зафиксируют. И не только зафиксируют, но и прекрасно понимают, что Турция сегодня не станет оказывать на Армению такое давление, которое может привести к прямой конфронтации с Россией, турецкая сторона на это не пойдет, потому что сознает, что в итоге проигра-

ет. Они понимают, что "Россия - 2009 года", несмотря на бушующий в мире глобальный кризис, это не Россия прежних, ельцинских времен, когда ее экономика была подорвана, военная мощь ослаблена. Сегодня это совершенно другая страна. С другой стороны, турки также осознают, что имеют лишь одну дорогу к усилению своего влияния в регионе Южного Кавказа, повышению своей собственной роли. Турция должна действовать так, как об этом 4 июня в Вашингтоне публично заявил Вежди Гюнел: оторвать Армению от России, оторвать Армению от Ирана.

Я думаю, что пришло время, чтобы наше внешнеполитическое ведомство выступило со всеобъемлющим заявлением, в котором, обобщив проделанную за последний год работу, надо сказать, значительную, указало бы на те трудности и опасности, которые, несомненно, подстерегают нашу страну в сфере внешних отношений. Тем более, что есть много аналитических материалов, связанных с вопросами национальной безопасности РА. В частности, с весьма интересным анализом недавно выступил доктор политологии, генерал-майор Гайк Котанджян, у наших других политологов также есть заслуживающие внимания исследования. Считаю, что необходимо собрать все ценное, обобщить, выработать серьезный аналитический документ и опубликовать его, с тем, чтобы наш стратегический союзник, Россия, дружественные нам страны, в частности, Иран были бы проинформированы о том, что Армения из-за проведения политики в духе верности взятым союзническим обязательствам и в силу проявленной порядочности во внешнеполитической сфере в последнее время имела ощутимые потери. Чтобы дружественные нам США также осознали, что власти РА, прислушиваясь к советам Соединенных Штатов и, делая шаги в направлении развития армяно-турецких отношений, проявив завидное благоразумие, в результате подверглась ощутимым ударам как внутри страны, так и извне. Причем главный мишенью этой критики стал президент нашей страны.

Все должны понимать и осознавать, что порядочность не должна осуждаться даже в большой политике. Всем должно быть ясно, что односторонних уступок не бывает, к чему, по сути, хотят вынудить нашу республику. Если власти Армении, продвигая вопросы урегулирования армяно-турецких отношений, подверглись таким ударам, то инициаторы армяно-турецкого урегулирования пусть будут любезны компенсировать эти издержки, а не прекращать выполнение подпрограммы сельского дорожного строительства в рамках программы "Вызовы тысячелетия" и не свертывать в объеме 68 млн долларов финансирование этого проекта.

Выделим здесь еще один аспект. Я очень высоко оцениваю ту помощь, которую США оказали РА в период независимости. Она составляет более 2 млрд долларов. Но есть вопросы, которые порождают новые вопросы. Напомню одну примечательную вещь: в прошлом году корпорация "Вызовы тысячелетия" ("Millennium Challenge Corporation") прекратила финансовую помощь Никарагуа. И основная причина, как утверждают аналитики, (а не официально объявленная) в том, что правительство Никарагуа во главе с Даниелом Ортегой признало незави-

симость Южной Осетии и Абхазии. Значит, если мы действительно сторонники и поборники демократии и защиты прав человека, давайте не связывать это с геополитическими вопросами. Давайте откровенно говорить: знаете ли, если вы нам друзья, то дайте себе отчет в том, что выделенная в рамках программы помощь в размере 235 млн 600 тысяч долларов обязывает вас проявить в таких-то и таких-то вопросах такую-то позицию, придерживаться определенной политической линии. Если подобный подход приемлем с вашей стороны, то тогда продолжаем реализацию программы, если нет- прекращаем. Не путайте этот политический подход с демократией, защитой прав человека. Это, конечно, важные вопросы, но в данном случае основные проблемы находятся в иной плоскости. И еще одна деталь.

В 1776 году США, как известно, обрели независимость, после этого потребовалось более 200 лет, чтобы наиболее грубые нарушения прав человека в этой стране были бы преодолены, чтобы была устранена расовая сегрегация. Но, как свидетельствуют последние выступления того же Барака Обамы, вопросы, связанные с проблемами защиты прав человека, до сих пор в полной мере не решены, доказательством чему являются нравы, укоренившиеся в тюрьме Гуантанамо, прослушка разговоров и т.д. и т.п.

С.Т. - Г-н Гегамян, а как вы оцениваете последний этап Карабахского урегулирования?

А. Г. - Во всех тех вопросах, о которых мы с вами говорили, именно в них надо искать возможности мирного урегулирования вопроса Нагорного Карабаха. Я считаю, что политический подход президента РА по урегулированию этого вопроса оправдан. Объясню, почему так думаю. С точки зрения армян, армянской государственности, независимости Нагорного Карабаха, если бы проводимая властями политика не была бы оправданной, то почему ближайшие союзники Турции, американцы оказывали бы на нас в это кризисное время давление долларом? Почему турки через день в своих заявлениях указывают на необходимость решения вопроса Карабаха и увязывают это с улучшением армяно-турецких отношений, с открытием границы? Разве это не означает, что проводимая с нашей стороны политика не удовлетворяет турецко-азербайджанскую сторону? А если не удовлетворяет оппонентов, значит, является проармянской, благоприятной для нас. Таким образом, следует и впредь придерживаться взятого курса. В этом вопросе одним из важнейших факторов, если не сказать первоочередным, является целевое использование полученных Арменией извне кредитов в размере более 1,5 млрд долларов. Чтобы не получилось так, что Международный валютный фонд (МВФ) в своем очередном отчете вынужден был констатировать, что среди 8 стран Центральной Азии и Южного Кавказа наиболее неблагоприятная экономическая ситуация сложилась в Армении. Кстати, эта информация размещена на официальном сайте МВФ - "International Monetary Fund". Более того, чтобы руководитель армянского офиса Всемирного Банка (ВБ) Аристоне Варудакис не был вынужден говорить,

что ВВП Армении сократится в 2009 году на 9-9,5%, и чтобы по итогам январямая 2009 г. спад ВВП Армении не был бы более 15%-ов.

С.Т. - Г-н Гегамян, вероятно, последний вопрос, к которому Вы уже фактически подошли. Поговорим о потрясшем мировую экономику кризисе. Если Армения сумела противостоять его первой волне, то избежать влияния кризиса нам, как и любой другой стране, не удалось. Считаете ли Вы удовлетворительными шаги правительства по смягчению кризиса и как по-вашему, какие антикризисные принципы следует взять на вооружение?

А.Г. - К сожалению, я оцениваю антикризисную политику правительства на неудовлетворительно, имея при этом очень хорошие отношения с нашим образованным и подготовленным премьер-министром Тиграном Саркисяном. И доказательством данной оценки является то, что из упомянутых 8 стран (Азербайджан, Грузия, Таджикистан, Кыргызстан, Узбекистан, Туркменистан, Казахстан, Армения) самые низкие показатели на 2009 год прогнозируются у нас - падение Валового внутреннего продукта (ВВП) в этом году в сравнении с тем же периодом прошлого года согласно их прогнозу составит 5%. После нас следует Казахстан с 2%-ным темпом снижения ВВП, в то время как в других странах ожидается положительная динамика, то есть рост ВВП. В том же отчете в Армении в 2010 г. прогнозируется нулевой темп роста, а в Азербайджане темп роста ВВП будет на уровне 12,4%-а. На этом фоне еще одно наблюдение. За последние четыре месяца мы устали от постоянных визитов в Армению разнокалиберных чиновников из МВФ и ВБ и от их громогласно объявляемых заключений о, якобы, глубоко продуманной, даже образцовой политике нашего правительства по преодолению кризиса. И, что же? В результате наша экономика оказалась на последнем месте среди упомянутых 8-и стран. И здесь я в некотором подозрении: не были ли все эти демобилизующие оценки составной частью проводимой в нашем регионе глобальной подрывной политики? То есть, в результате кризиса подвести Армению к столь тяжелому экономическому положению, чтобы она, желая того или нет, стала бы поуступчивее во внешней политике… И случайно ли, что нас наказывают долларом, в разгар финансово-экономического кризиса наказывают, лишая 68 млн долларов?

Когда сопоставляешь все эти факты, то думаешь, что - да, правительственная антикризисная программа была неудовлетворительной. В этой связи хотелось бы сказать, что недавно среди участников международного экономического Форума в Санкт-Петербурге (4-6 июня) было проведено весьма интересное исследование. Прежде чем перейти к сути исследования скажем, что на этом авторитетном мероприятии участвовали более 3500 делегатов из 83 стран мира, среди которых были нобелевские лауреаты по экономике, всемирно известные ученые, президенты транснациональных компаний, президенты стран, премьеры, министры… Организаторы Форума распространили вопросник, предлагая указать первоочередные шаги, которые должны предпринять правительства государств для преодоления гло-

бального финансово-экономического кризиса. В результате 39% опрошенных сочло, что правительства должны "вкладываться в инфраструктуру", то есть, нужны, прежде всего, инвестиции в инфраструктуру. Речь идет о дорожном строительстве, о вложениях в строительство жилья, коммуникаций, сферу обслуживания и др. Если подходить с этой точки зрения, то, на первый взгляд, может показаться, что правительство Армении, выдав государственные гарантии для кредитования, в частности, осуществляющей элитарное жилищное строительство компании "Элит Груп", сделало положительный шаг. Но это только на первый взгляд. Почему? Потому что около двух месяцев назад премьер-министр в одном из телевыступлений сказал, что только в Ереване сегодня есть более 4000 незаселенных квартир. Причина в том, что просто нет покупателей. Причина ясна- потребительский спрос низок, у народа средств мало. И если в подобных условиях правительство финансирует данную строительную организацию, то, что мы от этого выигрываем? Хорошо, пусть сдадут в эксплуатацию еще 500-1000 новых элитарных квартир, какие вопросы мы этим решим? Допустим, на несколько месяцев реанимируем ряд предприятий строительной индустрии. А после этого, что будем делать? Ведь в условиях либеральной экономики, когда отсутствует потребительский спрос, невозможно организовать расширенное воспроизводство. Значит в сложившейся ситуации подход правительства не так уж и оправдан.

И второе важнейшее действие для преодоления кризиса (согласно мнению участников санкт-петербургского Форума) - "необходимо расчищать банковскую систему". Так посчитали 38% опрошенных. Понятно, что в экономике банковская система играет роль кровеносных сосудов, питая ее финансами. Поэтому очень важно, чтобы они были свободны от препятствий при выполнении этой своей основополагающей функции. Называя банки кровеносными сосудами, я, имею в виду, что посредством банковской системы финансовые средства должны своевременно доходить до своего основного адресата- сферы производства, торговли, обслуживания. И, самое важное, чтобы кредиты были легко доступны для заемщиков. Это все очень серьезные вопросы, о которых я подготовил ряд аналитических материалов и передал их уважаемому Гагику Мкртчяну, редактору газеты "Айоц Ашхар". Думаю, что если он сочтет их актуальными, пусть напечатает и если великий Шираз говорил: "Пусть любовь моя останется в тайне", то вданном случае, применительно к антикризисным предложениям пусть они ни для кого не останутся в тайне. Если их напечатают, то, думаю, это с мой стороны будет протянутой рукой помощи финансовому и экономическому блоку правительства.

… ԵՎ ՈՒՐԵՄՆ ԱԶԳՈՎԻ ԳՆԱՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱԿԱՏԱԳՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Եվ այսպես, ս.թ. հուլիսի 10-ին իտալական Ակվիլա քաղաքում Մեծ ութնյակի (G-8) մասնակից երեք երկրների նախագահները՝ Ռուսաստանի Դաշնության նախագահ Դմիտրի Մեդվեդևը, ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման, Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման վերաբերյալ հանդես եկան համատեղ հայտարարությամբ:

Հայտարարության հիմքում դրված էին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների՝ ՌԴ-ի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարների կողմից 2007 թ. նոյեմբերի 29-ին Մադրիդում ընդունված Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման նախնական հիմնարար սկզբունքները: Ուշագրավ է, որ նախագահներն ընդգծում են, որ այդ փաստաթղթում արտացոլված է 1975 թ. Հելսինկիում Անվտանգության ու Համագործակցության Խորհրդի Եզրափակիչ Ակտում տեղ գտած երեք հիմնարար սկզբունքները. դրանք են՝ ուժի չկիրառման, տարածքային ամբողջականության պահպանման, հավասարության ու ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքները: Սկզբունքներ, որոնց շրջանակում էլ պետք է գալ խելամիտ փոխզիջումների: Հարկ է նշել, որ նախագահներ Մեդվեդևը, Օբաման, Սարկոզին Մադրիդյան հիմնական սկզբունքներից, ի թիվս այլոց, կարևորել և Հայաստանի ու Ադրբեջանի նախագահներին կոչ են արել՝ Լեռնային Ղարաբաղին հարակից տարածքների վերադարձ Ադրբեջանի վերահսկողությանը, Լեռնային Ղարաբաղին ժամանակավոր կարգավիճակի տրամադրում, վերջինիս անվտանգության ու ինքնակառավարման ապահովում, Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ կապող միջանցքի ստեղծում, ԼՂ-ի իրավունքը՝ իրավաբանական բնույթի կամարտահայտման միջոցով որոշելու իր վերջնական կարգավիճակը, բոլոր փախստականների և բռնի տեղահանվածների՝ իրենց բնակության նախկին վայրերը վերադառնալու իրավունք, միջազգային անվտանգության երաշխիքներ, որոնք ենթադրում են խաղաղարար առաքելություններ: Մեդվեդևի, Օբամայի, Սարկոզիի համատեղ հայտարարության մեջ ասված է նաև, որ Հայաստանի ու Ադրբեջանի կողմից Մադրիդյան հիմնական սկզբունքների ընդունումը հնարավորություն կընձեռի պատրաստել համընդհանուր կարգավորման նախագիծ, որը երկու երկրներին և ողջ տարածաշրջանին կապահովի խաղաղ ապագա, կայունու-

թյուն ու բարգավաճում:

Մինչ այս հայտարարությանը գնահատական տալը փորձենք պարզաբանել, թե ինչո՞վ էր դրա ընդունումը պայմանավորված, ի՞նչ էր դա ազդարարում երկու երկրներին, ինչպես նաև մեր հարևաններին՝ Իրանին, Թուրքիային, Վրաստանին: Եվ, վերջապես, նշված սկզբունքների հիման վրա ընդունված խաղաղության պայմանագիրն աշխարհաքաղաքական հնարավոր ինչպիսի՞ զարգացումներ կարող է առաջացնել Հարավային Կովկասում:

Առաջին եզրակացությունը, որն անհրաժեշտ է արձանագրել, այն է, որ ԱՄՆ-ը, Եվրամիությունը և ՌԴ-ը խիստ կարևորում են Հարավային Կովկասի նշանակությունը սեփական երկրների աշխարհաքաղաքական շահերի տեսանկյունից՝ խնդիր ունենալով ամրապնդվել մեր տարածաշրջանում:

Երկրորդ հետևությունը, որը պետք է արվի, այն է, որ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորմանն ուղղված Մադրիդյան սկզբունքները փոխզիջումային են ոչ այնքան Հայաստանի ու Ադրբեջանի, որքան հենց նույն համաշխարհային ուժի այդ երեք կենտրոնների՝ ԱՄՆ-ի, ՌԴ-ի և Եվրամիության համար: Այս ակնհայտ ճշմարտության գիտակցումից ելնելով էլ՝ Հայաստանի Հանրապետությունը Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի բանակցային գործընթացում պետք է կառուցի իր ռազմավարությունն ու մարտավարությունը թե՛ բուն բանակցությունների ժամանակ, թե՛ ժողովրդական դիվանագիտություն իրականացնելիս և, որ պակաս կարևոր չէ, երկրի ներսում կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, երիտասարդության, մտավորականության հետ համագործակցելիս՝ խնդիր ունենալով մշակել միասնական, փոխլրացման սկզբունքի վրա խարսխված քաղաքականություն: Դա նշանակում է, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման խնդրի շուրջ ցանկացած քաղաքական ուժ, լինի դա իշխանություն, թե ընդդիմություն, հասկանալով հարցի ճակատագրական նշանակությունը մեր պետության համար, պարտադրված է փոխհամաձայնության գալ: Դրանով կբացառվի հակամարտող հակառակ կողմի մոտ գայթակղությունը՝ միջնորդավորված ձևով հովանավորել հայաստանյան այս կամ այն կուսակցությանը, քաղաքական գործչին, գործելու ի վնաս հարցի հայանպաստ լուծումներին, այսինքն՝ նպատակ ունենալ մեր տարածաշրջանում ապահովել սեփական երկրների շահերը: Շահեր, որոնք շատ դեպքերում կարող են մեզ համար խիստ անընդունելի լինել:

ԼՂՀ-ի բանակցային գործընթացի այս ֆոնի վրա արված համառոտ մեկնաբանություններից հետո, կարծում եմ, որ առաջիկայում խնդրո առարկայի վերաբերյալ քննարկումները կդառնան ավելի նպատակային և կներառեն մեր երկրի համար ընդունելի հարցեր: Օրինակ, որո՞նք են ԱՄՆ-ի գերակա խնդիրները Հարավային Կովկասում, արդյո՞ք դրանք պայմանավորված են Կենտրոնական Ասիայի և Կասպից ծովի էներգետիկ պաշարների տեղափոխման այլընտրանքային հնարավորություններո՞վ: Կամ՝ ինչպիսի՞ հնարավոր

զարգացումներ կարող են լինել մեր տարածաշրջանում՝ պայմանավորված Ամերիկա–Իրան հարաբերությունների հետագա զարգացումներով, ինչպե՞ս են Ամերիկայի Միացյալ Նահանգները պատկերացնում Թուրքիայի դերակատարությունը Հարավային Կովկասում և, վերջապես, այս և այլ հարցերի լույսի ներքո ԱՄՆ-ն ի՞նչ է ակնկալում Հայաստանից ու Ադրբեջանից: Ինքնին հասկանալի է, որ այս բոլոր հարցերի լուծումներն իրենց ամբողջականության մեջ, անտարակույս, պետք է համահունչ լինեն ԱՄՆ-ի շահերին: Նույնաբովանդակ հարցադրումներ պետք է արվեն՝ ելնելով ՌԴ-ի և Եվրամիության տեսանկյուններից: Մեր մոտեցումներն ավելի լիարժեք լինելու համար հարկ է վերլուծել, թե որո՞նք են Իրանի Իսլամական Հանրապետության, Թուրքիայի և Վրաստանի կողմից հետապնդվող խնդիրներն ու աշխարհաքաղաքական նախասիրությունները: Հիշատակված հարցերի պատասխաններն ունենալուց հետո անհրաժեշտ է պարզել, թե նախագահներ Մեդվեդևի, Օբամայի ու Սարկոզիի արված համատեղ հայտարարությունում Մադրիդյան որ սկզբունքի կիրառումը ինչ պարագայում և ինչ մեկնաբանությամբ կարող է նպաստել կամ խոչընդոտել համանախագահող երկրների շահերին մեր տարածաշրջանում: Ահա նման մոտոցումներ որդեգրելու դեպքում կարող ենք պատասխանել, թե այսուհետ ինչպիսի՞ն պետք է լինի մեր դիվանագիտության, ինչպես նաև քաղաքական ուժերի գործունեության տրամաբանությունը: Միայն նման մանրակրկիտ վերլուծության արդյունքում կիրականացնենք գործառույթներ, որով մեր երկիրը հնարավորինս զերծ կպահենք բանակցային գործընթացում ոչ հայանպաստ անակնկալ զարգացումներից: Հակառակ պարագայում այն «բուռն» քննարկումները, որոնք շուրջ մեկ ամիս է ինչ ծավալվել են մեր մամուլում ու հեռուստատեսությամբ, և որտեղ հիմնականում խոսվում ու վերլուծվում են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների նախագահների հայտարարության մեջ ներառված վեց սկզբունքները, բանակցային գործընթացին կարող են պարզապես խանգարել: Ընթացող քննարկումները, չնչին բացառությամբ, հանգեցնում են ստեղծված իրավիճակի թյուրըմբռնմանը, պարզունականացմանը, ավելին, հնարավորություն են տալիս Մինսկի խմբի համանախագահներին շոշափելու Հայաստանի Հանրապետությունում գերիշխող, երբեմն լավ զարգացումներ չխոստացող տրամադրությունները, որոնք, ավա՜ղ, կրկնում եմ, միշտ չէ, որ լավագույնս կանդրադառնան Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման գործին:

Ստեղծված պայմաններում, կարծում եմ, շատ կարևոր է գտնել համանախագահող երկրների ղեկավարների հրապարակայնորեն արված այնպիսի հայտարարություններ, նրանց կողմից տրված սկզբունքային այնպիսի գնահատականներ, որոնք մենք կկարողանանք ծառայեցնել ի շահ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի հայանպաստ կարգավորման: Թե չէ ստացվում է, որ բազմաթիվ հայ հռետորներ, իրար հերթ չտալով, փորձում են համոզել

հանրությանը մեր ընդհանուր գործի արդարացիության մեջ, ասես թե, մրցում են միմյանց հետ, թե ով է ավելի մեծ հայրենասերը: Էլ չեմ խոսում նրանց մասին, ովքեր իշխանություններին խրատաբանական կարծր դիրքորոշումներ են հրամցնում, դիրքորոշումներ, որոնք բացարձակապես և ոչ մի աղերս չունեն բանակցային իրական գործընթացների հետ: Կրկնում եմ, այս գործում մեր խնդիրն է Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի ղեկավարների հրապարակայնորեն տված գնահատականները, արտահայտած սկզբունքային դիրքորոշումները, մոտեցումները, որոնք արվել են այլ հակամարտությունների վերաբերյալ և հատկապես Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման շուրջ, կարողանանք ծառայեցնել մեր երկրի շահերին: Իսկ նման հնարավորություններ, անշուշտ, կան և դրանք քիչ չեն:

Ակնհայտ է, որ մեր տարածաշրջանում ԱՄՆ-ի թիվ 1 դաշնակիցն է Թուրքիան, որը վերջին տարիներին Հարավային Կովկասում աննախադեպ ակտիվություն է դրսևորում՝ խնդիր ունենալով շեշտակիորեն բարձրացնել իր դերակատարությունը մեր տարածաշրջանում: Թուրքական կողմի ջանքերը, ի թիվս այլ խնդիրների լուծման, ուղղված են, նախևառաջ, Կենտրոնական Ասիայի և Կասպից ծովի էներգակիրների տեղափոխումը դեպի Եվրոպա իր տարածքով իրականացնելուն: Խոսքը “Nabucco” գազատարի մասին է, որով նախատեսվում է տարեկան կտրվածքով շուրջ 32 մլրդ խորանարդ մետր գազ տեղափոխել Եվրոպա: Հայտնի է, որ այդ խնդրի լուծումը որոշակիորեն կմեղմի Եվրամիության անդամ երկրների էներգետիկական կախվածությունը Ռուսաստանից, ինչպես նաև կբարձրացնի Թուրքիայի դերակատարությունը Եվրոպային էներգակիրներով մատակարարելու գործում, առավել ևս եթե հաշվի առնենք նաև Բաքու-Թբիլիսի-Ջեյհան տարեկան 50 մլն տոննա նավթ տեղափոխող նավթատարի գործոնը:

Թուրքական իշխանությունները շատ լավ հասկանում են, որ ձեռք բերելով տնտեսական նման կարևոր լծակներ՝ հնարավորություն կունենան դրանք ծառայեցնել սեփական քաղաքական նպատակների իրագործմանը, որոնցից կարևորագույնն է՝ հասնել Թուրքիայի անդամակցությանը Եվրամիությանը: Բնականաբար, 7,9 մլրդ եվրո արժողության “Nabucco” գազատարի շինարարության օգտին է խոսում մեր տարածաշրջանում տևական խաղաղություն հաստատելու խնդրի լուծումը: Ասվածի լույսի ներքո խիստ արդիական է դառնում Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման հարցը: Կասկածից վեր է, որ Թուրքիան ամեն կերպ կաջակցի այս հարցում իր բարեկամ երկիր Ադրբեջանին, հատկապես հաշվի առնելով վերջինիս որոշիչ նշանակությունը “Nabucco” ծրագրի իրականացման գործում: Հարկ է նշել, որ մեր տարածաշրջանում տևական խաղաղության հաստատման հարցերը առավել կարևորվեցին 2008 թ. օգոստոսի վրաց-հարավօսական հնգօրյա պատերազմից հետո: Հիշենք, որ պատերազմի ավարտից մի քանի օր անց Թուրքիան, ի դեմս վարչապետ Ռեջեփ Էրդողանի, հանդես եկավ կայու-

նության ու զարգացման կովկասյան պլատֆորմի հռչակումով, որին մասնակից պետք է դառնային (ըստ թուրքական առաջարկի) Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը, Թուրքիան և Ռուսաստանը: Ինքնին հասկանալի է, որ թուրքական առաջարկի ընդունման պայմաններում զգալիորեն կբարձրանար այդ երկրի ներգործությունը Հարավային Կովկասում, ինչն էլ ինքնաբերաբար կհանգեցներ ՆԱՏՕ-ի և, անշուշտ, ԱՄՆ-ի ազդեցության ուժեղացմանը: Բնական է, որ նման զարգացումներն ամենևին էլ չէին բխի մեր ռազմավարական դաշնակից, բարեկամ Ռուսաստանի Դաշնության շահերից, որովհետև դա զգալիորեն կթուլացներ Ռուսաստանի դերակատարությունը մեր տարածաշրջանում: Անբարենպաստ նման գործառույթների դեպքում Հարավային Կովկասում ՌԴ-ի ազդեցության, թերևս, եզակի գործոն կմնար Հայաստանի Հանրապետությունը, որտեղ տեղակայված է ռուսական, տարածաշրջանում այլևս միակ, ռազմակայանը: Եթե մենք նկատի ունենանք զարգացումների նման տրամաբանությունը, ապա դա կհուշի, որ բանակցային գործընթացում ՀՀ-ն պետք է շարունակի պնդել Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հայտնի այն 3 սկզբունքների կենսագործման վրա, որոնք մեր իշխանությունների կողմից բազմիցս հայտարարվել են և որոնք տեղ են գտել նաև խնդրո առարկայի շուրջ հուլիսի 10-ին համանախագահող երկրների ղեկավարների վերը նշված համատեղ հայտարարության մեջ: Այս համատեքստում շատ է արդիականանում հայտարարության մեջ տեղ գտած 6-րդ սկզբունքի այն հատվածը, ուր ասվում է, որ Լեռնային Ղարաբաղի միջազգային անվտանգության երաշխիքները ենթադրում են խաղաղարար առաքելությունների իրականացում: Հասկանալի է, որ ՌԴ-ը գիտակցում է, որ բացառությամբ ՀԱՊԿ անդամ երկրների զինուժի խաղաղարար ցանկացած այլ ուժի մուտքը մեր տարածաշրջան, եթե անցանկալի կլինի իր համար, ապա դա միանգամայն անընդունելի կլինի նաև Իրանի համար: Այս հարցում խիստ կկարևորվի Իրանի Իսլամական Հանրապետության դերակատարությունը: Կասկածից վեր է, որ Իրանը կանի հնարավոր ամեն բան, որպեսզի բացառվի ՌԴ-ից բացի որևէ այլ երկրի, առավել ևս ռազմաքաղաքական որևէ այլ դաշինքի զինուժի տեղակայում հայ-ադրբեջանական հակամարտության գոտում, հայ-իրանա ու իրանա-ադրբեջանական սահմանի հարյուրից շատ ավելի կիլոմետր երկայնքով:

Ահա այս հարցերի համապատկերում էլ վարվող բանակցություններում պետք է կառուցվի հայկական կողմի ռազմավարությունը: Կարծում եմ, հասկանալի է, որ առաջարկված սկզբունքներից հիշատակված 6-րդը՝ հարցի կարգավորման ամենաառանցքայիններից է: Այդ սկզբունքի կիրառումը հավասարապես կարևոր է ինչպես Հայաստանի ու Ադրբեջանի, այնպես էլ Ռուսաստանի, Իրանի ու Թուրքիայի համար: Այս իրողությունից շրջահայաց, համակողմանի եզրակացություններ անելու կարևորությունը դժվար է գերագնահատել:

Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի իրավունքի՝ իրավաբանական բնույթի կամարտահայտման միջոցով որոշելու իր վերջնական կարգավիճակը սկզբունքին, ապա այստեղ անհրաժեշտ է, որ մենք մեր զինանոցում լիարժեքորեն օգտագործենք ՌԴ-ի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի հրապարակային պնդումները: Պնդումներ, որոնք արվել էին ի հիմնավորում Հարավային Օսեթիայի և Աբխազիայի անկախության ճանաչման: Այսպես, 2008 թ. սեպտեմբերի 11-ին լեհական “Gazeta Wiborcza” հեղինակավոր թերթին տված հարցազրույցում Ս.Լավրովը հայտարարել էր. Հարավային Օսեթիան և Աբխազիան համաձայն ԽՍՀՄ 1990 թ. ապրիլի 3-ի օրենքի փաստացի եղել են անկախ պետություններ: Մենք պետք է քարոզչական լուրջ աշխատանք ծավալենք, որպեսզի ինչպես Մինսկի համանախագահող երկրների ղեկավարները, այնպես էլ միջազգային հանրությունը տեղեկացված լինի խնդրո առարկայի մանրամասներին՝ ՌԴ-ի արտգործնախարարի կողմից հիշատակված այդ օրենքի դրույթներին: Այսպես, 1990 թ. ապրիլի 3-ին ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդն ընդունել է N-1409-I օրենքը «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետությունների դուրս գալու հարցերի կարգի մասին» (“О проядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР”): Այդ օրենքի հոդված 3-ում նշված է. «Միութենական հանրապետությունում, որն իր կազմում ունի ինքնավար հանրապետություններ, ինքնավար մարզեր և ինքնավար օկրուգներ, հանրաքվեն (ռեֆերենդումը) անցկացվում է առանձին յուրաքանչյուր ինքնավարությունում: Ինքնավար հանրապետությունների և ինքնավար միավորումների ժողովուրդներին վերապահվում է իրավունք ինքնուրույն լուծել ԽՍՀՄ-ում մնալու կամ կազմից դուրս եկող Հանրապետությունում, ինչպես նաև սեփական պետաիրավական կարգավիճակի հարցադրում անելը» (Статья 3. В союзной республике, имеющей в своем составе автономные республики, автономные области и автономные округа, референдум проводится отдельно по каждой автономии. За народами автономных республик и автономных образований сохраняется право на самостоятельное решение вопроса о пребывании в Союзе ССР или в выходящей союзной республике, а также на постановку вопроса о своем государственно-правовом статусе): Այնպես որ հայկական կողմն ամեն հարմար առիթով պետք է հայտնի մեր երկրի համերաշխությունը Սերգեյ Լավրովի նման սկզբունքային դիրքորոշմանը՝ այն դարձնելով բանակցային գործընթացում մեր դիվանագիտության մեխերից մեկը:

Այստեղ կարևոր է նաև հրապարակ հանել 1990 թ. հունվարի 18-ին ԱՄՆ-ի հեղինակավոր սենատորների կոչն ուղղված ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Գորբաչովին, որտեղ, մասնավորապես, գրված էր. «Մենք կոչ ենք անում Ձեզ լուծել պրոբլեմը (Լեռնային Ղարաբաղի.- *Ա.Գ.*), որը բերեց ողբերգական իրադարձությունների, Լեռնային Ղարաբաղի ժողովրդին տալով իրավունք ազատ կատարելու ընտրություն սեփական քաղաքական և մշակութային կապերի համաձայն»: Կոչի տակ իրենց ստորագրություններն էին դրել սենա-

տորներ Պիտեր Ուիլսոնը, Պոլ Սայմոնը, Լուրի Պրեսլերը, Կլեյբորն Պելը, ինչպես նաև ԱՄՆ 2004 թ. նախագահական ընտրություններում Ջորջ Բուշի հիմնական մրցակից, դեմոկրատ Ջոն Կերին: Կարծում եմ, որ մենք պետք է հորդորենք Ամերիկայի Միացյալ Նահանգների դեմոկրատական կուսակցության կողմից առաջադրված նախագահ Բարաք Օբամային՝ հարգել իր հեղինակավոր կուսակցի՝ Ջոն Կերիի և մյուս սենատորների դեռ 1990 թ. հայտնած պաշտոնական այս տեսակետը: Առավել ևս հարգալից վերաբերմունք դրսևորել 1989 թ. հուլիսի 19-ին ԱՄՆ Սենատի Արտաքին Հարաբերությունների Կոմիտեի կողմից ընդունված «Լեռնային Ղարաբաղի շուրջ վեճի խաղաղ կարգավորմանն ուղղված ԱՄՆ-ի աջակցության մասին» բանաձևի պահանջների կատարման նկատմամբ: Բանաձևում, մասնավորապես, նշված է. «Խորհրդային Միության հետ երկկողմանի քննարկումների ժամանակ հանդես գալ Լեռնային Ղարաբաղի շուրջ վեճի արդարացի լուծման օգտին, որն ազնիվ կարտացոլի այդ շրջանի *բնակչության կարծիքը*»: Այստեղ շատ կարևոր է նշել, որ այդ նույն փաստաթղթի մեկ այլ պարբերության մեջ նշված է, որ «… առաջացրեց դժգոհությունների հետագա աճ (խոսքը ԼՂ-ի Հատուկ Կառավարման Կոմիտեի գործունեության մասին է- *Ա.Գ.*) այնտեղ բնակվող հայերի շրջանում, *որոնք կազմում են տեղի բնակչության ճնշող մեծամասնությունը*»: Սենատոր Կլեյբորն Պելի նախաձեռնությամբ ԱՄՆ-ի Սենատի Արտաքին Հարաբերությունների Կոմիտեի կողմից ընդունված այս բանաձևը պետք է նույնպես մեր դիվանագիտության, ինչպես նաև պետական ողջ քարոզչամեքենայի կողմից օգտագործվի՝ խնդիր ունենալով քաջալերել ԱՄՆ-ի ներկայիս վարչախմբին՝ հավատարիմ մնալ Սենատի կողմից երկու տասնամյակ առաջ ընդունված բանաձևի ոգուն:

Խոսելով ԱՄՆ-ի գործող վարչակազմի մոտեցումների մասին՝ անհրաժեշտ եմ համարում Մինսկի խմբի համանախագահող եռյակին հայտնել, որ մենք խիստ կարևորում ենք ս.թ. հուլիսի 23-ին Վրաստանի պառլամենտում ԱՄՆ-ի փոխնախագահ Ջոզեֆ Բայդենի ունեցած ելույթի հետևյալ դրույթները. «Որքան էլ դժվար լինի, կոչ եմ անում Ձեզ (Վրաստանի իշխանություններին- *Ա.Գ.*) բաց պահել դռները աբխազացիների ու հարավօսեթացիների առջև … Դա տխուր փաստ է, բայց վերամիավորվելու ռազմական ճանապարհ իրապես չկա: Միայն խաղաղ ու ծաղկող Վրաստանը կունենա հեռանկար վերականգնել Ձեր տարածքային ամբողջականությունը, եթե նրանք, ովքեր ապրում են Աբխազիայում և Հարավային Օսեթիայում, տեսնեն, որ Վրաստանի կազմում նրանք կկարողանան լինել ազատ, իսկ իրենց համայնքներն էլ ծաղկող, որտեղ նրանք կօգտվեն ինքնավարությամբ դաշնային իշխանության համակարգի շրջանակում, որտեղ նրանց կյանքը կդառնա զգալի լավ, քան հիմա է»: ԱՄՆ-ի իշխանությունները քանիցս հայտարարել են Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորմանը միտված իրենց անսասան սկզբունքային մոտեցման մասին, ուստիև Ջոզեֆ Բայդենի

թբիլիսյան ելույթում հայտնված այդ մոտեցումը պետք է փորձել հիմնավոր կերպով ամբողջությամբ կիրառելի դարձնել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման գործում՝ առաջարկելով հարգել փոխնախագահ Բայդենի արդարացի այդ բանաձևը և ներառել դա Մադրիդյան սկզբունքների նորացված տեքստում: Առավել ևս այս հարցում մենք պետք է հանդես գանք միասնական համազգային դիրքորոշմամբ, այն է՝ այս հարցում ցանկացած այլ մոտեցում հղի է պատերազմական գործողությունների վերսկսմամբ: Ավելին, ԱՄՆ-ի փոխնախագահի թբիլիսյան ելույթում հնչեցված սկզբունքային գնահատականից հետո դրան հակասող ցանկացած գործառույթ, եթե չդատապարտվի, ապա Ադրբեջանը կարող է ընդունել Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը ռազմական ճանապարհով լուծելու իր հավակնություններին տրված լռելյայն համաձայնություն: Չէ՞ որ մենք ականատեսն ենք, որ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևն ասես միտումնավոր թե՛ իր երկրի ներսում, թե՛ արտասահմանում (վերջերս Լոնդոնում Միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտում՝ Chatham House-ում, ունեցած ելույթը.- *Ա.Գ.*) շարունակաբար հանդես է գալիս հայտարարություններով՝ ռազմական ճանապարհով հասնել ԼՂ-ի հարցի լուծմանը: Եվ դա արվում է այն դեպքում, երբ անցյալ տարվա նոյեմբերի 2-ին նախագահներ Սարգսյանի, Մեդվեդևի և Ալիևի ստորագրությամբ ընդունվել էր Մայենդորֆյան հռչակագիրը, որտեղ վավերացված էր հակամարտող կողմերի պատրաստակամությունը՝ հարցի լուծմանը հասնել միայն խաղաղ ճանապարհով: Այլ կերպ ասած՝ Ալիևը հրապարակավ անտեսում է այդ փաստաթղթի դրույթների կատարման երաշխավոր հանդիսացող Ռուսաստանի Դաշնության նախագահի նշանակությունն ու դերակատարումը Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի բացառապես խաղաղ ճանապարհով կարգավորելու հարցում: Զարմանք առաջացրեց և այն, որ վերջերս Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Աբիևը Բաքվում՝ Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարար Անատոլի Սերդյուկովի հետ բանակցությունների ժամանակ հայտարարել էր. «Եթե հայ-ադրբեջանական հակամարտությունը չկարգավորվի խաղաղ տարբերակով, ապա ռազմական լուծումն անխուսափելի է»: Ցավոք, այդ ռազմատենչ հայտարարությունը, որը հակասում է ՌԴ նախագահի կողմից վավերացված Մայենդորֆյան հռչակագրի ոգուն, Ռուսաստանի պաշտպանության նախարարի կողմից մնաց անպատասխան: Կարծում եմ, չի կարելի թերագնահատել Մայենդորֆյան հռչակագրի դերն ու նշանակությունը հատկապես Մինսկի խմբի ռուսաստանցի համանախագահողի հետ քննարկումների ժամանակ:

Ինչ վերաբերում է Ֆրանսիայի, իսկ ավելի լայն՝ Եվրամիության դիրքորոշումներին Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործում, ապա գտնում եմ. տեղին կլիներ, եթե մենք Եվրոպայի մեր գործընկերներին հիշեցնեինք, որ միջազգային կազմակերպությունների և հատ-

կապես Եվրամիության առանցքային երկրների ու ԱՄՆ-ի բոլոր տեսակի միջամտությունները, որոնք բերեցին Կոսովոյի անկախությանը, եթե համեմատելու լինենք Արցախի ժողովրդի անցած ճանապարհի հետ (որը նա անցել է ինքնուրույն, առանց դրսի միջամտության), ապա Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչումը միջազգային իրավունքի տեսակետից շատ ավելի հիմնավոր ու անխոցելի է: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կայացմանն անհրաժեշտ չի եղել ո՛չ ՄԱԿ-ի Ախտիսաարիի հանձնաժողովի նմանությամբ նորի ստեղծում, ո՛չ երկնագույն սաղավարտավորների, ո՛չ էլ ՆԱՏՕ-ի արագ արձագանքման զինված ուժերի ներգրավման անհրաժեշտություն: Ավելին, չէր խանգարի շրջանառության մեջ դնել ս.թ. մայիսի 22-ին ԱՄՆ-ի փոխնախագահ Ջոզեֆ Բայդենի՝ Կոսովոյի պառլամենտում ունեցած ելույթից առանձին դրույթներ: Այսպես, ԱՄՆ-ի փոխնախագահը որպես անկախ Կոսովոյի նվաճում հիշատակել է այնպիսի ձեռքբերումներ, որոնք դեռ տարիներ առաջ էին իրենց լուծումը գտել Լեռնային Ղարաբաղում: Մասնավորապես, դրվատանքի էր արժանացել այն, որ Կոսովոյի պառլամենտն ընդունել է ավելի քան 50 օրենք: Ելույթում ասվել էր. «Դուք կառուցել եք ճանապարհներ, զրոյից ստեղծել եք նախարարություններ և պետական ծառայություններ, որոնք նախկինում գոյություն չունեին»: Այս ամենը 100%-ով կարելի է ասել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մասին: «Ձեր հաջողությունը նվաճված է համառ աշխատանքով,- շարունակել է Ջ.Բայդենը,- դուք ցուցադրեցիք ամբողջ աշխարհին, որ ժողովրդավարությունը և Կոսովոյի անկախությունը հանդիսանում են ուժ, որը նպաստում է տարածաշրջանում կայունության հաստատմանը, և այսպես էլ լինելու է հետո»: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կայացման օրինակը, կարծում եմ, շատ ավելի համոզիչ վկայությունն է ի հաստատումն Ջ.Բայդենի այն պնդման, որ միայն ժողովրդավարություն որդեգրած Ղարաբաղի անկախ պետականությունը հնարավոր դարձրեց առանց միջազգային հզոր ուժերի աջակցության դիմակայել 30 անգամ ավելի մեծ թվաքանակով բնակչություն ունեցող, միլիարդավոր նավթային դոլարներ սպառազինության վրա ծախսող Ադրբեջանի ռազմական ոտնձգություններին: Ավելին, այն հարցերը, որոնց լուծմանն ուղղված կոչով է Կոսովոյում հանդես եկել Ջ.Բայդենը, Լեռնային Ղարաբաղում արդեն տարիներ շարունակ դրված են իշխանությունների ամենօրյա աշխատանքի հիմքում և կազմում են դրա բովանդակությունը: Ի մասնավորի, ԱՄՆ-ի փոխնախագահն իր այդ ելույթում ասում է. «Առաջին, մենք կոչ ենք անում Ձեզ, մենք համառորեն խնդրում ենք Ձեզ շարունակել ուժեղ ինստիտուտների շինարարությունը, ուր կմարմնավորվեն արժեքներ, որոնք ամրագրված են Ձեր անկախության հռչակագրում և ձեր Սահմանադրությունում: Այդ ինստիտուտների արդյունավետությունն ու թափանցիկությունը կունենան վճռական նշանակություն Ձեր կառավարության նկատմամբ վստահության ամրապնդման գործում առաջիկա ամիսներին ու տարիներին»:

Լեռնային Ղարաբաղում այդ հարցերի լուծմանն են ուղղված արդեն իսկ տարիներ շարունակ իրականացվող պետական շինարարությանն ուղղված գործնական քայլերը, որոնց արդյունքները ցանկացած անկողմնակալ ուսումնասիրության պարագայում, համոզված եմ, շատ բարձր կգնահատվեն:

Բայդենի ելույթից կարելի է այլ հարցադրումներ էլ մեջբերել, սակայն այսքանից էլ կարող ենք եզրակացնել, որ Եվրամիության առանցքային երկրների և ԱՄՆ-ի ջանքերով անկախացած Կոսովոն նոր է սկսում իրագործել այն քայլերը, որոնք Լեռնային Ղարաբաղն արդեն իսկ տարիներ առաջ և ավելի մեծ հաջողությամբ իրագործել է և շարունակում է դա անել: Այսինքն, հաշվի առնելով այս իրողությունները և դրանից հետո պարտադրել Լեռնային Ղարաբաղի անկախ հանրապետությանը այլընտրանքային որևէ կարգավիճակ, մեղմ ասած, կլիներ խիստ անտրամաբանական: Նախագահներ Մեդվեդևի, Օբամայի և Սարկոզիի համատեղ հայտարարության մեջ տեղ գտած երկրորդ (ԼՂ-ին ժամանակավոր կարգավիճակի տրամադրում, վերջինիս անվտանգության ու ինքնակառավարման ապահովում) և չորրորդ (ԼՂ-ի իրավունքը՝ իրավաբանական բնույթի կամարտահայտման միջոցով որոշելու իր վերջնական կարգավիճակը) սկզբունքների շուրջ բանակցելիս դրական ազդեցություն կունենա այն, եթե հայկական կողմը առանձնահատուկ նշի Ջ.Բայդենի մայիսի 22-ին Կոսովոյի պառլամենտում ունեցած սկզբունքային գնահատականների խիստ արդիականությունը նաև Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման գործում: Դրանց հակափաստարկներ բերելը դյուրին գործ չի լինի:

Մենք պետք է օգտագործենք նաև այն հանգամանքը, որ մինչև 2009 թ. ավարտը Եվրամիությունում նախագահելու է Շվեդիայի թագավորությունը, և այդ գործում շատ մեծ է լինելու այդ երկրի արտգործնախարար Կարլ Բիլդտի դերակատարությունը, որն որպես ԵՄ-ը նախագահող երկրի պաշտոնյա իր գործունեության առաջնայնություններից համարեց պաշտոնական այցով լինել Վրաստանում, Ադրբեջանում ու Հայաստանում: Եվ դա վերստին շեշտեց կարևորության այն բարձր աստիճանը, որ Եվրամիությունը տալիս է Հարավային Կովկասի երկրներին և մեր տարածաշրջանում ընթացող զարգացումներին: Ինչու եմ առանձնահատուկ հիշատակում Կարլ Բիլդտին, որովհետև ճիշտ և ճիշտ նույն Կարլ Բիլդտն է եղել Եվրամիության ներկայացուցիչը Բալկաններում, երբ այնտեղ կյանքի էր կոչվում Դեյտոնյան համաձայնագիրը՝ կրակի դադարեցման համաձայնագիր, հակամարտող կողմերի բաժանում և տարածքների առանձնացնում, որով վերջ դրվեց 1992-95 թթ. Բոսնիայի և Հերցեգովինայի քաղաքացիական պատերազմին: Հիշեցնեմ, որ պայմանագրի դրույթները համաձայնեցվել էին ԱՄՆ-ի Դեյտոնի ռազմակայանում (նահանգ Օհայո), պայմանագիրը ստորագրվել էր 1995 թ. դեկտեմբերին Փարիզում: Լինելով ականատեսը Խորվաթիայի կողմից 1995 թ. ամռանն իրականացվող էթնիկական զտումների, երբ խորվաթական զորքերի կողմից

